թվայնացրել է 1915.info կայքը

ՑՐԵՂՐԻԿ ԲԱՔՄԱՆ

Ջերմ ու զվարճալի պատմություն
«Ուվե անունով մարդը» բեսթսելլերի հեղինակից

ՏԱՏԻԿՍ

ԲԱՐԵՍՈՒՏՍ ԵՎ ԱՍՈՒՄ՝ ԿԵՐԵՔ

ԿԵՊ

newmag

թվայնացրել է 1915.info կայքը

ՏԱՏԿՍ
ԲԱՐԵԿՈՒՄ Է
ԵՎ
ԱՍՈՒՄ՝ ԿԵՐԵՔ

թվայնացրել է 1915.info կայքը

FREDRIK BACKMAN

MIN MORMOR HÄLSAR OCH SÄGER FÖRLÅT

EN NOVELL

թվայնացրել է 1915.info կայքը

ՖՐԵԴՐԻԿ ԲԱՔՄԱՆ

ՏԱՏԻԿՍ

ԲԱՐԵԿՈՒՄ Է

ԵՎ

ԱՍՈՒՄ՝ ԿԵՐԵՔ

ՎԵՊ

Թարգմանությունը շվեդերենից՝
Աշխեն Բախչինյանի

ԵՐԵՎԱՆ
2024

թվայնացրել է 1915.info կայքը

ՀՏԴ 821.113.6-31 Բաքման
ԳՄԴ 84(4Շվեդ)-44
Բ 400

Բաքման Ֆրեդրիկ
Բ 400 Տատիկս բարևում է և ասում՝ կներեք: Վեպ / Ֆ. Բաքման.- Եր.: Newmag, 2024.- 408 էջ:

Էլսան յոթ տարեկան է և տարբերվում է շրջապատի մյուս երեխաներից: Օրինակ՝ փեյնթբոլի հրացանով պատշգամբից կրակում է անծանոթ մարդկանց ուղղությամբ: Ու դա անում է իր տարեց ու մի քիչ էլ ցնդած տատիկի հետ, որն Էլսայի միակ ու լավագույն ընկերն է: Էլսան հաճախ ապաստան է գտնում իր տատիկի պատմություններում, որտեղ բոլորն իրարից տարբերվում են, և ոչ ոք ստիպված չէ նորմալ լինել:

Տատիկի մահից հետո նրանից մնում են նամակներ, որոնցում նա ներողություն է խնդրում բոլորից, որոնց վիրավորել կամ բավականաչափ չի օգնել:

Այդ պահից էլ սկսվում է Էլսայի ամենամեծ արկածը: Տատիկի նամակների միջոցով աղջիկը ծանոթանում է հարբեցողներով, հրեշներով, կատաղած շներով և ծերունիներով լի բազմաբնակարան շենքի բնակիչների հետ: Այստեղ էլ Էլսան բացահայտում է իր մանկության հեքիաթների ու արքունիքների մեծագույն գաղտնիքները:

Այս պատմությունը կյանքի, մահի և մարդու համար շատ կարևոր հատկության՝ մյուսներից տարբերվելու ձգտման մասին է:

ՀՏԴ 821.113.6-31 Բաքման
ԳՄԴ 84(4Շվեդ)-44

Գլխավոր գործընկեր՝
«ԲՈՒԿԻՆԻՍՏ» ՍՊԸ
books.am

bookinist

ISBN 978-9939-967-32-5
Բաքման Ֆրեդրիկ Տատիկս բարևում է և ասում՝ կներեք:
© 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ, Copyright © Fredrik Backman 2013
Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել SALOMONSSON AGENCY ընկերության հետ կնքած պայմանագրով:

թվայնացրել է 1915.info կայքը

Բովանդակություն

1 Ծխախոտ 9

2 Կապիկը 20

3 Սուրճը 33

4 Գարեջուրը 46

5 Շուշանները 55

6 Լվացող միջոցը 66

7 Կաշին 78

8 Ռետինը 90

9 Օճառը 97

10 Ալկոգել 109

11 Պրոտեինային սալիկները (Proteinbar) 115

12 Անանուխ 123

13 Գինի 135

14 Մնուս 143

15 Տաշեղներ 162

16 Փոշի 173

17 Դարչինով բուլկի 187

այնացրել է 1915.info կայքը

18 Ծուխ 200
19 Խմոր 213
20 Հագուստի խանութ 226
21 Ստեարին 241
22 Կակաո 253
23 Սեղանի լաթը 262
24 Հրուշակները 270
25 Տոնածառ 283
26 Պիցցա 297
27 Գլյոգ 309
28 Կարտոֆիլ 322
29 Մերենգա 329
30 Օծանելիք 338
31 Գետնանուշով թխվածք 351
32 Պաղպաղակ 363
33 Նորածինը 374
34 Տատիկը 387

Էպիլոգ 400

թվայնացրել է 1915.info կայքը

Կապիկին ու գորտին

Հանուն 10,000 հեքիաթների հավերժության

թվայնացրել է 1915.info կայքը

1

ԾԽԱԽՈՏ

Բոլոր յոթ տարեկաններն արժանի են ունենալու իրենց գերհերոսներին: Ուզենք թե չուզենք, այդպես է: Իսկ ով համաձայն չէ, ուղղակի անհույս անխելքի մեկն է:

Էլսայի տատիկը հենց այդպես էլ ասում է:

Էլսան յոթ տարեկան է, չնայած շուտով ութը կլրանա: Ճիշտը որ ասենք, յոթ տարեկան լինելուց առանձնապես գլուխ չհանեց, ինքն էլ գիտի: Լավ գիտի, որ ինքն ուրիշ է: Դպրոցի տնօրենն ասում է, որ Էլսան պիտի հարմարվի, պիտի կարողանա լեզու գտնել իր հասակակիցների հետ, իսկ ծնողների տարիքի մարդիկ միշտ ասում են, որ նա իր տարիքի համեմատ չափազանց հասուն է: Էլսան գիտի, որ նրանց ասածն ուղղակի ահավոր գլուխ տանող է նշանակում, որովհետև միշտ այդպես են ասում, երբ նա ուղղում է նրանց սխալ արտաբերած déjà vu-ն կամ երբ նախադասության մեջ խառնում են իմ-ն ու ինձ-ը, որ խելքը գլխին մարդիկ չպիտի խառնեն: Դրա համար են այդ խելքը գլխին մարդիկ, կեղծ ժպտալով Էլսայի ծնողներին, այդպես ասում. «Իր տարիքի համեմատ չափազանց հասուն է»: Կարծես շատ մեծ արատ լինի, կամ էլ Էլսան վիրավորել է նրանց, որ լրիվ դատարկագլուխ չէ, ինչ է թե՝ դեռ յոթ տարեկան է: Հենց դրա համար էլ ինքն ուրիշ ընկեր չունի տատիկից բացի: Որովհետև իր դպրոցի մյուս յոթ տարեկանները ճիշտ այնքան դատարկագլուխ են, ինչքան որ պարտավոր են լինել յոթ տարեկանները: Իսկ Էլսան ուրիշ է: Թքա՛ծ՝ ասում է

թվայնացրել է 1915.info կայքը

տատիկը: Որովհետև բոլոր գերհերոսներն էլ տարբերվում են: Ու եթե գերունակությունները սովորական երևույթ լինեին, բոլորը կունենային:

Տատիկը 77 տարեկան է: Շուտով՝ 78: Նա էլ առանձնապես հաշտ չէ իր տարիքի հետ: Պարզ է, որ ծեր է, որովհետև դեմքը թաց կոշիկի մեջ խցկած օրաթերթի թղթի պես ճմռթված է, բայց երբեք ոչ ոք չի ասում, որ նա իր տարիքի համեմատ չափազանց հասուն է:

«Իր տարիքի համեմատ շատ է աշխույժ»,– երբեմն ասում են Էլսայի մորը: Եվ սովորաբար այնքան անհանգիստ կամ զայրացած տեսքով, որ մայրիկը հառաչում է ու հարցնում, թե ինչպես փոխհատուցի հասցրած վնասը: Իսկ ըստ տատիկի՝ մարդիկ պիտի իրենք իրենց մեղադրեն, եթե տատիկին երկու ավտոմեքենայի արանքում իր Renault-ը կայանելիս տեսնեն, ոչ թե այնքան խառնվեն իրար, որ իրենց մեքենայի ձեռքի արգելակը քաշեն: Տատիկին սաստիկ զայրացնում է նաև այն, որ հիվանդանոցում նույնիսկ հանգիստ ծխելու հնարավորություն չկա. անմիջապես միանում է հակահրդեհային համակարգը: Իսկ երբ հսկիչները վրա են հասնում և պահանջում ծխախոտը հանգցնել, սկսում է բղավել. «Գրո՛ղը տանի, մարդ հիմա ամեն ծակուծուկում էլ քաղաքական կոռեկտություն պիտի դրսևորի՞»:

Մի օր էլ տատիկը ձնեմարդ էր սարքել ու իսկական շորեր հագցրել, ապա դրել էր հարևան Բրիտ-Մարիի ու Քենթի պատշգամբի տակ այնպես, որ նրան տանիքից ընկած մարդու տեղ էին դրել: Մի անգամ էլ, երբ թաղամասում ակնոցավոր գեղեցիկ երիտասարդներ էին ման գալիս ու բոլոր դռների զանգը տալով՝ փորձում էին ավետել Աստծո, Հիսուսի ու դրախտի մասին, տատիկը, խալաթն արձակած, պատշգամբից նրանց վրա փեյնթբոլի հրացանով կրակում էր: Բրիտ-Մարին չէր կարողանում կողմնորոշվել, թե ավելի շատ ազդվել էր տատիկի՝ փեյնթբոլի հրացանով կրակելուց, թե որ նա խալաթի տակից ոչինչ չէր հագել, և երկու փաստն էլ նկատի առնելով՝ ապահովության համար ոստիկանություն էր կանչել: Այսպիսի դեպքերում մարդիկ կարծում են, որ տատիկն իր տարիքի համեմատ չափազանց աշխույժ է: Եվ ի՞նչ, կարելի է այդպես էլ ասել: Այսինքն, տատիկը խելքը թռցրել է: Իսկ նա իրականում հանճար է: Ուղղակի մի քիչ խելառ է:

Նախկինում բժիշկ էր ու շատ մրցանակներ էր ստացել: Լրագրողները հոդվածներ էին գրում նրա մասին, ու նա գնում էր աշխարհի ամենասարսափելի վայրերը, երբ բոլորը փախչում էին այդ տեղերից: Կյանքեր էր փրկում ու կռիվ տալիս աշխարհի չարիքի դեմ: Ոնց որ գերհերոսներն են

թվայնացրել է 1915.info կայքը

անում: Բայց, ի վերջո, ինչ-որ մեկն ասաց, որ նա արդեն չափազանց ծեր է կյանքեր փրկելու համար, չնայած Էլսան կասկածում էր, որ այդ ինչ-որ մեկը, ըստ էության, նկատի ուներ, որ չափազանց խելագար է: Այնպես որ, տատիկն այլևս չի աշխատում: Տատիկն այդ ինչ-որ մեկին «հասարակություն» է անվանում ու ասում է, որ մեր ժամանակներում բոլորը պիտի քաղաքականապես ահավոր կոռեկտ լինեն. այդ կոռեկտության պատճառով էլ իրեն այլևս թույլ չեն տալիս վիրահատել: Ու հիմնական պատճառն այն է, որ հասարակությունն այնքան է քնքշացել, որ արգելել է վիրահատարաններում ծխելը. իսկ ո՞վ կուզենա նման պայմաններում աշխատել, դե ասե՛ք տեսնեմ:

Այսպիսով՝ տատիկը հիմնականում տանն է ու հունից հանում է Բրիտ-Մարիին ու մայրիկին: Բրիտ-Մարին տատիկի հարևանուհին է, մայրիկը՝ Էլսայի մայրիկը: Ըստ էության, Բրիտ-Մարին նաև Էլսայի մայրիկի հարևանուհին է, քանի որ Էլսայի մայրիկն ապրում է Էլսայի տատիկի հարևանությամբ: Էլսան էլ է, բնականաբար, տատիկի հարևանը, քանի որ ապրում է իր մայրիկի հետ՝ բացի ամեն երկրորդ շաբաթ և կիրակի օրերից, երբ հայրիկի ու Լիզետի մոտ է ապրում: Յեորգը, պարզ է, նույնպես տատիկի հարևանությամբ է ապրում: Դե, քանի որ մայրիկի զուգընկերն է: Մի քիչ խառն է ստացվում: Բայց, ամեն դեպքում, չշեղվենք գլխավորից. կյանքեր փրկելն ու մարդկանց հունից հանելը տատիկի գերունակություններն են, որ նրան, կարելի է ասել, դիսֆունկցիա ունեցող բավական ձախորդ գերհերոս են դարձնում: Էլսան գիտի, քանի որ «դիսֆունկցիա» բառը նայել է Վիքիպեդիայում: Վիքիպեդիան տատիկի տարիքի մարդիկ համարում են հանրագիտարան համացանցում: Իսկ Էլսան հանրագիտարանը նկարագրում է որպես Վիքիպեդիայի թղթային տարբերակ:

Համ էլ Էլսան երկուսում էլ ստուգել է «դիսֆունկցիոնալ» բառը, և այն նշանակում է մի բան, որ աշխատում է ոչ այնպես, ինչպես ի սկզբանե նախատեսված է եղել: Էլսան ամենաշատը հենց դրա համար էլ սիրում է տատիկին, բայց երևի թե՝ ո՛չ այսօր: Որովհետև գիշերվա 1:30-ն է, և Էլսան այնքան հոգնած է, որ կուզենար շուտ գնալ ու քնել, բայց չի կարող, քանի որ տատիկը նորից կեղտ էր շպրտել ոստիկանի վրա: Բարդ իրավիճակ է, պետք է ասել, Facebook-ի ստատուսի պես: Էլսան շուրջն է նայում փոքրիկ ուղղանկյուն սենյակում ու ձանձրույթից այնպես է հորանջում, որ թվում է, թե սեփական գլուխը հետը կուլ կտա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց ես քեզ ասացի, չէ՞, որ ցանկապատի վրա չմագլցեիր, ասացի, չէ՞,– մռթմռթում է նա՝ ժամացույցին նայելով:

Տատիկը չի պատասխանում: Էլսան վրայից հանում է գրիֆինդորցիների շարֆն ու դնում ծնկներին: Ինքը Սուրբ Ծննդի հենց հաջորդ օրն էր ծնվել՝ յոթ տարի առաջ, չնայած շուտով ութ կդառնա: Նույն օրը գերմանացի գիտնականները գրանցել էին մագնետարի ամենաուժգին գամմա ճառագայթումը Երկրի շուրջ: Էլսային, իհարկե, ճշգրիտ հայտնի չէ, թե «մագնետարն» ինչ է, բայց որքան գիտի, ինչ-որ նեյտրոնային աստղ է: Ուղղակի իր ականջին «Մեգատրոնի» պես մի բան է հնչում, որը «Տրանսֆորմերների» միջի չարերի առաջնորդի անունն է, իսկ իրենց անխելքության պատճառով որակով գրականություն չկարդացողները դա հաստատ մանկական զբաղմունք կհամարեն: Իրականում տրանսֆորմերները ռոբոտներ են, չնայած եթե գիտականորեն մոտենանք, նրանց կարելի է նույնիսկ գերհերոսներ անվանել: Էլսան չափազանց տարված է ինչպես տրանսֆորմերներով, այնպես էլ նեյտրոնային աստղերով, և իր կարծիքով՝ գամմա ճառագայթների պոռթկումը ինչ-որ առումով նման է այն դեպքին, երբ տատիկը «Ֆանտա» թափեց Էլսայի iPhone-ի վրա ու փորձեց հեռախոսը չորացնել հացի տոստերի մեջ: Ու տատիկն ասաց, որ Էլսան յուրահատուկ է, որ այդպիսի օր է ծնվել: Իսկ յուրահատուկ լինելը տարբերվելու ամենալավ ձևն է: Բայց հիմա տատիկը, պարզ է, զբաղված է փայտե սեղանի վրա ծխախոտի փոքրիկ կույտեր սարքելով ու բարակ, ճռճռան ծխախոտաթղթի մեջ փաթաթելով: Էլսան տնքում է.

— Ասացի, չէ՞, ասացի, որ չբարձրանաս ցանկապատի վրա: Ասացի, չէ՞,– հիշեցնում է նա:

Ինքն իրականում զզվեցնելու միտք չունի: Ուղղակի մի քիչ զայրացած է: Այնքան զայրացած, ինչքան կարող են զայրանալ միայն հոգնած յոթ տարեկան երեխաներն ու միջին տարիքի տղամարդիկ, որ սպասում են ուշացող օդանավին, որից ոչ մի լուր չկա: Տատիկը փնչացնում է ու կրակայրիչ է փնտրում իր չափազանց մեծ վերարկուի գրպաններում: Նա կարծես այդ ամենը լուրջ չի ընդունում, որովհետև առհասարակ ոչինչ լուրջ չի ընդունում՝ բացի այն իրավիճակից, երբ ծխել է ուզում ու չի գտնում կրակայրիչը. այ դա չափազանց լուրջ է ընդունում: Ծխելը տատիկի համար շատ լուրջ գործ է:

— Պստլո ցանկապատ էր, ի՛նչ մի անհանգստանալու բան կար, տե՛ր Աստված,– անհոգ ասում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տեր Աստծով գլուխս մի՛ տար: Դու չէի՞ր ոստիկանի վրա ք*ք շպրտում,– հիշեցնում է Էլսան:

Տատիկն աչքերը ոլորում է:

— Հերի՛ք է. ի՞նչ ես իրար անցել: Ճիշտ մորդ պես ես խոսում: Կրակայրիչ չունե՞ս:

— Ես յոթ տարեկան եմ,– ասում է Էլսան:

— Ի՞նչ մի արդարացում է: Ինչքա՞ն ես նույն բանը կրկնելու:

— Մինչև որ էլ յոթ տարեկան չլինեմ:

Տատիկը տնքում ու քթի տակ մռթմռթում է. «Հա՛, դե լա՛վ, հարցնել էլ չի կարելի»,– ապա շարունակում է քչփորել գրպանները:

— Համ էլ չեմ կարծում, որ էստեղ՝ ներսում, հնարավոր լինի ծխել,– բացատրում է Էլսան՝ մի քիչ ավելի խաղաղված, ու մատները քսում է գրիֆինդորցիների շարֆի երկար ակոսին:

Տատիկը փնչացնում է:

— Ծխել հաստատ կարելի է: Մենք պատուհանը կբացենք:

Էլսան թերահավատորեն նայում է պատուհանին:

— Կարծում եմ՝ էս տեսակ պատուհաններն իսկի չեն էլ բացվում:

— Հիմարությո՛ւն: Ինչո՞ւ պիտի չբացվեն:

— Ոչի՞նչ, որ վրան ճաղավանդակ է:

Տատիկը դժգոհ հայացքը հառում է պատուհանին, հետո՝ Էլսային:

— Ուրեմն ոստիկանությունում նույնիսկ ծխե՞լ չես կարող, հա՞, դե էլ ի՞նչ ասես էս գրողի տարած, չափից դուրս վերահսկվող հասարակությանը:

Էլսան նորից հորանջում է:

— Կլինի՞ հեռախոսդ վերցնեմ:

— Ինչի՞դ է պետք,– հետաքրքրվում է տատիկը:

— Համացանց մտնեմ,– ասում է Էլսան:

— Ու ի՞նչ ես նայելու:

— Տարբեր բաներ:

— Շատ ես ոտքով-գլխով կորչում էդ համացանցում: Ժամանակդ անիմաստ ծախսում ես:

— Չեմ ծախսում, վատնում եմ:

— Չէ, չէ՛ մի: Նույն բանն է:

Էլսան գլուխը տարուբերում է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Փողն է, որ ծախսում են, վերջանում է: Նույնը չէ: Չես ասում, չէ՞՝ 200 կրոնա վատնեցի նոր տաբատի վրա: Հը՞: Էդպես չէ՞:

— Իսկ դու լսե՞լ ես մի աղջկա մասին, որն ամեն ինչի մեջ էնքան շատ էր խորանում, որ վերջում իր մտքերի տակից դուրս չեկավ,– փռթկացրեց տատիկը:

— Ես մեկ ուրիշի մասին եմ լսել, որ բարեհաջող ապրում է էդքանից հետո,– փնթփնթաց Էլսան:

Սենյակ մտնող ոստիկանը սարսափելի, սոսկալի հոգնած տեսք ուներ: Նա նստեց սեղանի հակառակ կողմում ու անասելի հուսահատ հայացքով նայեց տատիկին ու Էլսային:

— Ես ուզում եմ զանգել իմ փաստաբանին,– իսկույն պահանջեց տատիկը:

— Ես ուզում եմ մայրիկիս զանգել,– իսկույն պահանջեց Էլսան:

— Էդ դեպքում ես ուզում եմ առաջինն իմ փաստաբանին զանգել,– պնդեց տատիկը:

Ոստիկանը թղթերի փոքր խրձի մեջ մի թուղթ է փնտրում:

— Մայրիկդ ճանապարհին է,– հոգոց հանելով՝ հանգստացնում է նա Էլսային:

Տատիկի շունչը կտրվում է հուզմունքից. այդպիսի դրամատիկ պոռթկում միայն տատիկի մոտ է լինում:

— Բայց ինչո՞ւ զանգ տվեցիք նրան… գժվե՞լ եք: Հիմա նա ուղղակի շան պես կատաղած կլինի,– տատիկն այնպես է ընդվզում, ասես ոստիկանն ասաց, թե Էլսային անտառ է տանելու ու գայլերի ոհմակին է հանձնելու, որ դաստիարակեն:

— Մենք պարտավոր ենք զանգել երեխայի խնամակալին,– հանդարտ բացատրում է ոստիկանը:

— Ես նույնպես երեխայի խնամակալն եմ: Ես երեխայի տատի՛կն եմ,– պոռթկաց նա՝ կիսով չափ բարձրանալով աթոռից ու թափահարելով չմարած ծխախոտը:

— Ժամը գիշերվա 1:30-ին մեկը պետք է, չէ՞, երեխային տիրություն անի,– անհաղորդ ասում է ոստիկանը՝ մատնացույց անելով ձեռքի ժամացույցը՝ նախքան դժգոհությամբ ծխախոտին նայելը:

— Ե՛ս: Ե՛ս եմ երեխային տիրություն անելու,– պոռթկում է տատիկը:

Ոստիկանը դժվարությամբ ջանում է բարեհաճ երևալ՝ ձեռքը տարածելով հարցաքննության սենյակով մեկ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Եվ ի՞նչ եք կարծում, Ձեր գործն ի՞նչ պիտի լինի տվյալ իրավիճակում:

Տատիկը մի քիչ վիրավորված է երևում: Բայց, ի վերջո, նստում է տեղն ու հազալով մաքրում կոկորդը:

— Դե, եթե... ասենք... դե, անշուշտ... պարզ է: Եթե սկսեք ՄԱՆՐՈՒՔՆԵՐԻՑ կառչել, երևի թե շատ հրաշալի չլինի: Բայց հուսանք՝ գլուխներդ շատ չեն տանի: Ուղղակի ամեն ինչ լավ էր, քանի դեռ Դուք հետևիցս չէիք ընկել,– նեղսրտած հակաճառում է նա:

— Դուք ապօրինաբար մուտք եք գործել կենդանաբանական այգու անթույլատրելի հատվածը,– նկատում է ոստիկանը:

— Հա՛, բայց եղածը մի պստլիկ ցանկապատ էր,– համառում է տատիկը:

— Անօրինականությունը պստլիկ չի լինում,– ասում է ոստիկանը:

Տատիկն ուսերն է թոթվում ու սեղանը սրբելու շարժում անում՝ ասես մտածելով, թե այդ ամենն արդեն չափազանց շատ ձգձգվեց, ու թեման փոխելու ժամանակն է:

— Լսի՛ր: Կարող եմ, չէ՞, ներսում ծխել:

Ոստիկանը լրջորեն թափահարում է գլուխը: Տատիկն առաջ է թեքվում, նայում է ուղիղ նրա աչքերի մեջ ու ժպտում:

— Լա՛վ էլի, գոնե բացառություն արեք ինձ նման հաճելի կնոջը:

Էլսան կողքից բոթում է տատիկին ու անցնում իրենց գաղտնի լեզվին: Տատիկն ու Էլսան գաղտնի լեզու ունեն, ինչպիսին պիտի ունենան բոլոր տատիկներն իրենց թոռնիկների հետ, որովհետև օրենքով այդպես է՝ տատիկի ասելով, կամ գոնե այդպես պետք է լինի:

— Ո՛ւֆ, տատի՛կ, լա՛վ էլի, վե՛րջ տուր: Չգիտե՞ս, որ օրենքով իրավունք չունես ոստիկանին աչքով-ունքով անել,– ասում է Էլսան գաղտնի լեզվով:

— Ո՞վ ասաց,– հարցնում է տատիկն իրենց գաղտնի լեզվով:

— Ոստիկանը,– ասում է Էլսան:

— Ոստիկանը քաղաքացիների ապահովության համար է: Ես փաստացի հարկ եմ վճարում,– վրա է բերում տատիկը:

Ոստիկանը նրանց է նայում, ինչպես կնայեր գիշերվա կեսին տարօրինակ գաղտնալեզվով յոթ և 77 տարեկանների վիճաբանությանը ոստիկանական բաժանմունքում: Հետո տատիկը քծնող հայացքով ժպտում է նրան ու աղաչող աչքերով նորից ցույց է տալիս ծխախոտը, սակայն երբ ոստիկանը տարուբերում է գլուխը, տատիկը նեղացած հետ է նստում ու բացականչում ամենասովորական ձայնով.

թվայնացրել է 1915.info կայքը

— Սպանեցի՛ք ձեր քաղաքական կոռեկտությամբ: Իսկ խեղճ ծխողներիս հանդեպ մեր օրերում էս գրողի տարած երկրում Ապարտհեյդից էլ վատ վերաբերմունք ունեք:

Ոստիկանի դեմքի արտահայտությունը շատ ավելի մռայլվեց:

— Թերևս ես ավելի զգույշ կլինեի նման արտահայտություններ անելիս:

Տատիկն աչքերը ոլորում է: Էլսան խեթ-խեթ նրան է նայում:

— Ո՞նց է գրվում:

— Ի՞նչը,– հառաչում է տատիկը, ասես ամբողջ աշխարհն իր դեմ է դուրս եկել, չնայած որ ինքը հարկերն ամբողջությամբ վճարել է:

— Էդ ապարատներ են, ինչեր են,– ասում է Էլսան:

— Դե եսիմ, Ա-Պ-Ա-Ր-Տ-Է-Յ-Դ,– հեգում է տատիկը:

Չնայած առանձնապես ճիշտ էլ չէ: Էլսան նկատում է անճշտությունը, հենց որ ձգվում է սեղանի վրա, ու ձեռքն առնելով տատիկի հեռախոսը՝ գուգլում է: Տատիկը հեգելուց մանրուքների հետևից չի ընկնում: Ոստիկանը թերթում է ձեռքի թղթերը:

— Մենք ձեզ բաց կթողնենք, բայց պիտի նորից կանչենք՝ անօրինական մուտք գործելու ու երթևեկության կանոնները խախտելու համար,– սառնասրտորեն տեղեկացնում է տատիկին:

— Մարդ է՞լ Android օգտագործի,– տնքում է Էլսան՝ փորձելով ինչ-որ թվեր սեղմել տատիկի հեռախոսի մեջ: Այդ Android-ը Էլսայի մայրիկի հին հեռախոսն է, իսկ մայրիկը միայն Android է ունենում, չնայած որ Էլսան անընդհատ փորձում է համոզել, որ ուղեղ ունեցող մարդիկ iPhone են օգտագործում: Տատիկը, բնականաբար, չի էլ ուզում հեռախոս ունենալ, բայց Էլսան ստիպել է նրան մայրիկի հինը վերցնել, որովհետև տատիկն ամեն անգամ հացի տոստերի հետ կապված պատահարների ընթացքում ակնթարթորեն լուծում է Էլսայի հեռախոսի հարցերը: Եվ այդ դեպքում Էլսան տատիկի հեռախոսը վերցնելու կարիք է ունենում: Նույնիսկ եթե Android է:

— Ի՞նչ երթևեկության կանոններ,– ապշած բացականչում է տատիկը:

— Սկզբի համար հիշենք, որ ձեզ չի թույլատրվում մեքենա վարել,– ասում է ոստիկանը:

— Ո՞նց թե չի թույլատրվում: Բայց ես ի՛մ մեքենան եմ վարում: Ասված սիրեք, ինձ ոչ մեկի թույլտվությունը պետք չէ իմ սեփական մեքենան վարելու համար:

Ոստիկանը համբերատար տարուբերում է գլուխը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իհարկե ո՛չ, բայց վարորդական իրավունք պետք է:

Տատիկը թափահարում է թևերը:

— Ա՛յ քեզ տոտալ վերահսկողություն:

Հաջորդ վայրկյանին ամբողջ սենյակը դղրդում է, քանի որ Էլսան սեղանին է շպրտում տատիկի Android-ը:

— Քե՞զ ինչ եղավ,– զարմանում է տատիկը:

— Ապարտհեյդը լրիվ ՈՒՐԻ՛Շ բան է: Որ քեզ թույլ չեն տալիս ծխել, չես համեմատի Ապարտհեյդի հետ, իսկի նույն բանը չէ: Նույնիսկ կապ չունի:

Տատիկն անտարբեր թափ է տալիս ձեռքը:

— Դե ասացի, որ…դե նման մի բան էլի, գիտես… ոնց որ մոտավոր…

— Ոչ մի մոտավոր էլ չէ,– բղավում է Էլսան:

— Ընդամենը համեմատություն էր, էլի, տե՛ր Աստված…

— Ապուշ համեմատություն էր:

— Ի՞նչ գիտես:

— ՎԻՔԻՊԵ՛ԴԻԱ,– բղավեց Էլսան ու մատը տնկեց տատիկի հեռախոսին:

Տատիկը հուսահատ շրջվում է դեպի ոստիկանը:

— Քո երեխանե՞րն էլ են ամբողջ օրը սրա մեջ:

Ոստիկանը մի տեսակ անհարմար է զգում:

— Մենք… այսինքն մեր ընտանիքում չենք թողնում երեխաներին մտնել համացանց…

Տատիկը ձեռքերն Էլսայի ուղղությամբ է թափահարում՝ ասես այդ շարժումով հաստատելով՝ ըհը՛, տեսա՞ր: Էլսան միայն տարուբերում է գլուխն ու ձեռքերն ամուր խաչում կրծքին:

— Տատի՛կ, ուղղակի ասա՝ կներեք, քանի որ կղանք ես նետել ոստիկանի վրա, որ վերջապես կարողանանք տուն գնալ,– գաղտնի լեզվով քրթմնջում է նա՝ Ապարտհեյդի պատճառով դեռ բավական զայրացած:

— Կներես,– գաղտնալեզվով Էլսային է ասում տատիկը:

— Ոստիկանի՛ն, ի՛նձ չէ, դմբո՛,– ասում է Էլսան:

— Ֆաշիստներից ներողություն չեն խնդրում: Ես հարկ եմ վճարում: Դմբոն էլ ինքդ ես,– մռթմռթում է տատիկը:

— Դո՛ւ ես,– կոպտում է Էլսան:

Հետո երկուսն էլ նստում են՝ ցուցադրաբար իրար մեջքով շրջված ու թևերը կրծքներին խաչած, մինչև որ տատիկը գլխով է անում ոստիկանին ու շատ սովորական լեզվով ասում.

թվայնացրել է 1915.info կայքը

— Չէի՞ք կարող փոխանցել իմ երես առած թոռնուհուն, որ նա կարող է էստեղից գնալ, եթե պիտի շարունակի իրեն էսպես պահել:

— Հը՛մ: ԻՐԵՆ ասեք, որ ես պատրաստվում եմ մայրիկիս հետ տուն գնալ. եթե ուզում է, թող ինքը հեռանա,– իսկույն վրա է տալիս Էլսան:

— ՆՐԱՆ ասեք, որ ինքն ինչ ուզում է…,– սկսում է տատիկը:

Այդ ժամանակ ոստիկանը, առանց բառ ասելու, տեղից ելնում ու դուրս է գալիս սենյակից՝ դուռը հետևից փակելով. կարծես որոշել էր գնալ մի ուրիշ սենյակ, դեմքը թաքցներ մի հսկա բարձի մեջ ու բղավեր սրտի ուզածը:

— Տեսնո՞ւմ ես, թե ինչ արեցիր,– ասում է տատիկը:

— Տեսնո՞ւմ ես՝ ԴՈ՛Ւ ինչ արեցիր,– ասում է Էլսան:

Քիչ անց մի կին ոստիկան է մտնում՝ մկանուտ ձեռքերով ու կանաչ աչքերով: Երևում է, որ նա առաջին անգամը չէ, որ հանդիպում է տատիկին, որովհետև մի տեսակ հոգնած ժպտում է, ինչպես ժպտում են տատիկին ճանաչողները, ու խոր հոգոց հանելով՝ ասում է.

— Հերի՛ք է, դու պիտի սրան վերջ տաս: Մենք ուրիշ լուրջ հանցագործներ ունենք, որոնցով պիտի զբաղվենք:

Իսկ տատիկը մռթմռթում է.

— Դե, ուրեմն վերջացրե՛ք:

Հետո նրանց թույլ են տալիս տուն գնալ:

Երբ նրանք, մայթեզրին կանգնած, սպասում են Էլսայի մայրիկին, Էլսան մտամոլոր շոշափում է շարֆի պատռված մասը: Այն անցնում է հենց Գրիֆինդորի խորհրդանշանի մեջտեղով: Էլսան հազիվ է իրեն զսպում, որ լաց չլինի, բայց առանձնապես չի հաջողվում:

— Լա՛վ, ոչի՛նչ, մայրիկդ կկարի,– թփթփացնելով նրա ուսին՝ ասում է տատիկը՝ փորձելով զվարթ ձևանալ:

Էլսան գլուխը բարձրացնում է անհանգիստ հայացքով: Տատիկը շփոթված գլխով է անում ու լրջանալով ցածրաձայն ասում է.

— Դե… Կարող ենք… դե գիտես: Կարող ենք ասել, որ շարֆդ պատռվեց, երբ փորձում էիր ինձ խանգարել, որ անցնեմ կապիկների ցանկապատը:

Էլսան գլխով է անում ու մատները նորից քսում է շարֆի պատռված մասին: Այն ամենևին էլ տատիկի բարձրանալու ժամանակ չէր պատռվել, այլ երբ երեք աղջիկ, որ տարիքով մեծ են ու ատում են Էլսային, չնայած Էլսան բոլորովին չի հասկանում, թե ինչու, բռնել էին նրան ճաշասրահից դուրս

թվայնացրել է 1915.info կայքը

գալիս, ծեծել, պատռել շարֆն ու գցել զուգարանը: Նրանց ծաղրական ծիծաղը դեռ հնչում էր Էլսայի գլխում՝ մերթընդմերթ հայտնվելով փեյնթբոլի գնդակների պես: Տատիկը, բռնելով նրա հայացքը, մտերմաբար առաջ է թեքվում ու շշնջում իրենց գաղտնալեզվով.

— Մի գեղեցիկ օր մենք քո դպրոցի տխմար մսագնդիկներին կտանենք Միամաս ու կգցենք սոված առյուծների առաջ:

Էլսան ափի հակառակ կողմով սրբում է արցունքներն ու բերանի ծայրով ժպտում:

— Ես հո հիմա՞ր չեմ, տատի՛կ: Ես գիտեմ, որ էս գիշեր դու ամեն ինչ արեցիր, որ ես մոռանամ դպրոցում եղածը,– շշնջում է նա:

Տատիկը ոտքով փորում է խիճն ու հազալով կոկորդն է մաքրում:

— Դե… գիտես: Դու իմ միակ թոռնիկն ես: Ու ես չէի ուզենա, որ քեզ համար էս օրը հիշվեր շարֆի պատահարով: Դրա համար մտածեցի, որ ավելի լավ կլինի՝ փոխարենը հիշողությանդ մեջ մնա տատիկի ավազակային հարձակումը կենդանաբանական այգու տարածքում…

— Եվ հիվանդանոցից փախչելը,– հեգնում է Էլսան:

— Այո՛, նաև դա,– քմծիծաղում է տատիկը:

— Ու ոստիկանի վրա կղանք շպրտելը,– ավելացնում է Էլսան:

— Հա՛, բայց փաստացի հող էր: Կամ, ամեն դեպքում, մեծ մասը հող էր,– առարկում է տատիկը:

— Որովհետև հիշողությունները փոխելն ընտիր գերունակություն է,– համաձայնում է Էլսան:

Տատիկն ուսերն է թոթվում.

— Եթե չես կարող վատերից ազատվել, պետք է լավախեղդ անես դրանք:

— Էդպիսի բառ չկա:

— Գիտեմ:

— Շնորհակալ եմ, տատի՛կ,– ասում է Էլսան՝ գլուխը նրա թևին հենելով:

Տատիկը միայն գլխով է անում ու շշնջում.

— Մենք՝ Միամասի թագավորության ասպետներս, ընդամենը մեր պարտքն ենք կատարում:

Որովհետև բոլոր յոթ տարեկաններն արժանի են իրենց գերհերոսներն ունենալուն:

Իսկ ով համաձայն չէ, պարզապես անհույս անխելքի մեկն է:

թվայնացրել է 1915.info կայքը

2

ԿԱՊԻԿԸ

Մայրիկը վերցրեց նրանց ոստիկանական բաժանմունքի դիմացից: Երևում է, որ սարսափելի զայրացած է, սակայն կարողանում է վերահսկել ու տիրապետել իրեն և չի գոռգոռում: Որովհետև մայրիկը լիովին վերահսկում ու տիրապետում է իրեն և հիմնականում երբեք չի գոռգոռում, քանի որ նա տատիկի հակապատկերն է:

Մինչ մայրիկը կհասցներ կապել նրա ամրագոտին, Էլսան քնեց և Միամաս հասավ՝ նախքան մայրուղի դուրս գալը:

Միամասն Էլսայի ու տատիկի գաղտնի թագավորությունն է՝ Երկիր-Կիս-Արթունի վեց թագավորություններից մեկը: Տատիկն էր հնարել այն, երբ Էլսան դեռ փոքր էր: Մայրիկն ու հայրիկը բաժանվել էին, ու Էլսան վախենում էր քնել. կարդացել էր, որ մի երեխա քնած ժամանակ մահացել է:

Տատիկը հնարելուց լավ է: Այնպես որ, երբ հայրիկը գնաց իրենցից, ու բոլորն անընդհատ տխուր ու հոգնած էին, Էլսան ամեն գիշեր գաղտագողի ծլկում էր տնից: Նա գիշերազգեստով կամացուկ անցնում էր աստիճանավանդակն ու գնում էր տատիկի բնակարան, իսկ հետո ինքն ու տատիկը մտնում էին նրա մեծ զգեստապահարանը, որ երբեք չէր դադարում ընդարձակվել, ու այնտեղ ընդամենը թեթևակի փակում էին աչքերն ու պոկվում: Որովհետև Երկիր-Կիս-Արթուն հասնելու համար քնելը պարտադիր չէր: Նրբությունն էլ հենց դա է: Մարդ պիտի կիսաքնած լինի: Ու հենց այդ վերջին վայրկյաններին, երբ աչքերդ արդեն փակվում են, երբ իմացածիդ ու երևակայությանդ մշուշոտ սահմանին ես հասնում, այ հե՛նց այդ պահին կարող ես հասնել այնտեղ:

թվայնացրել է 1915.info կայքը

Սակայն միայն ամպէակ հեծած կարող ես բարձրանալ այդ թագավորություն, որովհետև տատիկը որոշել էր, որ հասնելու միակ ձևն այդ է: Ամպէակը տատիկի պատշգամբի դռնից ներս է մտնում, մեջքին առնում նրան ու Էլսային և թռչում վեր, ավելի վեր, մինչև որ Էլսան տեսնում է բոլոր զարմանալի, անհավատալի կախարդական արարածներին, որոնք բնակվում են Երկիր-Կիս-Արթունում. Էնֆանտներն ու չղջիկները, Հիմիկն ու վորսերը, ձյունահրեշտակներն ու արքայազները, արքայադուստրերն ու ասպետները: Ամպէակը սավառնում է անվերջանալի մթին անտառների վրայով, որտեղ ապրում են Գայլսիրտն ու բոլոր հրեշները, ու ներքև է սուրում՝ իջնելով շլացուցիչ գույներով ու քնքուշ զեփյուռներով պարուրված Միամասի քաղաքային դարպասների առջև:

Դժվար է ճշգրիտ ասել՝ տատի՞կն է մի քիչ տարօրինակ դարձել, քանի որ շատ ժամանակ է անցկացրել Միամասում, թե՞ Միամասն է տարօրինակ, քանի որ տատիկը չափազանց երկար է այնտեղ մնացել: Բայց տատիկի բոլոր հեքիաթները հենց այստեղից են սերում: Բոլոր ամենահրաշալի ու տարօրինակ հեքիաթները: Տատիկն ասում է, որ թագավորությունը Միամաս է կոչվել ամենաքիչը 10,000 հեքիաթի հավերժություն առաջ, բայց Էլսան գիտի, որ տատիկը հնարել էր դա, երբ Էլսան փոքր տարիքում դեռ չէր կարողանում արտաբերել «պիժա՛մաս» բառը ու փոխարենը «միա՛մաս» էր ասում: Չնայած տատիկը, իհարկե, իր էշն է քշում, թե ինքը ոչինչ էլ չի հնարել, և Երկիր-Կիս-Արթունում մյուս բոլոր հինգ թագավորություններն էլ ամենահիսկականն են, ու դրանք ավելի իսկական են, քան այս իրական կոչվող աշխարհը, որտեղ բոլորը փող են տնտեսում, առանց լակտոզայի կաթ են խմում և այլ հիմարություններ անում:

Այս իրական աշխարհից տատիկն առանձնապես գլուխ չի հանում: Կանոնները շատ են, իսկ տատիկը կանոնների հետ այնքան էլ լավ չէ: Խարդախում է «Մոնոպոլիա» խաղալիս, Renault-ը քշում է ավտոբուսի համար նախատեսված գծով, IKEA-ի ներքին գործածության մեծ, դեղին պայուսակները հետը դուրս է տանում ու օդակայանում ուղեբեռի բաժնի դեղին գծից առաջ է անցնում: Զուգարան մտնելիս էլ դուռը բաց է թողնում. տատիկի բնավորության և՛ս մի թերություն: Բայց նա պատմում է բոլոր հավերժությունների ամենալավ հեքիաթները, և դրա համար բնավորության բազում թերությունների վրա կարելի է աչք փակել. ինքն իր համար որոշել էր Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

«Բոլոր արժեքավոր հեքիաթները գալիս են Միամասից»,– ասում է տատիկը: Երկիր-Կիս-Արթունում մյուս հինգ թագավորություններն ուրիշ առաքելություններ ունեն. Միրևասի թագավորությունում հսկում են մարդկանց երազները, Միփլորիսում պահվում է աշխարհի ամբողջ վիշտը, Միմովասից գալիս է ամբողջ երաժշտությունը, Միաուդակասից՝ քաջությունը, իսկ Միբատալոսի թագավորությունում մեծացել են բոլոր խիզախ զինվորները, որ սարսափազդու ստվերների դեմ կռվել են Մարտ-Ան-Վերջում:

Բայց Միամասը տատիկի ու Էլսայի սիրած թագավորությունն է, քանի որ ամենից ազնվաբարո զբաղմունքը, որ մարդ կարող է ունենալ Միամասում, հեքիաթ պատմելն է: Նա, ով կարողանում է պատմությանը կյանք տալ, ավելի մեծ իշխանություն ունի այնտեղ, քան թագավորը: Միամասում երևակայությունն արժույթ է՝ մետաղադրամի փոխարեն. մարդ կարող է ինչ-որ բան գնել՝ մի լավ պատմություն պատմելով, իսկ գրադարանը ոչ թե գրադարան է կոչվում, այլ դրամատուն: Միամասում յուրաքանչյուր գիրք մի ամբողջ ունեցվածք է. հեքիաթներից յուրաքանչյուրը գնահատվում է մեկ միլիոն: Ու տատիկն ամեն երեկո այնտեղից հետն անթիվ-անհամար գանձերով լի սնդուկներ է բերում: Դրանց մեջ վիշապների ու տրոլների, թագավորների, թագուհիների ու վհուկների մասին հեքիաթներ են, ինչպես նաև ստվերների մասին, որովհետև ամեն հեքիաթային աշխարհ պիտի իր սարսափազդու չարագործ թշնամին ունենա: Երկիր-Կիս-Արթունի թշնամիները ստվերներն են, որովհետև դրանք ուզում են սպանել ամեն տեսակ երևակայություն: Քանի որ ստվերների մասին հեքիաթները հիշեցինք, ուրեմն պետք է պատմել նաև Գայլսիրտի մասին, որովհետև նա էր, որ հաղթեց բոլոր ստվերներին Մարտ-Ան-Վերջում: Նա առաջին ու ամենահզոր գերհերոսն էր, որի մասին լսել էր Էլսան:

Տատիկն Էլսային ամեն գիշեր հետը տանում էր Միամաս: Էլսային այնտեղ ասպետի կոչում էին շնորհել: Ու նա արդեն կարող էր ամպէակ հեծնել ու սեփական թուրն ունենալ: Դրանից հետո Էլսան այլևս երբեք չէր վախենում քնելուց, որովհետև Միամասում չեն ասում, թե աղջիկները չեն կարող ասպետ լինել: Լեռների գագաթներն այնտեղ մինչև երկինք են հասնում, ճամբարի խարույկները չեն հանգչում, ու ոչ մի խելապակաս չի փորձում գրիֆինդորցու շարֆը պատառոտել: Տատիկը, իհարկե, ասում է, թե Միամասում զուգարանի դուռը չեն փակում, որ իրականում ամբողջ Երկիր-Կիս-Արթունով մեկ բաց դռների քաղաքականությունն օրենք է:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց Էլսան վստահ է, որ տատիկն ուղղակի ճշմարտության մեկ այլ տարբերակ է ասում (այդպես տատիկն անվանում է սուտը՝ «ճշմարտության այլ տարբերակը»):

Այնպես որ, երբ Էլսան հաջորդ առավոտ արթնանում է տատիկի հիվանդասենյակում, տատիկը, զուգարանում դուռը բաց նստած, ինքնամոռաց ճշմարտության մեկ այլ տարբերակ էր պատմում նախասրահում կանգնած Էլսայի մայրիկին, չնայած առանձնապես լավ չէր ստացվում: Իրականում տատիկը գիշերով հիվանդանոցից փախել էր, Էլսան էլ դուրս էր եկել բնակարանից, երբ մայրիկն ու Յեորգը քնած էին: Հետո միասին Renault-ով գազանանոց էին գնացել, ու հետո տատիկը մագլցել էր ցանկապատի վրայով՝ իհարկե, մի հետադարձ հայացք գցելով: Հնարավոր է՝ մի քիչ անպատասխանատու թվա այդ ամենը, այն էլ գիշերով... յոթ տարեկան երեխայի հետ... Փաստարկների հետ Էլսան, անշուշտ, համաձայն է: Տատիկը, որի շորերի կույտն ընկած էր գետնին, ու որից բառացիորեն դեռ կապիկի անտանելի հոտն էր գալիս, փորձում էր իրեն պաշտպանել: Իբր երբ կապիկների վանդակի ցանկապատն էր մագլցում, ու պահակը սկսեց գոռգոռալ, տատիկը կարծեց, որ նա կարող է, ասենք, մի վտանգավոր հանցագործ լինել, դրա համար էլ սկսեց վրան հող շպրտել ու հետն էլ՝ նաև ոստիկանի վրա: Եվ այդ ժամանակ մայրիկը, ինքնատիրապետումը չկորցնելով, գլուխը հոգնած օրորեց ու ասաց, որ տատիկը հնարում է: Իսկ տատիկը տանել չի կարողանում, երբ իր պատմածին թերահավատորեն են վերաբերվում: Նա պակաս նվաստացուցիչ ձևակերպում է նախընտրում՝ «մարտահրավեր իրականությանը»: Այսպես է ասում մայրիկին: Երևում է, որ մայրիկը նրա կարծիքին չէ, բայց կարողանում է իրեն զսպել, որովհետև մայրիկը տատիկի ճիշտ հակապատկերն է:

— Սա քո արածներից ամենավատն է,– ատամները սեղմած՝ ասում է մայրիկը՝ զուգարանին նայելով:

— Ուղղակի չեմ պատկերացնում, աղջի՛կս,– ներսից անհոգ ասում է տատիկը:

Հետո մայրիկը հատ-հատ նշում է, թե ինչ է արել տատիկը, ու տատիկն ասում է, որ մայրիկը սրտնեղում է, որովհետև հումորի զգացում չունի: Եվ մայրիկն այդ ժամանակ ասում է, որ բավական է՝ տատիկն իրեն անպատասխանատու երեխայի նման պահի: Իսկ տատիկն ասում է.

— Գիտե՞ս՝ ծովահեններն ինչու են հետին խելքով մտածում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ու երբ մայրիկը չի պատասխանում, տատիկը բացականչում է.

— Որովհետև խելքը նավախելում են թողնում,– հնչում է զուգարանից:

Ու երբ մայրիկը հոգոց է հանում ու ճակատն է տրորում, տատիկը փռթկացնում է ու հաստատում.

— Տեսա՞ր, որ ասում եմ՝ կատակ չես հասկանում…

Ու այդ ժամանակ մայրիկը փակում է զուգարանի դուռը, իսկ տատիկն ահավոր կատաղում է, որովհետև տանել չի կարողանում, երբ զուգարանում նստած՝ իրեն փակված է զգում:

Նա արդեն երկու շաբաթ է՝ պառկած է հիվանդանոցում, բայց գրեթե ամեն օր փախչում է, Էլսային վերցնում, ու միասին գնում են պաղպաղակ ուտելու կամ տուն են գնում, երբ մայրիկը տանը չէ, ու աստիճանավանդակին օճառի փրփուրից սահադաշտ են սարքում: Կամ էլ ներխուժում է գազանանոցների տարածք, որտեղ էլ դեպքերի բերումով հայտնվել էր այս անգամ: Չնայած տատիկը, բնականաբար, չի կարծում, որ «փախուստ է կատարել» հիվանդանոցից, քանի որ համարում է, որ փախուստի դեպքում հանգամանքները բոլորովին այլ են լինում: Օրինակ՝ ճանապարհին վիշապ կամ ինչ-որ ծուղակներ կամ առնվազն պատ ու նման այլ բան պիտի լինի: Չնայած մայրիկն ու հիվանդանոցի աշխատակազմը, մեղմ ասած, համաձայն չեն:

Մի բուժքույր է մտնում սենյակ ու զգուշորեն շեղում մայրիկի ուշադրությունը: Նա մի թուղթ է տալիս, մայրիկն ինչ-որ բան է գրում, վերադարձնում է, ու բուժքույրը դուրս է գալիս: Հիվանդանոց պառկելու օրվանից տատիկն ինը բուժքույր էր փոխել: Յոթի հետ ինքն էր հրաժարվել գործ ունենալ, իսկ երկուսն իրենք էին հրաժարվել նրանից: Մի բուժակ հրաժարվել էր, որովհետև տատիկը նրան ասել էր, որ նա «սիրունիկ տուտուզիկ» ունի: Տատիկը համառորեն պնդում էր, որ այդ հաճոյախոսությունն ուղղված էր ոչ թե նրան, այլ նրա տուտուզիկին, ու չարժի լուն ուղտ սարքել: Իսկ մայրիկն ասաց, որ Էլսան դնի իր ականջակալները, բայց Էլսան ամեն դեպքում հասցրեց լսել, որ նրանք երկար վիճում էին «սեռական ոտնձգության» ու, տե՛ր իմ, «տուտուզիկին ուղղված մի հրաշք հաճոյախոսության» տարբերությունների մասին:

Նրանք՝ մայրիկն ու տատիկը, միշտ շատ են վիճել: Ինչքան Էլսան հիշում է, նրանք միշտ վիճում են: Ամեն առիթով: Որովհետև, եթե տատիկը դիս-

թվայնացրել է 1915.info կայքը

ֆունկցիոնալ (անգործունակ) գերհերոս է, ապա փոխարենը մայրիկը վերին աստիճանի աշխատունակ գերհերոս է:

«Նրանց հարաբերությունները նման են «Իքս մարդիկ» ֆիլմաշարի հերոսների՝ Կիկլոպի ու Կուղխի հարաբերություններին»,– մտածում էր Էլսան ու հետո իսկապես ափսոսում, որ իր շրջապատում չկա մեկը, որ հասկանա, թե ինքն ինչ նկատի ունի: Էլսայի շրջապատը, ըստ էության, ահավոր քիչ է որակյալ գրականություն կարդում: Իսկ «որակյալ գրականությունը» գրականությունից հեռու մարդիկ «կոմիքսներ» են անվանում, ու Էլսան կարծում է, որ որակյալ գրականությունից գաղափար չունեցողներին արժի բավական պարզ բացատրել, որ Իքս մարդիկ գերհերոսներ են: Չնայած նրանք մուտանտներ են, ու գիտական տեսանկյունից, անշուշտ, մեծ տարբերություն կա, բայց որպեսզի մարդ չընկնի մանրուքների հետևից ու չբարդացնի, ապա Էլսան կարող է ընդհանրացնելով ասել, որ տատիկն ու մայրիկն իրար լրիվ հակադիր գերուժեր են, ինչպես, օրինակ՝ Էլսայի սիրած հերոսներից Սարդ-մարդը, եթե Բազե-մարդու նման ոխերիմ թշնամի ունենար, որի գերուժը չէր բավարարում նույնիսկ նստարանի վրա բարձրանալուն: Լավ իմաստով:

Դե, իրականում Կիկլոպն ու Կուղխը հենց ուղղակիորեն հակադիր ուժեր չեն, բայց Էլսան չի կարծում, թե կարիք կա ընդհանրապես չհասկացողին շատ մանրամասն բացատրել ու ավելի բարդացնել: Եվ հիմա, որոշ չափով մտածելուց հետո, թերևս բավարար է ասել, որ մայրիկը կարգուկանոնն է, իսկ տատիկը՝ քաոսը: Էլսան մի անգամ կարդացել էր, որ Քաոսը Աստծո հարևանն է*, բայց մայրիկն ասաց, որ Քաոսի՝ Աստծո աստիճանավանդակ տեղափոխվելու միակ պատճառն այն էր, որ Քաոսը պարզապես այլևս ի վիճակի չէր ապրել տատիկի կողքին:

Մայրիկն ամեն ինչի համար թղթապանակներ ու օրացույցներ ունի, իսկ նշանակված հանդիպումից տասնհինգ րոպե առաջ հեռախոսից մի կարճ մեղեդի է հնչում: Իսկ տատիկն այն, ինչ որ պիտի հիշի, անմիջապես խոհանոցի պատին է գրառում մի փոքրիկ նշամատիտով (ֆլոմաստերով): Եվ ոչ միայն այն ժամանակ, երբ իր սեփական տանն է, այլ անկախ նրանից, թե որտեղ է գտնվում: Այդ համակարգը, անշուշտ, անխափան չի գործում, քանի որ ինչ-որ չափով ենթադրում է, որ տատիկը պիտի գտնվի նույն

* Շվեդ գրող Լարս Նուրենի «Քաոսը՝ Աստծո հարևան» պիեսից (Ծանոթագրությունը՝ **newmag**-ի):

թվայնացրել է 1915.info կայքը

մարդու տանը, երբ կարիք ունենա հիշելու այն, ինչ գրել է: Բայց երբ Էլսան ասաց տատիկին այդ մասին, նա փռթկացրեց.

— Ամեն դեպքում, ավելի քիչ հավանական է, որ ես կորցնեմ խոհանոցի պատը, քան որ մայրիկդ կկորցնի իր այդ պստլիկ, անպետք հեռախոսը:

Էլսան ի պատասխան հիշեցնում է, որ մայրիկը երբեք ոչինչ չի կորցնում: Իսկ տատիկն աչքերը ոլորում է ու հառաչում:

— Դե չէ՛, իհարկե, մայրիկդ պարզապես չտեսնված բացառություն է: Համ էլ, իմ ասածը, անո՛ւշս, անկատար մարդկանց համար է:

Կատարելությունը մայրիկի գերունակությունն է: Նա, իհարկե, տատիկի պես զվարճալի չէ, բայց մյուս կողմից, մայրիկը միշտ գիտի, թե ուր է Էլսայի գրիֆինդորցիների շարֆը:

— Իրականում ինչ-որ իր կորած է, միայն եթե մայրիկդ չի գտնում այն,– սովորաբար շշնջում է տատիկն Էլսայի ականջին՝ շարֆը վզին փաթաթելով:

Էլսայի մայրիկը ղեկավար է:

— Ոչ միայն աշխատանքի վայրում, այլև ամբողջ կենսակերպով,– սովորաբար փնչացնելով՝ ասում է տատիկը:

Մայրիկն այնպիսի մարդ չէ, որի հետ համընթաց կարողանաս գնալ. նրան պիտի միայն հետևես: Իսկ Էլսայի տատիկից ավելի շուտ խուսափում են, քան հետևում, ու նա ամբողջ կյանքում առհասարակ ոչ մի կորած շարֆ չի գտել: Տատիկն ընդհանրապես չի սիրում ղեկավարներին, իսկ հիվանդանոցում դա հատկապես լուրջ խնդիր է, քանի որ մայրիկն ահավոր ղեկավար է դառնում հենց այստեղ, որովհետև այստեղ գլխավորը փաստացի ինքն է:

— Դու չափազանցնում ես, Ո՛ւլրիկա, տե՛ր իմ,– բղավում է տատիկը զուգարանի դռան արանքից:

Նույն պահին նոր բուժքույր է մտնում բժշկի հետ, ու մայրիկը մի բան է գրում նոր թղթի վրա ու ինչ-որ թվեր է ասում: Մայրիկը զուսպ ժպտում է բուժքրոջն ու բժշկին. նրանք էլ նյարդային ժպտում ու դուրս են գալիս: Հետո զուգարանում երկար ժամանակ լռություն է տիրում, ու մայրիկը հանկարծ անհանգստանում է, ինչպես միշտ, երբ տատիկի շուրջբոլորը լռությունը մի քիչ ավելի երկար է տևում: Նա հոտոտում է օդը ու թափով բացում դուռը: Տատիկը մերկ նստած է զուգարանակոնքին՝ մի ոտքը հարմարավետ մյուսին գցած: Նա անփույթ թափահարում է ծխացող ծխախոտը մայրիկի ուղղությամբ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ներողություն խնդրել չկա՞: Զուգարանում էլ մարդ չի կարողանում իրեն մի քիչ ազատ զգալ:

Մայրիկը, ձեռքը փորին դրած, շփում է քունքերը: Տատիկը լուրջ տեսքով գլխով է անում ու ծխախոտը թափահարում փորի կողմը:

— Լա՛վ, հանգստացի՛ր, Ո՛ւլրիկա, տե՛ր իմ, մի՛ մոռացիր, որ հղի ես:

— Երևի թե դու էլ պիտի չմոռանաս,– պատասխանում է մայրիկը:

Չնայած ինքնատիրապետումը չի կորցնում:

— Touché*,– քրթմնջում է տատիկը՝ խորը ներս քաշելով ծուխը:

Սա այն բառերից է, որոնց նշանակությունն Էլսան գիտի՝ առանց իմանալու դրանց իմաստը: Մայրիկը դանդաղ տարուբերում է գլուխը:

— Դու ընդհանրապես մտածո՞ւմ ես, թե ի՞նչ վնաս ես տալիս Էլսային ու նոր բալիկին,– ասում է նա՝ ցույց տալով ծխախոտը:

Տատիկը հայացքը փախցնում է:

— Լա՛վ էլի, սպանեցիր, թողեցիր: Մարդիկ բոլոր ժամանակներում էլ ծխել են ու լավ էլ երեխաներ են ունեցել: Միայն ձեր սերունդն է, որ չի պատկերացնում, թե մարդկությունը ոնց է միլիոնավոր տարիներ գոյատևել՝ առանց ալերգիայի թեստերի ու նման այլ հիմարության, մինչև որ հայտնվեց ձեր սերունդն ու որոշեց, որ դուք առանձնահատուկ եք: Կարծում եք՝ քարանձավներում ապրելիս մամոնտի մորթիները լվացքի մեքենան գցում ու իննսուն աստիճանում լվանո՞ւմ էին՝ նախքան նորածիններին փաթաթելը: Հա՞:

Էլսան գլուխը թեք նայում է:

— Իսկ էն ժամանակ ծխախոտ կա՞ր:

Տատիկը տնքում է:

— Հիմա էլ դո՞ւ:

Մայրիկը ձեռքը փորին է պահում: Էլսան չգիտի, պատճառը Կեսիկի՝ ներսից բոթբոթե՞լն է, թե՞ մայրիկն ուզում է նրա ականջները փակել, որ չլսի: Մայրիկը Կեսիկի մայրիկն է, բայց հայրը Յեորգն է. այնպես որ Կեսիկն Էլսային կիսով չափ է արյունակից կամ, ավելի ճիշտ, լինելու է: Չնայած նա միայն կիսով չափ է արյունակից, բայց ամբողջական մարդ է լինելու. այդպես էին խոստացել Էլսային: Նա մի քանի օր շփոթված ու շվարած էր, մինչև որ հասկացավ տարբերությունը:

---

* Կպավ (ֆրանսերեն), այսինքն՝ դու հաղթեցիր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քո նման խելոքն էլ երբեմն ահավոր անհասկացող է լինում,– բացականչել էր տատիկը, երբ Էլսան հարց էր տվել:

Ու դրանից հետո նրանք համարյա երեք ժամ խռով էին մնացել՝ այսպիսով իրենց համար խռովության նոր ռեկորդ սահմանելով:

— Ես ուղղակի ուզում էի, որ նա կապիկներին տեսնի, Ո՛ւլրիկա,– վերջապես մի քիչ ավելի զուսպ քրթմնջում է տատիկը՝ ծխախոտը հանգցնելով լվացարանի մեջ:

— Էլ չեմ դիմանում…,– հուսահատ ասում է մայրիկը, չնայած ափերից դուրս չի գալիս, բայց դուրս է գալիս միջանցք՝ էլի ինչ-որ թվերով թղթեր ստորագրելու:

Տատիկն ընդամենն ուզում էր, որ Էլսան կապիկներին տեսնի. պատմության այդքան մասը, իրոք, ճիշտ էր: Այդ գիշեր նրանք հեռախոսով խոսում էին իրար հետ. Էլսան՝ տնից, տատիկը՝ հիվանդանոցից, ու սկսել էին վիճել, թե կա՞ն արդյոք կապիկների տեսակներ, որ կանգնած են քնում: Ակնհայտ էր, որ տատիկը սխալվում է, որովհետև Վիքիպեդիայում այդ մասին հոդված կար, բայց հետո Էլսան սկսել էր պատմել շարֆի պատմությունը: Այդ ժամանակ տատիկը որոշել էր, որ պիտի անպայման գնան գազանանոց ու տեսնեն կապիկներին, որ Էլսան կարողանա միտքն ուրիշ բանի վրա շեղել: Ու Էլսան ծլկել էր, քանի մայրիկն ու Յեորգը քնած էին: Երբ տատիկը, ցանկապատը մագլցելով, արդեն պատրաստվում էր մտնել գազանանոց, վրա էր հասել գիշերային պահակը, հետո ժամանել էր ոստիկանը, ու հետո էլ տատիկը նրանց վրա հող էր շպրտել: Բայց նրանք կարծել էին, թե դա կղանք է գլխավորապես այն պատճառով, որ տատիկը գոռացել էր.

— Ք*ք քեզ:

Մայրիկն անհետացել ու մեկի հետ զրուցում էր միջանցքում: Նրա հեռախոսն անդադար զնգում էր: Էլսան տեղավորվում է տատիկի մահճակալին. տատիկը հագնում է իր գիշերանոցն ու նրա դիմաց նստելով՝ քմծիծաղում: Հետո նրանք «Մոնոպոլիա» են խաղում: Տատիկը բանկից փող է թռցնում, իսկ երբ Էլսան բացահայտում է նրա արածը, տատիկը մեքենա է փախցնում, սլանում կայարան ու փորձում ճողոպրել քաղաքից:

Հետո մայրիկը հոգնած տեսքով նորից սենյակ է մտնում ու ասում Էլսային, որ պիտի գնան տուն, որովհետև տատիկը պետք է հանգստանա: Եվ Էլսան երկար, երկար, երկար գրկում է տատիկին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ե՞րբ ես տուն գալու,– հարցնում է Էլսան:

— Վաղը հաստատ կգամ,– ուրախ խոստանում է տատիկը:

Նա, իսկապես, ամեն օր էլ վերադառնում է: Հետո ուղղում է Էլսայի աչքերին ընկած մազափունջը, ու երբ մայրիկը միջանցք է դուրս գալիս, տատիկը հանկարծ լրջանում է ու իրենց գաղտնալեզվով ասում Էլսային.

— Ես կարևոր հանձնարարություն ունեմ քեզ համար:

Էլսան գլխով է անում, որովհետև տատիկը միշտ հանձնարարությունն իրենց գաղտնալեզվով է տալիս, որը միայն Երկիր-Կիս-Արթունում եղածները գիտեն: Ու Էլսան միշտ կատարում է դրանք, որովհետև Միամասի ասպետներն այդպես են անում. կատարում են իրենց պարտականությունները՝ բացի ծխախոտ գնելուց ու միս տապակելուց: Այդ երկուսը բացառվում են, որովհետև այդ երկուսը պարզապես զզվելի են: Ասպետը, անկախ պարտավորությունից, պիտի սկզբունքներ ունենա: Տատիկը ձգվում է ներքև ու մահճակալի տակից մի մեծ տոպրակ է վերցնում: Մեջը միս կամ ծխախոտ չէ: Կոնֆետներ են:

— Էս շոկոլադները պիտի հասցնես ընկերոջս:

Մի քանի վայրկյան է անցնում, մինչև Էլսան հասկանում է, թե որ ընկերոջը նկատի ունի տատիկը: Ու հասկանալով աչքերը տագնապած հառում է տատիկին:

— ԳԺՎԵ՞Լ ես: Ուզում ես ես ՄԵՌՆԵ՞Մ:

Տատիկը զարմացած տեսք է ընդունում:

— Դե լա՛վ, էլ մի՛ չափազանցրու: Այսինքն՝ Միամասի ասպետի համարձակությունը չի՞ հերիքում հասուն մարդուն վայել հանձնարարությունը կատարել:

Էլսան զայրացած հայացքով շաղափում է նրան:

— Ա՛յ քեզ հասունություն, ծաղրո՞ւմ ես ինձ, հա՞:

— Ա՛յ քեզ հասունություն. արդեն «հասունություն» բառն ես օգտագործում,– քմծիծաղ է տալիս տատիկը:

Հետո չանթում է տոպրակը: Մեջը լիքը փոքրիկ փաթեթավորված «Դայմ» շոկոլադե կոնֆետներ էին: Տատիկը մատը տնկում է դրանց վրա:

— Շատ կարևոր է, որ վրայի թղթերը հատ-հատ բացես, այլապես խիստ դժգոհելու է:

Էլսան խեթ-խեթ նայում է տոպրակին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա ի՞նչ պիտի ասեմ: Նա իսկի չգիտի՝ ով եմ:

Տատիկն այնքան բարձր է փնչացնում, ասես քիթը մաքրելիս լինի:

— Իհարկե գիտի, տե՛ր Աստված: Միայն ասա, որ տատիկդ բարևում է ու ասում՝ կներես:

Էլսան ունքերը բարձրացնում է:

— Ինչի՞ համար ես «կներես» ասում:

— Որ քանի օր է՝ կոնֆետ չեմ ուղարկել,– պատասխանում է տատիկը, ասես աշխարհի ամենասովորական բանը լինի:

Էլսան նորից նայում է տոպրակի մեջ:

— Ահավոր անպատասխանատվություն է, տատի՛կ, որ միակ թոռանդ նման գործի ես ուղարկում: Բա որ ինձ սպանի՞:

— Ի՞նչ ես դուրս տալիս ,– ասում է տատիկը:

— Դո՛ւ ես դուրս տալիս,– ֆշշացնում է Էլսան:

Տատիկը հեգնախառը ժպտում է: Որովհետև միշտ այդպես է անում: Հետո, ի վերջո, Էլսայի դեմքին էլ է ժպիտ երևում: Որովհետև միշտ այդպես է լինում: Տատիկի ձայնը շշուկի է վերածվում:

— Շոկոլադը պիտի թաքուն հանձնես Բարեկամիս: Բրիտ-Մարին հանկարծ չտեսնի: Սպասի՛ր, մինչև վաղը երեկոյան նրանց ժողովը սկսվի, ու թաքուն մտի՛ր մոտը:

Էլսան գլխով է անում: Չնայած միշտ ահավոր վախենում էր Բարեկամից ու շարունակում է մտածել, որ ահավոր ու սարսափելի անպատասխանատվություն է միակ թոռնուհուն կյանքի համար վտանգավոր «Դայմ»-առաջադրանք տալը: Բայց տատիկն ափերի մեջ ամուր սեղմեց նրա ցուցամատերը: Նա միշտ այդպես է անում, ու դրանից հետո Էլսան այլևս ոչնչից չի վախենում: Նրանք նորից գրկախառնվեցին:

— Մինչև հանդիպում, ո՛վ Միամասի հպարտ ասպետ,– շշնջաց տատիկը նրա ականջին:

Տատիկը երբեք չի ասում՝ մնաս բարով, միայն ասում է՝ մինչ հանդիպում:

Երբ Էլսան նախասրահում հագնում է վերարկուն, լսում է, որ մայրիկն ու տատիկը խոսում են բուժման մասին: Եվ մայրիկն Էլսային խնդրում է դնել ականջակալները: Ու Էլսան դնում է: Ծննդյան տոներին ինքն էր ականջակալներ ուզել՝ որպես նվեր, և համառորեն պնդել էր, որ մայրիկն ու տատիկը միասին հավասարապես վճարեն, որովհետև այդպես արդարացի էր: Ու երբ մայրիկն ու տատիկը սկսում էին վիճել, Էլսան դնում էր ականջա-

թվայնացրել է 1915.info կայքը

կալներն ու բարձրացնում երաժշտության ձայնը և պատկերացնում էր, թե մայրիկն ու տատիկը համր ֆիլմի դերասաններ են: Էլսան վաղ տարիքից էր հասկացել, որ կյանքը հեշտանում է, երբ ինքդ ես ընտրում քո սեփական երաժշտությունը: Վերջին լսածն այն էր, որ տատիկը հարցնում էր, թե երբ կարող է իր Renault-ը վերցնել ոստիկաններից:

Renault-ը տատիկի մեքենան է, որը, նրա ասելով, շահել էր պոկեր խաղալիս: Փոքր ժամանակ Էլսան կարծում էր, թե Renault-ը տատիկի ավտոմեքենայի անունն է, մինչև որ հասկացավ, որ միայն այդ մեքենան չէր, որ այդպես էր կոչվում: Բայց մեքենայի անունը մնաց Renault, որովհետև այն, իրոք, սազում է ավտոմեքենային, քանի որ անունը ֆրանսիացի հազացող ծերուկ է հիշեցնում: Տատիկի Renault-ն էլ է ծեր, ֆրանսիական ու ժանգոտ, ու երբ մարդ արագությունն է փոխում, այնպիսի ձայն է գալիս, ինչպես ծանր կահույքը բետոնի վրայով քարշ տալիս: Էլսան գիտի, որ Renault-ը վարելիս տատիկը երբեմն ծխում ու քյաբաբ է ուտում, ու այդ ժամանակ միայն ծնկներն են ազատ մնում վարելու համար, այնպես որ նա սեղմում է կցորդիչ ոտնակն ու բղավում՝ ՀԻՄԱ՛, ու Էլսան իսկույն փոխում է արագությունը:

Ինչքա՞ն է կարոտում այդ ուղևորությունները:

Մայրիկն ասում է տատիկին, որ թույլ չեն տալու Renault-ը վերցնել: Ու տատիկը բորբոքված ասում է, որ ավտոմեքենան փաստացի իրենն է, իսկ մայրիկը պատասխանում է, որ իրականում արգելվում է վարել՝ առանց վարորդական իրավունքի: Ու տատիկն այդ ժամանակ մայրիկին «երիտասարդ օրիորդ» է անվանում ու պատմում, որ ինքն առնվազն վեց երկրում վարորդական իրավունք ունի: Ինչից հետո մայրիկն իրեն զսպելով հետաքրքրվում է, թե իրենց երկիրը պատահաբար այդ երկրների մեջ չի՞ մտնում: Տատիկը ի պատասխան թթված դեմքով նստում է, մինչ բուժքույրը հետազոտության համար արյուն է վերցնում:

Էլսան դուրս է գալիս՝ վերելակի մոտ սպասելու, քանի որ սարսափելի չի սիրում ներարկիչներ ու սրսկումներ՝ անկախ նրանից, թե ում թևն են ծակելու: Նա նստում է աթոռին ու iPad-ով կարդում «Հարրի Փոթերն ու Փյունիկի միաբանությունը»: Ամենաքիչը 12 անգամ կարդացել է: Այդ հատորն ամենաքիչն է սիրում, թե չէ ավելի շատ կարդացած կլիներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբ մայրիկը գալիս է իր հետևից, ու իջնում են ավտոկայան, Էլսան հանկարծ հիշում է, որ գրիֆինդորցիների շարֆը մոռացել է տատիկի սենյակի միջանցքում: Ու հետ է վազում:

Տատիկը, մահճակալի ծայրին նստած, մեջքով դեպի դուռը, հեռախոսով խոսում է ու թոռանը չի նկատում: Էլսան գլխի է ընկնում, որ իր փաստաբանի հետ է խոսում, քանի որ հրահանգներ է տալիս նրան, թե ինչ տեսակի գարեջուր է ուզում, որ մյուս անգամ իրեն հիվանդանոցում այցելելիս բերի: Էլսան գիտի, որ փաստաբանը թաքուն գարեջուր է բերում՝ հաստափոր տեղեկագրքերի մեջ թաքցրած, որոնք իբր անհրաժեշտ են տատիկին իր «ուսումնասիրությունների» համար, սակայն դրանց մեջ գարեջրի շշերի համար տեղ է փորված: Էլսան կախիչի վրայից վերցնում է շարֆն ու, այն է, ուզում է տատիկին ձայն տա, երբ լսում է, որ տատիկը ցածրաձայն ասում է.

— Նա իմ թոռնիկն է, Մարսե՛լ: Օրինվի՛ նրա փոքրիկ գլուխը: Կյանքումս էսքան խելացի աղջիկ չեմ տեսել: Պատասխանատվությունը կթողնենք նրա վրա: Նա միակն է, որը ճիշտ որոշում կկայացնի:

Մի որոշ ժամանակ լռություն է տիրում: Հետո տատիկը հաստատակամ շարունակում է:

— Ես գիտեմ, որ երեխա է, Մարսե՛լ: Բայց նա շատ ավելի խելացի է, քան էն բոլոր մեծահասակ տխմարները՝ միասին վերցրած: Ու դա ի՛մ կտակն է, դու էլ ի՛մ փաստաբանն ես: Ուղղակի արա՛ այնպես, ինչպես ասում եմ:

Էլսան նախասրահում շունչը պահած կանգած է: Իսկ երբ տատիկն ասում է. «Որովհետև ես ՉԵՄ ՈՒԶՈՒՄ դեռ իրեն ասել այդ մասին, Մարսե՛լ: Որովհետև բոլոր յոթ տարեկաններն արժանի են իրենց գերհերոսներն ունենալուն», Էլսան շրջվում ու անձայն, արցունքներն աչքերին դուրս է վազում՝ գրիֆինդորցիների շարֆը ձեռքին:

Եվ վերջին պահին լսում է, որ տատիկն ասում է.

— Ես չեմ ուզում, որ Էլսան իմանա, որովհետև բոլոր յոթ տարեկաններն արժանի են գերհերոսներ ունենալուն, հասկանո՞ւմ ես, Մարսե՛լ: Էնպիսի գերհերոսներ, որոնց գերունակություններից մեկը քաղցկեղով չհիվանդանալը լինի:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

3

ՍՈՒՐԽԸ

Տատիկի տունը մի տեսակ ուրիշ է: Երբեք չես մոռանա նրա յուրահատուկ բույրը:

Անշուշտ, սովորական մի շենք է: Իրոք: Զորսհարկանի է, ինը բնակարանով, ու տատիկի բույրն ունի: Եվ, բնականաբար, սուրճի: Այն համարյա միշտ սուրճի բույրն ունի: Շենքում հստակ կանոններ են սահմանել, որ կախված է լվացքատանը՝ «Հանուն բոլորի հարմարավետության» վերնագրով, որտեղ «հարմարավետություն» բառն ընդգծված է երկու անգամ: Վերելակ էլ կա, որ միշտ փչացած է, բակում՝ աղբի տեսակավորման արկղեր, մի հարբեցող, մի կռվաշուն ու մի տատիկ:

Սովորական շենք է: Իրոք:

Տատիկն ապրում է ամենավերևում: Դիմացի բնակարանում ապրում են մայրիկը, Էլսան ու Յեորգը: Յեորգը մայրիկի զուգընկերն է, ինչն առանձնապես հեշտ չէ, քանի որ դա նշանակում է, որ ապրում է տատիկի հարևանությամբ: Յեորգը մորուք է պահում, գլխին փոքրիկ գլխարկ է կրում ու տրիկոյի վրայից կարճ շալվար հագած՝ սիրում է վազել ու անգլիական եղանակով ճաշ պատրաստել: Նա բաղադրատոմսը կարդալիս «ծեծած մսի» փոխարեն «սթեյք» է ասում: Տատիկն ասում է. «Նրա բախտը բերել է, որ գոնե դուրեկան է, ոչ թե գետաձիու պես դանդալոշ»: Ու երբեք նրան Յեորգ չի ասում, այլ միայն՝ «դատարկագլուխ»: Մայրիկն ահավոր նեղսրտում է դրանից, բայց Էլսան գիտի, որ տատիկը մայրիկին զայրացնելու համար չի այդպես ասում: Ուղղակի ուզում է, որ Էլսան իմանա, որ ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

էլ լինի, տատիկը նրա կողմից է: Ուղղակի այդպես է պետք, երբ տատիկը սիրում է իր թոռնիկին, իսկ նրա ծնողները բաժանվում են ու նոր զուգընկերներ են ունենում, ու մեկ էլ անսպասելիորեն հայտարարում են, որ թոռնիկը համամայր քույր կամ եղբայր է ունենալու: Իսկ տատիկը միշտ թոռան կողմից է: Միշտ: Անկախ ամեն ինչից: Իսկ այն, որ մայրիկն ուղղակի գժվում է դրանից, տատիկն ընկալում է իբրև լրացուցիչ պարգև:

Մայրիկն ու Յեորգը չեն փորձել պարզել՝ Կեսիկը կեսեղբա՞յր, թե՞ կեսքույրիկ է: Չնայած նրան, որ հնարավոր է իմանալ: Յեորգի համար հատկապես կարևոր է, որ չիմանա: Նա չի ուզում աղջիկ կամ տղա անվանել երեխային, որ «սեռային դեր չպարտադրի նրան»: Առաջին անգամ Էլսան կարծեց, թե նա «սեռային դև» էր ասել: Ա՛յ թե այդ երեկո շփոթության մեջ էր գցել բոլոր ներկաներին: Մայրիկն ու Յեորգն արդեն որոշել են, որ Կեսիկի անունը դնելու են Էլվիր կամ Էլվիրա: Երբ Էլսան ասաց տատիկին, նա բացականչեց.

— Էլվի՞ր:

— Դա Էլվիրայի արական տարբերակն է,– բացատրել էր Էլսան, իսկ տատիկը տարուբերել էր գլուխն ու փռթկացրել.

— Էլվի՞ր: Կարծում ես տղան կկարողանա՞ օգնել Ֆրոդոյին՝ մատանին հասցնելու Մորդոր:

Որովհետև նա վերջերս էր Էլսայի հետ միասին նայել «Մատանիների տիրակալը», քանի որ Էլսայի մայրիկը հստակ դեմ էր, որ Էլսան նայեր: Էլսան, իհարկե, գիտի, որ տատիկը վատ չի տրամադրված Կեսիկի կամ Յեորգի հանդեպ: Նա այդպես է ասում լոկ այն պատճառով, որ տատիկ է ու միշտ Էլսայի կողմից է, միշտ՝ անկախ ամեն ինչից: Նույնիսկ այն ժամանակ, երբ Էլսան պատմեց, որ ատում է Յեորգին, համ էլ երբեմն Կեսիկին է ատում: Դրա համար էլ ուղղակի անհնար է չսիրել տատիկին, որ լսում է՝ ինչ ահավոր բաներ ես ասում, բայց, այնուամենայնիվ, դրանից հետո էլ է քո կողմից լինում:

Տատիկի բնակարանը ճիշտ նույնն է, ինչ մայրիկինը, չնայած այնտեղ ահավոր խառնաշփոթ է տիրում, որովհետև մայրիկի բնակարանը մայրիկի նման է, իսկ տատիկինը՝ տատիկի: Մայրիկը կարգուկանոն է սիրում, իսկ տատիկը՝ անկարգություն:

Տատիկի բնակարանի տակ ապրում են Բրիտ-Մարին ու Քենթը: Նրանք շատ են սիրում նոր իրեր ձեռք բերել, Քենթն էլ միշտ պատմում է, թե որն

թվայնացրել է 1915.info կայքը

ինչ արժի: Քենթը գրեթե տանը չի լինում, քանի որ ձեռնարկատեր է: Սովորաբար իրեն անծանոթ մարդկանց մոտ քրքջալով պատմում է. «Հրաշալի գործ պիտի ձեռնարՔԵՆՔ»: Ու եթե մարդիկ իսկույն չեն ծիծաղում, Քենթը կրկնում է ավելի բարձր: Կարծես պատճառը չլսելն էր: Տատիկն ասում է, որ Քենթն անուղղելի տխմարի մեկն է, ու «ձեռնարկատեր» բառը, ըստ էության, եկել է Երկիր-Կիս-Արթունից, որովհետև ինչ-որ մեկը որոշել էր կրճատել «ձեռքերը թափ տվող կամ ամեն ինչին գցող» արտահայտությունը, որով բնութագրում էին Միամասի շուրջ թափառող շրջմոլիկներին: Էլսան չէր կարող հաստատ ասել, թե որքանով էր տատիկի ասածը ճիշտ, սակայն Բրիտ-Մարին, ամեն դեպքում, համարյա միշտ տանն է, այնպես որ Էլսան ենթադրում է, որ նա ձեռնարկատեր չէ: Տատիկն ասում է, որ նա լրիվ դրույքով փնթփնթան է: Դե, Բրիտ-Մարին ու տատիկն իրար հետ շատ էլ լավ չեն: Այսինքն՝ իրար հետ լեզու չեն գտնում, ոնց որ, ասենք, նապաստակն ու կրակը:

— Պառավը հոգում կոշտուկներ ունի,– սովորաբար ասում է տատիկը, որովհետև Բրիտ-Մարին միշտ այնպիսի տեսք ունի, ասես շոկոլադի տուփի միջից սխալ կտոր է բերանը գցել: Նա էր լվացքատան՝ «Հանուն բոլորի հարմարության» հայտարարության հեղինակը:

Բոլորի հարմարությունը չափազանց կարևոր էր Բրիտ-Մարիի համար, չնայած որ նա ու Քենթը միակն էին տանը, որ բնակարանում չորացնող լվացքի մեքենա ունեին:

Մի անգամ, երբ Յեորգը լվացքի ժամ էր ամրագրել, Բրիտ-Մարին դռան զանգը տվել ու մտել էր Էլսայի մայրիկի հետ խոսելու: Ձեռքին կապտավուն փոքրիկ խավոտ գնդիկ կար՝ լվացքի մեքենայի ֆիլտրի միջից հանած, որը նա մեկնել էր մայրիկին, ասես այն ձվից նոր դուրս եկած թռչնակ լիներ, ու ասել էր.

— Կարծես թե սա լվացք անելիս մոռացել ես, Ո՛ւլրիխա: Եվ երբ Յեորգը բացատրել էր, որ ինքն է փաստացի լվացքի հարցերով զբաղվում, Բրիտ-Մարին նրան էր նայել ու ժպտացել, որ ամենևին բարեհաճություն չէր նշանակում: Հետո հեգնել էր, թե շատ ժամանակակից ընտանիք է. ժպտացել էր մայրիկին ու գնդիկը նրա ձեռքը տալով՝ ասել էր. «Մեր համատիրությունը որոշել է, որ բոլորի հարմարության համար լվացքը չորացնելուց հետո պետք է դատարկենք լվացքի մեքենայի ֆիլտրը, Ո՛ւլրիխա»:

թվայնացրել է 1915.info կայքը

Բնականաբար, դեռևս ոչ մի համատիրություն էլ չկա: Բայց կլինի, ինչի մասին հատուկ շեշտում է Բրիտ-Մարին, քանի որ ինքն ու Քենթը համոզված են: Ու Բրիտ-Մարիի համատիրությունում բոլոր կանոնները խստիվ գործելու են: Դրա համար էլ նա ասես տատիկի Նեմեսիսն է: Էլսան խելքը գլխին գրականություն է կարդում ու գիտի, թե «Նեմեսիսն» ինչ է:

Բրիտ-Մարիի ու Քենթի դիմացի բնակարանում ապրում է սև շրջազգեստով տիկինը: Բայց նրան գրեթե երբեք չես տեսնի, բացառությամբ, եթե առավոտ վաղ կամ ուշ երեկոյան հանկարծ հանդիպես բնակարանից շենքի մուտքն ընկած տարածքով արագ անցնելիս: Հագին միշտ բարձրակրունկ կոշիկներ են, անթերի արդուկած սև կիսաշրջազգեստ, ձեռքին՝ բարակ թղթապանակ, ականջից սպիտակ լար է կախված, ու միշտ բարձրաձայն խոսում է: Նա երբեք չի ողջունում ու երբեք չի ժպտում: Տատիկն ասում է, որ նրա շրջազգեստն այդ աստիճան լավ է արդուկած, որովհետև ով էլ նրա շրջազգեստի տեղում լիներ, ճմռթվել չէր համարձակվի:

Բրիտ-Մարիի ու Քենթի բնակարանի տակ ապրում են Լենարտն ու Մոդը: Լենարտն օրական ամենաքիչը 20 բաժակ սուրճ է խմում, բայց, մեկ է, ամեն անգամ նորից խմելիս այնպիսի տեսք ունի, ասես խաղարկությամբ է շահել: Նա աշխարհի երկրորդ ամենաբարի մարդն է: Ամուսնացած է Մոդի հետ: Իսկ Մոդն աշխարհի ամենաբարի մարդն է ու միշտ հենց նոր թխած թխվածք ունի: Նրանք ապրում են Սամանթայի հետ, որն անընդմեջ քնած է: Սամանթան բիշոն ֆրիզե* է, բայց Լենարտն ու Մոդը հետն այնպես են խոսում, կարծես իսկի էլ շուն չէ: Երբ Լենարտն ու Մոդը Սամանթայի ներկայությամբ սուրճ են խմում, այն «մեծական ըմպելիք» են անվանում: Տատիկն ասում է, որ նրանք երկուսն էլ խելքները թռցրել են, բայց Էլսան չի կարծում, որ դա էական է, երբ մարդ այդ աստիճան բարի է: Նրանց տանը միշտ հրուշակներ կան ու գրկախառնություններ: Հրուշակները փոքրիկ, փխրուն թխվածքներ են, իսկ գրկախառնությունները՝ պարզապես իսկական գրկախառնություններ:

Լենարտի ու Մոդի դիմաց ապրում է Ալֆը: Նա տաքսի է վարում, միշտ կաշվե բաճկոն է հագնում ու միշտ անտրամադիր է: Նրա կոշիկների ներ-

* Փոքր ցեղատեսակի ֆրանսիական շուն՝ երկար, գանգուր մետաքսանման բրդով (Ծանոթագրությունը՝ **newmag**-ի):

թվայնացրել է 1915.info կայքը

բանները ծխախոտի թղթից էլ բարակ են, և քայլելիս ոտքերը չի բարձրացնում: Տատիկի ասելով՝ այդ տղայի ծանրության կենտրոնն ամենացածրն է ամբողջ տիեզերքում:

Լենարտի ու Մոդի բնակարանի տակ համախտանիշով տղա է ապրում իր մայրիկի հետ: Համախտանիշով տղան Էլսայի տարեկիցն է, ուղղակի մի քանի շաբաթով փոքր ու երբեք չի խոսում: Նրա մայրիկի վրայից անընդհատ ինչ-որ բան է ընկնում, թվում է՝ գրպաններից անձրև է գալիս: Նա նման է մուլտերում խուզարկվող այն ավազակին, որի դատարկվող գրպանների պարունակությունը, աչքի առաջ սարի պես մեծանալով, նրա հասակից բարձր է թվում: Բայց նա ու համախտանիշով տղան շատ բարի աչքեր ունեն, ու նույնիսկ տատիկը կարծես նրանց դեմ ոչինչ չունի:

Նրանց կողքի բնակարանում՝ երբեք չգործող վերելակի մյուս կողմում, ապրում է Հրեշը: Էլսան, ըստ էության, նրա իսկական անունը չգիտի, բայց Հրեշ է ասում, որովհետև բոլորը նրանից վախենում են: Նկատի ունի բոլորին: Նույնիսկ Էլսայի մայրիկը, որ աշխարհում ոչնչից չի վախենում, թեթևակի Էլսային մեջքից հրում է, երբ պիտի անցնեն Հրեշի բնակարանի կողքով: Ոչ մեկը Հրեշին չի տեսել, որովհետև նա ցերեկով երբեք դուրս չի գալիս, բայց Քենթը բնակիչների ժողովներին միշտ ասում է. «Էդպիսիներին չի կարելի թույլ տալ, որ ազատ ֆռֆռան: Բայց էս անիծյալ երկրում նրանց երես են տալիս՝ հոգեբանական օգնություն տրամադրելով, փոխանակ փակի տակ պահեն»: Բրիտ-Մարին նամակ էր գրել սեփականատիրոջն ու պահանջել, որ Հրեշին վտարեն բնակարանից, քանի որ համոզված էր, որ Հրեշն իր մոտ ուրիշ չարագործների կբերի: Էլսան կարգին չի հասկանում, թե ինչ է դա նշանակում: Ու ոչ էլ լիովին վստահ է, որ Բրիտ-Մարին է հասկանում: Իսկ երբ տատիկին մի օր հարցրեց Հրեշի մասին, նրա հայացքում ինչ-որ տարօրինակ փայլ երևաց, և նա կամացուկ ասաց, որ որոշ խնդիրներ կան, որոնց մասին չեն խոսում: Էլսայի տատիկը Մարտ-Ան-Վերջում կռվել է Երկիր-Կիս-Արթունի ստվերների դեմ: Այնպես որ, տատիկը հանդիպել է ամենասարսափելի արարածներին, որ հնարավոր է պատկերացնել 10,000 հեքիաթների հավերժության մեջ:

Այո՛, ըստ էության, այսպես են Երկիր-Կիս-Արթունում չափում ժամանակը: Չափման միավորը հավերժությունն է, պարզապես ժամացույցներ

թվայնացրել է 1915.info կայքը

չկան Երկիր-Կիս-Արթունում, ու մարդ իր զգացողությամբ է ժամանակը չափում: Եթե թվում է, թե փոքրիկ հավերժության չափ է տևում, կարելի է ասել՝ մի փոքր հավերժություն տևեց: Եթե, ասենք, մի երկու դյուժին հավերժության չափ ես զգում, ուրեմն, իրոք որ, մի ամբողջ հավերժություն է: Մի ամբողջ հավերժությունից ավելի երկար տևում է հեքիաթային հավերժությունը, որովհետև հեքիաթային հավերժությունը մի ամբողջ հավերժության հավերժությունն է: Իսկ բոլոր հավերժություններից ամենաերկարը 10,000 հեքիաթի հավերժությունն է, որ ամենամեծ թիվն է Երկիր-Կիս-Արթունում:

Բայց, լավ, եկեք չշեղվենք: Շենքը, որտեղ ապրում են այս բոլոր մարդիկ, առաջին հարկում հանդիպման սրահ ունի: Այնտեղ են ամիսը մեկ անգամ ժողովներ անցկացնում: Սա, իհարկե, շատ ավելի հաճախ է, քան ուրիշ շենքերում, սակայն այս շենքի բնակարանները հանձնված են վարձակալության, իսկ Բրիտ-Մարին ու Քենթն ուզում են, որ կենվորները «ժողովրդավարական» բարեփոխումների ընթացքում պահանջեն, որ տանտերը վաճառի բնակարանները վարձակալողներին, ու նրանք սեփականատերեր դառնան: Հենց դրա համար են անհրաժեշտ ժողովները, չնայած բնակիչներից ոչ մեկը ցանկություն չունի սեփականատեր դառնալու: Իսկ գործի ժողովրդավարական ընթացքը մի գործընթաց է, որ Քենթն ու Բրիտ-Մարին, ըստ էության, ամենաքիչն են սիրում:

Հանդիպումները, բնականաբար, անասելի ձանձրալի են: Նախ բոլորը վիճում են նույն պատճառով, ինչի համար նախորդ ժողովին առնվազն երկու ժամ վիճել են, ապա բոլորը հանում են իրենց օրացույցներն ու վիճում են, թե որ օրը նշանակեն հաջորդ ժողովը, իսկ հետո ժողովն ավարտվում է: Բայց Էլսան, այնուամենայնիվ, այսօր գնում է այնտեղ, քանի որ պիտի իմանա, թե վեճը երբ է սկսվում, որ իր ծլկելը ոչ ոք չնկատի:

Քենթը դեռ չի եկել, քանի որ նա միշտ ուշանում է: Ոչ էլ Ալֆն է եկել, որովհետև նա միշտ ճիշտ ժամին է ներկայանում: Բայց Մոդն ու Լենարտն արդեն նստած են մեծ սեղանի առջև, իսկ Բրիտ-Մարին ու մայրիկը, խոհանոցի կանգնակի մոտ սուրճ պատրաստելով, ինչ-որ բան են քննարկում: Սամանթան գետնին քնած է: Մոդը մի մեծ տուփով հրուշակներ է մեկնում Էլսային: Լենարտը, Մոդի կողքին նստած, սուրճի է սպասում՝ մինչև այդ խմելով թերմոսով բերած իր սուրճը: Լենարտը պիտի պարտադիր հո-

թվայնացրել է 1915.info կայքը

գեպահուստ սուրճ ունենա, քանի դեռ իսկական սուրճը չեն մատուցել: Բրիտ-Մարին, խոհանոցի լվացարանի մոտ սրտնեղած, ձեռքերը կրծքին խաչած, նյարդայնացած, մայրիկին է նայում: Մայրիկը պատրաստվում է սուրճ եփել: Բրիտ-Մարին նյարդայնացած է, քանի որ կարծում է, որ անպատճառ պետք է Քենթին սպասել: Նա միշտ կարծում է, որ պետք է Քենթին սպասել: Իսկ մայրիկը սպասելու կողմնակից չէ. նա սովոր է ամեն ինչ վերահսկել, այնպես որ սկսում է սուրճ պատրաստել: Բրիտ-Մարին ափով ջանասիրաբար սեղանածածկի վրայից սրբում է անտեսանելի փշուրները: Գրեթե միշտ ամենուր անտեսանելի փշուրներ կան, որոնք Բրիտ-Մարին անպայման պիտի թափ տա: Նա սիրալիր ժպտում է մայրիկին:

— Դե, Ո՛ւլրիխա, սուրճի հարցն ի՞նչ եղավ:

Բրիտ-Մարին միշտ Ո՛ւլրիխա է ասում մայրիկին, քանի որ լսել է, որ մայրիկը չի սիրում, երբ իր անունն աղավաղում են: Այդ օրվանից ի վեր Ո՛ւլրիխա էր ասում մայրիկին: Չնայած մայրիկը մի քանի անգամ բացատրել էր, որ իր անունը Ո՛ւլրիկա է:

— Շուտով կլինի,- կարճ պատասխանում է մայրիկը:

— Գուցե ամեն դեպքում Քենթի՞ն սպասենք,- սիրալիր պնդում է Բրիտ-Մարին:

— Առանց Քենթի էլ կհաջողեցնենք սուրճ եփել,- ինքնատիրապետումը չի կորցնում մայրիկը:

Բրիտ-Մարին նորից ձեռքերը խաչում է կրծքին և ժպտում է:

— Հա՛, լավ, ոնց ուզում ես, արա՛, Ո՛ւլրիխա, ինչպես և միշտ անում ես:

Մայրիկը, թվում է, թե հաշվում է մինչև մի եռանիշ թիվ ու շարունակում գդալով չափել սուրճը:

— Ընդամենը սուրճ ենք պատրաստում, Բրի՛տ-Մարի:

Բրիտ-Մարին ըմբռնումով գլխով է անում ու անտեսանելի փոշի է թափ տալիս իր կիսաշրջազգեստի վրայից: Բրիտ-Մարիի կիսաշրջազգեստին միշտ անտեսանելի փոշի կա, որ պետք է թափ տալ:

— Քենթը միշտ շատ լավ է սուրճ եփում: Բոլորը հավանում են Քենթի եփած սուրճը,- ասում է նա:

Մոդը, սեղանի մոտ նստած, անհանգիստ է երևում, որովհետև տարաձայնություններ չի սիրում: Դրա համար էլ այդքան շատ հրուշակներ է թխում, քանի որ, իսկապես, շատ ավելի դժվար է իրար հետ տարաձայնություններ ունենալ, երբ սեղանին թխվածք կա: Մոդը բոթում է

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսային ու շշնջալով առաջարկում մի հատ հրուշակ վերցնել: Էլսան երկու հատ վերցնում է: Այդ ընթացքում մայրիկն ասում է Բրիտ-Մարիին, որ սուրճ եփելը շատ դժվար չէ. Բրիտ-Մարին էլ պատասխանում է.

— Չէ՛, չէ՛, իհարկե, բոլորովին, ձեր ընտանիքի կանանց համար առհասարակ ոչ մի դժվար բան չկա:

Մայրիկը ի պատասխան ժպտում է: Բրիտ-Մարին էլ է ժպտում: Չնայած երևում է, որ նրանք ներքուստ ամենևին էլ չեն ժպտում: Մայրիկը խորշունչ է քաշում ու շարունակում գդալով չափել սուրճը, իսկ Բրիտ-Մարին անտեսանելի փոշին է թափ տալիս կիսաշրջազգեստի վրայից ու կարծես իմիջիայլոց ասում է.

— Հրաշալի է, որ դու ու փոքրիկ Էլսան այսօր մեզ հետ եք, բոլորս կարծում ենք, որ հրաշալի է:

Մայրիկը չափազանց զուսպ ասում է՝ ըհը: Նա դեռ սուրճ է լցնում սրճեփի մեջ: Անտեսանելի փոշին սրբելով՝ Բրիտ-Մարին ասում է.

— Դե հա՛, դու, պարզ է, դժվար ժամանակ գտնես փոքրիկ Էլսայի համար, Ո՛ւլրիխա, քեզ համար ամենակարևորը քո կարիերան է:

Այդ ժամանակ մայրիկը սկսում է այնպես սուրճ լցնել, ասես մտովի Բրիտ-Մարիի դեմքին լցնելիս լինի՝ սակայն չկորցնելով ինքնատիրապետումը: Բրիտ-Մարին գնում է պատուհանի մոտ, տեղափոխում է ծաղկամանով ծաղիկն ու սկսում խոսել. կարծես ուղղակի բարձրաձայն մտածելիս լինի.

— Դե, զուգընկերդ էլ, պարզ է, տանը նստած է: Այսինքն՝ զբաղված է տնտեսությամբ:

Իսկ մայրիկն ասում է, որ Յեորգը լվացքատանն է, և ուժեղ շրխկոցով փակում է էլեկտրական սրճեփի կափարիչը:

Բայց ինքնատիրապետումը չի կորցնում:

Բրիտ-Մարին գլխով է անում:

— Հիմա այդպես են, հա՞, ասում: Զուգընկե՞ր: Դե, ժամանակակից բառեր են, հասկանում ենք:

Ու կրկին ժպտում է: Շատ սիրալիր: Հետո նորից հագուստի վրայից թափ է տալիս անտեսանելի փոշին ու ավելացնում.

— Դե չէ, իհա՛րկե, չեմ ասում, թե դա սխալ է…

Մայրիկը լարված ժպտում է:

— Ասածդ ի՞նչ է, Բրի՛տ-Մարի, հատուկ բան ունես ասելու, ասա՛:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ ժամանակ Բրիտ-Մարին հանկարծակիի եկած նայում է նրան՝ ասես բոլորովին սխալ հասկացված լինելուց ցնցված, և իսկույն բացականչում է.

— Չէ՛, իհա՛րկե, Ո՛ւլրիխա: Իհարկե՝ ոչ: Ոչինչ էլ նկատի չունեի՝ այդ ասելով: Ոչ մի հատուկ բան նկատի չունեի:

Բրիտ-Մարին միշտ ամեն ինչ երկու անգամ է կրկնում, երբ նյարդայնանում կամ զայրանում է, կամ էլ երկուսը միաժամանակ: Էլսան հիշում է, որ մի անգամ, երբ տատիկի հետ IKEA-ից հաստ բրդե ծածկոցներ էին գնել, տատիկն ամբողջ օրը սանրում էր ծածկոցներն ու սանրի վրա մնացած բրդի մազմզուկները տոպրակն էր լցնում: Իսկ հետո Էլսային պահակ կանգնեցրեց աստիճանների մոտ, գաղտագողի մտավ լվացքատուն ու բրդի մազմզուկները դատարկեց մեքենայի ֆիլտրի մեջ:

Դրանից հետո Բրիտ-Մարին մի քանի շաբաթ ամեն ասածը երկու անգամ կրկնում էր:

Ներս է մտնում Ալֆը՝ կաշվե ճռճռան բաճկոնով, կրծքին տաքսու տարբերանշան, ու նկատելի վատ տրամադրությամբ: Ձեռքին երեկոյան թերթն է: Ժամացույցին է նայում: Ուղիղ 7-ն է:

— Հայտարարված էր 7-ին,– գռմռում է նա՝ սենյակ մտնելով՝ առանց որևէ մեկին դիմելու:

— Քենթը մի քիչ ուշանում է,– ասում է Բրիտ-Մարին ու ժպտալով ձեռքերն իրար ագուցում,– կարևոր խմբային հանդիպում ուներ Գերմանիայի հետ,– բացատրում է նա, կարծես Քենթի հանդիպումն ամբողջ երկրի հետ էր:

Քառորդ ժամ անց Քենթը փոթորկի նման ներս է ընկնում պատմուճանի պես ծածանվող պիջակով՝ գոռալով հեռախոսի մեջ. «Այո՛, Կլա՛ուս: Այո՛: Մենք կքննարկենք այդ հարցը Ֆրանկֆուրտի հանդիպման ժամանակ»:

Ալֆը հայացքը կտրում է իր երեկոյան թերթից ու թխկթխկացնելով ձեռքի ժամացույցին, ատամները սեղմած՝ մռթմռթում է.

— Հուսամ, գրո՛ղը տանի, քեզ համար մեծ խնդիր չէ, որ մնացած բոլորս ժամանակին ենք եկել:

Անուշադրության մատնելով նրան՝ Քենթը, ձեռքերը տարածելով դեպի Լենարտն ու Մոդը, քմծիծաղով ասում է.

— Հը՞, չսկսե՞նք ժողովը: Ի՞նչ եք ասում: Էստեղ էլ հո երեխա սարքելու տե՞ղ չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա շրջվում է դեպի մայրիկն ու հեգնանքով ասում.

— Համենայնդեպս, ավել երեխաներ:

Ու երբ մայրիկն իսկույն չի ծիծաղում, Քենթը, նրա փորը ցույց տալով, նորից է ասում, բայց ավելի բարձր.

— Համենայնդեպս, ավել երեխաներ:

Կարծես իրենց լուծելիք խնդիրն էլ հենց այդ է:

Մոդը հրուշակ է հյուրասիրում: Մայրիկը սուրճն է բաժանում: Քենթը մի կում խմում է ու ծանր շնչելով՝ բացականչում.

— Օ՜յ, ի՜նչ էլ թունդ է:

Ալֆը միանգամից դատարկում է բաժակն ու մռթմռթում.

— Լավ էլ նորմալ սուրճ է:

Բրիտ-Մարին մի փոքր, շատ աննշան կում է անում, բաժակն ափով բռնում ու սիրալիր ժպտալով՝ ասում է.

— Կարծում եմ, այո՛, ամեն դեպքում, բավական թունդ է իմ կարծիքով:

Հետո մի աննկատ հայացք գցելով մայրիկին՝ ավելացնում է.

— Ու դու սո՞ւրճ ես խմում, Ո՛ւլրիխա, չնայած հղի ես:

Ու նախքան մայրիկը կհասցներ պատասխանել, Բրիտ-Մարին իսկույն արդարանում է.

— Դե, ես, իրոք, ոչ մի ուրիշ բան նկատի չունեմ: Իրոք, ոչ մի ուրիշ բան:

Հետո Քենթը ժողովը հայտարարում է սկսված, ու բոլորը երկու ժամ իրար հետ վիճում են նույն խնդրի վերաբերյալ, որ վիճում էին նախորդ հանդիպմանը:

Եվ հենց այդ ժամանակ էլ Էլսան բոլորից աննկատ ծլկում է:

Ժողովների սրահը հենց առաջին հարկում է՝ անմիջապես մուտքի դռան դիմաց՝ նկուղային հարկ տանող աստիճանների կողքին, որտեղով իջնում են պահեստ, ավտոկայանատեղի ու լվացքատուն: Էլսան լսում է, որ Յեորգը ներքևում է: Զգուշորեն աստիճաններով բարձրանում է վերև: Խեթ-խեթ նայում է Հրեշի բնակարանի դռանն ու ինքն իրեն հանգստացնում, որ դրսում դեռ լույս է: Հրեշը երբեք դուրս չի գալիս, քանի դեռ լույս է: Նա նայում է Հրեշի կողքի բնակարանի դռանը, որի փոստարկղի վրա անուն չկա գրված: Բարեկամն այդ բնակարանում է ապրում: Էլսան երկու մետրի վրա շունչը պահած կանգնած է՝ վախենալով, որ նա կարող է փշրել դուռը,

թվայնացրել է 1915.info կայքը

կտորտանքի միջով հարձակվել իր վրա՝ փորձելով բռնել կոկորդից, եթե հանկարծ զգա, որ ինքը շատ մոտ է: Միայն տատիկն է նրան Բարեկամ անվանում: Մյուսները, հատկապես Բրիտ-Մարին, կռվաշուն են ասում նրան:

Էլսան, բնականաբար, ոչինչ չգիտեր նրա կռվելու ունակությունների մասին, սակայն, ամեն դեպքում, այդ մեծության շուն կյանքում երբեք չէր տեսել: Երբ մարդ լսում էր նրան դռան հետևում հաչելիս, թվում էր, թե մեկին գանակոծում են: Ընդամենը մի անգամ էր տեսել նրան, բնականաբար, տատիկի մոտ: Տատիկի հիվանդանալուց մի քանի օր առաջ էր: Սակայն, Էլսայի պատկերացմամբ, իր ապրած սարսափը շատ ավելի խորն էր, քան եթե դեմառդեմ հանդիպած լիներ Երկիր-Կիս-Արթունի ստվերներից մեկին:

Շաբաթ էր, ու տատիկն Էլսայի հետ գնալու էր դինոզավրերի թեմայով ցուցահանդեսին: Այդ առավոտ մայրիկն առանց հարցնելու լվացքն էր գցել գրիֆինդորցիների շարֆն ու Էլսային ուրիշն էր տվել՝ կանաչը: Սլիզերինցիների կանաչից: Այդ կնոջն իսկապես ահավոր պակասում է ուրիշներին հաշվի առնելու կարողությունը: Էլսան դեռ սրտանց զայրանում էր այդ մասին հիշելիս:

Ընկերը պառկած էր տատիկի մահճակալին, ինչպես սֆինքսը՝ բուրգի կողքին: Էլսան կաթվածահար կանգնել էր նախասենյակում ու աչքերը հառել էր հսկայական սև գլխին ու աչքերին, որ այնքան մուգ էին, որ դժվար էր միանգամից որոշել՝ աչքե՞ր էին, թե՞ գազանի գանգի մեջ բացված երկու անհատակ խորխորատ: Էլսան կյանքում նման հսկա արարած չէր տեսել: Տատիկը դուրս եկավ խոհանոցից ու սկսեց հանգիստ հագնել վերարկուն, ասես աշխարհի ամենասովորական դեպքն էր, որ ամենահսկա արարածը պառկած էր իր մահճակալին:

— Էս... Ո՞վ է,– շշնջացել էր Էլսան:

Տատիկը մի գլանակ էր ոլորել ու անհոգ պատասխանել.

— Բարեկամն է: Քեզ ոչինչ չի անի, եթե դու իրեն ոչինչ չանես:

Պարզ է, տատիկի համար հեշտ էր ասելը. բարկացել էր Էլսան: Մարդ ի՞նչ իմանա, գրո՛ղը տանի, թե ինչ պատճառով հանկարծ նման գազանը կհարձակվի: Մի անգամ Էլսան ծեծ էր կերել դպրոցում միայն այն պատճառով, որ աղջիկներից մեկն ատում էր իրեն, որովհետև Էլսան, նրա կարծիքով, տգեղ շարֆ էր կապում: Միակ բանը, որի համար Էլսան մեղավոր էր, և որի համար էլ այդ աղջիկը խփել էր նրան: Իսկ հիմա Էլսան կանգնած էր տատիկի դռան մոտ. իր սովորական շարֆը լվացքի մեջ էր,

թվայնացրել է 1915.info կայքը

ու վզին բոլորովին այլ շարֆ էր, որ մայրիկն էր փաթաթել, ու իրեն ասում էին, թե այդ գազանն իրեն ոչինչ չի անի, եթե ինքն իր հերթին նրան ոչինչ չանի: Բայց Էլսան գաղափար չուներ, թե ինչ կարգի շարֆեր էր սիրում այդ գազանը ու ինչպիսիք չէր սիրում, ու ինչ պիտի իմանա մարդ, որպեսզի կարողանա գոյատևելու հստակ ռազմավարություն ստեղծել իր համար, հը՞: Այնպես որ, ի վերջո, Էլսան դժվարությամբ արտաբերեց. «Սա ի՛մ շարֆը չէ, մայրիկի՛նն է: Նա իսկի ճաշակ չունի»: Ու հետ-հետ գնաց դեպի դուրս: Բարեկամն աչքը չէր կտրում նրանից, կամ, ամեն դեպքում, Էլսային այդպես էր թվում, եթե մութ խոռոչներն աչքեր էին: Իսկ հետո նա ատամները ցույց տվեց. այդ հարցում Էլսան հաստատ համոզված էր:

Բայց տատիկն ընդամենը գլուխն էր տարուբերել ու աչքերով նշան անելով Բարեկամին՝ ասել էր. «Երեխա է, ի՞նչ անես»: Հետո գնացել էր Renault-ի բանալիները փնտրելու, ու հետո ինքն ու Էլսան գնացել էին դինոզավրերի ցուցահանդեսին: Էլսան հիշում է, որ տատիկի բնակարանի դուռը կրնկի վրա բաց էր թողել, և երբ նրանք մեքենա էին նստում, ու Էլսան հարցրեց, թե Բարեկամն ինչու էր եկել տատիկի մոտ, տատիկը կարճ պատասխանեց՝ այցելության: Իսկ երբ Էլսան հարցրել էր, թե ինչու է նա հաչում իր բնակարանում, տատիկն ուրախ պատասխանել էր. «Հաչո՞ւմ: Հա՛, միայն, երբ Բրիտ-Մարին է կողքով անցնում»: Երբ Էլսան հարցրել էր, թե ինչու, տատիկը լայն ժպտալով ասել էր. «Ուղղակի զվարճանալու համար»:

Հետո Էլսան հարցրել էր, թե ում հետ է Բարեկամն ապրում, ու տատիկն ասել էր.

— Պարտադիր չէ ուրիշների հետ ապրել, Աստվա՛ծ իմ, ես, օրինակ՝ ինչ-որ մեկի հետ չեմ ապրում:

Եվ երբ Էլսան շարունակել էր, թե միգուցե պատճառն այն է, որ տատիկը ՇՈՒՆ չէ, նա այլևս ոչ մի բացատրություն չէր տվել:

Իսկ հիմա. ահա. Էլսան կանգնած է աստիճանահարթակին ու հանում է «Դայմ» շոկոլադի կոնֆետների թղթերը: Առաջին շոկոլադն այնքան արագ է գցում դռան վրայի փոստարկղի ճեղքը, որ կափարիչն ուժեղ շրխկում է: Նա շունչը պահած զգում է՝ ինչպես է սիրտը բաբախում ամբողջ գլխում: Ապա հիշում է, որ տատիկն ասել էր ամեն ինչ արագ անել, որ հանկարծ Բրիտ-Մարին չսկսի ինչ-որ բան կասկածել բնակիչների ժողովի ժամանակ, որովհետև Բրիտ-Մարին ահավոր ատում էր Բարե-

թվայնացրել է 1915.info կայքը

կամին: Ու Էլսան փորձում է ինքն իրեն հիշեցնել, որ անկախ ամեն ինչից, ինքը Միամասի ասպետներից է, ու նորից քիչ ավելի համարձակ բացում է փոստարկղի կափարիչը: Հակառակ կողմում շնչառության ձայնն այնպես է լսվում, կարծես թոքերում քարաջարդ մեքենա է աշխատում: Էլսայի սիրտն այնքան ուժգին է բաբախում, որ վստահ է, որ տատանումներն անցնում են դռան միջով:

— Տատիկս բարևում է ու ասում՝ կներես, որ վաղուց կոնֆետ չի բերել,– զգոնության մասին չմոռանալով՝ ասում է նա փոստարկղի մեջ՝ շտապշտապ բացելով շոկոլադե կոնֆետների թղթերն ու գցելով գետնին:

Նա լեղաճաք փախցնում է մատները, երբ մյուս կողմից շարժում է լսվում: Մի քանի վայրկյան լռություն է տիրում: Հետո լսվում է, թե ինչպես է Բարեկամը ծնոտներով կատաղի արագությամբ աղում կոնֆետները:

— Տատիկը հիվանդ է,– շարունակում է Էլսան:

Ինքն էլ չէր սպասում, որ արտաբերվելիս բառերը կդողան: Էլսան պատկերացնում է, որ Բարեկամն ավելի դանդաղ է շնչում: Կրկին շոկոլադ է գցում:

— Քաղցկեղ է,– շշնջում է Էլսան:

Էլսան ընկերներ չունի. դրա համար էլ բոլորովին անպատրաստ է նման հանձնարարության: Սակայն մտածում է, որ եթե ընկերներ ունենար, ու ինքը քաղցկեղով հիվանդ լիներ, կուզենար, որ նրանք իմանային այդ մասին: Նույնիսկ եթե աշխարհում ամենախոշոր արարածները լինեին:

— Նա քեզ բարևում է ու ասում է՝ կներես,– շշնջում է նա մթության մեջ ու մնացած կոնֆետներն էլ լցնում է փոստարկղի մեջ ու զգուշորեն փակում կափարիչը:

Հետո մի քիչ էլ կանգնում է ու նայում Բարեկամի դռանը, հետո՝ Հրեշի: Ու հետո մտածում է, որ եթե մեկի հետևում նման վայրենի գազան է, ուրեմն ինքը չի էլ ուզում իմանալ, թե մյուսի հետևում ով կա: Իսկ հետո ցատկոտելով իջնում է աստիճաններով ներքև՝ մուտքի դռան մոտ:

Յեորգը դեռ լվացքատանն է: Ժողովի սենյակում բոլորը սուրճ են խմում ու վիճում, որովհետև իրենց շենքն ամենասովորական շենքերից է, ի վերջո:

թվայնացրել է 1915.info կայքը

4

ԳԱՐԵՋՈՒՐԸ

Հիվանդասենյակում այնպիսի հոտ է, ինչպիսին լինում է այն հիվանդասենյակում, երբ ներսում ինչ-որ մեկը բարձի տակ գարեջրի շշեր է թաքցրել ու դրսում +2 աստիճանի պայմաններում բացել է պատուհանը, որ ծխախոտի հոտն անցնի, սենյակն օդափոխվի, որպեսզի Էլսայի մայրիկը ոչինչ չնկատի:

Բայց այդ հոտը հուշում է, որ օդափոխությունն այնքան էլ լավ չի կատարվել:

Տատիկն ու Էլսան «Մոնոպոլիա» են խաղում: Տատիկը քաղցկեղի մասին ոչինչ չի ասում հանուն Էլսայի: Էլսան ոչինչ չի խոսում մահվան մասին հանուն տատիկի, որովհետև տատիկը չի սիրում խոսել մահվան մասին, հատկապես՝ սեփական մահվան մասին: Մահը տատիկի ոխերիմ թշնամին է: Այնպես որ, երբ Էլսայի մայրիկն ու բժիշկները դուրս են գալիս սենյակից՝ միջանցքում ցածր, խորհրդավոր ձայներով զրուցելու, Էլսան փորձում է անհանգստությունը թաքցնել, ինչը նույնպես առանձնապես չի հաջողվում:

Տատիկը խորհրդավոր տեսքով ժպտում է:

— Քեզ պատմե՞լ եմ, որ մի անգամ Միամասի հրեշների համար աշխատանք եմ գտել,– հարցնում է նա իրենց գաղտնալեզվով:

— Հիվանդանոցում գաղտնալեզու ունենալն ավելի կարևոր է, որովհետև հիվանդանոցի պատերն ականջներ ունեն,– ասում է տատիկը,– մանավանդ, երբ մայրիկիդ պես ղեկավար ունեն:

— Մէ՛էհ: Հաա՛,– գաղտնալեզվով հոգոց է հանում Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

Ու տատիկը, ի նշան համաձայնության, գլխով է անում ու ամբողջ պատմությունը նորից է պատմում: Որովհետև տատիկին չեն սովորեցրել՝ ինչ անի, որ կարողանա պատմություն չպատմել: Ու Էլսան լսում է, որովհետև իրեն չեն սովորեցրել՝ ինչպես խուսափի լսելուց:

Նա գիտի, որ դրա համար էլ մարդիկ հաճախ ասում են տատիկի մասին, երբ նա մոտակայքում չի լինում, որ նա, իրոք, բոլոր սահմաններն անցնում է: Բրիտ-Մարին, օրինակ, շատ հաճախ է այդպես ասում: Էլսան ենթադրում է, որ տատիկը հենց այդ պատճառով է անչափ սիրում Միամասի թագավորությունը, որովհետև մարդ չի կարող Միամասի սահմաններն անցնել, քանի որ թագավորությունն անսահման է: Դա ամենևին նույնը չէ, երբ մարդիկ հեռուստացույցով իրենց նկարագրելիս կիրառում են «անսահման» բառն ու մազերն են թափ տալիս: Դա իրական անսահմանություն է, քանի որ ոչ մեկն իրականում չգիտի, թե որտեղ է սկսվում և որտեղ վերջանում Միամասը: Պատճառը մասամբ այն է, որ ի տարբերություն Երկիր-Կիս-Արթունի մյուս հինգ թագավորությունների, որոնք հիմնականում կառուցված են քարից ու շաղախից, Միամասն ամբողջությամբ կառուցված է երևակայությունից: Մի քիչ էլ կապված է այն իրողության հետ, որ Միամասի բերդապարիսպն ահավոր տարօրինակ բնավորություն ունի: Եթե խելքին փչեց, կարող է առավոտյան հանկարծ տեղափոխված լինել մի քանի կիլոմետր դեպի անտառ՝ իր միայնությունը վայելելու: Իսկ մյուս առավոտ կրկնակի հեռավորություն կարող է անցնել ու հասնել քաղաքի կենտրոն, քանի որ որոշել է պարսպապատել ինչ-որ հրեշի կամ տրոլի, որոնցից ինչ-որ պատճառով սրտնեղել է: Հաճախ այն պատճառով, որ հրեշը կամ տրոլն ամբողջ գիշեր թրև են եկել ու օղի խմել, իսկ հետո պարսպի վրա միզել են, քանի դեռ այն քնած էր:

Միամասում բավական շատ են հրեշներն ու տրոլները, ավելի շատ, քան մյուս հինգ թագավորություններում, որովհետև Միամասից հիմնական արտահանման նյութը հեքիաթներն են: Իրական աշխարհի մարդկանց մտքով անգամ չի անցնում նման բան, քանի որ իրական աշխարհի մարդիկ չափից դուրս ողջամիտ են, բայց տրոլների ու հրեշների համար Միամասում աշխատանքի տեղավորվելու հրաշալի հնարավորություններ կան, որովհետև բոլոր հեքիաթներում էլ չարագործների կարիք կա:

— Բնականաբար, միշտ չէ էդպես եղել,– ինքնագոհ տեղեկացնում է տատիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ Էլսան հոգոց է հանում՝ ասելով, որ նա արդեն մի անգամ պատմել է այդ մասին, իսկ տատիկը, միևնույն է, նորից է պատմում: Քանի որ մի ժամանակ եղավ Միամասում, որ հեքիաթասացները գրեթե իսպառ մոռացության էին մատնել հրեշներին: Տատիկն Էլսային բացատրում էր, որ հատկապես մի քիչ տարիքով մեծերի համար չափազանց դժվար էր աշխատանք գտնելը, իսկ Էլսան աչքերն էր ոլորում:

— Պարզապես լավ դերեր չէին գրվում միջին տարիքից բարձր հրեշների համար,– սովորաբար ասում էր տատիկն ու դրամատիկ դադարից հետո ավելացնում՝ ԱՌԱՋ:

Եվ ապա սկսում է ամբողջ պատմությունը պատմել սկզբից, թե ինչպես էին հրեշները լուրջ խնդիրներ առաջացրել Միամասում, երբ անգործ թրև էին գալիս ու օրերով անելիք չունեին: Օղի էին խմում, ծխախոտ ծխում ու բերդապարսպի հետ կռիվներ անում, մինչև որ վերջապես Միամասի ժողովուրդն աղաչում է տատիկին, որ հրեշներին աշխատանքի տեղավորելու համար միջոցներ ձեռնարկի: Ու հենց այդ ժամանակ տատիկի մտքով անցավ, որ հրեշներին հեքիաթների վերջում հսկել տան գանձերը:

Մինչև այդ հեքիաթասացները փաստորեն լուրջ տեխնիկական խնդրի առաջ էին կանգնած, թե ինչ անել, երբ հեքիաթների հերոսները գանձ էին գտնում: Օրինակ, երբ քարանձավի խորքում գանձ էին գտնում, պարզապես մտնում ու վերցնում էին: Ընդամենը: Ոչ մի դյուցազներգական մենամարտ կամ դրամատիկական գագաթնակետ կամ այլ լուծում:

— Ու հեքիաթը վերածվում է արժեք չունեցող համակարգչային խաղի,– սովորաբար աշխուժորեն գլխով է անում տատիկը՝ հարցի լրջությունը շեշտելու համար:

Տատիկն այդքանը գիտի, քանի որ անցած ամառ Էլսան սովորեցրել էր համակարգչային մի խաղ խաղալ, որ կոչվում է World of Warcraft, ու տատիկը մի քանի շաբաթ անդադար խաղում էր, մինչև որ մայրիկը, ի վերջո, ասաց, որ տատիկը սկսել է անհանգստացնող հակումներ ձեռք բերել, ու արգելեց նրան դրանից հետո քնել Էլսայի սենյակում: Բայց ինչ որ է: Կարևորը, որ հեքիաթասացները տատիկի գաղափարը կյանքի կոչեցին, ու կեսօրից հետո խնդիրը լուծված էր:

— Դրա համար հիմա բոլոր հեքիաթների վերջում հրեշներ կան: Իմ շնորհիվ,– ուրախ ավարտում է տատիկը: Եվ այդպես, ամեն անգամ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ցանկացած իրավիճակի համար նա հեքիաթ ունի Միամասից, ու եթե ինչ-որ հատուկ իրավիճակ էլ չլինի, միևնույն է՝ պատրաստի հեքիաթ միշտ կա: Պատմություններից մեկը պատմում է Միփլորիս թագավորության մասին, որտեղ պահվում է աշխարհի ամբողջ վիշտը: Նրանց արքայադուստրը, որից չար, անճոռնի վհուկը գողացել էր կախարդական գանձը, ստիպված ամեն օր հետապնդում է այդ չար կախարդին: Մեկ ուրիշ պատմություն էլ երկու արքայազն եղբայրների մասին է, որոնք երկուսն էլ սիրահարվել են Միփլորիսի արքայադստերն ու հանուն նրա սիրո մղվող իրենց արյունահեղ մարտերով գրեթե վերացման եզրին էին կանգնեցրել Երկիր-Կիս-Արթունը:

Մի հեքիաթ էլ ծովահրեշտակի մասին կա, որ անեծքի պատճառով իր սիրեցյալին կորցնելուց հետո ստիպված էր վերուվար տարուբերվել Երկիր-Կիս-Արթունի ափերով: Մի ուրիշ հեքիաթ Ընտրյալի մասին է, որ ամենասիրելի պարողն է Միմովասում՝ այն թագավորությունում, որից ծագում է ամբողջ երաժշտությունը: Հեքիաթում ստվերները փորձում են փախցնել Ընտրյալին, որ ոչնչացնեն ամբողջ Միմովասը, բայց ամպէակը փրկում է Ընտրյալին ու թռչում ուղիղ Միամաս: Ու երբ ստվերները գալիս են նրանց հետևից, Երկիր-Կիս-Արթունի բոլոր թագավորությունների բնակիչները՝ արքայազներն ու այքայադուստրերը, ասպետներն ու զինվորները, տրոլները, հրեշտակներն ու կախարդները միավորվում են, որպեսզի պաշտպանեն Ընտրյալին: Մարտ-Ան-Վերջը հենց այդ ժամանակ է սկսվում: 10,000 հեքիաթների հավերժություն տևած մարտը մոլեգնում է, մինչև որ սարերից իջնում են վորսերն, ու անտառից դուրս է գալիս Գայլսիրտը: Նրանք առաջնորդում են բարիների բանակը դեպի վերջին ճակատամարտը ու հետ են քշում ստվերներին ծովերից այն կողմ:

Գայլսիրտը, անշուշտ, ինքնին մի ամբողջ հեքիաթ է, քանի որ ծնվել է Միամասում, բայց բոլոր մյուս զինվորների նման մեծացել է Միբատալոսում: Նա ռազմիկի սիրտ ունի, սակայն հեքիաթասացի հոգի, և նա ամենաանպարտելի մարտիկն է, որ երբևէ եղել է բոլոր վեց թագավորություններում: Նա բազմաթիվ հեքիաթային հավերժություններ ապրել է մթին անտառներում, բայց վերադարձել է, երբ Երկիր-Կիս-Արթունն ամենաշատն ուներ իր կարիքը:

Ինչ Էլսան իրեն հիշում է, տատիկը պատմում է այդ հեքիաթները: Սկզբում, պարզ է, միայն Էլսային քնեցնելու համար էր պատմում, և որ նա վարժվի իր գաղտնալեզվին, բայց մի քիչ էլ այն պատճառով, որ ինչ-որ

թվայնացրել է 1915.info կայքը

առումով խենթ էր: Սակայն վերջերս հեքիաթները մի ուրիշ նշանակություն էին ձեռք բերել: Մի բան, որ Էլսան չէր կարողանում պեղել: Պարզ է, որ ստուգել էր, թե ինչ է նշանակում «պեղել»:

— Հենց հիմա հե՛տ դիր Արևելյալ կայարանը,– ասում է Էլսան:

— Բայց ես առել եմ կայարանը,– հակաճառում է տատիկը:

— Չէ մի՝ առել ես: Տե՛ղը դիր,– բարկանում է Էլսան:

— Գրո՛ղը տանի, ոնց որ Հիտլերի հետ «Մոնոպոլիա» խաղալիս լինեմ,– ասում է տատիկն ու տեղը դնում Արևելյան կայարանը:

— Հիտլերը խաղալու դեպքում միայն «Ռիսկ» (դիվանագիտության, հակամարտության և նվաճման հիմքերը սովորեցնող ռազմավարական սեղանի խաղ) կխաղար,– քրթմնջում է Էլսան, քանի որ Վիքիպեդիայում կարդացել էր Հիտլերի մասին ու անընդհատ վիճում էր տատիկի հետ՝ նրա անունը համեմատությունների մեջ անտեղի օգտագործելու համար:

— Touché, տասով զրո,– մռթմռթում է տատիկը, չնայած Էլսան համոզված է, որ անտեղի է շախմատը հիշատակում:

Հետո նրանք մոտավորապես մեկ րոպե լուռ են խաղում, որովհետև վիճելիս մոտավորապես այդքան են դիմանում իրար հետ անհաշտ մնալուն:

— Շոկոլադը տվեցի՞ր Բարեկամին,– հարցնում է տատիկը:

Էլսան գլխով է անում: Բայց չի ասում, որ պատմել է քաղցկեղի մասին: Մասամբ մտածելով, թե տատիկը կնեղվի, ու ամենաշատն այն պատճառով, որ ինքն անձամբ չի ուզում խոսել քաղցկեղի մասին: Երեկ նայել էր Վիքիպեդիայում: Հետո նայել էր, թե «կտակը» ինչ է, ու հետո այնքան էր նյարդայնացել, որ ամբողջ գիշեր չէր քնել:

— Ինչպե՞ս եղավ, որ դու ու Բարեկամն ընկերացաք,– փոխարենը հարցնում է նա:

Տատիկն ուսերն է թոթվում:

— Սովորական:

Էլսան չգիտի՝ սովորականը որն է, որովհետև տատիկից բացի՝ ուրիշ ընկեր չունի, բայց ոչինչ չի ասում՝ իմանալով, որ տատիկին տխրեցնելու է:

— Ամեն դեպքում առաքելությունը կատարված է,– ցածրաձայն ասում է նա, որը՝ որպես բավական դժվար նախադասություն, չի կարողանում գաղտնալեզվով ասել, ինչը, սակայն, տվյալ պարագայում էական չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

Տատիկը եռանդուն գլխով է անում՝ միաժամանակ դռան կողմը նայելով, ասես վախենում է, որ իրենց լրտեսում են: Հետո ձեռքը տանում է բարձի տակ: Շշերը, իրար զարկվելով, զրնգում են, տատիկը հայհոյում է՝ տեսնելով բարձի երեսին գարեջրի հետքերը, բայց հետո տակից մի ծրար է հանում ու խցկում Էլսայի ձեռքը:

— Էս էլ քո հաջորդ առաջադրանքը, ասպե՛տ Էլսա: Բայց չբացե՛ս մինչև վաղն առավոտ:

Էլսան թերահավատորեն նայում է տատիկին:

— Այսինքն՝ Email-ի մասին լսած կա՞ս:

— Ի՞նչ ես խոսում: Էդպիսի բաները Email-ով չեն ուղարկում:

Էլսան ձեռքում ծրարը ծանրութեթև է անում: Սեղմում է ծրարի ներքևի ուռուցիկ մասին:

— Էս ի՞նչ է մեջը:

— Նամակ ու բանալի,– ասում է տատիկը:

Ու միանգամից թե՛ լուրջ է թվում, թե՛ վախեցած: Այդ երկու հոգեվիճակներն էլ ընդհանրապես բնորոշ չեն տատիկին: Նա մեկնում է ձեռքերն ու բռնում Էլսայի ցուցամատերից:

— Ես քեզ գանձ փնտրելու ամենամեծ արկածին եմ ուղարկում, իմ քա՛ջ, փոքրի՛կ ասպետ: Պատրա՞ստ ես գնալու:

Տատիկը միշտ շատ է սիրել գանձեր փնտրել: Միամասում գանձաորսը նույնիսկ մարզաձև է համարվում: Օլիմպիական մարզաձև: Չնայած Միամասում այդ մասնակիցներն անտեսանելի են, քանի որ, բառիս բուն իմաստով, այն հանդիսախաղ չէ:

Էլսան, իհարկե, նույնպես սիրում է գանձեր փնտրել: Անշուշտ, տատիկին չի հասնի, որովհետև ոչ մի տեղ, ոչ մի թագավորությունում չի գտնվի մեկը, որ տատիկի չափ սիրի գանձաորսությունը: Էլսան սիրում է գանձեր փնտրել, որովհետև դրանք միայն իրենն ու տատիկինն են: Իսկ տատիկն ինչ ասես որ չի անի՝ հանուն գանձ փնտրելու: Այդպիսի օր էր, երբ գնացել էին առևտուր անելու, ու տատիկը մոռացել էր, թե որտեղ է կայանել Renault-ը: Կամ երբ պիտի հանձնարարեր, որ Էլսան ստուգեր տատիկի փոստն ու կատարեր նրա բոլոր վճարումները, որովհետև տատիկի համար այդ գործը սարսափելի ձանձրալի է: Կամ երբ դպրոցում մարզումների օր էր հայտարարված, ու Էլսան գիտեր, որ վերջում բաղնիքում մեծ երեխաները ոլորած սրբիչներով մի լավ ծեծ են տալու իրեն:

թվայնացրել է 1915.info կայքը

Տատիկի հետ ամեն ինչ վերածվում է գանձարոսի: Նա կարող է կայանատեղին վերածել կախարդական սարի կամ ոլորված սրբիչները՝ հրեշների, որոնց պետք է խորամանկելով հաղթել: Ու միշտ հերոսն Էլսան է:

Բայց Էլսան երբեք տատիկին այսպիսին չի տեսել: Տատիկի ասածները միշտ կեսկատակ են հնչում, բայց ոչ այս անգամ: Նա ձգվում է դեպի Էլսան:

— Նա, ում մոտ կլինի բանալին, կիմանա՝ ինչպես այն օգտագործել: Դու պիտի պաշտպանես ամրոցը, Է՛լսա:

Տունը, որտեղ ապրում են, տատիկն «ամրոց» է անվանում: Էլսան միշտ կարծել էր, թե պատճառը տատիկի մի քիչ խենթ լինելն է: Բայց հիմա սկսում է կասկածել:

— Պիտի պաշտպանես ամրոցը, Է՛լսա, ընտանի՛քդ, ընկերների՛դ,– վճռականորեն կրկնում է տատիկը:

— Ո՞ր ընկերներին,– հարցնում է Էլսան:

Տատիկն ափերով շոյում է նրա այտերն ու ժպտում:

— Նրանք անպայման հայտնվելու են: Վաղը ես քեզ ուղարկելու եմ գանձեր փնտրելու, դու ապշեցուցիչ հեքիաթի ու փառահեղ արկածների կհանդիպես: Ու դու պիտի խոստանաս, որ ինձ դրա համար չես ատելու:

Էլսայի աչքերն ասես այրվում են:

— Ինչո՞ւ պիտի քեզ ատեմ:

Տատիկը շոյում է նրա կոպերը:

— Տատիկների արտոնությունն է, որ կարիք չունեն ցույց տալու իրենց ամենավատ հատկանիշները թոռնիկներին, Է՛լսա: Տատիկն իրավունք ունի չպատմելու, թե ի՞նչ այլանդակի մեկն է եղել՝ նախքան տատիկ դառնալը:

— Ես լավ էլ գիտեմ քո ամենավատ կողմերից շատերը,– հակաճառում է Էլսան ու իսկույն ավելացնում,– օրինակ՝ դու չես հասկանում, որ հացի տոստերում iPhone չեն չորացնում:

Նա հույս ուներ, որ տատիկին կծիծաղեցնի իր ասածը: Բայց նա չի ծիծաղում: Միայն տխուր շշնջում է.

— Պիտի որ փառավոր արկած լինի ու հրաշալի հեքիաթ: Բայց որ վերջում հրեշ կա, իմ սիրելի՛ ասպետ, իմ մեղքով է:

Էլսան աչքերը կկոցած նրան է նայում, որովհետև երբեք նման բան չէր լսել տատիկից: Նա սովորաբար ասում էր, որ իր շնորհիվ են հեքիաթի վերջում հրեշներ հանդիպում, երբեք չէր ասում՝ իր մեղքով: Տատիկը կուչ

թվայնացրել է 1915.info կայքը

եկած նստած էր նրա առջև. Էլսան երբեք նրան ավելի փոքր ու թույլ չէր տեսել: Բոլորովին նման չէր գերհերոսի: Տատիկը համբուրում է նրա ճակատը:

— Խոստացի՛ր, որ չես ատելու ինձ, երբ իմանաս, թե ով եմ եղել առաջ, ու խոստացի՛ր, որ կպաշտպանես ամրոցն ու քո ընկերներին:

Էլսան չգիտեր, թե ինչ է նշանակում նրա ասածը, բայց խոստանում է: Տատիկը գրկում է նրան շատ ավելի երկար, քան երբևէ:

— Նամակը նրա՛ն տուր ու ասա՝ քո համար է: Նա չի ուզենալու վերցնել, բայց ասա, որ ինձնից է: Ասա, որ տատիկը բարևում է ու ասում՝ կներես:

Հետո տատիկն Էլսայի այտերից սրբում է արցունքները: Իսկ Էլսան նկատում է, որ պետք է ասել ոչ թե «քո համար», այլ «քեզ համար»: Նրանք մի քիչ վիճում են, ինչպես միշտ: Հետո նորից «Մոնոպոլիա» են խաղում, դարչինով բուլկի ուտում ու խոսում, թե Հարրի Փոթերի ու Սարդ-մարդու կռվում ով կհաղթեր: Էլսայի կարծիքով, իհարկե, անհեթեթ քննարկում է: Բայց տատիկը սիրում է լեզվին տալ այսպիսի հարցերի վերաբերյալ, երբ բոլորովին չի հասկանում, որ Հարրի Փոթերն անհնար է, որ պարտվի: Այսինքն՝ Սարդ-մարդն էլ է Էլսային դուր գալիս: Հարցն այդ չէ: Բայց Հարրի Փոթերի դե՞մ: Ու Հարրի Փոթերը կոտրվի՞: Չանցավ: Տատիկը մյուս բարձի տակ դրված հսկա թղթե տոպրակից մի քանի դարչինով բուլկի է հանում: Ոչ այն պատճառով, որ ստիպված է թաքցնել դրանք Էլսայի մայրիկից, ինչպես գարեջուրը, ուղղակի սիրում է միասին պահել, որովհետև սիրում է դրանք միասին ուտել: Դարչինով բուլկին տատիկի սիրած կերակուրն է գարեջրի հետ: Էլսային ծանոթ են թղթե տոպրակների գրությունները, տատիկը միայն մի հրուշակարանի դարչինով բուլկիներն է սիրում, ու ասում է, որ ուրիշ ոչ մի տեղ չգիտեն՝ ինչպես թխեն իսկական միրևասյան դարչինով բուլկի: Ամենալավ դարչինով բուլկիներն իրականում Միրևասից են, ու ամբողջ Երկիր-Կիս-Արթունում դրանք դարձել են ազգային ուտեստ: Բայց դրա ամենավատ կողմն այն է, որ ազգային ուտեստն ուտում են միայն ազգային տոնին: Իսկ ամենալավ կողմն այն է, որ Երկիր-Կիս-Արթունի ազգային տոնն ամեն օր է:

— Ի վերջո, բոլոր խնդիրները լուծվում են,– սովորաբար ասում է տատիկը:

Իսկ Էլսան սովորաբար ներքուստ հույս ունի, որ դա չի նշանակում, թե տատիկը պատրաստվում է զուգարանի դուռը բաց թողնել:

— Դու իսկապես կառողջանա՞ս,– վերջապես զգուշորեն հարցնում է Էլսան այնպիսի դժկամությամբ, ինչպես միայն ութի շեմին կանգնած

թվայնացրել է 1915.info կայքը

երեխան կարող է հարցնել, երբ նախապես գիտի, որ պատասխանն իմանալ չի ուզում:

— Հաստատ առողջանալու եմ,– համոզված ասում է տատիկը, չնայած նրա հայացքից Էլսան հասկանում է, որ խաբում է:

— Դե խոստացի՛ր,– պահանջում է Էլսան:

Տատիկը կռանում է նրա ականջին ու իրենց գաղտնալեզվով շշնջում.

— Խոստանում եմ, իմ սիրելի՛, շա՛տ սիրելի ասպետ: Ես խոստանում եմ, որ շուտով ամեն ինչ լավ կլինի: Հաստա՛տ:

Որովհետև տատիկը միշտ այդպես է ասում՝ շուտով լավ կլինի: Հաստա՛տ:

— Ու ես ամեն դեպքում համոզված եմ, որ Սարդ-մարդը կարողանալու է այդ Հարրի Փոթերի հախից գալ,– ավելացնում է տատիկը՝ գիտակցաբար սադրանքի դիմելով:

— Քեզ հավաքի՛ր, հա՞, դմբո՛, ինչե՞ր ես դուրս տալիս,– վրա է տալիս Էլսան, չնայած հասկանում է, որ տատիկին էլ հենց դա էր պետք:

Ու տատիկը հեգնախառը ժպտում է: Ի վերջո, Էլսան նույնպես ժպտում է, չնայած իրականում կարծում է, որ ամեն ինչին չափ ու սահման կա: Եթե այն իրոք գոյություն ունի, ուրեմն ամենայն հավանականությամբ սահմանին բախվում ենք մոտավորապես այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը սկսում է պնդել, թե հնարավոր է Հարրի Փոթերի հախից գալ: Էլսան հենց այդպես էլ կարծում է: Բայց նրանք էլի են դարչինով բուլկի ուտում: Ու «Մոնոպոլիա» են խաղում: Իսկ դրանցից հետո երկար թթվելը պարզապես դժվար է:

Արևը սկսում է մայր մտնել: Լռություն է իջնում: Էլսան պառկում է տատիկի կողքին՝ հիվանդասենյակի նեղլիկ անկողնում, ու նրանք չեն հասցնում աչքերը փակել, երբ հայտնվում է ամպէակն ու թռցնում նրանց Միամաս:

Իսկ քաղաքի մյուս ծայրին գտնվող բազմաբնակարան տան բոլոր բնակիչները հանկարծ սարսափահար արթնանում են գիշերվա կեսին՝ լսելով, որ կռվաշունն առաջին հարկի իր բնակարանում առանց նախազգուշացման սկսել է ոռնալ: Ավելի բարձր ու ավելի սրտակեղեք կաղկանձ, քան անդնդախոր տարտարոսից դուրս եկած այդ գազանի ոռնոցը, մինչև այդ նրանցից ոչ ոք երբևէ չէր լսել: Ասես 10,000 հեքիաթի հավերժության վիշտն ու կարոտը երգելիս լիներ: Կաղկանձը ժամեր է տևում: Մինչև լուսաբաց:

Իսկ երբ առավոտյան լույսը մտնում է հիվանդասենյակ, Էլսան արթնանում է տատիկի գրկում, սակայն տատիկը մնացել էր Միամասում:

թվայնացրել է 1915.info կայքը

5

ՇՈՒՇԱՆՆԵՐԸ

Տատիկ ունենալը մի ամբողջ զորք ունենալուն հավասար բան է: Թոռնիկի կարևորագույն արտոնությունն է իմանալ, որ մեկը քո կողմից է, մի՛շտ, անկախ ամեն ինչից: Նույնիսկ եթե սխալ ես, իրականում, հատկապես եթե սխալ ես:

Տատիկը և՛ թուր է, և՛ վահան, ու նրա սերն առանձնահատուկ է, որ շատ ողջամիտ մարդիկ թերևս չհասկանան: Երբ դպրոցում ասում են, թե Էլսան տարբերվում է, ասես վատ բան լինեն ասելիս: Երբ նա տուն է գալիս կապտուկներով, իսկ տնօրենն ասում է, թե Էլսան պիտի հարմարվի կամ նա է սադրում մյուս երեխաներին, որ հակազդեն, այդ ժամանակ տատիկը կանգնած է նրա կողքին: Թույլ չի տալիս, որ Էլսան ներողություն խնդրի: Թույլ չի տալիս, որ մեղքն իր վրա վերցնի: Տատիկը երբեք չի ասում. «Բանի տեղ չդնես, որովհետև այդ ժամանակ նրանց այլևս զվարճալի չի լինի քեզ ծաղրել, կամ պարզապես հեռացի՛ր նրանցից»: Տատիկն ավելին գիտի: Տատիկն ավելին է հասկանում: Տատիկին կարող ես հետդ ճակատամարտի տանել: Տատիկը միշտ Էլսայի թիմից է:

Ու ամեն իրիկուն Միամասից պատմություն ունի:

Ինչքան ավելի միայնակ էր Էլսան իրական աշխարհում, այդքան ավելի էր մեծանում նրա բանակը Երկիր-Կիս-Արթունում: Ինչքան ավելի ուժեղ են ոլորված սրբիչների հարվածները ցերեկով, այդքան ավելի զարմանահրաշ արկածներ են պատահում նրան գիշերներով: Ու Միամասում նրան

թվայնացրել է 1915.info կայքը

ոչ ոք չի ասում, որ պիտի հարմարվի: Դրա համար էլ Էլսան առանձնապես չէր տպավորվել, երբ հայրը նրան առաջին անգամ իր հետ Իսպանիա էր տարել ու բացատրել, որ հյուրանոցում «ամեն ինչ ներառված» է: Որովհետև եթե տատիկ ունես, ուրեմն հենց կյանքդ է այդպիսին՝ «ամեն ինչ ներառված»: Ուսուցիչները դպրոցում ասում են, թե Էլսան կենտրոնանալու խնդիր ունի: Բայց ճիշտ չէ: Նա կարող է «Հարրի Փոթերի» բոլոր գրքերը գրեթե անգիր ասել: Կարող է Իքս մարդկանցից յուրաքանչյուրի գերունակությունը ճշգրիտ նկարագրել ու պարզել, թե որ մեկին Սարդ-մարդը կկարողանա կամ չի կարողանա հաղթել: Ու կարող է փակ աչքերով գրեթե ճշգրիտ նկարել «Մատանիների տիրակալի» սկզբում եղած քարտեզի կրկնօրինակը: Հա՛, եթե միայն տատիկը ձեռքի տակից թուղթը դուրս չքաշի՝ նվնվալով, թե սոսկալի ձանձրանում է և, բնականաբար, ուզում է փոխարենը Renault-ով մի տեղ գնալ: Դե, տատիկը միշտ էլ մի քիչ անդադրում է եղել: Նա Էլսային Միամասի ու մյուս հինգ թագավորությունների բոլոր ծակուծուկերը ցույց է տվել: Անգամ Միբատալոսի ավերակները, որ ստվերները փորձել էին հողին հավասարեցնել Մարտ-Ան-Վերջի ավարտին: Էլսան կանգնել է տատիկի հետ ափամերձ ժայռերին, որտեղ 99 ծովահրեշտակները զոհաբերել են իրենց, ու նայել է ծովին, որի վրայով հնարավոր է՝ մի օր ստվերները վերադառնան: Ու Էլսան ամեն ինչ գիտի ստվերների մասին, քանի որ տատիկը միշտ ասում է, որ մարդ պիտի իր թշնամիներին ավելի լավ ճանաչի, քան ինքն իրեն:

Ստվերները սկզբում հրեշներ են եղել, բայց նրանց մեջ եղած չարությունն ու մթությունն այնքան ուժեղ էին, որ նրանք փոխակերպվեցին: Ու շատ ավելի վտանգավոր դարձան: Նրանք ատում էին մարդկանց ու նրանց հեքիաթները, և այդ ատելությունն այնքան տևական էր ու այնքան ուժգին, որ նրանց միջի մթությունն ի վերջո կլանեց նրանց մարմինները, մինչև որ նրանց ուրվագծերը բոլորովին անհետացան: Դրա համար էլ նրանց շատ դժվար է հաղթել, քանի որ կարող են անհետանալ պատի, հողի մեջ կամ այլ տեղերում: Նրանք վայրենի են ու արյունռուշտ: Եթե կծեն, չես մեռնի, սակայն շատ ավելի դաժանորեն կտառապես և կկորցնես երևակայությունդ: Այն դուրս կհոսի վերքից, ու դու կմնաս գորշ ու դատարկ: Ու տարեցտարի դատարկվում ես, մինչև որ մարմնիցդ միայն կեղևն է մնում: Մինչև այլևս ոչ ոք հեքիաթ չի հիշում: Իսկ առանց հեքիաթների՝ Միամասն ու

թվայնացրել է 1915.info կայքը

Երկիր-Կիս-Արթունը, երևակայությունից զրկված, մահանում են ամենագարշելի մահով:

Բայց Գայլսիրտը հաղթում է ստվերներին Մարտ-Ան-Վերջում: Նա դուրս է գալիս անտառի թավուտներից, երբ հեքիաթներն անմենաշատն ունեին նրա կարիքը, ու քշում է ստվերներին ծովից անդին: «Մի օր ստվերները վերադառնալու են, և գուցե ինձ նախապատրաստելու համար է տատիկը պատմում այս բոլոր պատմությունները»,– մտածում էր Էլսան:

Այնպես որ, ուսուցիչները սխալվում են: Էլսան կենտրոնանալու խնդիր չունի: Ուղղակի միայն ճիշտ հարցերի վրա է կենտրոնացնում իր ուշադրությունը: Տատիկն ասում է, որ դանդաղ մտածող մարդիկ միշտ մեղադրում են արագ մտածողներին, թե կենտրոնանալու դժվարություններ ունեն:

— Տխմարները չեն պատկերացնում, որ ոչ-տխմարները կարող են ինչ-որ միտք յուրացնել ու անցնել հաջորդին, մինչև նրանք դեռ փորձում են առաջինը մարսել: Դրա համար էլ տխմարները շատ են վախկոտ ու ագրեսիվ, որովհետև ոչինչ այնպես չի վախեցնում տխմարներին, որքան խելացի աղջիկը:

Նա հատուկ հիշեցնում էր այդ մասին, երբ Էլսան հատկապես կենտրոնացման առումով առանձնահատուկ դժվար օր էր անցկացնում դպրոցում: Այդ օրը նրանք սովորաբար պառկում էին տատիկի հսկայական մահճակալին՝ առաստաղին կախված բազմաթիվ սև ու սպիտակ լուսանկարների տակ, ու այնքան էին նայում, մինչև որ լուսանկարների մարդիկ սկսում էին պարել: Էլսան չգիտեր՝ ովքեր էին, իսկ տատիկն ասում էր, որ իր «աստղերն» են, որովհետև երբ շերտավարագույրների արանքից փողոցային լապտերների լույսը ներս էր ընկնում, առաստաղը փայլփլում էր գիշերային երկնքի պես: Լուսանկարներում կան համազգեստով կանգնած տղամարդիկ. ոմանք բժշկի խալաթով են, մի քանիսն էլ՝ գրեթե առանց հագուստի: Բարձրահասակ, ժպտացող, բեղավոր տղամարդիկ, գլխարկով, կարճ, քառակուսի տղամարդիկ, ու բոլորը կանգնած են տատիկի կողքին այնպիսի տեսքով, կարծես նա հենց նոր անպարկեշտ կատակ է արել: Ու նրանցից ոչ ոք չի նայում լուսանկարչական սարքին, որովհետև ոչ ոք չի կարող հայացքը կտրել տատիկից:

Տատիկը դեռ երիտասարդ է, գեղեցիկ, անմահ: Կանգնած է ճանապարհի ցուցանակի մոտ (ցուցանակին գրված տառերն Էլսան չի կարողանում

թվայնացրել է 1915.info կայքը

կարդալ)՝ վրանի կողքին՝ զինված տղամարդկանց միջև: Նկարներում ամենուրեք երեխաներ են: Մի քանիսի գլուխները վիրակապված են, ոմանք՝ հիվանդանոցային մահճակալներին՝ մարմնից դուրս եկող շլանգներով, մեկը միայն մի ձեռքով ու մի ծայրատով՝ մյուսի տեղում: Մի տղա բոլորովին վնասված չի երևում: Թվում է՝ կկարողանա 74,200 մետր ոտաբոբիկ վազել: Էլսայի տարիքին է և այնպիսի խիտ ու գզգզված մազեր ունի, որ մարդ բանալիները մեջը կկորցնի, ու այնպիսի հայացք, ասես հենց նոր հրավառության ու պաղպաղակի պահեստ է հայտնաբերել: Աչքերը խոշոր ու կլոր են և այնքան սև, որ սպիտակուցներն ասես սպիտակ կավիճով սև գրատախտակին գծված լինեն: Էլսան չգիտի՝ ով է, բայց անունը Մարդագայլուկ է դրել, որովհետև կարծում է, որ նրանք հենց այդպիսին են:

Էլսան միշտ ուզում էր հարցնել տատիկին Մարդագայլուկի մասին: Բայց երբ պատրաստվում էր հարցնել, կոպերն ավելի էին փակվում, ու հաջորդ վայրկյանին ինքն ու տատիկը, արդեն յուրաքանչյուրն իր ամպէակի մեջքին նստած, սլանում էին Երկիր-Կիս-Արթունի վրայով ու իջնում էին Միամասի քաղաքային դարպասների առջև: Ու Էլսան որոշում էր հաջորդ օրը հարցնել տատիկին:

Ու մի առավոտ էլ հաջորդը չեղավ:

Էլսան նստած է մեծ պատուհանի առջև՝ նստարանին: Ահավոր մրսում է. ատամներն իրար են խփվում: Մայրիկն ինչ-որ կնոջ հետ է խոսում, որի ձայնը կետաձկան ձայնի պես է հնչում: Ամեն դեպքում, Էլսային թվում է, որ կետաձկան ձայնը պիտի որ այդպիսին լինի: Որտեղի՞ց իմանաս, եթե երբեք իսկական կետի չես հանդիպել: Բայց կարծես տատիկի նվագարկիչի ձայնը լիներ, երբ նա փորձել էր ռոբոտի վերածել այն: Պարզ չէր, թե տատիկն ինչպիսի ռոբոտ էր ուզում սարքել, բայց առանձնապես ոչինչ դուրս չեկավ: Ուղղակի դրանից հետո ձայնասկավառակ դնելիս նվագարկիչից միշտ կետաձկան ձայն էր հնչում: Էլսան այդ օրն ամեն ինչ պարզեց ձայնասկավառակների ու խտապնակների մասին: Այդ ժամանակ էլ հասկացավ, թե ինչու են ծերերը միշտ շատ ազատ ժամանակ ունենում, որովհետև նախքան Spotify-ի հայտնվելը՝ իրենց ամբողջ ժամանակը ծախսում էին երգերը մի տեսակից մյուսին փոխելու վրա:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա բարձրացնում է բաճկոնի օձիքն ու ավելի է ձգում գրիֆինդորցիների շարֆը: Այդ գիշեր առաջին ձյունն է գալիս: Կարծես դժկամորեն: Ոնց որ առաջին փաթիլները տնքում էին, երբ հալվում էին՝ դիպչելով ասֆալտին. ասես հատուկ ցույց էին տալիս, որ իրենց պարտադրել են, և ոչ թե ինքնակամ են թափվում: Հիմա արդեն այնքան ձյուն է նստել, որ կարելի է հրեշտակ պատկերել ձյան վրա, ինչն Էլսան շատ է սիրում:

Միամասում տարին բոլոր ձյունե հրեշտակներ կան, չնայած տատիկի կարծիքով դրանք առանձնապես սիրուն չեն: Ասում է, որ շատ ամբարտավան են, իրենց երևակայում են ու բողոքում են անձնակազմից, երբ ինչ-որ պանդոկում ճաշելիս են լինում:

— Ամենուր քթները խոթում են, գինի են հոտոտում ու նման բաներ,– ասում է տատիկը:

Բայց Էլսան չի համարում, որ շատ վատ է, երբ մարդ կարծում է, թե իրենից ինչ-որ բան է ներկայացնում, մանավանդ, եթե իրոք ներկայացնում է: Նա առաջ է ձգում ոտքերն ու կոշիկների ծայրով որսում փաթիլները: Նա ատում է, երբ ստիպված է դրսում, նստարանին նստած, մայրիկին սպասել, բայց ուրիշ տարբերակ չունի, որովհետև էլ ավելի շատ է ատում, երբ ստիպված է ներսում, աթոռին նստած, սպասել մայրիկին:

Ուզում է տուն գնալ: Տատիկի հետ: Որովհետև թվում է, թե ամբողջ տունը հիմա կարոտել է տատիկին: Ոչ թե բնակիչները, այլ հենց տունը: Կարծես պատերը տնքում ու նվվում են: Իսկ Բարեկամն իր բնակարանում երկու գիշեր առանց դադարի ոռնացել էր: Բրիտ-Մարին ուղարկել էր Քենթին, որ դռան զանգը տա, սակայն ոչ ոք չէր բացել: Իսկ Բարեկամն այնքան բարձր էր ոռնում, որ Քենթն ուղղակի պատին էր կպել: Այնպես որ, Բրիտ-Մարին ոստիկանություն էր զանգել: Նա վաղուց տանել չի կարողանում Բարեկամին: նա մի քանի ամիս շարունակ, իր բողոքի թուղթը ձեռքին, ման էր գալիս շենքով մեկ, որ բոլորին ստորագրել տա ու հետո բողոքն ուղարկի տան սեփականատիրոջը՝ պահանջելով վտարել «այդ այլանդակ կռվաշանը»: «Մենք չենք կարող շենքում շներ ունենալ. անվտանգության հարց է: Երեխաների համար վտանգավոր է, իսկ մենք պետք է երեխաների մասին մտածենք»,– բացատրել էր նա բոլորին: Չնայած այդ տանն ապրող երեխաները Էլսան ու համախտանիշ ունեցող տղան են, իսկ Էլսան հաստատ համոզված է, որ Բրիտ-Մարիին բոլորովին չի հուզում Էլսայի անվտանգության հարցը: Համախտանիշով տղան ապրում է հենց

թվայնացրել է 1915.info կայքը

այլանդակ կռվաշան դիմացի բնակարանում, բայց նրա մայրիկն անվրդով ասել էր Բրիտ-Մարիին, որ, այնուամենայնիվ, կռվաշունը հաստատ մտածում է, որ տղան իրենից ավելի շատ է աղմկում:

Տատիկը ծիծաղից թուլացել էր, երբ պատմում էր այդ մասին Էլսային, սակայն Էլսան չէր կարող ծիծաղել, մինչև հաստատ չիմանար, որ Բրիտ-Մարին դուրս չի գա երեխաներ արգելող բողոքագրով:

Երբեք չես կարող վստահ լինել, որ լավ ես ճանաչում Բրիտ-Մարիին:

Միայն Լենարտն ու Մոդն էին ստորագրել նրա բողոքի տակ. ոչ այն պատճառով, որ չէին սիրում կռվաշներին, այլ պարզապես դժվարանում էին մերժել մեկին և հատկապես՝ Բրիտ-Մարիին: Տատիկը, ցուցակում նրանց անունները տեսնելով, իջել էր ներքև ու հարցրել, թե ինչպես կարող են ստորագրել տանը շներ պահելն արգելող դիմումի տակ, երբ իրենք անձամբ Սամանթա ունեն: Լենարտն ու Մոդը բոլորովին շվարել էին:

— Դե, դա շներին է վերաբերում, ոչ թե Սամանթային,– զգուշորեն պատասխանել էր Լենարտը:

Մոդն էլ նույնքան զգուշորեն գլխով էր արել ու ասել.

— Սամանթան իրականում բիշոն ֆրիզե է:

Տատիկն այդ պատմությունը չէր կարողանում պատմել՝ առանց Լենարտի ու Մոդի կողքին այնպիսի բառեր շարելու, որոնք Էլսան արգելում էր՝ բացատրելով, որ դրանք, ըստ էության, «որոշակի հոգեկան խանգարում» են նշանակում: Իսկ տատիկը ի պատասխան մռթմռթում էր, թե սպանեցին այդ գրողի տարած քաղաքական կոռեկտության պահանջով, ու նոր ծխախոտ էր վառում:

Բրիտ-Մարին սիրալիր ժպիտով անձամբ բացատրեց, որ Սամանթան ամենևին էլ այլանդակ կռվաշուն չէ, իսկ Էլսան մտածեց, որ մարդ երբեք էլ չի իմանա, թե ներքուստ ինչ պայքարների մեջ է Սամանթան, նույնիսկ եթե արտաքինից հանգիստ է թվում: Բայց չբարձրաձայնեց, որովհետև Բրիտ-Մարին անկանխատեսելի է:

Էլսան ցատկում է նստարանից ու սկսում քայլել ձյան մեջ, որ ոտքերը տաքացնի: Հսկայական պատուհանի կողքին, որտեղ աշխատում է կետաձկան չափսերի կինը, մթերային խանութ է: Դրսում ցուցանակ է դրված՝ «Շաքար ավազի 2 կգ՝ 49.90» գրությամբ: Էլսան փորձում է զսպել իրեն, որովհետև մայրիկը միշտ պահանջում է, որ իրեն զսպի: Բայց, ի վեր-

թվայնացրել է 1915.info կայքը

ջո, բաճկոնի գրպանից հանում է կարմիր նշամատիտն ու երկու բառերը գծիկով միացնում իրար: Ապա նայում է արդյունքին ու թեթևակի գլխով անում: Նշամատիտը նորից գրպանն է դնում ու նորից նստում նստարանին: Գլուխը հետ է տանում, կկոցում աչքերն ու զգում է՝ ինչպես են փաթիլներն իրենց սառը տոտիկներով իջնում դեմքին:

Երբ քթին հանկարծ ծխախոտի հոտ է հասնում, նախ կարծում է, թե երազում է: Այդ սուր հոտը սկզբում իսկապես հաճելի էր ներս քաշել, ու Էլսան, ըստ էության, չի հասկանում, թե ինչու է ջերմություն ու հանգստություն զգում: Բայց հաջորդ վայրկյանին մի ուրիշ զգացում է համակում իրեն: Ասես ինչ-որ բան սեղմում է կողոսկրերի ներսից. վտանգի ազդանշանի պես:

Քիչ հեռվում՝ շենքի ստվերում, մի տղամարդ է կանգնած: Էլսան հստակ չի տեսնում նրան. երևում է միայն նիհարությունն ու մատների արանքում առկայծող ծխախոտի կարմիր լույսը: Կարծես ուրվագծեր չունենա: Նա կիսով չափ շրջված է. ասես չի էլ տեսնում իրեն: Եվ Էլսան անըմբռնելի վախով է համակվում. նա սկսում է շոշափելով զենք փնտրել: Իրոք, զարմանալի է, որ իրական աշխարհում զենքն իրեն երբեք պետք չի եկել: Իրական աշխարհում իր առաջին մղումը միշտ փախչելն էր, և միայն Միամասում էր, որ ինքը բոլոր ասպետների պես, վտանգ զգալով, ձեռքը տանում էր թրին: Իսկ այստեղ ոչ մի թուր չկա:

Երբ նա նորից վեր է նայում, մարդը դեռևս կիսաշրջված է, բայց Էլսան կարող է երդվել, որ հիմա նա արդեն ավելի մոտիկ է: Ու դեռ ստվերում է, չնայած շենքից հեռացել է: Ասես ստվերը ոչ թե շենքից է, այլ հենց մարդուց: Էլսան թարթում է ու երբ նորից նայում է, այլևս չի կարծում, թե մարդը մոտեցել է:

Հիմա հաստատ համոզված է:

Էլսան սահում է նստարանի վրայից, հետ-հետ քայլում դեպի հսկայական պատուհանը՝ ձեռքով փնտրելով դռան բռնակը: Սահելով դռնից ներս է ընկնում: Ներսում կանգնած՝ ծանր շնչում է՝ ջղաձգորեն օդը ներս քաշելով: Երբ դուռը հետևից փակվում է թեթևակի ծլնգոցով, Էլսան հասկանում է, թե ինչու էր ծխախոտի ծուխն ապահովության զգացում առաջացրել: Այդ մարդը նույն ծխախոտից էր ծխում, ինչ տատիկը: Էլսան ամեն

թվայնացրել է 1915.info կայքը

պարագայում կճանաչեր այն, քանի որ տատիկը սովորաբար թույլ էր տալիս օգնել իրեն ծխախոտը փաթաթելիս, որովհետև ասում էր, որ Էլսայի բարալիկ մատիկները այդ սատանայական գլանակները փաթաթելու համար շատ հարմար են: Իսկ երբ հիմա նայում է պատուհանից, արդեն չի տարբերում ստվերները մարդկանց ուրվագծերից: Մի պահ թվում է, թե մարդը դեռ կանգնած է փողոցի մյուս կողմում, բայց հենց հաջորդ վայրկյանին մտածում է, թե իրականում չի տեսել նրան:

Էլսան սարսափած ցնցվում է, երբ մայրիկի ձեռքերը քնքշորեն դիպչում են իր ուսերին: Շրջվում է՝ աչքերը լայն բացած, իսկ ծնկներն իրենք իրենց ծալվում են: Մայրիկի գրկում հոգնությունից բոլոր զգացմունքները կաթվածահար են լինում: Երկու օր է՝ չի քնել: Մայրիկի փորն այնքան մեծ է ու պինդ, որ վրան թեյի բաժակ կդրվի: Յեորգը հաճախ է ասում, որ բնությունը դրանով հղիներին ընդմիջման հնարավորություն է տալիս:

— Հիմա տուն կգնանք,– շշնջում է մայրիկը նրա ականջին:

Էլսան թափ է տալիս հոգնությունն ու ազատվում մայրիկի ձեռքերից:

— Ես ուզում եմ նախ տատիկի հետ խոսել:

Մայրիկը լրիվ ջախջախված է երևում: Էլսան բացատրական բառարանից գիտի: Հա, բառարանի բառերին հետո կանդրադառնանք այս պատմության մեջ: Ամեն մեկին՝ առանձին:

— Գիտե՞ս, անո՛ւշս, չեմ կարծում, որ արժի հիմա…,– շշնջում է մայրիկը:

Բայց Էլսան արդեն ընդունարանի մոտով վազում է կողքի սենյակ: Նա լսում է իրեն կանչող կետաձուկ կնոջ ձայնը, իսկ հետո՝ մայրիկի զուսպ ձայնը, երբ խնդրում էր թույլ տալ, որ Էլսան գնա: Տատիկը սպասում էր նրան սենյակում: Ներսում շուշանների բույրն էր տարածված. դրանք մայրիկի սիրած ծաղիկներն են: Տատիկը սիրած ծաղիկներ չունի, որովհետև բույսերը տատիկի բնակարանում մի օրից ավել չեն ապրում: Մի անգամ՝ ինքնաճանաչման դրսևորման հազվագյուտ պահին, ամենայն հավանականությամբ թոռնուհու ոգևորիչ խրախուսանքին արժանանալով, տատիկը որոշել էր, որ սիրած ծաղիկ ունենալն ահավոր անազնիվ է բնության հանդեպ: Էլսան մռայլված մի քիչ հեռու է կանգնում՝ ձեռքերը բաճկոնի գրպանները խցկած: Միտումնավոր դոփելով՝ թափ է տալիս ձյունը կոշիկներից:

— Ես չե՛մ ուզում մասնակցել էդ գանձարոսին. հիմարություն է:

թվայնացրել է 1915.info կայքը

Տատիկը չի պատասխանում: Նա երբեք չի պատասխանում, երբ գիտի, որ Էլսան ճիշտ է: Էլսան նորից է թափ տալիս կոշիկների ձյունը:

— Դու հիմար ես,– կտրուկ ասում է նա:

Տատիկը դրան էլ չի պատասխանում: Էլսան նստում է նրա կողքի աթոռին ու նրան է պարզում նամակը:

— Էս հիմար նամակն էլ ինքդ հանձնիր,– շշնջում է նա:

Արդեն երկու օր է անցել, ինչ Բարեկամը սկսել է ոռնալ: Երկու օր առաջ Էլսան վերջին անգամ է եղել Երկիր-Կիս-Արթունում ու Միամասի թագավորությունում: Ոչ մեկը չի ուզում եղելությունն ասել նրան: Մեծերը փորձում են այնպես ներկայացնել այն, որ վտանգավոր, սարսափազդու կամ տհաճ չինչի: Ասես տատիկն իսկի էլ հիվանդ չի եղել: Ասես ամեն ինչ պարզապես փորձանք էր: Բայց Էլսան գիտի, որ խաբում են, որովհետև տատիկը երբեք փորձանքի զոհ չի դառնում: Փորձանքներն են տատիկի զոհը դառնում:

Իսկ Էլսան գիտի՝ ինչ է քաղցկեղը: Վիքիպեդիայում գրված է:

Էլսան հրում է դագաղի ծայրը, որ տատիկն արձագանքի, որովհետև ներքուստ դեռևս հույս ունի, որ տատիկը սովորականի պես որոշել է գլխին խաղ խաղալ: Ոնց որ այն ժամանակ, երբ ձնեմարդուն իսկական շորեր էր հագցրել, որ պատշգամբից ընկած մարդու նմանվի: Ու Բրիտ-Մարին այնպես էր զայրացել, երբ պարզել էր, որ դա կատակ է, և ոստիկանություն էր զանգել: Հաջորդ առավոտ Բրիտ-Մարին դուրս էր նայել պատուհանից ու տեսել, որ տատիկն էլի նույն ձնեմարդուց էր սարքել, ու տատիկի ասելով՝ Բրիտ-Մարին ուղղակի «ֆազերը գցել էր» ու դուրս նետվել բակ՝ ձյուն մաքրելու թիակը ձեռքին: Եվ նույն պահին հանկարծ ձնեմարդը տեղից վեր էր ցատկել ու բղավել էր՝ ԲՈՈՈՈՈՈՀ:

Տատիկը հետո պատմում էր, որ Բրիտ-Մարիին սպասելիս մի քանի ժամ պառկել էր ձյան մեջ ու այդ ընթացքում ամենաքիչը երկու կատու վրան չիշիկ էին արել:

— Բայց արժեր,– ոգևորված ասել էր տատիկը:

Բրիտ-Մարին, բնականաբար, ոստիկանություն էր զանգել, բայց նրանք ասել էին, որ վախեցնելը հանցագործություն չէ: Բրիտ-Մարին, անշուշտ,

թվայնացրել է 1915.info կայքը

նրանց հետ համաձայն չէր: Նա տատիկին խուլիգան էր անվանել: Էլսան կարոտում էր այդ օրը:

Բայց այս անգամ տատիկը տեղից վեր չի կենում: Էլսան բռունցքներով խփում է դագաղին, բայց տատիկը չի պատասխանում: Էլսան ավելի ուժեղ է թմբկահարում, ասես ուզում է ամեն սխալ բան թմբկահարելով դուրս գցել: Ամեն անիմաստ ու անպետք բան: Վերջապես աթոռից ներքև է սահում, իջնում ծնկների վրա ու շշնջում.

— Գիտե՞ս, խաբում են, ասում իբր հեռացել ես, որ մենք կորցրել ենք քեզ: Չեն ասում՝ մահացել ես:

Էլսան եղունգները խրում է ափերի մեջ ու ամբողջ մարմնով ցնցվում:

— Ես չգիտեմ՝ ոնց եմ Միամաս հասնելու, եթե դու մահացել ես…

Տատիկը չի պատասխանում: Էլսան ճակատը հենում է դագաղի եզրին: Զգում է փայտի սառնությունը մաշկի վրա ու արցունքների տաքությունը՝ շրթունքներին, հետո՝ մայրիկի փափուկ մատները ծոծրակին: Եվ այդ ժամանակ շրջվում է ու գրկում նրա վիզը. մայրիկը նույնպես գրկում է նրան ու դուրս տանում:

Երբ նորից բացում է աչքերը, արդեն Kia-ի մեջ է՝ մայրիկի ավտոմեքենայի: Մայրիկը, ձյան տակ կանգնած, հեռախոսով Յեորգի հետ է խոսում: Էլսան գիտի, որ թաղման մասին են խոսում, և մայրիկը չի ուզում, որ ինքը լսի: Դե, հիմար հո չի՞, որ չհասկանա: Տատիկի նամակը դեռ ձեռքին է: Ինքը գիտի, որ չի կարելի ուրիշների նամակները կարդալ, բայց վերջին երկու օրվա ընթացքում հաստատ մի 100 անգամ կարդացած կլինի: Տատիկը, իհարկե, գիտեր, որ կարդալու է, դրա համար էլ ամբողջ նամակը Էլսային անծանոթ տառերով էր գրել՝ լուսանկարներում եղած ճանապարհային ցուցանակների տառերով: Էլսան սրտնեղած դրանց է նայում: Տատիկը միշտ ասում էր, որ ինքն ու Էլսան երբեք իրարից գաղտնիքներ չեն ունենա, միայն ուրիշներից կթաքցնեն իրենց գաղտնիքները: Ու հիմա ուղղակի պայթում է կատաղությունից, որովհետև նստած է՝ ձեռքին ամենամեծ գաղտնիքը, ու ոչ մի տառ չի կարողանում կարդալ: Բացի այդ, հասկանում է, որ եթե հիմա խռովի տատիկից, անհատական ռեկորդ կսահմանի, որն այլևս երբևէ գերազանցել չի կարողանա:

Թանաքը լղոզվում էր, երբ Էլսան թղթին նայելիս թարթում էր: Չնայած Էլսան այդ տառերը չգիտի, այնուամենայնիվ, թվում է, թե տատիկը սխալ-

թվայնացրել է 1915.info կայքը

ներով է գրել. կարծես տառերն ուղղակի ընթացքում շպրտել է թղթի վրա, երբ ինքն արդեն մտքով ուրիշ տեղ էր: Այնպես չէ, որ տատիկն ուղղագրություն չգիտեր, պարզապես այնքան արագ էր մտածում, որ տառերը հետևից չէին հասնում: Եվ ի տարբերություն Էլսայի՝ տատիկը չէր հասկանում օրենքներին ճշգրտորեն հետևելու իմաստը:

— Բայց, գրո՛ղը տանի, հասկանում ես, չէ՞, ինչ նկատի ունեմ,– ֆշշացնում էր նա, երբ մայրիկի ու Յեորգի հետ ճաշելիս գաղտնի գրություններ էր թողնում Էլսային, իսկ Էլսան կարմիր գրիչով ուղղումներ էր անում:

Մի քանի հարց կար, որոնց վերաբերյալ վիճում էին տատիկն ու Էլսան, ու մեկն էլ այդ է, քանի որ Էլսայի կարծիքով՝ տառերը շատ ավելին են, քան պարզապես գրություն ուղարկելու միջոց: Շատ ավելի կարևոր են:

Այսինքն՝ վիճում էին: Սովորաբար միշտ վիճում էին այդ հարցի վերաբերյալ:

Միայն մի բառ կար ամբողջ նամակում, որ Էլսան կարող էր կարդալ: Մի բառ միայն, որ գրված էր սովորական տառերով, ասես տեքստի մեջտեղում պատահաբար հայտնված լիներ: Առանձնանալով հանդերձ՝ այնքան աննկատ էր մնացել, որ Էլսան առաջին անգամները կարդալիս նույնիսկ չէր նկատել: Նա կարդում ու կարդում էր, մինչև որ այլևս չէր տեսնում անդադար թարթելու պատճառով:

Եղունգներն ավելի խորն էին խրվում ափերի մեջ: Նա 10,000 պատճառ ուներ՝ իրեն դավաճանված զգալու ու զայրանալու, ու հավանաբար ևս 10,000 պատճառ կա, որ դեռևս չի բացահայտել, որովհետև վստահ է, որ սա պատահականություն չէ: Տատիկը միտումնավոր էր գրել բառը, որ Էլսան տեսնի: Ծրարի վրա նույն անունն է, ինչ Հրեշի փոստարկղի:

Եվ միակ բառը, որ Էլսան կարող է կարդալ նամակի մեջ, «Միամասն» է:

Տատիկը գանձ փնտրել շատ է սիրել:

թվայնացրել է 1915.info կայքը

6

ԼԿԱՑՈՂ ՄԻՋՈՑԸ

Այտին երեք քերծվածք կա: Կարծես ճանկերի հետքեր լինեն: Հիմա բոլորը ցանկանալու են իմանալ, թե ինչից սկսվեց: Էլսան վազեց, հենց դրանից էլ սկսվեց: Իսկ նա վազելուց լավ է: Եթե մեկին անընդհատ հալածում են, նա սկսում է լավ վազել:

Առավոտյան Էլսան խաբել էր մորը՝ ասելով, որ դասերը սովորականից մի ժամ շուտ են սկսվելու: Երբ մայրիկը տարակուսած սկսել էր հարցեր տալ, Էլսան մեջտեղ էր բերել «վատ մայր» խաղաքարտը: Այն Renault-ի պես է. գեղեցկությամբ չի փայլում, սակայն զարմանալիորեն անվրեպ է աշխատում:

— Ես քեզ մի 100 անգամ ասել եմ, որ երկուշաբթի օրերը 1 ժամ շուտ ենք սկսում: Քեզ նույնիսկ գրություն եմ բերել, բայց դու լսո՞ւմ ես ինձ,– բորբոքված բացականչել էր Էլսան՝ առանց մորը նայելու:

Ու մայրիկը դադարել էր հարցաքննել: Հետո ինչ-որ բան էր մրմնջացել «հղիների ուղեղի» մասին ու մնացել էր մոլորված տեսքով կանգնած: Մայրիկին հավասարակշռությունից հանելու ամենահեշտ ձևն է, եթե հաջողեցնես համոզել, թե մի պահ իրավիճակի վերահսկողությունը ձեռքից բաց է թողել: Նախկինում ամբողջ աշխարհում ընդամենը երկու հոգի էին, որ գիտեին՝ ինչպես անել, որ մայրիկը վերահսկողությունը կորցնի: Իսկ հիմա մնացել է միայն մեկը: Չափազանց մեծ իշխանություն է ութ տարեկանը չլրացած աղջնակի ձեռքին:

Դպրոցից Էլսան ավտոբուսով տուն վերադարձավ: Չորս տուփ «Դայմ» էր գնել մթերային խանութից: Տունը մութ էր ու լուռ, ինչպես միայն տատիկի տունը կարող էր լինել առանց տատիկի, որն ասես նույնպես

թվայնացրել է 1915.info կայքը

կարոտում էր նրան: Էլսան թաքնվեց Բրիտ-Մարիից, որը գնում էր դեպի աղբանոց, սակայն ձեռքին տեսակավորված աղբ չուներ: Բրիտ-Մարին ստուգեց աղբարկղերի պարունակությունը ու ծամածռեց բերանը, ինչպես անում էր այնպիսի բան տեսնելիս, որի մասին անմիջապես որոշում էր խոսել հաջորդ բնակվարչության հանդիպմանը: Ապա շարունակեց ճանապարհը ներքև՝ դեպի մթերային, որ մի քիչ էլ այնտեղ զբոսնի ու բերանը դժգոհ ծամածռի:

Էլսան դռնից ներս մտավ ու կես հարկ բարձրացավ: Բնակարանի դռան առաջ կանգնած, նամակը ձեռքին՝ մի 20 րոպե ցնցվում էր վախից ու զայրույթից: Զայրույթն ուղղված էր տատիկին, վախը՝ Հրեշին: Հենց այդպես էլ սկսվեց: Դրանից քիչ անց նա արդեն այնքան արագ էր վազում, որ թվում էր, թե ներբանները գետնին դիպչելիս այրվում էին ասես տաք ավազից: Ու հիմա նա նստած է մի փոքրիկ սենյակում (այտին կարմրին տվող քերծվածքներ կան) ու սպասում է մայրիկին՝ իմանալով, որ բոլորը փորձելու են պարզել, թե ինչից ամեն ինչ սկսվեց:

Էլսան ատում է երկուշաբթիները, որովհետև հենց այդ օրից սկսվեց: Էլի երկուշաբթի էր: Նա պտտում էր գլոբուսը, որ դրված էր գրասեղանին: Տնօրենին ակնհայտ տհաճ է: Այնպես որ, նա ինքնամոռաց արագացնում է:

— Կարող ես վերջ տալ, Է՛լսա,– ասում է տնօրենը՝ առանց հարցման ինչերանգի:

— Օդն ընդհանուր է,– տեղեկացնում է Էլսան:

Տնօրենը մռայլ ներս է քաշում օդը քթանցքերով և ցույց տալիս այտի վերքը:

— Դե՞, պատրա՞ստ ես պատմել՝ ինչից սկսվեց:

Էլսան նրան պատասխանի չարժանացրեց:

Ի՜նչ հնարամիտն էր տատիկը: Էլսան ստիպված էր ընդունել այդ փաստը: Նրան դեռ սարսափելի զայրացնում է այդ հիմար գանձարոսը, բայց տատիկը խելոք բան էր մտածել՝ նամակի մեջ սովորական տառերով «Միամաս» գրելով: Որովհետև Էլսան հիմա, աստիճանահարթակին կանգնած, ամենաքիչը 100 հավերժություն փորձում էր քաջություն հավաքել՝ նախքան դռան զանգը սեղմելը: Ու եթե տատիկը չիմանար, որ Էլսան կարդալու է նամակը, չնայած ուրիշների նամակները չի կարելի կարդալ, և «Միամասը» սովորական տառերով գրած չլիներ, ապա Էլսան ուղղակի կգցեր ծրարը Հրեշի փոստարկղն ու կհեռանար: Իսկ հիմա նա, դեռ դռան

թվայնացրել է 1915.info կայքը

առաջ կանգնած, սեղմում է զանգը, քանի որ ուզում է ստիպել Հրեշին, որ պատասխանի իր հարցերին: Որովհետև Միամասը տատիկինն ու Էլսայինն է: Միայն իրենցը: Էլսայի կատաղությունը, որ տատիկի մտքով անցել էր մեկ ուրիշ տխմարի հետը տանել այնտեղ, ավելի մեծ էր, քան նրա վախն ինչ-որ հրեշից: Լավ, թերևս շատ ավելի մեծ չէր, բայց բավարար էր: Բարեկամը դեռ ոռնում էր կողքի բնակարանում: Բայց երբ նա Հրեշի դռան զանգը տվեց, ոչինչ չպատահեց: Նա նորից զանգեց ու դուռը խփեց այնպես, որ դռան փայտը ճռռաց: Վերջապես ծիկրակեց փոստարկղի ճեղքից, բայց ներսում մթություն էր: Ո՛չ մի շարժում, ո՛չ մի շնչառություն: Միակ բանը, որ զգաց, ախտահանող հեղուկի սուր հոտն էր, այնքան սուր, որ շնչելիս խուժում էր շնչուղիներով՝ այրելով մինչև իսկ ակնագնդերը: Ու ոչ մի հրեշ: Թեկուզ ամենապստլիկ: Այսպիսով՝ Էլսան իջեցրեց ուսապարկն ու հանեց «Դայմի» չորս տուփերը: Սկսեց հերթով բացել փաթեթավորումներն ու գցել Բարեկամի փոստարկղի մեջ: Մի ակնթարթ ներսում ոռնոցը դադարեց: Էլսան որոշել էր նրան «արարած» կոչել, մինչև որ պարզի, թե ինչ է իրականում, քանի որ անկախ այն բանից, թե Բրիտ-Մարին ինչ է ասում, Էլսան հաստատ համոզված է, որ ամեն դեպքում ինչ-որ հսկա շուն չէ: Այդքան հսկայական շներ չեն լինում:

— Դու պիտի վե՛րջ տաս քո ոռնոցին, թե չէ Բրիտ-Մարին կզանգի ոստիկանություն, ու կգան, քեզ կսպանեն,– շշնջում է նա փոստարկղի ճեղքից:

Նա չի կարող իմանալ՝ արարածը հասկացա՞վ, թե՞ ոչ: Բայց այն, համենայնդեպս, լուռ ուտում էր իր «Դայմերը», ինչպես բոլոր գիտակից արարածները, երբ նրանց «Դայմ» են հյուրասիրում:

— Եթե Հրեշին տեսնես, ասա՛, որ ես նրան նամակ ունեմ հանձնելու,– ասում է Էլսան:

Արարածը չի պատասխանում, բայց Էլսան զգում է նրա տաք շնչառությունը, երբ նա հոտոտում է դռան մոտ:

— Ասա՛, որ տատիկը բարևում է ու ասում՝ կներես,– շշնջում է նա:

Հետո նամակը դնում է ուսապարկն ու նորից ավտոբուսով գնում դպրոց: Ու երբ ավտոբուսի պատուհանից դուրս է նայում, Էլսային թվում է, թե նորից տեսնում է նրան՝ նույն նիհար մարդուն, որ կանգնած էր թաղման գրասենյակի մոտ, երբ մայրիկը խոսում էր կետաձուկ կնոջ հետ: Հիմա նա կանգնած է տան ստվերում՝ փողոցի հակառակ կողմում: Էլսան ծխա-

թվայնացրել է 1915.info կայքը

խոտի ծխի մեջ չի տեսնում նրա դեմքը, բայց կրծքավանդակը սեղմվում է բնազդային սառը վախից: Հետո մարդն անհետանում է:

Էլսայի կարծիքով՝ հենց այդ վախի պատճառով չկարողացավ անտեսանելի դառնալ, երբ դպրոց եկավ: Անտեսանելի դառնալը գերունակություն է, որ մարդ կարող է զարգացնել, ու Էլսան շատ էր պարապել, բայց այն չի աշխատում, երբ մարդ զայրացած է կամ վախեցած: Իսկ այդ երկու հույզերն էլ դեռ ալեկոծում էին իրեն, երբ նա հասավ դպրոց: Վախենում էր մարդուց, որ չգիտես ինչու, հայտնվում է ստվերներում: Զայրանում էր տատիկի վրա, որ նա Հրեշին նամակ էր ուղարկել, և վախենում էր Հրեշից ու զայրանում, որովհետև նորմալ հրեշները, որ քիչ թե շատ կարգին դաստիարակություն են ստացել, ապրում են խոր ու մթին քարանձավներում կամ սառած լճերի հատակին: Իրականում նորմալ, սարսափազդու հրեշները բնակարաններում չեն ապրում: Ըստ էության, նորմալ, սարսափազդու հրեշները նամակներ չեն ստանում:

Բացի այդ, Էլսան ատում է երկուշաբթիները: Դպրոցում միշտ ամենավատը երկուշաբթի օրերն են, որովհետև այն մարդիկ, որ ինչ-որ մեկին հալածում են, ստիպված են դիմանալ հանգստյան օրերը, մինչև կարողանան նորից մեկին հալածել: Դրա համար էլ երկուշաբթիներն ամենաածանրն են: Էլսան նորից մատով պտտում է տնօրենի գլոբուսը: Ապա լսում է, թե ինչպես է դուռն իր հետևում բացվում, ու տնօրենը թեթևացած ոտքի է կանգնում:

— Ողջո՛ւյն: Կներեք, որ ուշացա: Երթևեկությունն ահավոր էր,– հևալով ասում է Էլսայի մայրիկը, ու Էլսան զգում է նրա մատների քնքուշ հպումն իր ծոծրակին:

Էլսան չի շրջվում: Ծոծրակին զգում է մոր հեռախոսի հպումը, որովհետև մայրն այն ձեռքից բաց չի թողնում: Ասես կիբորգ լինի. հեռախոսն էլ նրա մարմնական հյուսվածքներից է: Էլսան, հատուկ ի ցույց բոլորի, շարունակում է պտտել գլոբուսը: Տնօրենը նորից նստում է իր աթոռին ու առաջ թեքվում՝ փորձելով գլոբուսը հեռացնել Էլսայից: Ապա հույսով լի շրջվում է մայրիկի կողմը:

— Լավ, ուրեմն, հիմա Էլսայի հո՞րն ենք սպասում:

Տնօրենը շատ կուզենար, որ այս հանդիպմանը հայրն էլ ներկա լիներ, քանի որ կարծում էր, որ հայրերի հետ ընդհանուր առմամբ ավելի հեշտ է նման հարցեր քննարկել: Մայրիկն առանձնապես ոգևորված չէր դրանից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Էլսայի հայրը քաղաքից բացակայում է և, ցավոք, չի հասցնի. վաղը նոր վերադառնալու է,– զուսպ պատասխանում է նա:

Տնօրենը հուսախաբ է երևում:

— Դե, իհարկե, ես չեմ պատրաստվում խուճապի մատնել Ձեզ, մանավանդ Ձեր այս վիճակում…

Նա գլխով ցույց տվեց մայրիկի փորը: Երևում է, որ մայրիկին բավական ժամանակ էր պետք, որպեսզի զսպի իրեն ու չհարցնի, թե հատկապես ինչ էր նա ուզում դրանով ասել: Տնօրենը հազալով կոկորդը մաքրում է ու գլոբուսն Էլսայի ձգված մատներից ավելի է հեռացնում: Ակնհայտ է, որ ուզում էր մայրիկին հորդորել, որ մտածի երեխայի մասին: Մարդիկ անընդհատ հորդորում են մայրիկին մտածել երեխայի մասին, երբ նյարդայնանում են նրա բարկանալուց: «Մտածի՛ր երեխայի մասին»: Սովորաբար Էլսային են նկատի ունենում: Բայց հիմա խոսքը Կեսիկի մասին է:

Էլսան ձգում է ոտքն ու խփում աղբի զամբյուղին: Նրա ականջին է հասնում տնօրենի ու մայրիկի խոսակցությունը, սակայն ինքը չի լսում նրանց: Հոգու խորքում նա հույս ունի, որ տատիկը ցանկացած պահի կներխուժի՝ թափահարելով բռունցքները, ինչպես հին ֆիլմերում է՝ բռնցքամարտի մրցախաղի սկզբին: Նախորդ անգամ, երբ Էլսային կանչել էին տնօրենի մոտ, միայն մայրիկին ու հայրիկին էին կանչել, սակայն տատիկը, միևնույն է, եկել էր, որովհետև տատիկին զանգելու կարիք չկա:

Էլսան այն անգամն էլ, տնօրենի գրասեղանի առջև նստած, գլոբուսն էր պտտում: Տղան, որ կապտուկի հեղինակն էր, իր ծնողների հետ նույնպես այնտեղ էր: Տնօրենը շրջվել էր Էլսայի հոր կողմն ու ասել. «Դե, գիտեք, նրա արածն իրականում պարզապես տիպիկ տղայական չարաճճիություն է…»

Դրանից հետո նա ստիպված էր բավական երկար ժամանակ ծախսել՝ փորձելով բացատրել Էլսայի տատիկին, թե այդ դեպքում որն է «տիպիկ աղջկական չարաճճիությունը», քանի որ տատիկն ուզում էր անպայման պարզել: Տնօրենը փորձել էր հանգստացնել տատիկին և նախատել էր տղային՝ ասելով, որ փոքրոգություն է աղջիկներին խփելը, սակայն տատիկի անհանգստությունն ամենևին չէր պակասել դրանից:

«Աղջիկներին խփելուց հարցը փոքրոգությունը չէ,– մռնչացել էր տատիկը տնօրենի վրա: — Տղան, գրո՛ղը տանի, այնքան հիմար չէ, որ չհասկանա՝ ինչ է անում: Նա տխմար է ոչ թե նրա համար, որ աղջկա է խփում: Նա իրականում տխմար է, որովհետև ԽՓՈՒՄ է»:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ ժամանակ տղայի հայրը բորբոքվել էր ու սկսել գոռալ տատիկի վրա, որ իր տղային տխմար է անվանել, իսկ տատիկը ի պատասխան՝ ասել էր, որ տուն կգնա ու կսովորեցնի Էլսային «խփել տղաների անջատիչին», ու նրանց համար հաստատ սոսկալի զվարճալի կլինի աղջիկների հետ կռիվ անելը:

Տնօրենը բոլորին խնդրել էր մի քիչ խաղաղվել: Եվ բոլորը մի պահ լռել էին: Բայց դրանից հետո տնօրենը ցանկացել էր, որ տղան ու Էլսան իրար ձեռք սեղմեն ու իրարից ներողություն խնդրեն: Այդ խոսքի վրա տատիկը վեր էր թռել աթոռից ու տարակուսել էր, թե ինչու պիտի Էլսան ներողություն խնդրի: Ու տնօրենն ասել էր, որ Էլսան էլ մեղքի բաժին ունի, քանի որ փաստացի հրահրել է տղային, ու կարելի է հասկանալ տղային, որը չէր կարողացել տիրապետել իրեն: Եվ այդ ժամանակ տատիկը փորձել էր գլոբուսը նետել տնօրենի վրա, բայց մայրիկը հաջողեցրել էր վերջին պահին բռնել տատիկի թևից, ու գլոբուսը փոխել էր ուղղությունը, փոխարենը խփվել էր համակարգչին ու ջարդել էկրանը: «ԻՆՁ ՀՐԱՀՐԵՑԻՆ, ՈՒ ԵՍ ՉԿԱՐՈՂԱՑԱ ՏԻՐԱՊԵՏԵԼ ԻՆՁ»,– մռնչացել էր տատիկը տնօրենի վրա, երբ մայրիկը դուրս էր քաշում նրան միջանցք: Տատիկի հետ, իրոք, շատ դժվար է լեզու գտնել, երբ նրան հրահրում են: Կարելի է այդպես ասել:

Դրա համար էլ Էլսան պատառոտում է իր պահարանում գտած բոլոր գրությունները: Թղթիկների վրա գրված է, որ նա անճոռնի, զզվելիի մեկն է, որ նրանք իրեն սպանելու են: Էլսան թղթիկները մանր կտորների է վերածում ու լցնում դպրոցի աղբի տարբեր զամբյուղների մեջ: Դա խորը գթասրտության դրսևորում է, որ դրանք երբեք տատիկի ձեռքը չընկնեն: Դա գթասրտության դրսևորում է հենց գրությունների հեղինակների հանդեպ, որովհետև տատիկն ուղղակի կմորթի նրանց, եթե հանկարծ իմանա:

Էլսան թեթևակի բարձրանում է աթոռից, ճարպկորեն առաջ է ձգվում գրասեղանի վրայով ու նորից պտտում գլոբուսը: Տնօրենը հուսահատ է երևում: Էլսան գոհունակությամբ նորից ընկղմվում է իր տեղը:

— Տե՛ր իմ Աստված, Է՛լսա, այս ի՞նչ օրի է այտդ,– ճչում է մայրիկը, երբ նկատում է երեք ալ կարմիր քերծվածքները:

Էլսան ուսերն է թոթվում՝ առանց խոսքի: Մայրիկը շրջվում է տնօրենի կողմը: Նրա աչքերը զայրույթից բռնկվում են:

— Այս ի՞նչ է եղել այտին:

Տնօրենը տեղը չի գտնում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դե, հա էլի, փաստացի… պետք է մի քիչ խաղաղվել: Դե, այսինքն՝ պետք է երեխայի մասին մտածեք:

Վերջին բառերն արտասանելիս նա հայացքն ուղղում է ոչ թե Էլսայի, այլ մայրիկի կողմը: Էլսան ոտքը երկարացնում է ու նորից խփում աղբի զամբյուղին: Մայրիկը խորը շունչ է քաշում ու փակում է աչքերը: Հետո իրեն տիրապետելով՝ աղբի զամբյուղը տեղափոխում է գրասեղանին ավելի մոտ: Էլսան վիրավորված նրան է նայում, սուզվում է նստած տեղում այնքան խորը, որ չընկնելու համար պիտի թևատակերով պահի իրեն: Ձգում է ոտքերն ու ոտքի մատներով նորից համարյա դիպչում է թղթի զամբյուղի եզրին: Մայրիկը հոգոց է հանում: Էլսան ավելի բարձր է հառաչում: Տնօրենը նայում է նրանց, հետո՝ գրասեղանի վրայի գլոբուսին: Այն մի քիչ ավելի է մոտեցնում իրեն:

— Ուրեմն…,– վերջապես սկսում է նա՝ անվճռական ժպիտով մայրիկին նայելով:

— Մեր ընտանիքի համար շատ ծանր շաբաթ էր,– իսկույն ընդհատում է նրան մայրիկը, ու նրա ձայնն այնպես է հնչում, ասես ներողություն խնդրելիս լինի:

Էլսան ատում է այդ պահերը:

— Մենք լիովին կարեկցում ենք Ձեզ,– ասում է տնօրենն այնպես, ինչպես ապրումակցելուց գաղափար չունեցող մեկը:

— Ինքնին հասկանալի է, որ սա չպիտի կրկնվի,– ասում է մայրիկը:

Տնօրենը կրկին ժպտում է ու նյարդային նայում գլոբուսին:

— Սա, ցավոք սրտի, կոնֆլիկտի առաջին դեպքը չէ, ինչ Էլսան մեր դպրոցում է սովորում:

— Ոչ էլ վերջինն է,– պատասխանում է Էլսան:

— Է՛լսա,– բացականչում է մայրիկը:

— Մա՛մա,– բղավում է Էլսան երեք բացականչական նշանով:

Մայրիկը հոգոց է հանում: Էլսան ավելի բարձր է հառաչում: Տնօրենը հազալով կոկորդն է մաքրում ու գլոբուսը երկու ձեռքերի մեջ առած՝ ասում է.

— Մենք, այո՛, այսինքն՝ դպրոցի ամբողջ անձնակազմն ու ես, իհարկե, խորհրդակցելով դասղեկի հետ, մտածեցինք, որ գուցե Էլսային օգտակար լինի հոգեբանին այցելելը, որպեսզի կարողանա կառավարել իր ագրեսիան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հոգեբանի մո՞տ: Մի քիչ շատ չե՞ք ծայրահեղացնում,– տարակուսում է մայրիկը:

Տնօրենը ձեռքի ափերը հեռացնում է իրարից. կարծես ներողություն է խնդրում կամ պատրաստվում է երևակայական տամբուրինի հարվածել:

— Մենք ամենևին չենք մտածում, որ նրա հետ ինչ-որ բան այն չէ: Բացարձակապես: Բազմաթիվ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ կան, որոնց օգնում է հոգեբանի մոտ գնալը: Դրա մեջ ոչ մի ամոթ բան չկա:

Էլսան ձգում է ոտքի մատներն ու շուռ է տալիս աղբի զամբյուղը:

— Ի՞նքդ գնա հոգեբանի մոտ,– ասում է նա տնօրենին:

— Է՛լսա,– կտրուկ վրա է տալիս մայրիկը:

— ՄԱ՛ՄԱ,– ավելի կտրուկ հակադարձում է Էլսան:

Տնօրենը որոշում է գլոբուսն ապահովության համար դնել գետնին՝ իր աթոռի կողքին: Մայրիկը թեքվում է Էլսայի կողմը՝ ակնհայտորեն աներևակայելի ուժ գործադրելով, որ ձայնը չբարձրացնի:

— Եթե դու ուղղակի ասես տնօրենին և ինձ, թե երեխաներից ովքեր են կռվում հետդ, սիրելի՛ս, մենք կկարողանանք քեզ օգնել ու լուծել ձեր վեճը՝ փոխանակ ամեն օր նույն կերպ շարունակելու:

Էլսան շրթունքները սեղմած վեր է նայում: Այտի քերծվածքներն այլևս չեն արյունահոսում, բայց նեոնային լամպերի պես պայծառ են: Ասես մի պստլիկ տիեզերանավ ուր որ է վայրէջք կկատարի նրա դեմքին:

— Մատնիչներն ընկերներ չունեն,– կարճ պատասխանում է նա:

Մայրիկն աչքերը նրան է հառում:

— Բայց գրո՛... տե՛ր Աստ... Է՛լսա: Ո՞վ է քեզ նման բան ասել:

Էլսան ձեռքերը խաչում է կրծքին:

— Ինտերնետը:

— Է՛լսա, բարի՛ եղիր...,– սկսում է տնօրենն ու ծամածռում է դեմքը, որ Էլսայի կարծիքով՝ նրա ժպտալու ձևն էր:

— Ավելի լավ է՝ դո՛ւ բարի լինես,– ասում է Էլսան՝ առանց ժպիտի նշույլի:

Տնօրենը նայում է մայրիկին:

— Մենք, այսինքն՝ այո՛, ուսուցչական կազմը, կարծում ենք, որ Էլսան թերևս երբեմն, լավ կլինի, փորձի հեռանալ, երբ զգում է, որ տարաձայնությունները թեժանում են...

Էլսան չի սպասում մայրիկի պատասխանին, որովհետև գիտի՝ նա, միևնույն է, իրեն չի պաշտպանելու: Այնպես որ, նա վերցնում է իր ուսապարկը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հիմա գնո՞ւմ ենք, թե՞ ոչ:

Եվ այդ ժամանակ տնօրենն ասում է, որ Էլսան կարող է դուրս գալ միջանցք: Երևում է, որ տնօրենը խաղաղվել է: Էլսան դուրս է գալիս, իսկ մայրիկը մնում է ներսում, որ ներողություն խնդրի: Էլսան ատում է այդ պահը:

Ինքը փախավ: Հենց դրանից սկսվեց: Բայց չէր պատրաստվում տնօրենին ոչինչ պատմել: Ու ոչ ոքի չէր պատրաստվում պատմել, որովհետև ոչինչ չէր փոխվելու: Միայն ուզում էր շուտ տուն գնալ, որ երկուշաբթին վերջապես վերջանար: Ճաշից առաջ վերջին դասն էր, երբ իրենց «պայծառամիտ» ուսուցիչը որոշեց, որ Ծննդյան տոներին իրենց առաջադրանք է տալու «Իմ սիրած գրական հերոսը, որին կուզեմ նմանվել» թեմայով: Ամեն մեկը պիտի հագնվեր իր ընտրած հերոսի նման ու պատմեր նրա մասին առաջին դեմքով: Բոլորը ձեռք էին բարձրացնում ու հերթով իրենց հերոսին էին առաջարկում, իսկ ուսուցիչը հերոսի անունը գրում էր թղթիկի վրա և աշակերտին էր հանձնում: Էլսան, պարզ է, Հարրի Փոթերի մասին էր մտածել, բայց նրան ուրիշը վերցրեց: Այնպես որ, երբ իր հերթը հասավ, նա ընտրեց Սարդ-մարդուն: Եվ այդ ժամանակ իր հետևում կանգնած տղաներից մեկը նեղացավ, որովհետև ինքն էր ուզում վերցնել: Ու կռիվը պատրաստ էր:

— Դու չես կարող Սարդ-մարդ լինել,– բղավեց տղան:

Իսկ Էլսան ասաց.

— Ափսոս, բայց արդեն դարձա:

— Քե՛զ ափսոսիր:

Ու Էլսան փնչացրեց.

— Հա, բա ո՞նց, sure (դա անգլերենով նրա սիրած բառն էր):

Տղան բղավեց, որ Էլսան չի կարող Սարդ-մարդ լինել, քանի որ միայն տղաները կարող են Սարդ-մարդ լինել: Այդ ժամանակ Էլսան ասաց, որ նա էլ, թե ուզում է, թող աղջիկ Սարդ-մարդը լինի: Տղան էլ հրեց Էլսային ջեռուցման մարտկոցի վրա: Իսկ Էլսան նրան գրքով խփեց և մինչև հիմա կարծում է, որ նա պիտի միայն շնորհակալ լինի դրա համար, որովհետև այդպիսով վերջապես կյանքում մոտիկից առնչվեց գրքի հետ: Բայց իսկույն մոտ վազեց ուսուցիչն ու նրանց կանգնեցրեց՝ ասելով, որ ոչ մեկն էլ Սարդ-մարդ չի լինելու, որովհետև Սարդ-մարդը ֆիլմի կերպար է, ոչ թե գրական հերոս: Դրանից Էլսան թերևս մի փոքր անհամաչափ բորբոքվեց ու հարցրեց ուսուցչին, թե չի՞ լսել արդյոք «Մարվել» անունով հրատարակ-

թվայնացրել է 1915.info կայքը

չության մասին: Եվ պարզվեց, որ չի լսել: Ապա Էլսան ցնցված բղավեց. «ՈՒ ՔԵԶ ԹՈՒՅԼ ԵՆ ՏԱԼԻՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԱ՞Ս ՏԱԼ»: Իսկ հետո դասի վերջում պիտի մնար ուսուցչի հետ բավական երկար «զրուցելու», չնայած խոսողը միայն ուսուցիչն էր:

Էլսան գիտի, որ ինքն ուրիշ է: Գիտի, որ դրա համար էլ ընկերներ չունի: Բայց պատճառն այդ չէ, որ մյուս երեխաները նրան ատում են. դպրոցում տարբերվող երեխաներ շատ կան: Առնվազն երկու-երեք տարբերվող երեխա կա ամեն դասարանում: Բայց Էլսան չի հանձնվում: Նորմալ երեխաները նրան դրա համար են ատում: Կարծես նրանց թվում է, թե բոլոր տարբերվող երեխաները հեղափոխություն կսկսեն, եթե տեսնեն, որ տարբերվող երեխա կա, որը չի հանձնվում: Դրա համար նրանք պիտի այնքան հետապնդեն ու ծեծեն Էլսային, մինչև որ նա տեղի տա, մինչև որ նա այլևս իրեն գերհերոս չհամարի:

Տղան ու էլի մի քանիսը սպասում էին, որ նա դուրս գա: Անտեսանելիությունը չգործեց, որովհետև Էլսան կատաղած էր: Այնպես որ, նա ձգեց ուսապարկի գոտիները, որպեսզի դրանք փոքրիկ կոալայի պես ամուր գրկեն մեջքն ու վազեց: Ինքը վազելուց լավ է: Տարբերվող երեխաների պես: Լսեց, որ տղաներից մեկը գոռաց՝ բռնե՛ք: Լսում էր նրանց մոտեցող ոտնաձայները սառած ասֆալտի վրա և նրանց շնչակտուր հևոցը: Նա վազում էր այնքան արագ, որ ծնկները հասնում էին կողոսկրերին, ու եթե ուսապարկը չլիներ, ինքը հաստատ կհասցներ ցանկապատի վրայով ցատկել փողոց, ու նրանք իրեն չէին բռնի: Բայց տղաներից մեկը ճանկեց ուսապարկը: Ինքը, իհարկե, կարող էր ազատվել ուսապարկից ու փախչել նրանցից, բայց ուսապարկի մեջ տատիկի նամակն էր Հրեշին: Այնպես որ, շրջվեց ու սկսեց կռվել: Փորձեց, ինչպես միշտ, պաշտպանել դեմքը, որովհետև չէր ուզում, որ մայրիկը տխրեր կապտուկներից: Բայց դեմքն ու ուսապարկը միաժամանակ պաշտպանել չստացվեց: Ու եղավ այն, ինչ եղավ: «Մարդ ինքն է իր կռիվն ընտրում, եթե կարող է, բայց եթե կռիվն ինքն է քեզ ընտրել, ուրեմն ինչքան ուժ ունես, հասցրո՛ւ էդ գրողի տարածի «անջատիչին»,– սովորաբար ասում էր տատիկն Էլսային: Էլսան այդպես էլ արեց: Նա կռվելուց լավ է, չնայած ատում է բռնությունը: Մարդ սկսում է լավ կռվել, երբ հաճախ է ծեծ ուտում: Դրա համար էլ հիմա նրանք միշտ շատով են հարձակվում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրիկը դուրս է գալիս տնօրենի սենյակից ամենաքիչը հեքիաթային տասը հավերժություն անց, ու նրանք քայլում են դպրոցի ամայի բակով՝ առանց իրար որևէ բան ասելու: Էլսան նստում է Kia-ի հետևի նստարանին՝ ամուր գրկած ուսապարկը: Մայրիկը դժբախտ է երևում:

— Լա՛վ էլի, Է՛լսա…

— Ո՛ւֆ: Ես չէի սկսել: Ինքն ասաց, որ աղջիկները չեն կարող Սարդ-մարդ լինել,– ինքն իրեն պաշտպանելով՝ ասում է Էլսան:

— Լա՛վ, բայց ինչո՞ւ ես կռվում,– ընկճված հարցնում է մայրիկը:

— Էդպե՛ս,– պատասխանում է Էլսան:

— Դու փոքրիկ բալիկ չես, Է՛լսա: Դու միշտ ուզում ես՝ քեզ մեծի տեղ դնեմ: Ուրեմն վե՛րջ տուր այդ երեխայական պատասխաններին: Ինչո՞ւ ես կռվում:

Էլսան քչփորում էր դռան արանքի ռետինի շերտը:

— Որովհետև փախչելուց հոգնել եմ:

Մայրիկը փորձում է ձգվել դեպի հետևի նստարանն ու նրբորեն շոյել նրա այտի քերծվածքը, բայց Էլսան կտրուկ հետ է քաշում գլուխը: Մայրիկը հոգոց է հանում:

— Արդեն չգիտեմ՝ ինչ անեմ,– ասում է նա՝ հազիվ արցունքները զսպելով:

— Ոչ մի բան էլ մի՛ արա,– քրթմնջում է Էլսան:

Մայրիկը, հետ վարելով, Kia-ն դուրս է բերում կայանատեղիից: Ու նրանք ընթանում են այնպիսի լուռ հավերժության մեջ, ինչպիսին միայն մայրերի ու դուստրերի միջև կարող է ստեղծվել:

— Երևի ամեն դեպքում գնանք հոգեբանի մոտ,– վերջապես ասում է մայրիկը:

Էլսան ուսերն է թոթվում:

— Whatever:

Դա անգլերենով նրա երկրորդ սիրած բառն է: Մայրիկը չի հարցնում, թե որտեղից է սովորել:

— Ես… Է՛լսա, սիրելի՛ս, ես գիտեմ՝ այն, ինչ պատահեց տատիկին, սարսափելի ծանր է ազդել վրադ: Մահը բոլորի համար ծանր բան է…

— Դու ոչինչ չգիտես,– խոսքը կտրում է Էլսան՝ այնքան ուժեղ քաշելով ռետինե շերտը, որ բաց թողնելուց հետո այն խփվում է ապակուն:

Մայրիկը կուլ է տալիս կոկորդին կանգնած գունդը:

— Ես էլ եմ տխրում, Է՛լսա: Նա նաև իմ մայրն էր, միայն քո տատիկը չէր:

Էլսան գլուխը սառը զայրույթով շրջում է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու ատում էիր նրան: Էնպես որ, սուտ մի՛ խոսիր:

— Ես չէի ատում նրան: Նա իմ մայրն էր:

— Դուք անդադար վիճում էիք: Հաստատ գիտեմ, որ դու շատ էլ գոհ ես, որ տատիկը մահացավ:

Էլսան կուզենար, որ ասած չլիներ վերջին բառերը: Բայց շատ ուշ էր: Հավերժական լռություն էր տիրել, ու ինքն անվերջ քչփորում էր ռետինե շերտը, մինչև այն դուրս եկավ դռան արանքից: Մայրիկը տեսնում է, բայց ոչինչ չի ասում: Երբ նրանք կանգ են առնում կարմիր լույսի տակ, նա ձեռքերով փակում է աչքերն ու հուսահատ տարուբերում գլուխը:

— Ես իսկապես փորձում եմ, Է՛լսա: Ես իսկապես փորձում եմ: Ես գիտեմ, որ վատ մայր եմ ու քիչ եմ լինում տանը, բայց ես, իրոք, փորձում եմ…

Էլսան չի պատասխանում: Մայրիկը տրորում է քունքերը:

— Գուցե, ամեն դեպքում, փորձենք խոսել հոգեբանի հետ:

— Դո՛ւ խոսիր հոգեբանի հետ,– ասում է Էլսան:

— Հա՛, երևի պետք է խոսեմ:

— Հա՛, երևի պետք է խոսես:

— Ինչո՞ւ ես էսքան չար: Սիրելի՛ս, ես ահավոր տխուր եմ, որ տատիկը մահացավ, բայց մենք …

— Չէ՛, իսկի էլ չե՛ս:

Ու այդ ժամանակ պատահեց մի բան, որ երբեք, երբեք չէր պատահել: Մայրիկը կորցրեց ինքնատիրապետումն ու գոռաց.

— ԱՅՈ՛, ԵՍ ԻՐՈՔ ԱՀԱՎՈ՛Ր ՏԽՈՒՐ ԵՄ, ԳՐՈ՛ՂԸ ՏԱՆԻ: ՓՈՐՁԻ՛Ր ՀԱՍԿԱՆԱԼ, ՈՐ ՔԵԶՆԻՑ ԲԱՑԻ ՈՒՐԻՇՆԵՐՆ ԷԼ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԽՐԵԼ, ՈՒ ՀԵՐԻ՛Ք Է ՔԵԶ ԽՈՋԱՎԱՐԻ ՊԱՀԵՍ:

Մայրիկն ու Էլսան անթարթ իրար են նայում: Մայրիկն ափը դնում է բերանին:

— Է՛լսա… ես, սիրելի՛ս…

Էլսան օրորում է գլուխն ու դռան արանքից ամբողջությամբ պոկում է ռետինի շերտը: Նա զգում է, որ հաղթել է: Էլսան միշտ հաղթում է, երբ մայրիկը կորցնում է ինքնատիրապետումը:

— Վե՛րջ տուր: Լավ չես անում, որ էդպես գոռգոռում ես,– մռթմռթում է նա: Իսկ հետո, առանց մոր վրա գեթ մի հայացք գցելու, ավելացնում,– մտածի՛ր երեխայի մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

7

ԿԱՇԻՆ

Կարող ես տարիներ ի վեր սիրել տատիկիդ՝ փաստացի ոչինչ չիմանալով նրա մասին:

Երեքշաբթի առաջին անգամ Էլսան հանդիպում է Հրեշին: Դպրոցում երեքշաբթի օրերին ավելի լավ է: Այսօր Էլսան ընդամենը մի կապտուկ ստացավ, իսկ կապտուկները կարելի է բացատրել ֆուտբոլով:

Նա նստած է Audi-ի մեջ: Այն հայրիկի ավտոմեքենան է, որը բացարձակ նման չէ Renault-ին: Սովորաբար հայրիկն իրեն դպրոցից տանում է ամեն երկրորդ ուրբաթ օրը, ու Էլսան մնում է հայրիկի, Լիզետի ու նրա երեխայի հետ: Մյուս բոլոր օրերին սովորաբար տատիկն էր վերցնում, իսկ հիմա ստիպված մայրիկն է ստանձնել այդ պարտականությունը: Բայց այսօր մայրիկն ու Յեորգը բժշկի են գնում, որ ստուգեն, թե ինչպես է Կեսիկը: Այնպես որ, այսօր հայրիկն է եկել, չնայած երեքշաբթի է:

Տատիկը միշտ ժամանակին էր գալիս ու սպասում դարպասի մոտ: Հայրիկն ուշացած է գալիս ու Audi-ի մեջ նստած՝ սպասում է կայանատեղիում:

— Էս ի՞նչ է եղել աչքդ,– անվստահ հարցնում է հայրիկը:

Նա երեկ է եկել Իսպանիայից, որովհետև այնտեղ էր Լիզետի ու նրա երեխայի հետ, բայց բոլորովին չի սևացել, որովհետև չգիտի՝ ինչպես են արևահարվում:

— Ֆուտբոլ էինք խաղում,– ասում է Էլսան:

Տատիկի դեպքում ֆուտբոլի մասին պատմությունը չէր անցնի: Բայց հայրիկը տատիկը չէ: Նա պարզապես տարակուսած գլխով է անում ու խնդրում հանգիստ նստել և կապել ամրագոտին: Նա միշտ է այդպես

թվայնացրել է 1915.info կայքը

անում: Տարակուսած գլխով է անում: Հայրիկը միշտ է անվճռական: Էլսան պարզել էր, որ մայրիկը կատարելապաշտ է, հայրիկը՝ բծախնդիր, դրա համար էլ նրանց ամուսնությունը երկար չդիմացավ, որովհետև կատարելապաշտն ու բծախնդիրը բոլորովին տարբեր բաներ են: Երբ մայրիկն ու հայրիկը տանը մաքրություն էին անում, մայրիկը, ըստ որպեների, անելիքների ժամանակացույց էր կազմում Excel ծրագրով, իսկ հայրիկը կարող էր միայն 2.5 ժամ տրամադրել սրճեփը կրային նստվածքից մաքրելուն: «Այսպիսի մարդու կողքին փաստացի կյանքդ կազմակերպել չես կարող»,– ասում էր մայրիկը: Դպրոցում ուսուցիչները միշտ ասում են Էլսային, որ նա չի կարողանում կենտրոնանալ, ինչը տարօրինակ է Էլսայի կարծիքով, որովհետև հայրիկի խնդիրն էլ այն է, որ նա ապակենտրոնանալ չի կարողանում:

— Դե՛, ինչո՞վ կուզենայիր զբաղվել,– ասում է հայրիկը՝ անվճռականորեն ձեռքերը ղեկին դնելով:

Նա հաճախ է այդպես անում: Հարցնում է, թե Էլսան ինչ է ուզում անել, որովհետև անձամբ շատ հազվադեպ է մի բան ուզում անել: Իսկ երեքշաբթի օրով Էլսային տանելը շատ անսպասելի էր հայրիկի համար, որովհետև հայրիկը հեշտությամբ չի հարմարվում անսպասելի փոխվող ծրագրերին: Դրա համար էլ Էլսան միայն մեկումեջ է հանգստյան օրերին նրա մոտ մնում: Երբ հայրիկը հանդիպեց Լիզետին, և նա երեխայի հետ տեղափոխվեց հայրիկի մոտ, հայրիկն ասաց, որ Էլսայի համար չափազանց «խառնաշփոթ» կլինի իրենց տանը: Երբ նրա ասածը հասել էր տատիկի ականջին, տատիկը զանգել ու մեկ որպեի ընթացքում ամենաքիչը տասն անգամ «դատարկագլուխ» էր անվանել նրան, որ «դատարկագլուխ» բառի ռեկորդ էր նույնիսկ տատիկի համար: Իսկ երբ հեռախոսն անջատել էր, շրջվել էր դեպի Էլսան ու պոռթկացել. «Լիզե՛տ: Ի՞նչ ապուշ անուն է, չէ՞»: Էլսան, անշուշտ, գիտեր, որ նա ոչ մի վատ բան նկատի չուներ, որ նույնիսկ սիրում էր Լիզետին, ու որ Լիզետը նույն գերունակությունից ուներ, ինչ Յեորգը: Բայց տատիկը հավատարիմ մարդ էր, ու նրա հետ կարելի էր կռվի գնալ: Էլսան դրա համար էլ սիրում էր նրան: Այդ օրը նրանք Ben & Jerry's պաղպաղակ կերան: Էլսան երեքին էլ կարոտում է: Բենին էլ, տատիկին ու Ջերրիին էլ:

Հայրիկը միշտ ուշանում է, երբ պիտի Էլսային դպրոցից տանի: Տատիկը երբեք չէր ուշանում: Էլսան փորձում է հասկանալ «հեգնանք» բառի ճշգրիտ նշանակությունը ու վստահ է, որ այն տեղին է տվյալ պահի համար, երբ հայրիկը երբեք ոչ մի տեղից չէր ուշանում՝ բացի Էլսային

թվայնացրել է 1915.info կայքը

դպրոցից վերցնելիս, իսկ տատիկը միշտ ամեն տեղից ուշանում էր՝ բացի դպրոցից: Գուցե տատիկը գիտեր, որ շուտով ութ տարեկան դարձող Էլսայի համար աշխարհը լի է հակառակորդներով:

Հայրիկը նորից մատները դնում է ղեկին:

— Ո՞ւր կուզես՝ գնանք:

Էլսան զարմանում է, քանի որ իսկապես թվում է, թե առաջարկում է ինչ-որ տեղ գնալ: Հայրիկը տեղում անհանգիստ շրջվում է:

— Մտածում էի՝ գուցե դու ինչ-որ բան ես ուզում անել:

Էլսան գիտի, որ նա հենց այնպես է ասում՝ քաղաքավարությունից ելնելով, որովհետև նա չի սիրում ինչ-որ բաներ անել. հայրիկը գործնական մարդ չէ: Էլսան նայում է նրան, հետո՝ ղեկին:

— Ես կարծում եմ, որ կուզենայի պարզապես տուն գնալ,– ասում է Էլսան:

Հայրիկը գլխով է անում ու միաժամանակ և՛ հիասթափված, և՛ թեթևացած է երևում. նման բանի ամբողջ աշխարհում միայն հայրիկն է ընդունակ: Ապա նա Էլսային տուն է տանում, որովհետև հայրիկը Էլսային երբեք «չէ» չի ասում, չնայած Էլսան երբեմն կուզենար, որ ասեր:

— Audi-դ շատ լավն է,– ասում է Էլսան, երբ նրանք արդեն անցել են ճանապարհի կեսը, ու նրանցից ոչ մեկն ուրիշ ոչինչ չի ասել:

Էլսան շոյում է Audi-ի պահոցիկը այնպես, ինչպես կատվին կշոյեր: Նոր մեքենաներից կաշվի նուրբ հոտ է գալիս՝ ի տարբերություն տատիկի բնակարանի բազմոցի հին, ճաքճքած կաշվի հոտի: Էլսային երկուսն էլ դուր են գալիս, չնայած նա կաշի չի սիրում, քանի որ իր համար նախընտրելի է, որ այն կենդանիների վրա լինի, ոչ թե մեքենաների նստատեղերի: Բարդ հարց է: Ու մասամբ կեղծավորություն կա մեջը: Բայց Էլսան աշխատում է այդ ուղղությամբ:

— Հա՛, Audi առնելուց գիտես՝ ինչ ես ստանում,– գլխով է անում հայրիկը:

Նրա նախորդ մեքենան էլ էր Audi: Հայրիկը սիրում է, երբ գիտի՝ ինչ է ստանում: Անցած տարի հայրիկի ու Լիզետի տան մոտի մթերային խանութը ձևափոխեցին: Դրանից հետո Էլսան ստիպված էր հոր հետ հեռուստացույցի գովազդներով իր տեսած թեստերը կիրառել, որպեսզի համոզվեր, որ հայրիկը կաթված չի ստացել:

Երբ հասնում են տուն, հայրիկը ճանապարհում է նրան մինչև մուտք: Բրիտ-Մարին կուչ եկած կանգնած էր մթության մեջ՝ հենց մուտքի դիմաց,

թվայնացրել է 1915.info կայքը

ասես տունը հսկող փոքրիկ գազազած տան ոգի լիներ: Էլսայի մտքով անցնում է, որ Բրիտ-Մարիին հանդիպելը լավ նշան չէ: «Ոնց որ հարկայի-նից նամակ լինի էդ կնիկը»,– սովորաբար ասում էր տատիկը: Հայրիկն էլ է կարծես նույն մտքին, որովհետև Բրիտ-Մարին այն քիչ մարդկանցից էր, որի վերաբերյալ հայրիկն ու տատիկն իրար հետ համակարծիք էին:

— Ողջո՛ւյն,– երկմտանքով բարևում է հայրիկը:

— Ողջո՛ւյն,– ասում է Էլսան:

— Այո՛, ողջույն,– պատասխանում է Բրիտ-Մարին՝ մթի միջից հայտնվելով ու երկու անգամ խորը շնչելով, ասես անտեսանելի ծխախոտի ծուխն էր ներս քաշում:

Հետո նա զգաստանում է ու սիրալիր ժպտում: Ձեռքին խաչբառերի թերթ է: Բրիտ-Մարին շատ է սիրում խաչբառ լուծել, որովհետև դրանք հստակ կանոններ ունեն: Էլսան տեսնում է, որ նա տառերը մատիտով է գրել: Տատիկն ասում էր, որ Բրիտ-Մարին կանանց այն տեսակին է պատկանում, որ պիտի մի երկու գավաթ գինի խմեն, որ իրենց կորցնեն ու խաչբառը գրիչով լուծեն:

Բրիտ-Մարին բարկացած շարժում է անում Էլսայի ուղղությամբ:

— Չգիտե՞ք՝ սա ումն է,– ասում է նա՝ ցույց տալով մանկասայլակը, որ կապված է բազրիքի ճաղերին՝ տեղեկատվական տախտակի տակ:

Էլսան նոր է նկատում այն: Եվ, իսկապես, տարօրինակ է, քանի որ շենքում ուրիշ փոքրիկ չկա, բացի Կեսիկից, որ դեռ ամենուր մայրիկի հետ է տեղաշարժվում: Բրիտ-Մարին կարծես ամենևին մտադիր չէ իրավիճակի փիլիսոփայությունը խորությամբ գնահատել:

— Մանկասայլակները բարձրահարկ շենքերում արգելված են: Հրդեհավտանգ են,– հայտարարում է նա՝ մի ձեռքը վճռականորեն մյուսի մեջ դնելով, այնպես որ խաչբառի թերթը ցցվում է առանձնապես երկյուղածություն չներշնչող թրի պես:

— Հա՛ էլի, գրություն էլ կա,– գլխով է անում Էլսան ու ցույց տալիս անմիջապես մանկասայլակի վերևում՝ պատին ամրացված կոկիկ գրությունը. «Մանկասայլակներ չկանգնեցնել: Հրդեհավտանգ է»:

— Հենց նույնը նկատի ունեմ,– պատասխանում է Բրիտ-Մարին՝ մի փոքր բարձրացնելով ձայնը, բայց սիրալիր տոնով:

— Չեմ հասկանում,– ասում է հայրիկը՝ ասես իրոք չհասկանալով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինձ, անշուշտ, հետաքրքրում է՝ դո՞ւք եք կախել այս գրությունը: Ինձ դա՛ է հետաքրքիր,– ասում է Բրիտ-Մարին՝ մի փոքր առաջ գալով, ապա մի փոքր հետ գնալով. ասես այդպիսով նշում էր իր հարցի լրջությունը:

— Սխալ կա՞ գրության մեջ,– հարցնում է Էլսան:

Բրիտ-Մարին երկու անգամ խորը շնչում է:

— Ինքնին հասկանալի է, որ ո՛չ: Սակայն մեր համատիրությունում ընդունված չէ, որ ով ինչ գրություն ուզի և ուր ուզի, փակցնի՝ առանց նախօրոք մյուս բնակիչների հետ համաձայնեցնելու:

— Բայց սա դեռ համատիրություն չէ, այդպես չէ՞,– հարցնում է Էլսան:

— Այո՛, բայց շուտով կդառնա,– փռթկացնում է Բրիտ-Մարին՝ «շուտով» բառն ասելիս թեթևակի թքելով:

Հետո տիրապետում է իրեն ու կրկին սիրալիր ժպտում Էլսային:

— Ես այս համատիրության տեղեկատվական պատասխանատուն եմ: Մեզ մոտ գրություններ չեն փակցնում՝ առանց համատիրության տեղեկատվական պատասխանատուին հարցնելու:

Նրան ընդհատում է շատ բարձր շան հաչոցը, որից զրնգում է մուտքի դռան ապակին: Բրիտ-Մարին ու հայրիկը վեր են թռչում: Էլսան անհանգիստ մի ոտքից մյուսին է հենվում: Մայրիկը երեկ ասում էր Յեորգին, որ Բրիտ-Մարին ոստիկանություն է զանգել, որ Բարեկամին քնեցնեն: Նա կարծես հիմա լսել էր Բրիտ-Մարիի ձայնը ու տատիկի ասածի պես չէր կարողանում մի վայրկյան լուռ մնալ, երբ մոտակայքում զգում էր Բրիտ-Մարիի ներկայությունը: Բրիտ-Մարիի աչքերը փոքրանում են, ու նրա լարված սիրալիր ժպիտը դառնում է ավելի լարված, քան սիրալիր:

— Ես ոստիկանություն եմ զանգել այս այլանդակ կռվաշան համար,– տեղեկացնում է նա հայրիկին:

Հայրիկը մի քիչ նյարդայնացած է երևում, որովհետև նա կռվաշներ չի սիրում: Էլսան հազում է ու փորձում զրույցի թեման փոխել:

— Գուցե դու տանը չէիր այդ ժամանակ,– ասում է նա՝ պատի գրությունը ցույց տալով:

Ժամանակավորապես հաջողվում է թեման փոխել: Բրիտ-Մարին բոլորովին մոռանում է, որ սրտնեղել է կռվաշան համար, երբ նորից սրտնեղում է գրության պատճառով: Բրիտ-Մարիի համար ամենակարևորն այն է, որ անդադար սրտնեղելու պատճառ ունենա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ամեն դեպքում, հո թաքուն չե՞ն ֆռֆռում ու գրություններ փակցնում, քանի դեռ մարդիկ տանը չեն, այս ի՞նչ գանգստերական հնարքներ են,– պատասխանում է Բրիտ-Մարին այնպես, որ Էլսայի համար բավական դժվար է որոշել՝ հարցնո՞ւմ է նա, թե՞ հաստատում:

Էլսան նորից գլխով է անում: Նա մտածում է, որ թերևս պետք է ասել Բրիտ-Մարիին, որ նա մի գրություն փակցնի, որ եթե մյուս անգամ ինչ-որ մեկն ուզենա գրություն փակցնել, պետք է նախ գրությամբ այդ մասին տեղեկացնի հարևաններին: Էլսան մտածում է, որ դա, իրոք, ծաղր կլինի: Ու նայելով Բրիտ-Մարիին՝ մտածում է, որ այդ դեպքում նա հաստատ դռնեդուռ կընկնի՝ արգելող ստորագրություններ հավաքելու:

Այդ պահին կես աստիճանավանդակ վերևից նորից հաչոց է լսվում: Բրիտ-Մարին սեղմում է շրթունքները:

— Ես զանգե՛լ եմ ոստիկանություն, այո՛: Ու բնականաբար՝ ո՛չ մի արդյունք: Ասում են՝ պիտի սպասենք մինչև վաղը, գուցե տերը հայտնվի:

Հայրիկը ոչինչ չի պատասխանում, ու Բրիտ-Մարին նրա լռությունն ակնհայտորեն ընկալում է որպես իր ապրումների մասին լսելու մեծագույն ցանկություն:

— Քենթը մի քանի անգամ այդ դռան զանգը տվել է, բայց այնտեղ կարծես մարդ չի ապրում: Ոնց որ այդ կատաղի գազանը մենակ ապրելիս լինի: Պատկերացնո՞ւմ ես,– շնչակտուր վրա է բերում նա այնպիսի տեսքով, ասես վերջում պիտի գոչեր՝ խայտառակությո՛ւն:

Հայրիկը շփոթված թեթևակի ժպտում է, որովհետև բնակարանում մենակ ապրող կռվաշան գաղափարը հայրիկին շփոթեցրել է:

— Խայտառակությո՛ւն,– բացականչում է Բրիտ-Մարին:

Էլսան շունչը պահած սպասում է, մինչև հաչոցը կտրվում է: Ասես Բարեկամը վերջապես խելքի է գալիս: Հայրիկի հետևում դուռը բացվում է, ու սև կիսաշրջազգեստով կինն է մտնում: Նրա կրունկները թնդյունով հարվածում են հատակին, և նա բարձրաձայն խոսում է՝ սպիտակ լարն ականջին:

— Ողջո՛ւյն,– ասում է Էլսան, որպեսզի շեղի Բրիտ-Մարիի ուշադրությունը պատահական հաչոցից:

— Ողջո՛ւյն ,– ասում է հայրիկը՝ քաղաքավարությունից ելնելով:

— Այո՛, ողջույն-ողջույն,– ասում է Բրիտ-Մարին, ասես կինը հանցագործ գրությունների պոտենցիալ փակցնող լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Սև կիսաշրջազգեստով կինը չի պատասխանում: Նա, ձայնն ավելի բարձրացնելով, շարունակում է խոսել՝ զայրացկոտ հայացք գցելով նրանց վրա, ու բարձրանում է աստիճաններով: Նրանից հետո աստիճանավանդակում երկար ու լարված լռություն է տիրում, որին Էլսայի հայրիկը երկար չի դիմանում: Լարված լռությունը հայրիկի կրիպտոնիտն է, կարելի է ասել:

— Հելվետիկա,– նյարդայնացած հազալով՝ մի կերպ արտաբերում է նա:

— Հը՞,– ասում է Բրիտ-Մարին՝ բերանն ավելի սեղմելով:

— Հելվետիկա: Այսինքն՝ տառատեսակ,– վախվորած ասում է հայրիկը՝ գլխով ցույց տալով պատի գրությունը:

Բրիտ-Մարին նայում է գրությանը: Հետո նայում է հայրիկին:

— Կարգին տառատեսակ է,– քրթմնջում է հայրիկը:

Նման մանրուքները հայրիկի համար շատ կարևոր են: Ասենք՝ տառատեսակը: Մի անգամ, երբ մայրիկը ծնողական ժողովի էր դպրոցում, ու հայրիկը վերջին վայրկյանին զանգել ու ասել էր, թե չի կարող գալ, քանի որ աշխատանքի տեղում անսպասելի գործ է բացվել, մայրիկը նրան գրանցել էր որպես կամավորական, որ դպրոցի տոնավաճառի համար պաստառներ նկարի որպես պատիժ: Երբ հայրիկն իմացել էր, շատ էր շփոթվել: Հետո երեք շաբաթ տևեց, մինչև նա որոշեց, թե որ տառատեսակով պիտի գրվեին պաստառները: Երբ վերջապես դրանք տարավ դպրոց, ուսուցիչը հրաժարվեց դրանք պատին կախել, քանի որ տոնավաճառն արդեն անցել էր: Էլսայի հայրիկը կարծես չէր հասկացել, թե ինչ կապ ուներ դա:

Կարծես Բրիտ-Մարին էլ առանձնապես չի հասկանում, թե ինչ կապ ունի հիմա Հելվետիկան այս իրավիճակի հետ: Հայրիկը, հայացքը գետնին հառած, նորից հազում է:

— Մո՞տդ են բանալիները,– հարցնում է նա Էլսային:

Էլսան գլխով է անում: Նրանք արագ գրկախառնվում են: Հայրիկը, դռներից դուրս գալով, անհետանում է, իսկ Էլսան աստիճաններով վերև է վազում, նախքան Բրիտ-Մարին կհասցներ նորից ինչ-որ բան ասել նրան:

Բարեկամի բնակարանի մոտ նա մի պահ կանգ է առնում, հետ նայում՝ համոզվելու համար, որ Բրիտ-Մարին չի հետևում իրեն, հետո բացում է փոստարկղն ու շշնջում. «Խնդրում եմ, սո՛ւս մնա»: Ու համոզված է, որ նա հասկանում է: Պարզապես գոնե կատարի իր խնդրանքը:

Հետո բարձրանում է վերև՝ բնակարանի բանալիները ձեռքին, բայց չի գնում մայրիկի ու Յեորգի տուն: Փոխարենը բացում է տատիկի դուռն ու

թվայնացրել է 1915.info կայքը

վազելով մտնում մեծ պահարանի մեջ: Նախասրահում իրերով լի տուփեր են դրված, խոհանոցում՝ ջրով լի դույլ, բայց Էլսան փորձում է ուշադրություն չդարձնել դրանց, թեև չի կարողանում: Պահարանի մթությունը պարուրում է նրան, այնպես որ ոչ ոք չի իմանա, որ լաց է եղել:

Պահարանն առաջ կախարդական էր: Էլսան սովորաբար ուղիղ պառկում էր մեջը և ոտքերով ու ձեռքերով ձգվելով՝ հասնում մի պատից մյուսին: Ինչքան մեծանում էր, միևնույն է, պահարանը միշտ ճիշտ իր չափսերին էր համապատասխանում: Տատիկը, իհարկե, սովորաբար պնդում էր, թե դա ընդամենը երևակայության արդյունք է, որովհետև, գրո՛ղը տանի, պահարանը միշտ նույն չափսերի է եղել, բայց Էլսան չափել է, այնպես որ, գիտի: Նա ուղիղ պառկում է, դիպչում է պատերին: Մի քանի ամսից նա այլևս կարիք չունի ձգվելու: Մի տարուց ընդհանրապես չի կարողանալու ուղիղ պառկել, որովհետև այլևս ոչինչ կախարդական չէ:

Նա լսում է Մոդի ու Լենարտի խուլ ձայները բնակարանի խորքից: Նրան հասնում է սուրճի բույրը, բայց Լենարտն այն անվանում է «մեծահասակների ըմպելիք», այնպես որ, մինչև Էլսան հյուրասենյակում բիշոն ֆրիզեի ոտնաթաթերի, իսկ քիչ անց տատիկի սուրճի սեղանի տակից եկող նրա մշմշոցի ձայնը կլսեր, հասկանում է, որ Սամանթան նույնպես մոտակայքում է:

Մոդն ու Լենարտը, որ մաքրելու են տատիկի բնակարանը, սկսել են փաթեթավորել նրա իրերը: Մայրիկն է խնդրել, որ օգնեն, ու դրա համար Էլսան ատում է մայրիկին: Բոլորին է ատում:

Շուտով լսում է նաև Բրիտ-Մարիի ձայնը: Կարծես ընկած լինի Մոդի ու Լենարտի հետևից: Նա կարգին զայրացած է: Անընդհատ խոսել է ուզում այն անամոթի մասին, որ հանդգնել է գրություն փակցնել աստիճանավանդակի պատին, և նրա մասին, ով համարձակվել է մանկասայլակը կապել անմիջապես գրության տակ: Երկուսն էլ վերին աստիճանի անհասկանալի է անձամբ իր՝ Բրիտ-Մարիի համար, ինչն էլ ամենից շատ է զայրացնում իրեն: Սակայն նա, համենայնդեպս, գոնե Բարեկամին չի հիշում:

Էլսան մի ժամ պառկած էր պահարանի մեջ, երբ համախտանիշով տղան ներս է սողոսկում: Դռան արանքից Էլսան տեսնում է, թե ինչպես է նրա մայրիկը տունը մաքրում, իսկ Մոդը զգուշորեն ման է գալիս հետևից ու բարձրացնում նրա շուրջն ընկած առարկաները: Բրիտ-Մարին փորձում է որևէ մեկին գտնել, որը հասկանում է, թե ի՞նչ վտանգավոր են մանկասայլակներն աստիճանավանդակի վրա, քանի որ կարող են մեկին

թվայնացրել է 1915.info կայքը

վնաս տալ: Օրինակ՝ որևէ երեխայի: Իսկ մարդիկ պիտի մտածեն երեխաների ապահովության մասին: Բարձրաձայն մտածում է Բրիտ-Մարին:

Լենարտը մի մեծ ափսեով հրուշակ է դնում պահարանի կողքին: Էլսան ներս է քաշում ափսեն ու փակում է դուռը, և ինքն ու համախտանիշով տղան լուռ ուտում են: Տղան ոչինչ չի ասում, որովհետև երբեք էլ չի ասում: Էլսան ամենաշատը դրա համար է նրան սիրում: Նա խոհանոցից լսում է Յեորգի ձայնը: Այն ջերմ է ու վստահություն ներշնչող: Նա հարցնում է, թե ով է ուզում ձու ուտել, որ միանգամից բոլորի համար պատրաստի: Բոլորը սիրում են Յեորգին. դա նրա գերունակությունն է: Իսկ Էլսան ատում է նրան հենց այդ պատճառով: Ոչինչ այնքան չի նյարդայնացնում, որքան նյարդայնացնող մեկը, որ այնքան գրողի տարած քաղաքավարություն չունի, որ տխմար անվանելու առիթ տա իրեն: Հետո Էլսան լսում է մայրիկի ձայնը և մի պահ ուզում է դուրս վազել ու նրա գիրկը նետվել, բայց զսպում է իրեն, որովհետև ուզում է, որ մայրիկը տխրի: Էլսան գիտի, որ ինքն արդեն հաղթել է, բայց ուզում է, որ մայրիկն էլ հասկանա, որ նրան էլ նույնքան ցավ պատճառի այն, որ տատիկը մահացել է:

Համախտանիշով տղան քնել է պահարանի հատակին: Նրա մայրիկն իսկույն զգուշորեն բացում է դուռը, ներս է սողոսկում ու գրկած դուրս տանում նրան՝ կարծես նույն վայրկյանին իմանալով, որ տղան քնել է: Դա էլ երևի նրա գերունակությունն է:

Մոդը մի երկու վայրկյանից ներս է սողոսկում ու զգուշորեն հավաքում բոլոր իրերը, որ թափվել էին տղայի մայրիկի գրպաններից, երբ նա վերցնում էր տղային:

— Շնորհակալություն թխվածքների համար,– շշնջում է Էլսան:

Մոդը թփթփացնում է նրա թուշիկին ու այնքան վշտացած է թվում Էլսայի համար, որ Էլսան էլ Մոդի համար է վշտանում:

Նա մնում է պահարանում, մինչև որ նրանք վերջացնում են մաքրությունը, իրեր հավաքելն ու ցրվում իրենց բնակարաններով: Գիտի, որ մայրիկը, իր ու Յեորգի բնակարանի նախասրահում նստած, իրեն է սպասում, այնպես որ նա, դուրս գալով աստիճանավանդակ, տեղավորվում է մեծ պատուհանագոգին: Որովհետև ուզում է, որ մայրիկն է՛լ ավելի երկար սպասի:

Նա նստում է պատուհանագոգին, մինչև որ աստիճանահարթակի լամպերն ավտոմատ անջատվում են: Ու հաստատ մեկ ժամի չափ նստած է մնում, մինչև ներքևում իր բնակարանից դուրս է գլորվում հարբեցողն ու

թվայնացրել է 1915.info կայքը

սկսում է կոշիկի եղջյուրիկով խփել բազրիքների ճաղերին ու գոռգոռալ, թե գիշերով չի կարելի լոգանք ընդունել: Հարբեցողը շաբաթական մի քանի անգամ գոռգոռում է միջանցքում: Անսովոր բան չէ:

— Ջուրը փակե՛ք, հերի՛ք է,– գոռում է հարբեցողը, սակայն Էլսան չի պատասխանում:

Ոչ էլ ուրիշը: Որովհետև նման շենքերի մարդիկ համարում են, որ հարբեցողն իրեն հրեշի պես է պահում, իսկ երբ ձևացնում ես, թե նրանք գոյություն չունեն, անհետանում են:

Էլսան լսում է, որ հարբեցողը, ջրի սպառումը նվազեցնելու իր ամենաբուռն կոչերի մեջտեղում սայթաքում է ու գլորվում աստիճաններով՝ ընթացքում կոշիկի եղջյուրիկով հարված ստանալով սեփական գլխին: Հարբեցողն ու կոշիկի եղջյուրիկը երկու հին ընկերների պես, որ փողը կիսելիս համաձայնության չեն գալիս, բավական երկար վիճաբանում են: Վերջապես լռություն է տիրում: Քիչ հետո Էլսայի ականջին հասնում է երգի ձայնը: Երգ, որ հարբեցողը միշտ երգում է: Էլսան, աստիճաններին նստած, ծնկները գրկած, օրորվում է, ասես օրորոցային լսելիս, որ երգում են միայն իր համար: Հետո դա էլ է լռում: Լսվում է, թե ինչպես է հարբեցողը ֆշշացնում կոշիկի եղջյուրիկի կամ ինքն իր վրա, ու նորից անհետանում է իր բնակարանում:

Էլսան կիսով չափ փակում է աչքերը: Փորձում է պատկերացնել ամպէակին ու Երկիր-Կիս-Արթունի ծայրամասի դաշտը, բայց չի ստացվում: Ինքն այլևս առանց տատիկի չի կարողանում այնտեղ հայտնվել: Էլսան բարձրացնում է կոպերը: Փաթիլները թաց ձեռնոցների պես կպչում են ապակուն:

Եվ այդ ժամանակ նա առաջին անգամ տեսնում է Հրեշին:

Ձմեռային մռայլ գիշեր է, ու շուրջն այնքան սև է, որ թվում է՝ ամբողջ բնակավայրը մի լավ թաթախել են մթությամբ լի դույլի մեջ: Հրեշն աննկատ դուրս է գալիս ու մտնում խավարի մեջ, ապա այնքան արագ է անցնում փողոցի վերջին լամպի լույսի շուրջ տարածված կիսաշրջանի միջով, որ եթե Էլսան մի քիչ դանդաղ թարթելիս լիներ, կկարծեր, թե աչքին էր երևացել: Սակայն հիմա նա գիտի, որ տեսածն իրական է, ու գետնին ցատկելով՝ առանց կոշիկի վազում է աստիճաններով ներքև:

Էլսան գիտի, որ հենց նա է, որ կա, չնայած առաջ երբեք չէր տեսել: Նա կյանքում իր տեսած ամենախոշոր մարդն է: Նա կենդանու պես է

թվայնացրել է 1915.info կայքը

շարժվում ձյան միջով: Հեքիաթային հրեշ: Էլսան հրաշալի հասկանում է, որ պատրաստվում է վտանգավոր ու հիմար արարք գործել, բայց, միևնույն է, սլանում է՝ միանգամից երեք-երեք աստիճան ցատկելով: Կամ գուցե հենց դրա համար: Գուլպաները պլստում են վերջին աստիճանի վրա, ու նա, սահելով մինչև մուտքի դուռը, կզակը թափով խփում է բռնակին:

Ցավից դողացող դեմքով նա շնչասպառ հրում է դուռն ու գուլպաներով դուրս է վազում ձյան մեջ:

— Ես նամա՞կ ունեմ քեզ տալու,– աղաղակում է նա գիշերվա մեջ:

Այդ պահին միայն զգում է, որ լացը սեղմում է կոկորդը: Բայց նա, այնուամենայնիվ, ուզում է տեսնել նրան, ուզում է իմանալ, թե տատիկն իրենից թաքուն ում հետ էր խոսում Միամասի մասին:

Ոչ մի պատասխան: Էլսան լսում է նրա թեթև քայլերը ձյան միջով: Ապշելու աստիճան թեթևաքայլ է այդքան հսկա արարածը: Նա հեռանում է: Էլսան պիտի վախենար, պիտի սարսափեր այն մտքից, թե Հրեշն ինչ կարող է անել իրեն: Գիտի, որ Հրեշն այնքան հսկա է, որ մի շարժումով կարող է պատառ-պատառ անել իրեն: Բայց ինքը չափազանց զայրացած է վախենալու համար:

— Տատիկս բարևում է ու ասում՝ կներե՛ս,– աղաղակում է նա:

Նա չի երևում: Բայց ձյան ճռճռոց էլ չի լսվում: Նա կանգ է առել:

Էլսան չի մտածում: Միայն բնազդաբար նետվում է մթության մեջ դեպի այն կողմ, որտեղից վերջին անգամ ոտնաձայն էր լսել: Զգում է վերարկուի փեշի շրշյունը: Նա վազում է: Էլսան, ձյան միջով գայթելով, նետվում է, որ բռնի նրա տաբատի փողքից: Երբ սահելով ընկնում է մեջքի վրա, տեսնում է, թե ինչպես է նա վերևից ներքև նայում իրեն փողոցային վերջին լապտերի լույսով: Էլսան հասցնում է զգալ այտերին սառած արցունքները: Հրեշը պիտի որ երկու մետրից բարձր լինի: Հսկա ծառի պես: Գլխին հաստ գլխանոց է, սև մազերը թափվում են մինչև ուսերը: Համարյա ամբողջ դեմքը թաղված է մորթու պես խիտ մորուքի մեջ, իսկ գլխանոցի ստվերից, կարծես մի աչքի վրա գալարվելով, հսկայական սպի է իջնում, այնքան կոպիտ, որ թվում է, թե մաշկը հալվել ու սահել է: Էլսան զգում է, որ նրա հայացքը ներթափանցում է իր արյան հոսքի մեջ:

— Թո՛ղ:

Նրա մարմնի մթությունը կախվում է Էլսայի վրա, երբ նա ֆշշացնելով բացում է բերանը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տատիկս բարևում է ու ասում՝ կներես,– հևալով ասում է Էլսան՝ վեր պարզելով ծրարը:

Հրեշն այն չի վերցնում: Էլսան բաց է թողնում նրա փողքը՝ կարծելով, թե ուր որ է քացի կտա իրեն, բայց նա միայն կես քայլ հետ է գնում: Ու հետո նրա հանած ձայնն ավելի շուտ մռնչոց է հիշեցնում, քան մարդկային խոսք:

— Կորի՛ր, հիմա՛ր աղջիկ…

Բառերը դղրդում են Էլսայի թմբկաթաղանթներում: Ու մի տեսակ տարօրինակ են հնչում: Էլսան հասկանում է բառերը, բայց դրանք ասես խճողվում են ականջներում: Ասես չեն տեղավորվում այնտեղ:

Հրեշը կտրուկ, թշնամական շարժումով շրջվում է ու մի ակնթարթում անհետանում: Ասես ոտք է դնում մթության մեջ բացված անցքի մեջ:

Էլսան պառկած է մնում ձյան մեջ ու շնչակտուր օդ է որսում բերանով, իսկ ցուրտն ասես դոփում է նրա կրծքին: Հետո բարձրանում է, թափ հավաքում ու ճմռթելով ծրարը՝ շպրտում է նրա հետևից մթության մեջ:

Էլսան չգիտի՝ որքան հավերժություններ են անցնում, մինչև որ լսում է իր հետևում բացվող մուտքի դռան ու մայրիկի քայլերի ձայնը: Մայրիկը ձայն է տալիս իրեն: Էլսան աչքերը փակ նետվում է նրա գիրկը:

— Էս ի՞նչ ես անում դրսում,– վախեցած ասում է մայրիկը:

Էլսան չի պատասխանում: Մայրիկն ափերով քնքշորեն բռնում է նրա դեմքը:

— Կապտուկը որտեղի՞ց:

— Ֆուտբոլից,– շշնջում է Էլսան:

— Ստում ես,– շշնջում է մայրիկը:

Էլսան գլխով է անում: Մայրիկն ամուր գրկում է նրան: Էլսան դեմքը սեղմում է նրա փորին:

— Ես շատ եմ կարոտում նրան…

Մայրիկը կռանում է ու ճակատը դնում նրա ճակատին:

— Ես էլ:

Նրանք չեն լսում, որ Հրեշը շարժվում է իրենց կողմը: Չեն տեսնում, որ բարձրացնում է նամակը: Ի վերջո, մայրիկի գրկում Էլսան հասկանում է՝ ինչու էին նրա բերանից դուրս եկած բառերը տարօրինակ հնչել իր ականջին:

Հրեշն այդ բառերն արտասանել էր տատիկի ու Էլսայի գաղտնալեզվով:

Կարող ես տարիներ ի վեր սիրել տատիկիդ՝ փաստացի ոչ մի բան չիմանալով նրա մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

8

ՌԵՏԻՆԸ

Հորեքշաբթի է: Նորից վազում է:

Այս անգամ ճշգրիտ պատճառը չգիտի: Հնարավոր է՝ Ծննդյան տոնները մոտ են, ու նրանք գիտեն, որ մի քանի շաբաթ որևէ մեկին հալածել չեն կարողանալու, այդ պատճառով ուզում էին տեղը հանել: Էլսան չգիտի: Այնքան էլ հեշտ չէ կռահել, թե ինչն է նրանց մղում, երբ խոսք է բացվում դպրոցի տաքարյուն դատարկագլուխների մասին: Երբեմն ոչ մի գործոն էլ չկա: Նրանք, որոնց երբեք չեն հալածել, կարծում են, թե միշտ մի պատճառ լինում է: «Դե, առանց պատճառի հո չէի՞ն ընկնելու հետևիցդ»,– ասում են այդպես մտածող մարդիկ:– Դու հաստատ մի բան արել ես, որ նրանց հրահրես»: Կարծես հալածանքն այդպես է սկսվում: Բայց նրանք ընկած են Էլսայի հետևից միայն այն պատճառով, որ ինքն ուրիշ է: Նրանց պարզապես խանգարում է իր գոյությունը. ուրիշ պատճառ պետք չէ:

Բայց, իհարկե, նման մարդկանց որևէ բան բացատրելն անօգուտ է, նույնքան անիմաստ, որքան անիմաստ է բացատրել իրենց վզին հաջողություն բերող նապաստակի թաթ կրող, իրենցից գոհ այդ գիտունիկներին, որ եթե այդ նապաստակի թաթն իսկապես հաջողություն բերեր, դեռ նապաստակի վրա կլիներ:

Ըստ էության, ոչ ոք էլ մեղավոր չէ: Պատճառն այն չէ, որ հայրիկը մի քիչ ուշացել էր, երբ պիտի իր հետևից գար: Պարզապես դասերը մի քիչ շուտ էին վերջացել: Ու դժվար է անտեսանելի դառնալ, երբ որսը սկսվում է դպրոցում: Այնպես որ, Էլսան փախչում է: Նա վազելուց լավ է:

— Բռնե՛ք դրան,– ինչ-որ տեղ նրա հետևում գոռում է մի աղջիկ:

թվայնացրել է 1915.info կայքը

Այսօր շարֆից սկսեցին: Կամ, համենայնդեպս, Էլսային է այդպես թվում: Ինքն արդեն տարբերում է՝ ովքեր ու ինչպես են սովորաբար սիրում հոգի հանել: Ոմանք սիրում են հալածել թույլ թվացող երեխաներին: Կան, որ պարզապես զվարճության համար են հետապնդում ու նույնիսկ չեն ծեծում զոհին, երբ բռնում են, այլ բավարարվում են միայն՝ նրա աչքերում վախ տեսնելով: Հետո կան տղաներ, որ նման են Էլսայի հետ Սարդ-մարդ լինելու համար կռվող տղային: Նրանք կռիվ են սկսում, որովհետև չեն հանդուրժում, որ որևէ մեկն իրենց ասածին հակառակվի: Մանավանդ մեկը, որ նման չէ բոլորին:

Բայց այս մի աղջիկն ուրիշ է: Որսահալած սկսելիս նրան անպայման մի պատճառ պետք է՝ հալածանքն արդարացնելու համար: «Որ մեկին հետապնդում է, ուզում է իրեն հերոս զգալ»,– մտածում է Էլսան դեպի ցանկապատը սուրալիս՝ սառը դատելով, իսկ սիրտը բաբախում է պարսպակործան մեքենայի պես, կոկորդն էլ վառվում է, ինչպես այն ժամանակ, երբ տատիկը հալապենյոյի սոուս էր պատրաստել:

Հա՛, Էլսան կարծում է, որ շարֆից սկսվեց: Վստահ չէ, իհարկե, որովհետև չի կարող պատկերացնել, որ բացարձակ տխմար տաքգլուխնեռին կարող է այդ աստիճան հուզել ինչ-որ շարֆ: Սակայն, ամեն դեպքում, որոշում է, որ իր վիճակում կանգնելն ու հարցնելն իմաստ չունի: Իր հետևում նրանց ճտքակոշիկների ռետինե ներբանների դոփյունից տատանվում է սառույցը, ու Էլսան ավելի ու ավելի մոտեցող ձայներից կռահում է մյուս երեխաների ոգևորությունը: Դե, որ մարդ պատճառ է գտել մեկին հալածելու, հո մենակ չի՞ ընկնելու հետևից: Համենայնդեպս, այս դպրոցում:

Էլսան ցատկում է ցանկապատի վրայով, բայց հակառակ կողմում վայրէջք կատարելիս ուսապարկն ամբողջ ծանրությամբ ընկնում է գլխին, և մի քանի վայրկյան աչքերի առաջ մթնում է: Նա երկու ձեռքով ուժեղ քաշում է ուսագոտիները, որ ամուր գրկեն մեջքը, ու մշուշոտ հայացքով նայում է ձախ՝ դեպի կայանատեղի, որտեղ ցանկացած պահի կարող է հայտնվել հոր Audi-ն: Նա լսում է, թե ինչպես է աղջիկը կոկորդը պատռելով գոռում խոցված օրկի (հեքիաթային էակ Ջոն Թոլքինի «Մատանիների տիրակալը» վեպից) պես, որի մասին Էլսան գիտի, քանի որ մայրիկը չափազանց ուշադիր էր ու արգելել էր տատիկին, որ Էլսայի հետ «Մատանիների տիրակալը» դիտեն, բայց արդեն ուշ էր:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո Էլսան աջ է նայում, ուր ճանապարհը դեպի կենտրոնական փողոց է տանում, որով թշնամու ամրոցը նվաճելու շտապող բանակի պես դղրդոցով անցնում են բեռնատարները, բայց նրանց արանքից փողոցի մյուս կողմում երևում է այգու մուտքը: Թմրայգին է: Դպրոցում բոլորն այդ այգին Թմրայգի են անվանում, որովհետև այնտեղ թմրամոլներ են լինում, որ հերոինով ներարկիչները ձեռքներին՝ ընկած են երեխաների հետևից: Էլսան ամեն դեպքում այդպես էր լսել: Այնպես որ, մահու չափ վախենում է այդ այգուց, ինչպես կվախենա համարյա ութ տարեկան երեխան, որը տաքգլուխներից չէ: Այդ այգին, թվում է, երբեք արևի լույս չի տեսնում, իսկ այսօր այնպիսի ձմեռային օր է, որ արևն ասես իսկի դուրս չի եկել:

Էլսան կարողացել էր գլուխ հանել մինչև կեսօրվա ընդմիջումը, բայց ոչ ոք, նույնիսկ նա, ով անտեսանելի դառնալուց բավական լավ է, չի կարողանա իսկապես անտեսանելի մնալ ճաշարանում:

Աղջիկն այնքան անսպասելի էր հայտնվել Էլսայի առջև, որ Էլսան ցնցվել էր, ու աղցանի համեմված ձեթը թափել գրիֆինդորցիների շարֆի վրա: Աղջիկը մատը տնկել էր վրան ու բղավել. «Ասում էի, չէ՞, էդ անդուր, քնձռոտ շարֆով ֆռֆռալուց օգուտ չկա»: Էլսան շրջվել էր ու այնպիսի հայացքով նայել աղջկան, ինչպես միայն հնարավոր է նայել մեկին, որ գրիֆինդորցիների շարֆը նկատի ունենալով՝ կարող է ասել անդուր կամ քնձռոտ: Նույն կերպ հնարավոր էր նայել նրան, ով ձիուն նայելիս ուրախ կբացականչեր՝ տրակտո՛ր:

Առաջին անգամ, երբ շարֆը գրավել էր աղջկա ուշադրությունը, Էլսան, անշուշտ, համոզված էր, որ նա սլիզերինցի է: Իսկ երբ աղջիկը խփել էր Էլսայի դեմքին ու շարֆը պատռելով՝ գցել զուգարանի մեջ, Էլսան հասկացել էր, որ նա «Հարրի Փոթեր» չէր կարդացել: Դե, գիտեր, իհարկե, ով է, որովհետև բոլորը, բնականաբար, գիտեն՝ ով է Հարրի Փոթերը, բայց գրքերը չեն կարդացել: Նույնիսկ Գրիֆինդորի տարրական խորհրդանիշներից գաղափար չուներ: Էլսան էլ չի ուզում իրեն ընտրյալ կամ առանձնահատուկ համարել, բայց նման մարդու հետ էլ ո՞նց լեզու գտնես: Հը՞…

Մագլի մեկը:

Այնպես որ նա, երբ այսօր ճաշարանում առաջ գալով ձգվեց, որ Էլսայի վզից թռցնի շարֆը, Էլսան որոշեց աղջկա մտավոր մակարդակին ավելի համապատասխան փոխադարձել: Պարզապես ձեռքի կաթով լի բաժակը

թվայնացրել է 1915.info կայքը

լցրեց աղջկա վրա ու փախավ միջանցքով, հետո՝ երկրորդ հարկ, հետո էլ՝ երրորդ: Աստիճանների տակ մի մութ անկյուն կար, որը հավաքարարներն օգտագործում էին որպես պահոց: Էլսան այնտեղ՝ խորքում, կծկվում է, գրկում ծնկներն ու հնարավորին չափ անտեսանելի դառնում, իսկ աղջիկն ու իր արբանյակները սուրում են չորրորդ հարկ: Հետո օրվա մնացած մասն Էլսան թաքնվել էր դասարանում:

Աղջկան միայն առիթ էր պետք: Եվ նա կարողացավ հրահրել Էլսային, որ նա նախահարձակ լինի, այնպես որ հիմա աղջիկը հերոս էր: Նմաններ-ը միշտ էլ ամեն դպրոցում լինում են, ու նրանք միշտ ընտրում են Էլսայի նմաններին, որովհետև նրանց կարելի է հրահրել: Կարելի է այնպես անել, որ կաթ շփեն իրենց վրա: Այդ ժամանակ հալածելն ավելի զվարճալի է թվում: Համ էլ մարդկանց մի մասի համար նման պատճառը բավարար է թվում:

Դասարանից մինչև դպրոցի մուտքն ընկած հատվածն ամենից դժվարն է: Այնտեղ անտեսանելի մնալ չի ստացվում, նույնիսկ եթե այդ գործում հմուտ ես: Եվ Էլսային ռազմավարություն է պետք:

Երբ բոլոր դասընկերները դուրս են հորդում դասարանից, նա ուսուցչի կողքից չի հեռանում: Հետո խառնաշփոթի մեջ արագ ծլկում է ու սլանում ներքև մյուս աստիճաններով, որոնք չեն տանում գլխավոր մուտքի մոտ: Հետապնդողները, անշուշտ, գիտեն, թե Էլսայի մտքինն ինչ է, նույնիսկ ուզում են, որ այդ կողմով իջնի, որովհետև այդ աստիճանների վրա ավելի հեշտ է նրան բռնելը: Բայց իրենց դասը շուտ էր ավարտվել, ու Էլսան օգտվեց առիթից, որ ներքևի հարկում երեխաները դեռ դուրս չէին եկել: Այս պարագայում նա թերևս մոտ կես րոպե ունենար՝ իջնելու ներքև ու անցնելու դատարկ միջանցքով: Այդպիսով մի փոքր առավելություն կստանար, մինչդեռ իրեն հալածողներն ընկնելու էին դասարաններից դուրս շտապող աշակերտների նոր հոսքի մեջ: Եվ նա ճիշտ էր, որովհետև աղջիկն ու իր ընկերները իրենից տասը մետրից պակաս հեռավորության վրա էին, բայց հասնել չէին կարող:

Տատիկը Միամասից հազարավոր պատմություններ էր պատմել հետապնդումների ու պատերազմների մասին: Թե ինչպես ազատվել քեզ հետապնդող ստվերներից, ինչպես գայթակղելով ծուղակը գցել նրանց ու հաղթել շեղելով, քանի որ բոլոր հետապնդողների պես ստվերներն էլ

թվայնացրել է 1915.info կայքը

լուրջ թերություն ունեն. նրանք ուշադրությունը կենտրոնացնում են նշանակետի վրա՝ փոխանակ տեսնելու ամբողջ շրջապատը: Մինչդեռ հետապնդվողը կենտրոնացած է փախուստի ճանապարհի գտնելու վրա: Շատ մեծ առավելություն չէ, բայց առավելություն է ամեն դեպքում: Էլսան գիտի, քանի որ կարդացել է այդ մասին:

Այսպիսով՝ Էլսան ձեռքը տանում է ջինսի գրպանն ու մի բուռ մետաղադրամ հանում: Մոտը միշտ լիքը մետաղադրամ կա: Պետք է գալիս, երբ հետևիցդ հաճախ են ընկնում: Հենց որ երեխաների շարքերը սկսում են նոսրանալ, նա հասնում է մուտքի դռներին, մետաղադրամները շպրտում է գետնին ու վազում:

Ամեն դեպքում, մարդիկ զարմանալի են, բացահայտել էր Էլսան: Մեզնից ոչ մեկը չի կարողանում անհաղորդ մնալ գետնին ընկնող մետաղադրամի զրնգոցի ձայնին և անցնել՝ առանց բնազդաբար կանգ առնելու ու ներքև նայելու: Մետաղադրամների շուրջը անհամբեր մատների խռնվելը արգելափակում է հետապնդողներին՝ փախուստի համար Էլսային մի քանի վայրկյան ևս ապահովելով: Ու նա վազում է:

Բայց ահա լսում է ցանկապատի վրայով նրանց մագլցելը: Չեզոք գույնի հարմարավետ ձմեռային ճտքակոշիկները քսվում են մաշված մետաղալարերին: Մի ակնթարթից կբռնեն իրեն: Էլսան նայում է ձախ: Կայանատեղիում Audi-ն չի երևում: Նայում է աջ՝ դեպի փողոցի գորշ քառսն ու այգու սև լռությունը: Հետո նորից ձախ է նայում՝ մտածելով, որ անվրեպ ընտրություն կլինի, եթե հայրիկը կյանքում գոնե մի անգամ ճիշտ պահին հայտնվի: Հետո նորից նայում է աջ, զգում է, թե ինչպես է մռնչացող բեռնատարների արանքում առկայծող այգու տեսքից վախը ծվատում ստամոքսը: Ու հիշում է Միամասի մասին տատիկի պատմածները, թե ինչպես է արքայազներից մեկն ազատվում իրեն հալածող ստվերների մի ամբողջ երամից՝ սլանալով ուղիղ դեպի Երկիր-Կիս-Արթունի ամենամթին անտառի խորքը: Ստվերներն ամենից նողկալի արարածներն են, որ երբևէ գոյություն են ունեցել երևակայական աշխարհներում, բայց տատիկն ասում էր, որ նրանք էլ զուրկ չեն վախի զգացումից: Նույնիսկ այդ գարշելիները կարող են վախենալ, քանի որ նրանք էլ երևակայություն ունեն: «Էնպես որ, երբեմն ամենավտանգավոր թվացող տեղը թաքնվելու համար ամենաապահովն է լինում»,– ասել էր տատիկն ու պատմել, թե ինչպես էր արքայազնը ձին քշել դեպի անտառի ամենամթին խորքերը, ու ստվերները

թվայնացրել է 1915.info կայքը

ֆշշացնելով կանգ էին առել անտառի եզրին, քանի որ չգիտեին՝ ինչ կա թաքնված ծառերի հետևում: Ցանկացած արարածի համար չկա ավելի սարսափազդու բան, քան անհայտությունը: Անհայտության բացը լրացնում է նրա երևակայությունը: «Վախի դեպքում իրականությունը չի կարող մրցել երևակայության հետ»,– ասել էր տատիկը:

Ու Էլսան վազում է աջ: Զգում է սառույցի վրա արգելակող մեքենաների անվադողերի շիկացած ռետինի հոտը: Renault-ի մեջ գրեթե միշտ այդ հոտն էր զգացվում: Նա խուսանավում է բեռնատարներից, լսում նրանց խելագար ազդանշաններն ու իրեն հետապնդողների կատաղի ոռնոցները: Երբ ոտքն արդեն մայթին է դնում, զգում է, որ նրանցից մեկը ձգում է ուսապարկից: Ինքն այնքան մոտ է այգուն, որ կարող է ձեռքը ձգել մթությանն ընդառաջ, բայց ուշ է: Ընկնում է ձյան մեջ՝ համոզված, որ հարվածների ու քացիների տարափն ավելի շուտ կթափվի վրան, քան ինքը կհասցնի ձեռքերով իրեն պաշտպանել: Ծնկները ծալում է, աչքերը կկոցում ու փորձում է դեմքը պաշտպանել, որ մայրիկը նորից չվշտանա: Ծոծրակին սպասում է խուլ հարվածների տեղատարափ: Ըստ էության, խփելուց շատ չի ցավում, սովորաբար ցավը սկսում է ուժեղանալ հաջորդ օրը: Խփելու պահին բոլորովին ուրիշ տեսակի ցավ է:

Էլսան շունչը պահում է:

Ու ոչինչ:

Բացում է աչքերն ու խլացուցիչ դղրդոց է լսում: Լսում է, որ նրանք սարսափահար ճչում են: Լսում է, որ փախչում են: Ու հետո լսում է Հրեշի ձայնը: Որոտալով մի հզոր ուժ է դուրս ժայթքում նրա միջից:

— ԵՐԲԵՔ... ՁԵ՛ՌՔ ՀՏԱՔ... ՆՐԱՆ...

Նրա բառերն արձագանքում են շրջապատում: Էլսայի թմբկաթաղանթները թնդում էին: Հրեշը մռնչում է ո՛չ Էլսայի ու տատիկի գաղտնալեզվով, բայց բառերը, մեկ է, տարօրինակ են հնչում նրա բերանում: Ասես յուրաքանչյուր վանկի շեշտադրումն է սխալ հնչում: Ասես նա շատ երկար ժամանակ չէր խոսել:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան նայում է վեր: Սիրտն ուր որ է դուրս կթռչի կրծքավանդակից, շունչը կտրվում է. Հրեշը հայացքը հառել է նրան՝ գլխին քաշած գլխանոցի ստվերի ու անվերջ թվացող սև մորուքի միջով: Նրա կրծքավանդակը մի քանի վայրկյան արագ վերուվար է անում: Մի պահ Էլսան բնազդաբար ծնկի է գալիս՝ կարծելով, թե նրա հսկայական բռունցքը կբռնի իրեն ու կնետի ուղիղ երթևեկության երախը: Ինչպես հսկան, որ մի մատով վերջ կտա մկանը: Բայց նա պարզապես կանգնած է, հևում է և զայրացած ու շվարած է երևում: Վերջապես նա բարձրացնում է վերամբարձ կռունկի նման ծանր ձեռքն ու ցույց տալիս դպրոցի կողմը: Երբ Էլսան շրջվում է, տեսնում է «Հարրի Փոթեր» չկարդացող աղջկան ու նրա ուղեկիցներին, որ ցրվում են քամուց քշվող թղթիկների պես՝ ասես ստվերներից հալածված ու սարսափահար:

Հեռվում տեսնում է կայանատեղի մտնող Audi-ն: Էլսան խոր շունչ է քաշում ու զգում է, որ օդն այդ ամբողջ ընթացքում առաջին անգամ խուժում է թոքերը:

Երբ նորից շրջվում է, տեսնում է, որ Հրեշն անհետացել է:

թվայնացրել է 1915.info կայքը

9

ՕԽԱՌԸ

Հազարավոր հեքիաթներ կան մեր իրական աշխարհում, որոնց ծագման մասին տխմար տաքգլուխներից ոչ ոք չգիտի: Բանն այն է, որ բոլորն առանց բացառության եկել են Երկիր-Կիս-Արթունից, բայց մարդիկ այնտեղ դրանից չեն մեծամտանում ու շարունակում են զբաղվել իրենց գործով: Իսկ Երկիր-Կիս-Արթունի բոլոր ամենալավ հեքիաթները Միամասից են:

Անշուշտ, բոլոր վեց թագավորություններում էլ ժամանակ առ ժամանակ որոշ քանակով հեքիաթներ եղել են, բայց մյուսների հեքիաթներից ոչ մեկը չի կարող հավասարվել Միամասում ստեղծվածներին: Միամասում հեքիաթներ են ստեղծվում ամբողջ օրը, մարդիկ դրանք մեկիկ-մեկիկ են պատրաստում, զգուշորեն, և դրանք ձեռակերտ են, ոչ թե ինչ-որ գործարանում սարքված: Իսկ արտահանվում են միայն ու միայն ամենալավերը: Մեծամասնությունն ընդամենը մի անգամ է պատմվում, ապա ընկնում գետնին, իսկ ամենալավերն ու գեղեցիկները վերջին բառի հետ քնքշորեն պոկվում են շուրթերից ու դանդաղորեն ճախրում բոլոր ունկնդիրների գլխավերևում առկայծող փոքրիկ թղթե լապտերիկների պես, իսկ գիշերվա ընթացքում էնֆանտները հավաքում են դրանք: Էնֆանտները փոքրիկ արարածներ են՝ շքեղազարդ գլխարկներով: Նրանք ամպէակներ հեծած են ման գալիս: Իսկ գլխարկներն էլ՝ էնֆանտներ հեծած, եթե ճշգրտություն եք ուզում: Բայց լապտերներն ամեն դեպքում էնֆանտներն են հավաքում մեծ ոսկյա ցանցերով ու հետո շրջում են ամպէակներին և այնպիսի արագությամբ են երկինք սլանում, որ նույնիսկ քամիները պիտի մի կողմ քաշվեն նրանց ճանապարհից: Ու եթե քամին արագ մի կողմ չի քաշվում,

թվայնացրել է 1915.info կայքը

ամպէակը բղավում է՝ ճամփա՛ տուր, ա՛յ տխմար քամի, և վերածվում է մեկ այլ կենդանու, որ ձեռքեր ունենա ու կարողանա քամուն մի լավ ծեծ տալ: Հետո Երկիր-Կիս-Արթունի ամենաբարձր բարձունքից՝ Հեքիաթների լեռան գագաթից, էնֆանտները թափ են տալիս ցանցերը, ու հեքիաթնե-րը դուրս են թռչում: Եվ այդպես հեքիաթները, որոնց առաջացման մասին տխմար տաքգլուխներից ոչ ոք գաղափար չունի, հայտնվում են իրական աշխարհում:

Երբ Էլսայի տատիկը սկսեց պատմել Միամասի մասին իր պատմութ-յունները, դրանք սկզբում կիսացնդած մարդու անկապ, կցկտուր պատ-մություններ էին թվում: Մի քանի տարի անց միայն Էլսան հասկացավ, որ դրանք բոլորն իրար հետ կապակցված են: Բոլոր լավ հեքիաթների դեպ-քում այդպես է լինում:

Տատիկը պատմում էր ծովահրեշտակի ողբագին անեծքի մասին: Պատմում էր երկու արքայազն եղբայրների մասին, որ իրար դեմ պատե-րազմելու ելան, քանի որ երկուսն էլ սիրահարված էին Միփլորիսի արքա-յադուստերը: Պատմում էր արքայադուստեր մասին, որն իր հերթին կռիվ էր տալիս վհուկի հետ, որն իրենից գողացել էր Երկիր-Կիս-Արթունի ամենա-թանկարժեք գանձը, պատմում էր Միբատալոսի ռազմիկների, Միմովա-սի պարողների ու Միրևասի՝ երազներ որսացողների մասին: Թե ինչպես էին բոլորը մշտապես վիճում ու վայրահաչում իրար վրա մինչև այն օրը, երբ Միմովասի Ընտրյալը քշեց ստվերներին, որոնք ուզում էին փախցնել իրեն: Ինչպես ամպէակը տարավ Ընտրյալին Միամաս, ու ինչպես Երկիր-Կիս-Արթունի բոլոր բնակիչները վերջապես հասկացան, որ շատ ավելի կարևոր բան կա, որի համար արժի կռվել: Այնպես որ, երբ ստվերները հավաքեցին իրենց բանակն ու զորքով եկան Ընտրյալին բռնելու, բոլորը միաձայն ոտքի ելան նրանց դեմ: Նույնիսկ այն ժամանակ, երբ Մարտ-Ան-Վերջը թվում էր՝ չի վերջանա, մինչև բոլորը չոչնչանան, նույնիսկ երբ ռազմիկների թագավորություն Միբատալոսն ընկավ ու հավասարվեց հողին, մյուս թագավորությունները չհանձնվեցին: Քանի որ գիտեին, որ եթե ստվերները կարողանան փախցնել Ընտրյալին, կմեռնի Երկիր-Կիս-Արթունի ամբողջ երաժշտությունը, իսկ դրանից հետո՝ նաև ամբողջ երևակայությունը, և տարբերվող ու առանձնահատուկ ոչինչ չի մնա: Իսկ հեքիաթներն անսովոր երևույթներից են հյուսվում:

թվայնացրել է 1915.info կայքը

«Տարբերվող մարդիկ են փոխում աշխարհը, ոչ մի նորմալ մարդ ոչ մի կաթիլ փոփոխություն չի բերել»,– սովորաբար ասում էր տատիկը:

Հետո վորսերի մասին էր պատմում: Էլսան փաստորեն պիտի շուտ հասկացած լիներ: Ինքը, իրոք, ամեն ինչ պիտի հենց ամենասկզբից հասկացած լիներ:

Հայրիկն անջատում է ստերեոն, նախքան Էլսան ներս կցատկեր մեքենայի մեջ: Էլսան ուրախ է, որ նա անջատեց, որովհետև հայրիկը միշտ շատ է տխրում, երբ Էլսան ասում է, որ նա աշխարհի ամենավատ երաժշտությունն է լսում, բայց նաև ահավոր դժվար է դիմանալ, երբ, Audi-ի մեջ նստած, ստիպված ես աշխարհի ամենավատ երաժշտությունը լսել:

— Ամրագոտի՛ն,– խնդրում է հայրիկը, երբ նա տեղավորվում է:

Էլսայի սիրտը կրծքավանդակում ցատկոտում է, ինչպես սեղանի թենիսի մրցախաղի ժամանակ:

— Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, ծե՛ր գայլաշուն,– ասում է նա հայրիկին:

Որովհետև այդպես բացականչում էր, երբ տատիկն էր գալիս դպրոց:

Տատիկն էլ վրա էր տալիս.

— Բարև՛, բարև՛, կարմի՛ր արև,– ու ամեն ինչ կարծես տեղն էր ընկնում:

Որովհետև կարելի է, իհարկե, թերևս կարգին վախենալ «ողջո՛ւյն, ողջո՛ւյն, ծեր գայլաշուն» բղավելու ընթացքում, բայց դրանից հետո հաստատ վախեցած մնալը չափազանց դժվար է:

Հայրիկը տարակուսած նրան է նայում: Էլսան հոգոց է հանում ու կապում ամրագոտին՝ փորձելով կարգավորել սրտխփոցը՝ այնպիսի բաների մասին մտածելով, որոնցից չի վախենում: Հայրիկն է՛լ ավելի տարակուսած է թվում:

— Մայրիկդ ու Յեորգը նորից հիվանդանոցում են…

— Գիտեմ,– ասում է Էլսան այնպես, ինչպես կարձագանքեր մի լուրի, որից վախն ամենևին չի պակասում:

Հայրիկը գլխով է անում: Էլսան նստատեղերի արանքով այնպես է շպրտում ուսապարկը, որ այն ընկնում է հետևում ինչ-որ տեղ: Հայրիկը շրջվում է, բարձրացնում այն և ուղիղ դնում նստարաններից մեկի վրա: Հայրիկի համար կարևոր է, որ իրերը ճիշտ և կանոնավոր դրված լինեն: Սակայն դա, այնուամենայնիվ, մտասևեռում չէ, Էլսան գիտի. նայել է Վիքիպեդիայում: Բայց հայրիկը կարգուկանոն շատ է սիրում: Երբ մայրիկն ու հայրիկը դեռ ամուսնացած էին, հայրիկը կարող էր թաքուն վեր կենալ,

թվայնացրել է 1915.info կայքը

քանի որ քունը չէր տանում, երբ գիտեր, որ մայրիկի համակարգչի վրայի իկոնկաները (պատկերակները) անկանոն ցրված էին էկրանով մեկ: Հայրիկինը Mac էր, իսկ մայրիկինը՝ PC, ու մի անգամ, երբ մայրիկը պիտի հայրիկի համակարգչից օգտվեր, և այն չէր ենթարկվում մայրիկին, մայրիկը կորցրեց ինքնատիրապետումն ու բացականչեց, որ ատում է Apple-ի արտադրանքները: Այդ խոսքերից հայրիկը քիչ էր մնում՝ լաց լիներ: Այնպես որ, բոլորն էլ իսկապես պիտի հասկանային, որ այդ միությունը երկար չի դիմանալու:

Հայրիկը ձեռքերը դնում է ղեկի վրայի Audi-ի լոգոտիպին: Որովհետև Apple-ի լոգոտիպով ղեկ չի լինում:

— Ի՞նչ կուզես անել,– ասում է նա, ու իր իսկ հարցից ձայնն անհանգիստ է հնչում:

Էլսան ուսերն է թոթվում:

— Դե… կարող ենք ինչ-որ հավես բան մտածել,– երկմտելով ասում է հայրիկը:

Էլսան գիտի, որ նա պարզապես ուզում է մի հաճելի բան ասած լինել, որովհետև խիղճը տանջում է, որ հազվադեպ են հանդիպում, ու խղճում է Էլսային, որ տատիկին է կորցրել: Չորեքշաբթին էլ շատ անսպասելի եկավ նրա համար: Էլսան գիտի, որ հայրիկը երբեք չէր առաջարկի զվարճալի բան հնարել, որովհետև չի սիրում զվարճանալ: Զվարճալի բաները նրան նյարդայնացնում են: Մի անգամ՝ արձակուրդին, երբ Էլսան փոքր էր, հայրիկն էլ իր ու մայրիկի հետ գնացել էր ծովափ, այնքան զվարճալի էր, որ հայրիկը ստիպված էր երկու հաբ ցավազրկող խմել ու մինչև երեկո պառկել հյուրանոցում: «Նրա համար միանգամից այդքան զվարճանալը մի քիչ շատ էր»,– ասել էր մայրիկը: «Զվարճության մեծ չափաբաժին էր»,– ասել էր Էլսան, իսկ մայրիկը շատ երկար ծիծաղել էր: Բայց զարմանալին այն է, որ ոչ ոք չէր կարողանում մայրիկին այդքան զվարճացնել, ինչքան հայրիկը: Մայրիկը ոնց որ միշտ մարտկոցի հակառակ բևեռ լիներ: Ոչ ոք չէր կարողանում նրա մոտ կարգուկանոնի պահանջն այնքան սրել, որքան տատիկը, ու ոչ ոք չէր կարող նրանք այնքան անկանոն ու խառնիխուռն դարձնել, որքան հայրիկը: Մի անգամ, երբ Էլսան դեռ փոքր էր, մայրիկը խոսում էր հեռախոսով հայրիկի հետ, ու Էլսան հարցրեց. «Հայրի՞կն է: Ես խոսեմ հայրիկի հետ: Ո՞ւր է հայրիկը»: Իսկ մայրիկը վերջապես շրջվել էր ու դրամատիկ հոգոց արձակելով՝ ասել. «Չէ՛, հայրիկի հետ խոսել չես կարող,

թվայնացրել է 1915.info կայքը

որովհետև հայրիկը հիմա երկնքում է, Է՛լսա»: Ու երբ Էլսան քար կտրած հայացքը լուռ հառել էր մորը, նա ժպտալով ասել էր. «Տե՛ր իմ, Է՛լսա, ես ուղղակի կատակ արեցի: Հայրիկը խանութ է գնացել»:

Ու տատիկի պես հեգնական քմծիծաղ էր տվել:

Հաջորդ առավոտ Էլսան թաց աչքերով խոհանոց էր մտել, երբ մայրիկը լակտոզա չպարունակող կաթով սուրճ էր խմում, ու երբ մայրիկն անհանգստացած հարցրել էր, թե ինչու է տխուր, Էլսան պատասխանել էր, որ երազում հայրիկը երկնքում էր: Եվ այդ ժամանակ մայրիկը ճնշվել էր մեղքի զգացումից ու ամուր-ամուր-ամուր գրկել էր Էլսային և նորից ու նորից ներողություն խնդրել, իսկ Էլսան մի տասը րոպե սպասելուց հետո ասել էր քմծիծաղով. «Բայց, տե՛ր իմ, ես ուղղակի կատակ արեցի: Ես երազում տեսել էի, որ նա խանութ է գնացել»:

Դրանից հետո մայրիկն ու Էլսան հաճախ էին կատակ անում հայրիկի հետ ու հարցնում էին, թե երկնքում ոնց է: «Ցո՞ւրտ է երկնքում: Իսկ այնտեղ թռչել հնարավո՞ր է: Կարո՞ղ ես երկնքում Աստծուն հանդիպել»,– հարցնում էր մայրիկը: «Իսկ երկնքում պանրի դանակ կա՞»,– հարցնում էր Էլսան: Ու այնպես էին ծիծաղից թուլանում, որ նստած տեղերից ընկնում էին: Հայրիկը միշտ շվարում էր, երբ նրանք սկսում էին կատակել: Էլսան կարոտում էր այդ օրերը: Կարոտում էր, երբ հայրիկը երկնքում էր:

— Տատիկը հիմա երկնքո՞ւմ է,– հարցնում է նա ու ժպտում՝ մտածելով, որ հայրիկն իր կատակի վրա հիմա կծիծաղի:

Բայց նա չի ծիծաղում: Ու այնպես է նայում Էլսային, որ նա ամաչում է, որ այնպիսի բան է ասել, որից հայրիկն այդպես է նայում իրեն:

— Դե լա՛վ, խնդիր չէ,– քրթմնջում է նա՝ թփթփացնելով մեքենայի պահոցիկին, ապա իսկույն ավելացնում,– տուն գնանք, ամեն ինչ կարգին է:

Հայրիկը գլխով է անում՝ թեթևացած ու հուսախաբ:

Բավական հեռվից տան մոտ նրանք ոստիկանական մեքենա են տեսնում: Իսկ Audi-ից իջնելիս Էլսան ոռնոց է լսում: Մուտքի մոտ լիքը ժողովուրդ է հավաքվել: Իր բնակարանում փակված Բարեկամի ոռնոցից, փոխաբերական իմաստով, ամբողջ շենքը ցնցվում էր: Էլսան հասկանում է այդ արտահայտությունը, քանի որ եթե գուգլում ես «փոխաբերականը», Վիքիպեդիան առաջին հերթին բերում է «փոխաբերությունը»:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մո՞տդ է… Բանալին,– հարցնում է հայրիկը:

Էլսան գլխով է անում ու արագ գրկում հայրիկին, որովհետև մուտքի մոտ հավաքված բազմությունից նա շվարում է: Հայրիկը նորից նստում է իր Audi-ն, իսկ Էլսան մենակ է ներս մտնում: Ու Բարեկամի խլացուցիչ ռռնոցից բացի՝ սկսում է ուրիշ ձայներ էլ լսել: Խոսակցություն՝ մռայլ, ցածր ու սպառնալից: Նրանք համազգեստով են և շարժվում են համախտանիշով տղայի ու նրա մայրիկի բնակարանի մոտակայքում: Բարեկամի դռան մոտ հետախուզում են ու հսկում, սակայն ակնհայտորեն վախենում են շատ մոտենալ ու դիպչում են հակառակ պատին, կարծես իրենք խոտեր լինեն, իսկ պատը նոր շոր լինի հագած, որը պատի մայրիկը խստիվ արգելել է կեղտոտել:

Ոստիկաններից մեկը շրջվում է: Նրա կանաչ աչքերը հանդիպում են Էլսայի աչքերին: Նույն ոստիկանն է, որ տատիկի հետ հանդիպել էին ոստիկանական բաժանմունքում այն գիշեր, երբ տատիկը կղանք էր շպրտել: Կանաչ աչքերով ոստիկանը դժբախտ տեսքով գլխով է անում Էլսային: Կարծես ուզում է ներողություն խնդրել:

Էլսան ի պատասխան գլխով չի անում, միայն անցնում է կողքով ու վազում առաջ: Լսում է, որ ոստիկաններից մեկը խոսում է հեռախոսով ու օգտագործում է «որսորդական» ու «քնեցնել» բառերը: Բրիտ-Մարին կանգնած է աստիճանների ու բնակարանի արանքում՝ բավականաչափ մոտիկ, որ կարողանա խորհուրդներ տալ ոստիկաններին, թե իր կարծիքով՝ նրանք ինչ պետք է անեն, բայց և բավականաչափ ապահով հեռավորության վրա՝ հաշվի առնելով հնարավոր վտանգը, եթե հանկարծ գազանը հաջողեցնի դուրս պրծնել դռնից: Նա սիրալիր ժպտում է Էլսային: Էլսան ատում է նրան:

Էլսան արդեն հասել էր ամենավերևի հարկին, երբ Բարեկամը սկսում է է՛լ ավելի մոլեգին հաչել, քան երբևէ. 10,000 հեքիաթի մրրկահողմի ուժով: Աստիճանավանդակների արանքով Էլսան տեսնում է, որ ոստիկանները հետ-հետ են գնում: Ախր ինքը պիտի հենց սկզբից էլ հասկացած լիներ: Իսկապես, ո՞նց գլխի չէր ընկել: Միամասի շրջակա լեռներում ու անտառներում շատ զարմանահրաշ արարածներ կան, բայց ոչ մեկի մասին պատմելիս տատիկի ձայնն այդքան հարգանքով չէր լցվում, ինչպես այն արարածների մասին պատմելիս, որ Երկիր-Կիս-Արթունի ժողովուրդը «վորս» էր անվանել:

թվայնացրել է 1915.info կայքը

Վորսերը նման էին այն ամենին, ինչ դու երբևէ տեսել ես, բայց նաև նման չեն նախկինում քեզ հանդիպած որևէ արարածի: Նրանք բևեռային արջերի պես խոշոր են, շարժվելիս թեթևաքայլ են ֆենեկ աղվեսների ու արագաշարժ կոբրաների պես: Ցլերից ուժեղ են, վայրի ձիերից դիմացկուն, ու երախներն ավելի սարսափելի են, քան վագրերինը: Նրանք ամառային զեփյուռի պես նուրբ, փայլուն սև մորթի ունեն, որի տակ զրահի պես հաստ կաշի է: Ամենահին հեքիաթները պատմում էին, որ նրանք անմահ են: Ամենահին հավերժության հեքիաթները պատմում էին, որ վորսերն ապրում էին Միփլորիսում ու թագավորական ընտանիքի ամրոցի պահապաններն էին:

«Իսկ Միփլորիսի արքայադուստրը քշել էր նրանց Երկիր-Կիս-Արթունից»,– սովորաբար մեղավորի պես պատմում էր տատիկը՝ յուրաքանչյուր բառից հետո լռության մեջ հնչող վշտի զգացումով: Արքայադուստրը դեռևս երեխա էր, երբ ցանկացել էր խաղալ նրանց քնած ձագուկների հետ: Նա քաշել էր մեկի պոչից, ու նա արթնանալով խուճապահար կծել էր արքայադստեր ձեռքը: Բոլորը, անշուշտ, հասկանում էին, որ մեղավորն աղջկա ծնողներն էին, որ չէին սովորեցրել նրան՝ երբեք, երբեք, երբեք քնած վորսի չարթնացնի: Բայց արքայադուստրն այնպես էր վախեցել, ու նրա ծնողներն այնպես էին զայրացել, որ իրենց խղճի հանգստության համար ստիպված էին մեղքն ուրիշի վրա գցել: Այնպես որ, արքունիքում որոշեցին վորսերին ընդմիշտ արտաքսել թագավորությունից: Թույլ տվեցին հատկապես դաժանությամբ աչքի ընկած տրոլներին թունավոր նետերով ու կրակով հալածել նրանց: Վորսերը, իհարկե, կարող էին հակահարված տալ, քանի որ ամբողջ Երկիր-Կիս-Արթունում չէր գտնվի մարտունակ մի գունդ, որ կհամարձակվեր դուրս գալ նրանց դեմ. այնքան էին ռազմիկները վախենում այդ կենդանիներից:

Բայց կռվելու փոխարեն վորսերը շրջվեցին ու փախան: Նրանք փախան ու անհետացան հեռավոր լեռներում, և ոչ ոք չէր պատկերացնում, թե երբևէ նորից հնարավոր կլինի նրանց գտնել: Նրանք այնքան հեռացան, որ վեց թագավորությունների երեխաները մեծացան ու կյանքում ոչ մի անգամ ոչ մի վորս չտեսան: Նրանք փախան այնքան հեռու, որ առասպել դարձան: Եվ միայն երբ սկսվեց Մարտ-Ան-Վերջը, Միփլորիսի արքայադուստրը հասկացավ իր սարսափելի սխալը: Երբ ստվերները, սպանելով Միբատալոս ռազմական թագավորության բոլոր զինվորներին, ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

թագավորությունը հողին հավասարեցրին, նրանք առաջ շարժվեցին՝ հարձակվելու Երկիր-Կիս-Արթունի մյուս մասի վրա: Երբ թվում էր, թե այլևս ամեն ինչ անհույս է, արքայադուստրը, իր սպիտակ նժույգը հեծած, դուրս եկավ պարիսպներից: Նա փոթորկի պես սուրաց դեպի լեռները, և այնտեղ, երբ անվերջ փնտրտուքից հետո քիչ էր մնում ընկնելով ճզմվեր հոգնությունից ընկած նժույգի տակ, վորսերը գտան նրան:

Երբ ստվերները դղրդոց լսեցին ու զգացին, որ հողը ցնցվում է, արդեն ուշ էր: Արքայադուստրն առաջնորդում էր աշխարհի ամենահզոր ռազմիկներին՝ վորսերին: Եվ հենց այդ ժամանակ էր, որ Գայլսիրտը վերադարձավ անտառներից: Գուցե այն պատճառով, որ Միամասը ոչնչացման վտանգի եզրին էր և ամենաշատը նրա կարիքն ուներ: «Կամ գուցե…,– սովորաբար շշնջում էր տատիկն Էլսայի ականջին գիշերները՝ ամպէակի մեջքին նստելիս,– գուցե ավելի ճիշտ, որովհետև արքայադուստրը, իր սխալը հասկանալով, ապացուցեց, որ բոլոր թագավորություններն էլ արժանի են փրկության»:

Մարտ-Ան-Վերջն այդ օրն ավարտվեց: Ստվերներին հետ քշեցին ծովից այն կողմ, իսկ Գայլսիրտն էլ նորից հեռացավ անտառների խորքերը: Բայց վորսերը մնացին ու մինչև օրս ծառայում են Միփլորիսում՝ որպես արքայադստեր անձնական թիկնապահներ՝ պաշտպանելով նրա ապարանքի դարպասները:

Էլսան հիմա ներքևից լսում է Բարեկամի խելագար հաչոցը: Հիշում է, որ տատիկն ասում էր՝ իբր նա հաչում է զվարճանալու համար: Էլսան, բնականաբար, մի քիչ կասկածում է, որ Բարեկամը հումորի զգացում ունի, բայց հիշում է, թե տատիկն ինչպես էր ասել, որ Բարեկամը կարիք չունի ինչ-որ մեկի հետ ապրելու, քանի որ տատիկն ինքն էլ ոչ մեկի հետ չի ապրում: Հետո Էլսան նշել էր, որ թերևս ճիշտ չէ ինչ-որ հսկայական շան հետ համեմատվելը: Էլսան հիմա հասկանում է, թե ինչու տատիկն աչքերը ոլորեց: Պիտի շուտ հասկացած լիներ: Հենց ամենասկզբից:

Որ սա ամենևին էլ շուն չէ:

Ոստիկաններից մեկը ձեռքին բանալիների կապոց է շուռումուռ տալիս: Էլսան լսում է, որ մուտքի դուռը բացվում է, ու Բարեկամի հաչոցի արանքում աստիճանների վրա լսվում են համախտանիշով տղայի ցատկերը: Նա միշտ է այդպես անում: Պարելով է անցնում կյանքի ճանապարհը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ոստիկանները տղային ու նրա մայրիկին իրենց բնակարան են մտցնում: Բրիտ-Մարին փոքրիկ քայլերով հաղթական հետուառաջ է անում իր աստիճանավանդակում: Էլսան ճաղերի արանքից ատում է նրան: Բարեկամը լռում է, մի կարճ ժամանակով ասես ռազմավարական նահանջի է դիմում՝ մինչև իրական բախումն արագ ուժ հավաքելու: Ոստիկանները, բանալիները զնգզնգացնելով, խոսում են, որ արդեն պատրաստ են հարձակման դեպքում հակահարված տալու: Հիմա, երբ Բարեկամը լուռ է, նրանց ձայներն ավելի ինքնավստահ են հնչում:

Էլսան լսում է, որ ուրիշ դուռ է բացվում, ապա լսում է Լենարտի ձայնը: Նա զգուշորեն հետաքրքրվում է, թե ինչ է կատարվում: Ոստիկանները բացատրում են, որ իրենք եկել են «կռվաշան մասին հոգ տանելու»: Լենարտը թեթևակի անհանգստացած է երևում: Հետո երևում է, որ նա իրականում չի իմանում՝ ինչ ասի: Եվ ասում է այն, ինչ միշտ է ասում. «Սուրճ ուզող կա՞: Մոդը հիմա սուրճ է դնում»: Սակայն նրան ընդհատում է Բրիտ-Մարին ու նյարդայնացած ասում, որ Լենարտը պիտի հասկանա, որ ոստիկանները սուրճ խմելուց շատ ավելի կարևոր գործեր ունեն: Ոստիկանները կարծես մի փոքր հուսախաբ են լինում: Էլսան տեսնում է, որ Լենարտը կամաց-կամաց աստիճաններով բարձրանում է: Մի պահ թվում է, թե ուզում է մնալ աստիճանավանդակի վրա, բայց հետո կարծես հասկանում է, որ մնալը հավանաբար հանգեցնելու է, որ իր սեփական սուրճը սառչի: Հետո նա կարծես որոշում է, որ աստիճանավանդակի վրա կատարվելիքի համար թերևս չարժի գնալ նման ռիսկի: Այնպես որ, նա անհետանում է իր բնակարանում:

Առաջին հաչոցն ընդմիջումից հետո կարճ ու ընդհատ է: Ասես Բարեկամը փորձարկում է ձայնալարերը: Հաջորդն այնքան բարձր է, որ շչակի նման ոռնոցը մի քանի հավերժություն խլացնում է Էլսայի ականջները: Երբ այն վերջապես դադարում է, կատաղի հարվածի թնդյուն է լսում, հետո՝ էլի, և այդպես շարունակ: Չորրորդից հետո է միայն Էլսան հասկանում, թե ինչ է կատարվում: Բարեկամը ներսի կողմից ամբողջ ուժով հարվածում է դռանը:

Ոստիկանները փորձում են ներս մտնել: Բարեկամը փորձում է դուրս գալ: Եթե տատիկն այդտեղ լիներ, հավանաբար ծխախոտ կվառեր ու աչքերը ոլորելով՝ կասեր. «Չէէէ՛, ոնց որ թե ինչ-որ մեկի համար էս ամենը վատ է վերջանալու»: Հեգնանքով, անշուշտ, չնայած տատիկն իրականում

թվայնացրել է 1915.info կայքը

չէր հասկանում՝ հեգնանքն ինչ է: Էլսան լսում է, որ ոստիկաններից մեկը նորից խոսում է հեռախոսով: Թե ինչ են խոսում, չի լսվում, բայց ականջին են հասնում «սարսափազդու» և «ագրեսիվ» բառերը: Նա ճաղերի արանքով ներքև է նայում ու տեսնում, որ ոստիկանները Բարեկամի դռնից մի քանի մետրի վրա են կանգնած՝ ներսից Բարեկամի հարվածների ուժեղանալուն համընթաց ավելի ու ավելի նվազող ինքնավստահությամբ:

Էլսան տեսնում է, որ ևս երկու ոստիկան են հայտնվում: Մեկը վզափոկով հովվաշուն է բռնել: Երևում է, որ հովվաշունն առանձնապես հավանություն չի տալիս այն արարածի մոտ մտնելու գաղափարին, որն անձամբ հիմա փորձում է դուրս գալ իր բնակարանից: Շունը ոստիկանին է նայում այնպես, ինչպես Էլսան էր նայում տատիկին, երբ նա փորձում էր միացնել մայրիկի միկրոալիքային վառարանը:

— Որսորդի՛ն բերեք,– լսում է Էլսան կանաչ աչքերով կին ոստիկանի անհույս հոգոցը:

— Ես էլ հենց այդ էի ասում: Հենց ա՛յդ էի ասում,– անհամբեր բղավում է Բրիտ-Մարին:

Կանաչ աչքերը չեն պատասխանում: Բայց մի հայացք են գցում Բրիտ-Մարիի վրա, որ ստիպում է նրան ձայնը կտրել:

Բարեկամը մի վերջին, բոլորովին չլսված մռնչյուն է արձակում ու նորից լռում է: Աստիճանների վրա մի պահ անասելի աղմուկ է բարձրանում, ապա նորից լսվում է մուտքի դռան ձայնը: Պարզ է, որ ոստիկանները որոշել են բնակարանի սարսափազդու բնակչից մի քիչ հեռու սպասել մինչև որսորդի գալը: Էլսան պատուհանից տեսնում է՝ ինչպես են նրանք անհետանում աստիճանավանդակից: Ոստիկանների քայլվածքն ակնհայտորեն մարմնի լեզվով մատնում է, որ նրանք որոշակիորեն սուրճ են երազում: Հովվաշան քայլվածքն ակնհայտորեն մարմնի լեզվով մատնում է վաղաժամ թոշակի անցնելու ցանկությունը:

Հանկարծ այնպիսի լռություն է իջնում, որ Բրիտ-Մարիի մանրաքայլ ոտնաձայներն արձագանքում են աստիճանահարթակով մեկ:

— Անասո՛ւն, գարշելի գազա՛ն,– ինքն իրեն բարձրաձայն ֆշշացնում է Բրիտ-Մարին, ու մի վայրկյանից Էլսան լսում է նրա ու Քենթի բնակարանի դռան շրխկոցը:

Էլսան մնում է ամբիվալենտ վիճակում կանգնած: «Ամբիվալենտ» բառը ծանոթ է բառարանից: Պատուհանից տեսնում է ոստիկաններին ու հետո,

թվայնացրել է 1915.info կայքը

հետադարձ հայացք գցելով եղածին, Էլսան չի կարողանում բացատրել, թե ինչու այդպես արեց: Բայց Միամասի ոչ մի իսկական ասպետ չէր կարող թույլ տալ, որ սպանեն տատիկի ընկերոջը՝ առանց գոնե մի ինարով օգնելու:

Այնպես որ, նա կամացուկ իջնում է աստիճաններով: Հատկապես զգուշորեն է անցնում Բրիտ-Մարիի ու Քենթի դռան մոտով՝ կանգ առնելով հարկերի արանքում՝ լսելու, որ ներքևում ոստիկանները հանկարծ մուտքի դուռը բացելիս չլինեն: Վերջապես կանգ է առնում Բարեկամի բնակարանի առջև ու զգուշորեն բացում է դռան վրայի փոստարկղի կափարիչը: Ներսում մութ է, բայց լսվում է Բարեկամի խռպոտ շնչառությունը:

— Լսո՞ւմ ես, ես եմ,– շշնջում է Էլսան:

Ինքն ուղղակի չի պատկերացնում՝ ինչից սկսի ասելիքը: Բարեկամը ոչինչ չի պատասխանում: Բայց, համենայնդեպս, դուռն այլևս ներսից չի հրում: Էլսան այդքանն արդեն բավարար է համարում հաղորդակցվելու համար:

— Ես եմ: Որ քեզ «Դայմ» էի բերում:

Բարեկամը չի պատասխանում: Բայց լսվում է, որ շնչառությունն ավելի է դանդաղում: Բառերն ասես իրենք են դուրս հորդում Էլսայի բերանից:

— Լսի՛ր, չնայած գուցե մեգատարօրինակ է հնչում, բայց, կարծում եմ՝ տատիկս կուզենար, որ դու մի կերպ դուրս պրծնեիր էստեղից: Հասկանո՞ւմ ես: Եթե, ասենք, հետնամուտք ունես կամ նման մի բան: Թե չէ դրանք քեզ կսպանեն: Դե, գուցե մեգատարօրինակ է հնչում, բայց, ասենք, իրոք մեգատարօրինակ է, որ լրիվ մենակ ես ապրում էս բնակարանում... Եթե հասկանում ես...

Երբ բոլոր բառերը դուրս են հորդում նրա միջից, Էլսան նոր միայն գիտակցում է, որ գաղտնալեզվով էր խոսել: «Լավ, հիմա կպարզվի: Որովհետև եթե դռան մյուս կողմում շուն է, ոչինչ հասկացած չի լինի: Բայց եթե հասկացած լինի...,– մտածում է Էլսան,– ուրեմն ուրիշ արարած է»: Մի ձայն է լսվում. ասես մեքենայի անվադողի չափ հսկայական մի թաթ շատ արագ չանգռում է դռան ներսի կողմից:

— Հուսով եմ՝ հասկացար,– շշնջում է Էլսան գաղտնալեզվով:

Նա չի լսում՝ ինչպես է իր հետևում մի դուռ բացվում: Միայն փոստարկղի ճեղքից զգում է, որ Բարեկամը դռնից հետ է քաշվում: Կարծես պատրաստվելիս լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան գիտակցում է, որ իր հետևում մեկը կանգնած է: Բայց դեռ չի տեսնում. միայն զգում է, ինչպես զգում են ուրվականի ներկայությունը: Կամ էլ…

— Զգո՛ւյշ,– մռնչում է մի ձայն:

Էլսան նետվում է պատի կողմը, երբ Հրեշը, բանալին ձեռքին բռնած, անձայն սահում է կողքով: Իսկ մի վայրկյանից հայտնվում է Հրեշի ու Բարեկամի արանքում: Եվ իրոք, աշխարհի ամենամեծ վորսն ու աշխարհի ամենամեծ հրեշը, որ Էլսան երբևէ տեսել էր կյանքում: Նա այնպիսի զգացողություն ուներ, ասես մեկը կանգնած էր իր թոքերի վրա: Մի պահ ուզում էր ճչալ, բայց ձայնը դուրս չէր գալիս: Դրանից հետո ամեն ինչ սուր ընթացք է ստանում:

Նրանք լսում են, որ ներքևում բացվում է մուտքի դուռը: Ոստիկանները խոսում են: Մեկն էլ կա, որ ըստ Էլսայի պատկերացման՝ պիտի որ որսորդը լինի: Էլսան վստահ չէ, որ ինքն էր տնօրինում իր շարժումները, և որ ինքը չէր հայտնվել ինչ-որ կախարդական շրջապտույտում, որը, ըստ էության, այնքան էլ ահավոր, անիրական բան չէր՝ նկատի առնելով, որ իսկապես ավելի պակաս անիրական էր, քան հսկայական վորսի հանդիպելը: Իսկ երբ իր հետևից փակվում է դուռը, հայտնվում է Հրեշի բնակարանում:

Օճառի հոտ է գալիս:

թվայնացրել է 1915.info կայքը

10

ԱԼԿՈԳԵԼ

Ոստիկանները լինգը խրում են դռան շրջանակի արանքը, ու տեղի տվող դռան ձայնը տարածվում է աստիճանավանդակով մեկ:

Էլսան կանգնած է Հրեշի բնակարանի նախասենյակում ու նայում է դռան դիտանցքից: Կամ կանգնած է ու կանգնած չէ, քանի որ ոտքերը փաստացի գետնին չեն հասնում, որովհետև վորսը նստել է դռան մոտի գորգին, այնպես որ Էլսան հայտնվել է նրա հետույքի ու դռան ներսի կողմի արանքում սեղմված: Վորսը սրտնեղած է թվում: Ոչ թե զայրացած, այլ միայն սրտնեղած: Ինչպես մարդը, որի հյութի բաժակի մեջ կրետ է ընկել: Էլսան զգուշորեն շրջվում է ու գաղտնալեզվով շշնջում.

— Չհաչե՛ս, խնդրում եմ: Որովհետև Բրիտ-Մարին կգա... ոստիկաններն էլ... դե գիտես...

Էլսան գիտակցում է, որ ավելի շատ խուճապի մեջ է դռնից այն կողմ գտնվող ոստիկանների, քան իր հետ նույն նախասենյակում գտնվող արարածների պատճառով: Դա, իհարկե, առանձնապես խելամիտ չի թվում: Ու թերևս այդպես էլ կա: Բայց Էլսան իր համար որոշել էր, որ այս պահին ավելի շուտ տատիկի ընկերներին է վստահում, քան Բրիտ-Մարիի:

Վորսը շրջում է իր՝ կոնվեկցիոն վառարանի մեծության գլուխը ու լուրջ դեմքով նրան է նայում:

— Քեզ կարող են սպանել,– շշնջում է Էլսան:

Վորսն ամենևին համոզված չի երևում, թե ինքն է լուրջ խնդիրներ ունենալու, եթե Էլսան դուռը բացի ու իրեն դուրս թողնի՝ ոստիկաններին դիմավորելու, ինչը, համենայնդեպս, կարելի է եզրակացնել նրա հայացքից: Բայց հետույքն ամեն դեպքում մի փոքր դեպի նախասենյակ է

թվայնացրել է 1915.info կայքը

տեղաշարժում, այնպես որ Էլսան ազատվում է ու կարողանում է վերջապես գետնին կանգնել: Վորսը լռում է: Եվ թվում է, թե ավելի շուտ հանուն Էլսայի է լռում, քան իր համար:

Ոստիկաններն աստիճանահարթակի վրա դուռը համարյա թե տեղահան են արել: Էլսան լսում է՝ ինչպես են իրար «պատրաստ լինելու» հրահանգը փոխանցում: Էլսան նախասենյակում, ապա հյուրասենյակում նայում է շուրջը: Բնակարանը բավական փոքր է, բայց կյանքում իր տեսած ամենալավ հարդարվածը: Կահույք գրեթե չկար, եղածներն էլ կանոնավոր ուղիղ շարված էին, ու թվում էր՝ խառակիրիով կահույքասպանություն կգործեն, եթե հանկարծ մի փոշեհատիկ իջնի իրենց վրա: Էլսան գիտի, քանի որ մի տարի առաջ իր կյանքում սամուրայական շրջան էր:

Հրեշն անհետանում է լոգարանում: Ներսից բավականին երկար ժամանակ ջրի հոսքի ձայն է լսվում, մինչև նա նորից դուրս է գալիս: Ապա փոքրիկ սրբիչով խնամքով մաքրում է ձեռքերը ու կանոնավոր ծալելով՝ դնում լվացքի զամբյուղի մեջ: Դռնից դուրս գալիս ստիպված խոնարհում է գլուխը: Էլսան իրեն զգում է ինչպես Ոդիսևսը կիկլոպ Պոլիփեմոսի մոտ, քանի որ հենց վերջերս էր կարդացել Ոդիսևսի արկածների մասին: Չնայած, իհարկե, Պոլիփեմոսը ձեռքերը Հրեշի պես մանրակրկիտ չէր լվանում: Դե, պարզ է, ինքն էլ ամբարտավան ու ինքնահավան չէ, ոնց որ Ոդիսևսն է նկարագրված գրքում: Բնականաբար: Բայց ընդհանուր առումով, ինչո՞ւ չէ, հենց Ոդիսևսի օրին է:

Հրեշը նրան է նայում: Բարկացած չէ: Ավելի շուտ՝ զարմացած, մի քիչ էլ վախեցած է: Երևի հենց այդ է պատճառը, որ Էլսան համարձակվում է ուղիղ հարց տալ.

— Ինչո՞ւ է տատիկս քեզ նամակ գրել:

Սովորական լեզվով է հարցնում, որովհետև չի ուզում նրա հետ գաղտնալեզվով խոսել՝ ինքն էլ կարգին չհասկանալով, թե ինչու: Հրեշի՝ սև մազերով ծածկված ունքերն ավելի են իջնում, այնպես որ մորուքի ու սպիի տակից դժվար է դեմքի արտահայտությունը տեսնել: Նա ոտաբոբիկ է, սակայն ոտքերին երկու կապույտ բախիլ է հագել, ինչպիսիք ատամնաբույժի մոտ են հագնում: Նրա ճտքակոշիկները կոկիկ դրված են ճիշտ դռան կողքին՝ դռան մոտի ուղեգորգի հետ մի գծի վրա: Նա երկու կապույտ տոպրակ է մեկնում Էլսային, բայց ձեռքն արագ հետ է քաշում, երբ

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան բռնում է տոպրակի ծայրից. ասես վախենում է հանկարծ իրեն դիպչի: Էլսան կռանում է ու տոպրակները քաշում իր ցեխոտ կոշիկներին՝ նկատելով, որ արդեն հասցրել է մի քիչ ցեխոտել գորգի կողքն ու երկու ձնախառն հետք թողնել փայտե մանրահատակին:

Հրեշը կռանում է ու նախանձելի ճարպկությամբ չորացնում հատակը մի փոքրիկ սրբիչով: Հետո այդ հատվածում փոքրիկ շշից ախտահանող հեղուկ է ցանում, որից Էլսայի աչքերը մռմռում են, ու չորացնում է ևս մեկ փոքրիկ, սպիտակ սրբիչով: Հետո բարձրանում է, սրբիչները կոկիկ դնում լվացքի զամբյուղը, իսկ ախտահանող հեղուկի շիշը՝ դարակին՝ պատի երկայնքով: Հետո անհանգստացած՝ երկար նայում է վորսին: Այն փռվել էր գետնին՝ տարածվելով ամբողջ նախասենյակով մեկ:

Թվում է, թե Հրեշի մոտ շուտով թոքերի գերօդափոխություն կսկսվի: Նա անհետանում է լոգարանում ու կրկին վերադառնալով՝ շատ խնամքով, ոչ մի անգամ չդիպչելով վորսին, շուրջը խիտ շարքով սրբիչներ է փռում: Հետո մտնում է լոգարան ու ձեռքերն այնքան ուժեղ է լվանում ջրի ուժեղ շիթի տակ, որ լվացարանը թրթռում է. ասես զանգող հեռախոս լինի մեջն ընկած: Երբ դուրս է գալիս, ձեռքին շիշ է՝ մանրէասպան ալկոգելով: Էլսային ծանոթ է շիշը, քանի որ ամեն անգամ ախտահանում էր ձեռքերը, երբ վերջերս այցելում էր տատիկին: Էլսան Հրեշի թևի տակից հասցնում է տեսնել, որ ներսում այնքան ալկոգելի շշեր են դրված, ինչքան մայրիկի մոտ ամբողջ հիվանդանոցում երևի չլինի:

Հրեշն ահավոր անհանգստացած է երևում: Նա մի կողմ է դնում շիշն ու այնպես է շփում մատներն ալկոգելով, կարծես հավելյալ մաշկի մի անտեսանելի շերտ ունի, որը փորձում է քերելով կլպել: Հետո ցուցադրաբար Էլսայի առջև բարձրացնում է բեռնատարի թափքի մեծության ափերն ու գոհունակությամբ գլխով է անում: Էլսան նրան է մեկնում թենիսի մեծության իր ափերը: Նա ալկոգել է լցնում Էլսայի ափերին՝ փորձելով քողարկել զզվանքը: Էլսան արագ շփում է ալկոգելը ձեռքերին ու հետո ավելցուկը բնազդաբար մաքրում՝ տաբատին քսելով: Հրեշը, թվում է, պատրաստ է փաթաթվել գորգի մեջ ու ճչալով լաց լինել:

Որպես փոխհատուցում՝ նա նորից է ալկոգել լցնում ձեռքերին ու երկարերկար տրորում: Հետո տեսնում է, որ Էլսան դիպել է ճտքակոշիկներից մեկին, և այն մի փոքր թեք է մյուսի համեմատ: Նա կռանում և ուղղում է այն: Հետո նորից է ալկոգել քսում:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան գլուխը թեք նրան է նայում:

— Դու կպչուն, սևեռուն մտքե՞ր ունես:

Հրեշը չի պատասխանում: Ու ավելի ուժգին է տրորում ձեռքերը. կարծես թե պատրաստվում է կրակ ստանալ:

— Վիքիպեդիայում եմ կարդացել դրա մասին,– ասում է Էլսան:

Հրեշի կրծքավանդակը ծանր շնչառությունից հուսահատ բարձրանում-իջնում է: Նա նորից անհետանում է լոգարանում, ու նորից լսվում է ջրի ուժեղ հոսքի ձայնը:

— Հայրիկս էլ սևեռուն մտքեր ունի,– բղավում է Էլսան նրա հետևից ու անմիջապես ավելացնում,– չնայած ամեն դեպքում քեզ պես չէ: Քեզ ոնց որ լուրջ տարել է:

Հետո է միայն Էլսան գիտակցում, որ իր ասածը կարող է վիրավորել: Ինքը վիրավորելու միտք չուներ: Ինքը, իրոք, նպատակ չուներ իր հոր խղճուկ, սիրողական, սևեռուն մտքերը համեմատել Հրեշի բացահայտ պրոֆեսիոնալ, սևեռուն մտքերի հետ:

Հրեշը նորից նախասենյակ է գալիս: Էլսան խրախուսաբար ժպտում է: Վորսն աչքերն է ոլորում ու կողքի վրա պառկելով՝ սկսում է հոտոտել Էլսայի ուսապարկը՝ համոզված, որ մեջը պիտի «Դայմ» լինի: Հրեշը կարծես փորձում է ինչ-որ ավելի բարեհաջող տեղ պատսպարվել: Ու այդպես երեքով մնում են իրար կողք կողքի. մի վորս, մի երեխա ու մի հրեշ՝ մաքրության և կարգուկանոնի խիստ պահանջով, որ ակնհայտորեն բոլորովին համատեղելի չէ վորսի ու երեխայի հետ:

Դռան մյուս կողմում ոստիկաններն ու որսորդը վերջապես մտնում են կյանքի համար վտանգ ներկայացնող կռվաշան բնակարանն ու հայտնաբերում են կռվաշան ակնհայտ բացակայությունը: Բոլորն ուղղակի գժվում են: Նույնիսկ հովվաշունն է հաչում: Այսինքն՝ թերևս հենց բացակայությունը հայտնաբերելով:

Էլսան նայում է վորսին, հետո՝ Հրեշին:

— Բայց որտեղի՞ց քեզ էնտեղի բնակարանի բանալին,– հարցնում է Հրեշին:

Հրեշը, թվում է, ավելի դժվարությամբ է շնչում:

— Դու նամակը բերեցիր: Տատիկից: Բանալին ծրարի մեջ էր,– խուլ ձայնով պատասխանում է նա:

Էլսան մյուս կողմ է թեքում գլուխը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տատիկը գրել էր, որ դու նրան խնամե՞ս:

Հրեշը դժկամորեն գլխով է անում:

— Գրել էր՝ պաշտպանի՛ր ամրոցը:

Էլսան գլխով է անում: Նրանց հայացքները մի ակնթարթ հանդիպում են: Հրեշի միակ ցանկությունն ակնհայտորեն այն էր, որ բոլորը ցրվեն իրենց տներով ու ցեխոտեն իրենց սեփական նախասենյակները: Էլսան նայում է վորսին:

— Ինչո՞ւ է սա գիշերներն էդքան շատ ոռնում,– հարցնում է նա Հրեշին:

Երևում է՝ վորսին դուր չի գալիս, որ իր մասին խոսում են ցուցական դերանվան երրորդ դեմքով: Հատկապես, որ ասում են «սա», չնայած նա առանձնապես տեղյակ չէ քերականական նման նրբություններից: Երևում է՝ Հրեշն արդեն սկսել է հոգնել բոլոր տեսակի հարցերից:

— Վիշտ ունի,– ասում է նա՝ վորսին նայելով, ու նորից սկսում է ձեռքերն իրար շփել, չնայած ձեռքերին քսելու նյութը վաղուց վերջացել էր:

— Ի՞նչ վիշտ,– հարցնում է Էլսան:

Հրեշի հայացքը դեռ իր ափերին է գամված:

— Քո տատիկի համար է տխրում:

Էլսան նայում է վորսին: Վորսը նրան է նայում սև, տխուր աչքերով: Էլսան հետո է գիտակցում, որ այդ պահից սկսեց իսկապես շատ սիրել նրան: Ապա նայում է Հրեշին:

— Ինչո՞ւ է տատիկս քեզ նամակ գրել:

Հրեշն ավելի ուժգին է տրորում ձեռքերը:

— Հին ընկերություն,– ինչում է մազերի ու մորուքի միջև ընկած սև խոռոչից:

— Իսկ ի՞նչ է գրել,– իսկույն ուզում է իմանալ Էլսան՝ մի կես քայլ դուրս գալով ուղեգորգի վրայից, սակայն նկատելով, որ Հրեշը խուճապային խանգարման հետ մեկտեղ հրեշ դառնալու հստակ նշաններ է դրսևորում, հարգալից հետ է դնում ոտքը: Խուճապային խանգարման մասին բավական տեղեկություն կա Վիքիպեդիայում:

— Կներես,– մրմնջում է Էլսան:

Հրեշը երախտապարտ գլխով է անում:

— Գրել էր՝ կներես,– ասում է նա ու ավելի խորն անհետանում մազերի ու մորուքի մեջ:

— Իսկ ինչո՞ւ է քեզնից ներողություն խնդրում,– իր էշն է քշում Էլսան, չնայած ոչ միտումնավոր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուղղակի զգում է, որ ինչ-որ բանից տեղյակ չէ, իսկ Էլսան ահավոր չի սիրում, երբ ինչ-որ բանից տեղյակ չի լինում:

— Քո գործը չէ,– խուլ ձայնով ասում է Հրեշը:

— Ի՛մ տատիկն է,– պնդում է Էլսան:

— «Կներեսն» ինձ էր ասում,– ասում է Հրեշը:

Էլսան ձեռքերն իրար է ագուցում:

— Touché,– ի վերջո ընդունում է նա:

Հրեշը հայացքը չի բարձրացնում: Միայն շրջվում ու նորից գնում է լոգարան: Նորից ջուր է հոսում: Նորից ալկոգել: Նորից շփում է ձեռքերը: Վորսը բարձրացնում է Էլսայի ուսապարկն ու մռութը խոթում մեջը: Հետո հուսահատ գռմռում է, երբ պարզում է, որ ուսապարկում շոկոլադի հետ առնչվող պարագաներն ակնհայտ բացակայում են:

Էլսան, աչքերը կկոցելով, նայում է Հրեշին ու խիստ հարցաքննող հնչերանգով ասում.

— Դու մեր գաղտնալեզվով խոսեցիր, երբ նամակն էի բերել քեզ: Դու ասացիր՝ հիմար աղջիկ: Տատի՞կն է մեր գաղտնի լեզուն քեզ սովորեցրել:

Այդ ժամանակ Հրեշն առաջին անգամ ուղիղ նայում է նրան՝ զարմանքից աչքերը չռած: Էլսան էլ բերանը բաց նրան է նայում:

— Ինքը չի ինձ սովորեցրել: Ես եմ սովորեցրել նրան,– գաղտնալեզվով ասում է Հրեշը:

Էլսայի շունչը կտրվում է:

— Դու…Դո՞ւ ես…

Օդը չէր հերիքում: Գլխում այնպիսի շիլաշփոթ էր, ինչպես այն ժամանակ, երբ Kia-ում քնել էր, ու բենզալցակայան հասնելիս մայրիկը կտրուկ արթնացրեց, իսկ Յեորգը, ուրախությունից իրեն կորցրած, գոռում էր. «Ո՞վ է սպիտակուցային սալիկ ուզում»:

Երբ աստիճանահարթակից լսում է՝ ինչպես են ոստիկանները շրխկոցով փակում վորսի բնակարանի դռան մնացորդներն ու Բրիտ-Մարիի բուռն բողոքների ներքո դուրս գալիս մուտքի դռնից, Էլսան նայում է ուղիղ Հրեշի աչքերին՝ այնքան սև, որ աչքի սպիտակուցն ասես գրատախտակի կավիճ լինի:

— Դու… Մարդագայլուկն ես:

Ու խորը շնչելով՝ շշնջում է գաղտնի լեզվով.

— Դու Գայլսիրտն ես:

Հրեշը տխուր գլխով է անում:

թվայնացրել է 1915.info կայքը

11

ՊՐՈՏԵԻՆԱՅԻՆ ՍԱԼԻԿՆԵՐԸ

Տատիկի պատմությունները Միամասի մասին հիմնականում, իսկապես, դրամատիկ էին: Պատերազմներ ու հալածանքներ, խարդավանքներ և այլն, որովհետև տատիկն այդպիսի բուռն իրադարձություններով պատմություններ էր սիրում: Դրանք էլ հազվադեպ էին պատմում Երկիր-Կիս-Արթունի առօրյայի մասին: Այնպես որ, Էլսային գրեթե ոչինչ հայտնի չէր՝ ինչպիսին էին հրեշների ու վորսերի հարաբերությունները, երբ բանակ առաջնորդելու կամ ստվերների դեմ կյանքի ու մահու կռիվ տալու հարց չունեին:

Պարզվում է, որ իրականում իսկի էլ լավ չէին:

Սկսվում է նրանից, որ վորսի համբերության բաժակը լցվում է, երբ Հրեշը փորձում է նրա տակի հատակը լվանալ, երբ վորսը դեռ պառկած է, և քանի որ Հրեշի համար անտանելի տհաճ էր վորսին դիպչելը, նա հանկարծ պատահմամբ ալկոգել է ցողում Վորսի աչքին: Էլսան ստիպված խառնվում է, որպեսզի նրանց տարաձայնությունը լայնամասշտաբ պատերազմի չվերածվի: Իսկ երբ Հրեշը, ծայրահեղ նեղսրտելով, պնդում է, որ Էլսան վորսի բոլոր թաթերին այդ կապույտ տոպրակներից հագցնի, վորսը հասկացնում է, որ ամեն ինչ չափ ու սահման ունի: Վերջապես, երբ դրսում մթնում է, և Էլսան համոզվում է, որ մուտքի մոտ այլևս ոստիկան չկա, երկուսին էլ դուրս է քշում ձյան մեջ, որ ինքն էլ կարողանա հանգիստ ու խաղաղ մտածել, թե ինչ կարելի է անել տվյալ իրավիճակում: Ինքը, իհարկե, կարող էր անհանգստանալ, որ Բրիտ-Մարին իրենց կտեսնի պատշգամբից, սակայն ժամը ուղիղ 18:00-ն է, իսկ այդ ժամանակ

թվայնացրել է 1915.info կայքը

Բրիտ-Մարին ու Քենթը ճաշում են, որովհետև նրանց ասելով՝ միայն բարբարոսներն են այլ ժամի ճաշում: Եթե հանկարծ Քենթի հեռախոսը զանգում է ժամը 18:00-ի ու 18:30-ի ընթացքում, Բրիտ-Մարին ցնցված ձեռքից գցում է դանակ-պատառաքաղն ու բացականչում. «Ո՞վ կարող է այս ժամին զանգել, Քե՛նթ: Չէ՞ որ ճաշի ժամ է»:

Էլսան դունչը խցկում է գրիֆինդորցիների շարֆի մեջ ու փորձում է մտքերը կարգի բերել: Վորսը դեռ վիրավորված է երևում կապույտ տոպրակների պատճառով ու հետ-հետ գնալով՝ մտնում է թփերի մեջ, մինչև որ միայն քիթն է դուրս ցցված մնում ճյուղերի միջից: Ու թաքստոցից դժգոհ հայացքով հետևում է Էլսային: Ռոպե անց Հրեշը հոգոց է հանում ու բազմանշանակ ժեստ է անում Էլսային:

— Կեղտոտում է,– քրթմնջում է Հրեշը՝ ուրիշ կողմ նայելով:

— Կներես,– Էլսան ամաչելով ասում է վորսին ու շրջվում է:

Նրանք նորից սովորական լեզվով են խոսում, որովհետև Էլսայի ներսում ինչ-որ բան ճմլվում է, երբ գաղտնալեզվով է խոսում տատիկից բացի մեկ ուրիշի հետ: Հրեշն էլ, ինչպես երևում է, առհասարակ որևէ լեզվով խոսելու ցանկություն չունի: Վորսն այնպիսի տեսքով է նայում, ինչպես մեկը, որին խանգարում են բնական կարիքները հոգալու ընթացքում: Հետո մոտ մեկ ռոպե է տևում, մինչև որ նրանք հասկանում են, որ անհարմար է կանգնած մնալ ու Էլսային նայել: Այդ պահին հանկարծ Էլսայի մտքով անցնում է, որ խեղճ վորսը, փաստացի մի քանի օր է, չէր կարող իր գործերն արած լինել, եթե, իհարկե, որևէ բան չէր արել բնակարանում: Էլսան դա բացառում էր, քանի որ չէր պատկերացնում, թե նա ինչպես պիտի օգտվեր զուգարանակոնքից, նաև բացարձակ համոզված էր, որ ոչ մի դեպքում չէր կեղտոտի հատակը, քանի որ նման բան վորսն իրեն պարզապես թույլ չէր տա: Այնպես որ, Էլսան ենթադրում է, որ վորսերի գերունակությունն այն է, որ նրանք սարսափելի դիմացկուն են: Էլսան շրջվում է դեպի Հրեշը: Նա ձեռքերն է տրորում ու շվարած նայում ձյան վրա թողած ոտնահետքերին. ասես կուզենար արդուկել ու հարթեցնել ձյունը:

— Դու զինվո՞ր ես,– ասում է Էլսան՝ նրա տաբատը մատնացույց անելով:

Հրեշը տարուբերում է գլուխը: Էլսան ուշադիր նրա տաբատին է նայում, քանի որ լուրերով էր այդ տեսակ տաբատ տեսել:

— Զինվորական տաբատ է:

Հրեշը գլխով է անում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչո՞ւ ես զինվորական տաբատ հանգնում, եթե զինվոր չես,– Էլսան չի դադարեցնում հարցաքննությունը:

— Հին տաբատ է,– կարճ պատասխանում է Հրեշը:

— Իսկ սպին ինչի՞ց է եղել,– հարցնում է Էլսան՝ նրա դեմքը ցույց տալով:

— Փորձանք,– ավելի կարճ պատասխանում է Հրեշը:

— No shit, Sherlock: Իսկ ես, պատկերացրու, կարծում էի՝ հատուկ ես ինքդ քեզ նախշել,– պատասխանում է Էլսան շատ ավելի ծաղրական ինչերանգով, քան կուզենար:

No shit, Sherlock-ը անգլերենով նրա սիրած արտահայտությունն է: Այն ոնց որ ավելի հեգնական է հնչում, քան պարզապես «չէ, հա՛»-ն: Հայրիկը միշտ ասում է, որ կարիք չկա անգլերեն արտահայտություններ գործածել, եթե քո սեփական լեզվում համարժեքը կա, բայց Էլսան չի կարծում, որ տվյալ դեպքում դրանք իսկապես համարժեք են: Բայց ինքը, իհարկե, ծաղրելու միտք չուներ:

— Ես հեգնելու նպատակ չունեմ: Ուղղակի ուզում էի իմանալ, թե ինչ փորձանք էր,– շշնջում է նա:

Հրեշը հայացքը չի բարձրացնում:

— Սովորական փորձանք,– մռթմռթում է նա:

— Չէ, չէ՛ մի, սովորական: Շնորհակալությո՛ւն ինֆոյի համար,– ասում է Էլսան՝ շատ ավելի սարկաստիկ, քան կուզենար:

Հետո հառաչում է և՛ Հրեշի, և՛ իր համար: Հրեշն անհետանում է բաճկոնի հսկայական գլխանոցի տակ:

— Ուշ է: Պետք է քնել:

Էլսան հասկանում է, որ ասածն իրեն է վերաբերում, ոչ թե Հրեշին: Ապա մատը տնկում է վորսի վրա.

— Սա պիտի էս գիշեր մոտդ քնի:

Հրեշն այնպես է նրան նայում, ասես իրեն խնդրում են մերկ թավալվել թքի մեջ ու հետո մթի մեջ վազվզել նամականիշների գործարանով մեկ: Գուցե ոչ ճշգրիտ այդպես: Բայց մոտավորապես նման մի բան: Նա թափ է տալիս գլուխը, ու գլխանոցը ծածանվում է առագաստի պես:

— Էնտեղ չքնե՛լ: Չի՛ կարելի: Էնտեղ չքնե՛լ: Չի՛ կարելի: Չի՛ կարելի:

Էլսան, ձեռքերը կոնքերին դրած, կանգնել է՝ հայացքը հառած նրան:

— Չէ՞: Ու որտե՞ղ պիտի քո կարծիքով էս խեղճը քնի:

Հրեշն ավելի խորն է սուզվում գլխանոցի մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մատնացույց է անում Էլսային: Էլսան փնչացնում է:

— Մայրիկն իսկի բու չի թողնում պահեմ: Պատկերացրու՝ ոնց կգժվի, եթե ՍՐԱ հետ տուն մտնեմ:

Բուռն քննարկումների ընթացքում թփերի միջից նեղացած տեսքով հայտնվում է վորսը: Էլսան արդարանալով կոկորդն է մաքրում:

— Կներես: ՍՐԱՆ ասելով՝ ոչ մի վատ բան նկատի չունեի:

Վորսը, թվում է, ուզում է քրթմնջալ՝ վստահ եմ, որ նկատի չունեիր: Հրեշն ավելի ու ավելի արագ է շփում ձեռքերն ու խուճապահար տեսքով ներքև նայելով՝ ֆշշացնում է.

— Մորթուն կեղտ է կպել: Մորթու վրա կեղտ կա: Կե՛ղտ կա:

Էլսան նայում է վորսին, ապա՝ Հրեշին: Ապա՝ վորսին ու նկատում է մորթու վրայի կեղտը: Հետո աչքերն է ոլորում:

— Շատ լավ, նրա մոտ քնել չես կարող, որովհետև նրա սիրտն ուղղակի կճաքի: Ուրիշ բան կմտածենք…,– Էլսան հոգոց հանելով նայում է վորսին:

Հրեշը ոչինչ չի ասում: Բայց ձեռքերն իրար շփելու արագությունը մի փոքր դանդաղում է: Վորսը նստում է ու հետույքը ձյան վրա հետուառաջ է քսում, որ կեղտը մաքրի: Հրեշը շրջվում է այնպիսի տեսքով, ասես փորձում է անտեսանելի ռետինով իր ուղեղից ջնջել անցանկալի հիշողությունը:

Էլսան մի պահ երկմտում է: Հետո գնում է նրա հետևից:

— Տատիկս նամակում ի՞նչ է գրել,– հարցնում է նա Հրեշին:

Լսվում է Հրեշի ծանր շնչառությունը գլխանոցի տակից:

— Գրել՝ կներես,– ասում է նա՝ առանց շրջվելու:

— Իսկ ուրի՞շ: Շատ երկար նամակ էր,– համառում է Էլսան:

Հրեշը հոգոց է հանում, տարուբերում գլուխն ու գլխով դռան կողմը ցույց տալիս:

— Արդեն ուշ: Քնե՛լ:

Էլսան գլուխը թափ է տալիս:

— Մինչև չպատմես, չեմ գնա:

Հրեշը շրջվում է նրա կողմն ու նայում ահավոր հոգնած մարդու հայացքով, որին արթուն են պահում՝ ժամանակ առ ժամանակ դեմքին յոգուրտով լի բարձի երես խփելով կամ նման մի բան: Նա բարձրացնում է հայացքը, իջեցնում ունքերն ու սևեռուն նայում Էլսային. կարծես ծանրութեթև է անում, թե որքան հեռու կկարողանա նրան շպրտել:

— Գրել է՝ պաշտպանել ամրոցը,– գռմռում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան մի քայլ է անում դեպի նա՝ ցույց տալու համար, որ չի վախենում նրանից: Ավելի ճիշտ, ինքն իրեն ցույց տալու, քանի որ համոզված է, որ Հրեշի համար առանձնապես նշանակություն չունի:

— Է՞լ ինչ:

Նա կուչ է գալիս գլխանոցի տակ ու քայլում է ձյան միջով:

— Պաշտպանել քեզ: Պաշտպանել Էլսային:

Հետո հեռանում ու անհետանում է մթության մեջ: Նա հաճախ է անհետանում: Էլսան պիտի սովորի: Ու լավ էլ ստացվում է՝ խոշոր չափսերը հաշվի առնելով:

Էլսան այգու հակառակ կողմից խուլ հևոցի ձայն է լսում ու շրջվում: Յեորգը վազելով մոտենում է շենքին: Էլսան վստահ է, որ Յեորգն է, քանի որ տրիկոյի վրայից կարճ տաբատ է հագել ու աշխարհի ամենականաչ կուրտկան: Նա Էլսային ու վորսին չի նկատում, քանի որ ամբողջությամբ կլանված է՝ նստարանի վրա վերուվար ցատկոտելով: Յեորգն ահավոր շատ է մարզվում՝ վազելով ու տարբեր տեղեր ցատկելով: Էլսան երբեմն մտածում է, թե նա անընդմեջ փորձում է ընտրվել «Սուպեր Մարիոյի» հաջորդ տեսախաղի համար:

— Արի՛,– Էլսան արագ շշնջում է վորսի ականջին, որ թաքնվեն, քանի Յեորգը չի նկատել նրանց:

Եվ զարմանքով գիտակցում է, որ հսկայական գազանն իրեն ենթարկվում է: Վորսն այնպես է սեղմվում նրա ոտքերին, որ նրա մորթին խուտուտ է տալիս Էլսայի ճակատը, ու աղջիկը քիչ է մնում գլորվի ձյան մեջ: Էլսան ծիծաղում է: Վորսն ուշադիր նրան է նայում. կարծես ինքն էլ ծիծաղելիս լինի: Կյանքում առաջին անգամ Էլսան ընկեր ունեցավ՝ տատիկից բացի:

Էլսան վորսին տանում է նկուղ՝ նախ համոզվելով, որ Բրիտ-Մարին աստիճանահարթակով չի վազվզում, Յեորգն էլ իրենց դեռ չի նկատել:

Նկուղում պահեստները համարակալվում են ըստ բնակարանների համարների, ու տատիկի պահեստը կողպված չէ: Այն դատարկ է՝ չհաշված անվճար թերթերով լի IKEA-ի մի քանի պայուսակ: Էլսան փռում է թերթերը սառը բետոնե հատակին՝ մի փոքր հարմարավետ դարձնելու համար:

— Գիշերն էստեղ կմնաս: Վաղն ավելի հարմար թաքստոց կգտնենք,– շշնջում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Վորսն առանձնապես տպավորված չի երևում, սակայն, այնուամենայնիվ, հնազանդվում է, գլորվում կողքի վրա ու անտարբեր նայում նկուղի չլուսավորված խորքերին: Էլսան նայում է նույն ուղղությամբ, ապա՝ վորսին:

— Տատիկը միշտ ասում էր, որ էնտեղ ուրվականներ կան,– լրջորեն ասում է նա:

Վորսը նույն դիրքով անտարբեր պառկած է գետնին՝ սառցատապարի մեծության ժանիքները մթության մեջ պսպղացնելով:

— Խեղճ ուրվականներին չվախեցնե՛ս, լսեցի՞ր,– խրատում է Էլսան:

Վորսը գռմռում է: Էլսան խղճում է ուրվականներին:

— Որ քեզ խելոք պահես, վաղը շոկոլադ կբերեմ,– խոստանում է նա:

Վորսը կարծես ծանրութեթև է անում առաջարկը: Էլսան կռանում է ու համբուրում նրա քիթը:

Հետո վազելով բարձրանում է աստիճաններով ու իր հետևից մի լավ փակում նկուղի դուռը: Մյուս հարկերը ոտնաթաթերի վրա է անցնում՝ առանց լույս միացնելու, որ մյուսների կողմից իրեն տեսնելու հավանականությունը նվազեցնի, իսկ երբ հասնում է Բրիտ-Մարիի ու Քենթի հարկին, պպզում է ու վերջին աստիճանավանդակը մեծ քայլերով է անցնում: Նա գրեթե վստահ է, որ Բրիտ-Մարին ներսում դռան դիտանցքից չի հեռանում: Նույնիսկ զգում է, երբ Բրիտ-Մարին իրեն է նայում, ինչպես «Մատանիների տիրակալում» Սաուրոնն էր իր չար աչքով ամեն ինչին հետևում:

Հաջորդ առավոտ թե՛ Հրեշի բնակարանը, թե՛ նկուղը մութ ու դատարկ էին: Յեորգն է Էլսային դպրոց տանում, որովհետև մայրիկն արդեն հիվանդանոցում էր. այնտեղ սովորականի պես ճգնաժամ էր, իսկ ճգնաժամեր հաղթահարելը մայրիկի գործն է: Ամբողջ ճանապարհին Յեորգը խոսում է իր սպիտակուցային սալիկների մասին: Մի ամբողջ տուփ էր գնել, նրա պատմելով, ու հիմա ոչ մի տեղ չի գտնում: Յեորգի խելքը գնում է սպիտակուցային սալիկների ու գործառույթային իրերի մասին պատմելու համար: Օրինակ՝ գործառույթային հագուստի ու մարզական կոշիկների: Յեորգը գժվում է գործառույթայնության համար: Էլսան հույս ունի, որ գործառնական սպիտակուցային սալիկներ չեն ստեղծի, թե չէ Յեորգի ուղեղը ուղղակի ցրիվ կգա: Ոչ այն պատճառով, որ Էլսայի համար դա սարսափելի մեծ դժբախտություն կլինի, այլ ուղղակի կարծում է, որ մայրիկը շատ կտխրի, ու մաքրելու ահավոր մեծ գործ կբացվի: Յեորգը նրան իջեցնում է կայանա-

թվայնացրել է 1915.info կայքը

տեղիում՝ մի անգամ ևս հարցնելով, թե ուր կորած կլինեն իր սպիտակուցային սալիկները: Էլսան զզված հոգոց է հանում ու դուրս ցատկում մեքենայից:

Երեխաները հեռու են մնում իրենից: Միայն տագնապած հետևում են: Այգու մոտ Հրեշի միջամտության մասին լուրն իսկույն տարածվել էր, բայց Էլսան վստահ է, որ երկար չի տևի: Պատահածը դպրոցից ահագին հեռու էր: Իսկ այն, ինչ դպրոցից հեռու է կատարվում, ոնց որ տիեզերքում եղած լինի, այնպես որ դպրոցում ինքը, միևնույն է, պաշտպանված չէ: Հավանաբար ընդամենը մի քանի ժամով շունչ քաշելու հնարավորություն է, բայց նրանք, որ հալածում են իրեն, փորձելու են ավելի ու ավելի մոտենալ սահմանին, իսկ երբ համարձակվեն նորից հարձակվել, շատ ավելի մեծ ուժով են հարվածելու, քան երբևէ: Ինքը գիտի, որ Հրեշը հանուն իրեն երբեք չի մոտենալու դպրոցի ցանկապատին, որովհետև դպրոցում լիքը երեխաներ են, երեխաների վրա էլ լիքը մանրէներ են, իսկ դրանից հետո ամբողջ աշխարհի ալկոգելն իրեն չի բավարարի:

Բայց այդ առավոտ Էլսան, ամեն դեպքում, վայելում է իր ազատությունը: Ծննդյան արձակուրդին նախորդող նախավերջին օրն է, ու մյուս օրվանից հետո ինքը մի քիչ կհանգստանա անվերջ փախչելուց: Մի քանի շաբաթ կապրի՝ առանց պահարանում հայտնվող գրությունների, թե ինքը տգեղ է, կամ որ իրեն սպանելու են: Առաջին դասամիջոցին ինքն իրեն թույլ է տալիս զբոսնել ցանկապատի երկայնքով: Երբեմն ձգում է ուսապարկի գոտիները՝ համոզվելու, որ թույլ չի կախված մեջքից: Չնայած գիտի, որ այս դասամիջոցին իր հետևից չեն ընկնի, բայց դժվար է փոխել մի բան, որ սովորություն է դարձել: Ուսերին թույլ կախված ուսապարկով ավելի դանդաղ ես վազում:

Ի վերջո, Էլսան թույլ է տալիս ինքն իրեն խորասուզվել մտքերի մեջ: Դրա համար էլ չի նկատում նրան: Մտածում է տատիկի ու Միամասի մասին. զարմանում է, թե ինչ ծրագիր ուներ տատիկը, որ իրեն ուղարկեց գանձարանի, եթե իրոք նման ծրագիր կար: Տատիկն իր ծրագրերում հաճախ շատ բան փոխում էր, ու հիմա, երբ նա չկար, Էլսայի համար դժվար էր պատկերացնել, թե գանձերի փնտրտուքի հաջորդ քայլն ինչ պիտի լինի: Նախ և առաջ, նա ոչ մի կերպ չէր հասկանում, թե տատիկն ինչ նկատի ուներ՝ ասելով, որ վախենում է, թե Էլսան կատի իրեն, երբ ավելի շատ բան իմանա իր մասին: Մինչև հիմա Էլսան միայն պարզել էր, որ տատիկը մի

թվայնացրել է 1915.info կայքը

շարք բավականին տարօրինակ ընկերներ ուներ, ու պետք է ասել, որ այդ փաստը, բնականաբար, իրեն առանձնապես չէր զարմացրել:

Էլսան, անշուշտ, հասկանում է, որ տատիկի ասածը տատիկ դառնալուց առաջ տեղի ունեցածին է վերաբերում, ու այդ մասին մայրիկը կիմանա, բայց նա նախընտրում է մայրիկին հարցեր չտալ, եթե հնարավոր է դրանից խուսափել: Վերջերս ինչ էլ որ Էլսան ասում է մայրիկին, ամեն ինչ վերջանում է վիճաբանությամբ: Էլսան ատում է այդ իրավիճակը: Ատում է, որ հնարավոր չէ մի բան պարզել՝ առանց վիճելու: Ու ատում է, որ միայնակ է մնացել, ինչպես լինում է այն դեպքում, երբ մնում ես առանց տատիկի:

Այսինքն՝ հենց այդ պատճառով է, որ չէր տեսել նրան: Քանի որ, ըստ էության, երկու-երեք մետրի վրա էր, երբ հանկարծ տեսնում է նրան. այդ հեռավորությունից ուղղակի անհնար է չտեսնել վորսին, որը նստած է դարպասի մոտ՝ հենց ցանկապատի մյուս կողմում: Էլսան զարմացած ծիծաղում է, ոնց որ նա էլ է ծիծաղում, բայց ներքուստ:

— Ես քեզ փնտրում էի երեկ,- ասում է Էլսան ու դուրս գալիս փողոց, չնայած դասամիջոցին չի թույլատրվում ցանկապատից դուրս գալ:

Վորսն ասես ուսերն է թոթվում, եթե, իհարկե, ուսեր ունի:

— Հո ուրվականներին լեղաճաք չե՞ս արել,- հարցնում է Էլսան:

Վորսի տեսքից չես ասի, թե չի արել: Էլսան, միևնույն է, գրկում է նրա վիզը, ձեռքերը խրում երկար սև մորթու մեջ ու բացականչում.

— Սպասի՛ր, քեզ համար մի բան եմ բերել:

Հենց որ Էլսան ուսապարկն իջեցնում է, վորսն իսկույն քիթը խցկում է մեջը, բայց ահավոր հուսախաբված՝ դուրս է քաշում:

— Սպիտակուցային սալիկներ են,- մեղավոր ձայնով ասում է Էլսան: — Տանը շոկոլադ չկար, որովհետև մայրիկը չի ուզում, որ ես քաղցրեղեն ուտեմ, բայց Յեորգն ասաց, որ սրանք գժվելիք են:

Վորսը, երևում է, իսկի չի հավանում: Այնպես որ, ընդամենը մի ինը հատ է ուտում: Երբ դասի զանգը հնչում է, Էլսան ամուր-ամուր, գրկում է նրան ու շշնջում. «Ապրե՛ս, որ եկար»: Էլսան վստահ է, որ դպրոցի մյուս երեխաները հետևում են իրեն: Ուսուցիչներից էլի սպասելի է, որ առաջին դասամիջոցին չնկատեն ցանկապատի մոտ հսկայական սև վորսին, բայց տիեզերքում ոչ մի երեխա նման արարածին չնկատել չի կարող:

Ու այդ օրը ոչ ոք ոչ մի գրություն չի գցում Էլսայի պահարանը:

թվայնացրել է 1915.info կայքը

12

ԱՆԱՆՈՒԽ

Տատիկը միշտ խնդիրներ է ունեցել ղեկավարության հետ: Էլսան լավ գիտի, քանի որ ուսուցիչներից մեկը մի անգամ ասել էր, թե Էլսան ոչ մի հեղինակություն չի ընդունում, ու տնօրենը պատասխանել էր. «Դե, այդ առումով տատիկին է քաշել, պարզ է»: Ինչից հետո սկսել էր սենյակում տագնապահար դեսուդեն նայել, ասես պատահաբար բերանից թռցրել էր Վոլդեմորտի անունը:

Էլսան, բնականաբար, համարում է, որ տնօրենը երբեք խելքը գլխին բան չի ասում, սակայն այդ անգամ նա կարծես թե այնքան էլ հեռու չէր ճշմարտությունից: Մի անգամ ոստիկանությունը տատիկին խստիվ արգելել էր 500 մետր հեռավորությունից ավելի մոտենալ օդանավակայանին, քանի որ տատիկը թեթևակի բախումներ էր ունեցել ղեկավարության հետ, իսկ Էլսան երբեք չէր լսել, որ որևէ մեկի տատիկի հետ նման բան պատահած լինի:

Ամեն ինչ սկսվել էր նրանից, որ Էլսան պիտի թռչեր Իսպանիա՝ հայրիկի ու Լիզետի մոտ: Որովհետև հայրիկը նոր էր սկսել հանդիպել Լիզետի հետ ու մտածում էր, թե Էլսան ավելի քիչ կնեղվի, եթե նրանք միասին գնան մի տեղ, որտեղ լողավազան կա: Եվ, իհարկե, ճիշտ էր դուրս եկել: Ինքնին հասկանալի է, որ հնարավոր է ահավոր բարկանալ սեփական հոր վրա նույնիսկ այնտեղ, որտեղ լողավազան կա, սակայն այդ պարագայում շատ ավելի դժվար է:

Մայրիկը չափազանց կարևոր համաժողովի էր, այնպես որ Էլսային իր Renault-ով օդանավակայան հասցրեց տատիկը: Էլսան էլ դեռ փոքր էր, այնպես որ ամենուր իր թավշյա առյուծիկին հետն էր տանում, իսկ

թվայնացրել է 1915.info կայքը

անվտանգության աշխատակիցներից մեկը պահանջեց, որ նա իր առյուծիկին դնի բեռների կողքին՝ ռենտգեն սարքավորման միջոցով ստուգվելու: Բայց Էլսան չվստահեց ինչ-որ սարքերի ու հրաժարվեց վայր դնել իր առյուծիկին, և մի ուրիշ անվտանգության աշխատակից փորձեց խլել նրա խաղալիքը: Դրանից տատիկն այնպես զայրացավ, ինչպես միայն տատիկը կարող է զայրանալ, երբ փորձում են իր թոռնիկի ձեռքից խլել նրա առյուծիկը: Հետո մի իսկական կռիվ սկսվեց տատիկի ու աշխատակիցների միջև, որն ավարտվեց նրանով, որ տատիկը կանգ առավ ու գոռաց. «Գրո՛ղը տարած ֆաշիստներ, ուզում եք ի՞նձ էլ խուզարկել: Հը՞: Ուզում եք ստուգել, որ ես էլ վարտիքի մեջ պայթուցիկով մի քանի առյուծ թաքցրած չլինե՞մ: Հը՞, դե եկե՛ք՝ տեսնեմ»:

Միայն բավական անց Էլսան հասկացավ, որ պիտի տատիկին ասեր, որ փաստացի նախադասության շարադասությունից հստակ չէր, թե պայթուցիկն ում վարտիքի մեջ էր: Դրանից երևի տատիկը ծիծաղեր ու գուցե շորերը չպոկեր վրայից ու մերկ չվազվզեր անվտանգության բաժնով մեկ:

Իսկ տատիկը, իրոք, ահավոր արագ էր շորերը վրայից գցում:

Այսպիսի պատմություններ կան, որոնց ընթացքում իսկապես շատ անհարմար ես զգում, սակայն հետագայում շատ զվարճալի է պատմելը: Չնայած այն տարբերությամբ, որ սրա ընթացքն էլ էր զվարճալի, որովհետև եթե մարդ չի ընդունում, որ մերկ վազվզող մարդիկ ծիծաղելի են, ուրեմն հաստատ ամենաքիչը գլխի հետ ինչ-որ բան այն չէ: Էլսան որոշակիորեն այդ կարծիքին է:

Իսկ երբ ինքը վերջապես հայտնվում է օդանավի մեջ, ուղեկցորդուհիները իմանում են պատահածը ու մինչև Իսպանիա ամբողջ թռիչքի ընթացքում Էլսային հյութ են հյուրասիրում: Էլսան էլ, իսկապես, հյութը շատ է հավանում: Բայց նախքան թռիչքը Էլսան ու տատիկը ստիպված բավականին երկար նստում են օդանավակայանի սենյակներից մեկում՝ ականջից ցցված լարով մի հաղթանդամ, ջղային տղամարդու առջև: Ապա երկու ոստիկան մոտենում են տատիկին և հայտարարում, որ նա այլևս չպիտի երևա օդանավակայանում, և նրա արածն այնպիսի լուրջ խախտում է համարվում, որի համար կարող էր նույնիսկ հայտնվել ճաղերի հետևում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա ո՜նց, դե իհա՛րկե, ԴՈՒՔ փորձում եք փափուկ խաղալիքը խլել փոքրիկ երեխայի ձեռքից, իսկ տեռորիստ Ի՛ՆՁ եք համարում,– գոռում էր տատիկը՝ ձեռքերը թափ տալով, երբ ոստիկանները սպառնում էին նրան ձեռնաշղթաներ հագցնել:

Եվ Էլսան առյուծիկին ամբողջ թռիչքի ընթացքում ձեռքից բաց չթողեց: Ոչ մի վայրկյան: Տատիկի համար էլ ամենակարևորն այդ էր:

«Միամասում օդանավակայաններ չկան: Իսկ եթե լինեին էլ, առյուծը կլիներ մաքսատան սրիկաների պայուսակներ ստուգողը, ոչ թե հակառակը»,– զայրացած ասել էր տատիկը, երբ Էլսան զանգել էր Իսպանիայից: Հենց դրա համար էլ շատ էր սիրում տատիկին:

Հիմա մենակ կանգնած է տատիկի պատշգամբում: Նրանք միասին հաճախ էին կանգնում ու նայում: Այստեղ տատիկն առաջին անգամ ցույց տվեց ամպէակներին ու պատմեց Երկիր-Կիս-Արթունի մասին այն ժամանակ, երբ Էլսայի ծնողները նոր էին բաժանվել: Այդ գիշեր Էլսան առաջին անգամ եղավ Միամասում: Նա բացակա հայացքով նայում էր մթության մեջ ու կարոտը խեղդում էր ավելի քան երբևէ: Նա պառկեց տատիկի մահճակալին ու սկսեց նայել առաստաղի նկարներին՝ փորձելով հասկանալ, թե ինչ նկատի ուներ տատիկը, երբ հիվանդանոցում ասաց, որ Էլսան պիտի խոստանա չատել իրեն: «Տատիկի արտոնությունն է երբեք չասել թոռնիկին, թե ով էր ինքը՝ նախքան տատիկ դառնալը»,– ասում էր նա: Էլսան ժամերով գլուխ էր կոտրում՝ փորձելով հասկանալ, թե ինչին էր պետք այդ գանձարանությունը կամ որտեղ կարող է պահված լինել հաջորդ հուշումը: Եթե առհասարակ գոյություն ունի:

Վորսը քնած է նկուղի պահեստում: Էլսան բարձեր, ծածկոցներ ու IKEA-ի դեղին տոպրակներից է տակը փռել, չորս տուփ ուղղել, իրար կպցրել ու կպչուն ժապավենով ներսի կողմից ամրացրել դռանը, որ Բրիտ-Մարին չկարողանա ոչինչ տեսնել, եթե իջնի լրտեսելու: Այս ամբողջ խավարի մեջ հաճելի էր գիտակցել, որ վորսը ներքևում քնած է: Քեզ պակաս միայնակ ես զգում, երբ համարյա ութ տարեկան ես, ու նկուղումդ վորս կա քնած:

Նա պատշգամբի ճաղաշարքից ներքև է նայում: Կարծես մթության մեջ ինչ-որ շարժում է նկատում: Բնականաբար, ոչինչ չի երևում, բայց ինքը գիտի, որ Հրեշը ներքևում է: Հասկանում է, որ տատիկի հեքիաթն այդպես է ծրագրված: Հրեշը հսկում է ամրոցը: Հսկում է Էլսային:

թվայնացրել է 1915.info կայքը

Պարզապես Էլսան բարկանում է, որ տատիկը չի պատմել, թե ինչից է իրեն պաշտպանում:

Հեռվում՝ փողոցից, կանացի մի ձայն սղոցում է լռությունը:

— Հա՛, հա՛, ուրեմն ես սեղանի համար գինին առել եմ,– լսվում է դժգոհ ձայնը, երբ մի քիչ ավելի է մոտենում:

Սև կիսաշրջազգեստով կինն է, որ խոսում է՝ սպիտակ լարն ականջին: Նա չորս ծանր պլաստիկե տոպրակ է քարշ տալիս, որ մեկ իրար են զարկվում, մեկ կնոջ ոտքերին: Կինը հայհոյում է ու բանալիները շուռումուռ տալիս մուտքի դռան մոտ:

— Դե հա՛, հա՛, տե՛ր իմ Աստված, հաստատ մի 20 հոգի կլինենք: Դե գիտես, Ուլֆի գործի տեղում ոնց են խմում: Հա՛, հա՛, ես էլ եմ ասում, դե, գիտես՝ ինչ նկատի ունեմ: Էնպես որ խնջույքի համար ամեն ինչ առել եմ: Ուլֆն ու տղաները, պարզ է, օգնելու ժամանակ չունեն: Լավ, բա ի՞նչ անենք: Բա ո՞նց: Ոնց որ ես ամբողջ դրույքով չեմ հա՞ աշխատում,– լսում է Էլսան, մինչև որ կինը մտնում է շենքին:

Էլսան չգիտի՝ ինչ խնջույքի մասին է խոսքը: Նա ընդհանուր առմամբ շատ բան չգիտի այդ կնոջ մասին: Միայն այն գիտի, որ նրանից միշտ անանուխի հոտ է գալիս, հագուստը միշտ լավ արդուկած է և անընդհատ նյարդային է: Տատիկը սովորաբար ասում էր, որ նյարդայնությունը նրա տղաների պատճառով է: Էլսան իրականում չգիտի, թե դա ինչ է նշանակում:

Նա ձյունը թափ է տալիս կոշիկների վրայից ու ներս մտնում: Մայրիկը, նստած խոհանոցի աթոռին, խոսում է հեռախոսով՝ անդադար ճմռելով տատիկի խոհանոցի սրբիչներից մեկը: Նա միշտ այդպես է անում. հեռախոսով միայն խոսում է, որովհետև կարիք չունի լսելու, թե մյուս ծայրից ինչ կասեն: Մայրիկին երբեք չեն հակաճառում ոչ այն պատճառով, որ ձայնն է բարձրացնում կամ ընդհատում, այլ պարզապես նա այնպիսի մարդ է, որի հետ ոչ ոք վիճել չի ուզում: Մայրիկը հետևում է, որ այդպես էլ շարունակվի, քանի որ տարաձայնություններ չի սիրում: Կոնֆլիկտներն ազդում են արդյունավետության վրա, իսկ արդյունավետությունը չափազանց կարևոր է մայրիկի համար: Նա այդ մասին շատ է խոսում հեռախոսով: Յեորգը երբեմն կատակում է, թե մայրիկը ճաշի ընդմիջմանն է Կեսիկին ծննդաբերելու, որ հանկարծ հիվանդանոցի աշխատանքի արդյունավետության վրա չազդի:

Թվայնացրել է 1515.info կայքը

Էլսան ատում է Յեորգին նրա հիմար կատակների համար: Ատում է, որ նա կարծում է, թե այնքան լավ է ճանաչում մայրիկին, որ կարող է նրան վերաբերող կատակներ անել:

Տատիկը, բնականաբար, արդյունավետությունն անիմաստ բան էր համարում ու իր համար էական չէր, թե առհասարակ ինչի վրա կարող է ազդել:

Էլսան լսել էր, որ մայրիկի հիվանդանոցի բժիշկներից մեկն ասել էր, որ տատիկը կարող է չեղած տեղից կոնֆլիկտ առաջացնել, բայց երբ Էլսան պատմել էր տատիկին, նա միայն բորբոքվել էր ու վրա տվել. «Չե՞ս կարծում, որ կոնֆլիկտները հենց չեղած տեղերից էլ առաջանում են»: Հետո պատմել էր հեքիաթ աղջկա մասին, որ ասաց՝ ո՛չ, չնայած Էլսան արդեն լսել էր այն գրեթե ամենաքիչը անթիվ անգամ: «Աղջիկը, որ ասաց՝ ո՛չ» հեքիաթը Երկիր-Կիս-Արթունի հեքիաթներից ամենաառաջինն էր, որ Էլսան լսել էր: Այն վեց թագավորություններից մեկի՝ Միաուդակասի թագուհու մասին էր: Սկզբում թագուհին չափազանց քաջ ու արդարամիտ էր և բոլորի կողմից սիրված, սակայն, ցավոք, մեծանալով սկսեց վախենալ, ինչպես բոլոր մեծահասակները: Բոլոր մեծահասակների պես սիրեց արդյունավետությունն ու ատեց կոնֆլիկտները: Այսպիսով՝ թագուհին արգելեց կոնֆլիկտներն ամբողջ Միաուդակասում: Բոլորը պիտի միշտ հաշտ լինեին իրար հետ, քանի որ այդպես նպաստում էին արդյունավետությանը:

Քանի որ բոլոր կոնֆլիկտները սկսվում էին այն ժամանակ, երբ ինչ-որ մեկն ասում էր «ո՛չ», հետևաբար, թագուհին այդ բառն արգելեց: Ու բոլոր օրինախախտներին նետում էին հսկայական ՈՉ-զնդան, և սև սպառազինությամբ հարյուրավոր զինվորներ, որոնց անվանում էին հա-ասպետներ, պարեկություն էին անում փողոցներում ու հսկում էին, որ ոչ ոք անհամերաշխություն չցուցաբերի:

Սակայն թագուհին այդքանով չբավարարվեց: Շուտով նույնիսկ «չ», «ան», «դժ» և «տ» ժխտական նախածանցներն ու «գուցե», «թերևս» բառերն օգտագործողներին սկսեցին զնդանը նետել, որտեղ այլևս արևի լույս չէին տեսնում: Իսկ եթե հանկարծ աչքներին արևի լույս էր ընկնում, ապա հա-ասպետներից մեկն իսկույն հավելյալ վարագույր էր կախում:

Մի քանի տարուց արգելվեցին նաև «հնարավոր», «հավանաբար» և «տեսնենք» բառերը: Այնպես որ, ի վերջո, մարդիկ բոլորովին չէին համարձակվում բերանները բացել: Եվ այդ ժամանակ թագուհին մտածեց, որ արժի ընդհանրապես արգելել խոսելը, քանի որ համարյա բոլոր

թվայնացրել է 1915.info կայքը

կոնֆլիկտները սկսվում են այն պահից, երբ ինչ-որ մեկն ինչ-որ բան է ասում: Ու դրանից հետո մի քանի տարի ամբողջ թագավորությունում լռություն էր տիրում:

Դա շարունակվեց մինչև այն օրը, երբ ձի հեծած մի աղջիկ երգելով եկավ: Բոլորն աչք չէին կտրում նրանից, որովհետև երգելը լրջագույն հանցանք էր համարվում Միաուդակասում, քանի որ վտանգ կար, որ երգը կարող էր մեկին դուր գալ, իսկ մյուսին՝ ոչ, ու կոնֆլիկտը պատրաստ էր: Այնպես որ, հա-ասպետները ոտքի ելան՝ աղջկան լռեցնելու, բայց չէին կարողանում նրան բռնել, որովհետև չափազանց լավ էր փախչում: Հա-ասպետները հնչեցրին զանգերն ու օգնական ուժեր կանչեցին: Կոչին արձագանքեց թագուհու անձնական էլիտար հոդվածոտանիների գունդը, որն այդպես էր կոչվում, քանի որ անդամները յուրահատուկ կենդանիներ էին հեծնում, որ արագավազ կենդանու ու օրենքների ժողովածուից տարբեր հոդվածների խառնուրդ էին: Նրանք սլացան աղջկան կանգնեցնելու: Բայց ոչ էլ հոդվածոտանիներ հեծած գունդը կարողացավ նրան կանգնեցնել, այնպես որ, ի վերջո, թագուհին դուրս նետվեց ամրոցից ու բղավեց, որ աղջիկը դադարեցնի երգելը: Եվ այդ ժամանակ աղջիկը շրջվեց թագուհու կողմը, նայեց ուղիղ նրա աչքերին ու ասաց՝ ո՛չ: Եվ այդ բառի վրա զնդանը շրջապատող պարսպի քարերից մեկը պոկվեց ու ընկավ: Ու երբ աղջիկը նորից ասաց՝ ո՛չ, նորից մի քար ընկավ: Շատ շուտով աղջիկը կանգնած էր՝ շրջապատված բազմաթիվ մարդկանցով: Նրանց հետ էին նաև հա-ասպետներն ու հոդվածոտանիների գունդը: Նրանք բղավում էին՝ ո՛չ, ո՛չ, ո՛չ, ու ամբողջ զնդանը փուլ եկավ: Այդպիսով՝ Միաուդակասի ժողովուրդը հասկացավ, որ թագուհին իշխանություն ունի նրանց վրա միայն այնքան ժամանակ, քանի դեռ բոլոր նրա ենթակաները վախենում են կոնֆլիկտներից:

Էլսայի կարծիքով՝ հեքիաթի բարոյախոսությունն այդ էր: Ինքը հասկանում էր, իհարկե, թե բարոյախոսությունը որն է, որովհետև նայել էր Վիքիպեդիայում, նաև այն պատճառով, որ իր արտասանած առաջին բառը ոչ-ն էր: Իսկ մայրիկն ու տատիկն անչափ հաճախ էին վիճում այդ հարցի վերաբերյալ:

Այո՛, նրանք ամեն հարցի վերաբերյալ շատ էին վիճում, ավելի հաճախ՝ արդյունավետության: Մայրիկը, ինքնատիրապետումը չկորցնելով, միշտ ասում էր, որ այն անհրաժեշտ է առևտրային գործունեության հաջողութ-

թվայնացրել է 1915.info կայքը

յան համար, իսկ տատիկը, բացարձակապես ինքնատիրապետման մասին չհոգալով, միշտ գոռգոռում էր. «Հիվանդանոցի պարագայում թքա՛ծ ամեն տեսակի առևտրային գործունեության վրա»: Մի օր տատիկն ասաց Էլսային, որ մայրիկի՝ ղեկավար դառնալը դեռահաս տարիների խռովության արտահայտություն էր, իսկ ամենածայրահեղ դրսևորումը, որ անցել էր Էլսայի մայրիկի մտքով, տնտեսագետ դառնալն էր: Էլսան կարգին չէր հասկացել, թե դա ինչ է նշանակում: Բայց ավելի ուշ, երբ նրանք կարծում էին, թե ինքը քնած է, լսեց, թե ինչպես մայրիկը ֆշշացրեց. «Ի՞նչ գիտես իմ դեռահասության տարիների մասին: Դու երբեք կողքիս չէիր»: Էլսան առաջին անգամ էր լսում, որ մայրիկը, արցունքները խեղդելով, ինչ-որ բան ասեր տատիկին: Եվ տատիկն այդ անգամ լռեց, ու այլևս երբեք Էլսայի մոտ չհիշեց մայրիկի դեռահասության ըմբոստությունը:

Մայրիկը դնում է հեռախոսն ու կանգնում խոհանոցի մեջտեղում՝ սրբիչը ձեռքին, ասես ինչ-որ բան մոռացած լինի: Նա նայում է Էլսային: Էլսան տարակուսած նրան է նայում: Մայրիկը դժվարությամբ ժպտում է:

— Կօգնե՞ս՝ տատիկիդ իրերը տուփերի մեջ դասավորենք:

Էլսան գլխով է անում, չնայած բոլորովին չի ուզում:

Մայրիկը համառորեն ամեն երեկո իրեր է դասավորում տուփերի մեջ, չնայած թե՛ բժիշկը, թե՛ Յեորգն ասում են, որ նրան հանգիստ է պետք: Բայց մայրիկի մոտ լավ չի ստացվում ո՛չ հանգիստ մնալը, ո՛չ էլ ուրիշների ասածով շարժվելը:

— Հայրիկդ է վաղը քեզ դպրոցից բերելու,– կարծես իմիջիայլոց ասում է մայրիկը՝ տուփերի մեջ տեղավորած իրերը ցուցակից ջնջելով:

Ցուցակն Escel-ով է սարքել: Մայրիկը շատ է սիրում այն:

— Որովհետև գործդ ո՞ւշ ես վերջացնելու,– ասես հենց այնպես հարցում է Էլսան:

— Ես պիտի... մի քիչ մնամ հիվանդանոցում,– ասում է մայրիկը, քանի որ չի սիրում Էլսային խաբել:

— Իսկ չի՞ կարող Յեորգն ինձ բերել,– հարցնում է Էլսան միամտորեն, չնայած բոլորովին էլ այդպիսին չէ:

Մայրիկը ծանր շունչ է քաշում:

— Յեորգն էլ է հետս գալու հիվանդանոց:

Էլսան իրերը շարում է տուփի մեջ՝ ամենևին չմտահոգվելով, թե ինչ հերթականությամբ են նշված Escel-ի ցուցակում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կեսիկը հիվանդացե՞լ է:

Մայրիկը փորձում է նորից ժպտալ: Շատ էլ չի հաջողվում:

— Մի՛ անհանգստացիր, անո՛ւշս:

— Էդպիսի խոսքերից ես միանգամից սկսում եմ անհանգստանալ,– ասում է Էլսան:

Մայրիկը հառաչում է և, այնուամենայնիվ, սկսում է իրերը ջնջել Escel-ի ցուցակից, չնայած երևում է, որ չի ուզում: Պարզապես արդյունավետության տեսանկյունից դրանք նորից փաթեթավորելն ավելի վատ կլինի, նույնիսկ եթե սխալ են դրված:

— Ամեն ինչ շատ բարդ է,– ասում է նա:

Մայրիկը միշտ այդպես է խոսում՝ Facebook-ի ստատուսներով:

— Ամեն ինչ շատ բարդ է, եթե քեզ ոչ ոք ոչինչ չի բացատրում,– սրտնեղած ասում է Էլսան:

Մայրիկը նորից խորը շունչ է քաշում:

— Լա՛վ էլի, Է՛լսա, ուղղակի ընթացիկ ստուգում է:

— Իսկի էլ չէ, որովհետև հղիության ընթացքում այդքան հաճախակի չեն ընթացիկ ստուգումները: Ես հո ապո՞ւշ չեմ: Կարող եմ, ասենք, Վիքիպեդիայում կարդալ:

Մայրիկը մերսում է քունքերն ու ուրիշ կողմ նայում:

— Խնդրում եմ, Է՛լսա, հիմա նորից էդ թեմայով մի՛ սկսիր վիճել:

— Նորի՞ց: Իսկ ես հետդ էլի վիճե՞լ եմ այսօր,– բորբոքվում է Էլսան, ինչպես գրեթե ութ տարեկան երեխան, որին հանիրավի մեղադրում են:

— Մի՛ գոռա,– ինքնատիրապետումը չկորցնելով՝ խնդրում է մայրիկը:

— ԵՍ ՉԵ՛Մ ԳՈՌՈՒՄ,– բղավում է Էլսան՝ իսկի չփորձելով տիրապետել իրեն:

Հետո երկուսն էլ բավականին երկար նայում են գետնին: Յուրաքանչյուրը մտածում է՝ ինչպես ներողություն խնդրի: Ոչ մեկը չգիտի՝ որ ծայրից սկսել: Էլսան փակում է իրերով լի տուփը, վեր կենում տեղից ու ուղղվելով դեպի տատիկի սենյակ՝ շրխկացնում է դուռը:

Սենյակում մոտավորապես քառորդ ժամ քար լռություն է տիրում: Էլսան այնքա՜ն զայրացած էր, այնքա՜ն զայրացած, որ սկսել էր ժամանակը հավերժությունների փոխարեն րոպեներով հաշվել: Պառկել էր տատիկի մահճակալին ու նայում էր առաստաղի սև ու սպիտակ լուսանկարներին: Մարդագայլուկն ասես իրեն էր նայում ու ծիծաղում: Հոգու խորքում զար-

մանում էր, թե ինչպես այդքան ծիծաղկոտ մարդը կարող էր մեծանալ ու վերածվել Հրեշի նման տխուր մարդու:

Հանկարծ լսվում է դռան զանգը, ու առաջինին իսկույն հաջորդում է երկրորդ ծլնգոցը, ինչը հատուկ չէ դռան զանգը տվող նորմալ մարդկանց: Այսինքն՝ զանգ տվողը կարող է միայն Բրիտ-Մարին լինել:

— Գալի՛ս եմ,– պատասխանում է մայրիկը՝ ինքն իրեն բռի մեջ հավաքելով և անցնելով նախասենյակով, սակայն Էլսան նրա ձայնից հասկանում է, որ լաց է եղել:

Բառերն իսկույն դուրս են հորդում Բրիտ-Մարիի բերանից, ասես մեկը հետևից խփել էր մեջքին:

— Ես ձեր բնակարանի դռան զանգը տվեցի, բայց ոչ ոք չբացեց:

Մայրիկը հոգոց է հանում:

— Հա՛: Տանը չենք: Այստեղ ենք:

— Կռվաշունն ազատ ֆռֆռում է, համ էլ մորդ մեքենան դեռ ավտոտնակում է,– արագ-արագ վրա է տալիս Բրիտ-Մարին. թվում է՝ ինքն էլ չի հասկանում՝ ինչն է իրեն ավելի շատ հուզում:

— Կողմնորոշվի՛ր, նախ՝ ինչի՞ համար ես վրա տալիս,– հոգնած հետաքրքրվում է մայրիկը:

Էլսան նստում է տատիկի մահճակալին և ուշադիր ականջ դնում, բայց մոտ մեկ րոպե է անցնում, մինչև որ Բրիտ-Մարիի ասածը տեղ է հասնում: Նա ցատկում է մահճակալի վրայից ու հազիվ է ինքն իրեն զսպում, որ դուրս չթռչի նախասենյակ, քանի որ չի ուզում Բրիտ-Մարիի մոտ հանկարծ կասկած առաջացնել:

Բրիտ-Մարին կանգնած է աստիճանահարթակին՝ մի ձեռքը վճռականորեն մյուսի վրա դրած, ու սիրալիր ժպտում է մայրիկին:

— Մեր համատիրությունում ազատ ֆռֆռացող կռվաշներն արգելված են, Ո՛ւլրիխա: Դու պիտի հասկանաս դա, նույնիսկ դո՛ւ պիտի հասկանաս դա:

— Բայց մեզ մոտ համատիրություն չէ,– ասում է մայրիկը ու կարծես դեռ խոսքը բերանին՝ արդեն փոշմանում է իր ասածի համար:

— Դեռ չէ, բայց շուտով,– սպառնում է Բրիտ-Մարին ու ձեռքերի դիրքը փոխում՝ դնելով կոնքերին, և երկու անգամ գլխով է անում՝ ընդգծելու համար ասածի լրջությունը: — Ու մեր համատիրությունում մենք չենք կարող հանդուրժել դեսուդեն վազվզող կռվաշների: Վտանգավոր է երեխաների

թվայնացրել է 1915.info կայքը

համար, ու հակասանիտարական վիճակ է, շատ հակասանիտարական վիճակ է:

— Հակասանիտարական վիճակը դու ես,– քրթմնջում է Էլսան:

Բրիտ-Մարին ֆշշոցով շրջվում է, ու նրա ունքերը, վեր բարձրանալով, իրար են միանում՝ մի երկար բրդոտ թրթուրի վերածվելով:

— Ներեցե՞ք:

— Ոչինչ,– մռթմռթում է Էլսան:

Բրիտ-Մարին ու թրթուրն ակնդետ նրան են նայում: Մայրիկը հազում է:

— Շունը հաստատ վաղուց հեռացել է մեր կողմերից, Բրի՛տ-Մարի: Ես իսկի չեմ անհանգստանում դրա համ…

Բրիտ-Մարին շրջվում է մայրիկի կողմն ու սիրալիր ժպտում:

— Դե, չէ՛, չէ՛, պարզ է, որ չի անհանգստացնում, Ո՛ւլրիխա: Ի՞նչ կարիք կա: Դու այն տեսակից չես, որ սրտին մոտիկ ընդունեն ուրիշների անվտանգությունը, իհարկե ո՛չ:

Երևում է, որ մայրիկը կարողանում էր ինքն իրեն զսպել: Բրիտ-Մարին ժպտում ու գլխով է անում:

— Պարզ է, որ քեզ համար կարևորը քո կարիերան է: Այդ ժամանակ, իհարկե, մարդ չի հասցնում մտահոգվել իր երեխայի անվտանգության մասին: Ու հասկանալի է, որ ժառանգական է: Կարիերան երեխայից կարևոր է: Ի՞նչ անես, քո ընտանիքում միշտ այդպես է եղել:

Մայրիկի դեմքը բացարձակ անհողդողդ է: Ձեռքերը թուլացած կախված են կողքերից: Միակ բանը, որ մատնում է նրան, դանդաղ, դանդաղ սեղմվող բռունցքներն են: Էլսան երբեք չէր տեսել, որ նա այդպես անի:

Բրիտ-Մարիի աչքից դա նույնպես չի վրիպում: Նա նորից ձեռքերը հենում է կոնքերին: Երևում է, որ քրտինքը պատում է նրան: Սիրալիր ժպիտը սառչում է:

— Դե ես հո չե՞մ ասում, թե դու սխալ ես անում, Ո՛ւլրիխա: Քավ լիցի: Քո ընտրությունն է ու նախապատվությունը, բնականաբար:

— Էլի բան ունե՞ս ասելու,– դանդաղ ասում է մայրիկը, բայց նրա հայացքում մի երանգ է հայտնվում, որ ստիպում է Բրիտ-Մարիին մի փոքր հետ գնալ աստիճանահարթակով:

— Չէ՛, չէ՛, էլ բան չունեմ ասելու: Ոչ մի բան չունեմ:

Էլսան գլուխը գլուխը դուրս է հանում աստիճանահարթակ, ու մինչ Բրիտ-Մարին կհասցներ շրջվել ու հեռանալ, հարցնում է.

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ ի՞նչ էիր ասում տատիկիս մեքենայի մասին:

Բրիտ-Մարիի ձայնը նորից սկսում է բորբոքվել ու փրփրել, սակայն նա հիմա խուսափում է մայրիկի հայացքից:

— Մեքենան ավտոտնակում է: Ու ավտոտնակում կանգնած է իմ մեքենայի կայանատեղիում: Եթե անմիջապես չտանեք, ոստիկանություն կկանչեմ:

Էլսան մոռանում է թաքցնել իր զարմանքը:

— Իսկ ո՞նց է տատիկի մեքենան հայտնվել այդտեղ:

— Ի՞նչ իմանամ: Ու դա իրականում իմ գործը չէ,– այնքան արագ նետում է Բրիտ-Մարին, որ մոռանում է սիրալիր երևալ:

Ապա նորից համարձակությամբ լցվելով՝ շրջվում է Էլսայի մայրիկի կողմը:

— Մեքենան պիտի իսկույն ազատի իմ կայանատեղին, թե չէ ոստիկանություն կզանգեմ, Ո՛ւլրիխա:

Էլսայի մայրիկը, նորից հուսահատությունից ճնշված, գլխով է անում:

— Ես չգիտեմ, թե ուր են բանալիները, Բրի՛տ-Մարի:

— Ուրեմն չգիտես: Դա իրականում իմ հոգսը չէ: Ամեն դեպքում, դուք ինքնե՛րդ ձեր ընտանիքում պիտի ձե՛ր մեքենաների բանալիներից տեղյակ լինեք,– ֆշշացնում է Բրիտ-Մարին:

Էլսայի մայրիկը մերսում է քունքերը:

— Պիտի գլխացավի դեղ խմեմ,– ինքն իրեն կամացուկ ասում է նա:

Բրիտ-Մարին իսկույն հիշում է, թե ինչպես են սիրալիր ժպտում: Ու ժպտում է:

— Եթե այդքան սուրճ չխմես, երևի այդքան հաճախակի գլխացավեր չունենաս, Ո՛ւլրիխա:

Եվ արագ շրջվելով՝ իջնում է աստիճաններով, որ ոչ ոք չհասցնի իրեն պատասխանել:

Մայրիկը զուսպ ու հավասարակշիռ փակում է դուռը, բայց Էլսան նկատում է, որ նա նույնքան զուսպ ու հավասարակշիռ չէ, ինչպես սովորաբար: Մայրիկը գնում է խոհանոց: Հեռախոսն է զանգում: Էլսան գնում է հետևից և ուշադիր նրան է հետևում:

— Այդ ասելով՝ ի՞նչ նկատի ուներ,– հարցնում է Էլսան:

— Կարծում է, որ քանի հղի եմ, պիտի սուրճ չխմեմ,– ասում է մայրիկը:

Հիմար է ձևանում: Էլսան ատում է, երբ մայրիկը հիմար է ձևանում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հա՛, բա ո՞նց, ես դա նկատի չունեի,– ասում է Էլսան:

Մայրիկը լվացարանի մոտից վերցնում է հեռախոսը:

— Ես պիտի պատասխանեմ, անո՛ւշս,– ասում է նա:

— Բրիտ-Մարին ի՞նչ նկատի ուներ, որ ասում էր, թե կարևորը կարիերան է ձեր ընտանիքում, ու դա ժառանգական է: Տատիկի՞ն նկատի ուներ, հա՞,– համառում է Էլսան:

Հեռախոսը շարունակում է զանգել:

— Հիվանդանոցից է, պիտի պատասխանեմ,– ասում է մայրիկը:

— Իսկի էլ պարտադիր չէ,– հակաճառում է Էլսան:

Նրանք լուռ կանգնած իրար են նայում, մինչ հեռախոսը ևս մեկ-երկու անգամ զանգում է: Հիմա Էլսան է սեղմել բռունցքները:

Մայրիկի մատները սահում են էկրանի վրայով:

— Պիտի զանգեմ, Է՛լսա:

— Չպիտի՛ զանգես:

Մայրիկն աչքերը փակում է ու հեռախոսը դնում ականջին: Երբ մայրիկը սկսում է խոսել, Էլսան իր հետևից շրխկոցով փակում է տատիկի սենյակի դուռը:

Երբ կես ժամ անց մայրիկը զգուշորեն բացում է դուռը, Էլսան ձևացնում է, թե քնած է: Մայրիկը զգույշ մոտենում է ու ծածկոցով մի լավ ծածկում նրան: Հետո համբուրում է թուշիկն ու անջատում լամպը:

Երբ Էլսան մեկ ժամից դուրս է գալիս սենյակից, տեսնում է, որ մայրիկը քնած է հյուրասենյակի բազմոցին: Էլսան զգուշորեն մոտենում է, մի լավ ծածկում է նրան ու Կեսիկին: Հետո համբուրում է մայրիկի թուշը ու անջատում է լամպը: Տատիկի խոհանոցի սրբիչը դեռևս մայրիկի ձեռքին է:

Էլսան մի լապտեր է վերցնում նախասենյակից ու հագնում կոշիկները:

Էլսան արդեն գիտի, թե որտեղ է թաքցված տատիկի ասած գանձարոսի հաջորդ հուշումը:

թվայնացրել է 1915.info կայքը

13

Գինի

Այո՛, ըստ էության, մի քիչ դժվար է բացատրել մի շարք բաներ տատիկի հեքիաթներում: Նախ և առաջ պետք է հասկանալ, որ Երկիր-Կիս-Արթունում չկա ավելի տխուր արարած, քան ծովահրեշտակը, և, փաստորեն, միայն այդ ամբողջ պատմությունը հիշելուց հետո հանկարծ տատիկի գանձարանն Էլսայի համար տրամաբանական դարձավ:

Էլսայի ծննդյան օրը միշտ չափազանց կարևոր էր տատիկի համար. հենց սկզբից էլ պետք է նշել դա: Գուցե այն պատճառով, որ Էլսան ծնվել է Սուրբ ծնունդից երկու օր անց, իսկ Ծննդյան տոները չափազանց կարևոր են մնացած բոլորի համար, այնպես որ այդ տոներից երկու օր անց նշվող իր տարեդարձին ոչ մի երեխա նույն ուշադրությանը չի արժանանում, ինչպես օգոստոսին կամ ապրիլին ծնվածը: Իսկ տատիկը տեղը հանում էր: Ինչ-ինչ, նա ունակ էր ծայրահեղությունների: Նույնիսկ այն ժամանակ, երբ մայրիկն արգելել էր անակնկալներով լի տոնակատարություններ ծրագրել այն բանից հետո, երբ տատիկը հրավառություն էր արել համբուրգերանոցում ու հաջողեցրել էր մի քիչ այրել 17 տարեկան աղջկա հագուստը, որը, ծաղրածուի պես հագնված, պիտի երեխաներին զվարճացներ: Եվ Էլսան, ի պաշտպանություն աղջկա, պիտի ասեր, որ նա իսկապես զվարճալի էր: Իր իմացած ամենալավ հայհոյանքներն Էլսան հենց այդ օրն էր սովորել:

Հիմա հարցն այն է, որ Միամասում մարդիկ իրենց ծննդյան օրը նվերներ չեն ստանում: Հակառակը՝ տալիս են: Ու ցանկալի է տանն ունեցած այնպիսի բան նվիրել, որ ինքդ շատ ես սիրում, իսկ նվիրում են նրանց, ովքեր հատկապես թանկ են իրենց համար: Դրա համար էլ Միամասում

թվայնացրել է 1915.info կայքը

բոլորն անհամբեր սպասում են մյուսների ծննդյան օրերին: Հենց այդպես է ծագել «Ի՞նչ ԿՏԱ մեկը, ով ամեն ինչ ունի» ասույթը: Հավանաբար այն գրի է առնվել հեքիաթներից մեկում, ու էնֆանտները հասցրել են այն իրական աշխարհ, սակայն հետագայում իմաստափոխ լինելով մեր օրերի մեկնությամբ վերածվել է մեկ այլ ասույթի «Ի՞նչ ՏԱՍ մեկին, ով ամեն ինչ ունի»: Բայց դե, նրանցից ուրիշ ի՞նչ սպասես: Նույն խելոքները նույնիսկ «մեկնաբան» բառն են սխալ մեկնաբանում, որ Միամասում բոլորովին այլ նշանակություն ունի: Այնտեղ «մե-մե-կնաբանը» արարած է, որը տեսքից կարծես այծի ու շոկոլադե կեքսի խառնուրդ լինի: Նրանք շատ ընդունակ են լեզուներից ու անգերազանցելի են տապակած վիճակում: Բայց երբ Էլսան բուսակերության անցավ, տատիկն այլևս չէր կարող նրանց մասին պատմել՝ առանց Էլսային կատաղեցնելու:

Ինչ որ է, Էլսան ծնվել էր Սուրբ ծննդյան երեկոյից երկու օր անց՝ համարյա ութ տարի առաջ: Նույն օրը գիտնականները գրանցել էին մագնետարի ամենաուժգին գամմա ճառագայթումը Երկրի շուրջը: Այդ օրվա մյուս իրադարձությունն այն էր, որ Հնդկական օվկիանոսում ցունամի էր բարձրացել: Էլսան գիտի, որ այն հսկայական բարձրության հասնող ալիք է, որ առաջանում է երկրաշարժից: Ուղղակի ծովերում: Այսինքն՝ ավելի բծախնդիր լինելու դեպքում՝ ծովաշարժից: Իսկ Էլսան բավականին բծախնդիր է:

200,000 մարդ էր մահացել նույն օրը, երբ Էլսան ծնվել էր: Երբեմն, երբ Էլսայի մայրիկը կարծում էր, թե Էլսան չի լսում, պատմում էր Ցեորգին, որ իրեն սիրտ ճմլվելու աստիճան մեղավոր է զգում, քանի որ հենց այդ օրն իր կյանքի ամենաերջանիկ օրն է:

Էլսան հինգ տարեկան էր ու շուտով վեցն էր լրանալու, երբ Վիքիպեդիայում առաջին անգամ կարդացել էր այդ մասին: Իսկ վեցամյակի օրը տատիկը պատմել էր ծովահրեշտակի հեքիաթը՝ սովորեցնելու համար, որ բոլոր հրեշները ի սկզբանե հրեշներ չեն եղել, և որ բոլոր հրեշները չէ, որ տեսքից հրեշ են: Որ մի մասն էլ հրեշին թաքցնում է իր ներսում:

Ստվերները Մարտ-Ան-Վերջի ավարտից առաջ վերջին գործը, որ արեցին, ամբողջությամբ ավերեցին Միբատալոսը՝ վեց թագավորություններից մեկը, որտեղ մեծանում էին բոլոր ռազմիկները: Բայց հետո եկան

թվայնացրել է 1915.info կայքը

Գայլսիրտն ու վորսերը, ու կտրուկ շրջադարձ եղավ: Երբ ստվերները ճողոպրեցին Երկիր-Կիս-Արթունից, նրանք վեց թագավորությունների ափերից աներևակայելի զորությամբ շարժվեցին՝ ճեղքելով ծովը: Նրանց հետևից ծովի վրա սարսափելի ալիքներ բարձրացան, որոնք իրար խփվելուց միացան՝ առաջացնելով 10,000 հեքիաթների հավերժության չափ բարձր մի ալիք: Որպեսզի ոչ ոք չկարողանա հետապնդել ստվերներին, ալիքը շրջվեց ու պիտի փուլ գար երկրի վրա:

Այն կարող էր իսպառ վերացնել Երկիր-Կիս-Արթունը: Կարող էր իր մի հարվածով ոչնչացնել բոլոր ամրոցներն ու տները՝ իրենց բոլոր բնակիչներով, որ նույնիսկ բոլոր հավերժությունների ստվերների բանակներն ի զորու չէին լինի անել:

Այդ ժամանակ էր, որ 100 ձյունահրեշտակ փրկեցին մնացած հինգ թագավորությունները: Երբ բոլորը փախչում էին ալիքից, ձյունահրեշտակները շտապեցին նրան ընդառաջ: Թևերը բացած ու բոլոր հզոր հեքիաթների զորությունն իրենց սրտերում կուտակած՝ նրանք կախարդական պատ բարձրացրին ալիքի դեմ ու կանգնեցրին այն: Ալիքը կուլ տվեց կենդանի պատը, սակայն առաջ գնալ չկարողացավ: Որովհետև նույնիսկ ստվերների ստեղծած ալիքը չի կարող ճեղքել 100 ձյունահրեշտակների պատնեշը, որոնք պատրաստ են զոհվելու հանուն հեքիաթների աշխարհի փրկության:

Հրեշտակներից միայն մեկը կարողացավ փրկվել վիթխարի ալիքներից:

Չնայած տատիկը միշտ բողոքում էր, թե այդ ձյունահրեշտակներն ուղղակի մեծամիտներ են, որոնցից գինու հոտ է փչում, սակայն, միևնույն է, չէր ուրանում այն օրվա նրանց կատարած անձնազոհությունը: Որովհետև այն օրը, որ վերջացավ Մարտ-Ան-Վերջը, Երկիր-Կիս-Արթունում բոլորի համար ամենաերջանիկ օրն էր՝ բացառությամբ 100-րդ ձյունահրեշտակի:

Այդ օրվանից ի վեր նա թափառում էր ծովափով՝ ծանր անեծքի տակ կքած, որ թույլ չէր տալիս հեռանալ այն վայրից, որտեղ զոհվել էին նրա բոլոր սիրելիները: Երկար ժամանակ էր անցել. ափամերձ գյուղերի բնակիչները մոռացան, թե ով էր նա առաջ ու սկսեցին նրան ծովահրեշտակ անվանել: Տարիներն անցնում էին, հրեշտակն ավելի ու ավելի էր խորանում վշտի հորձանուտի մեջ, մինչև որ նրա սիրտը երկու կես եղավ, ապա կոտրված հայելու պես մարմինն էլ կիսվեց երկու մասի: Երբ գյուղերի երեխաները ծլկում էին ծովափ՝ թաքուն նրան նայելու, դեմքի բեկորների մեջ մի պահ նրան այնքա՜ն գեղեցիկ էին տեսնում, որ այդ գեղեցկությամբ

թվայնացրել է 1915.info կայքը

հմայված՝ վարդերն իսկույն կծաղկեին, բայց մյուս բեկորի միջից այնպիսի սարսափազդու այլանդակված մի հրեշ էր նայում երեխաներին, որ նրանք լեղաճաք եղած, առանց հետ նայելու, ճչալով տուն էին վազում:

Որովհետև բոլոր հրեշները ի սկզբանե հրեշներ չեն եղել, որոշ հրեշներ վշտից են հրեշ դարձել:

Երկիր-Կիս-Արթունի ամենահայտնի հեքիաթներից մեկում մի անգամ Միամասից մի երեխա կարողացավ ազատել ծովահրեշտակին նրա անեծքից, ազատել նրան դիվային հիշողություններից, որ իրենց ծուղակում էին պահում նրան:

Երբ տատիկն Էլսայի վեցամյակի օրն առաջին անգամ պատմեց այս հեքիաթը, Էլսան գիտակցեց, որ ինքն այլևս փոքր չէ: Ու տատիկին նվիրեց իր թավշյա առյուծիկը, որովհետև հասկացել էր, որ այլևս նրա կարիքը չուներ, և ուզում էր, որ նա իր փոխարեն տատիկին պաշտպաներ: Եվ այդ գիշեր տատիկը շշնջաց Էլսայի ականջին, որ եթե մի օր իրենք ստիպված լինեն բաժանվել, եթե ինքը մի օր հեռանա, ապա կուղարկի առյուծիկին, որ նա Էլսային իր տեղն ասի:

Մի քանի օր տևեց, մինչև Էլսան գլխի ընկավ: Առաջին անգամ այն երեկո, երբ Բրիտ-Մարին պատմեց, որ ոչ ոք չգիտի, թե ինչպես է Renault-ը հայտնվել ավտոտնակում, Էլսան հիշեց, որ տատիկն առյուծիկին նստեցրել էր հսկելու համար:

Renault-ի պահոցի՞կը: Տատիկն այնտեղ էր պահում իր ծխախոտը: Իսկ տատիկի կյանքում ոչինչ այնքան առյուծիկի պաշտպանության կարիքը չուներ, որքան ծխախոտը:

Այսպիսով՝ հիմա Էլսան Renault-ում, ուղևորի նստարանին նստած, խորը շունչ է քաշում: Ավտոմեքենայի դռները սովորականի պես կողպված չեն, որովհետև տատիկը երբեք ոչինչ չէր կողպում, ու ծխի հոտը դեռ գալիս է: Էլսան գիտի, որ դա լավ չէ, բայց տատիկի ծխի հոտն է, ու նա խորը ներշնչում է այն:

— Կարոտում եմ քեզ,- շշնջում է նա՝ սեղմվելով նստարանի թիկնակի պաստառին:

Ապա բացում է պահոցիկը: Առյուծիկին մի կողմ է տանում ու վերցնում նամակը: Վրան գրված է. «Հանձնել Միամասի ամենախիզախ ասպետին»: Հետո՝ անուն ու հասցե:

Տատիկի ձեռագիրը, իսկապես, ագռավի չանչերի էր նման:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան իջնում է Renault-ից ու թփթփացնում վորսի ականջները:

— Ապրե՛ս, որ հսկեցիր, վաղը խոստանում եմ ավելի շատ քաղցրեղեն բերել,– ասում է նա՝ ուսապարկի միջից վերջին սպիտակուցային սալիկնե-րը նրան տալով:

Վորսն իսկույն դրանց վերջը տալիս է ու մուտքի բաց դռնով նետվում դեպի նկուղը: Մինչև նրա ներս մտնելը Էլսան զարմացած նայում է նրա հետևից ու կոկորդը հազալով մաքրելով՝ բղավում է.

— Ես առաջ երբեք տատիկից բացի ընկեր չեմ ունեցել:

Վորսը կանգ է առնում: Գլուխը շրջում է նրա կողմն ու ժպտում է: Էլսան վստահ է, որ ժպտում է, նույնիսկ եթե աշխարհի բոլոր խելոքները փորձեն իրեն համոզել, թե վորսերը չեն ժպտում:

Քիչ անց Էլսան բարձրանում է աստիճաններով՝ տատիկի նամակը ձեռ-քին, գլխում այնպիսի շիլաշփոթ, որ քիչ է մնում՝ բախվի Ալֆին:

Նա կանգնած էր աստիճանների վերևում՝ իր ճռճռացող բաճկոնով, սովորականից շատ ավելի վատ տրամադրությամբ: Էլսան չի կողմնորոշ-վում՝ ինչ անի:

— Գրո՛ղը տանի: Վերև՞ ես գնում, թե՞ ներքև,– հարցնում է Ալֆը:

— Վե… վերև,– ասում է Էլսան՝ ներքև նայելով:

Ալֆը, իրեն հազիվ զսպելով, քաշվում է պատի մոտ: Էլսան արագ անց-նում է կողքով ու լսում նրա շտապողական քայլերն աստիճաններով ներքև: Նրա տեսքն ահավոր հոգնած էր: Դե, նա, իհարկե, միշտ է այդպի-սին, բայց այսօր սովորականից է՛լ ավելի հոգնատանջ էր երևում: Էլսան մտածում է, որ թերևս ցածր ծանրության կենտրոնն է մեղավոր, ինչպես հաճախ ասում էր տատիկը:

Էլսան շունչը պահած սպասում է՝ համոզվելու, որ Ալֆը չի իջնում նկուղ, բայց փոխարենը քիչ հետո աղմուկով փակվում է ավտոտնակի դուռը, ու Էլսան խորը շնչում է, ապա շարունակում բարձրանալ աստիճաններով:

Էլսան նստում է ամենավերևի աստիճանին՝ տատիկի բնակարանի դի-մաց, մինչև առաստաղի լամպերն անջատվում են: Մատներով շոյում է ծրարի վրա տատիկի ձեռագիրը, սակայն ծրարը չի բացում: Պարզապես դնում է ուսապարկի մեջ, ուղիղ պառկում է սառը հատակին ու աչքե-րը կիսափակ անում: Փորձում է նորից Միամաս թռչել: Պառկած է մնում մի քանի ժամ, բայց չի հաջողվում: Պառկում է այնքան, մինչև լսում է, որ

թվայնացրել է 1915.info կայքը

մուտքի դուռը նորից բացվում ու փակվում է: Ենթադրում է, որ Ալֆն է վերադառնում, չնայած ո՛չ քայլերի ձայն է լսում, ո՛չ էլ բնակարանի բացվող ու փակվող դռան ձայն: Նա մնում է կիսափակ աչքերով պառկած, մինչև որ գիշերը պարուրում է տան պատուհանները, ու մի քանի հարկ ներքևում հարբեցողը սկսում է աղմկել:

Էլսայի մայրիկը չի սիրում, որ մարդկանց հարբեցող են անվանում:

— Իսկ ի՞նչ ասեն,– միշտ հարցնում էր Էլսան, ու մայրիկը շվարում էր ու ավելի մեղմ ձայնով ասում.

— Ասենք, ամեն դեպքում, այդ մարդիկ ավելի շուտ հոգնած են:

Իսկ տատիկը սովորաբար փռթկացնում էր:

— Հոգնա՜ծ: Հա, բա ո՞նց: Եթե ամբողջ գիշեր արթուն լինեն ու կոնծեն, իհարկե կհոգնեն:

Ու մայրիկը վրա էր տալիս, իսկ տատիկը սկսում էր ձեռքերը թափ տալով արդարանալ. «Լա՛վ, սիրելի՛ս, ի՞նչ սխալ բան ասացի», ու դրանից հետո Էլսան ստիպված էր ականջակալները դնել:

— Ասում եմ՝ ջուրը փակի՛ր. գիշերով չեն լողանում,– ներքևից լսվում էր՝ ինչպես էր հարբեցողը գոռում՝ առանց կոնկրետ հասցեատիրոջ՝ ընթացքում կոշիկի եղջյուրիկով գազազած խփելով աստիճանավանդակի ճաղերին այնպես, որ վերևից ներքև արձագանքում էր պատերի մեջ:

Դե, նա միշտ է նույն բանն անում: Ոռնում է, գոռգոռում ու կոշիկի եղջյուրիկով խփում: Բնականաբար, ոչ ոք դուրս չի գալիս նրան լռեցնելու. նույնիսկ Բրիտ-Մարին, որովհետև հարբեցողը հրեշի պես բան է: Մարդիկ ասես հույս ունեն, որ հրեշը կանհետանա, եթե իրենք մերժեն նրա գոյությունը:

Էլսան պպզում ու աստիճանների արանքով ներքև է նայում: Մի փոքր երևում են հարբեցողի գուլպաները, երբ նա անցնում է աստիճանների մոտով՝ եղջյուրիկն աջուձախ թափահարելով. ասես փորձում է ազատվել իր առջև բարձրացող խոտից: Էլսան ինքն էլ չի հասկանում, թե ինչու, բայց տեղից վեր է կենում ու անձայն իջնում է ներքև: Պարզապես հետաքրքրասիրությունից թերևս: Մանավանդ, որ ճանձրանում էր կամ սրտնեղում, ինչն ավելի հավանական է, որ այլևս չի կարողանում Միամաս գնալ:

Հարբեցողի բնակարանի դուռը բաց է: Ներսը թույլ լուսավորում է շրջված լուսամփոփը: Բոլոր պատերին լուսանկարներ են: Էլսան երբեք այդ քանակի լուսանկարներ չէր տեսել. միշտ կարծել էր՝ տատիկի առաս-

թվայնացրել է 1915.info կայքը

տաղին է շատ փակցված, բայց այստեղ ուղղակի հազարներով էին: Յուրաքանչյուրը՝ փոքրիկ սպիտակ շրջանակի մեջ, ամեն մեկի մեջ՝ երկու դեռահաս տղաներ ու մի տղամարդ, որը հավանաբար նրանց հայրն էր: Դռան մոտ փակցված լուսանկարներից մեկում, որ ավելի խոշոր էր, տղամարդն ու տղաները ծովափին են՝ փայլփլող կանաչ ծովի ֆոնին: Տղաները սուզահագուստով են: Արևառ դեմքերով ժպտում են ու երջանիկ են երևում: Շրջանակի տակից շնորհավորական բացիկ է կախված. այնպիսին, որ սովորաբար գնում են բենզալցակայաններից, եթե մոռացել են գնել ծաղկավաճառի մոտից: Վրան գրված է. «Մայրիկին՝ իր տղաներից»:

Բացիկի կողքին փշրված հայելի է:

Բառերը հեղեղում են աստիճանավանդակն այնքան հանկարծակի ու կատաղությամբ լի, որ Էլսան կորցնում է հավասարակշռությունն ու սահում առաջին չորս-հինգ աստիճանների վրայով՝ ծեփվելով պատին: Արձագանքը հարձակվում է նրա վրա, ասես ուզում է ականջները ծվատել:

— ԷՍ Ի՞ՆՉ ԲԱՆԻ ԵՍ ԷՍՏԵՂ:

Էլսան աչքերը հառել է հարբեցողի վրա: Նա մի հարկ ներքևից նրան է նայում բազրիքի ճաղերի արանքով՝ կոշիկի եղջյուրիկը սպառնալից ձեռքին պահած: Միաժամանակ և՛ կատաղած, և՛ ահավոր վախեցած է երևում: Սև կիսաշրջազգեստը ճմռթված է հիմա: Գինու անտանելի հոտ է փչում վրայից, որը Էլսան զգում է հաջորդ հարկ բարձրանալու ամբողջ ընթացքում: Մազերը կարծես երկու թռչուն լինեն, որ իրար բզկտել են տոնածառի լույսերի տուփի մեջ: Աչքերի տակ մանուշակագույն պարկեր են կախված:

Սև կիսաշրջազգեստով կինը ճոճվում է: Նա հաստատ ուզում էր գոռալ, բայց հազիվ խզխզոցի նման մի ձայն է ստացվում.

— Գիշերով չեն լողանում: Ջուրը փակի՛ր ջուրը: Թե չէ բոլորը կխեղդվեն…

Սպիտակ լարը, որով միշտ խոսում էր, դեռ կախված է նրա ականջից, բայց մյուս ծայրն ազատ ճոճվում էր նրա կոնքերի մոտ: Այն ոչ մի սարքի միացած չէ: Մյուս ծայրին ոչ ոք չկա, ու Էլսան ենթադրում է, որ երբեք էլ չի եղել, ուղղակի համարյա ութ տարեկանի համար նման բաներ հասկանալն այնքան էլ հեշտ չէ: Տատիկը պատմել է հեքիաթներ տարբեր բաների մասին, սակայն երբեք չի պատմել սև կիսաշրջազգեստով կանանց մասին, որ ձևացնում են, թե հեռախոսով են խոսում, որպեսզի հարևանները չկասկածեն, թե իրենք ամբողջ գինին միայն իրենց համար են գնել:

թվայնացրել է 1915.info կայքը

Սև կիսաշրջազգեստով կինը մոլորված է երևում: Կարծես հանկարծ մոռացել է, թե որտեղ է գտնվում: Նա անհետանում է տեսադաշտից, ու նույն պահին Էլսան զգում է, որ մայրիկի ձեռքերը զգուշորեն բարձրացնում են իրեն աստիճանների վրայից: Զգում է նրա տաք շնչառությունը ծոծրակին ու նրա «շը՛շ»-ն ականջի մեջ. ասես կանգնած լինեին եղջերուների առջև, որոնց չափազանց մոտ էին հայտնվել:

Էլսան բերանը բացում է, բայց մայրիկը մատը սեղմում է նրա շրթունքներին:

— Շը՛շ,– շշնջում է մայրիկը՝ ամուր գրկելով նրան:

Էլսան կծկված նստում է նրա գրկում, ու նրանք տեսնում են՝ ինչպես է սև կիսաշրջազգեստով կինը քամուց ծածանվող դրոշի նման հետուառաջ անում ներքևում: Նրա բնակարանի ներսում ցելոֆանե տոպրակներ էին թափված նախասենյակի հատակին: Գինու ստվարաթղթե տուփը կողքի էր շրջվել, ու մեջը մնացած վերջին կաթիլները կաթել էին մանրահատակին: Մայրիկը քնքշորեն շոյում է Էլսայի ձեռքը: Նրանք վեր են կենում ու կամացուկ բարձրանում աստիճաններով:

Ու այդ գիշեր մայրիկը պատմում է, թե Էլսայի ծննդյան օրն ինչի մասին էին խոսում ամբողջ երկրում՝ Էլսայի ծնողներից բացի: Խոսում էին ալիքի մասին, որ ափին էր հարվածել հազարավոր կիլոմետրեր հեռու, ու ավերել էր ճանապարհին պատահած ամեն ինչ, երկու տղայի մասին, որ լողացին իրենց հորը փնտրելու ու այլևս չվերադարձան:

Էլսան լսում է, որ հարբեցողն իր երգն է երգում: Որովհետև բոլոր հրեշները չէ, որ տեսքից հրեշ են: Կան այնպիսիններ, որ հրեշին թաքցնում են իրենց ներսում:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

14

ՍՆՈՒՍ

Բոլոր սրտերը կոտրվեցին, ու բոլոր հայելիները փշրվեցին այն օրը, երբ Էլսան ծնվեց: Փշրվեցին ալիքի ուժից, ու փշուրները ցրիվ եկան աշխարհով մեկ: Աներևակայելի աղետներից աներևակայելի բաներ են կատարվում մարդկանց հետ՝ աներևակայելի հերոսության մղելով ու աներևակայելի վիշտ բերելով: Եվ շատ ավելի մահ, քան մարդկային ուղեղն ունակ է տեղավորել: Տղաները, մորն ապահով տեղ հասցնելով, հետ են գնում հոր հետևից: Հետ են գնում ալիքի գիրկը, որովհետև ընտանիքը հարազատին մենակ չի թողնում: Իսկ նրա տղաները հենց այդ էլ արեցին: Մորը թողեցին մենակ:

Բոլոր հայելիները փշրվեցին այդ օրը, ու կոտրվեցին բոլոր սրտերը: Զարդուփշուր եղան այնպես, որ լսվեց հազարավոր կիլոմետրերի հեռավորությունից:

Էլսայի տատիկը մյուս մարդկանցից բոլորովին տարբեր ռիթմով էր ապրում: Այլ կերպ էր գործում: Իրական աշխարհում որոշակի ընթացք ունեցող ամեն ինչի համեմատ նա քաոս էր: Բայց երբ իրական աշխարհը փուլ էր գալիս, երբ ամեն ինչ վերածվում էր քաոսի, այդ ժամանակ Էլսայի տատիկի պես մարդիկ միակն էին, որ շարունակում էին անխափան գործել: Դա նրա գերունակությունն էր: Այնպես որ, երբ Էլսայի տատիկն աշխարհում ինչ-որ տեղ էր ձգտում, վստահորեն կարելի էր ասել, որ դա այնպիսի տեղ է, որտեղից մնացած բոլորը փորձում են փախչել: Ու եթե մեկը հարցներ, թե ինչի համար է գնում, պատասխանում էր. «Որովհետև ես բժիշկ

թվայնացրել է 1915.info կայքը

եմ, գրո՛ղը տանի, ու երբ բժիշկ դարձա, հրաժարվեցի ընտրելու շռայլությունից, թե ում կյանքը փրկեմ»:

Տատիկն առանձնապես գլուխ չէր հանում տնտեսությունից ու արդյունավետությունից, բայց բոլորը լսում էին նրան այնտեղ՝ քառսի մեջ: Իրական աշխարհում մյուս բժիշկները նույնիսկ խանութ չէին գնա նրա հետևից, բայց երբ աշխարհը փուլ էր գալիս, զորաբանակի պես հետևում էին նրան: Որովհետև աներևակայելի աղետներն աներևակայելի հատկություններ են ծնում մարդկանց մեջ: Ու ծնում են աներևակայելի գերհերոսներ:

Մի անգամ՝ ուշ գիշերով, երբ նրանք Միամասի ճանապարհին էին, Էլսան այդ մասին հարցրեց տատիկին, թե ինչպես է մարդ իրեն զգում, երբ գտնվում է մի տեղ, որտեղ աշխարհը փուլ է գալիս: Ի՞նչ էին զգում Մարտ-Ան-Վերջի ժամանակ, երբ ալիքը գահավիժում էր իննսունինը ձյունահրեշտակների վրա: Ու տատիկը պատասխանեց. «Պատկերացրո՛ւ ամենա-ամենավատ բանը, որ կարող է մտքովդ անցնել, պատկերացրո՛ւ ամենա-ամենաչար արարածին, ու հետո էդ բոլորը բազմապատկի՛ր էնպիսի մեծ թվով, որ իսկի չես կարող պատկերացնել»:

Էլսան այդ գիշեր կարգին վախեցել էր ու հարցրել տատիկին, թե ինչ են անելու, եթե մի օր աշխարհը փուլ գա իրենց ապրած տեղում:

Եվ այդ ժամանակ տատիկն իր ափերի մեջ ամուր սեղմել էր նրա ցուցամատիկներն ու ասել. «Էդ ժամանակ կանենք էն, ինչ անում են բոլորը. կանենք ամեն ինչ, ինչ որ կարողանանք»: Էլսան բարձրացել էր նրա ծնկներին ու հարցրել. «Իսկ մենք ի՞նչ կարող ենք անել»: Իսկ տատիկը համբուրել էր նրա գլուխն ու ամուր-ամուր գրկելով՝ շշնջացել էր.

— Մենք կգրկենք այնքան շատ երեխա, ինչքան կկարողանանք տանել, ու ինչքան կարող ենք, արագ կվազենք:

— Ես վազելուց լավ եմ,– կամացուկ ասել էր Էլսան:

— Ես էլ,– շշնջացել էր տատիկն ի պատասխան:

Այն օրը, որ Էլսան ծնվել էր, տատիկը շատ հեռու էր: Պատերազմի թոհուբոհում՝ մի տեղ, որտեղ աշխարհը փուլ էր եկել: Նա ամիսներ էր անցկացրել այնտեղ ու արդեն օդանավակայանի ճանապարհին էր՝ տունդարձի ճանապարհին: Հենց այդ ժամանակ լսել էր սարսափելի ալիքի մասին, որը բոլորովին ուրիշ վայրում էր՝ շատ ավելի հեռու, որտեղից բոլորը փախչում էին: Եվ նա արեց այն, ինչ պիտի աներ. այսինքն՝ շտապեց այն-

թվայնացրել է 1915.info կայքը

տեղ, քանի որ այնտեղ բժշկի կարիք կար: Նա հասցրել էր մահվան երա-խից շատ երեխաների փրկել, բայց սև կիսաշրջազգեստով կնոջ տղանե-րին՝ ոչ: Ու փոխարենը փրկել էր սև կիսաշրջազգեստով կնոջը: Հետո նրան հասցրել էր տուն:

Էլսան ու մայրիկը նստած են Kia-ում: Առավոտյան մեքենաների երկար շա-րան է: Հսկայական փաթիլները նստում են ապակուն:

— Դա տատիկի վերջին ճամփորդությունն էր: Դրանից հետո նա վերա-դարձավ,– պատմությունն ավարտում է մայրիկը:

Էլսան չի հիշում, թե մայրիկը երբ է վերջին անգամ նման երկար պատ-մություն պատմել: Մայրիկը համարյա երբեք պատմություններ չի պատ-մում, այն էլ երկար պատմություններ, իսկ այս մեկն այնքան երկար էր, որ նա կեսից քնել էր երեկ գիշերով, ու մայրիկը ստիպված էր շարունակել առավոտյան՝ դպրոցի ճանապարհին: Տատիկի վերջին ճամփորդության ու Էլսայի առաջին օրերի մասին:

— Իսկ ինչո՞ւ էր վերջինը,– հարցնում է Էլսան:

Մայրիկը տխուր, բայց և միաժամանակ ուրախ ժպտում է. զգացմունքնե-րի համադրություն, որ միայն մայրիկն է կարողանում լիովին կառավարել:

— Նոր աշխատանք ունեցավ:

Ու հետո հանկարծ տեսքից երևում է, որ ինչ-որ բան հիշեց: Հիշողություն, որ չէր ուզում, բայց որը դուրս թռավ ասես ջարդված անոթի միջից:

— Դու ժամանակից շուտ էիր ծնվել, ու քո սրտիկի համար անհանգստա-նում էին, այնպես որ մենք քեզ հետ պիտի մի քանի շաբաթ հիվանդա-նոցում մնայինք: Տատիկը նրա հետ նույն օրը վերադարձավ, ինչ որ մենք…

Էլսան հասկանում է, որ նա սև կիսաշրջազգեստով կնոջը նկատի ունի: Մայրիկը, Kia-ի ղեկը բռնած, շարունակում է մտացրիվ ինքն իրեն խոսել:

— Ես երբեք հետը շատ չեմ խոսել: Չեմ կարծում, թե շենքում որևէ մեկն ուզենար ավելի շատ հարցեր տալ: Մենք թողեցինք, որ տատիկը նրա մա-սին հոգ տանի: Ու հետո…

Նա հոգոց է հանում, ու ափսոսանքի նշույլ է հայտնվում նրա հայացքում:

— Հետո տարիներն անցնում են: Ու բոլորս զբաղված էինք: Ու հիմա նա ուղղակի մեր շենքի բնակիչներից մեկն է: Ճիշտն ասած, ես լրիվ մոռացել էի, որ նա այդպես բնակվեց մեր շենքում: Դուք նույն օրը եկաք…

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրիկը շրջվում է դեպի Էլսան: Փորձում է ժպտալ: Ստացվում է լավագույնի վատթարագույն տարբերակով:

— Ինչ վատն եմ, չէ՞, որ իսպառ մոռացել էի այդ մասին:

Էլսան տարուբերում է գլուխը: Մի պահ ուզում է Հրեշի ու վորսի մասին պատմել, բայց հրաժարվում է այդ մտքից՝ վախենալով, որ մայրիկը կարգելի նրանց հանդիպել: Մայրիկները, իրոք, երբեմն շատ տարօրինակ սկզբունքներ են ունենում, երբ հարցը վերաբերում է երեխաների՝ հրեշների ու վորսերի հետ շփումներին: Էլսան գիտակցում է, որ բոլորը նրանցից վախենում են, ու երկար ժամանակ է պահանջվելու՝ հասկանալու համար, որ նրանք այնպիսին չեն, ինչպիսին նրանց պատկերացնում են: Ճիշտ հարբեցողի պես:

— Իսկ հաճա՞խ էր տատիկը ճամփորդում,– փոխարենը հարցնում է նա:

Մայրիկն ամուր բռնել է ղեկը: Մի արծաթագույն մեքենա հետևից ազդանշան է տալիս, որովհետև մայրիկն իր ու առջևի մեքենայի միջև մի քանի մետր տարածություն է թողել: Մայրիկը բաց է թողնում արգելակը, ու Kia-ն դանդաղ առաջ է գնում:

— Հաճախականությունը կախված էր նրանից, թե որտեղ ու ինչքան ժամանակով նրա կարիքն ունեին:

— Դու դա՞ նկատի ունեիր, երբ մի անգամ տատիկն ասում էր, թե տնտեսագետ դարձար, որովհետև զայրացած էիր իր վրա:

Մայրիկը զարմացած շրջվում է Էլսայի կողմը: Հետևի մեքենան նորից ազդանշան է տալիս:

— Հը՞:

Էլսան դռան շրջանակի ռետինն է քչփորում:

— Ես լսել եմ: Մեգահին ժամանակներում: Երբ տատիկն ասաց, որ քո տնտեսագետ դառնալը դեռահասության խռովություն էր: Դու էլ ասացիր. «Ի՞նչ գիտես: Դու երբեք կողքիս չէիր»: Դու դա՞ նկատի ունեիր, հա՞:

Մայրիկը զննում էր իր մատնահոդերը:

— Ես շատ բարկացած էի, Է՛լսա: Մեկ-մեկ մարդ չի կարողանում խոսելիս իրեն տիրապետել, երբ զայրացած է:

Էլսան կրկին տարուբերում է գլուխը, բայց այժմ՝ որպես անհամաձայնություն:

— Չէ՛, բայց ո՛չ դու: Դու երբեք քեզ չես կորցնում:

Մայրիկը նորից փորձում է ժպտալ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տատիկիդ հետ, դե, գիտես… դժվար էր…

— Քանի՞ տարեկան էիր, որ պապիկը մահացավ:

— Տասներկու:

— Տասներկուսում մարդ դեռ մեծահասակ չի՞:

— Չէ՛: Բոլորովի՛ն:

— Ու տատիկը քեզ մենա՞կ էր թողնում:

— Տատիկդ գնում էր էնտեղ, որտեղ իր կարիքն ունեին:

— Բայց դու էլ նրա կարիքն ունեիր:

— Ուրիշներն ավելի շատ ունեին:

— Դրա համա՞ր էիք անընդհատ կռվում:

Մայրիկն այնքան խորն է հառաչում, ինչպես կհառաչեր ծնողը, որը հանկարծ բացահայտում է, որ չափից դուրս շատ է խորացել պատմության մեջ, քան կարող էր պատկերացնել:

— Հա՛, մեկ-մեկ հաստատ էդ պատճառով էր: Մեկ-մեկ էլ լրիվ ուրիշ պատճառներով: Տատիկդ ու ես, իսկապես, ահավոր… տարբեր էինք:

— Չէ՛: Դուք ուղղակի տարբեր ձևով էիք տարբեր:

— Գուցե:

— Իսկ ամենաշատն ինչի՞ համար էիք վիճում:

Kia-ի հետևի մեքենան նորից ազդանշան է տալիս: Մայրիկն աչքերը փակում է ու շունչը պահում: Երբ վերջապես բաց է թողնում արգելակն ու թողնում է՝ մեքենան առաջ գնա, բառերը ասես երկար պայքարից հետո դուրս են սպրդում շրթունքների արանքից:

— Քեզ համար: Մենք միշտ քեզ համար էինք վիճում, անո՛ւշս:

— Ինչո՞ւ:

— Որովհետև երբ մարդ մեկին ահավոր շատ է սիրում, շատ դժվար է նրան մեկի հետ կիսել:

— Ջին Գրեյի պես,– հաստատում է Էլսան, կարծես ինքնին հասկանալի փաստ է:

— Ո՞ւմ,– զարմանում է մայրիկը, ասես իսկի էլ ինքնին հասկանալի փաստ չէ:

— Գերհերոս է: Իքս մարդկանցից: Կուղխն ու Կիկլոպը սիրում են նրան ու անընդհատ կռվիվների մեջ են:

Մայրիկը գլխով է անում, կարծես դրանից մի փոքր պակասում է ինքնին հասկանալի չլինելու փաստը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կարծում էի, որ այդ Իքս մարդիկ մուտանտներ են, ոչ թե գերհերոսներ: Էդպես չէի՞ր ինձ նախորդ անգամ բացատրել, երբ նրանց մասին խոսք եղավ:

— Դե, մի քիչ բարդ է,– ասում է Էլսան, չնայած իրականում ամենևին բարդ չէ, եթե բավականաչափ որակով գրականություն ես կարդացել:

— Ո՞րն էր էդ Ջին Գրեյի գերունակությունը,– հարցնում է մայրիկը:

— Հեռազգացությունը,– ասում է Էլսան:

— Լավ գերունակություն է,– ասում է մայրիկը:

— Ընտի՛ր,– համաձայնում է Էլսան:

Էլսան որոշում է չհիշել, որ Ջին Գրեյը նաև հեռաշարժվելու հատկություն ունի, որովհետև չէր ուզում այս պահին իրավիճակն է՛լ ավելի բարդացնել մայրիկի համար: Քանի որ անկախ ամեն ինչից՝ հղի է:

Այնպես որ, Էլսան փոխարենը նորից սկսում է քաշքշել դռան ռետինի շերտը: Նայում է դրա արանքը: Սարսափելի հոգնած է, ինչպես շուտով ութ տարեկանը բոլորող մեկը, որ համարյա ամբողջ գիշեր չի քնել ու մի լավ բարկացել է: Էլսայի մայրիկը երբեք մայրիկ չի ունեցել, որովհետև մայրիկի մայրիկը միշտ ուրիշ տեղ է եղել ուրիշներին օգնելիս: Էլսան երբեք այդ տեսանկյունից չի նայել տատիկին:

— Դու ջղայնանո՞ւմ ես վրաս, որ տատիկն անընդհատ ինձ հետ էր ու երբեք քեզ հետ չէր լինում,– զգուշորեն հարցնում է նա:

Մայրիկն այնքան ուժգին ու եռանդուն է թափ տալիս գլուխը, որ Էլսան անմիջապես հասկանում է, որ այն, ինչ ասելու է հիմա, սուտ է:

— Չէ՛, սիրելի՛, սիրելի՛ անուշս: Երբե՛ք ու երբե՛ք:

Էլսան գլխով է անում ու նայում է ռետինե շերտի տակ:

— Իսկ ես զայրանում եմ: Որովհետև ինքն ինձ չի պատմել ճշմարտությունը:

— Բոլորն իրենց գաղտնիքներն ունեն, անո՛ւշս:

— Իսկ բարկանո՞ւմ էիր, որ ես ու տատիկը գաղտնիքներ ունեինք,– հարցնում է Էլսան՝ առանց մայրիկին նայելու:

Նա մտածում է իրենց գաղտնալեզվի մասին, որով խոսում էին, որ մայրիկը չհասկանա: Մտածում է Երկիր-Կիս-Արթունի մասին: Տեսնես տատիկը մայրիկին տարե՞լ է այնտեղ:

— Երբեք չէի բարկանում,– ասում է մայրիկը՝ ձեռքը ձգելով նստարանի վրայով, ու շշնջում է.

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես նախանձում էի:

Մեղքի զգացումը ցնցում է Էլսային, ինչպես սառը ցնցուղը՝ անպատրաստ մարդուն:

— Տատիկը դա նկատի ուներ,– հասկանում է Էլսան:

— Ի՞նչը,– չի հասկանում մայրիկը:

Էլսան փնչացնում է:

— Ասում էր, որ ես իրեն կատեմ, երբ իմանամ՝ ինչպիսին էր ինքը մինչև իմ ծնվելը: Դա նկատի ուներ: Որ ես կիմանամ, թե ինչ ահավոր վատ մայր է եղել, որ իր երեխային թողել է…

Մայրիկը նրան է նայում այնպիսի փայլուն աչքերով, որ Էլսան կարող էր իր արտացոլանքը տեսնել այնտեղ:

— Ինքն ինձ չի թողել: Մի՛ ատիր տատիկիդ, անո՛ւշս:

Ու երբ Էլսան ոչինչ չի ասում, մայրիկը շոյում է նրա այտն ու շշնջում.

— Բնական է, որ դուստրերը զայրանան իրենց մայրերի վրա: Բայց նա հրաշալի տատիկ էր, Է՛լսա: Նա ամենահրաշալի տատիկն էր, որ հնարավոր է պատկերացնել:

Էլսան համառորեն քաշքշում է ռետինի շերտը:

— Բայց նա քեզ մենակ էր թողնում, չէ՞: Ամեն անգամ, երբ հեռանում էր, դու մենակ էիր մնում, չէ՞: Բայց էդպես չի կարելի անել, որովհետև սոցիալական ծառայությունները կարող են երեխային մանկատուն տեղավորել:

Մայրիկը փորձում է ժպտալ:

— Վիքիպեդիայո՞ւմ ես կարդացել:

Էլսան փնչացնում է:

— Դպրոցում եմ լսել:

Մայրիկը դժվարությամբ թարթում է աչքերը:

— Երբ ես փոքր էի, պապիկը կար:

— Մինչև որ մահացավ:

— Երբ մահացավ, հարևանները կային:

— Ո՞ր հարևանները,– ուզում է իմանալ Էլսան:

Հետևի մեքենան նորից ազդանշան է տալիս: Մայրիկը հետևի պատուհանից նշանով ներողություն է խնդրում, ու Kia-ն առաջ է շարժվում:

— Բրիտ-Մարին,– վերջապես ասում է նա:

Էլսան թողնում է ռետինե շերտը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այսինքն՝ Բրիտ-Մարին ի՞նչ:
— Նա էր ինձ հետևում:
Էլսայի ունքերը զայրույթից իրար են միանում:
— Էդ դեպքում ինչո՞ւ է քո հանդեպ վհուկի պես պահում իրեն:
— Էդպես մի՛ ասա, Է՛լսա:
— Հե՛նց էդպիսինն է:
Մայրիկը քթով ուժեղ արտաշնչում է:
— Բրիտ-Մարին միշտ չի այդպիսին եղել: Նա ուղղակի… միայնակ է:
— Ինչո՞ւ: Բա Քե՞նթը:
Մայրիկը երկար թարթելուց հետո փակում է աչքերը:
— Միայնակ լինելու շա՛տ տարբերակներ կան, անո՛ւշս:
Էլսան նորից վերադառնում է դռան ռետինե շերտին:
— Բայց նա, միևնույն է, տխմարի մեկն է:
Մայրիկը գլխով է անում:
— Մարդ խելքը թռցնում է, երբ շատ երկար է միայնակ մնում:
Մեքենան նրանց հետևում նորից է ազդանշան տալիս:
— Դա՞ է պատճառը, որ տատիկը մեր տան հին լուսանկարներից ոչ մեկում չկա,– հարցնում է Էլսան:
— Հը՞:
— Տատիկը մինչև իմ ծնվելը չկա ոչ մի լուսանկարում: Որ փոքր էի, կարծում էի, որ նա վամպիր է, որովհետև նրանք լուսանկարվելիս չեն երևում նկարում ու կարող են ուզածի չափ ծխել, ու կոկորդներին ոչինչ չի լինում: Բայց նա վամպիր չէր, չէ՞: Ուղղակի երբեք տանը չէր լինում:
— Շատ բարդ է:
— Գիտեմ: Բարդ է, մինչև որ մեկը բացատրում է: Բայց երբ տատիկին հարցնում էի, նա միշտ խոսակցության թեման փոխում էր: Իսկ երբ հայրիկին հարցրի, ասաց. «Է՛հ… դե… դե ի՞նչ կուզես: Ուզո՞ւմ ես՝ պաղպաղակ գնենք: Պաղպաղակ ուզո՞ւմ ես»:
Մայրիկն անսպասելիորեն բարձրաձայն ծիծաղում է: Այնպես է ծիծաղում, որ եթե բերանում կաթնային ըմպելիք լիներ, ապա Kia-ի գործիքների վահանակն ամբողջությամբ կցողվեր մայրիկի քթից: Էլսան չափազանց լավ էր կարողանում հայրիկի ձևերն անել:
— Հայրիկդ միշտ խուսափում էր անմիջական կոնֆլիկտներից,– փռթկացնում է մայրիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հիմա տատիկը վամպի՞ր էր, թե՞ չէ:

— Տատիկդ ամբողջ աշխարհով շրջել է ու երեխաների կյանքեր փրկել, անո՛ւշս, նա ուղղակի…

Մայրիկը կարծես ճիշտ բառ է փնտրում: Երբ գտնում է, պայծառանում է ու արդեն իսկապես ժպտում:

— Գերհերո՛ս: Նա իսկական սուպերհերոս էր:

Էլսան զննում է դռան ու դռան շրջանակի արանքը:

— Գերհերոսներն իրենց սեփական երեխաներին չեն թողնում:

Մայրիկը լռում է:

— Բոլոր գերհերոսները պիտի ինչ-որ զոհողությունների գնան, անո՛ւշս,– ի վերջո փորձում է համոզել մայրիկը:

Բայց թե՛ նա, թե՛ Էլսան գիտեն, որ նա այդպես չի կարծում:

Հետևի մեքենան նորից ազդանշան է տալիս: Մայրիկը ձեռքով հայելու մեջ ներողություն է խնդրում: Kia-ն մի քանի մետր առաջ է գնում: Էլսան սպասում էր, որ մայրիկը կսկսի գոռգոռալ կամ լաց լինել կամ ինչ-որ բան անել: Ուզում էր պարզապես տեսնել, որ նա մի բան զգում է: Եվ նա անում է այն, ինչ գրեթե բոլոր ութ տարեկան երեխաներն են անում նման իրավիճակում: Նա նայում է դռան ռետինե շերտի արանքը, ապա մեքենայի մեջ շուրջն է նայում՝ փնտրելով մի բան, որ բոլորովին նախատեսված չէ դռան արանքը խցկելու համար, բայց մտքինը հենց այդ է:

Բացում է պահոցիկը: Աչքն ընկնում է ծամոնի տուփի վրա: Վերցնում է այն ու նայում մայրիկին: Հետո խնամքով խցկում է ծամոնը դռան արանքը: Հետո՝ մյուսը: Մայրիկը տեսնում է. Էլսան գիտի, որ մայրիկը տեսնում է, բայց ոչինչ չի ասում: Այս անգամ ինքնատիրապետումը չի կորցնում: Էլսան ատում է այդ պահերը:

Հետևից մեքենան ազդանշան է տալիս: Մայրիկը ձեռքով նշան է անում: Kia-ն գլորվում է առաջ: Էլսան չի հասկանում՝ մարդ ինչքան պիտի շտապի, որ հանուն հինգ մետր առաջ շարժվելու ամեն անգամ մեքենաների շարքում մեկին ազդանշան տա: Կողային հայելու մեջ նայում է մեքենայի մեջ նստած մարդուն: Տեսքից արդեն պարզ է, որ ըստ նրա՝ խցանման մեղավորն Էլսայի մայրիկն է: Էլսան ահավոր շատ է ուզում, որ մայրիկն անի

թվայնացրել է 1915.info կայքը

նույնը, ինչ արել էր, երբ Էլսայով էր հղի. դուրս էր եկել մեքենայից ու բղավել՝ հերի՛ք է:

Էլսայի հայրիկն էր պատմել այդ պատմությունը: Նա գրեթե երբեք պատմություններ չի պատմում, բայց Միդսոմարի* երեկոյան, երբ Էլսայի մայրիկը դեռ չէր սկսել հաճախակի տխրել ու ավելի շուտ պառկել, և հայրիկն էլ գիշերներով մենակ չէր նստում խոհանոցում ու արցունքներն աչքերին՝ մայրիկի համակարգչի էկրանին կարգի չէր բերում պատկերակները, նրանք երեքով մասնակցում էին տոնակատարությանը: Այդ օրը հայրիկը երեք շիշ գարեջուր էր խմել ու պատմեց, թե ինչպես էր Էլսայով հղի մայրիկը դուրս եկել մեքենայից, մոտեցել արծաթագույն մեքենայի վարորդին ու սպառնացել, որ կծննդաբերի հենց նրա գրողի տարած մեքենայի կապոտի վրա, եթե նա մի անգամ էլ ազդանշան տա: Բոլորով մի լավ ծիծաղել էին այդ պատմության վրա: Իհարկե, ո՛չ հայրիկը, քանի որ նա առանձնապես շատ չի սիրում ծիծաղել: Բայց Էլսան վստահ է, որ նույնիսկ նրա կարծիքով՝ պատմությունը, իրոք, զվարճալի էր: Այդ օրը նա պարել էր մայրիկի հետ: Դա վերջին անգամ էր, որ Էլսան տեսել էր նրանց իրար հետ պարելիս: Հայրիկը սոսկալի վատ էր պարում. նա հսկայական արջի էր նմանվում, որ կանգնել էր ու հայտնաբերել, որ ոտքերը թմրել են: Էլսան անչափ կարոտում է: Կարոտում է արջի թմրած թաթերը:

Ու կարոտում է մայրիկի անզուսպ պահվածքը, որ կարող էր դուրս գալ մեքենայից ու մի լավ գոռգոռալ արծաթագույն մեքենաների վարորդների վրա:

Արծաթագույն մեքենայի վարորդը նորից ազդանշան է տալիս:

Եվ հենց այդ պահին Էլսան որոշում է կայացնում, որն այդ ամբողջ առավոտը վերածում է Facebook-ի ստատուսի: Թերևս այդպես կարելի է կարճ ներկայացնել նրա արածը: Նա գետնից բարձրացնում է ուսապարկը, հանում մեջը եղած գրքերից ամենածանրը, ու երբ Kia-ն կանգ է առնում առջևի մեքենայի հետևը, Էլսան կտրուկ քաշում է դռան բռնակն ու նետվում է դուրս՝ մայրուղու վրա: Նա լսում է՝ ինչպես է մայրիկը գոռում իր հետևից, բայց չի շրջվում: Արագ շրջանցում է Kia-ն և ուղղվելով դեպի արծաթագույն մեքենան՝ ամբողջ ուժով գրքով խփում է մեքենայի կապոտին:

---

* Շվեդական ազգային տոն, որ նշում են ամառային արևադարձի օրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Հարթ մակերևույթի վրա մեծ փորվածք է երևում: Էլսայի ձեռքերը ցնցվում են:

Արծաթագույն մեքենայի վարորդն աչքերը չռած նրան է նայում, ասես ոչ մի կերպ չի կարողանում հավատալ տեսածին: Գրեթե այն անգամվա պես, երբ Էլսան մայրիկի ու հայրիկի հետ Փարիզի Դիսնեյլենդում էր: Տունդարձի ճամփին ուշ երեկոյան Էլսան տեսավ թփերի մեջ միզող Մոխրոտիկին, որ ինչ-որ բան էր բղավում: Էլսան հետո իմացավ, որ նա ֆրանսերեն շատ գռեհիկ հայհոյանքներ էր ասում՝ ուղղված ծովահենի հագուստով մի տղայի:

Էլսան ակնդետ մարդուն է նայում: Նա էլ ասես կաթվածահար նրան է նայում:

— Տխմա՛ր,– գոռում է Էլսան:

Երբ վարորդն անմիջապես չի պատասխանում, Էլսան գիրքը դարձյալ երեք անգամ ամբողջ ուժով խփում է կապոտին ու սպառնալից մատը վրան տնկում:

— Լսի՛ր, մայրիկս հղի է, ու դու իրավունք չունե՛ս քեզ վերջին ԱՆԱՍՈՒՆԻ պես պահելու, հասկացա՞ր: Եղա՞վ:

Տղամարդը սկզբում կարծես ուզում է դուռը բացել: Բայց հետո միտքը փոխում է: Էլսան, գիրքը գլխավերևում թրի պես բռնած, նեղ կողմով իջեցնում է՝ խորը վերք բացելով կապոտի վրա:

Տղամարդն ապշահար նրան է նայում: Հետո վիզն է տրորում: Հետո ձեռքը տանում է կողքի ապակուն:

Էլսան լսում է դռների արգելափակման ձայնը:

— ՄԵՆՔ ՇԱՏ ԾԱՆՐ ՕՐ ԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ: Էնպես որ, հիմա մի քիչ տրամադրվի՛ր, որովհետև մայրիկս հիմա դուրս կգա ու Կեսիկին կծննդաբերի հենց քո ԳՐՈՂԻ ՏԱՐԱԾ ՄԵՔԵՆԱՅԻ վրա,– մռնչում է Էլսան:

Ուղղակի, որ ավելի լավ տպավորվի:

Տղամարդն իր ծնկներին է նայում:

Էլսան կանգնած է մնում մայրուղու վրա՝ արծաթագույն մեքենայի ու Kia-ի արանքում, ու այնքան ծանր է շնչում, որ գլխացավ է սկսվում: Լսում է, որ մայրիկն ինչ-որ բան է բղավում, ապա շրջվում է, որ նորից գնա ավտոմեքենայի մեջ նստելու և, իսկապես, գնում է նստելու: Ամբողջ կատարվածն ինքն ամենևին էլ չէր ծրագրել: Իրոք: Բայց հենց այդ պահին իր ուսին զգում է մեկի ձեռքը, ու մեկն իրեն հարց է տալիս.

թվայնացրել է 1915.info կայքը

— Օգնության կարիք ունե՞ս:

Երբ շրջվում է, տեսնում է, որ կողքին ոստիկան է կանգնած: Նրանից սնուսի (ծամելու ծխախոտի) հոտ է գալիս:

— Ինչո՞վ օգնեմ,– նորից մտերմաբար հարցնում է նա:

Նա շատ երիտասարդ է երևում: Ոնց որ ամառային արձակուրդին ոստիկան աշխատող ջահելներից լինի, չնայած ձմեռ է:

— Նա անընդհատ ազդանշան էր տալիս,– արդարանում է Էլսան:

Ամառային արձակուրդին ոստիկան աշխատողը նայում է արծաթագույն մեքենայի վարորդին: Տղամարդը ներսում աննկարագրելի զբաղված է, որ ոստիկանին չի էլ նկատում: Էլսան շրջվում է Kia-ի կողմը ու թեև բոլորովին միտք չուներ որևէ բան ասելու, բայց բառերն ասես իրենք են դուրս թափվում նրա բերանից:

— Մայրիկս պիտի ծննդաբերի, ու մեզ համար մի քիչ ծանր օր էր էսօր…

Նա նորից զգում է ոստիկանի ձեռքն իր ուսին:

— Քո մայրիկը ծննդաբերո՞ւմ է,– բացականչեց նա:

— Այսինքն, դե, ոչ հենց հի…,– սկսում է Էլսան:

Բայց արդեն ուշ է: Ոստիկանը նետվում է Kia-ի մոտ: Մայրիկը կիսով չափ դուրս էր եկել մեքենայից և ձեռքը Կեսիկի վրա դրած՝ ուզում էր նրանց մոտենալ:

— Կարո՞ղ եք մեքենա վարել,– այնքան բարձր է բացականչում ոստիկանը, որ Էլսան, նյարդայնացած, մատները ցուցադրաբար ականջները խցկած, փախչում է ավտոմեքենայի հակառակ կողմը:

Մայրիկը հանկարծակիի եկած նրան է նայում:

— Հը՞: Ի՞նչ: Իհա՛րկե, կարող եմ քշել: Այսինքն՝ ինչ-որ բա՞ն է պա…

— Ես առջևից կգնամ,– վրա է բերում ոստիկանն առանց լսելու, մայրիկին հետ է հրում Kia-ի մեջ ու նետվում դեպի ոստիկանական մեքենան:

Մայրիկը թրմփում է իր նստարանին: Նայում է Էլսային: Էլսան մտազբաղ քրքրում է պահոցիկը, որպեսզի պատճառ ունենա նրա հայացքից խուսափելու:

— Էս ի՞նչ է կատարվում,– հարցնում է մայրիկը:

Ոստիկանի մեքենան սլանում է նրանց կողքով՝ ոստիկանական շչակը միացրած: Ամառային արձակուրդի ոստիկանը, ձեռքը բուռն թափահարելով, հրահանգում է հետևել իրեն:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոնց որ ուզում է իրեն հետևես,– քրթմնջում է Էլսան՝ առանց մայրիկին նայելու:

Դիմացի մեքենաները մի կողմ են քաշվում: Պիկ ժամի երթևեկությունը սահուն ճեղքվում է բանանի կեղևի պես:

— Բայց... էստեղ... ի՞նչ է... պատահել,– զգուշորեն շշնջում է մայրիկը՝ հետևելով ոստիկանական մեքենային:

— Facebook-յան ստատուսի պես մի բան, կարելի է ասել,– հազալով ասում է Էլսան:

— Իսկ որտե՞ղ է քշում,– հարցնում է մայրիկը՝ միաժամանակ փորձելով պատուհանից ներողություն խնդրել բոլորից, ում կողքով անցնում է:

— Պետք է ասել՝ ո՞ւր,– մռթմռթում է Էլսան, որովհետև չասել չի կարող:

— Ո՞ւր է: Առաջնորդում: Մեզ: Է՛լսա,– հատ-հատ արտասանում է մայրիկը, ու հանուն ազնվության Էլսան պետք է ընդունի, որ մի փոքր կշտամբանքի երանգով:

— Ոնց որ թե՝ հիվանդանոց, ենթադրում եմ, որովհետև կարծում է, թե դու ծննդաբերում ես,– քթի տակ ասում է Էլսան՝ պահոցիկը խառնելով:

— Ծննդաբերո՞ւմ եմ...,– ատամները սեղմած՝ կրկնում է մայրիկը՝ առաջ անցնելով մեքենաներից, որոնք ամառային արձակուրդի ոստիկանի մեքենայի շչակի ձայնից մի կողմ են քաշվում:

— Ը՛ը՛ը՛...,– ասում է Էլսան:

— Իսկ ինչո՞ւ ես նրան ասել, թե ես ծննդաբերում եմ:

— Ես չե՛մ ասել: Բայց ինձ երբեք ոչ ոք չի լսում,– սրտնեղած վրա է տալիս Էլսան:

— Ահա թե ի՛նչ: Իսկ ես հիմա ի՞նչ պիտի անեմ, մտածե՞լ ես,– վրա է բերում մայրիկն ի պատասխան, ու զգացվում է, որ նրա ինքնատիրապետումն աննշան թուլացել է:

— Դե, նրա հետևից էսքան երկար քշելուց հետո հաստատ ծանր կտանի, եթե պարզվի, որ դու իրականում չես ծննդաբերելու,– խրատական տոնով արձանագրում է Էլսան:

— ՀԱՄՈԶՎԱ՞Ծ ԵՍ,– մռնչում է մայրիկն ամենևին ո՛չ խրատական, ո՛չ էլ ինքնազսպված:

Էլսան նախընտրում է չքննարկել՝ մայրիկի ասածն ավելի ծա՞ղր էր, թե՞ հեգնանք:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրանք կանգ են առնում հիվանդանոցի շտապօգնության ընդունարանի առջև, ու մայրիկը, թվում է, իսկապես պատրաստ է դուրս գալ մեքենայից ու ամեն ինչ խոստովանել ոստիկանին: Եվ նա, ըստ էության, այդպես էլ անում է, սակայն ոստիկանը նրան հետ է հրում մեքենայի մեջ ու բղավում, որ հիմա օգնություն կբերի: Հետո բղավելով ու ձեռքերը թափահարելով՝ ներս է գցում իրեն ընդունարան՝ ասես մարմնի լեզվով հասկացնելով, որ եռացող շոկոլադ է թափել վրան: Մայրիկը դժբախտ հայացքով հետևում է նրան. դա իր հիվանդանոցն է, որի ղեկավարն ինքն է:

— Ա՛յ թե գլխացավանք կլինի անձնակազմին բացատրել՝ ինչն ինչոց է,– քրթմնջում է նա՝ գլուխը հուսահատ հենելով մեքենայի ղեկին:

— Իսկ եթե ասես, թե ուսումնական վարժա՞նք է,– առաջարկում է Էլսան:

Մայրիկը չի պատասխանում: Էլսան հազալով կոկորդն է մաքրում:

— Տատիկը հաստատ կասեր, որ շատ զվարճալի է:

Մայրիկը հազիվ ժպտում է ու մի ականջը ղեկին է դնում: Նրանք երկար իրար են նայում:

— Իր համար, գրո՛ղը տանի, զվարճալի կլիներ,– համաձայնում է մայրիկը:

— Մի՛ հայհոյիր,– ասում է Էլսան:

— Բայց դու էլ ես ասում էդ բառը:

— Բայց ես հո մայրի՞կ չեմ:

Մայրիկը ժպտում է:

— Touché:

Էլսան մի քանի անգամ բացում ու փակում է պահոցիկը: Նայում է հիվանդանոցի ճակատային մասին: Այս բազմաթիվ պատուհաններից մեկի հետևում էր տատիկի հետ քնել նրա անկողնում այն գիշեր, երբ տատիկը վերջին անգամ թռավ Միամաս: Հիմա դա այնքա՜ն վաղուց է թվում: Թվում է, թե ինքն էլ շատ վաղուց չի եղել Միամասում:

— Ի՞նչ աշխատանք էր,– հարցնում է Էլսան՝ ավելի շուտ իր մտքերին վերջ տալու համար:

— Ի՞նչ,– չի հասկանում մայրիկը:

— Դու ասացիր, որ փոթորկից հետո տատիկն էլ չգնաց ուրիշ տեղ, որովհետև նոր աշխատանք ունեցավ: Ի՞նչ ուրիշ աշխատանք էր:

Պատասխանը շշնջալիս մայրիկի մատների ծայրերը դիպան Էլսայի ձեռքին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տատիկ: Նա տատիկ էր դարձել: Դա էր նոր աշխատանքը: Ու դրանից հետո նա էլ ուրիշ տեղ չգնաց:

Էլսան դանդաղ գլխով է անում: Մայրիկը շոյում է նրա ձեռքը: Էլսան բացում-փակում է պահոցիկը: Հետո հայացքը բարձրացնում է, ասես հանկարծ ինչ-որ բան էր հասկացել, բայց ավելի շատ ուզում էր փոխել խոսակցության թեման, որովհետև չէր ուզում երկար բարկացած մնալ տատիկի վրա:

— Բայց էս ոստիկանն ի՞նչ էր մտածում: Որ դու պատրաստվում ես վարելու ընթացքում ծննդաբերե՞լ: Հնարավո՞ր է վարել, երբ ծննդաբերում ես:

Մայրիկը թփթփացնում է նրա ուսին:

— Դու ուղղակի կզարմանաս, անո՛ւշս, եթե իմանաս, թե տղամարդկանց մեծ մասն իրականում ինչքան քիչ բան գիտի երեխայի ծնվելու մասին:

Էլսան գլխով է անում ու փռթկացնում.

— Մագլներից ի՞նչ պահանջես:

Մայրիկը ձգվում է նրա կողմն ու համբուրում նրա քունքը: Էլսան հայացքը չի կտրում նրանից:

— Հայրիկն ու դու բաժանվեցիք, որովհետև ձեր սերը վերջացա՞վ,– հանկարծ հարցնում է նա, որ նույնիսկ իր համար էր անսպասելի:

Մայրիկը հետ է նստում: Մատները տանում է մազերի միջով ու օրորում գլուխը:

— Ինչո՞ւ ես հարցնում:

Էլսան ուսերն է թոթվում:

— Դե պիտի, չէ՞, մի բան խոսենք, քանի դեռ ոստիկանին ենք սպասում, որ հիմա հետ կգա լիքը մարդկանց հետ, որոնց շեֆը դու ես, ու մեգաանհարմար վիճակ կլինի…

Մայրիկը նորից մռայլվում է: Էլսան քչփորում է դռան արանքի ռետինը: Հասկանում է, որ ակնհայտորեն վաղ է այդ մասին կատակներ անելը:

— Մարդիկ ամուսնանում են, որովհետև իրար սիրում են, ուրեմն բաժանվում են, որովհետև սերը վերջանում է,– կամացուկ ասում է նա:

— Դպրոցո՞ւմ ես լսել,– հարցնում է մայրիկը:

— Չէ՛, իմ տեսությունն է:

Մայրիկը բոլորովին անսպասելի բարձրաձայն ծիծաղում է: Ինչպես տեղատարափը ֆիլմերում: Էլսան ժպտում է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ պապիկի ու տատիկի սե՞ռն էլ էր վերջացել,– հարցնում է նա, երբ մայրիկը դադարում է ծիծաղել:

Մայրիկը սրբում է աչքերը:

— Նրանք երբեք ամուսնացած չեն եղել, անո՛ւշս:

— Ինչո՞ւ:

— Քո տատիկն առանձնահատուկ էր, Է՛լսա: Նրա հետ ապրելը դժվար էր:

— Այսի՞նքն:

Մայրիկը տրորում է կոպերը:

— Դժվար է բացատրել, անո՛ւշս: Բայց այն ժամանակներում շատ անսովոր էր, որ կանայք տատիկի նման լինեին: Դե քո տատիկի պես մարդն առհասարակ անսովոր երևույթ էր: Օրինակ՝ էնքան էլ տարածված չէր, որ կանայք բժիշկ դառնային: Մանավանդ՝ վիրաբույժ: Ու ակադեմիական աշխարհը բոլորովին այլ էր… Էնպես որ…

Մայրիկը լռում է: Էլսան բարձրացնում է ունքերը:

— Լսած կլինես էն մարդու պատմությունը, որ երբեք ոչինչ ուղիղ չէր ասում:

Մայրիկը մեղավոր ժպտում է, կարծես ի սկզբանե գիտի, որ հիմարություն է այդ մասին ասելը:

— Կարծում եմ, եթե տատիկդ կնոջ փոխարեն տղամարդ ծնված լիներ, նրան կարող էին «փլեյբոյ» կոչել:

Էլսան որոշ ժամանակ լուռ է: Հետո լրջորեն գլխով է անում:

— Ինքը շատ սիրածներ ունե՞ր:

— Հա՛,– զգուշորեն արտաբերում է մայրիկը:

— Մեր դպրոցում էլ մեկը կա, որ շատ ունի,– ասում է Էլսան:

— Է՛հ, չէ՛, ես նկատի չունեի, որ քո դպրոցի աղջիկն էլ է…,– խուճապի մեջ փորձում է արդարանալ մայրիկը:

— Աղջիկ չէ, տղա է,– ուղղում է Էլսան:

Մայրիկը շփոթված է երևում: Էլսան ուսերն է թոթվում:

— Հա՛, շատ բարդ է:

Չնայած ընդհանրապես բարդ չէ, բայց մայրիկի շփոթմունքը դրանից չի պակասում:

— Քո պապիկն անչափ շատ էր սիրում տատիկիդ, բայց նրանք երբեք զույգ չեն եղել: Հասկանո՞ւմ ես:

— Հասկանում եմ,– ասում է Էլսան, քանի որ ինտերնետ ունի:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո առաջ է ձգվում, բռնում մայրիկի ցուցամատերն ու սեղմում ափերի մեջ:

— Ես ահավոր վշտացած եմ, մայրի՛կ, որ տատիկը՝ որպես մայր, բանի պետք չէր:

— Նա հրաշալի տատիկ էր, Է՛լսա: Ու քեզ հետ լրացրեց իր բոլոր բացթողումները,– ասում է մայրիկն ու շոյելով Էլսայի մազերը՝ շարունակում,– տատիկդ լավ էր գլուխ հանում քաոսային իրավիճակներում, որովհետև ինքն էլ էր քաոսային: Նա ուղղակի անգերազանցելի էր աղետալի հանգամանքներում: Իսկ մեր առօրյա ու սովորական կյանքում ինքն ուղղակի տեղը չէր գտնում:

— Ոնց որ սխալ աշխատող ժամացույցը, որ իրականում սխալ չէ, պարզապես անընդհատ սխալ տեղում է,– ասում է Էլսան՝ փորձելով զսպել բարկությունը:

Բայց վատ է ստացվում:

— Հա: Գուցե: Ուղղակի... այսինքն... Որոշ չափով այդ է պատճառը, որ տատիկի հին նկարներից չի մնացել... Դե, որ հաճախ տանը չէր լինում: Ու մասամբ էլ, որովհետև ես էլ եղածները պատռել եմ:

— Ինչո՞ւ:

— Դեռահաս էի: Ու շատ էի զայրանում: Տանը միշտ քաոս էր: Չվճարված հաշիվներ, սառնարանում փչացող ուտելիք, եթե երբեմն լինում էր, իսկ հաճախ ընդհանրապես չէր լինում, դե, էդպես: Տե՛ր Աստված, դժվար է բացատրել, անո՛ւշս: Ես պարզապես գժվում էի:

Էլսան ձեռքերը խաչում է, հետ է նստում ու նայում պատուհանից դուրս:

— Մարդ պիտի երեխա չունենա, եթե չի ուզում նրանով զբաղվել:

Մայրիկը նորից մատներով դիպչում է նրա ուսին:

— Տատիկդ արդեն տարիքով էր, երբ ինձ ունեցավ: Կամ, դե հա՛, նույն տարիքին էր, ինչ որ ես, երբ քեզ ունեցա: Բայց տատիկի ժամանակներում դա ծեր էր համարվում: Ու ինքը չէր կարծում, թե կարող է երեխա ունենալ: Ինչ-որ հետազոտություն էր անցել:

Էլսան դունչը սեղմում է անրակին:

— Այսինքն՝ դու սխալմո՞ւնք էիր:

— Դժբախտ պատահար:

— Ուրեմն էդ դեպքում ե՞ս էլ եմ դժբախտ պատահար:

Մայրիկը սեղմում է շրթունքները:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոչ ոք երբեք այդպես ոչ մեկին չի սպասել, ինչպես ես ու հայրիկը քեզ էինք սպասում, անո՛ւշս: Դու շատ հեռու ես դժբախտ պատահար լինելուց:

Էլսան նայում է Kia-ի առաստաղին ու թարթելով աչքերն ազատում է փառից:

— Դրա՞ համար է, ուրեմն, կարգուկանոնը քո գերունակությունը: Դու չես ցանկացել տատիկին նմանվել:

Մայրիկն ուսերն է բարձրացնում:

— Ես ուղղակի սովորեցի ամեն ինչ ինքս անել, որովհետև տատիկին վստահել չէր լինում: Վերջում արդեն միայն ավելի վատ էր լինում, երբ նա վերադառնում էր: Ես բարկանում էի նրա վրա, երբ նա տանը չէր, իսկ երբ գալիս էր, ավելի շատ էի կատաղում:

— Ու մինչև հիմա էլ կատաղո՞ւմ ես:

— Դրա համար ես շատ վատ մա՞րդ եմ:

Էլսան ոտքը խփում է Kia-ի հատակին:

— Չէ՛: Եթե ես իմանայի, որ տատիկն իր երեխային թողել է, մենք հաստատ իրարից խռովելու նոր ռեկորդ կսահմանեինք:

Մայրիկն ավելի արագ է շոյում նրա մազերը:

— Նա բացառիկ տատիկ էր, անո՛ւշս:

— Բայց անպետք մայր էր:

— Մի՛ ասա, խնդրում եմ: Ինքն արել է, ինչ կարողացել է: Մենք բոլորս էլ անում ենք մեր կարողացածի չափով:

— Չէ՛:

— Դու չպիտի իմ փոխարեն բարկանաս:

— Բայց ես շատ եմ բարկանում ու նեղվում եմ, որ տատիկն անպետքի մեկն էր, ու ոչ ոք ինձ ոչինչ չի ասել, իսկ հիմա ես գիտեմ, բայց, մեկ է, կարոտում եմ նրան ու հենց դրանից էլ ամենաշատն եմ կատաղում:

Մայրիկը փակում է աչքերն ու ճակատը հպում է Էլսայի ճակատին: Էլսայի ծնոտը ցնցվում է:

— Ես ահավոր բարկանում եմ, որ տատիկը մահացավ: Բարկանում եմ, որ նա ինձնից հեռացավ,– շշնջում է Էլսան:

— Ես էլ,– շշնջում է մայրիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ պահին ամառային արձակուրդի ոստիկանը շտապօգնության մուտքից սլանում է իրենց կողմը, հետևից էլ երկու բուժքույր են վազում՝ պատգարակը բռնած:

Էլսան մի քանի սանտիմետրով թեքվում է մայրիկի կողմը: Մայրիկը մի քանի սանտիմետրով թեքվում է Էլսայի կողմը:

— Ի՞նչ ես կարծում, տատիկդ հիմա ի՞նչ կաներ,– հանգիստ հարցնում է մայրիկը:

— Իսկույն կձողոպրեր էստեղից,– ասում է Էլսան՝ առանց ճակատը պոկելու մայրիկի ճակատից:

Ամառային արձակուրդի ոստիկանն ու պատգարակը քշող բուժքույրերը Kia-ից մի քանի մետրի վրա էին, երբ մայրիկը դանդաղ գլխով է անում: Գործի է դնում կցորդիչն ու ձյան վրա սահող անվադողերով պոկվում է տեղից, սլանում փողոցով: Էլսան երբեք չէր տեսել, որ մայրիկը նման մեգաանպատասխանատու բան անի:

Ու ինքը միշտ կսիրի մայրիկին այդ քայլի համար:

թվայնացրել է 1915.info կայքը

15



ՏԱՇԵՂԼԵՐ

Ամբողջ Երկիր-Կիս-Արթունը, անշուշտ, լի է ավելի կամ պակաս տարօրինակ արարածներով: Մեծամասնությունը հաստատ ավելի է, քան պակաս, որովհետև նրանց մասին պատմողը տատիկն էր, իսկ տատիկը, իսկապես, բոլոր առումներով ավելի, ոչ թե պակաս տարօրինակ էր:

Սակայն ամենատարօրինակ արարածները (նույնիսկ տատիկի չափանիշներով), զղջիկներն են: Դրանք նախիրով ապրող վայրի կենդանիներ են, որ արածում են անմիջապես Միամասի պարիսպների մոտ: Նրանց սնունդը շատ փոփոխական է, ու նկատի ունենալով մի շարք հանգամանքներ՝ իրոք, անհասկանալի է, թե ինչպես են նրանք գոյատևում:

Առաջին հայացքից զղջիկներին կարելի է նմանեցնել սպիտակ ձիերի, սակայն նրանք որոշակիորեն ամբիվալենտ են, քանի որ տառապում են կենսաբանական արատով, որ ոչինչ չեն կարողանում հաստատապես որոշել: Գործնականում դրանից շատ խնդիրներ են առաջանում, որովհետև, ինչպես ասվեց, նախիրով ապրող կենդանիներ են: Զղջիկն ինչ-որ տեղ գնալիս անպայման բախվում է մի ուրիշ զղջիկի ու հետո ահավոր զղջում է: Դրա համար էլ նրանց ճակատներին հսկայական երկարավուն ելունդ կա, որի պատճառով Միամասից իրական աշխարհ հասած հեքիաթներում նրանց շփոթում են միաեղջյուրների հետ:

Միամասում հեքիաթասացները սովորել են դժվարություններին, և նույնիսկ ծախսերը զգալիորեն կրճատելու նպատակով երբեք միաեղջյուրի աշխատանք կատարելու համար զղջիկների չեն վարձում, քանի որ այդ պարագայում հեքիաթները երբեք իրենց ավարտին չեն հասնի:

թվայնացրել է 1915.info կայքը

Բացի այդ, ոչ ոք, բացարձակապես ոչ ոք լավ չէր զգալու, եթե ստիպված լիներ նախաճաշի ժամին ճաշարանում հերթ կանգնել զղջիկի հետևից:

— Այնպես որ, զղջալն իմաստ չունի, ուղղակի ավելորդ գլխացավանք է,– միշտ բացականչում էր տատիկն ու ափը խփում ճակատին:

Էլսան հիմա, Kia-ում նստած, հենց այդ մասին է մտածում՝ մայրիկին նայելով:

Տեսնես տատիկը երբևէ զղջացե՞լ է, երբ մենակ է թողել մայրիկին: Տեսնես տատիկի գլխին ելունդներ կայի՞ն: Էլսան հույս ուներ, որ կային:

Մայրիկը տրորում է քունքերն ու ատամները սեղմած՝ հայհոյում է: Ակնհայտ է, որ նա արդեն զղջում է, որ հիվանդանոցից այդ կերպ է հեռացել, որովհետև կարծես հանկարծ գիտակցում է, որ Էլսային դպրոցի մոտ իջեցնելուց հետո առաջին հերթին պիտի վերադառնա հիվանդանոց ու անցնի տնօրենի իր պարտականություններին:

Էլսան թփթփացնում է նրա ուսին:

— Գուցե կարող ես մեղքը հղիության վրա գցել,– մխիթարելով ասում է նա:

Մայրիկը հուսահատ փակում է աչքերը: Վերջերս շատ բան է ստիպված հղիության վրա գցել: Այն, որ Էլսայի շարֆը չի կարողանում գտնել, չնայած երեկ ամբողջ օրը փնտրում էր: Նաև հեռախոսն է անընդհատ տարօինակ տեղեր դնում՝ սառնարանում, աղբի ու լվացքի զամբյուղներում, մի անգամ էլ Յեորգի սպորտային կոշիկների մեջ: Առավոտյան Էլսան ստիպված եղավ երեք անգամ զանգել մայրիկին, ինչն այնքան էլ հեշտ չէ, քանի որ հեռախոսի էկրանը տոստերի հետ առնչվելու պատճառով բավականին լղոզված է ցույց տալիս: Ի վերջո, մայրիկի հեռախոսը գտնվեց Էլսայի ուսապարկի մեջ զանգելիս: Գրիֆինդորցիների շարֆը նույնպես այնտեղ էր:

— Տեսնո՞ւմ ես,– փորձում է իրավիճակը շտկել մայրիկը,– ոչինչ իրականում կորած չէ, քանի դեռ մայրիկդ կարող է այն գտնել:

Բայց Էլսան միայն աչքերն է ոլորում, մայրիկն ամաչում է ու փորձում հղիության վրա գցել:

Մայրիկն ամեն դեպքում շփոթված է երևում: Ու փոշմանած:

— Չեմ կարծում, անո՛ւշս, որ ինձ թույլ տան հիվանդանոցի ղեկավար մնալ, եթե պատմեմ, թե մոռացել էի, որ ինձ ոստիկանության ուղեկցությամբ էին շտապօգնության բաժանմունք բերել:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան ձգվում է ու շոյում մայրիկի այտը:

— Ոչի՛նչ, մայրի՛կ, ամեն ինչ լավ կլինի: Հաստա՛տ: Մի՛ մտածիր:

Էլսան նկատում է, որ տատիկի բառերն է կրկնում: Մայրիկը ձեռքը դնում է Կեսիկի վրա, շինծու ինքնավստահությամբ գլխով անում, որ թեման փոխի:

— Հայրիկը կտանի քեզ դպրոցից, չմոռանա՛ս: Իսկ երկուշաբթի օրը դպրոց կտանի Յեորգը: Ես գիտաժողովի կլինեմ ու …

Էլսան մատները համբերատար տանում է մայրիկի մազերի միջով:

— Երկուշաբթի դպրոց չեմ գնալու, մայրի՛կ: Ծննդյան տոներ են:

Մայրիկը ձեռքը դնում է Էլսայի ձեռքի վրա ու խորը շնչում է: Կարծես ուզում է թոքերն ամբողջությամբ Էլսայով լցնել: Ինչպես կարոտած մայրիկները, երբ զգում են, որ իրենց դստրիկները չափազանց արագ մեծացան:

— Կներե՛ս, անո՛ւշս, լրիվ, մոռացել էի:

— Ոչի՛նչ,– ասում է Էլսան:

Չնայած այնքան էլ ոչինչ չէ:

Նրանք ամուր գրկում են իրար, նախքան Էլսան դուրս կցատկեր մեքենայից: Նա սպասում է, մինչև Kia-ն անհետանա տեսադաշտից, ապա բացում է ուսապարկը, հանում մայրիկի հեռախոսը, հասցեների մեջ գտնում է հայրիկի անունն ու գրում. «Ի դեպ, էսօր Էլսային վերցնելու կարիք չկա: Ես ամեն ինչ կարգավորել եմ»: Էլսան գիտի, որ նրանք այդպես են խոսում իր մասին: Իրեն պետք է «վերցնել» ու «կարգավորել»: Իրերի պես: Նա գիտի, որ նրանք ոչ մի վատ բան նկատի չունեն, բայց դե, ի՞նչ կարող ես ասել: Ոչ մի յոթ տարեկան երեխա, որ իտալական մաֆիայի մասին ֆիլմեր է դիտել, չի ուզենա, որ իր հարցերը «կարգավորի» ընտանիքը: Բնականաբար, մայրիկին դա բացատրելը հեշտ չէ, քանի որ նա խստիվ արգելել էր տատիկին, որ Էլսայի հետ նման ֆիլմեր դիտի:

Մայրիկի բջջայինը թրթռում է Էլսայի ձեռքին: Հայրիկի անունն է էկրանին: Տակը գրված է՝ եղավ: Էլսան ջնջում է: Ջնջում է նաև իր նամակն ուղարկվածների ցանկից: Հետո մայթին կանգնած 20-ից հետ է հաշվում: Երբ հասնում է յոթին, Kia-ն նորից մտնում է կայանատեղի, ու մայրիկը հևալով իջեցնում է կողքի ապակին: Էլսան նրան է հանձնում բջջայինը: Մայրիկը մռթմռթում է, թե պատճառը հղիությունն է: Էլսան համբուրում է այտը: Մայրիկը ձեռքով վիզն է ցույց տալիս ու հարցնում, թե իր շարֆը չի՞ տեսել:

— Վերարկուիդ վերևի գրպանում է,– ասում է Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրիկը գրպանից հանում է շարֆը: Բռնում է Էլսայի գլուխն ու իրեն քաշելով՝ ամուր համբուրում ճակատը: Էլսան փակում է աչքերը:

— Ոչինչ իրականում կորած չէ, քանի դեռ աղջիկդ կարող է այն գտնել,– շշնջում է նա մոր ականջին:

— Դու բացառիկ ավագ քույրիկ կլինես,– շշնջում է մայրիկը:

Էլսան չի պատասխանում: Պարզապես կանգած է մնում ու ձեռքով անում Kia-ի հետևից: Չի պատասխանում, որովհետև չի ուզում՝ մայրիկն իմանա, որ ինքը բոլորովին չի ցանկանում ավագ քույր լինել: Չի ուզում որևէ մեկն իմանա, որ ինքն ուղղակի սարսափելի մարդ է, որն ատում է սեփական կիսահարազատ Կեսիկին, որովհետև նրան բոլորն ավելի շատ են սիրելու, քան իրեն: Չի ուզում, որ որևէ մեկն իմանա, թե ինքը վախենում է, որ այդ ժամանակ բոլորն իրեն կլքեն:

Նա շրջվում ու նայում է դպրոցի բակին: Իրեն դեռ ոչ ոք չի նկատել: Նա ձեռքը մտցնում է ուսապարկն ու հանում Renault-ում գտած նամակը: Հասցեն անծանոթ է, տատիկն էլ միշտ անհույս էր ճանապարհը ճիշտ նկարագրելու առումով: Էլսան նույնիսկ վստահ չէ, որ այդ հասցեն իրականում գոյություն ունի, որովհետև հաճախ, երբ տատիկը պիտի բացատրեր, թե ինչը որտեղ էր գտնվում, օգտագործում էր ուղեցույցներ, որոնք այլևս չկային:

«Հենց այնտեղ, որտեղ ապրում էին ալիքավոր թութակ պահող տխմարները, հին թենիսի դաշտի մոտ, որտեղ առաջ կաուչուկի գործարանն էր կամ հիմա ինչ որ է...»,– նկարագրում էր նա: Երբ մարդիկ չէին հասկանում, թե որտեղ էր գտնվում նրա ասած վայրը, տատիկն այնքան էր վշտանում, որ իրար հետևից երկու ծխախոտ էր ծխում՝ մեկը մյուսից կպցնելով: Ու եթե հանկարծ նրան ասեին, թե տանը չի թույլատրվում ծխել, նա այնպես էր զայրանում, որ դրանից հետո բացարձակապես անհնար էր նրանից ավելի խելքը գլխին ճանապարհի նկարագրություն պահանջել, քան նրա միջնամատի ուղղությունը:

Էլսան իրականում ուզում էր նամակը հազար կտոր անել ու քամուն տալ: Երեկ, համենայնդեպս, այդպես էր որոշել, որովհետև ահավոր զայրացած էր տատիկի վրա: Բայց հիմա, երբ մայրիկն ամբողջ պատմությունը պատմել էր, ու Էլսան տրտմություն էր նկատել մոր աչքերում, հետ կանգնեց իր նախկին որոշումից: Վճռեց հանձնել նամակը ու նաև մնացած բոլոր

թվայնացրել է 1915.info կայքը

նամակները, որոնք տատիկը ինչ-որ տեղ թողած կլինի իր համար: Որոշում է հասցեատերերին հանձնել տատիկի բոլոր նամակները՝ որպես հրաշալի արկած ու զարմանահրաշ հեքիաթ, ճիշտ ինչպես և տատիկը նախատեսել էր: Սակայն Էլսան որոշում է, որ դա հանուն տատիկի չի անելու:

Նախ և առաջ իրեն համակարգիչ է պետք:

Նա նորից է նայում դպրոցի բակին: Հենց որ զանգը հնչում է, բոլորը շրջվում են դեպի դպրոց, իսկ Էլսան ցանկապատի երկայնքով վազում է դեպի ավտոբուսը: Դուրս է ցատկում սովորականից մի կանգառ շուտ, վազում է մթերային խանութ, ապա՝ ուղիղ պաղպաղակի վաճառասեղանի մոտ: Տասը րոպե անց նա արդեն թաքուն իջնում է նկուղային հարկ ու դեմքը խրում է վորսի բրդի մեջ: Այն իր նոր ամենասիրելի վայրն է աշխարհում:

— Պայուսակիս մեջ պաղպաղակ կա,– ասում է նա՝ գլուխը բարձրացնելով:

Վորսը հետաքրքրված բարձրացնում է քիթը:

— Իմ սիրածն է՝ Ben & Jerry's-ը՝ իրիսով ու ընդեղենով,– բացատրում է Էլսան: Մինչև նախադասության ավարտը վորսն արդեն կեսից շատը կերել էր: Նա շոյում է կենդանու ականջները:

— Ինձ ուղղակի համակարգիչ է պետք, էստեղ մնա ու… դե գիտես… աշխատիր շատ դեսուդեն չերևալ:

Վորսը նրան է նայում, ինչպես կնայի հսկայական վորսը, որին առաջարկում են իրեն պահել շատ ավելի փոքր վորսի պես:

Էլսան ինքն իրեն խոստանում է ավելի հաջող թաքստոց գտնել նրա համար: Շուտով: Նա շտապում է աստիճաններով վեր: Ստուգում է, որ հանկարծ Բրիտ-Մարին չլինի մոտակայքում, ու համոզվելով, որ ապահով է, տալիս է Հրեշի դռան զանգը: Բացող չկա: Էլսան հոգոց հանելով բացում է նրա փոստարկղի կափարիչն ու ներս նայում: Լույսերը հանգած են, բայց Էլսան գիտի, որ նա տանն է:

— Ես գիտեմ, որ դու տանն ես,– բղավում է նա:

Ոչ մի պատասխան: Էլսան խորը շունչ է քաշում:

— Եթե չբացես, ես հենց հիմա կփռշտամ ուղիղ փոստարկղիդ մեջ: Իսկ ես մեգամրսած եմ…,– սպառնում է նա, բայց նրան հետևից ընդհատում է ինչ-որ ֆշշոց, ասես մեկը փորձում է կատվին քշել սեղանից:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան շրջվում է: Աստիճանավանդակի ստվերից հայտնվում է Հրեշը: Էլսայի գլխում ոչ մի կերպ չի տեղավորվում, թե ինչպես է այդքան խոշոր արարածը կարողանում այդքան անտեսանելի լինել: Նա ձեռքերն այնպես է շփում իրար, որ մաշկը հոդերի մոտ կարմրում է:

— Չփռշտա՛լ, չփռշտա՛լ,– անհանգստացած զգուշացնում է նա:

Էլսան աչքերն այնպես է ոլորում, որ թվում է՝ եղջերաթաղանթը հիմա քսվելու է ուղեղիկին: Նա պատկերացնում է, որովհետև ուղեղի անատոմիայի մասին կարդացել է Վիքիպեդիայում:

— Տե՛ր Աստված, կարծում ես՝ խելքս թռցրե՞լ եմ: Ես իսկի էլ մրսած չեմ:

Հրեշը շարունակում է իրեն հեռու պահել ու ձեռքերը տրորել, ասես բոլորովին վստահ չէ: Էլսան ձեռքով նրա բնարականի դուռն է ցույց տալիս:

— Ու ինչո՞ւ ես էստեղ ֆռֆռում՝ տանը նստելու փոխարեն:

Հրեշն անհետանում է գլխանոցի տակ, և միայն սև մորուքն է երևում:

— Հսկում եմ:

— Լսե՞լ ես էն մարդու մասին, որ իրեն չափից դուրս խորհրդավոր էր պահում,– հարցնում է Էլսան:

Հրեշը չի պատասխանում: Միայն ուսերն է թոթվում:

— Կարո՞ղ եմ քո համակարգչից օգտվել, որովհետև Յեորգը երևի տանը կլինի: Ես էլ իմ բջջայինով չեմ կարող նայել, որովհետև էկրանս վարի է գնացել, որովհետև տատիկը «Ֆանտայով», հետո տոստերով հերն անիծել է: Այսինքն՝ էդպես, էլի:

Հրեշի գլխի գլխանոցը դանդաղ ճոճվում է մի կողմից մյուսը:

— Համակարգիչ չկա:

— Չէ՛ մի, ուղղակի մի հատ հասցե պիտի նայեմ,– համառում է Էլսան՝ տատիկի նամակը թափահարելով:

Հրեշը նորից տարուբերում է գլուխը: Էլսան հառաչում է:

— Դե, գոնե Wi-Fi-իդ գաղտնաբառն ասա, որ ես իմ iPad-ով միանամ,– չի պոկվում նա՝ նորից աչքերը պտտելով այնպես, որ թվում է՝ բիբերը տեղերով փոխվում են հետ գալու ճանապարհին:

Հրեշը թափ է տալիս գլուխը: Էլսան տնքում է՝ իրեն թափ տալով:

— Դե, ես iPad-ով 3G չունեմ, որովհետև երբ պապան գնեց, մաման դժգոհ էր, քանի որ չէր ուզում, որ ես էդքան թանկ բաներ ունենամ, բացի այդ, Apple չի սիրում, էնպես որ փոխզիջման նման բան էր: Շատ խճճեցի, չէ՞: Ես ուղղակի ուզում եմ քո Wi-Fi-ից օգտվել: Տե՛ր Աստված:

թվայնացրել է 1915.info կայքը

— Համակարգիչ չկա,– կրկնում է Հրեշը:

— Համակարգիչ… չկա՞,– թերահավատորեն կրկնում է Էլսան:

Հրեշը տարուբերում է գլուխը:

— Դու համակարգիչ չունե՞ս,– բացականչում է Էլսան:

Գլխանոցը մի կողմից մյուսն է ճոճվում: Էլսան աչքերը կկոցած նրան է նայում, ասես մտածում է, թե իրեն ֆռռացնում է:

— Ո՞նց կարող է մարդ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ չունենալ:

Հրեշը մի փոքրիկ փակ ցելոֆան է դուրս բերում բաճկոնի գրպանից ու միջից մի շշիկով ալկոգել է հանում: Պարունակությունը զգուշորեն լցնում է ափերին ու սկսում մանրակրկիտ ներմերսել մաշկի մեջ:

— Պետք չէ համակարգիչ,– մռթմռթում է նա:

Էլսան հանկարծ քունքերը տրորելու անդիմադրելի ցանկություն է ունենում:

— Վա՛յ, տե՛ր Աստված: Ասենք, իզուր չեն ասում, որ լրիվ հոգեկան ես:

Նա ոչինչ չի պատասխանում: Էլսան զայրացկոտ խորը շունչ է քաշում ու աստիճանավանդակում շուրջն է նայում: Յեորգը հավանաբար դեռ տանն է, այնպես որ այնտեղ գնալ չի կարող, քանի որ նա կհարցնի, թե ինչու դպրոցում չէ: Լենարտի ու Մոդի մոտ էլ չի կարող գնալ, քանի որ խաբելու համար նրանք չափազանց բարի են, ու եթե մայրիկը հարցնի, թե Էլսային տեսել են, նրանք կասեն՝ ոնց որ կա: Համախտանիշով տղան իր մայրիկի հետ ցերեկները տանը չի լինում: Իսկ Բրիտ-Մարիի մասին նույնիսկ խոսք լինել չի կարող: Առանձնապես ընտրության առատություն, ցավոք, չի մնում: Այնպես որ, Էլսան կենտրոնանում է ու փորձում մտածել, որ Միամասի ասպետին երբեք չի վախեցնի գանձարոսը, նույնիսկ եթե շատ դժվար լինի: Եվ նա բարձրանում է աստիճաններով:

Ալֆը դուռը բացում է յոթերորդ զանգից հետո: Բնակարանից փայտի տաշեղների հոտ էր գալիս: Ալֆի հագին խալաթի խղճուկ տնազ է, իսկ գլխին դեռևս մնացած մազերը ցցված են տարբեր կողմեր, ասես հուժկու փոթորիկից հետո կանգուն մնացած եզակի շինություններ լինեն: Ձեռքին խոշոր սպիտակ բաժակ է՝ «Յուվենտուս» գրությամբ, ու բաժակից թունդ սուրճի հոտ է գալիս, ինչպիսին միշտ սիրում էր տատիկը:

«Երբ Ալֆն է սուրճ պատրաստում, մարդ կարող է ամբողջ օրը ավտոմեքենա վարել»,– սովորաբար ասում էր տատիկը, ու Էլսան իրականում չէր հասկանում, թե նա ինչ նկատի ուներ: Միայն ենթադրում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հը՞,– մռայլ մռթմռթում է Ալֆը:

— Գիտե՞ս՝ սա որտեղ է գտնվում,– ասում է Էլսան՝ նրան մեկնելով տատիկի ձեռագրով գրված ծրարը:

— Դու ինձ արթնացրիր, որ ինչ-որ գրողի տարած հասցե հարցնե՞ս,– բոլորովին անհյուրընկալ ասում է Ալֆը՝ մի մեծ կում սուրճ խմելով:

— Քնա՞ծ էիր,– բացականչում է Էլսան՝ ունքերը բարձրացնելով:

Ալֆն էլի մի կում է անում՝ գլխով ցույց տալով ձեռքի ժամացույցը:

— Ես գիշերն եմ աշխատում: Ինձ համար գիշերը հիմա է: Ես հո ձեր տուն չե՞մ գալիս գիշերվա կեսին ու ապուշ հարցեր տալիս:

Էլսան նայում է բաժակին, ապա՝ Ալֆին:

— Բա որ քնած ես, ինչո՞ւ ես սուրճ խմում:

Ալֆը բոլորովին անհասկացող տեսքով նայում է բաժակին, ապա՝ Էլսային:

— Արթնացա ու ծարավ էի:

— Համ էլ հայրիկս ասում է, որ ժամը 6-ից հետո սուրճ խմես, ամբողջ գիշեր չես քնի,– ասում է Էլսան:

Ալֆը երկար ժամանակ ուշադիր նրան է նայում: Հետո երկար ժամանակ ուշադիր նայում է բաժակին: Հետո բոլորովին անհասկացող տեսքով՝ նորից Էլսային:

— Ինչո՞ւ պիտի չքնեմ: Եղածն ընդամենը սուրճ չէ՞:

Էլսան ուսերն է թոթվում:

— Հիմա գիտե՞ս՝ էս հասցեն որտեղ է, թե՞ չէ,– նորից հարցնում է նա՝ ծրարը ցույց տալով:

Ալֆը կարծես ծաղրական տոնով մտքում կրկնելիս լիներ նրա հարցը: Նորից կում է անում:

— Ես 30 տարի է՝ տաքսի եմ վարում:

— Ո՞ւ...,– տարակուսում է Էլսան:

— Ու պարզ է, որ գիտեմ, գրո՛ղը տանի, թե դա որտեղ է գտնվում,– մռթմռթում է Ալֆն ու գլխով ծրարն է ցույց տալիս:

— Դե, կներես,– մռթմռթում է Էլսան:

Ալֆը դատարկում է բաժակը:

— Հին մաքրիչ կայանի մոտ,– վերջապես ասում է նա:

— Հը՞,– չի հասկանում Էլսան:

Ալֆը հուսահատ նրան է նայում:

— Է՛, ջահելությո՛ւն, պատմությունից գաղափար չունեք: Էնտեղ, որտեղ ռետինի գործարանն էր մինչև տեղափոխվելը ու աղյուսի գործարանը:

Էլսայի հայացքը մատնում է, որ ինքը բացարձակ չի պատկերացնում, թե ինչի մասին է նա խոսում:

Ալֆը ձեռքը տանում է մազերին ու անհետանում բնակարանի խորքում: Նա վերադառնում է լիքը բաժակով ու քարտեզով: Բաժակը շրխկոցով դնում է նախասրահի պահարանի վրա ու սև գրիչով մուգ շրջան գծում քարտեզի վրա:

— Հա՛, ուրեմն էստեղ: Առևտրի կենտրոնն է, չէ՞, էնտեղ,– բացականչում է Էլսան՝ զարմացած նրան նայելով: — Դե, էդպես էլ ասեիր:

Ալֆն ինչ-որ բան է քրթմնջում, որ Էլսան կարգին չի լսում, ու դուռը շրխկացնում է նրա երեսին:

— Քարտեզը թող մոտս մնա,– ուրախ բղավում է Էլսան փոստարկղի ճեղքի մեջ:

Ալֆը չի պատասխանում:

— Համ էլ մեզ մոտ ծննդյան արձակուրդ է, եթե քեզ հետաքրքիր է: Դրա համար էլ դպրոցում չեմ,– բղավում է Էլսան:

Սրան էլ չի պատասխանում:

Երբ Էլսան վերադառնում է նկուղ, վորսը, կողքի վրա պառկած, երկու թաթը հարմարավետ վեր ձգած, կարծես պիլատեսի սխալ վարժություն կատարելիս լիներ: Հրեշը կանգնած է մուտքից քիչ հեռու ու ձեռքերն է տրորում: Երևում է, որ լավ չի զգում իրեն:

— Քի՛թը,– ֆշշացնում է նա ու առավել պատկերավորության համար զզվանքով շարժում իր հսկայական ափը սեփական դեմքի առջև:

— Կպչուն... Ամբողջ քիթը... Կպչուն...

Նա աղերսանքով Էլսային է նայում: Էլսան հոգոց է հանում ու գլուխը մտցնելով վորսի խուցը՝ խստիվ հրահանգում է.

— Քթիդ շուրջը մաքրի՛ր, գնում ենք:

Վորսը ճարպկորեն շրջվում է թաթերի վրա ու բարձրանում տեղից: Դուրս է գցում խոշոր լեզուն, որ ասես մայրիկի ու Յեորգի տան փոքրիկ լոգասենյակի սրբիչներից լինի, և իսկույն լպստում է քթի վրայի պաղպաղակը:

Էլսան Հրեշին է նայում: Ձեռքին ծրար է:

— Գալի՞ս ես:

Հրեշը գլխով է անում: Գլխանոցը դեմքից մի քանի սանտիմետր հետ է սահում, ու դեմքի հսկա սպին մի պահ փայլում է առաստաղի լյումինեսցենտային լամպի լույսից: Նա նույնիսկ չի հետաքրքրվում, թե ուր են գնալու: Դժվար է նրան այդքանից հետո չսիրել:

Էլսան նրան է նայում, ապա՝ վորսին: Ինքը լավ գիտի, որ մայրիկը բարկանալու է, որ դասերից փախել է և առանց թույլատվության՝ ինչ-որ տեղ է գնում, բայց երբ Էլսան հարցնում է մայրիկին, թե ինչու է իր համար այդքան անհանգստանում, մայրիկը միշտ պատասխանում է, որ վախենում է՝ իրեն մի բան պատահի: Իսկ Էլսան չի էլ պատկերացնում, որ առհասարակ կարող է ինչ-որ բան պատահել, երբ Հրեշն ու վորսն իր հետ են: Այնպես որ, մտածում է՝ ամեն ինչ պիտի լավ լինի՝ հաշվի առնելով առկա հանգամանքները:

Նկուղից դուրս գալիս վորսը փորձում է լիզել Հրեշին: Հրեշը սարսափահար հետ է ցատկում ու ձեռքերը սկզբում իրեն է քաշում, հետո ձեռքը գցում է ցախավելին, որ հենված էր կողքի պահեստի պատին: Վորսը, թվում է, հեգնանքով քմծիծաղում է՝ լեզուն սպառնալից հետուառաջ ճոճելով:

— Վե՛րջ տուր,– հրամայում է Էլսան:

Հրեշը, դեռ ցախավելն իր առջև նիզակի պես բռնած, փորձում է վորսին հետ քշել՝ նրա քթին խփելով:

— Վե՛րջ տվեք, ասացի,– բարկանում է Էլսան նրանց երկուսի վրա:

Վորսը, ցախավելը բռնած, ծնոտները սեղմում է, ու ճյուղերը փշրվում են նրան ատամների տակ:

— Վե՛րջ տու...,– սկսում է Էլսան, բայց չի հասցնում տուր-ն ավարտել, երբ Հրեշն ամբողջ ուժով բռնում է վորսին ցախավելով հանդերձ ու շպրտում է նկուղի հակառակ կողմն այնպես, որ ծանր կենդանին դրխկոցով խփվում է պատին՝ մի քանի մետր այն կողմ:

Վորսը կծկվում է, ապա մի շարժումով ձգում է մարմինն ու մինչև վայրէջք կատարելը պատրաստվում է սարսափազդու հետցատկի: Երախը բաց է, դանակի մեծության ատամները պսպղում են: Հրեշը դիմավորում է՝ լայն կուրծքը դեմ տված, և արյունը տրոփում է բռունցքներում:

— ԴԵ, ՎԵՐՋԱՑՐԵ՛Ք ՀԵՆՑ ՀԻՄԱ,– աղաղակում է Էլսան, ու իր փոքրիկ մարմնով նետվում է երկու մոլեգնող արարածների արանքը:

— Դուք Ի՛ՆՁ պիտի պաշտպանեք, ա՛յ տխմարներ: ՀԵՐԻ՛Ք ԵՂԱՎ,– բղավում է նա արդեն խզվող ձայնով:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա անպաշտպան կանգնած է նիզակների պես սուր ճանկերի ու նրա գլուխն ուսերից պոկելու ընդունակ ամուր սեղմած բռունցքների միջև՝ զինված միայն սեփական ֆիզիկական թուլության հանդեպ ութ տարեկանի անտարբերությամբ: Սակայն դա ավելի քան բավարար էր:

Վորսը ցատկի ընթացքում արգելակում է ու փափուկ վայրէջք կատարում ուղիղ նրա ոտքերի մոտ: Հրեշը մի քանի քայլ հետ է գնում: Մկանները հետզհետե թուլանում են: Թոքերը հետզհետե օդը դուրս են մղում: Երկուսն էլ խուսափում են Էլսայի հայացքից:

— Դուք պիտի Ի՛ՆՁ պաշտպանեք,– ավելի կամաց կրկնում է Էլսան ու փորձում զսպել արցունքները, չնայած առանձնապես չի հաջողվում:

— Ես երբեք ընկերներ չեմ ունեցել, ու հիմա պիտի էդ միակ երկուսի վերջը տա՞ք, երբ հազիվ եմ ձեռք բերել: Ոնց որ վերջին տխմարները լինեք:

Վորսը քիթն իջեցնում է: Հրեշը ձեռքերն է տրորում ու թաքնվում գլխանոցի տակ: Այն ճռճվում է վորսի ուղղությամբ:

— Ինքը սկսեց,– հազիվ արտաբերում է Հրեշը:

Վորսը ի պատասխան գռմռում է, ասես ուզում է ասել. «Չէ՛ մի: Դու սկսեցիր»: Բայց խոսել չի կարող:

— Վե՛րջ տվեք,– մռնչում է Էլսան երկուսի վրա:

Փորձում է զայրացած երևալ, բայց զգում է, որ ձայնը մատնում է, որ լաց չի եղել: Չնայած իրականում լաց չի եղել, թերևս ընդամենը մի պստիկ:

Հրեշը վախվորած ափը վերուվար է անում նրա ուղղությամբ, այնքան մոտիկ, որ ամեն դեպքում չդիպչի:

— Կներես,– մրմնջում է նա:

Վորսը բոթում է նրան: Էլսան ճակատը հենում է նրա քթին:

— Մենք լուրջ հանձնարարություն ունենք, իսկ դուք անզուսպ իրար կոկորդ եք կրծում: Մենք պիտի էս նամակը հանձնենք, որովհետև կարծում եմ՝ տատիկն էլի ինչ-որ մեկից ներողություն է խնդրում: Ու կարծում եմ՝ դեռ էլի նամակներ կան, իսկ մենք պիտի բոլորը տեղ հասցնենք, որովհետև, կարծում եմ՝ գանձարանն ու արկածները հենց դրանք են: Ու հեքիաթն էլ է դա՝ տեղ հասցնել տատիկի բոլոր ներողությունները:

Էլսան, դեմքը վորսի մորթու մեջ թաղած, խոր շունչ է քաշում ու փակում աչքերը:

— Մենք պիտի տատիկի բոլոր կներես-ները տեղ հասցնենք հանուն մայրիկիս, որովհետև, կարծում եմ, վերջին կներես-ը նրանն է:

թվայնացրել է 1915.info կայքը

16

ՓՈՇԻ

Փառավոր արկած էր սպասվում: Ու զարմանահրաշ հեքիաթ:

Եվ Էլսան, իհարկե, որոշել էր, որ իրենք ավտոբուս կնստեն, ինչպես քիչ թե շատ խելքը գլխին ասպետները քիչ թե շատ խելքը գլխին հեքիաթներում, որ գնում են քիչ թե շատ խելքը գլխին արկածի, իսկ ձեռքի տակ ձի կամ ամպէակ չի լինում: Բայց ավտոբուսի կանգառում հինգ րոպե կանգնելուց հետո հասկանում է, որ ամենևին էլ հեշտ չի լինելու: Էլսան նկատում է, որ մյուս բոլոր մարդիկ, սարսափած հայացքներ գցելով Հրեշի ու վորսի վրա, այնքան են հեռանում դեպի կանգառի հակառակ եզրը, որքան որ հնարավոր է՝ կանգառի հակառակ կողմում չհայտնվելու համար:

Երբ նրանք վերջապես ավտոբուս են նստում, պարզվում է, որ վորսերն առհասարակ չեն սիրում ավտոբուսով ճանապարհ գնալ: Վորսը հաջողեցնում է հրմշտել ուղևորներին, տրորել նրանց ոտքերն ու պոչով պայուսակներ շուռ տալ, փսլինքներով ողողել Հրեշի կողքի նստարանը, ինչին Հրեշը, բնականաբար, հանգիստ արձագանքել չի կարող: Էլսան որոշում է հրաժարվել իր նախաձեռնությունից, և նրանք երեքով դուրս են ցատկում ավտոբուսից՝ ընդամենը մի կանգառ անցնելով:

Էլսան քաշում է գրիֆինդորցիների շարֆը դեմքին ու ձեռքերը գրպաններն է դնում, և նրանք ցրտին, ձյան միջով քայլելով, անցնում են ամբողջ ճանապարհը: Վորսը գոհ է, որ ավտոբուսով գնալուց ազատվել է, ու ցատկոտում է Էլսայի ու Հրեշի շուրջը կայտառ քոթոթի պես: Հրեշը, նողկանքը դեմքին, քայլում է՝ ձեռքերը ցատկորդի պես հետ տարած՝ փորձելով հնարավորինս

թվայնացրել է 1915.info կայքը

բարակել, բայց, այնուամենայնիվ, չի ստացվում այնքան նեղանալ, որ ամեն անգամ անցնելուց բրդոտ գազանի՝ սրբիչի մեծության լեզուն իրեն չդիպչի:

Երևում է, որ Հրեշը սովոր չէ դուրս գալ ցերեկային լույսով, մտածում է Էլսան: Գուցե այն պատճառով, որ Գայլսիրտը սովորել է Միամասի մթին անտառներին, որտեղ երբեք ցերեկային լույս չի ընկնում: Համենայնդեպս, այնտեղ է ապրել տատիկի հեքիաթներում, ուրեմն, եթե այս հեքիաթում էլ ի սկզբանե ինչ-որ կարգուկանոն եղել է, ապա բացատրությունը շատ էլ տրամաբանական է:

Մարդիկ, որ անցնելիս հանդիպում են նրանց, անում են այն, ինչ սովորաբար անում են մայթով միասին զբոսնող աղջնակ, վորս ու հրեշ տեսնողները. անցնում են փողոցը: Ոմանք, իհարկե, փորձում են ձևացնել, թե փողոց անցնելը բոլորովին առնչություն չունի հրեշներից, վորսերից ու աղջիկներից ունեցած իրենց վախերի հետ, ու ցուցադրաբար սկսում են հեռախոսով բարձր խոսել մեկի հետ, ում պատճառով նրանք իբր անսպասելիորեն ստիպված փոխում են իրենց ուղղությունը: Ինչպես Էլսայի հայրիկն է երբեմն անում, երբ հանկարծ մոլորվում է, սակայն չի ուզում, որ ուրիշները մտածեն, թե ինքը լավ չի կողմնորոշվում: Էլսայի մայրիկը երբեք նման խնդիր չի ունենում, որովհետև սխալ գնալու դեպքում էլ շարունակում է գնալ, և նա, ում հանդիպելու էր մայրիկը, ինքն է գալիս նրան փնտրելու: Տատիկը նման դեպքերում փնովում էր ճանապարհային ցուցանակները: Դե, ինչ արած, մարդիկ, ի վերջո, տարբեր են:

Մնացածները, որ հանդիպում են արկածների դուրս եկած եռյակին, բնականաբար, նույնքան նրբանկատ չեն ու Էլսային փողոցի հակառակ կողմից այնպես են նայում, ասես նրան առևանգել են: Էլսան մտածում է, որ Հրեշը թերևս շատ գործերում է հմուտ, բայց որպես առևանգող, որին հնարավոր է մի փոշտոցով չեզոքացնել, առանձնապես բանի պետք չի լինի: Գերհերոսի համար մի տեսակ յուրահատուկ աքիլլեսյան գարշապար ունի: Փալինքը:

Կոստյումով մի մարդ, որ բարձրաձայն խոսելով՝ մայթով քայլում է՝ սպիտակ լարն ակաջին, առանց նրանց նկատելու՝ ընդառաջ է գնում, մինչև որ քիչ է մնում՝ ճակատով բախվի Հրեշի կրծքին, որը սարսափած փորձում է մի կողմ ցատկել, որ վարսահարդարի մոտից դուրս եկած, մազերին գել քսած գլուխը չդիպչի իրեն: Կոստյումով մարդը լեղաճաք եղած ճչում է:

Հրեշը հետ-հետ է գնում ու սկսում ձեռքերը մաքրել. ասես վրան թուք է ցայտել: Վորսը հաչում է՝ խաղալու պատրաստ: Կոստյումով մարդը գու-

թվայնացրել է 1915.info կայքը

նատված, սայթաքելով փախչում է նրանցից՝ սպիտակ լարը հետևից վզակապի պես քարշ տալով:

Էլսան նայում է Հրեշին, ապա՝ վորսին: Հուսահատ տարուբերում է գլուխը:

— Ափսոս, Հելոուինին ձեզ դեռ չէի ճանաչում: Բավական լավ կնայվեիք:

Ակնհայտորեն ո՛չ Հրեշը, ո՛չ վորսը չեն հասկանում, թե նրա ասածն ինչ է նշանակում:

Հրեշն անհետանում է իր գլխանոցի տակ, այնպես որ միայն մորուքն է դուրս մնում: Վորսը վերջ է տալիս նրանց շուրջը պտտվելուն ու լրիվ շնչասպառ է թվում, ինչպես քոթոթի տարիքից դուրս եկած վորսերը, որոնց հիշեցրել են, որ նրանք այլևս վաղուց քոթոթ չեն: Զբոսանքը երկու ժամից ավել է տևում: Էլսան շատ կուզենար, որ Հելոուին լիներ, քանի որ այդ դեպքում նրանք կկարողանային ավտոբուս նստել՝ առանց սովորական մարդկանց վախեցնելու, որովհետև բոլորը կկարծեին, թե իրենք հատուկ զգեստավորված են: Էլսան հենց դրա համար է սիրում Հելոուինը, որովհետև Հելոուինին կարելի է տարբեր լինել:

Համարյա թե ճաշի ժամն է, երբ նրանք գտնում են անհրաժեշտ հասցեն: Էլսայի ոտքերը ցավում են, նա ահավոր սոված է, ու տրամադրությունը վատ է: Նա հրաշալի գիտի, որ Միամասի ասպետը երբեք չի նվնվա կամ վախենա մեծ արկածներից, երբ նրան ուղարկում են գանձարանի, բայց ոչ ոք չի ասել, որ ասպետը չի կարող սոված լինել կամ վատ տրամադրություն ունենալ:

Այդ հասցեում բարձրահարկ շենք է, բայց ճիշտ մյուս մայթին համբուրգերանոց է: Էլսան Հրեշին ու վորսին հրահանգում է սպասել իրեն, իսկ ինքը գնում է այնտեղ, չնայած որ սկզբունքորեն դեմ է համբուրգերանոցների ցանցին, որովհետև սովորաբար այդպես է լինում, երբ մարդ ուր որ է ութ տարեկան կդառնա, մտնում է ինտերնետ ու դատարկագլուխ չէ: Այնպես որ, նա պաղպաղակ է գնում վորսի ու համբուրգեր՝ Հրեշի համար, բուսակերական բուրգեր էլ՝ իր համար: Դուրս գալիս թաքուն հանում է իր կարմիր նշամատիտն ու կարմիրով գիծ քաշում ցուցատախտակի վրա, որի վրա գրված է «Լրացուցիչ մենյու»:

Հրեշը հրաժարվում է նույնիսկ համբուրգերի թղթե տոպրակին դիպչել, այնպես որ վորսը նրա բաժինն էլ է ուտում: Չնայած բացասական ջերմաստիճանից դեմքի մաշկը սառչում է, նրանք նստում են բարձրահարկի

թվայնացրել է 1915.info կայքը

կողքի նստարանին, որ Էլսան ուտի իր բուսակերական բուրգերը: Ավելի ճիշտ, միայն Էլսան ու վորսն են նստում, որովհետև Հրեշն այնպիսի հայացքով է նայում նստարանին, ասես այն նույնպես պատրաստվում է լիզել իրեն: Իսկ հետո վորսի պաղպաղակից մի փոքր ընկնում է նստարանին, ու նա իսկույն անփութորեն լպստում է այն: Այդ տեսարանից Հրեշի շունչը քիչ է մնում՝ կտրվի: Դրանից անմիջապես հետո Էլսան վորսին թույլ է տալիս կծել իր բուսակերական բուրգերից ու հետո անհոգ շարունակում է ուտել հենց նույն մասից, ինչի պատճառով Էլսան ստիպված է լինում օգնել Հրեշին թղթե տոպրակի մեջ բավականին երկար շնչել: Եվ հազիվ է Հրեշը հանգստանում, երբ Էլսան բերանից թռցնում է, որ իսկի էլ վստահ չէ, որ թղթե տոպրակը մաքուր է: Հրեշն այդ խոսքից պպզում է ու բավականին երկար մնում գլուխը բռնած:

Էլսային ու վորսին մնում է նստել նստարանին ու սպասել մինչև նա խաղաղվի: Էլսան հասցնում է ժամանակի ընթացքում նյարդայնանալ բուսակերական բուրգերից, որովհետև այն շատ համեղ է, ու դժվար է սկզբունքային լինել համբուրգերանոցների ցանցի հարցում, որ սոսկալի համեղ բուսակերական բուրգերներ է պատրաստում:

Հետո նա գլուխը հետ է տանում ու նայում շենքի ճակատային մասին: Հաստատ 15 հարկ կլինի: Գրպանից հանում է ծրարն ու զննում:

— Հը՛, պրծա՞ր,– հարցնում է նա Հրեշին, բայց չի սպասում պատասխանի:

Սահում է նստարանից ու շենքի մուտքից ներս է մտնում: Հրեշն ու վորսը ալկոգելի ուժեղ հոտի ուղեկցությամբ լուռ հետևում են նրան: Էլսան ճանապարհին թռուցիկ հայացքով սկսած է անում պատի տեղեկատվական տախտակը ու իսկույն գտնում է ծրարի վրայի անունը: Անվան առջևում գրված է «Լից. հոգեբան»: Էլսան չի հասկանում, թե դա ինչ կարող է նշանակել: Լից… լիցքավորվա՞ծ: Իսկ տեսնես ինչո՞վ պիտի լիցքավորված լինի հոգեբանը: Կամ գուցե լիցքավորո՞ղ: Իր գործը չէ, իհարկե: Ոնց ասես փող են աշխատում մարդիկ:

Նա դոփելով անցնում է արձագանքող հսկայական առաջին հարկով մինչև հակառակ ծայրին գտնվող վերելակը: Վորսը կանգ է առնում ու հրաժարվում քայլ անել: Էլսան գլուխը թեք նրան է նայում:

— Միայն թե չասես, թե վախենում ես վերելակներից:

Վորսն ամոթից հայացքն իջեցնում է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ամեն դեպքում, բարեբախտություն էր, որ Մարտ-Ան-Վերջը բարձրահարկ շենքում չէր ընթանում, թե չէ դուք՝ վորսերդ, ոչ էլ կկարողանայիք օգնության հասնել,– հառաչում է Էլսան:

Վորսը նեղացած հաչում է Էլսայի կամ միգուցե վերելակի վրա: Էլսան ուսերն է թոթվում ու մտնում է վերելակ: Հրեշը մի փոքր երկմտելուց հետո հետևում է նրան՝ զգուշանալով, որ չդիպչի պատերին: Վորսն անհետանում է մի ստվերոտ անկյունում ու մռայլ տարածվում հատակով մեկ:

Բարձրանալու ընթացքում Էլսան ուշադիր զննում է Հրեշին: Նրա մորուքը խոշոր սկյուռի պես դուրս է ցցվում գլխանոցի տակից: Ինչքան ավելի երկար է Էլսան նրան ճանաչում, այնքան նա ավելի ու ավելի պակաս վտանգավոր է թվում: Հրեշը, բնականաբար, նկատում է նրա հայացքն ու անհարմար զգալով՝ ձեռքերն է սեղմում: Էլսան, ի զարմանս իրեն, հասկանում է, որ ազդվում է դրանից:

— Եթե կարծում ես, որ ահավոր ծանր գործ է, կարող ես ներքևում հսկել: Ինձ ի՞նչ պիտի լինի այդ հոգեբանին նամակ փոխանցելիս,– փնթփնթում է Էլսան:

Նա խոսում է սովորական լեզվով, որովհետև չի ուզում նրա հետ իր ու տատիկի գաղտնալեզվով խոսել: Զգում է, որ խանդը փորի մեջ ուռուցքի պես մեծանում էր այն մտքից, որ տատիկի լեզուն սկզբում բոլորովին էլ տատիկինը չի եղել: Էլսան գիտի, քանի որ Վիքիպեդիայում նայել էր, թե ինչ է նշանակում «անալոգիա»: Նշանակում է «նմանություն»: Հենց ուռուցքի պես:

— Կարիք չկա, որ դու ամբողջ ժամանակ կողքիս լինես, որ կարողանաս ինձ հսկել, եթե ինձ հսկելն ահավոր անհրաժեշտ է,– բացականչում է Էլսան մի քիչ ավելի զայրացած, քան որոշել էր, չնայած հենց սկզբից էլ զայրանում էր:

Ինքն արդեն սկսել էր Հրեշին ընկեր համարել, իսկ հիմա իրեն հիշեցնում են, որ նա իր կողքին է, քանի որ տատիկն է հրահանգել: Դե որ այդպես է, թող գնա կորչի: Հենց բառացի, որովհետև Գայլսիրտն անտառում է ապրել, ուրեմն կորչելու բավական տեղ կունենա, եթե առհասարակ այդ հեքիաթում գոնե մի փոքր կարգուկանոն կա:

Հրեշը լուռ է: Վերելակը կանգ է առնում: Դռները սահելով բացվում են: Էլսան դուրս է գալիս: Նա էլ է դուրս գալիս, սակայն բոլորովին անձայն:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրանք անցնում են միջանցքով, դռների շարքի մոտով, մինչև որ գտնում են լիցքավորված հոգեբանի դուռը: Էլսան թակում է դուռը՝ աշխատելով ցույց չտալ Հրեշին, որ մատների հոդերն ահավոր ցավեցրեց: Հրեշը դիպչում է նեղլիկ միջանցքի հակառակ պատին՝ կարծես պատկերացնելով, որ դռան մյուս կողմից կանգնած մարդը թերևս դիտանցքից նայելիս գոնե իր կեսը տեսնելու հնարավորություն կունենա: Էլսան տեսնում է, որ նա փորձում է հնարավորին չափ փոքր ու անսարսափազդու երևալ: Ցավոք, այդքանից հետո չես կարող նրան չսիրել, նույնիսկ եթե շատ ցանկանաս: Բացի այդ, անսարսափազդուն իսկական բառ չէ:

Էլսան նորից է թակում դուռը: Ականջը դնում է բանալու անցքին: Նորից է թակում: Նորից լռություն:

— Դատարկություն,– ասում է Հրեշը:

— No shit, Sherlock,– սարկաստիկ ասում է Էլսան:

Կամ հեգնանքով: Ինքն էլ արդեն վստահ չէ: Ինքն այլևս չի զայրանում նրա վրա, որովհետև իրականում տատիկի վրա է զայրացած: Ուղղակի հոգնած է, սարսափելի, սարսափելի հոգնած: Հետո էլ հոդերն են ցավում: Նա շուրջն է նայում ու տեսնում է երկու փայտե աթոռ:

— Երևի ճաշի է գնացել, արի սպասենք,– ասում է նա Հրեշին ու այնպես է թրմփում աթոռներից մեկին, որ շուրջը մի պահ փոշու մրրիկ է բարձրանում:

Աղջիկը փռշտում է: Հրեշն այնպիսի տեսք ունի, ասես մտածում է աչքերը ճանկռտել ու լեղապատառ ճչալով՝ ճողոպրել այդտեղից:

— Ես հատուկ չարեցի՞: Ուղղակի փոշի էր,– ի պաշտպանություն իրեն՝ բղավեց Էլսան:

Հրեշը կարծես թե ընդունում է նրա արդարացումը: Բայց, ամեն դեպքում, մի քանի մետր հեռավորության վրա է մնում: Կանգնում է՝ ձեռքերը մեջքին դրած, թարթիչներից բացի առնվազն երեք կամ չորս հավերժություն ուրիշ ոչինչ չշարժելով:

Էլսայի համար լռությունը հաճելիից փոխվում է տհաճի, իսկ մեկուկես հավերժությունից՝ անտանելիի: Երբ նա արդեն զբաղեցրել էր իրեն բոլոր հնարավոր ձևերով (մատներով թմբկահարել էր սեղանին, աթոռի նստատեղի պաստառի փոքրիկ անցքից քչփորելով հանել էր միջուկն ու եղունգով իր անունն էր փորագրել աթոռի հենակի փափուկ փայտին), լռությունը խախտում է՝ հարց տալով, որ իր նախատեսածից շատ ավելի մեղադրական է հնչում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչո՞ւ ես զինվորական տաբատ հագնում, եթե զինվոր չես:

Հրեշը գլխանոցի տակից դանդաղ շնչում է:

— Հին տաբատ:

— Դու առաջ զինվո՞ր էիր:

Գլխանոցը վերուվար է շարժվում:

— Պատերազմը սխալ բան է, ու զինվորներն էլ են սխալ: Զինվորները մարդ են սպանում,– մեղադրում է Էլսան:

— Էդ տեսակ զինվոր չէ,– կամացուկ ասում է Հրեշը:

— Զինվորը զինվոր է,– վրա է տալիս Էլսան:

Հրեշը չի պատասխանում:

Էլսան փայտի վրա եղունգով հայհոյանք է փորագրում: Իրականում նա չէր ուզում տալ մի հարց, որ նրան ներսից այրում էր, որովհետև չէր ուզում, որ Հրեշն իմանա՝ ինչքան է այն իրեն տանջում: Բայց չէր կարողանում իրեն զսպել: Դպրոցում ասում էին, որ Էլսայի ամենամեծ խնդիրն էլ հենց դա է՝ իրեն զսպել չկարողանալը:

— Դո՞ւ ես տատիկիս Միամասը ցույց տվել, թե՞ տատիկն է քեզ ցույց տվել:

Աղջիկն ասես դուրս է թքում բառերը: Գլխանոցը չի շարժվում, բայց երևում է, որ նա շնչում է: Էլսան արդեն ուզում էր հարցը կրկնել, երբ վերջապես գլխանոցի տակից լսվում է.

— Քո տատիկը: Ցույց տվեց: Երեխա ժամանակ:

Նա ասում է սովորականի պես, ինչպես ամեն ինչ, սովորական լեզվով: Բառերը դուրս էին գալիս նրա բերանից, ասես կռված լինեին իրար հետ:

— Դու իմ տարիքի՞ն էիր,– ասում է Էլսան՝ հիշելով լուսանկարներում Մարդագայլուկին:

Գլխանոցը վերուվար է շարժվում:

— Քեզ հեքիաթներ պատմո՞ւմ էր,– ցածրաձայն հարցնում է Էլսան՝ հույս ունենալով, որ «ոչ» է ասելու, չնայած որ գիտեր պատասխանը:

Գլխանոցը վերուվար է շարժվում:

— Պատերազմի ժամանա՞կ եք հանդիպել: Ու դրա համա՞ր է քեզ Գայլսիրտ անվանել,– հարցնում է՝ առանց նրան նայելու:

Այլ հարցեր չի ուզում տալ, քանի որ խանդի ուռուցքը նորից սկսում է մեծանալ: Բայց գլխանոցը վերուվար է շարժվում:

— Ճամբար: Ճամբար՝ փախածների համար,– հնչում է մթության մեջ՝ մորուքի տակից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Փախստականների ճամբար,– ուղղում է Էլսան՝ նախքան նոր հարց տալը:

— Քեզ տատի՞կը բերեց էստեղ: Ու ի՞նքը կազմակերպեց, որ դու մեր շենքում ապրես:

Երկար արտաշնչելու ձայն է լսվում գլխանոցի տակից:

— Շատ տեղեր ապրել: Շատ տներ:

— Խնամակալ ընտանիքո՞ւմ,– հարցնում է Էլսան:

Գլխանոցը նորից վերուվար է ճոճվում:

— Բա ինչո՞ւ էնտեղ չմնացիր:

Գլխանոցը շատ դանդաղ ճոճվում է մի կողմից մյուսը:

— Վատ տուն: Վտանգավոր: Քո տատիկն ինձ վերցրեց:

— Մեծանալուց հետո դրա՞ համար զինվոր դարձար, որ կարողանաս գնալ նույն տեղերը, ուր տատի՞կն էր գնում:

Գլխանոցը վերուվար է անում:

— Ուզում էիր մարդկանց օգնե՞լ: Նրա նմա՞ն:

Գլխանոցը վերուվար է անում:

— Ուրեմն ինչո՞ւ տատիկի պես բժիշկ չդարձար:

Հրեշը ձեռքերն է տրորում:

— Արյուն: Չեմ սիրում… արյուն:

— Էդ դեպքում զինվոր դառնալդ շատ ուժեղ էր,– հեգնանքով բացականչում է Էլսան: Կամ սարկազմով: Դժվար է ասել:

— Դու ծնողազո՞ւրկ ես,– հարցնում է նա՝ չսպասելով պատասխանի:

Գլխանոցը չի շարժվում: Հրեշը լուռ է: Բայց մորուքն ավելի խորն է անհետանում մթության մեջ:

Հանկարծ Էլսան ոգևորված ինքն իրեն գլխով է անում:

— Հա՛, Իքս մարդկանց պես,– բացականչում է շատ ավելի խանդավառ, քան կուզենար ցույց տալ:

Գլխանոցը լուռ է: Էլսան շփոթված թեթևակի հազում է:

— Իքս մարդիկ… մուտանտներ են: Ու Իքս մարդկանցից շատերը, այսինքն, ծնողազուրկ են: Դե, էդ իբր… Մի տեսակ զիլ է:

Գլխանոցը չի շարժվում:

Էլսան քչփորում է նստարանի միջուկն ու զգում է, որ հիմարություն է դուրս տվել: Ուզում է ասել, որ Հարրի Փոթերն էլ է ծնողազուրկ, ու նրան նմանվելն ամենազիլ գործն է, բայց հասկանում է, որ Հրեշը կարծես որա-

թվայնացրել է 1915.info կայքը

կով գրականություն առանձնապես չի կարդում, ինչը և պետք էր ակնկալել: Այնպես որ, նա էլ չի շարունակում:

— Միամասը գաղտնալեզվով ինչ-որ բա՞ն է նշանակում, թե՞ քո լեզվով է: Այսինքն՝ քո լեզվի մյուս բառերին նման չի: Մի տեսակ ուրիշ է հնչում,– փոխարենը հարցնում է նա մի փոքր ավելի շփոթված, քան ակնկալում էր:

Գլխանոցը չի շարժվում: Բայց արտաբերած բառերը հանկարծ ավելի փափուկ են թվում: Բոլորովին տարբեր են Հրեշի արտաբերած մյուս բառերից, որոնք ասես իրենց դիրքերում կանգնած ժամապահներ լինեին: Իսկ սրանք մի տեսակ երազկոտ են:

— Մամայիս լեզուն: «Միամաս»: Իմ… մամայիս լեզուն:

Էլսան բարձրացնում է հայացքն ու նայում գլխանոցի տակի մթության մեջ:

— Դուք նույն լեզվով չէի՞ք խոսում:

Գլխանոցը ճոճվում է մի կողմից մյուսը:

— Իսկ քո մայրիկը որտեղի՞ց էր,– հարցնում է Էլսան:

— Ուրիշ տեղ: Ուրիշ պատերազմ:

— Իսկ Միամաս ի՞նչ է նշանակում:

Բառերը հառաչանքի պես են հնչում:

— Նշանակում է «ես սիրում եմ»: Մամայիս լեզուն է:

Էլսան քչփորելով հանում է նստարանի միջուկի վերջին մնացուկները, գլորելով գնդիկ է սարքում, որը հետ ու առաջ է գլորում աթոռի հենակի վրա՝ փորձելով խաղաղեցնել ուռուցքը:

— Փաստորեն, դա քո թագավորությունն է: Դրա համար է անունը Միամաս: Ու բոլորովին էլ նրա համար չէ, որ ես պիժամայի փոխարեն «միամաս» էի ասում: Տատիկին բնորոշ հնարքներից էր՝ Միամաս դնել անունը, որպեսզի իմանաս, որ մայրիկդ քեզ սիրում էր,– մռթմռթում է նա ու կտրում ձայնը՝ զգալով, որ բարձրաձայն է խոսում, մինչդեռ կարծում էր, թե մտածում է:

Հրեշը մի ոտքից մյուսին է անցնում: Դանդաղ է շնչում: Ու ճմռում է ձեռքերը:

— Միամասը: Հնարովի չի: Երևակայություն չի: Գոնե ո՛չ փոքրերի համար: Իսկական է... երեխաների համար:

Ու հետո, երբ Էլսան փակել էր աչքերը՝ ցույց չտալու համար, որ համաձայն է, երկմտելով շարունակում է.

— Նամակի մեջ: Տատիկի ներողությունը: Մամայիս համար է: Ասում է՝ կներես,– շշնջում է նա գլխանոցի տակից:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսայի աչքերը բացվում են, ու ունքերն իրար են բախվում:

— Հը՞:

Հրեշի կուրծքը բարձրանում-իջնում է:

— Դո՛ւ հարցրիր: Տատիկի նամակը: Ի՞նչ է գրված: Գրված է՝ կներես մամային համար: Որ մամային չգտանք:

Նրանց հայացքները հանդիպում են ճիշտ նրանց միջև եղած ճանապարհի կեսին, հավասար պայմաններում: Նրանց միջև փոքր, բայց երկկողմանի հարգանք է ծնվում այդտեղ ու այդ պահին՝ երկու միամասցիների միջև: Էլսան հասկանում է, որ նա պատմում է նամակի բովանդակությունը, քանի որ գիտակցում է, թե ինչ է մարդ զգում, երբ իրենից գաղտնիքներ են պահում միայն երեխա լինելու պատճառով: Այնպես որ, նա զգալիորեն պակաս զայրացած է հարցնում.

— Մամայի՞դ էիք փնտրում:

Գլխանոցը վերուվար է ճոճվում:

— Ինչքա՞ն ժամանակ:

— Միշտ: Հետո... ճամբար,– ինչում է գլխանոցի տակից:

Էլսայի ծնոտը մի փոքր իջնում է:

— Դրա՞ համար էր տատիկը ճամփորդում տարբեր տեղեր: Որովհետև մամայի՞դ էիք փնտրում:

Հրեշի ձեռքերն ավելի արագ էին շարժվում: Կուրծքը բարձրանում-իջնում էր: Գլխանոցը մի քանի սանտիմետրով իջնում է, ապա նորից շատ դանդաղ բարձրանում: Հետո երկար ժամանակ լռություն է տիրում:

Էլսան գլխով է անում ու նայում իր ծնկներին, ապա խելացնոր զայրույթի ալիքը նորից է ալեկոծում ներսից:

— Իմ տատիկը նաև ինչ-որ մեկի մայրն էր: Մտքովդ երբեք չի՞ անցել:

Հրեշը չի պատասխանում:

— Կարիք չկա ինձ հսկելու,– կոպտում է Էլսան ու նորից է հայհոյաբառեր քերծում աթոռի հենակի վրա:

Մոտավորապես մեկ կամ երկու հավերժություն լռություն է տիրում:

— Չհսկել,– վերջապես գոռոում է Հրեշը նրա հետևից:

Սև աչքերը երևում են գլխանոցի տակից:

— Չհսկել: Ընկերություն:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա նորից անհետանում է գլխանոցի տակ: Էլսան հայացքը հառում է գետնին ու կրունկով քերում հատակն ամբողջությամբ ծածկող գորգը. այնպես որ փոշու ամպ է բարձրանում:

— Շնորհակալ եմ,– խոժոռված շշնջում է նա:

Գլխանոցը չի շարժվում: Էլսան դադարում է փոշի բարձրացնել: Շունչ է քաշում ու կրկնում.

— Շնորհակալ եմ:

Բայց այս անգամ՝ գաղտնալեզվով:

Հրեշը ոչինչ չի ասում, բայց ձեռքերը պակաս ուժով ու ավելի դանդաղ է տրորում: Էլսան նկատում է: Ուռուցքը կամաց-կամաց անցնում է:

— Դու չես սիրում, չէ՞, շատ խոսել,– հարցնում է նա գաղտնալեզվով:

— Երկար չեմ խոսել,– ասում է Հրեշը սովորական լեզվով:

— Այսինքն՝ սովորական լեզվո՞վ երկար չես խոսել,– հարցնում է աղջիկը սովորական լեզվով:

— Երկար չեմ խոսել առհասարակ, ոչ մի լեզվով,– գաղտնալեզվով պատասխանում է նա:

Էլսան մտածկոտ գլխով է անում:

— Առանձնապես խոսել չես սիրում, չէ՞,– կրկնում է նա գաղտնալեզվով:

— Իսկ դու անընդհատ էդ գործին ես,– պատասխանում է Հրեշը: Առաջին անգամն է, որ Էլսային թվում է, թե նա ժպտում է: Կամ՝ համարյա:

— Touché,– ընդունում է Էլսան:

Սովորական լեզվով: Որովհետև չգիտի, թե Touché-ը ինչպես կլինի գաղտնալեզվով:

Դրանից հետո նրա ու Գայլսիրտի միջև լռություն է տիրում: Էլսան չգիտի, թե ինչքան են սպասում, բայց նրանք դեռ երկար են լուռ մնում, նույնիսկ երբ Էլսան որոշում է վերջ տալ: Նրանք սպասում են, մինչև որ վերելակի դռները գրեթե անլսելի ծլնգոցով բացվում են, ու միջանցքում սև կիսաշրջազգեստով կին է հայտնվում:

Նա այնպիսի քայլերով է մոտենում ծրարում նշված դռանը, ասես դուռը սովորաբար անհնազանդություն է ցուցաբերում: Հանկարծ մի ոտքը դեռ օդում կանգ է առնում և հայացքը հառում է հաղթանդամ մորուքավոր մարդուն ու փոքրիկ աղջնակին, որ թվում է, թե կտեղավորվեր նրա

թվայնացրել է 1915.info կայքը

ափի մեջ: Աղջիկն ակնդետ կնոջն է նայում: Սև կիսաշրջազգեստով տիկինը ձեռքին աղցանով լի պլաստիկե տուփ է բռնել, որը թրթռում է: Ինքն էլ այնպիսի տեսք ունի, ասես մտածում է շտապ փախչել: Իսկը երեխայի տրամաբանություն, ըստ որի՝ աչքերը փակելով անտեսանելի կդառնաս: Բայց փոխարենը մնում է նրանցից մի քանի մետր հեռավորության վրա կանգնած՝ երկու ձեռքով ամուր կառչած պլաստիկ տուփից, ասես ժայռի ելուստ լինի:

Էլսան վեր է կենում աթոռից: Հրեշը հետ-հետ է գնում: Եթե Էլսան այդ պահին նրան նայելիս լիներ, կտեսներ նրա դեմքի արտահայտությունը, ինչպիսին երբեք չէր տեսել: Նրա դեմքին այնպիսի սարսափ էր, որ Երկիր-Կիս-Արթունում ոչ ոք չէր հավատա, թե Գայլսիրտը ունակ է նման զգացումի:

Բայց Էլսան նրա կողմը չի նայում, այլ աթոռից բարձրանալով՝ հայացքը հառում է ուղիղ սև կիսաշրջազգեստով տիկնոջը:

— Ես կարծես թե նամակ ունեմ Ձեզ համար,– վերջապես արտաբերում է նա խորը շնչելուց հետո. կարծես բարձր տեղից ցատկելուն պատրաստվելիս լինի:

Սև կիսաշրջազգեստով տիկինն անշարժ կանգնած է՝ սպիտակած մատներով պլաստիկե տուփն ամուր սեղմած: Էլսան հաստատակամ նրան է պարզում ծրարը:

— Իմ տատիկից է: Կարծում եմ՝ բարևում է ու ինչ-որ արարքի համար ներողություն է խնդրում:

Կինը վերցնում է ծրարը: Էլսան ձեռքերը խցկում է գրպանները, քանի որ չի իմանում՝ ինչ անի դրանք: Կարծես երկու խոշոր կպչուն վարդագույն մաստակներ լինեն, իսկ մոտակայքում աղբարկղ չի երևում:

Նա չգիտի, թե այդ կինն ինչ գործ ունի այդտեղ, սակայն հասկանում է, որ տատիկը չէր կարող իրեն պատահաբար ուղարկել նրա մոտ, որովհետև Միամասում պատահականություններ չեն լինում: Հեքիաթներում պատահականություններ չկան: Ամեն ինչ լինում է ճիշտ այնպես, ինչպես որ պիտի լինի:

— Ծրարի վրա քո ազգանունը չէ, ես գիտեմ, որովհետև ազգանունդ մեր շենքում քո փոստարկղի վրա է գրված, բայց նամակը պիտի որ քեզ ուղղված լինի, որովհետև էսպիսի պատահականություն չի կարող լինել, ու հեքիաթներում էլ պատահականություններ չեն լինում,– հապշտապ տե-

թվայնացրել է 1915.info կայքը

ղեկացնում է Էլսան՝ մեջքը ձիգ պահած, քանի որ հեքիաթներում ասպետները մեջքն ուղիղ են պահում:

Սև կիսաշրջազգեստով կնոջից այսօր անանուխի հոտ էր գալիս, ոչ գինու: Նա զգուշորեն ծրարից հանում է նամակը: Շրթունքներն իրար են սեղմված: Նամակը ցնցվում է:

— Ես... առաջ իմ ազգանունն այդ էր, շատ վաղուց: Ես իմ աղջկական ազգանունը վերցրի, երբ ձեր շենք տեղափոխվեցի, բայց իմ ազգանունն այդ էր, երբ... Երբ ես ու քո տատիկը հանդիպեցինք:

— Մեծ ալիքից հետո,– ասում է Էլսան ոչ որպես հարց:

Կնոջ շրթունքներն անհետանում են:

— Ես... Ես որոշել էի գրասենյակի դռան վրա էլ փոխել ազգանունս: Բայց դե, հա: Չգիտեմ: Բայց դե, այդպես էլ չարեցի:

Նամակը սկսում է ավելի ուժեղ ցնցվել:

— Իսկ ի՞նչ է գրված նամակում,– հարցնում է Էլսան, ինչպես կհարցներ ցանկացած ութ տարեկան երեխա՝ մտածելով, որ ուղղակի անխղճություն կլինի, եթե չիմանա, թե ինչ է գրված նամակում միայն այն պատճառով, որ այնքան հիմար է եղել, որ նախապես թաքուն չի կարդացել, երբ այդ հնարավորությունն ուներ:

Եվ հիմա զղջում է:

Սև կիսաշրջազգեստով կնոջ դեմքին հայտնվում են հեկեկալու բոլոր նշանները, բայց կարծես նրա մարմնում այլևս արցունք չէր մնացել, որ դուրս հոսեր:

— Տատիկդ գրել է՝ կներես,– դանդաղ ասում է նա:

— Ինչի՞ համար,– իսկույն հարցնում է Էլսան:

— Որ ինքը... Որ քեզ այստեղ է ուղարկել,– ասում է սև կիսաշրջազգեստով կինը:

Էլսան ուզում է ուղղել նրան ու Գայլսիրտին ցույց տալով՝ ասել՝ ՄԵԶ է այստեղ ուղարկել, բայց երբ հայացքը շրջում է, տեսնում է, որ նա չկա: Վերելակի ծլնգոցը չի լսվել, ոչ էլ աստիճանավանդակի դռան փակվելու շրխկոցը: Նա պարզապես անհետացել էր, «ինչպես հանգստափչիկը՝ բաց պատուհանից» (այդպես սովորաբար ասում էր տատիկը, երբ իրերը չէր գտնում իր դրած տեղում):

թվայնացրել է 1915.info կայքը

Սև կիսաշրջազգեստով կինը գնում է դեպի «Լից. հոգեբան» ցուցանակով ու իր նախկին ազգանունով դուռը: Բանալին մտցնում է կողպեքի մեջ ու մի կարճ շարժումով Էլսային ներս է հրավիրում, չնայած երևում է, որ նա իրականում չի ուզում ներս մտնել: Տեսնելով, որ Էլսան դեռևս հայացքով իր հաղթանդամ ընկերոջն է փնտրում, սև կիսաշրջազգեստով կինը մռայլ շշնջում է.

— Վերջին անգամ, երբ տատիկդ նրա հետ մոտս էր եկել, ես ուրիշ գրասենյակ ունեի: Դրա համար չի հասկացել, որ մոտս եք գալու: Նա երբեք հետդ չէր գա, թե իմանար, որ գալիս եք ինձ հանդիպելու, որովհետև... Ահավոր վախենում էր ինձնից:

թվայնացրել է 1915.info կայքը

17

ԴԱՐՁԻՆՈՎ ԲՈՒԼԿԻ

Երկիր-Կիս-Արթունի հեքիաթում Միամասից մի աղջիկ կար, որ վերացնում է ծովահրեշտակի անեծքն ու ազատ արձակում նրան: Սակայն տատիկը երբեք չի ասել, թե ինչպես:

Էլսան նստած է սև կիսաշրջազգեստով կնոջ գրասեղանի առջև՝ աթոռին, որը, ինչպես Էլսան է ենթադրում, այցելուների համար է: Նստելիս նրան փոշու ամպ է պարուրում, ասես ընկած լինի աճպարարի ներկայացման ժամանակ աշխատող ծխի մեքենայի վրա, ինչից եզրակացնում է, որ կնոջ այցելուներն առանձնապես շատ չեն: Կինն անհարմար դիրքով նստած է գրասեղանի մյուս կողմում ու նորից կարդում է տատիկի նամակը, թեպետ Էլսան արդեն համոզված է, որ նա պարզապես ձևացնում է, որ խուսափի իր հետ զրույցից: Երևում է, որ կինն Էլսային ներս հրավիրելու վայրկյանին փոշմանել է ասածի համար: Ճիշտ ինչպես սերիալներում, երբ մարդիկ վամպիրին ներս են հրավիրում ու հետո միայն հասկանում, թե ինչ ճակատագրական քայլ արեցին: Ամեն դեպքում, Էլսան կարծում է, որ նման իրավիճակում մարդ այդպես կմտածի: Կնոջ տեսքից էլ է նույնը երևում: Գրասենյակի բոլոր պատերին գրադարակներ են: Էլսան, բացի գրադարանից, ոչ մի տեղ այսքան գիրք չի տեսել: Տեսնես սև կիսաշրջազգեստով կինն iPad-ի մասին լսած կա՞:

Հետո նրա մտքերը նորից վերադառնում են դեպի տատիկն ու Երկիր-Կիս-Արթունը: Եթե այս կինը ծովահրեշտակն է, ուրեմն նա Երկիր-Կիս-Արթունի երրորդ արարածն է, որ ապրում է իրենց շենքում: Էլսան չգիտի,

թվայնացրել է 1915.info կայքը

թե սա ինչ է նշանակում. տատիկն իր բոլոր պատմությունները վերցրել է իրական աշխարհից ու տեղափոխել Միամա՞ս, թե՞ Միամասի պատմություններն այնքան իրական են, որ նրա արարածներն այցելում են իրական աշխարհ: Բայց Երկիր-Կիս-Արթունն ու շենքի մուտքն ասես միաձուլվել են: Էլսան մտաբերում է տատիկի խոսքը. «Ամենալավ հեքիաթները երբեք ամբողջությամբ իրական չեն ու երբեք ամբողջությամբ հնարովի չեն»: Տատիկը դա նկատի ուներ, երբ որոշ երևույթներ անվանում էր «մարտահրավեր իրականությանը»: Տատիկի համար ոչինչ չկար ամբողջությամբ իրական կամ ամբողջությամբ հնարովի: Հեքիաթներն ամբողջությամբ իրական են և միաժամանակ ամբողջությամբ իրական չեն:

Էլսան միայն կուզենար, որ տատիկն ավելի շատ պատմած լիներ ծովահրեշտակի անեծքի ու այն վերացնելու մասին: Եվ ենթադրում է, որ դրա համար էլ իրեն ուղարկել է այստեղ, ու եթե Էլսան չկարողանա լուծել այդ հարցը, հավանաբար չի ստանա հաջորդ նամակը: Իսկ այդ դեպքում երբեք չի հասնի մայրիկի կներես-ին:

Նա հայացքը հառում է գրասեղանի հակառակ կողմում նստած կնոջն ու ցուցադրաբար հազում է: Կնոջ կոպերը շարժվում են, սակայն շարունակում են նայել նամակին:

— Չե՞ս լսել մի կնոջ մասին, որ շատ կարդալուց մեռավ,– ասում է Էլսան:

Կնոջ հայացքը սահում է թղթի վրայով ու մի պահ կանգնելով Էլսայի վրա՝ նորից իջնում է նամակին:

— Չգիտեմ… Չեմ հասկանում՝ ինչ ես ասում,– վախեցած ասում է կինը:

Էլսան հոգոց է հանում:

— Ես էսքան շատ գիրք երբեք չեմ տեսել: Դու iPad-ի մասին լսած կա՞ս,– ասում է նա՝ հուսալով կոտրել սառույցը:

Կնոջ հայացքը նորից դանդաղ բարձրանում է: Մի պահ կառչում է Էլսայի հայացքից:

— Սիրում եմ գրքեր:

— Կարծում ես՝ ես չե՞մ սիրում: Բայց կարելի է գրքերը, ասենք, iPad-ի մեջ քաշել: Էլ կարիք չկա միլիոնով գիրք պահել գրասենյակում,– տեղեկացնում է Էլսան:

Կնոջ բիբերը հետուառաջ են վազում գրասեղանի վրայով: Նա մի փոքրիկ տուփիկից անանուխի հաբ է հանում ու լեզվի վրա դնում այնպիսի

թվայնացրել է 1915.info կայքը

անճարակ շարժումով, կարծես ձեռքն ու լեզուն տարբեր մարդկանց են պատկանում:

— Ինձ դուր են գալիս իսկական գրքերը:

— Ամեն տեսակի գիրք էլ հնարավոր է քաշել iPad-ի մեջ:

Կնոջ մատները թեթևակի դողում են: Նա խեթ նայում է Էլսային, ինչպես նայում են զուգարանից դուրս եկողին, որը մի քիչ երկար է մնացել ներսում:

— Գիրք ասելով՝ նկատի ունեմ շապիկը, կազմը, էջերը...

— Գիրքը տեքստ չէ՞: Իսկ տեքստն էլ կարելի է iPad-ով կարդալ,– տեղեկացնում է Էլսան:

Կնոջ աչքերը բացվում ու փակվում են խոշոր հովհարների պես:

— Ես սիրում եմ կարդալ՝ գիրքը ձեռքիս բռնած:

— Դե կարելի է iPad-ը բռնել,– հայտարարում է Էլսան:

— Նկատի ունեմ, որ սիրում եմ թերթել,– փորձում է արդարանալ կինը:

— Է՛, iPad-ն էլ կարելի է թերթել,– չի հանձնվում Էլսան:

Կինը շատ դանդաղ գլխով է անում, որն Էլսայի՝ կյանքում տեսած ամենադանդաղ գլխով անելն էր: Էլսան ձեռքերը թափ է տալիս:

— Դե լա՛վ, ոնց կուզես: Թեկուզ միլիոն գիրք պահիր: Ես ուղղակի հարցրի: Գիրքը նույնն է, նույնիսկ եթե iPad-ով ես կարդում: Ասենք, ապուրն ապուր է՝ անկախ ամանից:

Կնոջ բերանի անկյունների շուրջը ջղաձգությունից մաշկն ասես ճաք է տալիս:

— Այդ ասացվածքը երբեք չեմ լսել:

— Միամասից է,– ասում է Էլսան:

Կինը հայացքն իջեցնում է ծնկներին: Ոչինչ չի ասում:

«Բոլորովին հրեշտակի նման չէ»,– մտածում է Էլսան: Բայց մյուս կողմից հարբեցողի էլ նման չէ: Ոնց որ հավասարակշռում են իրար: Երևի այսպիսի տեսք են ունենում, երբ այդ երկուսի մեջտեղում են գտնվում:

— Իսկ ինչո՞ւ էր տատիկն էստեղ բերել Գայլսիրտին,– հարցնում է Էլսան:

— Կներես, ո՞ւմ,– հարցնում է կինը:

— Դու ասացիր, որ տատիկը նրան բերել էր էստեղ: Դրա համար է քեզնից վախենում:

Կինը անսահման դանդաղ է գլխով անում:

— Ես չգիտեի, որ դու նրան Գայլսիրտ ես ասում:

— Նրա անունն է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Չգիտեի:

— Հա, պարզ է: Բա ինչո՞ւ է քեզնից վախենում, եթե դու նույնիսկ նրա անունը չգիտես:

Կինը ձեռքերը դնում է ծնկներին ու սկսում է զննել. ասես առաջին անգամ է տեսնում ու զարմանում է, թե ինչ են անում այդտեղ:

— Քո... քո տատիկը բերել էր նրան, որ խոսի պատերազմի մասին: Կարծում էր՝ կկարողանամ նրան օգնել, բայց նա ինձնից վախենում էր: Իմ հարցերից էր վախենում ու իր հիշողություններից,– վերջապես ասում է նա:

Ապա խորը շունչ քաշելուց հետո ավելացնում է.

— Նա շատ, շատ պատերազմներ է տեսել: Այս կամ այն կերպ համարյա ամբողջ կյանքը պատերազմներում է անցել: Դրանից մարդու հետ անտանելի փոփոխություններ են կատարվում:

— Ինչո՞ւ է անընդհատ ձեռքերի վրա կենտրոնացած,– հետաքրքրվում է Էլսան:

— Այսի՞նքն:

— Անընդհատ ձեռքերն է լվանում: Ոնց որ ուզում է, օրինակ՝ կղանքի հոտը մաքրել վրայից:

Սև կիսաշրջազգեստով կինը խորասուզվում է մտքերի մեջ: Էլսան հազալով կոկորդն է մաքրում:

— Դե, օրինակ բերեցի: Կարող է ինչ-որ ուրիշ հոտ է: Այսինքն՝ սա մի տեսակ սևեռուն մի՞տք է: Ու կապ չունի՞, թե ինչ հոտ կլինի:

Կնոջ կոպերն իջնում ու բարձրանում են:

— Հաճախ ողբերգությունից հետո ուղեղի հետ տարօրինակ բաներ են կատարվում: Ինձ թվում է՝ նա փորձում է լվանալ...

Լռում է: Հայացքն իջեցնում է:

— Ի՞նչը,– համառում է Էլսան:

— Արյունը,– դատարկված ասում է կինը:

— Սպանե՞լ է մեկին:

— Չգիտեմ:

— Խելքը թռցրե՞լ է,– առանց քաշվելու՝ հարցնում է Էլսան:

— Կներե՞ս:

— Հոգեբան չե՞ս:

— Այո՛:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա գժերին չե՞ս բուժում: Որ գլխից են հիվանդ: Դե, որ խելքը կորցրել են: Ոնց որ անհարմար է նրանց հիվանդ ասելը: Հա՞: Ինքն իրո՞ք խախտված է:

— Բոլորը, որ պատերազմ են տեսել, ինչ-որ առումով խախտված են,– վեհերոտ պատասխանում է կինը:

Էլսան ուսերն է թոթվում:

— Դե, ուրեմն թող զինվոր չդառնար: Զինվորների մեղքով են պատերազմներ լինում:

Կնոջ ձեռքերը դանդաղորեն շարժվում են ծնկներից դեպի գրասեղանը, ապա՝ նորից դեպի ծնկները:

— Կարծում եմ՝ նա այդ զինվորներից չէր: Նա խաղաղապահ էր:

— Զինվորները բոլորն էլ մեկ են,– փնչացնում է Էլսան:

Չնայած հասկանում է, որ կեղծավորություն է այդպես ասելը: Իբր ատում է զինվորներին ու պատերազմները: Որովհետև գիտի, որ եթե Գայլսիրտը Մարտ-Ան-Վերջում չկռվեր ստվերների հետ, ապա գորշ մահը կուլ կտար ամբողջ Երկիր-Կիս-Արթունը: Ու ինքը շատ էր մտածում այդ մասին. երբ պետք է կռվել, երբ՝ ոչ: Հիշում է, ինչպես էր տատիկն ասում. «Եթե դու բարոյականություն ունես, իսկ ես՝ երկակի բարոյականություն, ուրեմն ես կհաղթեմ»: Բայց Էլսան դրանից իրեն հաղթող չի զգում:

— Գուցե,– ցածրաձայն ասում է կինը՝ ասես նրա մտքերին ի պատասխան:

— Դու էնքան էլ շատ այցելու չես ունենում, չէ՞,– սենյակը հեգնական հայացքով ցույց տալով՝ ասում է Էլսան:

Կինը չի պատասխանում: Նրա ձեռքերը շոշափում են տատիկի նամակը: Էլսան անհամբեր հոգոց է հանում:

— Է՞լ ինչ է գրում տատիկը:

— Գրում է՝ կներես… Կներես տարբեր բաների համար:

— Ինչերի՞:

Կինն ասես քիչ-քիչ օդ է որսում շրթունքներով:

— Շատ բաների:

— Գրել է՝ կներես, որ չի՞ կարողացել փրկել քո ընտանիքը:

Կնոջ բիբերը թրթռում են:

— Հա՛: Մյուս… մյուս բաների հետ:

Էլսան գլխով է անում:

— Ու համ էլ, որ ի՞նձ է մոտդ ուղարկել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հա՛:

— Ինչո՞ւ:

— Որովհետև գիտեր, որ լիքը հարց ես տալու:

— Շատ հարցեր, ոչ թե լիքը,– ուղղում է Էլսան:

Կինը գլխով է անում:

— Շատ: Իհարկե:

Նա ամենևին չի զայրանում Էլսայի ուղղումներից: Դրա համար Էլսան մի քիչ սկսում է սիրել նրան:

— Չես սիրո՞ւմ, որ քեզ շատ հարցեր են տալիս:

— Ես հոգեբան եմ: Սովոր եմ, որ ես եմ հարցեր տալիս:

— Իսկ ի՞նչ է նշանակում «Լից. Հոգեբան»:

— Լիցենզավորված հոգեբան:

— Հա՛, թե չէ կարծեցի՝ նշանակում է «լիցքավորված»: Դե, կամ «լիցքավորող»:

Կինը կարծես չգիտեր՝ ինչ ասեր:

Էլսան նեղացած ձեռքը թափ է տալիս դեպի առաստաղն ու փնչացնում է:

— Դե, հա, հիմա հիմարություն է թվում, բայց էդպես է միշտ, հետադարձ հայացքով ամեն ինչ հեշտ է թվում:

Կինն այնքան դժվարությամբ է գլխով անում, որ Էլսան ակնկալում է, թե նրա վիզը ուր որ է ճռռալու է ժանգոտած ծխնիի պես: Հետո նրա բերանի անկյունները ձգվում են: Էլսայի կարծիքով՝ դա պիտի որ ժպիտի պես մի բան լիներ, բայց, ավելի շուտ, սառած ջղաձգություն է ստացվում, ասես բերանի մկանները բոլորովին փայտացել էին:

Էլսան նորից գրասենյակն է զննում: Ոչ մի լուսանկար չկա՝ ի տարբերություն բնակարանի նախասենյակի: Միայն գրքեր:

— Ինչ-որ հետաքրքիր գիրք կա՞,– հարցնում է նա՝ հայացքը սահեցնելով դարակներով:

— Ես չգիտեմ՝ քեզ համար հետաքրքիրը որն է,– զգուշորեն ասում է կինը:

— «Հարրի Փոթերի» հատորներից ունե՞ս,– հարցնում է Էլսան:

— Չէ՛:

Էլսայի ունքերը թռչում են ճակատին, ասես չի հավատում, որ կինը կարող էր նման բան ասել:

— Ոչ մե՞կը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Չէ՛:

— Քո էսքա՜ն գրքերի մեջ ոչ մի հատ «Հարրի Փոթեր» չկա՞:

Կինը մեղավոր տեսքով տարուբերում է գլուխը: Էլսան խորապես վիրավորված է երևում:

— Միլիոն հատ ինչ գիրք ասես, ու ո՛չ մի հատ «Հարրի Փոթեր»: Ու քեզ թույլ են տալիս գլխից խախտվածներին բուժե՞լ: Հիմարությո՛ւն,– քրթմնջում է նա:

Կինը չի պատասխանում: Էլսան հենվում է աթոռի մեջքին ու աթոռը հրելով՝ կանգնեցնում է հետևի ոտքերի վրա, ինչը մայրիկը տանել չի կարողանում:

— Դու տատիկիս հիվանդանոցո՞ւմ հանդիպեցիր ալիքից հետո,– հարցնում է աղջիկը:

Կինը նորից անանուխի մի հաբ է վերցնում սեղանի վրայի տուփիկից: Նա թեթևակի ձգվում է դեպի Էլսան՝ նրան էլ հյուրասիրելու, բայց Էլսան գլուխը թափ է տալիս:

— Ծխո՞ւմ ես,– հարցնում է նրան:

Կինը շփոթվում է: Էլսան ուսերն է թոթվում:

— Հա ի՞նչ, տատիկն էլ էր կոնֆետ ուտում, երբ չէր կարող ծխել, իսկ ներսերում հիմնականում ծխել չէր կարող:

— Թողել եմ,– ասում է կինը:

— Վերջնակա՞ն, թե՞ ժամանակավոր: Դա նույնը չէ,– ասում է Էլսան:

Կինը գլխով անելու դանդաղության ռեկորդ է սահմանում:

— Համարյա թե փիլիսոփայական հարց է: Դժվար է պատասխանել:

Էլսան նորից ուսերն է թոթվում:

— Որտե՞ղ ես տատիկին հանդիպել: Դրա՞ն էլ է դժվար պատասխանելը:

— Երկար պատմություն է:

— Իսկ ես սիրում եմ երկար պատմություններ:

Կնոջ ձեռքերը թաքնվում են ծնկների արանքում:

— Ես արձակուրդում էի: Ավելի ճիշտ, մենք՝ իմ ընտանիքն ու ես: Մենք գնացել էինք հանգստանալու: Ու այդ օրը… պատահեց… Դժբախտություն պատահեց:

— Գիտեմ, ցունամին,– ասում է Էլսան:

Կինը երկար թարթում է:

— Ես շատ եմ կարդում,– մտերմաբար բացատրում է Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

Կնոջ հայացքը պտտվում է սենյակով մեկ, և նա ասում է իմիջիայլոց, ասես հանկարծ մտքով անցավ.

— Տատիկդ գտավ… Տատիկդ ինձ գտավ…

Կինն այնպես է ծծում բերանում պահած անանուխի կոնֆետը, որ այտերը բոլորովին ներս են ընկնում, ինչպես տատիկինը, երբ մի օր Էլսայի հոր Audi-ից որոշում է պարտքով բենզին վերցնել ու փորձում է քաշել պլաստիկե խողովակով:

— Երբ իմ ամուսինն ու իմ… իմ տղաները…,– սկսում է կինը:

Վերջին բառերը սայթաքում ու ընկնում են անդունդը, մինչ մյուսները տեղ են հասնում: Նա կարծես հանկարծ մոռացել էր, որ նախադասությունն անավարտ է մնացել:

— Խեղդվեցին,– հուշում է Էլսան և իսկույն ամաչում է, քանի որ գիտակցում է, որ հաստատ ահավոր անխղճություն էր այդ բառն օգտագործել մեկի մոտ, ով հենց այդպես է կորցրել ընտանիքը:

Սակայն կինը միայն գլխով է անում և բոլորովին չի բարկանում: Եվ այդ պահին Էլսան արագ գաղտնալեզվով հարցնում է.

— Դու մեր գաղտնալեզուն գիտե՞ս:

— Կներես, ի՞նչը,– բացականչում է սև կիսաշրջազգեստով կինն ու հայացքն ուղղում նրան՝ բոլորովին տարակուսած:

— Է՛հ, ոչինչ,– քրթմնջում է Էլսան սովորական լեզվով ու նորից նայում է կոշիկներին:

Ընդամենը՝ ստուգելու համար: Եվ Էլսային զարմացնում է, որ ծովահրեշտակը չգիտի իրենց գաղտնալեզուն, որ ամբողջ Երկիր-Կիս-Արթունի լեզուն է: «Բայց գուցե անեծքով է պայմանավորված»,– մտածում է Էլսան:

Կինը նայում է իր ժամացույցին:

— Իսկ դու չպիտի՞ դպրոցում լինեիր:

Էլսան թոթվում է ուսերը:

— Ծննդյան արձակուրդ է:

Կինը գլխով է անում: Այս անգամ գրեթե նորմալ արագությամբ:

— Դու Միամասում եղե՞լ ես,– հարցնում է Էլսան:

— Ես… Ես չգիտեմ՝ ուր է,– զգուշորեն ասում է կինը:

— Որտեղ է,– ուղղում է Էլսան:

Կնոջ հայացքը բոլորովին դատարկ է: Էլսան աչքերն է ոլորում:

— Միամաս: Եղե՞լ ես էնտեղ, թե՞ չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դա ինչ-որ կատակի պես բա՞ն է:

— Այսի՞նքն՝ ի՞նչ կատակ:

Կինը վախեցած ձեռքերին է նայում:

— Եսիմ: Ասենք, տուկ-տուկ-տուկ, այն ո՞վ է...

— Հը՞, դե չէ՛,– փռթկացնում է Էլսան:

Կինն իսկույն չափազանց դժբախտ է երևում: Էլսան հառաչում է:

— Թե որ կատակ անելու լինեի, կասեի. «Հայրը երեխային հարցնում է՝ ձեր մանկապարտեզում վառո՞ւմ են, երեխան էլ ասում է՝ չէ՛, ուղղակի անկյուն են կանգնեցնում»:

Կինը չի պատասխանում: Էլսան ձեռքերը թափ է տալիս:

— Հասկացա՞ր:

Կինը գլխով է անում ու հայացքը հառում Էլսային: Թույլ ժպտում է:

— Հասկացա՛: Լա՛վ:

Էլսան թթված ուսերն է թոթվում:

— Որ հասկանայիր, կծիծաղեիր:

Կինն այնքան խորն է շնչում, որ եթե մարդ այդ խորխորատը մետաղադրամ գցի, չի լսի՝ ինչպես է ընկնում հատակին:

— Ի՞նքդ ես հնարում,– հարցնում է Էլսային:

— Ի՞նչը,– չի հասկանում Էլսան:

— Կատակներդ:

— Չէ՛, տատիկն է պատմել:

Կնոջ աչքերը փակվում են, ապա դադաղ բացվում են:

— Է՜հ, իմ տղաները սովորաբար... Սովորաբար նրանք... Նրանք էին նման կատակներ անում: Տարօրինակ հարց էին տալիս ու սպասում էին պատասխանիդ, իսկ հետո ասում էին ճիշտ պատասխանն ու ծիծաղից թուլանում:

Երբ նա պատմում է նրանց ծիծաղելու մասին, դժվարությամբ կանգնում է ոտքերի վրա, որոնք թղթե օդանավի թևերի պես փխրուն են թվում:

Հետո հանկարծ ամեն ինչ կտրուկ փոխվում է. նրա կանգնելու, խոսելու ձևը, նույնիսկ շնչելու ձևը:

— Կարծում եմ՝ գնալուդ ժամանակն է,– ասում է նա՝ կանգնելով պատուհանի մոտ՝ մեջքով դեպի Էլսան:

Ձայնը թույլ է, սակայն գրեթե թշնամական:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչո՞ւ,– ապշած բացականչում է Էլսան:

— Ուզում եմ, որ գնաս,– կտրուկ ասում է կինը:

— Ինչի՞ համար: Քաղաքի կեսն անցել եմ, որ տատիկիս ապուշ նամակը քեզ հասցնեմ, ու դու համարյա ոչինչ չես պատմել ինձ, ու հիմա ԵՍ գնա՞մ: Համ էլ գիտե՞ս՝ դրսում ի՜նչ ցուրտ է,– զայրանում է Էլսան շուտով ութ տարեկանը բոլորող երեխայի պես, որին թվում է, որ իր հետ անարդարացի են վարվում, և բացի այդ՝ դրսում ահավոր ցուրտ է:

Կինը շարունակում է պատուհանի մոտ մնալ՝ նրան մեջքով կանգնած:

— Դու… Դու չպիտի գայիր էստեղ:

— Ես եկա, որովհետև դու տատիկի ընկերն էիր:

— Ես ձեր գրողի տարած բարեգործության կարիքը չունեմ: Ես ինքս եմ իմ հարցերը լուծում,– դառնացած ասում է կինը:

— Sure, հրաշալի գլուխ ես հանում: Հաստա՛տ: Բայց ես էդ գրողի տարած բարեգործության համար չեմ եկել,– ու Էլսան վեր է կենում աթոռից՝ փոշու ամպ բարձրացնելով:

— Դե, ուրեմն կորի՛ր էստեղից, սատանի՛ ճուտ: Դո՛ւրս գնա,– առանց շրջվելու՝ ֆշշացնում է կինը:

Էլսան ծանր է շնչում: Վախեցած անսպասելի հարձակողականությունից ու վիրավորված, որ կինը չի էլ նայում իրեն՝ նա, բռունցքները սեղմած, սահում է աթոռից:

— Էդպես, հա՞: Ուրեմն մայրիկս սխալվում էր, որ ասում էր, թե դու պարզապես հոգնած ես: Իսկ տատիկը ճիշտ էր: Դու ուղղակի գրողի տարած…

Ու հետո ամեն ինչ ընթանում է ինչպես ցանկացած ցասման բռնկման ժամանակ: Այն բաղկացած է ոչ թե մի, այլ բազմաթիվ ցասման կայծերից: Այն զայրույթի կայծերի շարան է, որ ընկնում է կրծքում բորբոքվող հրաբուխի մեջ, մինչև որ այն սկսում է դուրս ժայթքել: Էլսան զայրանում է սև կիսաշրջազգեստով կնոջ վրա, որ նա ոչինչ չի պատմում, որ քիչ թե շատ հասկանալի դարձնի այդ տխմար հեքիաթը: Զայրանում է Գայլսիրտի վրա, որ լքել էր իրեն լոկ այդ տխմար, լիցքավորված հոգեբանի ահից: Ու ամենաշատը կատաղում է տատիկի վրա: Ու այդ տխմար հեքիաթի: Եվ այդ բոլոր պոռթկումներն արդեն չափազանց շատ էին: Այնպես որ, իր շրթունքներից բառերը պոկվելուց առաջ էլ ինքն արդեն գիտակցում էր, թե ինչ մեծ սխալ է այդպես բղավելը:

— ՀԱՐԲԵՑՈ՛Ղ ԵՍ: ԴՈՒ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԲԵՑՈՂԻ ՄԵ՛ԿՆ ԵՍ:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ նույն վայրկյանին նա սարսափելի զղջում է, սակայն չափազանց ուշ է: Սև կիսաշրջազգեստով կինը շրջվում է: Նրա դեմքը ջղակծկվում է՝ ասես փշրվելով հայելու հազարավոր կտորների:

— Դո՛ւրս:

— Ես նկատի ու…,– սկսում է Էլսան:

Նա հետ-հետ է գնում գրասենյակով՝ ձեռքերն այնպես պահած, ասես ներողություն է խնդրում:

— Կներե…

— ԴՈ՛ՒՐՍ,– ոռնում է կինն ու օդում հիստերիկ շարժումներ է անում, կարծես ինչ-որ իր է փնտրում, որ վրան շպրտի:

Էլսան փախչում է:

Դուրս: Հեռու:

Վազում է միջանցքով ու աստիճաններով ներքև՝ դեպի առաջին հարկի մուտքի դուռը:

Նա սայթաքում է գվվացող նախամուտքի մոտ: Արցունքները կաթի պես խիտ շղարշով ծածկում են աչքերը, ու հեծկլտալուց հավասարակշռությունը կորցրած, կուրորեն սլանալով՝ գլորվում է գետնին: Զգում է, որ ուսապարկն իրեն է խփվում հետևից ու սպասում է, որ այտոսկրերը ուր որ է կբախվեն գետնին:

Բայց փոխարենը բոլորովին ուրիշ բան է պատահում: Նույն պահին, երբ ճակատը բետոնին էր զարկվելու, փափուկ սև մորթի է զգում դեմքի տակ: Եվ այդ պահին ասես ամեն ինչ պայթում է: Նա այնքան ամուր է գրկում հսկա կենդանուն, որ նա քիչ է մնում՝ խեղդվի:

— Է՛լսա:

Ալֆի ձայնը գալիս է մուտքի դռան կողմից՝ որպես ինքնին ենթադրվող մի բան:

— Ըհ-ը՛ը,– հեկեկում է նա՝ վորսի մորթու մեջ սուզված:

— Արի՛, գրո՛ղը տանի: Գնացինք տուն: Հո չե՞ս կարող էստեղ մնալ ու զռռալ,– մռթմռթում է Ալֆը:

Էլսան դանդաղ բարձրացնում է գլուխն ու ուզում է ամբողջ պատմությունը պատմել Ալֆին: Ամեն ինչ ծովահրեշտակի մասին, ու թե ինչպես էր տատիկն իրեն ուղարկել այդ տխմար արկածին, երբ ինքն իսկի չգիտեր՝

թվայնացրել է 1915.info կայքը

ինչ պիտի աներ: Ու ամեն ինչ Գայլսիրտի մասին, որ լքեց իրեն, երբ ինքն ամենից շատ նրա կարիքն ուներ, մայրիկի ու ներողության մասին, որն Էլսան հույս ուներ գտնել այստեղ, ու Կեսիկի մասին, որ պիտի գա ու ամեն ինչ փոխի, ու ամեն ինչ՝ ամեն ինչի մասին: Այդ ամբողջ միայնության մասին, որի մեջ խեղդվում է: Նա ուզում է ամբողջը հեկեկալով պատմել Ալֆին: Բայց գիտի, որ չի հասկանա, որովհետև, երբ ընդամենը ութ տարեկան ես, ոչ ոք չի հասկանում քեզ, չնայած ուրիշ տարիքում նույնպես չեն հասկանում:

— Ի՞նչ ես անում էստեղ,– հեծկլտալով հարցնում է նա:

Ալֆը հոգոց է հանում ու մռթմռթում ինչ-որ երկար-բարակ խոսքեր, որ Էլսան ո՛չ լսում է, ո՛չ էլ հասկանում: Նա կոշիկները սահեցնում է հատակով: Վերջապես դժկամորեն մռթմռթում է.

— Գրո՛ղը տանի, դու ես հասցեն ինձ ասել: Մեկը պիտի քեզ ամեն դեպքում էստեղից տաներ: Ես 30 տարի տաքսի եմ քշում ու հո չէ՞ի կարող, գրո՛ղը տանի, փոքրիկ աղջնակին եսիմ որտեղ թողնել:

Նա մի քանի անգամ շունչ է քաշում, մինչև որ ավելացնում է՝ գետնին նայելով.

— Տատիկդ ինձ ուղղակի կմորթեր, եթե ես քեզ էստեղ թողնեի:

Էլսան գլխով է անում ու դեմքը մաքրում է վորսի մորթով:

— Սա՞ էլ է մեզ հետ գալու,– մռայլ հարցնում է Ալֆը՝ վորսին մատնացույց անելով:

Վորսը մոտավորապես 75 տոկոսով ավելի մռայլ նրան է նայում: Էլսան գլխով է անում ու փորձում նորից չհեծկլտալ:

— Ուրեմն պիտի թափքում տեղավորվի,– վճռական ասում է Ալֆը:

Ու, բնականաբար, այդպես չի լինում: Էլսան ամբողջ ճանապարհն անցնում է՝ դեմքը մորթու մեջ թաղած: Վորսերի ամենա-ամենալավ կողմն այդ է: Որ նրանք ջրակայուն են:

Մեքենայի մեջ օպերա է հնչում: Էլսան, համենայնդեպս, կարծում է, որ օպերա է: Չնայած օպերա առանձնապես շատ չի լսել, բայց դրա մասին քննարկումներ լսել է, այնպես որ ենթադրաբար հենց այդ է, որ կա: Երբ ճանապարհի կեսն անցնում են, Ալֆն անհանգիստ նրան է նայում հայելու մեջ:

— Ինչ-որ բան կուզե՞ս:

— Օրինակ՝ ի՞նչ,– քիթը քաշում է Էլսան:

Ալֆի ունքերն իջնում են քթի վրա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Եսիմ, օրինակ՝ սուրճ:

Էլսան գլուխը բարձրացնում է ու աչքերը նրան հառում:

— Ես դեռ յոթ տարեկան եմ:

— Էդ ի՞նչ կապ ունի:

— Շատ յոթ տարեկանների՞ ես ճանաչում, որ սուրճ են խմում:

Ալֆը մռայլ գլուխն է թափ տալիս:

— Ես առանձնապես յոթ տարեկանների չեմ ճանաչում:

— Երևում է,– ասում է Էլսան:

— Չէ՝ չէ՛: Գրողի ծո՛ցը,– փնթփնթում է Ալֆը:

Էլսան երեսը թաքցնում է վորսի բրդի մեջ: Ալֆը, ղեկի առջև նստած, հայհոյում է ու մի վայրկյանից ինչ-որ թղթե տոպրակ է մեկնում նրան: Վրան նույն գրությունն է, ինչ այն հրուշականոցի տոպրակների վրա, որ միշտ տատիկն էր գնում:

— Մեջը դարչինով բուլկի է,– ասում է նա ու ավելացնում,– բայց պիտի լացելուդ վերջ տաս, թե չէ արցունքներով համով չի լինի:

Էլսան այն մի լավ օծում է արցունքներով, բայց, միևնույն է, համով է:

Երբ հասնում են շենքին, Էլսան ավտոտնակից վազելով տուն է բարձրանում՝ նույնիսկ առանց Ալֆին շնորհակալություն կամ վորսին ցտեսություն ասելու և առանց մտածելու, որ Ալֆը, փաստորեն, տեսավ վորսին ու միգուցե զանգի ոստիկանություն: Նա անցնում է Յեորգի գցած սեղանի մոտով՝ առանց որևէ խոսք ասելու նրան: Երբ մայրիկը տուն է գալիս, նա ձևացնում է, որ քնած է:

Երբ այդ գիշեր հարբեցողը սկսում է գոռգոռալ աստիճանավանդակում, Էլսան առաջին անգամ անում է այն, ինչ շենքի մյուս բնակիչները:

Ձևացնում է, թե չի լսում:

թվայնացրել է 1915.info կայքը

18

ԾՈՒԽ

Ամեն հեքիաթ իր հրեշն ունի: Եվ դա տատիկի շնորհքն է:

Այդ գիշեր Էլսան երազում սարսափելի մղձավանջներ է տեսնում: Նա միշտ սարսափում էր, որ հնարավոր է մի օր այլևս չկարողանա այցելել Երկիր-Կիս-Արթուն, ու մտածում էր, որ ամենավատ բանը, որ իր հետ կարող է պատահել, աներազ քունն է: Բայց այդ գիշեր նա իմանում է, որ կա շատ ավելի վատ բան: Այն, որ չի կարողանալու այցելել Երկիր-Կիս-Արթուն, բայց տեսնելու է այն երազում այնքան հստակ, ասես հենց այնտեղ լինի, սակայն վերևից: Ասես հսկայական ապակե գմբեթի վրա փորի վրա պառկած է ու ներս է նայում՝ առանց հոտեր զգալու կամ ծիծաղ լսելու կամ քամու խուտուտը դեմքին զգալու, երբ ամպէակը վեր է սուրում: Դա բոլոր հավերժությունների ամենասարսափելի երազն է:

Որովհետև Միամասն այրվում է: Նա տեսնում է արքայազներին, արքայադուստրերին, վորսերին, երազ փախցնողներին, ծովահրեշտակին ու Երկիր-Կիս-Արթունի բոլոր թագավորությունների բնակիչներին գլխապատառ փախչելիս: Նրանց հետևից սլանում են ստվերները՝ իրենց հետևից միայն մոխրագույն, երևակայությունից զուրկ մահ թողնելով: Էլսան հայացքով Գայլսիրտին է փնտրում այդ դժոխային հնոցում, բայց նա չի երևում: Միայն դաժանորեն սպանված ամպէակներ են մոխիրների մեջ: Ու նրանց շուրջը՝ այրվող Միամասը: Տատիկի բոլոր հեքիաթների վերջը եկել է:

Ստվերների մեջ մի ուրիշ կերպարանք է երևում: Նիհար մարդ՝ ծխախոտի ծխով պարուրված: Դա միակ հոտն է, որ հասնում է Էլսային գմբեթի միջով՝ տատիկի ծխախոտի հոտը: Կերպարանքը վերև է նայում, ու ծխի

թվայնացրել է 1915.mro կայքը

միջից երկու պայծառ կապույտ աչքեր են առկայծում: Բարակ ծխի քուլան դուրս է սողում բարակ շրթունքների արանքից: Նա ճանկի նման ծռմռված ցուցամատն ուղղում է դեպի Էլսան ու ինչ-որ բան է բղավում, և հաջորդ վայրկյանին հարյուրավոր ստվերներ վեր են խոյանում՝ սուրալով դեպի գմբեթը:

Էլսան արթնանում ու տեսնում է, որ ընկել է մահճակալից՝ դեմքը խփելով հատակին: Եվ այդպես պառկած, ծանր շնչելով, ձեռքերով կոկորդը բռնած, թվում է, թե մնում է միլիոնավոր հավերժություններ, մինչև որ հասկանում է, որ իրական աշխարհում է ու ոչ մի ստվեր չի կծել իրեն: Նա մղձավանջներ չէր տեսել այն օրվանից, երբ առաջին անգամ տատիկն ու ամբէակն իրեն տարել էին Երկիր-Կիս-Արթուն: Եվ արդեն մոռացել էր այդ զգացողությունները: Նա վեր է կենում քրտինքի մեջ կորած ու փորձում մտքերը կարգի բերել:

Լսում է, որ մեկը զայրացած խոսում է նախասենյակում: Զայրույթի զգացողություն ունեցող է, ինչպես իրական աշխարհում է լինում: Միամասի գազազի պես չէ, բնականաբար: Միամասում գազազը չորքոտանի գազան է՝ շատ նման գայլի, բայց ավելի կատաղի:

Տատիկը հաճախ էր պատմում նրանց մասին: Եվ այդ գազազներն ամենաշատը կատաղած էին հենց գայլերի վրա, որովհետև գայլերը հեքիաթներում բոլոր լավ աշխատատեղերն իրենցով էին արել: Բազմաթիվ հավերժություններ առաջ մի գազազի վերջին պահին դուրս են շպրտում մի հեքիաթից՝ համատեղ աշխատելու անկարողությամբ պայմանավորված, ինչն իրական աշխարհի խելոքներին կարող է որոշ չափով հիշեցնել բավականին հայտնի «Կարմիր գլխարկը» հեքիաթը: Ու դրանից հետո իբր գայլերն իրենցով են անում նաև վամպիրների ֆիլմերի բոլոր փոխակերպուկների դերերը, և հիմա գայլերը հեքիաթային ամենասիրված հերոսներն են, մինչդեռ գազազները հիմնականում, ըստ տատիկի պատմածների, ծառայում են Երկիր-Կիս-Արթունի տարբեր հիմնարկներում, դեղին ծխախոտ են ծխում ու իրենց մորթու վրա որոշ շերտեր յասամանագույն են ներկում՝ ծայրահեղ դժգոհ լինելով իրենց կյանքից:

Դե, փաստացի հիմա խոսքը սրանց մասին չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուրեմն, Էլսան նախասենյակից խոսակցություն է լսում: Մեկի բարկացած ձայնը: Սովորականի պես: Էլսայից պահանջվում է իր ամբողջ կենտրոնանալու կարողությունը, որպեսզի վրայից թափ տա երազի մշուշն ու հասկանա, թե ինչ է կատարվում:

Բրիտ-Մարին է խոսում, հետո՝ մայրիկը, հետո՝ նորից Բրիտ-Մարին:

— Էդպե՛ս ուրեմն: Բայց դու, միևնույն է, պիտի հասկանաս, Ո՛ւլրիխա, որ մի քիչ տարօրինակ է, որ նրանք քեզ են զանգում: Ինչո՞ւ Քենթին չեն զանգում: Քենթն է, չէ՞, փաստացի այս բնակվարչության նախագահը, ես էլ տեղեկատվության պատասխանատուն եմ, իսկ նման դեպքերում սովորաբար ռևիզորը զանգում է նախագահին, ոչ թե՝ ում պատահի:

Էլսան հասկանում է, որ «ում պատահին» վիրավորանք է, չնայած Բրիտ-Մարին, անշուշտ, այդ բառն արտաբերելիս սիրալիր ժպտում է, և Էլսան վստահ է, որ նա նախասենյակում կանգնած է՝ ձեռքերն իրար ագուցած, ու անչափ սիրալիր գլխով է անում մայրիկին, ինչպես միայն Բրիտ-Մարին կարող է անել:

Մայրիկն այնքան խոր հոգոց է հանում պատասխանելուց առաջ, որ թվում է՝ Էլսայի սավանը կծածանվի օդի հոսքից:

— Ես չգիտեմ՝ ինչու են ի՛նձ զանգել, Բրի՛տ-Մարի: Բայց գործավարն ասում է, որ այսօր գալու է, որպեսզի ամեն ինչ բացատրի:

Էլսան բացում է ննջարանի դուռն ու գիշերանոցով կանգնած մնում դռան արանքում: Նախասենյակում ոչ միայն Բրիտ-Մարին է, այլև Լենարտը, Մոդը և Ալֆը: Սամանթան քնած է աստիճանների վրա: Մայրիկի հագին առավոտյան խալաթն է, որը հազիվ էր կապվում փորի վրա: Մոդը նկատում է Էլսային ու մեղմ ժպտում է՝ թխվածքների տուփը գրկին: Լենարտը, հոգեպահուստ սուրճի թերմոսը ձեռքին, սպասելու ընթացքում կափարիչից սուրճ է խմում:

Ալֆը գոնե այս մի անգամ սարսափելի վատ տրամադրությամբ չի եկել, ինչը նշանակում է, որ նա պարզապես սովորականի պես ահավոր նյարդային է: Նա թեթևակի գլխով է անում Էլսային. ասես նրան լուրջ գաղտնիք են ի պահ տվել: Այդ պահին հանկարծ Էլսան հիշում է, որ երեկ նրան վորսի հետ ավտոտնակում էր թողել ու տուն վազել: Նրա մոտ ներքին խուճապ է սկսվում, բայց Ալֆն ափի շարժումով հասկացնում է, որ չանհանգստանա: Այնպես որ, Էլսան աշխատում է իրեն զսպել: Ապա նայում է Բրիտ-Մարիին ու փորձում է հասկանալ՝ Բրիտ-Մարիի այսօր-

թվայնացրել է 1915.info կայքը

վա վրդովմունքը վորսին գտնելու հետ կապ ունի՞, թե՞ նրա սովորական առօրյա քննարկումներից է: Փառք Աստծո, կարծես թե առօրյա հարցեր են: Եվ հենց այսօր Բրիտ-Մարիի վրդովմունքի նշանառության տակ մայրիկն է:

— Այսինքն՝ տան սեփականատերերը հանկարծ որոշեցին, որ կարող են բնակարանները մե՞զ վաճառել: Այսքա՜ն տարի Քենթի գրած բոլոր նամակներից հետո: Ու հիմա հանկարծ որոշո՞ւմ են ընդունում: Այդպես հեշտ ու հանգի՞ստ: Ու կապվում են քեզ հետ Քենթի փոխարեն: Շատ տարօրինակ է, Ո՛ւլրիխա. չե՞ս կարծում, որ տարօրինակ է, Ո՛ւլրիխա,– չի հանգստանում Բրիտ-Մարին՝ վեց անգամ փորի վրա փոփոխելով ձեռքերի դիրքը:

Մայրիկը նորից հոգոց է հանում ու դժվարությամբ մի փոքր ձգում է խալաթի գոտին:

— Միգուցե չե՞ն կարողացել կապ հաստատել Քենթի հետ: Իսկ ես, ամեն դեպքում, բավականին երկար եմ ապրել այստեղ, ու գուցե նրանք մտածե…

— Իրականում, այս շենքում ամենաերկարը մե՛նք ենք ապրել, Ո՛ւլրիխա,– նրա խոսքը կտրում է Բրիտ-Մարին:

— Ամենաերկարն Ալֆն է ապրել այստեղ,– ուղղում է նրան մայրիկը:

Էլսան կանգնած տեղում չի դիմանում:

— Ամենաերկարը տատի՛կն է ապրել,– քթի տակ ասում է նա, սակայն ոչ ոք կարծես չի լսում:

Հատկապես Բրիտ-Մարին:

— Մե՛նք ենք ապրել այստեղ ամենից երկար, ու բացի այդ, նման հարցերով սովորաբար զանգում են Քենթին, Ո՛ւլրիխա,– իր ասածն է պնդում նա:

— Դե, գուցե չի ստացվել,– հուսահատ կրկնում է մայրիկը:

— Նա գործուղման է: Ու նրա օդանավը դեռ չի իջել,– բացատրում է Բրիտ-Մարին, ու նրա ձայնը քիչ-քիչ պակաս սիրալիր է հնչում:

— Դե, երևի հենց դրա համար էլ չեն կարողացել նրան զանգել: Դրա համար էլ ես քեզ իսկույն զանգեցի, հենց որ ռևիզորի հետ խոսեցի վերջաց…,– սկսում է մայրիկը:

— Բայց միշտ կապվում են բնակվարչության նախագահի՛ հետ,– ապշած ընդհատում է Բրիտ-Մարին:

— Բայց մենք դեռևս բնակվարչություն չենք ստեղծել,– հոգոց է հանում մայրիկը:

— Բայց ստեղծելո՛ւ ենք,– չի հանգստանում Բրիտ-Մարին:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրիկն ինքնատիրապետումը չկորցնելով՝ գլխով է անում:

— Ու հենց սեփականատերերի ռևիզորն էլ ուզում է այսօր գալ ու խոսել դրա մասին: Ասածս սա՛ է: Հենց որ խոսափողը դրեցի, միանգամից քեզ զանգեցի: Դու էլ ամբողջ շենքին քնից հանեցիր ու հավաքեցիր այստեղ: Լա՛վ էլի, է՞լ ինչ ես ուզում՝ անեմ, Բրի՛տ-Մարի:

— Ռևիզորն ուզեց գա՞լ այսօր: Ռևիզորն ի՞նքը ուզեց գալ,– մասամբ հարցնելով, մասամբ հաստատելով՝ ասում է Բրիտ-Մարին՝ անցնելով ֆալցետի:

Մայրիկը գլխով է անում ու ձգում խալաթի գոտին: Բրիտ-Մարին ցնցվում է ամբողջ մարմնով, ասես նրա ծոցը մի դույլ կատաղած տզեր լցրած լինեն:

— Շաբաթ օրով վեր կենալ գալն ի՞նչ նորություն է: Հը՞: Այս ի՞նչ ձևեր են: Այսպիսի հանդիպումները շաբաթ օրով չեն անում, չէ՞, շաբաթ օրով ի՞նչ հանդիպում, Ո՛ւլրիխա: Չե՞ս կարծում: Կարծում ես՝ քաղաքակիրթ մարդու անելի՞ք է: Այդպես չես կարծում, չէ՞, Ո՛ւլրիխա:

Մայրիկը տրորում է քունքերը: Բրիտ-Մարին խորը շունչ է քաշում ու շրջվում Լենարտի, Մոդի ու Ալֆի կողմը՝ աջակցություն փնտրելով: Մոդը փորձում է քաջալերելով ժպտալ: Լենարտը Բրիտ-Մարիին իր հոգեպահուստ սուրճն է հյուրասիրում: Ալֆի տրամադրությունը նորից աստիճանաբար մոտենում է իր սովորական վատ վիճակին:

Բրիտ-Մարին նորից շրջվում է ու նկատում Էլսային:

— Հա՛, վա՛յ, երեխային էլ ենք արթնացրել, հա՛: Փաստորեն երեխային արթնացրինք:

Նա այնպես է «մենք» ասում, ասես նկատի ունի «դու»: Մայրիկը շրջվում է Էլսայի կողմն ու սիրառատ հայացքով հեռացնում նրա ճակատին ընկած մազափունջը:

— Ընկերությունը, որին պատկանում է մեր շենքը, իր ռևիզորին հանձնարարել է զանգել այսօր և ասել, որ նրանք ցանկանում են մեր վարձակալած բնակարանները վաճառել՝ մեզ սեփականատեր դարձնելով, ինչպես վաղուց ուզում էին Քենթն ու Բրիտ-Մարին: Նա այսօր գալու է այդ մասին խոսելու,– հոգնած բացատրում է մայրիկը:

— Դե, եթե մինչև այդ Քենթը տեղ հասնի: Մենք չենք կարող հանդիպումն առանց Քենթի անցկացնել,– վրա է բերում Բրիտ-Մարին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դե չէ՛, պարզ է, եթե Քենթը հասցնի,– ուժասպառ հաստատում է մայրիկը:

Բրիտ-Մարին այնքան արագ է ձեռքերն իրար սեղմում, ասես գաղտնի ձեռքսեղմումներ է իրականացնում միայն իրենից բաղկացած գաղտնի միության մեջ:

— Կարծում եմ՝ լավ կլինի, որ Քենթին սպասենք: Փաստացի պետք է սպասենք՝ իմ կարծիքով: Լավ կլինի՝ Քենթը ներկա լինի նման դեպքերում, որ ամեն ինչ ճիշտ լինի: Իրականում, որպեսզի ամեն ինչ ճիշտ լինի, Ո՛ւլրիխա:

Մայրիկը գլխով է անում՝ քունքերը տրորելով:

— Հա՛, հա՛, իհա՛րկե: Դե, ուրեմն զանգի՛ր Քենթին, տե՛ր Աստված:

— Նրա օդանավը դեռ իջած չի լինի: Գործուղման է, չէ՞, Ո՛ւլրիխա,– ֆշշացնում է Բրիտ-Մարին:

Ալֆն ինչ-որ բառ է մռթմռթում նրա հետևում: Բրիտ-Մարին շրջվում է: Ալֆը ձեռքերը խցկում է բաճկոնի գրպաններն ու նորից քթի տակ ինչ-որ բան ասում:

— Կներես, ի՞նչ,– ասում են մայրիկն ու Բրիտ-Մարին միաժամանակ, սակայն բացարձակապես իրար հակադիր հնչերանգներով:

— Ասում եմ, գրո՛ղը տանի, ուղղակի 20 րոպե առաջ հաղորդագրություն էի ուղարկել Քենթին, երբ դուք սկսեցիք ձեր էս լեզվակռիվը, ինքն էլ գրեց, որ արդեն ճամփին է,– ասում է Ալֆն ու մռայլ ավելացնում,– պարզ է, որ էդ տխմարը ոչ մի դեպքում չի թողնի՝ էս գրողի տարած հարցերն առանց իրեն լուծվեն:

Բրիտ-Մարին ձևացնում է, թե նրա վերջին ասածը չի լսել: Նա իր շորի վրայից անտեսանելի փշուրներ է թափ տալիս, ձեռքերն իրար ագուցում ու վերևից արհամարհական նայում է Ալֆին, քանի որ վստահ է, որ Քենթը չի կարող ճանապարհին լինել, երբ փաստացի աշխատանքային գործուղման է, ու նրա օդանավը դեռ վայրէջք չի կատարել: Սակայն հենց այդ պահին ներքևից լսվում են մուտքի դռան բացվել-փակվելու շրխկոցն ու Քենթի ոտնաձայները: Բոլորի համար պարզ է, որ Քենթի ոտնաձայներն են, քանի որ նա հեռախոսով բարձրաձայն գերմաներեն է խոսում, ճիշտ այնպես, ինչպես նացիստներն են խոսում ամերիկյան ֆիլմերում:

— Yez Klaus! Yez! We will dizcuzz thiz in Frankfurt:

թվայնացրել է 1915.info կայքը

Բրիտ-Մարին իսկույն աստիճաններով ներքև է շտապում, որ շուտ հանդիպի նրան ու պատմի այն ամբողջ լկտիության մասին, որ նրա բացակայության ընթացքում կատարվել է:

Յեորգը երևում է խոհանոցում՝ մայրիկի հետևում՝ իր սպորտային տրիկոյով, կարճ տաբատով, վառ կանաչ շապիկով ու էլ ավելի պայծառ կանաչ գոգնոցով: Նա ուրախ նայում է բոլորին՝ գոլորշիով թավան ձեռքին:

— Նախաճաշել ցանկացող կա՞: Ձվածեղ եմ պատրաստել:

Նա, այն է, ուզում էր ավելացնել, թե նոր գնած սպիտակուցային սալիկներ էլ ունի, բայց կարծես զղջում է, քանի որ վախենում է, որ այդ դեպքում շուտ սպառվեն:

— Ես էլ մի քիչ թխվածք ունեմ,– աշխուժանալով ասում է Մոդն ու Էլսային է պարզում ամբողջ տուփը՝ քնքշորեն թփթփացնելով նրա այտին:

— Սա վերցրո՛ւ, ես էլի կբերեմ,– շշնջում է նա ու զգուշորեն բնակարան է մտնում:

— Իսկ սուրճ կա՞,– հարցնում է Լենարտն ու շտապ մի մեծ կում անելով իր բերած հոգեպահուստ սուրճից՝ հետևում է Մոդին:

Քենթի տիրական դոփյունը լսվում է աստիճաններին, և շուտով նա հայտնվում է դռան արանքում: Հագին ջինս է ու թանկանոց պիջակ: Էլսան գիտի, քանի որ Քենթը սովորաբար պատմում է նրան, թե ինչ արժի իր հագուստը, կարծես Եվրոտեսիլ երգի մրցույթում շորերին գնահատական տալիս լինի: Բրիտ-Մարին մանրաքայլ գնում է նրա հետևից ու անդադար մրմնջում է.

— Լսո՞ւմ ես, Քե՛նթ, ի՛նչ լկտիություն: Քեզ զանգելու փոխարեն՝ ում ասես զանգեն: Ուղղակի լկտիություն չէ, ի՞նչ է: Այսինքն՝ պատկերացնո՞ւմ ես, քեզ չեն զանգում, այսինքն, կարծում ես, կարելի՞ է սա այսպես թողնել:

Քենթը ձեռքով Էլսայի մայրիկին է ցույց տալիս ու պահանջում է.

— Ես ուզում եմ ճշգրիտ իմանալ, թե ռևիզորն ինչ ասաց, երբ զանգեց: Ես ուզում եմ ամենայն ճշգրտությամբ իմանալ մանրամասները, թե ռևիզորն ինչ ասաց:

Բրիտ-Մարին խանդավառությամբ գլխով է անում անմիջապես նրա հետևում:

— Քենթը պիտի ճշգրիտ իմանա, Ո՛ւլրիխա, թե ռևիզորն ինչ է ասել, երբ զանգել է: Ճշգրիտ ինչ է ասել, Քենթը պիտի իմանա: Լավ կլինի՝ Քենթն անմիջապես իմանա ռևիզորի ասածը ամենայն մանրամասնությամբ:

Բայց նախքան մայրիկը կհասցնի բերանը բացել, Բրիտ-Մարին Քենթի պիջակի թևքի վրայից անտեսանելի փշուրներ է թափ տալիս ու կտրուկ փոփոխված հնչերանգով շշնջում է.

— Գուցե նախ և առաջ իջնես, վերնաշապի՞կդ փոխես, Քե՛նթ:

— Լա՛վ էլի, Բրի՛տ-Մարի, մենք այստեղ լուրջ գործերի մեջ ենք,– մերժում է Քենթը ճիշտ նույն կերպ, ինչպես Էլսան է մերժում մայրիկին, երբ նա առաջարկում է ինչ-որ կանաչ բան հագնել:

Բրիտ-Մարին շատ դժբախտ է թվում:

— Ես կարող եմ լվացքը գցել այն, խնդրո՛ւմ եմ, Քե՛նթ: Պահարանումդ նոր արդուկած վերնաշապիկներ ունես: Դու հո չե՞ս կարող ռևիզորին ճմռթված վերնաշապիկով դիմավորել, Քե՛նթ: Ի՞նչ կմտածի մեր մասին: Որ չե՞նք կարող վերնաշապիկ արդուկել,– չի դադարում Բրիտ-Մարին:

Մայրիկը բերանը բացում է, որ նորից փորձի ասել, բայց Քենթի հայացքն ընկնում է Յեորգի վրա:

— Օ՛, ձվածեղ կա՞,– ոգևորված բացականչում է Քենթը:

Յեորգը գոհունակությամբ գլխով է անում: Քենթն իսկույն անցնում է մայրիկի կողքով ու մտնում նախասենյակ: Բրիտ-Մարին ունքերը կիտած շտապում է հետևից: Նա մայրիկի կողքով անցնելիս նեղացած տեսքով մռթմռթում է՝ աջուձախ նայելով.

— Դե, հա էլի, պարզ է, մարդ տուն հավաքելու ժամանակ չունի, երբ քեզ նման կարիերայի հետևից է ընկած, Ո՛ւլրիխա, իհա՛րկե, որտեղի՞ց ունենա:

Չնայած այն հանգամանքին, որ բնակարանի յուրաքանչյուր միլիմետրի վրա կատարյալ կարգուկանոն է տիրում:

Մայրիկը մի փոքր ավելի է ձգում խալաթի գոտին ու գիտակցաբար խորը շունչ քաշելով՝ հոգոց է հանում:

— Դե, նե՛րս անցեք վերջապես:

Էլսան նետվում է իր սենյակն ու փոխում գիշերանոցը՝ հնարավորին չափ արագ ջինսը քաշելով վրան, որ կարողանա վազել ներքև ու ստուգել, թե նկուղում ինչպես է վորսը, քանի վերևում բոլորը զբաղված են: Քենթի ձայնը հարցաքննում է մայրիկին ռևիզորի մասին, ու Բրիտ-Մարին «հըմ» է ասում ամեն երկրորդ բառից հետո:

թվայնացրել է 1915.info կայքը

Նախասենյակում մնացել է միայն Ալֆը: Բութ մատներով ջինսի գրպաններից կառչած՝ Էլսան ոտքով բզբզում է շեմքը՝ խուսափելով Ալֆի աչքերին նայելուց:

— Շնորհակալ եմ, որ դու ոչ ոքի բան չասացիր…,– սկսում է նա, սակայն խոսքն ընդհատվում է, մինչև կհասցներ ասել վորսի մասին:

Ալֆը մռայլ տարուբերում է գլուխը:

— Երեկ չպիտի էդպես թողնեիր փախչեիր: Թե որ կենդանի ես պահում, գրո՛ղը տանի, ուրեմն պիտի պատասխանատվություն վերցնես վրադ, նույնիսկ եթե երեխա ես:

— Ես երեխա չեմ,– կտրուկ ասում է Էլսան:

— Ուրեմն քեզ երեխայի պես մի՛ պահիր,– փնթփնթում է Ալֆը:

— Touché,– շշնջում է Էլսան՝ առանց հայացքը բարձրացնելու:

— Կենդանին նկուղի պահեստում է: Մի քանի նրբատախտակ եմ դրել դիմացը, որ մարդ-մուրդ չտեսնի: Ասա, որ սուս մնա: Ոնց որ հասկանում է: Բայց պիտի ավելի լավ թաքստոց գտնես: Թե չէ վաղ թե ուշ ժողովուրդը հայտնաբերելու է,– ասում է Ալֆը:

Էլսան հասկանում է, որ ժողովուրդ ասելով՝ Բրիտ-Մարիին նկատի ունի: Եվ իրավացի է: Էլսայի խիղճը տանջում է, որ երեկ թողել էր վորսին: Բա որ Ալֆը ոստիկանություն զանգեր, ու նրանք էլ կրակեի՞ն խեղճին: Էլսան լքել էր նրան, ինչպես տատիկն էր լքել մայրիկին, ու այդ միտքը մղձավանջից ավելի էր սարսափեցնում նրան:

— Ի՞նչ են էնտեղ խոսում,– հարցնում է Ալֆին՝ գլխով ցույց տալով խոհանոցի կողմը, որ ազատվի տհաճ մտքերից:

Ալֆը փնչացնում է:

— Էդ գրողի տարած բնակարանների առքուվաճառքի մասին:

— Այսի՞նքն,– հարցնում է Էլսան:

Ալֆը տնքում է:

— Գրո՛ղը տանի, ես հո չե՞մ կարող էստեղ կանգնել ու քեզ ամեն ինչ բացատրել: Վարձակալության ու սեփականության տարբերությունները գրողի ծո՛ցը…

— Այսինքն՝ սեփականության մասին գիտեմ, հո ապո՞ւշ չեմ,– ասում է Էլսան:

— Բա որ գիտես, ի՞նչ ես հարցեր տալիս,– հակադարձում է Ալֆը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես հարցրի՝ խոսում են, որ ի՞նչ,– բացատրում է Էլսան այն մարդու պես, որն իր բացատրածից ինքն էլ մեծ հաշվով գլուխ չի հանում:

Ալֆը ձեռքերը խոթում է գրպանները, ու կաշվե բաճկոնը ճռռում է: Նա չի հանել այն, չնայած մայրիկն ասում է, որ մարդ չպիտի ներսում դրսի շորերով մնա: Էլսան մտածում է, որ Ալֆի մայրիկը նման բաներին ուշադրություն չի դարձրել:

— Էս Քենթը, ինչ հետ է եկել էստեղ, գլուխներս արդուկում է էս գրողի տարած սեփականության հարցերով ու չի հանգստանալու, մինչև որ հետույքը չսրբի հենց իր կեղտոտ փողերով,– բացատրում է Ալֆը այն մարդու նման, որ առանձնապես շատ չի շփվել յոթ տարեկան երեխաների հետ:

Էլսան մտածում է հարցնել, թե ինչ նկատի ունի նա «հետ է եկել» ասելով, բայց որոշում է եղած հարցերը հերթով պարզել:

— Իսկ էդ դեպքում մյուսներն էլ փող չե՞ն աշխատի: Դու, մայրիկս, Յեորգն ու բոլորը,– հարցնում է նա:

— Հա՛, միայն եթե բնակարանները ծախենք ու գնանք,– մռթմռթում է Ալֆը:

Էլսան մտքերի մեջ է ընկնում: Ալֆը ճռճռացնում է կաշվե բաճկոնը:

— Քենթի ուզածն էլ հենց էդ է, էդ գրողի տարածի: Նա միշտ էր ուզում էստեղից փախչել:

Էլսան նայում է անորոշ ուղղությամբ ու անհետանում իր իսկ մտքերի մեջ: Դրա համար էլ ինքը մղձավանջներ է տեսնում, փաստորեն, որովհետև Երկիր-Կիս-Արթունի արարածները իրենց շենքում են հայտնվել, այնպես որ, իրենց շենքն էլ դարձել է Երկիր-Կիս-Արթունի մի մասը, ու եթե բոլորն ուզում են իրենց բնակարաններից հրաժարվել, ուրեմն...

— Ուրեմն, մենք չենք փախչում Միամասից, ուղղակի կամավոր հանձնվում ենք,– ինքն իրեն ասում է Էլսան:

— Հը՞,– հարցնում է Ալֆը:

— Հեչ,– քրթմնջում է Էլսան:

Ներքևում դռան բացվելու ու փակվելու շրխկոցն արձագանքում է ամբողջ աստիճանավանդակում: Հետո զուսպ քայլերի ձայն է լսվում: Երկուսն էլ հասկանում են, որ ռևիզորն է:

Բրիտ-Մարիի ձայնը խոհանոցում խլացնում է Քենթի ձայնը: Նա Քենթից համաձայնություն չի ստանում ճմռթված վերնաշապիկը փոխելու վերաբերյալ, այնպես որ փորձում է ուրիշ հարցերով նյարդայնանալ ու

թվայնացրել է 1915.info կայքը

տեղը հանել: Նման հարցերի պակասություն բոլորովին չկա: Նրա համար, իհարկե, դժվար էր որոշել, թե հատկապես որ հարցն է իրեն ավելի շատ հուզում, սակայն նա կարող է հերթով սպառնալ, զանգել ոստիկանություն, եթե Էլսայի մայրիկն իսկույն չհեռացնի տատիկի մեքենան Բրիտ-Մարիի կայանատեղիից: Նա պետք է պահանջի ոստիկանությունից, որ բացեն աստիճանահարթակում դեռևս կապված մանկասայլակի կողպեքը, շենքի սեփականատերերին պարտադրեն տեսախցիկներ տեղադրել աստիճանահարթակներում, որպեսզի վերջ տրվի մարդկանց անտեղի ներսուդուրս անելուն, ու առանց նախապես տեղեկատվության պատասխանատուին տեղեկացնելու՝ գրություններ փակցնելուն:

— Լա՛վ էլի, Բրի՛տ-Մարի, ախր չի՛ լինի ամեն տեղ տեսախցիկներ դնել,– հոգոց է հանում մայրիկը:

— Ի՞նչ: Չէ՛, պարզ է, որ այդպես կասես, Ո՛ւլրիխա, բայց եթե մարդ թաքցնելու ոչինչ չունի, ոչ էլ հսկողությունից կվախենա: Չէ՞, Քե՛նթ, ճիշտ չե՞մ ասում:

Քենթն ինչ-որ բան է քրթմնջում, որն Էլսան չի լսում: Մայրիկն այնպես է հոգոց հանում, որ բոլորը լսում են:

— Բայց գուցե շենքում մարդ կա, որի անձնական տվյալները պաշտպանված են: Մարդու անձնական կյանքի իրավունքը պաշտպանող օրենք կա. չի՛ լինի՝ ով որտեղ ուզի, տեսա…

— Այդ ո՞վ է մեր շենքում, որ չի ուզում՝ իր ինքնությունը բացահայտվի: Բայց իրոք, ո՞վ կլինի,– ցնցված բացականչում է Բրիտ-Մարին:

Մայրիկը տրորում է քունքերը:

— Ես չասացի, որ այդպիսի մարդ կա, Բրի՛տ-Մարի, ես ասացի, որ ՀՆԱՐԱՎՈՐ է լի…

Բրիտ-Մարին շրջվում է Քենթի կողմը՝ առանց նրան լսելու:

— Ո՞վ է շենքում, Քե՛նթ, որ պաշտպանված ինքնություն ունի: Հասկանո՞ւմ ես: Պարզ է, որ առաջին հարկի անձնավորությունն է, որ կռվաշան կողքի բնակարանից է, հաստատ նա կլինի, չէ՞, Քե՛նթ:

Մարդու գլխում չի տեղավորվում ուղղակի. փաստորեն այդ թմրամոլները պիտի իրենց ինքնությունը թաքցնեն, որ ազատ իրենց անելիքն անե՞ն:

Կարծես այդ դատողության տրամաբանությունը տեղ չի հասնում: Բայց Բրիտ-Մարիին հանկարծ ընդհատում է շատ սիրալիր դեմքով մի շատ

թվայնացրել է 1915.info կայքը

կարճահասակ մարդ, որ Ալֆի հետևում՝ դռան շեմքին կանգնած, թակում է դռան շրջանակը:

— Ես ռևիզորն եմ,– բարեհամբույր տեսքով ներկայանում է նա:

Եվ Էլսային նկատելով՝ աչքով է անում նրան., կարծես նրանք միասին ինչ-որ գաղտնիք ունեն: Կամ Էլսային, համենայնդեպս, այդպես է թվում:

Քենթը տիրաբար դուրս է գալիս խոհանոցից՝ ասես օղակ պտտելու պատրաստ ձեռքերը կոնքերին հենած, ու վերից վար տնտղում է ռևիզորին:

— Դե՞: Ի՞նչ է լինելու բնակարանների սեփականաշնորհման հարցը: Որքա՞ն է քառակուսի մետրի արժեքը,– իսկույն ուզում է իմանալ նա:

Բրիտ-Մարին գնդակի նման դուրս է թռչում խոհանոցից ու մատը մեղադրական տնկում է:

— Ո՞նց ներս մտաք: Ո՞վ ներս թողեց Ձեզ: Քե՛նթ, մուտքի դուռը չէի՞ր փակել: Մուտքի դուռը պիտի փակ լինի: Ես հենց դա էլ նկատի ունեմ, թե չէ ով ասես, երբ ասես կարող է մտնել ու գրություններ փակցնել: Թմրամոլներն էլ գալիս լցվում են, ոնց որ սա իրենց համար ոնց որ ինչ-որ թմրատուն լինի:

— Դուռը բաց էր,– բարեհամբույր ասում է ռևիզորը:

— Լա՛վ, լա՛վ: Ի՞նչ ենք անում սեփականացնելու հարցը: Ի՞նչ գնով եք առաջարկում,– անհամբեր կրկնում է Քենթը:

Ռևիզորը սիրալիր մատնացույց է անում իր պորտֆելն ու ձեռքի մտերմիկ շարժումով խոհանոցն է ցույց տալիս:

— Գուցե նստե՞նք:

— Դե, իհա՛րկե,– ասում է Էլսայի մայրիկն ու գնում Բրիտ-Մարիի հետևից՝ խալաթն ավելի ձիգ փաթաթելով շուրջը:

— Սուրճ կա,– ոգևորված բացականչում է Լենարտը:

— Թխվածք էլ,– ավելացնում է Մոդը:

— Ու ձվածեղ,– խոհանոցից բացականչում է Յեորգը:

— Դե, թափթփվածության համար կներեք, իհարկե, այս ընտանիքում շատ են զբաղված իրենց աշխատանքային առաջընթացով,– ռևիզորին սիրալիր ասում է Բրիտ-Մարին:

Մայրիկն ամեն կերպ փորձում է զսպել իրեն ու ձևացնել, թե չի լսել: Սակայն առանձնապես չի հաջողվում:

Երբ բոլորը շարժվում են խոհանոց, Բրիտ-Մարին մի պահ կանգ է առնում, շրջվում, ձեռքերն իրար ագուցում ու սիրալիր ժպիտով նայում Էլսային:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հա՛, դու պիտի, իհարկե, հասկանաս, փոքրի՛կս, որ ես, թմրամոլներ ասելով, քո ու տատիկիդ ընկերներին նկատի չունեմ: Ես, պարզ է, որտեղի՞ց իմանամ, թե երեկ քեզ փնտրողը թմրանյութ օգտագործե՞լ էր, թե՞ չէ: Ես բոլորովին նրան նկատի չունեի:

Էլսան չհասկանալով ապշած նրան է նայում:

— Այսի՞նքն: Ի՞նչ ընկերներ: Ո՞վ էր ինձ երեկ հարցնում:

Քիչ է մնում՝ ասեր Գայլսիրտը, բայց զսպում է իրեն, որովհետև չգիտի, թե որտեղից պիտի Բրիտ-Մարին իմացած լիներ, որ Գայլսիրտն իր ընկերն է: Եվ Բրիտ-Մարին շատ սիրալիր գլխով է անում ու կարծես ամենևին էլ Գայլսիրտին նկատի չունի, երբ ասում է.

— Դե, քո ընկերը, որ երեկ քեզ էր փնտրում: Ես նրան դուրս քշեցի աստիճանահարթակից, որովհետև մեր աստիճանահարթակում ծխելն արգելվում է: Կարող ես նրան փոխանցել, որ մեր համատիրությունում չի՛ թույլատրվում: Ես հասկանում եմ, որ դու ու տատիկդ շատ յուրահատուկ ընկերներ ունեք, բայց կանոնները վերաբերում են բոլորին, հաշվի՛ առեք:

Նա ուղղում է շրջազգեստի անտեսանելի ծալքը, ձեռքերն իրար է ագուցում ու ավելացնում.

— Դե հասկանում ես՝ ում նկատի ունեմ: Շատ նիհար էր ու կանգնած ծխում էր աստիճանահարթակում: Ասաց, որ մի երեխայի է փնտրում, ու քեզ նկարագրեց: Շատ տհաճ տեսք ուներ, ես էլ նրան դուրս արեցի ու ասացի, որ մեր շենքում չեն ծխում:

Էլսայի սիրտը կծկվում է: Կարծես սպառվում է մարմնի ամբողջ թթվածինը:

Բրիտ-Մարին, ինքն իրեն գլխով անելով, գնում է խոհանոց՝ քթի տակ մռթմռթալով.

— Ահավոր տհաճ մարդ էր, տեսնելուն պես հասկացա: Ահավոր տհաճ են այդ թմրամոլները:

Էլսան բռնվում է դռան շրջանակից, որ չընկնի: Ոչ ոք չէր տեսնում նրան, ոչ էլ Ալֆը: Բայց նա հասկանում է, թե շուտով ինչ պիտի կատարվի այս արկածի ընթացքում:

Որովհետև ամեն հեքիաթ իր հրեշն ունի:

Եվ դա տատիկի սխալն է:

թվայնացրել է 1915.info կայքը

19

ԽՄՈՐ

Միամասի հեքիաթները պատմում են հրեշին հաղթելու անթիվ-անհամար ձևերի մասին: Բայց եթե հրեշը ստվեր է՝ հրեշների ամենասարսափելի մարմնավորումը, այն էլ մարդու կերպարանքով, ուրեմն ինչպե՞ս հաղթել նրան: Էլսան նույնիսկ չգիտի՝ կկարողանա՞ արդյոք Գայլսիրտը, որ ամբողջ Երկիր-Կիս-Արթունի ամենախիզախ ռազմիկն է, հաղթել նրան: Այն էլ հիմա, երբ սարսափում է թքից ու չի կարողանում սեփական մատների վրայից լվանալով՝ ազատվել արյան մասին մտքից:

Էլսան ոչինչ չգիտի ստվերի մասին: Միայն երկու անգամ տեսել էր վերջերս. առաջինը՝ թաղման գրասենյակի մոտ, մյուսն էլ այը՝ օրն ավտոբուսից՝ դպրոցի ճանապարհին: Եվ այն, որ տեսել էր երազում: Նաև եկել է իրենց շենք ու իրեն է փնտրել: Իսկ Միամասում դիպվածով ոչինչ չի լինում, հեքիաթներում պատահականություններ չեն լինում: Հեքիաթներում ամեն ինչ միշտ այնպես է, ինչպես որ ի սկզբանե նախատեսվել է:

Ուրեմն տատիկը սա նկատի ուներ, երբ ասում էր. «Պաշտպանի՛ր ամրոցը, պաշտպանի՛ր ընկերներիդ»: Էլսան միայն կուզենար, որ տատիկը զորք էլ տված լիներ իրեն:

Էլսան սպասում է մինչև ուշ երեկո, երբ մթությունը բավականաչափ թանձրանա, որպեսզի մի երեխա ու մի վորս կարողանան աննկատ սպրդել Բրիտ-Մարիի պատշգամբի տակով, երբ նկուղից դուրս գան:

Յեորգը դրսում վազում է, մայրիկը դեռևս գործեր ունի ավարտելու մինչև վաղը: Առավոտյան ռևիզորին հանդիպելուց հետո մայրիկը

թվայնացրել է 1915.info կայքը

հեռախոսով անընդմեջ խոսել էր թաղման գրասենյակի կետաձուկ կնոջ հետ, ապա՝ ծաղկահարդարի, հետո՝ քահանայի ու հետո՝ հիվանդանոցի, ապա՝ նորից քահանայի հետ: Էլսան, իր սենյակում նստած, Սարդ-մարդու պատմություններն է կարդում, որովհետև հնարավորին չափ փորձում է չմտածել վաղվա մասին: Չնայած չի հաջողվում:

Նա վորսի համար Մոդի տված թխվածքն էր տարել ու հաջողեցրել էր կայծակնային արագությամբ հետ քաշել տուփը, որ կենդանու ժանիքները չհասցնեն մատնահարդարել իր եղունգները, ու սրբիչանման լեզուն տուփի պարունակությունը վերջ տալուց հետո հատ-հատ չլիզի տուփի ներսի փշուրները: Տատիկն ասում էր, որ վորսերի թուքը դժվար է մաքրվում, իսկ Էլսան դեռ պիտի տուփը Մոդին վերադարձնի: Ճիշտ է, մի քանի օր մոտը պահելուց հետո միայն, երբ մի քիչ խելքին մոտ կթվա այդ քանակի թխվածքն ուտել-վերջացնելը: Քանի որ տուփն իրականում բավականին մեծ է՝ վորսից բացի մյուս արարածների համար:

Իսկ վորսը, որ ամեն պարագայում վորս է մնում, քիթն Էլսայի պայուսակը խցկած՝ եռանդով պտտում է անհնազանդ բետոնախառնիչի պես: Նրա համար չտեսնված դժվար է պատկերացնել, որ Էլսան այդքան հիմար է գտնվել՝ ներկայանալով ընդամենը մի խղճուկ տուփով:

— Ես կփորձեմ էլի թխվածք ճարել քեզ համար, բայց մինչև այդ ստիպված ես սպիտակուցային սալիկներ ուտել,– բացատրում է նա:

Վորսն այնպես է խեթ-խեթ նայում, ասես իրեն «թմբլիկ» են անվանել:

— Հերի՛ք էդպես նայես: Շոկոլադի համի են,– ասում է Էլսան ու սպիտակուցային սալիկը նրան է մեկնում:

Վորսի տեսքից չի երևում, թե իր համար դրանից որևէ բան փոխվելու է: Բայց, այնուամենայնիվ, մի յոթ հատ ուտում է: Էլսան հանում է թերմոսը:

— Էս էլ թխվածքի խմոր է: Չնայած երևի իսկական խմոր չէ, որովհետև ես սարքելու ձևը չգիտեմ: Ուղղակի խոհանոցի պահարանում մի տուփ փոշի գտա, որի վրա գրված էր «Թխվածքի չոր խառնուրդ», ու վրան ջուր լցրի: Չնայած ավելի շուտ ինչ-որ լպրծուն հեղուկ դարձավ, քան խմոր,– արդարանալով ասում է Էլսան:

Վորսը թերահավատորեն նայում է, սակայն, ամեն դեպքում, ապահովության համար ամբողջ հեղուկը թերմոսից դատարկում է: Չափազանց ճկուն լեզուն երևի վորսերի ամենաակնառու գերունակությունն է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Էսօր մի մարդ է եկել էստեղ ու ինձ է փնտրել,– շշնջում է Էլսան վորսի ականջին՝ փորձելով ձայնը համարձակ հնչեցնել: — Կարծում եմ՝ ստվերներից է: Մենք պիտի շատ զգոն լինենք:

Վորսը քթով հպվում է նրա վզին: Էլսան փաթաթվում է նրան ու զգում է մորթու տակ պրկված մկանները: Կենդանին կարծես փորձում է ձևացնել, թե պատրաստվում է խաղալ, բայց անում է այն, ինչ համապատասխան է իր բուն էությանը. նախապատրաստվում է կռվի: Էլսան նրան շատ է սիրում դրա համար:

— Չգիտեմ՝ որտեղից է հայտնվել. տատիկը երբեք նման հրեշների մասին չի պատմել,– շշնջում է Էլսան:

Վորսը նորից մռութով հրում է նրա վիզը, հետո իր խոշոր կարեկցող աչքերով նրան է նայում: Ասես կուզենար ամեն ինչ պատմել նրան: Էլսան կուզենար՝ Գայլսիրտն իրենց հետ լիներ: Քիչ առաջ սեղմել էր նրա դռան զանգը, բայց բացող չէր եղել: Ձայն տալ չէր ուզել՝ վախենալով, որ Բրիտ-Մարին ինչ-որ բան կկասկածի: Դրա համար միայն փոստարկղի ճեղքի մոտ աղմուկով քիթը քաշել էր ու հստակ ձայներ էր հանել՝ այդպիսով ազդարարելով, որ ինքն ուր որ է այնպես լորձոտ կփռշտա, որ մի ակնթարթում ամբողջ շրջակայքը կցողի իր թքով: Բայց ոչ մի արդյունք:

— Գայլսիրտն անհետացել է,– շշնջում է Էլսան վորսի ականջին:

Վորսը նորից հրում է նրան: Էլսան փորձում է անվախ երևալ, ինչը նրա մոտ նկուղով անցնելիս բարեհաջող ստացվում է: Եվ բավական լավ է ստացվում աստիճաններով բարձրանալիս: Սակայն երբ կանգնում են աստիճանահարթակում՝ մուտքի դռան դիմաց, և Էլսան ծխախոտի հոտ է զգում (նույն ծխախոտի հոտն էր, որ տատիկն էր ծխում), գիշերային մղձավանջի տևական սարսափը կաթվածահար է անում նրան: Կոշիկները, թվում է, թե հազար տոննա են կշռում: Գլխի մեջ այնպես է գվվում, ասես ինչ-որ բան պոկվել է տեղից ու դեսուդեն է խփվում:

Ապշելու բան է, թե ի՞նչ արագ է փոփոխվում հոտի նշանակությունը՝ կախված նրանից, թե ինչ ուղի է ընտրում այն ուղեղի միջով անցնելիս, և թե իրար ինչքան մոտ են տեղակայված սերն ու վախը: «Իրական հո չի՞, ա՛յ խելոք, ընդամենը երևակայությունդ է, ոչ մի ապուշ հրեշ էլ գոյություն չունի»,– վճռականորեն ինքն իրեն համոզում է Էլսան: Բայց չի օգնում: Վորսը համբերատար սպասում է նրա կողքին, բայց կոշիկները տեղից չեն պոկվում:

թվայնացրել է 1915.info կայքը

Պատուհանից դուրս թերթ է թռչում: Այն թերթերից, որ անվճար փոստարկղն են գցում՝ չնայած փակցրած գրությանը՝ «Գովազդ չգցել: Շնորհակալություն»: Էլսան իսկույն տատիկին է հիշում: Ինքն ահա հազար տոննա կշռող կոշիկներով կանգնած է դռան մոտ, իսկ թռչող թերթը ստիպում է իրեն զայրանալ՝ դառնալով խորհրդանիշն այն ամենի, ինչը զայրացնում է իրեն, որովհետև տատիկն է իրեն այս օրը գցել: Տատիկն է ուղարկել իրեն այս հեքիաթի մեջ, ինչը շատ բնորոշ է նրան: Ճիշտ ինչպես անվճար թերթի համար վիճաբանության պատմությունը, որ միշտ համառորեն ուղարկում էին՝ անտեսելով գրությունը:

Էլսան հրաշալի հիշում է, թե ինչպես էր տատիկը զանգել թերթի խմբագրություն ու մի լավ բարկացել նրանց վրա, որ արհամարհելով դռան վրայի հստակ ու հասկանալի «Գովազդ չգցել: Շնորհակալություն» գրությունը՝ միևնույն է, իրենց թերթը գցում էին իր փոստարկղը: Էլսային միշտ հետաքրքրում էր, թե ինչի համար է գրել «շնորհակալություն» բառը, որովհետև Էլսայի մայրիկը միշտ ասում է, որ այդ բառը պետք է ասել, եթե իրականում սրտանց շնորհակալ են: Ու տատիկի դռան գրությունը, ըստ էության, իսկի էլ դա չի նշանակում:

Բայց անվճար թերթի խմբագրությունում պատասխանել էին տատիկին, որ իրենց թերթը ոչ թե գովազդ է, այլ հասարակական տեղեկատվություն, և այն կարելի է մարդկանց փոստարկղերը գցել՝ անկախ նրանից՝ շնորհակալ են նրանք, թե ոչ: Տատիկը հարցրել էր խմբագրության տնօրենի անունն ու պահանջել նրան փոխանցել լսափողը: Նրանք պատասխանել էին, որ տատիկը պիտի հասկանա, որ տնօրենը նման ապուշություններով զբաղվելու ժամանակ չունի:

Նրանք, իհարկե, այդպես չպիտի վարվեին, որովհետև կան բաներ, որոնք տատիկը բացարձակ չէր հասկանում: Եվ բացի այդ, ի տարբերություն թերթի սեփականատիրոջ, տատիկն իսկապես չափազանց շատ ազատ ժամանակ ուներ: «Երբեք մի՛ ընդհարվիր նրա հետ, ով քեզնից շատ ազատ ժամանակ ունի»,– սովորաբար ասում էր տատիկը: Էլսան էլ նրա խոսքերը ձևափոխում էր՝ ասելով. «Մի՛ ընդհարվիր նրա հետ, ով չափից դուրս աշխույժ է իր տարիքի համեմատ»:

Հաջորդ օրերին տատիկը սովորականի պես Էլսային վերցրեց դպրոցից, ու հետո նրանք IKEA-ի դեղին պայուսակներով շրջեցին թաղամասով մեկ ու զանգեցին բոլոր դռները: Մարդիկ թերևս մի փոքր զարմանում էին, քա-

թվայնացրել է 1915.info կայքը

նի որ IKEA-ի դեղին պայուսակները սովորաբար չի կարելի դուրս տանել հանրախանութից: Եթե ոմանք չափից շատ հարցեր էին տալիս, տատիկը միայն ասում էր, որ իրենք էկոլոգիական կազմակերպությունից են, որը վերամշակման համար թուղթ է հավաքում: Եվ այդ ժամանակ ոչ ոք չէր համարձակվում հակաճառել: «Մարդիկ վախեցած են էկոլոգիական կազմակերպություններից, որովհետև կարծում են, թե ներխուժելու ենք իրենց բնակարաններն ու մեղադրելու ենք աղբի սխալ տեսակավորման համար: Նրանք չափից դուրս շատ են ֆիլմեր նայում»,– բացատրում էր տատիկն Էլսային, երբ թերթերով լի պայուսակները խցկում էին Renault-ի մեջ:

Էլսան իրականում չէր հասկացել, թե տատիկն ինչ տեսակի ֆիլմերում էր նման բաներ տեսել: Նա շատ լավ գիտեր, որ տատիկն ատում էր էկոլոգիական կազմակերպություններն ու սովորաբար նրանց «ֆաշիստ պանդաներ» էր անվանում, և դեղին պայուսակներն էլ հանրախանութից դուրս տանել չի կարելի: Տատիկը, իհարկե, ուսերն էր թոթվում: «Ես պայուսակները չեմ թռցրել, ուղղակի դեռ չեմ հասցրել վերադարձնել»,– մռթմռթացել էր տատիկն ու Էլսայի ձեռքն էր տվել սև, հաստ նշամատիտը, որ գրի: Եվ Էլսան դրա համար պահանջել էր չորս հատ Ben & Jerry's շոկոլադով ու ընկուզեղենով պաղպաղակ: Տատիկն ասել էր՝ մե՛կ, Էլսան ասել էր՝ երե՛ք: Տատիկն ասել էր՝ երկո՛ւ, իսկ Էլսան վրա էր բերել՝ երե՛ք, թե չէ մայրիկին կասեմ: Իսկ տատիկը բղավել էր. «Ես ահաբեկիչների հետ գործարքներ չեմ կնքում»: Դրան ի պատասխան՝ Էլսան առաջարկել էր Վիքիպեդիայում կարդալ «Ահաբեկիչ» հոդվածը, որտեղ բառի ձևակերպման մեջ բազմաթիվ հատկանիշներ համապատասխանում են տատիկին, բայց ոչ մեկը չի համապատասխանում Էլսային: «Ահաբեկիչների նպատակն է քաոս ստեղծել, մայրիկն էլ ասում է, որ դու հենց դրանով էլ զբաղվում ես ամբողջ օրը»,– ասել էր Էլսան: Այդ ժամանակ տատիկը համաձայնել էր չորս հատ պաղպաղակ գնել, բայց պայմանով, որ Էլսան կանի իր անելիքն ու լեզուն իրեն կպահի: Եվ Էլսան այդպես էլ արել էր:

Ու հետո ավելի ուշ՝ գիշերով, մթի մեջ Renault-ում նստած, հսկում էր, մինչ տատիկը շենքի մուտքից իր մեծ, դեղին պայուսակներով ներսուդուրս էր վազվզում քաղաքի մի ծայրից մյուսը: Հաջորդ առավոտ անվճար թերթի հրատարակչության սեփականատերն արթնանում է այն աղմուկից, որ հարևանները զայրացած նրա դռան զանգն են տալիս, քանի որ ինչ-որ մեկն անվճար թերթի հազարավոր օրինակներ էր լցրել վերելակը: Բոլորի

թվայնացրել է 1915.info կայքը

փոստարկղերը լիքն էին նույն թերթով, ու մուտքի ապակե դռան յուրաքանչյուր սանտիմետրի վրա կպչուն ժապավենով փակցրած էր նույն թերթը: Բոլորի դռների դիմաց կույտերով թերթեր էին, որոնք դռները բացելիս թռչում ու սահում էին աստիճաններով: Յուրաքանչյուր թերթի առաջին էջին խոշոր, սև տառերով գրված էր խմբագրի անունը, իսկ ներքևում՝ «Սա գովազդ չէ: Միայն հասարակական տեղեկատվություն»:

Տուն վերադառնալիս տատիկն ու Էլսան կանգնել էին բենզալցակայանում ու պաղպաղակ էին գնել: Մի քանի օրից տատիկը նորից էր զանգել անվճար թերթի խմբագրություն և այլևս երբեք անվճար թերթեր չէր ստացել:

Էլսան նայում էր քամուց քշվող անվճար թերթին ու մտածում էր, որ այն տատիկի արածներն է հիշեցնում: Վերջերս ոչինչ նրան այնքան չէր զայրացնում, որքան տատիկի հետ կապված հուշերը:

— Նե՞րս, թե՞ դուրս:

Ձայնն ասես ջահի պես ճեղքում է աստիճանավանդակի մթությունը:

Էլսան շրջվում է ու քիչ է մնում՝ բնազդաբար նետվի նրա գիրկը, բայց զսպում է իրեն, քանի որ ենթադրում է, որ նա էլ հավանաբար նույնքան վատ կվերաբերվի դրան, որքան Գայլսիրտը:

Ալֆը ձեռքերը կտրուկ խցկում է գրպանները, ինչից կաշվե բաճկոնը ճռռում է, ապա կտրուկ գլխով է անում դռան կողմը:

— Նե՞րս, թե՞ դուրս: Թե՞ կարծում ես՝ քեզնից բացի ոչ ոք չի ուզում գիշերային զբոսանքի գնալ:

Էլսան ու վորսը մի փոքր շվարած նրան են նայում: Ալֆն ինչ-որ բան է քրթմնջում քթի տակ ու նրանց կողքով անցնելով՝ հրում է դուռը: Նրանք անմիջապես հետևում են նրան, չնայած որ ընկերակցելու հրավեր չէին ստացել: Երբ բոլորով հասնում են շենքի անկյանն ու հայտնվում Բրիտ-Մարիի ու Քենթի պատշգամբի հասանելիության տեսադաշտից դուրս, վորսը, հետ-հետ գնալով, մտնում է թփի մեջ ու քաղաքավարի, որքան կարող է շատ շտապ գործ ունեցող վորսը, գռմռում է նրանց վրա: Նրանք շրջվում են: Նա թեթևացած հոգոց է հանում թփից: Ալֆի կաշվե բաճկոնը ճռճռում է, իսկ միջի մարդն ամենևին ոգևորված չի երևում զբոսանքի ընթացքում առանց հրավերի ընկերակցության համար: Էլսան հազում է մթության մեջ ու փորձում զրույցի թեմա գտնել, որ նա չհեռանա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ավտոմեքենան լա՞վ է,– հարցնում է նա, քանի որ լսել է, թե ինչպես է հայրիկը տալիս այդ հարցը, երբ ուրիշ ասելիք չի գտնում:

Ալֆը գլխով է անում: Ու վերջ: Էլսան աղմուկով շունչ է քաշում:

— Իսկ ռևիզորը ժողովին ի՞նչ ասաց,– նորից հարց է տալիս նա՝ հույս ունենալով, որ Ալֆը դրանից այնպես կբորբոքվի, որ կսկսի խոսել, ինչպես բնակիչների ժողովի ժամանակ:

Էլսան նկատել է, որ շատ ավելի հեշտ է մարդկանց խոսեցնել իրենց չսիրած երևույթների մասին, քան սիրած: Ու շատ ավելի հեշտ է մթության մեջ չվախենալ ստվերներից, երբ խոսում ես մեկի հետ, թեկուզ անիմաստ թեմաներից: Սակայն Ալֆի բերանի եզրը թեթևակի ձգվում է այդ հարցից:

Առաջին անգամ է նման բան նկատում:

— Էդ գրողի տարած ռևիզորն ասաց, որ սեփականատերերը որոշել են ծախել էդ գրողի տարած բնակարանները, եթե ամբողջ շենքի գրողի տարած բնակիչներն իրար հետ համաձայնության գան:

Էլսան հետևում է նրա բերանի եզրին:

— Իսկ դա լա՞վ է:

Ալֆը գոհունակությամբ նրան է նայում:

— Դու նույն շենքում չե՞ս ապրում: Ավելի շուտ պաղեստինյան հակամարտությունը կլուծվի, քան էս շենքի բնակիչները համաձայնության կգան ինչ-որ մի ք*քոտ հարցով:

Էլսան հասկանում է, թե նա ինչ է ուզում ասել, քանի որ Պաղեստինի մասին կարդացել էր Վիքիպեդիայում, ու ենթադրում է, որ Ալֆը, բնակիչներ ասելով, նկատի ունի Բրիտ-Մարիին ու մայրիկին:

— Շենքում բոլորը կուզե՞ն իրենց բնակարանները վաճառել, երբ դրանք իրենց սեփականը դառնան,– հարցնում է նա:

Ալֆի բերանի ծայրը վերադառնում է գրեթե սովորական վիճակին:

— Հարցը ուզել-չուզելը չէ, գրո՛ղը տանի, մեծ մասն ուղղակի ստիպված է լինելու:

— Ինչո՞ւ:

— Գրավիչ թաղամաս է: Ու գրողի տարած բնակարանները թանկ են: Մեծ մասը չեն կարողանալու էդ կարգի վարկ վերցնել գրողի տարած բանկերից:

— Դու ստիպված կլինես տեղափոխվե՞լ:

— Հավանաբար:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մայրիկը, Յեորգն ու ե՞ս էլ:

— Գրո՛ղը տանի, որտեղի՞ց իմանամ:

Էլսան մտածում է:

— Բա Մոդն ու Լենա՞րտը,– հարցնում է նա:

— Չափից դուրս շատ հարցեր ես տալիս,– նկատում է Ալֆը:

— Ի՞նչ բանի ես էստեղ, եթե նույնիսկ խոսել էլ չես ուզում,– փնթփնթում է Էլսան:

Ալֆի բաճկոնը ճռճռում է թփում ծվարած վորսի ուղղությամբ:

— Ես ուղղակի զբոսնելու էի դուրս եկել, գրո՛ղը տանի: Քեզ ու նրան ոչ ոք չէր էլ հրավիրել:

Էլսայի ունքերը եռակյունաձև բարձրանում են:

— Քեզ չե՞ն ասել, որ ահավոր շատ ես գրողին հիշում: Հայրիկս ասում է, որ դա սուղ բառապաշարի նշան է:

Ալֆն աչքերը նրան է հառում: Էլսան հայացքը չի փախցնում: Վորսը խշխշացնում է թփերում: Ալֆը ժամացույցին է նայում ու ձեռքերը նորից խցկում գրպանները:

— Մոդն ու Լենարտը կտեղափոխվեն: Էն առաջին հարկի աղջիկն էլ իր տղայի հետ, երևի թե: Գրողի տարած հոգեբանը, էն որ երեկ մոտն էիր, չգիտեմ: Ինքը հաստատ շատ փող կունենա էդ գրո…

Նա զսպում է իրեն: Ինքնատիրապետման փորձ է անում:

— Էդ… կինը: Ինքը հաստատ… ահագին փող ունի, էդ կինը,– ուղղում է ինքն իրեն:

— Իսկ իմ տատիկն ի՞նչ էր կարծում:

Ալֆի բերանի եզրը նորից կտրուկ ջղաձգվում է:

— Սովորաբար Բրիտ-Մարիի ճիշտ հակառակը:

Էլսան կոշիկի ծայրով ձյունահրեշտակի մանրակերտ է նկարում:

— Բայց գուցե լա՞վ լինի: Եթե բնակարանների սեփականատեր դառ-նան, գուցե տեղափոխվեն ավելի լա՞վ տեղ,– հարցնում է նա:

— Էստեղ լավ է: Մենք էստեղ լավ էլ ապրում ենք: Համ էլ, գրո՛ղը տանի, սա՛ է մեր տունը,– ասում է Ալֆը:

Էլսան չի առարկում: Ինքը երբեք ուրիշ տուն չի ունեցել:

Կողքից, քամուց քշվելով, թռչում է անվճար թերթը կամ էլ դրա նման մեկ ուրիշը: Այն մի պահ փաթաթվում է Էլսայի ոտքին, ապա պոկվում է

թվայնացրել է 1915.info կայքը

ու ճախրում հեռու՝ չարացած փոքրիկ ծովաստղիկի պես: Էլսան դրանից ավելի է կատաղում: Դա հիշեցնում է, թե տատիկն ինչերի էր պատրաստ, որ ստիպի նրանց վերջ տալ այդ անվճար թերթերն իր փոստարկղը գցելուն: Էլսան կատաղում է, քանի որ տատիկին շատ բնորոշ էր ամեն ինչ հանուն Էլսայի անելը: Տատիկի բոլոր արածները միշտ հանուն Էլսայի էին:

Թեև տատիկը սիրում էր այդ թերթերը, որովհետև սովորաբար անձրևից հետո խցկում էր թրջված կոշիկների մեջ: Բայց Էլսան մի անգամ համացանցում կարդացել էր, թե քանի ծառ է անհրաժեշտ ընդամենը մի թերթ հրատարակելու համար, ու «Գովազդ չգցել, շնորհակալություն» գրությամբ պաստառներ էր փակցրել մայրիկի ու տատիկի դռների վրա, քանի որ շատ մտահոգ էր շրջակա միջավայրի համար: Թերթեր, միևնույն է, շարունակում էին ուղարկել, իսկ երբ Էլսան խմբագրություն էր զանգել, նրա վրա պարզապես ծիծաղել էին: Սակայն այդ մի բանը չպիտի անեին, որովհետև տատիկի թոռնիկի վրա ծիծաղել չի կարելի: Տատիկը թքած ուներ շրջակա միջավայրի վրա, բայց նրա հետ կարելի էր հետախուզության գնալ, որովհետև հանուն Էլսայի նա ահաբեկիչ էլ կդառնար: Ու Էլսան, ըստ էության, ամենաշատը հենց նրա համար է կատաղում տատիկի վրա, որ չի կարողանում չկատաղել մնացած ամեն ինչի համար. ստերի համար և որ մայրիկին մենակ էր թողել ու մահացել էր: Բայց իրականում սարսափելի դժվար է կատաղել մեկի վրա, որը հանուն իր թոռնիկի ահաբեկչության էր պատրաստ: Ու Էլսան է՛լ ավելի էր կատաղում, որ չպիտի կատաղեր:

Մարդ նույնիսկ չի կարողանում ինչպես հարկն է զայրանալ տատիկի վրա: Նույնիսկ այդ առումով նա նման չէր սովորական մարդկանց:

Աղջիկը լուռ կանգնած է Ալֆի կողքին ու այնքան է թարթում աչքերը, մինչև որ քունքերը սկսում են ցավել: Ալֆը փորձում է անխռով երևալ, բայց Էլսան նկատում է, որ նա ուշադիր նայում է մթության մեջ, ասես ինչ-որ բան է փնտրում: Նա շրջապատն ուսումնասիրում է ճիշտ Գայլսիրտի ու վորսի պես: Կարծես հսկելիս լինի: Էլսան աչքի պոչով հետևում է նրան՝ փորձելով տեղավորել նրան տատիկի կյանքում գլուխկոտրուկի բացակայող կտորի պես: Նա չի հիշում, որ տատիկն առանձնապես նրա անունը տար, բացի այն դեպքերից, երբ սովորաբար ասում էր. «Այս մարդն իսկի ոտքերը գետնից չի կտրում»: Դրա համար էլ նրա կոշիկների ներբանները լրիվ մաշված էին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչքա՞ն լավ էիր ճանաչում տատիկիս,– հարցնում է Էլսան:

Բաճկոնը ճռճռում է:

— Ի՞նչ ճանաչել: Մենք հարևաններ էինք, գրո՛ղը տանի, ընդամե՛նը,– խուսափողական պատասխան է տալիս Ալֆը:

— Բա ի՞նչ էիր ասում, երբ եկար տաքսիով ինձ տանելու: Որ ասացիր, թե տատիկը երբեք չէր ների քեզ, եթե ինձ մենակ թողնեիր,– տարակուսանքով հարցնում է Էլսան:

Նորից ճռճռոց է լսվում:

— Դե, ես նկատի ունեի, գրո՛... Իսկի էլ նկատի չունեի: Ուղղակի պատահաբար մոտակայքում էի... Գրո՛...

Նրա ձայնը շփոթված էր հնչում: Էլսան ասես ըմբռնումով գլխով է անում, ինչը, սակայն, Ալֆը բոլորովին չի գնահատում:

— Լավ, բա հիմա ինչո՞ւ ես էստեղ,– հեգնում է Էլսան:

— Հը՞:

Էլսան ուսերն է թոթվում:

— Ինչո՞ւ հետևիցս էստեղ եկար: Ուրիշ գործ չունե՞ս:

— Ինչի միայն դու, գրո՛... Դու ու էդ գազանը իրավունք ունե՞ք ման գալու, գրո՛...,– մռթմռթում է Ալֆը՝ մի ներբանով ցույց տալով վորսի կողմը:

— Sure,– գլխով է անում Էլսան չափազանցված դրամատիզմով:

Ալֆի բաճկոնն ավելի ուժգին է ճռճռում:

— Ես չեմ կարող քեզ ու էս կենդանուն թողնել դրսում, որ գիշերվա կեսին վազվզեք: Տատիկդ, գրո՛...

Նա ընդհատում է: Ինչ-որ բան է քրթմնջում: Հառաչում է:

— Տատիկդ կյանքում ինձ չէր ների, եթե քեզ մի բան պատահեր:

Երևում է, որ ասելուն պես փոշմանում է իր խոսքերի համար: Էլսան ոչինչ չի ասում: Միայն նորից գլխով է անում: Փորձում է խուսափել հաջորդ հարցից, որն իրեն հանգիստ չի տալիս: Բայց չի ստացվում:

— Դու ու տատիկն իրար հետ մտերիմ հարաբերությունների մե՞ջ էիք,– վերջապես հարցնում է նա, ինչպես իրեն է թվում, հնարավոր ողջամիտ ընդմիջումից շատ ավելի երկար ժամանակ անց, որն իրականում թերևս հազիվ մի կես րոպե էր տևել:

Ալֆն այնպիսի տեսք ուներ, ասես աղջիկը նրա դեմքին դեղին ճնագնդիկ էր շպրտել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի քիչ շուտ չէ՞, որ դու իմանաս դրա նշանակությունը:

— Շատ բան կա, որի համար դեռ փոքր եմ, բայց, մեկ է, գիտեմ. ես շատ հարցերից եմ գլուխ հանում,– ասում է Էլսան:

Ալֆը մռթմռթում է, բայց չի պատասխանում նրան: Այնպես որ, Էլսան հազում է ու շարունակում.

— Մի անգամ, երբ փոքր էի, մայրիկը պիտի ինձ բացատրեր, թե ինքն ինչ է աշխատում, որովհետև ես հարցրել էի հայրիկին, ու հայրիկը չէր կարողացել բացատրել, որովհետև ինքն էլ կարգին չգիտեր: Մայրիկն ասել էր, որ տնտեսագետ է: Ու բացատրել էր, որ տնտեսական հարաբերություններն է կարգավորում, այսինքն՝ փողերի հետ կապված գործերը, ասենք՝ որտեղից ու ինչ գնումներ կարող են կատարել: Ես հարցրի. «Ոնց որ խանութո՞ւմ»: Ու մայրիկն ասաց, որ դրա նման: Հետո ես ասացի, որ հասկանալու համար իսկի էլ դժվար չէր, ու զարմանալի է, որ հայրիկը չգիտեր: Մայրիկի հետ աշխատող մեկն էլ կար, անունը՝ Մայք: Երբ մի ուրիշ անգամ՝ խնջույքի ժամանակ, ինձ հարցրին, թե մայրիկն ինչ է անում, ես ասացի. «Մայրիկը Մայքի հետ ինչ-որ հարաբերություններով է զբաղվում, բայց հայրիկը չգիտի»:

Ալֆը ուժասպառ ձեռքը խփում է ականջին, ասես ուզում է այն մաքրել: Էլսան անվստահ սկսում է հազալ, ապա ընդհատում է ինքն իրեն:

— Մի քիչ բարդ է,– քրթմնջում է՝ ինքն իրեն տիրապետելով:

Ալֆը նայում է ձեռքի ժամացույցին: Էլսան ձայնը բարձրացնում է:

— Համ էլ ես հետո հեռուստասերիալ տեսա, որտեղ երկուսն այդ գործին էին: Էնպես որ, ասենք, հիմա գիտեմ՝ դա որն է: Ու կարծում եմ, որ դու ու տատիկն էլ իրար հետ էիք, դե հասկանում ես, այսինքն՝ մոտ էիք:

Ալֆը թեթևացած գլխով է անում՝ հուսալով, որ նա վերջապես կլռի, բայց Էլսան խորը շունչ է քաշում ու անմիջապես բացականչում.

— Հիմա դուք էդքան մոտի՞կ էիք, թե՞ չէ:

— Էդ կենդանին չի պրծնո՞ւմ: Ոմանք, ի դեպ, պիտի աշխատանքի գնան,– հուսահատ փնթփնթում է Ալֆը՝ առանց հարցին պատասխանելու, ու մեջքով շրջվում է դեպի թփերը:

Էլսան մտածկոտ նրան է զննում:

— Ես ուղղակի մտածեցի, որ տատիկը քեզ կհավաներ, որովհետև դու իրենից մի քիչ ջահել ես, բայց, ամեն դեպքում, տարիքով ես: Համ էլ, նա միշտ սիլի-բիլի էր անում քո տարիքի ոստիկանների հետ: Նրանց հետ,

թվայնացրել է 1915.info կայքը

որ արդեն ոստիկան լինելու համար ծեր են, բայց դեռ ոստիկան են: Դե, դու էլ արդեն ծեր ես ոստիկան լինելու համար, բայց դեռ շատ չէ: Հասկանո՞ւմ ես:

Չի երևում, թե Ալֆն իրոք հասկանում է: Ու թվում է, թե գլխացավը բռնել է:

— Դու ոնց որ թե պիտի սննդակարգդ կարգավորես, լսո՞ւմ ես,– մռթմրոռթում է նա վորսի վրա ու ափը թափ է տալիս նրա մռութի դիմաց, երբ շունը դուրս է գալիս թփերի միջից:

Վորսն այնքան նեղացած է երևում, որքան կարող է նեղացած լինել վորսը, որ շատ է թխվածք սիրում, սակայն ստիպված է բավարարվել օրական մի խղճուկ տուփով:

Ալֆը վերջապես ազատվում է Էլսայի հարցերից: Նրանք շարքով ներս են մտնում մուտքի դռնից՝ Էլսան մեջտեղում: Մեծ զորք չէ, բայց ամեն դեպքում զորք է, մտածում է Էլսան՝ մի քիչ պակաս վախենալով մթությունից: Երբ նրանք պիտի բաժանվեին, նկուղում՝ պահեստի ու կայանատեղիի դռների արանքում, Էլսան, կոշիկի քիթը գետնին քսելով, հարցնում է Ալֆին.

— Էն ի՞նչ երաժշտություն էիր միացրել մեքենայում, երբ եկար ինձ տանելու: Օպերա՞ էր:

— Գրո՛ղը տանի: Հարցերիցդ չպրծա՞,– փնթփնթում է Ալֆը:

— Ուղղակի հարցրի: Կներես,– վիրավորված ֆշշացնում է Էլսան:

Ալֆը հառաչելով կանգ է առնում դռան շեմին:

— Օպերա էր, գրո՛ղը տանի:

— Ի՞նչ լեզվով էին երգում:

— Իտալերեն:

— Դու իտալերեն գիտե՞ս:

— Հա՛:

— Իսկապե՞ս:

— Իսկ ուրիշ ձև կա՞ իտալերեն իմանալու, գրո՛ղը տանի,– տարակուսում է Ալֆը:

— Ուզում էի ասել՝ լո՞ւրջ, այսինքն՝ լա՞վ գիտես: Դե, այսինքն՝ վարժ խոսո՞ւմ ես,– հետաքրքրվում է Էլսան:

Ալֆը նայում է ժամացույցին: Կաշվե բաճկոնը ճռռում է: Նա մի թռուցիկ շարժում է անում վորսի ուղղությամբ՝ փորձելով փոխել զրույցի թեման:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սրա համար պիտի մի նոր թաքստոց գտնես, ասում եմ: Թե չէ ուշ թե շուտ կբացահայտեն:

— Հիմա դու իտալերեն գիտե՞ս, թե՞ չէ,– հարցնում է Էլսան՝ չուզենալով թեմայից շեղվել:

— Բավարարում է օպերա հասկանալու համար: Էլի հարցեր, գրո՛... Էլի հարցեր կա՞ն:

— Այսինքն՝ օպերային իտալերենը գիտես,– նրան քաջալերելով՝ ամփոփում է Էլսան:

— Շատ ես լեզվիդ տալիս,– ասում է նա:

— Իսկ ինչի՞ մասին էր էն օպերան, որ մեքենայիդ մեջ լսում էինք,– համառում է Էլսան:

Ալֆը բացում է կայանատեղիի դուռը:

— Սիրո: Բոլորն էլ սիրո մասին են, գրո՛ղը տանի:

Նա «սեր» բառն այնպես է արտաբերում, ասես խոսքն էլեկտրական սարքերի կամ 5 սմ-անոց պտուտակների մասին է:

— ՈՒՐԵՄՆ, ԴՈՒ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԷԻՐ ԻՄ ՏԱՏԻԿԻ՞Ն,– բղավում է Էլսան նրա հետևից, բայց նա արդեն շրխկոցով փակել էր դուռը:

Էլսան կանգնած քմծիծաղում է: Վորսն ու Էլսան գրեթե վստահ են: Ու երբ ծիծաղում ես, շատ ավելի դժվար է մթությունից ու ստվերներից վախենալ:

— Կարծում եմ՝ Ալֆն արդեն մեր ընկերն է,– շշնջում է նա:

Վորսը կարծես նույն կարծիքին է:

— Շատ թթված է, բայց կարծում եմ՝ բարի է: Ինքը չմատնեց, որ դու էստեղ ես ու մթության մեջ մեզ մենակ չթողեց: Կարևոր հատկանիշներ են ընկերոջ համար, կարծում եմ:

Վորսն ակնհայտորեն համաձայն էր:

— Մտածում եմ, որ ինչքան շատ ընկեր ունենանք, էդքան լավ, որովհետև տատիկը չի պատմել, թե էս հեքիաթում ինչեր են պատահելու:

Վորսը մռութը հպում է նրա վզին:

— Ես կարոտում եմ Գայլսիրտին,– շշնջում է Էլսան նրա մորթու մեջ:

Վորսը, պարզ է, այս հարցում էլ նույն կարծիքին է:

Թեպետ ահավոր դժկամությամբ:

թվայնացրել է 1915.info կայքը

20

ՀԱԳՈՒՍՏԻ ԽԱՆՈՒԹ

Այսօր այդ օրն է: Եվ այն սկսվում է ամենասարսափելի գիշերով: Էլսան արթնանում է բերանը կիսաբաց, բայց ճիչը սենյակի փոխարեն հնչում է գլխում: Նա լուռ աղաղակում է, անարցունք հեծկլտում, ձգում է ձեռքերը, որ վերմակը մի կողմ գցի, չնայած այն արդեն ընկած էր գետնին: Դուրս է գալիս իր սենյակից: Ձվածեղի հոտ է գալիս. Յեորգը խոհանոցից անվստահ ժպտում է նրան: Էլսան ժպիտով չի պատասխանում: Յեորգը կարծես վշտանում է: Էլսան բանի տեղ չի դնում: Ինչպես միշտ:

Ցնցուղ է ընդունում այնքան տաք, որ թվում է՝ մաշկը կպլոկվի մանդարինի պես: Հետո նորից հյուրասենյակ է գնում: Մայրիկը մի քանի ժամ առաջ գնացել էր: Պիտի բոլոր հարցերը կարգավորեր, որովհետև այդ գործերը միշտ ինքն է անում: Ամեն ինչ ինքն է կարգավորում, որովհետև այսօր այդ օրն է:

Յեորգն ինչ-որ բան է բղավում Էլսայի հետևից, բայց նա ո՛չ լսում է, ո՛չ էլ պատասխանում: Հագնում է մայրիկի դրած շորերն ու դուրս գալիս աստիճանահարթակ՝ հետևից փակելով դուռը: Տատիկի բնակարանից սխալ հոտ է գալիս: Մաքրության հոտ: Տատիկի իրերով լցված, իրար գլխի շարված տուփերի աշտարակը մինչև նախասենյակ ստվեր է գցում, ասես այլևս գոյություն չունեցող ամեն ինչի հուշարձանը լինի:

Էլսան կանգնում է դռան շեմին՝ անկարող առաջ գնալու: Երեկոյան եկել էր այստեղ, սակայն ցերեկային լույսով շատ ավելի դժվար է: Շատ ավելի ծանր է հիշել ամեն ինչ, երբ արևը թափանցում է վարագույրների արանքից:

թվայնացրել է 1915.info կայքը

Պատուհանի մոտով երկնքում սավառնում են ամպէակները: Հրաշալի առավոտ է, սակայն սարսափելի օր է, որովհետև այսօր այդ օրն է:

Էլսայի մաշկը դեռ վառվում է ցնցուղի տաք ջրից: Դա հիշեցնում է իրեն, թե ինչ տեսք էր ունենում տատիկը, երբ դուրս էր գալիս ցնցուղ ընդունելուց հետո, որովհետև տատիկի ցնցուղը մոտավորապես մեկ տարի է՝ չէր աշխատում: Ու տատիկը, փոխանակ սեփականատերերին խնդրեր, որ հարցը լուծեն, լուծում էր այդ խնդիրն այնպես, ինչպես սովորաբար ինքն էր լուծում. նա օգտվում էր մայրիկի ու Յեորգի բաղնիքից: Ու երբեմն մոռանում էր կոճկել խալաթը, երբ վերադառնում էր նրանց բնակարանից: Իսկ երբեմն էլ խալաթն էր մոռանում: Մի անգամ մայրիկը սարսափելի զայրացել ու մի քառորդ ժամ գոռգոռում էր վրան, որ տատիկը բոլորովին հաշվի չի առնում այն փաստը, որ Յեորգը նույնպես այդ բնակարանում է ապրում: Այդ ժամանակ Էլսան սկսել էր Չարլզ Դիկենսի երկերի ժողովածուն կարդալ, ու քանի որ տատիկը գիրք կարդալու հետ գլուխ չուներ, Էլսան բարձրաձայն էր կարդում, երբ Renault-ով տեղ էին գնում, որովհետև Էլսան ուզում էր կարդալուց հետո մեկի հետ քննարկել դրանք: Հատկապես «Ծննդյան հեքիաթը», որն Էլսան մի քանի անգամ կարդաց, որովհետև տատիկը սիրում էր ծննդյան հեքիաթներ:

Այնպես որ, երբ մայրիկն ասաց, որ տատիկը, Յեորգի հանդեպ հարգանքից ելնելով, չպիտի մերկ վազվզի մի բնակարանից մյուսը, տատիկը՝ դեռևս մերկ, շրջվեց Յեորգի կողմն ու ասաց.

— Դե լավ հա՛, օտար մարդ չես, աղջկաս հետ ես ապրում, ինչքան չլինի:

Հետո այդպես մորեմերկ մինչև գետին խոնարհվում է ու հանդիսավոր ավելացնում.

— Ես մոտալուտ Ծննդյան տոների ոգին եմ, Յեո՛րգ:

Մայրիկը դրա համար չափազանց զայրացած էր տատիկի վրա, բայց փորձում էր հանուն Էլսայի ցույց չտալ: Այնպես որ, Էլսան էլ իր հերթին հանուն մայրիկի փորձում էր ցույց չտալ, թե ինչքան է հպարտանում տատիկով, որ նա կարողանում էր Չարլզ Դիկենս մեջբերել: Բայց ոչ մեկի մոտ էլ առանձնապես ոչինչ չէր ստացվում:

Ի վերջո, Էլսան ներս է մտնում՝ առանց կոշիկները հանելու: Իր կոշիկները խազում են մանրահատակը, դրա համար էլ մայրիկն ասում է, որ դրանցով

թվայնացրել է 1915.info կայքը

բնակարանում ման չգա, բայց տատիկի տանը կարելի է, որովհետև նրա մանրահատակն արդեն այնպիսի տեսք ունի, ասես վրան չմուշկ են քշել: Նախ՝ քանի որ բավական հին է, ու հետո՝ քանի որ տատիկն իսկապես մի անգամ չմուշկ է քշել:

Էլսան բացում է մեծ զգեստապահարանի դուռը: Վորսը լպստում է նրա դեմքը: Նրանից սպիտակուցային սալիկների ու թխվածքի խյուսի հոտ է գալիս: Էլսան երեկ նոր էր անկողին մտել, երբ մտքով անցավ, որ մայրիկը հաստատ Յեորգին կուղարկի նկուղից լրացուցիչ աթոռներ բերելու, որովհետև հետո բոլորը գալու են իրենց մոտ՝ սուրճ խմելու: Որովհետև այսօր այդ օրն է, ու այսպիսի օրերին բոլորը հետո ինչ-որ տեղ սուրճ են խմում:

Մայրիկի ու Յեորգի պահեստը հենց տատիկի պահեստի կողքին է, ու միակ պահեստն է, որտեղից վորսը երևում է նույնիսկ այն բանից հետո, երբ Ալֆը նրբատախտակով փակել է: Այնպես որ, Էլսան գաղտագողի գիշերով ներքև էր իջել՝ չկարողանալով կողմնորոշվել, թե ումից է ավելի շատ վախենում՝ ստվերների՞ց, ուրվականի՞ց, թե՞ Բրիտ-Մարիից, ու վորսին հետը վերև էր բերել:

— Քեզ համար ավելի շատ տեղ կլիներ թաքնվելու համար, եթե տատիկը մահացած չլիներ,– արդարանում է նա,– քանի որ այդ դեպքում պահարանն անդադար կմեծանար: Չնայած եթե տատիկը չմահանար, դու իսկի թաքնվելու կարիք չէիր ունենա,– իսկույն ավելացնում է նա:

Վորսը նորից լպստում է նրա դեմքը, դռան բացվածքից գլուխը դուրս է հանում՝ փնտրելով ուսապարկը: Էլսան վազում է նախասենյակ, բերում է ուսապարկն ու միջից երեք տուփ թխվածք և մի լիտր կաթ է հանում:

— Մոդն էր երեկ երեկոյան մայրիկի մոտ թողել,– վերադառնալով բացատրում է Էլսան, բայց երբ կենդանին կծոտում է նրա ձեռքերը, կարծես պատրաստվում է թխվածքը տուփով ուտել, Էլսան նախազգուշական բարձրացնում է ցուցամատը:

— Երկու տուփն է քոնը, որովհետև մեկը՝ որպես ռազմամթերք, պիտի մնա:

Վորսը թեթևակի գռմռում է, բայց, ի վերջո, հաշտվում է բանակցություններում իր ստորադաս վիճակի հետ ու հնազանդվելով ուտում է երկու տուփերի պարունակությունն ու երրորդի միայն մոտավորապես կեսը: Ինչքան էլ չլինի՝ վորս է, չէ՞, անկախ ամեն ինչից: Տուփի մեջ էլ, անկախ ամեն ինչից, թխվածք է:

Էլսան վերցնում է կաթն ու գնում կաթնացիրը փնտրելու: Նա իրեն մի փոքր դժվարամիտ է զգում, սակայն քանի որ մի քանի տարի է՝ մղձավանջներ չէր տեսնում, փաստորեն առաջին անգամ հիմա է հասկանում, որ կաթնացրի կարիքն ունի: Երբ առաջին անգամ մղձավանջի մեջ իր մոտ ստվեր էր եկել, ինքը փորձել էր վրայից թափ տալ նրան, ինչպես սովորաբար անում են: Փորձում էր համոզել իրեն, որ դա ընդամենը մղձավանջ էր: Բայց ինքը պիտի գլխի ընկներ: Բոլորը, որ գեթ մեկ անգամ եղել են Երկիր-Կիս-Արթունում, լավ գիտեն՝ դա ինչ է:

Այնպես որ, այս գիշեր, երբ նույն երազը նորից տեսավ, հասկացավ, թե ինչ անի, որ հաղթահարի մղձավանջները, ու իր գիշերներն ազատի դրանցից:

— Միրևաս,– վճռականորեն բացականչում է Էլսան վորսին՝ դուրս գալով տատիկի մեկ ուրիշ ավելի փոքր պահարանից՝ հետը դուրս բերելով խառնիճաղանջ իրերի մի մեծ կույտ, որը մայրիկը դեռ չէր հասցրել տեղավորել տուփերի մեջ:

— Մենք պիտի Միրևաս գնանք,– ասում է նա վորսին՝ թափահարելով կաթնացիրը:

Միրևասը Միամասի հարևան թագավորությունն է՝ ամենափոքրը Երկիր-Կիս-Արթունում, այդ պատճառով էլ հաճախ գրեթե մոռացության մատնված: Երկիր-Կիս-Արթունի երեխաները դպրոցում աշխարհագրություն են անցնում, ու վեց թագավորությունները թվարկելու ժամանակ բոլորը մոռանում են Միրևասը, նույնիսկ Միրևասում ապրողները: Որովհետև միրևասցիներն անասելի համեստ, բարեհամբույր ու զգուշավոր արարածներ են, որ ոչ մի դեպքում չեն ուզում մեկի տեղը գրավել կամ նեղություն տալ: Բայց նրանք չափազանց կարևոր առաքելություն ունեն, որը, ըստ էության, ամենակարևորն է մի երկրի համար, որտեղ ամենաբարձր գնահատվողը երևակայությունն է: Միրևասում են կրթվում բոլոր մղձավանջ որսացողները:

Միայն հեքիաթներից հեռու մարդիկ, որոնցից ավելին սպասել չի կարելի, այս իրական աշխարհում կարող են նման հիմարություն դուրս տալ, թե եղածն «ուղղակի մղձավանջ» էր, էլի: Մինչդեռ «ուղղակի մղձավանջ» չի լինում: Երկիր-Կիս-Արթունում մարդիկ գիտեն, որ մղձավանջները կենդանի արարածներ են՝ անորոշության ու տագնապի փոքրիկ մթին քուլաներ, որ վխտում են տների արանքում, երբ բոլորը քնած են՝ փորձելով

թվայնացրել է 1915.info կայքը

ներս սողոսկել դռնից կամ պատուհանից, որպեսզի անհանգստություն ու խառնակություն առաջացնեն: Եվ հենց դրա համար են մղձավանջ որսացողները: Իսկ գործից հասկացողները, բնականաբար, գիտեն, որ մղձավանջ որսալու համար կաթնացիր է պետք, այսպես որ բոլոր մղձավանջ որսացողները կաթնացիր ունեն: Իրենց խելոք կարծողները, որ ոչնչից տեղյակ չեն, կարող են այն շփոթել ամենասովորական փեյնթբոլի հրացանի հետ, որի կողքից ինչ-որ մեկի տատիկը կաթի տուփ է ամրացրել, վրայից էլ պարսատիկ է կպցրել, բայց Էլսան այդ խելոքներից չէ: Ու գիտի՝ ձեռքին ինչ է բռնել: Այնպես որ, անոթը լիցքավորում է կաթով ու պարսատիկի ռետինի մեջ էլ չորաթխվածք է խցկում:

Մղձավանջին չես կարող սպանել, բայց կարող ես լեղաճաք անել: Ու նրանց համար չկա ավելի սարսափելի բան, քան կաթն ու թխվածքը: Գենետիկ ալերգիա ունեն: Շատ երկար պատմություն է: Դրանից ցան ու նման բաներ են սկսվում:

— Դե, թող փորձեն էս գիշեր էլ երևալ, գրողի ծո՛ցը կուղարկեմ,– հայտարարում է Էլսան:

Վորսը խրախուսական գլխով է անում: Չնայած հավանաբար պատճառն այն է, որ աչք է տնկել ռազմամթերքի վրա:

Անսպասելիորեն ճիշտ Էլսայի հետևում հնչում է դռան զանգը, ու նա սարսափած այնպես է ցնցվում, որ հանկարծ վորսի մռութին կաթ է կրակում, բայց վորսն անսահման հիասթափությամբ նկատում է, որ կրակոցն առանց թխվածքի էր:

— Կներե՛ս,– շվարած քրթմնջում է Էլսան, մինչ վորսը թրջված ու լակտոզայի հանդեպ անհանդուրժողականությամբ հեռանում է զենքի փողաբերանից:

Էլսան մի պահ կարծում է, թե զանգողը մղձավանջն է, բայց ընդամենը Յեորգն է: Նա ժպտում է, երբ Էլսան բացում է դուռը, բայց Էլսան ի պատասխան չի ժպտում: Ուղղակի ուշադրություն չի դարձնում: Երևում է, որ Յեորգը վշտացած է:

— Գնում եմ նկուղից աթոռներ բերելու,– ասում է նա՝ փորձելով ժպտալ, ինչպես անում են հայրիկներն այնպիսի օրերին, երբ հատկապես սուր են զգում, որ իրենց կարևորություն չեն տալիս:

Էլսան ուսերն է թոթվում ու դուռը փակում է նրա երեսին: Հետո վորսի մեջքին կանգնած՝ նայում է դիտանցքից ու տեսնում է, որ նա դեռ մեկ որ-

թվայնացրել է 1915.info կայքը

պե շատ տխուր տեսքով մնում է դռան դիմաց: Էլսան ատում է նրան հենց դրա համար: Մայրիկը միշտ ասում է, որ Յեորգն ընդամենը ուզում է, որ Էլսան սիրի իրեն, որովհետև իր համար մեկ չէ: Կարծես Էլսան այդքանը չի հասկանում: Պարզ է, որ նա շատ է ջանք թափում, դրա համար էլ Էլսան չի սիրում նրան: Ինքը, իրոք, չի կարծում, թե չի կարողանա սիրել նրան, եթե փորձի. գիտի, որ հաստատ կստացվի, որովհետև բոլորը սիրում են Յեորգին: Նրա գերունակությունն էլ դա է:

Ուղղակի համ էլ գիտի, որ այդ դեպքում հիասթափվելու է, երբ Կեսիկը ծնվի, ու Յեորգն իսպառ կմոռանա իր՝ Էլսայի գոյության մասին: Ուրեմն ավելի լավ է հենց սկզբից էլ չսիրել:

Եթե մարդկանց չես սիրում, քեզ ցավ չեն կարող պատճառել: Համարյա ութ տարեկան աղջիկը, ում հաճախ են ասում, որ տարբերվող է, այդքանը շուտ է յուրացնում:

Նա ցատկում է վորսի մեջքից: Վորսն ատամներով բռնում է կաթնացիրն ու մտերմաբար, սակայն վճռական քաշում է նրա ձեռքից: Տանում, դնում է աթոռակի վրա՝ Էլսայի ցուցամատի հասանելիությունից դուրս: Բայց թխվածքը չի ուտում: Բոլորին, ովքեր պատկերացնում են, թե վորսերն ինչքան են թխվածք սիրում, հասկանալի է, որ պատճառն Էլսայի հանդեպ ծայրահեղ հարգանքն է:

Դռան զանգը նորից է հնչում: Էլսան թափով բացում է՝ պատրաստվելով կոպտել Յեորգին, երբ հասկանում է, որ Յեորգը չէ:

Թվում է՝ վեց հավերժություն լռություն է տիրում:

— Բարև, Է՛լսա,– շփոթված ասում է սև կիսաշրջազգեստով կինը:

Թեպետ հագին ջինս է, ոչ թե սև կիսաշրջազգեստ: Նրանից անանուխի հոտ է գալիս, ու վախեցած տեսք ունի: Կարծես բեմում կանգնած լինի, իսկ Էլսան էլ ժյուրիի անդամ է, որ պիտի գնահատի Ուիթնի Հյուսթոնի I will always love you երգի նրա կատարումը:

— Բարև,– ասում է Էլսան:

Կինն այնքան դանդաղ է շունչ քաշում, որ Էլսան վախենում է, թե նա կխեղդվի:

— Ես... Ես ահավոր վատ եմ զգում, որ վրադ գոռացի իմ գրասենյակում,– դանդաղ արտաբերում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրանք իրար կոշիկներն են զննում: Էլսան չի կողմնորոշվում, թե իր ներսում փոթորկվող զգացմունքներից որին կառչի:

— Մի՛ անհանգստացեք,– վերջապես արտաբերում է Էլսան:

Կնոջ բերանի անկյունները թեթևակի թրթռում են, մաշկն էլ կարծես մանր ճաքեր է տալիս:

— Ինձ համար անսպասելի էր, որ դու գրասենյակ էիր եկել: Ես այնտեղ շատ այցելուներ չեմ ունենում: Ես... Ես այցելություններից իսկի տեղս չեմ գտնում:

Էլսան ամաչելով գլխով է անում՝ առանց հայացքը կոշիկներից բարձրացնելու:

— Ոչի՛նչ: Կներե՛ք, որ անկապ դուրս տվեցի...,– շշնջում է նա՝ անկարող շարունակելու:

Կինը գլխով է անում ներողամտորեն:

— Իմ սխալն էր: Ինձ համար դժվար է ընտանիքիս մասին խոսել: Տատիկդ փորձում էր խոսեցնել ինձ, բայց ես միայն... Դե, հա... գժվում էի:

Էլսան կոշիկի քթով տրորում է հատակը:

— Մարդիկ գինի են խմում, որ մոռանան ծանր հիշողությունները:

Կինն աչքերը փակում է ու խորը շունչ քաշում:

— Կամ էլ, որ ուժ ունենան հիշելու, կարծում եմ:

Էլսան քիթը քաշում է:

— Դո՞ւ էլ ես կոտրվել: Գայլսիրտի պե՞ս:

— Կոտրվել... Ուրիշ կերպ գուցե:

— Իսկ դու քեզ չե՞ս կարող նորոգել:

— Նկատի ունես, որ հոգեբա՞ն եմ:

Էլսան գլխով է անում:

— Չի ստացվո՞ւմ:

Կինը թեթևակի ժպտում է:

— Բժիշկն ինքն իրեն չի կարող վիրահատել: Մոտավորապես նույն խնդիրն է:

Էլսան նորից գլխով է անում: Ձինսով կինը մի պահ կարծես ուզում է ձեռքով դիպչել նրան, սակայն իրեն զսպում է՝ փոխարենը մտածկոտ քորելով ափը:

— Տատիկդ նամակում գրել էր, որ ուզում է՝ ես քո մասին հոգ տանեմ,– շշնջում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան գլխով է անում:

— Բոլոր նամակներում նույնն է գրել փաստորեն:

— Բարկանո՞ւմ ես:

— Նա ինձ նամակ չի գրել:

Ջինսով կինը մի քանի վայրկյան ճոճվում է, ասես նրան պատահաբար տեղային անզգայացնող են ներարկել: Հետո ձեռքը մտցնում է գետնին դրված տոպրակն ու ինչ-որ իր է հանում:

— Ես... Ես երեկ Հարրի Փոթերի մասին գրքերը գնեցի: Դեռ շատ չեմ հասցրել կարդալ, բայց...

Էլսան նրան է նայում՝ ասես սպասելով, որ կինը հիմա օդում մի քանի պտույտ կտա ու կբղավի՝ կատա՛կ: Բայց նա տեղից չի շարժվում:

— Դու «Հարրի Փոթերը» չե՞ս կարդացել,– բացականչում է Էլսան:

Կինը տարուբերում է գլուխը: Էլսան կարծես ուզում է մի բանից բռնվել, որ ուշագնաց չընկնի:

— Դու կարդացել ես գրասենյակիդ այդ անթիվ գրքերն ու «ՀԱՐՐԻ ՓՈԹԵՐԸ» չե՞ս կարդացել:

Կինը մի քայլ հետ է գնում ու նայում ձեռքերին. բնական ռեակցիա, երբ հանձնվում են համարյա ութ տարեկան երեխայի դատին:

— Հաստատ բազմաթիվ... բազմաթիվ գրքեր կան, որ ես կարդացել եմ, իսկ դու՝ չէ:

— Բայց ո՛չ «Հարրի Փոթերը»:

Կինը բարձրացնում է հայացքը: Էլսան հուսահատ օրորում է գլուխը: Կինը գլուխն իջեցնում է:

— Ես... Ես հասկանում եմ, որ «Հարրի Փոթերը» շատ կարևոր է քեզ համար,– փորձում է արդարանալ նա:

— «Հարրի Փոթերը» կարևոր է բոլորի համար,– բացականչում է Էլսան, կարծես կինը հարցրել էր. «Թթվածինը կարևո՞ր է քեզ համար»:

Կնոջ բերանի շուրջը նորից ճաքեր են հայտնվում: Նա նորից խոր շունչ է քաշում, այնքան խոր, որ ոչ մի ուրիշ համեմատություն հնարավոր չի մտածել այդչափ աներևակայելի խոր շունչ քաշելու համար: Հետո նայում է Էլսայի աչքերին ու ասում.

— Ինձ էլ դուր եկավ, դա էի ուզում ասել: Շատ վաղուց եմ ընթերցանությունից ուժեղ ապրումներ ունեցել: Մեծերը համարյա երբեք այդպես չեն ոգևորվում, ինչպես փոքր ժամանակ. դե հետո բոլոր զգացողությունները

թվայնացրել է 1915.info կայքը

խամրում են: Ցինիզմի աճին համընթաց, կարծում եմ: Ես պարզապես ուզում էի շնորհակալություն հայտնել, որ ինձ հիշեցրիր այդ զգացողությունը:

Էլսան առաջին անգամ էր այդ կնոջից պարզ ու հստակ արտաբերված բառերի այդչափ երկար շարան լսում: Կինը պարզում է տոպրակի պարունակությունը: Էլսան վերցնում է: Գիրք է: Աստրիդ Լինդգրենի «Առյուծասիրտ եղբայրները»: Էլսային քաջ ծանոթ է, քանի որ նրա սիրած հեքիաթներից մեկն է, այն հեքիաթների շարքից, որ Երկիր-Կիս-Արթունից չեն: Նա նույնիսկ մի քանի անգամ բարձրաձայն կարդացել էր այն տատիկի համար Renault-ով տեղ գնալիս: Կառլ ու Յունաթան եղբայրների մասին է, որոնք մահանալուց հետո հայտնվում են Նանգիյալայում, որտեղ կռվում են բռնակալ Տենգիլի ու Կատլա վիշապի հետ:

Կնոջ հայացքը կորցնում է իր հենարանը:

— «Առյուծասիրտ եղբայրներն» են: Ես… Ես կարդացել էի իմ տղաների համար, երբ նրանց տատիկը մահացավ: Չգիտեմ, կարդացե՞լ ես, թե՞ ոչ: Հաստատ կարդացած կլինես,– հապշտապ ինքն իրեն ուղղում է, ու թվում է, թե ուզում է հետ վերցնել գիրքն Էլսայի ձեռքից ու փախչել:

Էլսան տարուբերում է գլուխն ու պինդ բռնում է գիրքը:

— Չէ՛,– ստում է նա:

Նա բավական նրբանկատ է և հասկանում է, որ երբ գիրք են տալիս, պարտավոր ես ձևացնել, թե չես կարդացել: Քանի որ իսկական նվերը մեկին ընթերցանության ապրումներ ընձեռելն է, ոչ թե գիրք ստանալը: Տարրական քաղաքավարություն է, ըստ էության, եթե, իհարկե, բանից անտեղյակ խելոքներից չես:

Ջինսով կինը կարծես թեթևացած է երևում: Նա այնքան խոր շունչ է քաշում, որ Էլսան վախենում է, որ նրա անրակը տեղից դուրս կգա:

— Դու… Դու հարցրիր, թե մենք հիվանդանոցո՞ւմ ենք հանդիպել: Տատիկդ ու ես: Ցունամիից հետո: Բայց ես… Նրանք բոլոր խեղդվածների մարմինները դրել էին մի փոքրիկ հրապարակում, որ հարազատները կարողանային փնտրել իրենց… Դե հետո… ես… այսինքն… ինքն ինձ գտավ դրանց մեջ: Հրապարակում: Ես նստած էի այնտեղ… չգիտեմ՝ ինչքան ժամանակ: Մի քանի շաբաթ: Ոնց որ: Ինքը հետս թռավ, ու ինձ ասաց, որ կարող եմ ապրել այստեղ, մինչև որ որոշեմ՝ ուր եմ գնալու:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրա շրթունքները թրթռում էին՝ սեղմվելով ու հեռանալով իրարից, ասես էլեկտրական հոսանքից:

— Ես էլ մինչև հիմա այստեղ եմ: Ուղղակի մնացի ու մնացի:

Էլսան հայացքը հառել է կոշիկներին, այս անգամ իր կոշիկներին:

— Գալո՞ւ ես էսօր,– հարցնում է նրան:

Աչքի ծայրով տեսնում է, որ կինը տարուբերում է գլուխը: Տեսնում է, որ նա կարծես ուզում է պոկվել ու փախչել:

— Ես չեմ կարծում, որ ես... Ինձ թվում է՝ քո տատիկն ահավոր հիասթափվել էր ինձնից:

— Գուցե հիասթափվել էր, որովհետև դու ինքդ էլ էիր հիասթափվել քեզնից,– ասում է Էլսան:

Կնոջ կոկորդից խզզոցներ են լսվում: Մի որոշ ժամանակ է անցնում, մինչև Էլսան հասկանում է, որ դա ծիծաղի պես մի բան է: Ասես գտնվել էր կոկորդի՝ վաղուց չօգտագործված մի հատվածի բանալին, որը բացում է այն ու սեղմում հին փոխարկիչը:

— Դու իսկապես ուրիշ ես, փոքրի՛կս,– ասում է կինը:

— Ես փոքրիկ չեմ: Ես արդեն համարյա ութ եմ,– ուղղում է նրան Էլսան:

Կինն աչքերը փակում է ու գլխով անում:

— Հա՛, կներես, իհարկե... Շուտով ութ ես: Դու այն օրերին... Դու նորածին էիր, որ ես այս տուն եկա: Նոր էիր ծնվել:

— Ոչ մի վատ բան չկա, որ ուրիշ եմ. տատիկն ասում էր, որ տարբերվող մարդիկ կարող են փոխել աշխարհը,– ասում է Էլսան:

Կինը դանդաղ գլխով է անում:

— Հա՛, կներես: Ես ... Ես գնամ: Ուղղակի ուզում էի ներողություն խնդրել:

— Ոչինչ,– մրմնջում է Էլսան ու ավելացնում,– շնորհակալ եմ գրքի համար:

Կնոջ աչքերը թրթռում են, բայց նա նորից նայում է ուղիղ Էլսայի աչքերին:

— Ընկերդ վերադարձա՞վ: Գայլը... թե ի՞նչ էիր ասում նրան:

Էլսան թափ է տալիս գլուխը: Էլսային թվում է, որ կնոջ հայացքում անկեղծ հոգատարություն է ճառագում:

— Ոչի՛նչ: Պատահում է, որ անհետանում է: Մի՛ անհանգստացիր: Ուղղակի մարդկանցից վախենում է ու մեկ-մեկ անհետանում: Բայց միշտ վերադառնում է: Նրան ժամանակ է պետք,– ասում է կինը:

— Ինձ թվում է՝ նրան օգնություն է պետք,– աղերսանքով ասում է Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դժվար է օգնել նրան, երբ ինքն իրեն օգնել չի ուզում,– շշնջում է կինը:

— Ով ինքն իրեն օգնելու ցանկություն ունի, գուցե ուրիշների օգնության կարիքն իսկի էլ չունի,– առարկում է Էլսան:

Կինը լուռ գլխով է անում:

— Ես պիտի գնամ,– կրկնում է նա:

Էլսան ուզում է կանգնեցնել նրան, բայց կինն արդեն աստիճաններով իջնում էր: Ու արդեն գրեթե անհետացել էր ներքևի հարկում, երբ Էլսան կախվում է բազրիքից ու բղավում.

— Հետո գտա՞ր նրանց: Հրապարակում գտա՞ր քո տղաներին:

Կինը կանգ է առնում: Ամուր բռնվում է բազրիքից:

— Գտա:

Էլսան կծում է շրթունքը:

— Դու հավատո՞ւմ ես, որ մահից հետո կյանք կա:

Կինը վերև է նայում:

— Բարդ հարց է:

— Իսկ Աստծուն հավատո՞ւմ ես,– հարցնում է Էլսան:

— Երբեմն դժվար է Աստծուն հավատալ,– ասում է կինը:

— Որովհետև ցունամին չկանգնեցրե՞ց:

Կինը փակում է աչքերը:

— Որովհետև ցունամին չկանգնեցրեց:

Էլսան գլխով է անում:

— Դա հատուկ անուն ունի՝ «Թեոդորիա»: Վիքիպեդիայում եմ կարդացել:

— Նկատի ունես «Թեոդի՞ցիա»,– ուղղում է կինը:

— Դե, էդ էլ ասում էի, էլի,– սրտնեղում է Էլսան:

Կինը գլխով է անում, իբր այդպես էլ կա, չնայած ամենևին այդպես չէր ասել:

— Մարդիկ ասում են, որ հավատը լեռներ է շարժում,– շարունակում է Էլսան՝ իրականում չհասկանալով, թե ինչու, որովհետև ամենաշատը չէր ուզում կնոջը բաց թողնել, քանի չէր հարցրել այն, ինչ վաղուց էր ուզում հարցնել:

— Այո՛, լսել եմ,– ասում է կինը:

Էլսան թափահարում է գլուխը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց էնքան էլ ճիշտ չէ: Որովհետև էդ խոսքը Միամասից է մեզ հասել՝ Հավատ անունով մի հսկայից: Նա աներևակայելի ուժեղ էր: Բայց դա շատ երկար պատմություն է, էնպես որ հիմա ուղղակի չեմ հասցնի պատմել:

Կինն ըմբռնումով գլխով է անում: Բայց Էլսան, այնուամենայնիվ, շարունակում է:

— Հսկայի անունը Հավատ էր, ու նա կարողանում էր լեռները տեղից շարժել, որովհետև հսկա էր: Իսկ հսկաները սարսափելի ուժեղ են:

Էլսան լռում է: Ու մտածկոտ՝ շրթունքներն իրար է սեղմում:

— Շատ լավ, էնքան էլ ՍՈՍԿԱԼԻ երկար պատմություն չէ...

Կինն ակնհայտորեն աստիճաններով ներքև փախչելու առիթ էր փնտրում: Էլսան արագ շունչ է քաշում:

— Բոլորն ինձ ասում են, որ ես հիմա կարոտում եմ տատիկին, ու որ դա կանցնի, բայց ես վստահ չեմ:

Կինը նորից նրան է նայում հոգատար հայացքով:

— Ինչո՞ւ չէ:

— Քեզ մոտ էլ չի անցել, չէ՞:

Կնոջ կոպերը կիսով չափ իջնում են:

— Դե մի քիչ տարբեր է:

— Ինչո՞վ:

— Տատիկդ ծեր էր:

— Ինձ համար՝ չէ: Ես ընդամենը յոթ տարի էի նրան ճանաչում:

Կինը չի պատասխանում: Էլսան ձեռքերն իրար է շփում, ինչպես սովորաբար Գայլսիրտն է անում:

— Համարյա ութ,– ուղղում է ինքն իրեն:

Այդ ժամանակ կինը գլխով է անում ու շշնջում.

— Հա: Շուտով... Շուտով ութ կլինի:

— Դու պիտի գաս էսօր,– բղավում է Էլսան կնոջ հետևից, բայց նա արդեն անհետացել էր:

Էլսան լսում է՝ ինչպես է նրա բնակարանի դուռը փակվում, ու հետո լռություն է տիրում, մինչև որ շենքի մուտքի դռան մոտից լսվում է հայրիկի ձայնը:

Այդ ժամանակ նա զգաստանում է, սրբում արցունքներն ու ստիպում վորսին նորից թաքնվել պահարանում՝ կաթնացրի ռազմամթերքի կեսը որպես կաշառք տալով: Հետո առանց կողպելու՝ պարզապես ծածկում է տատիկի բնակարանի դուռն ու վազում ներքև, և շատ չանցած՝ արդեն

թվայնացրել է 1915.info կայքը

լուռ պառկած է Audi-ի՝ մեջքն ինչքան հնարավոր է հետ գցած նստարանին ու ավտոմեքենայի ապակե առաստաղից դուրս է նայում:

Ամպէակներն ավելի ցածր են սավառնում: Հայրիկի հագին կոստյում է: Նա լուռ է: Շատ անսովոր է, քանի որ հայրիկը գրեթե երբեք կոստյում չի հագնում: Բայց այսօր այդ օրն է:

— Հավատո՞ւմ ես, որ Աստված կա, հայրի՛կ,– հարց է տալիս Էլսան այնպիսի հնչերանգով, ինչից հայրիկը միշտ հանկարծակիի է գալիս, ասես վրան ջրով լի փուչիկ են նետել:

Էլսան գիտի, քանի որ տատիկը սիրում էր ջրով լցված փուչիկներ, իսկ հայրիկն այդպես էլ չսովորեց, որ պետք չէ անմիջապես նրա պատշգամբի տակով անցնել:

— Չգիտեմ,– ասում է նա:

Էլսան ատում է նրան, որ կարգին պատասխան չի տալիս, բայց և սիրում է, որ չի ստում: Audi-ն կանգնում է բարձր, սև պողպատե դարպասի առջև: Նրանք նստած սպասում են:

— Ես նմա՞ն եմ տատիկին,– հարցնում է Էլսան՝ առանց հայացքը երկնքից կտրելու:

— Տեսքո՞վ,– տարակուսած հարցնում է հայրիկը:

— Դե՛, ո՞նց ասեմ, դե բնույթով,– հոգոց է հանում Էլսան, ինչպես համարյա ութ տարեկանը կաներ հոր նման հարցից:

Հայրը մի պահ կարծես պայքարում է իր շփոթմունքի դեմ, ինչպես հայրերը, որ համարյա ութ տարեկան դստրիկ ունեն: Ասես Էլսան խնդրել է բացատրել, թե երեխաները որտեղից են հայտնվում: Հերթական անգամ:

— Քի՛չ ասա էդ քո դե-երը: Միայն քիչ բառապաշարո...,– փոխարենը սկսում է նա, որովհետև չասել չի կարող:

Որովհետև ինքն այդպիսին է: Որովհետև կարծում է, որ չափազանց կարևոր է, որ մարդ ասի «այդպես», ոչ թե «էդպես»:

— Թքա՛ծ,– վրա է բերում Էլսան շատ ավելի չարացած, քան կուզենար. պարզապես իսկի տրամադրություն չունի այսօր նրա ուղղումները լսելու:

Թե չէ իրար ուղղելը նրանց սիրած զբաղմունքն է, որը երկուսն էլ սիրում են: Հայրիկը բառերի գանձատուփ է պահում, որի մեջ Էլսան լցնում է իր սովորած բոլոր դժվար բառերը, ինչպես՝ «լակոնիկ-սեղմ», «հավակ-

թվայնացրել է 1915.info կայքը

նոտ», «կոշկաթի»: Ու ամեն անգամ, երբ բառերի գանձատուփը լցվում է, նա հայրիկից iPad-ի համար էլեկտրոնային գրքի նվեր-քարտ է ստանում: Այդպիսով՝ Էլսան հավաքել էր ամբողջ «Հարրի Փոթերը», չնայած գիտեր, որ հայրիկը կասկածանքով է վերաբերվում «Հարրի Փոթերին», քանի որ չի հասկանում բաներ, որ իրականությունից չափազանց հեռու են:

— Կներես,– մրմնջում է Էլսան:

Հայրիկը խրվում է նստարանի մեջ: Երկուսն էլ մրցում են, թե ով է ավելի անհարմար զգում: Հետո, արդեն պակաս երկմտելով, հայրիկն ասում է.

— Հա՛: Դու շատ նման ես նրան: Քո ամենալավ հատկանիշները նրանից ու մայրիկից են:

Էլսան ոչինչ չի ասում, որովհետև համոզված չէ, որ այդ պատասխանն էր ուզում լսել: Հայրիկն էլ է լուռ, որովհետև վստահ չէ, որ այդպես էր պետք ասել: Էլսան ուզում է նրան ասել, որ կուզենար նրա մոտ ավելի շատ ապրել, որ երկու շաբաթը մեկ այցելելը բավարար չէ: Ուզում է բղավել, որ երբ Կեսիկը ծնվի ու սովորական երեխա լինի, Յեորգն ու մայրիկն այլևս չեն ուզենա Էլսային իրենց մոտ պահել, որովհետև բոլոր ծնողները ուզում են սովորական նորմալ երեխա ունենալ, ոչ թե տարբերվող: Ու Կեսիկն Էլսայի կողքին անընդհատ կհիշեցնի բոլորին այդ տարբերության մասին: Ու Էլսան ուզում է բղավել, որ տատիկը սխալվում էր. տարբերվող լինելը միշտ չէ, որ լավ է, որովհետև տարբերվելու պատճառը մուտացիան է, ու Իքս մարդկանցից գրեթե ոչ մեկն ընտանիք չունի:

Նա ուզում է գոռալ: Բայց ոչինչ չի ասում: Որովհետև գիտի, որ հայրիկը չի հասկանալու: Ու գիտի, որ հայրը չի ցանկանա, որ ինքն ավելի հաճախ մնա իր ու Լիզետի մոտ, քանի որ Լիզետը իր սեփական երեխաներն ունի: Սովորական, չտարբերվող երեխաներ:

Հայրիկը լուռ նստած է այնպիսի տեսքով, ինչպիսին ունենում է մարդը, որը չի ուզում կոստյումով լինել: Բայց հենց որ Էլսան բացում է Audi-ի դուռը, որ դուրս ցատկի, անվճռական շրջվում է նրա կողմն ու կամաց ասում.

— Բայց մեկ-մեկ պահեր են լինում, որ հոգուս խորքում հույս եմ ունենում, Է՛լսա, որ ոչ բոլոր ԼԱՎԱԳՈՒՅՆ հատկություններդ են մայրիկից ու տատիկից:

Էլսան փակում է աչքերն ու ճակատը դնում նրա ուսին ու մատները խցկում է գրպանները՝ պտտելով կարմիր նշամատիտի կափարիչը, որ հայրն էր տվել իրեն փոքր ժամանակ, որպեսզի կարողանա ինքն իր սխալներն ուղղել: Դա իր՝ երբևէ ստացած լավագույն նվերն էր հայրիկից:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ, առհասարակ որևէ մեկից:

— Քեզնից բառերն եմ ստացել,– շշնջում է նա:

Հայրը փորձում է աչքերից առկայծող հպարտությունը թաքցնել, բայց Էլսան նկատում է: Նա ուզում է պատմել, որ ուրբաթ օրը խաբել էր, որ ինքն էր մայրիկի հեռախոսից հաղորդագրություն ուղարկել, թե կարիք չկա իրեն դպրոցից վերցնելու: Սակայն չի ուզում հայրիկին հիասթափեցնել ու լռում է, որովհետև ոչ մեկին չես հիասթափեցնի, եթե ոչինչ չես ասում: Բոլոր համարյա ութ տարեկանները գիտեն:

Հայրիկը համբուրում է նրա մազերը: Էլսան բարձրացնում է գլուխն ու իբր իմիջիայլոց հարցնում է.

— Դու ու Լիզետը ուզո՞ւմ եք էլի երեխաներ ունենալ:

— Չեմ կարծում,– ասում է հայրիկը թախծոտ, բայց աներկբա:

— Ինչո՞ւ չէ:

— Ինչքան ունենք, հերիք է:

Բայց հնչում է այնպես, կարծես ցանկանում է ասել՝ ավելի քան հերիք է: Կամ, համենայնդեպս, այդպես է թվում:

— Իմ պատճառո՞վ է, որ չես ուզում էլի երեխա ունենալ,– հարցնում է Էլսան՝ հուսալով, որ հայրիկը «ոչ» կասի:

— Հա,– ասում է նա:

— Որովհետև ես տարբերվո՞ղ եմ,– շշնջում է Էլսան:

Հայրը չի պատասխանում: Էլսան չի էլ սպասում: Բայց հենց այն պահին, երբ Էլսան պիտի դրսից փակեր Audi-ի դուռը, հայրիկը ձգվում է նստարանի վրայով ու հասցնում բռնել նրա մատների ծայրերը՝ անվճռական հայացքով նրան նայելով: Ինչպես միշտ: Սակայն հետո շշնջում է.

— Որովհետև դու կատարյալ ես:

Էլսան երբեք չէր լսել, որ նա այդքան «համոզվածագույն» խոսեր: Եթե բարձրաձայն ասեր, հայրիկը կասեր, թե այդպիսի բառ չկա: Ու հենց դրա համար էլ է շատ սիրում նրան:

Յեորգը տխուր տեսքով կանգնած է դարպասի մոտ: Հագին նույնպես կոստյում է: Էլսան սուրում է նրա կողքով: Մայրիկը բռնում է նրան: Աչքերի տակ հոսել է թարթիչների ներկը: Ու Էլսան դեմքով սեղմվում է Կեսիկին: Մայրիկի շորից հագուստի խանութի հոտ է գալիս: Ամպէակները ցածր են թռչում:

Այդ օրն Էլսայի տատիկի թաղման օրն է:

թվայնացրել է 1915.info կայքը

21



ՍՏԵԱՐԻՆ

Մի հեքիաթասաց էր ապրում Երկիր-Կիս-Արթունում, որն ասում էր, թե բոլորս էլ ներքին ձայն ունենք, որը միշտ շշնջում է մեզ, թե ինչ պիտի անենք, և անհրաժեշտ է պարզապես լսել այն: Էլսան երբեք անվերապահ չէր հավատում դրան, քանի որ իրեն դուր չէր գալիս այն միտքը, որ իր մեջ ինչ-որ անկախ ձայն կա նստած: Տատիկն էլ միշտ ասում էր, որ միայն հոգեբաններն ու աղանդերի պատառաքաղով դիմացինին սպանելու պատրաստ մարդիկ կարող են ընդունել «ներքին ձայնը»: Տատիկն առանձնապես չէր սիրում աղանդերի պատառաքաղներ, ոչ էլ հոգեբանություն, չնայած որ ջանք ու եռանդ չէր խնայել սև կիսաշրջազգեստով կնոջ դեպքում:

Բայց քիչ անց, անկախ ամեն ինչից, Էլսան իր գլխում պարզ ու հստակ ձայն կլսի, որը ոչ թե շշնջալու, այլ աղաղակելու է: Գոռալու է՝ վազի՛ր: Ու Էլսան գլխապատառ փախչելու է, իսկ ստվերը՝ հետևից:

Եկեղեցի մտնելիս նա, իհարկե, դեռ ոչնչից տեղյակ չէ: Հարյուրավոր անծանոթների զրույցների խուլ մրմնջոցները մեքենայի փչացած ստերեո համակարգի աղմուկի պես բարձրանում են առաստաղ: Խելոքների ամբոխը նրա կողմն է ցույց տալիս ու թիկունքից քրթմնջում: Նրանց հայացքներից ինքը շնչահեղձ է լինում:

Էլսան նրանց չի ճանաչում ու դավաճանված է զգում իրեն. տատիկին ուրիշների հետ կիսել չի ուզում: Չի ուզում մտածել, որ տատիկն իր միակ ընկերն էր, բայց հարյուրավոր ուրիշ ընկերներ ուներ: Չի ուզում տատիկին կիսել ոչ մեկի հետ՝ ո՛չ ողջ, ո՛չ էլ մահացած:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա, վերջին ուժերը լարած, կենտրոնանում է, որ ճեղքելով անցնի ամբոխի միջով՝ չուզենալով զգացնել տալ նրանց, թե ուր որ է կընկնի, քանի որ ուժասպառված այլևս ի վիճակի չէ նույնիսկ սգալու: Եկեղեցու հատակը կարծես կուլ է տալիս ոտքերը, իսկ առջևում դրված դագաղն այրում է աչքերը:

«Մահվան ամենամեծ զորությունն այն չէ, որ տանում է մարդկանց, այլ որ մնացողների մոտ սպանում է ապրելու ցանկությունը»,– մտածում է նա՝ ոչ մի կերպ չհիշելով, թե որտեղից է լսել այդ միտքը: Պիտի որ Երկիր-Կիս-Արթունից եկած լինի, չնայած հաշվի առնելով տատիկի վերաբերմունքը մահվան հանդեպ՝ հազիվ թե: Մահը տատիկի ոխերիմ թշնամին էր: Դրա համար նա երբեք չէր ուզում խոսել այդ մասին: Ու հենց դրա համար էլ վիրաբույժ էր դարձել, որ ինչքան կարող էր, կռիվ տար մահվան հետ:

Բայց հնարավոր է, որ Միփլորիսից լիներ, ենթադրում է Էլսան: Տատիկը երբեք չէր ուզում Միփլորիս գնալ, երբ իրենք Երկիր-Կիս-Արթունում էին, բայց հազվադեպ, երբ Էլսան շատ էր նվնվում, տեղի էր տալիս: Երբեմն էլ Էլսան մենակ էր քշում այնտեղ, երբ տատիկը, Միամասի պանդոկներից մեկում նստած, պոկեր էր խաղում ինչ-որ տրոլի հետ կամ ձյունահրեշտակի հետ գինու որակի մասին էր վիճում:

Միփլորիսը Երկիր-Կիս-Արթունի թագավորություններից ամենագեղեցիկն է: Ծառերը երգում են այնտեղ, խոտը մերսում է ներբաններդ, ու նոր թխած հացի բույրն է ամենուր: Տներն այնքան գեղեցիկ են, որ դրանց նայելիս ապահովության համար անհրաժեշտ է նստել, սակայն այդ տներում ոչ ոք չի ապրում: Դրանք պահեստների են վերածվել, քանի որ բոլոր հեքիաթային արարածները Միփլորիս են գալիս իրենց վշտերով, և այնտեղ են պահվում իրենց բոլոր վշտերը: Բոլոր հեքիաթային հավերժությունների ընթացքում այդպես է:

Երբ մի դժբախտություն է պատահում, իրական աշխարհի մարդիկ սովորաբար ասում են, որ վիշտը, կարոտն ու ցավը կմեղմանան ժամանակի հետ, բայց այդպես չէ: Վիշտն ու կարոտը մշտատև են, բայց եթե ստիպված լինեինք մեր կյանքի մնացած մասն ապրել այդ բեռով, պարզապես չէինք դիմանա. վիշտը կջլատեր մեզ: Այնպես որ, մենք, ի վերջո, ճամպրուկների մեջ փակում ու մի հեռու տեղ ենք խցկում այն:

Ահա՛ թե ինչ է Միփլորիսը: Երկարատև դեգերումներից հետո աշխարհի տարբեր կողմերից այս թագավորություն են հասնում միայնակ

թվայնացրել է 1915.info կայքը

հեքիաթային ճամփորդները՝ վշտով ու կսկիծով լցված տձև ուղեբեռը քարշ տալով: Այստեղ կարելի է թողնել այն ու նորից կյանք վերադառնալ: Ու երբ ճամփորդները թողնում են այն, հետ դառնալիս թեթևաքայլ են շարժվում, քանի որ Միփլորիսի դիրքի շնորհիվ արևը միշտ առջևից է, քամին՝ հետևից:

Միփլորիսցիները հավաքում են վշտերով լի բոլոր ճամպրուկները, պայուսակները, տոպրակները և նշումներ են անում փոքրիկ նոթատետրերում: Մեծ խնամքով դասակարգում են բոլոր տեսակի վշտերն ու կարոտները՝ ըստ պատասխանատվության ոլորտի, ապա տեղավորում են համապատասխան պահեստում ու ցուցակագրում: Միփլորիսում բացարձակ կարգուկանոն է տիրում, և ամեն տեսակ վիշտ ու ցավ պահելու համապարփակ կանոններ են սահմանվել՝ չափազանց մանրակրկիտ դասակարգումներով: Տատիկը, իհարկե, միփլորիսցիներին «անիծյալ բյուրոկրատներ» էր անվանում թղթաբանության համար, որ ստիպված էին լրացնել նրանք, ովքեր եկել էին վիշտը թողնելու: «Բայց հո չի՞ կարելի վշտի հարցն անկազմակերպ թողնել»,– ասում էին միփլորիսցիները: Այդ դեպքում բոլորն ամենուրեք կտխրեին՝ չկարողանալով սփոփվել:

Միփլորիսը Երկիր-Կիս-Արթունի ամենից փոքր թագավորությունն էր, բայց Մարտ-Ան-Վերջից հետո դարձավ ամենամեծը: Տատիկը չէր սիրում այնտեղ գնալ, որովհետև պահեստների կողքին հաճախ էին հանդիպում իր անունով ցուցանակները:

Էլսան հիշում է, որ հենց Միփլորիսում են շատ խոսում ներքին ձայների մասին: Միփլորիսում կարծում են, թե ներքին ձայները մահացածներն են, որ վերադառնում են՝ իրենց սիրելիներին օգնելու համար: Տատիկը նրանց «աղանդերիպատառաքաղագլուխներ» էր անվանում:

Էլսային իրական աշխարհ է վերադարձնում հայրիկի ձեռքը, որ զգուշորեն իջնում է ուսին: Լսում է նրա ձայնը, երբ շշնջում է մայրիկին. «Ամեն ինչ շատ լավ ես կազմակերպել, Ո՛ւլրիկա»: Աչքի պոչով տեսնում է, որ մայրիկը ժպտում է և գլխով եկեղեցու նստարաններին դրված օրվա ծրագիրն է ցույց տալիս ու ասում. «Շնորհակալ եմ, որ ձևավորեցիր: Շատ գեղեցիկ տառատեսակ է»:

Էլսան նստում է առջևի փայտե նստարանի ամենահեռու ծայրին ու հայացքը հառում է գետնին, մինչև որ աղմուկը մարում է, ու մտքերը խեղդվում են ծափահարության խուլ ձայների մեջ, որ առաջանում են

թվայնացրել է 1915.info կայքը

միաժամանակ փայտե նստարաններին իջնող հարյուրավոր հետույքների դրմփոցի արձագանքից: Եկեղեցին այնքան բազմամարդ է, որ շատերը կանգնած են մնում պատերի տակ: Նրանցից շատերը ծայրահեղ տարօրինակ հագուստներով են, կարծես իրենց շորերը վիճակախաղում շահած լինեն մեկի տանը, որ լվացքի տեսակավորման հրահանգներից բոլորովին գաղափար չունի:

Էլսան մտածում է, որ կարելի է «վիճակախաղ» բառը բառերի գանձատուփը գցել: Փորձում է կենտրոնանալ այդ մտքի վրա: Բայց խոսակցություն է լսում մի լեզվով, որ չի հասկանում, ու ընթացքում իր աղավաղված անունն է լսում և դրանից իսկույն իրականություն է վերադառնում: Տեսնում է անծանոթների, որ բացահայտ իրեն են ցույց տալիս: Էլսան հասկանում է, որ նրանք գիտեն, թե ինքն ով է, ու դրանից ահավոր կատաղում է, որովհետև երբ ծանոթ դեմք է տեսնում պատի տակ կանգնած ամբոխի մեջ, դժվարանում է անմիջապես ճանաչել նրան:

Երբեմն, հայտնի մեկին սրճարանում նստած տեսնելով, բնազդաբար բացականչում ես՝ ողջո՛ւյն, մինչև գիտակցում ես, որ ուղեղդ է ազդանշան ուղարկել, թե ծանոթ է, բարևի՛ր, նախքան կհասցնես իրոք ճանաչել և հասկանալ, որ ուղղակի հեռուստացույցից է ծանոթ: Ուղեղդ պարզապես սիրում է քեզ վատ վիճակի մեջ գցել:

Դեմքը մի պահ անհետանում է մեկի ուսի հետևում: Երբ նորից հայտնվում է, ուղիղ Էլսային է նայում: Ռևիզորն է, որ երեկ եկել էր՝ բնակարանների վաճառքի մասին խոսելու: Բայց հիմա քահանայի հանդերձանքով է: Նա մեկ անհետանում է ուրիշի ուսի հետևում, ապա նորից է հայտնվում: Նորից Էլսային է նայում ու աչքով անում:

Մեկ ուրիշ քահանա սկսում է խոսել եկեղեցու խորանի մոտ, ու Էլսան մի պահ միայն ուղղվում է՝ նրան լսելու, ապա նորից հետ է դառնում ռևիզոր քահանայի կողմը: Բայց ռևիզոր քահանան նորից անհետացել էր բազմաթիվ ուսերի հետևում: Որոշ ուսերի վրա գլուխներ կան, որ նայում են Էլսային ու ժպտում, ինչպես մարդիկ, որ նկարից ճանաչելով երեխային՝ ժպտում են նրան՝ չհասկանալով, որ երեխայի համար սարսափելի տհաճ է: Տհաճ է: Իրենց մեծ ու խելոք համարողներին տեսեք: Էլսան զզվում է մարդկանցից, որ տեսել են իր վաղ մանկության լուսանկարները, երբ նույնիսկ ինքն իրեն չի հիշում: Մտածում է, որ բոլոր նորմալ մարդիկ ատում են, երբ ծնողներն իրենց շատ փոքր ժամանակվա լուսանկարներն են

թվայնացրել է 1915.info կայքը

ցույց տալիս, քանի որ այնպիսի զգացողություն է, ասես մեկը հիշողությունդ գողանում է քեզնից:

Եկեղեցու կին քահանան խոսում է տատիկի մասին, հետո՝ Աստծո, բայց Էլսան չի լսում: Կասկածում է, թե տատիկը նման բան կուզեր: Ինքը բոլորովին վստահ չէ, որ տատիկը սիրում էր եկեղեցին: Տատիկն ու Էլսան գրեթե երբեք չէին խոսում Աստծո մասին, քանի որ Աստված տատիկի համար կապված էր մահվան հետ:

Եվ սա կեղծ է, այս ամեն ինչը պլաստիկ է ու գրիմ արած: Իբր ամեն ինչ լավ կլինի, հենց որ հուղարկավորությունն ավարտվի: Էլսայի համար լավ չի լինելու, վստահ է՝ ոչի՛նչ լավ չի լինելու: Ինքը գիտի: Սառը քրտինքն է պատում մարմինը: Սարսափելի տարօրինակ շորերով անծանոթներից ոմանք մոտենում են բարձրախոսին ու խոսում են: Մի քանիսն օտար լեզվով են խոսում, իսկ մի ուրիշ ծեր տատիկ թարգմանում է մյուս բարձրախոսով: Բայց ոչ ոք չի արտաբերում «մահ» բառը: Բոլորն ասում են, որ տատիկը հեռացել է, կամ իրենք տատիկին կորցրել են: Ոնց որ տատիկը չորացնող մեքենայում անհետացած գուլպա լինի: Մի քանիսը լաց են լինում, բայց Էլսան չի կարծում, թե նրանք դրա իրավունքն ունեն, որովհետև մահացածն իրենց տատիկը չէր: Ու նրանք նաև իրավունք չունեն Էլսային զգացնել տալու, որ տատիկն ուրիշ երկրներ ու թագավորություններ ուներ, որտեղ երբեք Էլսային հետը չէր տարել:

Երբ մի գեր տիկին (այնպիսի սանրվածք ուներ, ասես լոգարանում նստած՝ տոստերով էր սանրվել) սկսում է բանաստեղծություններ կարդալ: Էլսան որոշում է, որ արդեն իսկապես բավական է, ու ամբոխը ճեղքելով՝ անցնում է նստարանների արանքով: Լսում է՝ ինչպես է մայրիկն իր հետևից ինչ-որ բան շշնջում, սակայն արագ սահելով՝ անցնում է քարե փայլուն հատակի վրայով ու նետվում է եկեղեցու դարպասներից դուրս, նախքան մեկը կհասցներ գալ հետևից:

Զմեռային օդից այնպիսի զգացողություն է ունենում, ասես իրեն մազերից բռնած դուրս են քաշել եռման բաղնիքից: Ամպէակները ճախրում են ցածր ու չարագուշակ: Էլսան քայլում է դանդաղ՝ խոր ներշնչելով դեկտեմբերյան քամիները, ու աչքերի առաջ մթնում է: Սպասում է Հողմին: Հողմն Էլսայի սիրած գերհերոսներից է, որովհետև նրա գերունակությունը եղանակը

թվայնացրել է 1915.info կայքը

փոխելն է: Նույնիսկ տատիկն էր ընդունում, որ դա արտակարգ գերունակություն է:

Էլսան հույս ունի, որ Հողմը կգա ու կփչի կտանի այդ անիծյալ եկեղեցին՝ իր ամբողջ անիծյալ բակով: Ու անիծյալ ամեն ինչը:

Ներսում տեսած դեմքերը դրոշմվել են նրա ցանցաթաղանթին: Տեսած մարդն իրո՞ք ռևիզորն էր: Իսկ Ալֆը կանգնա՞ծ էր ներսում: Կարծես թե: Մի ուրիշ դեմք էլ էր տեսել, որին ճանաչել էր: Կարծես կին ոստիկանն էր՝ կանաչ աչքերով: Էլսան արագ քայլում է, որ շուտ հեռանա եկեղեցուց, որովհետև չի ուզում՝ նրանցից որևէ մեկը դուրս գա իր հետևից ու հարցնի, թե ամեն ինչ լա՞վ է: Որովհետև ամենևին էլ լավ չէ: Ու երբեք լավ չի լինելու: Ինքն ուզում է փախչել գվվոցից ու խոսակցություններից: Իր մասին: Իր հետևից: Իր վերաբերյալ: Տատիկը երբեք չէր խոսում Էլսայի հետևից:

Չէր խոսում: Երբեք չէր խոսում իր հետևից:

Էլսան հասցնում է 50 մետր գնալ տապանաքարերի կողքով, երբ ծխի հոտ է զգում: Սկզբում այն մի տեսակ ծանոթ է թվում, նույնիսկ թարմացնող: Այնպիսին, որ Էլսայի մոտ շրջվելու ու գրկելու և խորը շնչելու ցանկություն է առաջացնում, ինչպես թարմ լվացած բարձի երեսը կիրակի առավոտյան: Սակայն քիչ անց ամեն ինչ փոխվում է:

Եվ նա հստակ լսում է այդ ներքին ձայնը:

Մինչև շրջվելն ինքն արդեն հասկանում է՝ ով է տապանաքարերի արանքում կանգնած: Նա ընդամենը մի քանի մետրի վրա է իրենից՝ ծխախոտն անփութորեն մատների արանքում պահած: Եկեղեցուց արդեն բավականին հեռու են՝ Էլսայի ճիչը լսելու համար, իսկ նա հանգիստ ու սառնասիրտ շարժումով փակում է հետդարձի ճանապարհը:

Էլսան նայում է դարպասի կողմը: Մի 20 մետր կլինի: Երբ գլուխը շրջում է, անծանոթը իր կողմն է նետվում:

Եվ լսում է ներքին ձայնը: Տատիկի ձայնն է: Այն չի շշնջում: Տատիկը բղավում է՝ վազի՛ր:

Էլսան զգում է, որ նրա կոշտ ափը դիպչում է իր թևին, բայց դուրս է պրծնում նրա ձեռքից: Սլանում է, ու քամին ճանկռտում է աչքերը, ինչպես եղունգները՝ եղյամով պատված մեքենայի ապակիները: Չգիտի՝ ինչքան է վազում: Հավերժություն: Իրականության հավերժություն: Եվ մինչ ամեն

թվայնացրել է 1915.info կայքը

անգամ շնչելիս օդը քերծում էր թոքերը, ուղեղում բյուրեղանում են անծանոթի հայացքն ու ծխախոտը: Էլսան հանկարծ հասկանում է, որ նա կաղում է: Դրա համար էր հետ ընկել: Ինքը մի վայրկյան էլ դանդաղեր, անծանոթն արդեն կբռներ իր փեշից, բայց Էլսան վազելուց լավ է: Շատ լավ է:

Նա դեռ շարունակում է փախչել, չնայած համոզված է, որ իրեն այլևս ոչ ոք չի հետապնդում: Փախչում է գուցե ոչ միայն անծանոթից, այլ ամեն ինչից: Վազում է, մինչև այլևս չի հասկանում՝ քամի՞ն, թե՞ թախիծն է արցունքների պատճառը: Վազում է, մինչև որ գիտակցում է, որ համարյա դպրոցին է հասել:

Դանդաղեցնում է: Նայում շուրջը: Տատանվում է: Հետո ոտքերի շուրջը ծփացող փեշերով սլանում է ուղիղ դեպի փողոցի մյուս կողմում գտնվող սև այգին: Նույնիսկ ծառերը թշնամու պես են այնտեղ: Արևը ներս չի թափանցում: Լսվում են ձայների պատառիկներ, քամու սուլոցը ծառերի սաղարթում, երթևեկության աստիճանաբար հեռացող գվվոցը: Էլսան շունչը պահած, լարված ու անվստահ քայլում է դեպի այգու խորքը: Էլի ձայներ է լսում: Լսում է, որ մեկը բղավում է իր հետևից՝ տեսե՛ք, աղջի՛կ:

Էլսան ուժասպառ կանգ է առնում: Ընկնում է կողքի նստարանին: Լսում է, որ «տեսե՛ք, աղջի՛կ» բղավող ձայնը մոտենում է: Հասկանում է, որ լավ մտադրությամբ չի մոտենում: Այգին, թվում է, հայտնվում է անթափանց վերմակի տակ: Ուրիշ ձայն էլ է լսվում առաջինի կողքին, հետո սայթաքում է բառերն արտաբերելիս, ասես ոտքին սխալ կոշիկ հագած լինի: Խոսակցությունն արագանում է: Էլսան գիտակցում է վտանգն ու մի շարժումով վեր թռչելով տեղից՝ նորից է վազում: Նրանք էլ՝ հետևից: Նա ինչքան անսպասելիորեն, նույնքան էլ հուսահատ գիտակցում է, որ այգու ձմեռային խավարում ամեն ինչ միատեսակ է դարձել, ու ինքն այնտեղից դուրս գալու ճանապարհը չգիտի: Ի՜նչ հիմար վիճակ: Տե՛ր Աստված, ինքը յոթ տարեկան է ու փաստորեն ահավոր շատ է հեռուստացույց նայել. ո՞նց կարող էր այս աստիճան հիմար լինել: Փաստորեն, այսպես է լինում, որ փնտրվողի նկարը հայտնվում է կաթի տուփերի վրա, կամ հեռուստասերիալների ընդմիջումներին հայտարարություններ են տարածում անհայտ կորած երեխաների մասին:

Բայց արդեն շատ ուշ է: Նա վազում է երկու խիտ, սև, կենդանի ցանկապատի արանքով, որոնք նեղ միջանցք են թողել, ու զգում է, որ սիրտը

թվայնացրել է 1915.info կայքը

հիմա կոկորդից դուրս կթռչի: Թե ինչո՞ւ այգի վազեց: Ոչ մի խելքը գլխին մարդ գիտակցաբար նման բան չէր անի: Հիմա թմրամոլներն իրեն կբռնեն ու կսպանեն, ինչպես ցանկացածի, որ ձեռքները կընկնի հենց դպրոցականների ասածի պես: Ու այդպես էլ կասեն ծննդյան արձակուրդների հաջորդ օրը, երբ դասի գնան: Կասեն. «Ասում էինք, չէ՞»: Էլսան ատում է, երբ այդպես են ասում: Պիտի եկեղեցու մոտ մնար: Բայց իրո՞ք պետք էր: Ինքը գաղափար չունի, թե ծխախոտով մարդն ով է, չգիտի՝ իսկապե՞ս ստվեր է Երկիր-Կիս-Արթունից, բայց ինքը բացարձակ վստահ է՝ տատիկը ձայն տվեց, որ ինքը փախչի:

Բայց այստե՞ղ: Ինչո՞ւ այգի վազեց: Հո գի՞ժ չէ: Երևի խելքը թռցրել է: Երևի գժվել է: Երևի այգի մտավ, որովհետև ուզում է, որ իրեն բռնեն ու սպանեն: Մահվան ամենամեծ զորությունն այն չէ, որ տանում է մարդկանց, այլ որ մնացողների մոտ սպանում է ապրելու ցանկությունը:

Էլսան չի լսում, որ թփուտներում ճյուղեր են ջարդվում: Չի լսում, որ սառույցը փշրվում է ոտքերի տակ: Բայց մի ակնթարթում քրթմնջոցն իր հետևում անհետանում է, ու մի պահ թվում է, թե ինքն ընկնում է ամպէակի փափուկ մեջքին: Թմբկաթաղանթներն այնպես են զրնգում, որ ուզում է ճչալ: Հետո ամեն ինչ լռում է: Ու փափուկ կտրվում է գետնից: Աչքերը փակվում են: Եվ բացվում են միայն այն պահին, երբ նրան դուրս են բերում այգուց:

Գայլսիրտը վերևից ակնդետ նրան է նայում: Էլսան էլ, նրա ձեռքերի վրա պառկած, աչք չի կտրում նրանից: Գիտակցությունը մթագնում է: Հավանաբար Էլսան իսկույն կքներ նրա գրկում, եթե վստահ չլիներ, որ ամբողջ աշխարհում բավարար քանակով թղթե տոպրակներ չեն գտնվի, որ Գայլսիրտին ուշքի բերեն, եթե հանկարծ քնած ժամանակ իր բերանից նրա վրա թուք հոսի: Եվ նա ամեն կերպ պայքարում է, որ աչքերը չփակվեն՝ մտածելով, որ այդպես մի փոքր անքաղաքավարի կլիներ նրա նկատմամբ, ով փրկել է իր կյանքը: Կրկին:

— Չվազվզե՛լ մենակ: Երբեք չվազվզե՛լ մենակ,– գոռոում է Գայլսիրտը:

— Հը՞, ըհը՛,– մռթմռթում է Էլսան՝ փորձելով ձեռքով քշել նրա բառերը:

Ինքը դեռևս համոզված չէր, որ ուզում էր փրկվել, չնայած ուրախ է՝ նրան տեսնելով: Շատ ավելի ուրախ, քան ակնկալում էր: Կարծում էր, թե բարկանալու է վրան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Վտանգավոր տեղ,– մռնչում է Գայլսիրտը՝ ցույց տալով այգին, ու փորձում է իջեցնել նրան:

— Գիտեմ,– քրթմնջում է Էլսան:

— Էլ երբե՛ք,– հրամայում է նա, ու ձայնից զգացվում է, որ վախեցած է:

Մինչ նա կհասցներ նորից իր վիթխարի հասակով մեկ ուղղվել, Էլսան գրկում է նրա վիզն ու գաղտնալեզվով շշնջում՝ շնորհակալ եմ: Հետո տեսնելով, թե ինչ անհարմար է նրան այդ դիրքով, բաց է թողնում ձեռքերը:

— Ես մանրակրկիտ լվացել եմ ձեռքերս ու երեկ էլ մեգաերկար ցնցուղ եմ ընդունել,– շշնջում է Էլսան:

Գայլսիրտը չի պատասխանում, բայց աչքերից երևում է, որ տուն վերադառնալուն պես պատրաստվում է ալկոգելով լոգանք ընդունել:

Էլսան շուրջն է նայում: Գայլսիրտը, որ ձեռքերը տրորում է, այդ նկատելով՝ թափ է տալիս գլուխը:

— Գնացին,– հանգստացնում է նա:

Էլսան գլխով է անում:

— Ի՞նչ իմացար, որ էստեղ եմ:

Գայլսիրտը հայացքը հառում է ասֆալտին:

— Քեզ եմ հսկում: Տատիկդ ասաց՝ հսկեմ քեզ:

Էլսան գլխով է անում:

— Նույնիսկ, երբ չգիտեմ, որ մոտակայքո՞ւմ ես:

Գայլսիրտը գլխանոցը վերուվար է անում:

— Վիշա՞պ էր, որ ինձ հետապնդում էր: Այսինքն՝ գիտե՞ս: Գուցե ստվե՞ր է Երկիր-Կիս-Արթունից,– հարցնում է Էլսան:

Գայլսիրտը զսպում է շնչառությունը, որի տատանումները երևում են նրա մաշկի տակ:

— Շատ վտանգավո՛ր: Շատ վտանգավոր քեզ համար: Բոլորի համար: Էլ երբեք մենակ չվազես:

Էլսան գլխով է անում ու զգում է, որ ոտքերը քիչ է մնում՝ կանգնած տեղում ծալվեն: Երկար թարթում է:

— Ինչո՞ւ անհետացար: Ինչո՞ւ ինձ թողեցիր հոգեբանի մոտ,– շշուկով մեղադրում է Էլսան:

Գայլսիրտի դեմքն անհետանում է գլխանոցի տակ:

— Հոգեբանը ուզում է խոսել: Անընդհատ խոսել: Պատերազմի մասին: Միշտ: Ես չեմ ուզում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ գուցե ավելի լա՞վ զգայիր, եթե խոսեիր:

Գայլսիրտը լուռ ձեռքերն է տրորում: Ուշադիր նայում է փողոցին, ասես սպասում է, որ ինչ-որ բան կերևա: Էլսան փորձում է թևերով ուսերը գրկել ու հասկանում է, որ բաճկոնն ու գրիֆինդորցիների շարֆը եկեղեցում է թողել: Դեռ երբեք չէր եղել, որ գրիֆինդորցիների շարֆը մոռանար:

Ասենք, ո՞նց կարելի է գրիֆինդորցիների շարֆը մոռանալ: Ինքն էլ է աչք գցում փողոցին՝ չիմանալով ինչու: Հանկարծ ուսերին ծանրություն է իջնում, ու շրջվելով հասկանում է, որ Գայլսիրտն իր բաճկոնն է գցել վրան: Այն գետնին է քսվում: Լվացքի փոշու ուժեղ հոտ է գալիս: Առաջին անգամ է Գայլսիրտին առանց գլխանոցի տեսնում, ու նա զարմանալիորեն ավելի խոշոր է թվում առանց դրա: Երկար մազերն ու մորուքը ծածանվում են քամուց, վերևի սպին փայլում է, երբ արևը երկնքում խուտուտ է տալիս ամպէակներին:

— Ասացիր, որ «Միամաս» քո մայրիկի լեզվով նշանակում է «սիրում եմ», չէ՞,– հարցնում է Էլսան՝ փորձելով ուղիղ սպիին չնայել, քանի որ նկատում է, որ այդ ժամանակ նա ձեռքերը սկսում է ավելի կատաղի տրորել:

Նա գլխով է անում: Ուշադիր նայում է փողոցի երկայնքով:

— Իսկ «Միփլորիս» ի՞նչ է նշանակում,– հարցնում է Էլսան:

Երբ իսկույն պատասխան չի ստանում, ենթադրում է, որ նա հարցը չի հասկացել ու փորձում է բացատրել:

— Երկիր-Կիս-Արթունի թագավորություններից մեկի անունն է: Մարդիկ էնտեղ են պահում իրենց ամբողջ վիշտը: Տատիկը երբեք չէր ուզ…

Գայլսիրտն ընդհատում է նրան, բայց ամենևին ո՛չ անքաղաքավարության պատճառով:

— Ես սգում եմ: Միփլորիս: Ես սգում եմ:

Էլսան գլխով է անում:

— Իսկ Միրևա՞ս:

— Երազում եմ:

— Իսկ Միաուդակա՞ս:

— Համարձակվում եմ:

— Միմովա՞ս:

— Պարում եմ: Ես պարում եմ:

Նախքան վերջին թագավորության մասին հարցնելը Էլսան թույլ է տալիս, որ բառերը տեղ հասնեն: Հիշում է, որ տատիկը պատմում էր Գայլսիր-

թվայնացրել է 1915.info կայքը

տի մասին, որ նա անպարտելի ռազմիկ էր, որ հաղթեց ստվերներին, ինչը միայն նրան էր հաջողվել, քանի որ նա ռազմիկի ու հեքիաթասացի սիրտ ուներ, քանի որ ծնվել էր Միամասում, բայց մեծացել Միբատալոսում:

— Ի՞նչ է նշանակում Միբատալոս,– հարցնում է Էլսան:

Գայլսիրտն ուղիղ նրա աչքերին է նայում իր խոշոր, մուգ աչքերով, որոնց շուրջը կնճիռներ էին առաջացել այն ամենից, ինչ պահվում է Միփ-լորիսում:

— Միբատալոս: Ես կռվում եմ: Միբատալոս... Այլևս չկա: Այլևս չկա Միբատալոսը:

— Գիտեմ: Ստվերներն ավերել են Երկիր-Կիս-Արթունի այդ թագավորությունը, ու քեզնից բացի՝ բոլոր միբատալոսցիները զոհվել են, որովհետև դու քո ժողովրդի մեջ վերջինն ես ու...,– սկսում է իր իմացածը պատմել Էլսան, սակայն տեսնելով, թե Գայլսիրտն ինչ ուժով է ճմռում ձեռքերը, զսպում է իրեն:

Գայլսիրտի մազերը թափվում են դեմքին: Նա մի քայլ հետ է գնում:

— Միբատալոսը չկա: Ես չեմ կռվում: Էլ երբեք չեմ կռվում:

Եվ Էլսան հասկանում է, ինչպես միշտ, հասկանում ես նման բաները, երբ նայում ես խոսողի աչքերին: Նա չէր թաքնվել Երկիր-Կիս-Արթունի շրջակա անտառներում, քանի որ վախենում էր ստվերներից, այլ քանի որ ինքն իրենից էր սարսափած: Սարսափած էր նրանից, թե ինչ էր դարձել ինքը Միբատալոսում: Սարսափած էր իր իսկ անպարտելիությունից:

Համենայնդեպս, նրան թվում է, որ հենց դա է տեսնում նրա աչքերում, որովհետև հեքիաթներում գրված է այդ մասին:

Քիչ անց նկատում է, որ Գայլսիրտը փողոցով իրենց մոտեցողին է նայում: Ալֆի ձայնն է լսվում: Երբ շրջվում է, տեսնում է շարժիչը միացրած տաքսի՝ մայթեզրի մոտ կանգնած: Լսվում է Ալֆի կոշիկների քստքստոցը ձյան միջով: Կանաչ աչքերով կին ոստիկանը կանգնած է տաքսու կողքին՝ այգին ծայրեծայր բազեի նման ուշադիր զննելով:

Երբ Ալֆը գրկում է Գայլսիրտի՝ քնապարկի մեծության բաճկոնի մեջ փաթաթված Էլսային, հանգիստ ասում է.

— Դե, գնացինք տուն, գրո՛ղը տանի, հո էստեղ կանգնած չե՞ս մրսելու:

Բայց Էլսան նրա ձայնից զգում է, որ վախեցած է, ինչպես վախեցած կարող է լինել միայն նա, ով ճանաչում է եկեղեցու բակում Էլսայի հետևից

թվայնացրել է 1915.info կայքը

ընկած մարդուն: Կանաչ աչքերով կին ոստիկանի տագնապած հայացքից տեսնում է, որ նա էլ գիտի: Որ բոլորն էլ շատ ավելին գիտեն, քան ցույց են տալիս:

Էլսան հետ չի նայում, երբ Ալֆն իրեն տանում է դեպի տաքսին, որովհետև գիտի, որ Գայլսիրտն արդեն հեռացել է: Երբ եկեղեցի հասնելով փարվում է մայրիկին, վստահ է, որ մայրիկն էլ շատ ավելին գիտի, քան ցույց է տալիս: Ու միշտ էլ գիտեր ավելին, քան ասում էր:

Էլսան հիշում է «Առյուծասիրտ եղբայրներ» հեքիաթը: Հիշում է վիշապ Կատլային, որին ոչ ոք չէր կարող հաղթել, ու ահասարսուռ վիշապօձ Կարմին՝ միակ էակին, որ վերջում կարողանում էր Կատլայի հախից գալ: Հեքիաթներում երբեմն սարսափազդու վիշապին հաղթողն է՛լ ավելի սարսափազդու է, քան վիշապը:

Հրեշ է:

թվայնացրել է 1915.info կայքը

22

ԿԱԿԱՌ

Էլսան շատ է փախել հետապնդումներից: Հարյուրավոր անգամներ: Բոլորը, որոնք դպրոցում տարբերվում են, գիտեն: Բայց եկեղեցու մոտ պատահածի պատճառով իրեն համակած սարսափը բոլորովին այլ էր: Այն ասես սրտի խորքում բուն դրած տենդ լիներ, որ դեռ երկար ժամանակ բաց չէր թողնում ու իրեն հետապնդող ստվերի անհետանալուց հետո էլ շարունակում էր արձագանքել իր գանգատուփում:

Էլսան մինչև փախչելը հասցրել էր նայել նրա աչքերին ու հասկացել էր, որ նա պատրաստ է սպանել իրեն: Երբ շուտով ութ ես դառնալու, ինչպե՞ս կմոռանաս մարդու աչքերում տեսած նման սպառնալիքը:

Կամ ո՛չ մարդու:

Էլսան փորձում էր երբեք չվախենալ, քանի դեռ տատիկը ողջ էր, կամ գոնե երբեք ցույց չտալ, որովհետև տատիկն ատում էր վախերը: Երկիր-Կիս-Արթունում վախերը փոքրիկ, կամակոր, կոշտ խավով արարածիկներ են, որ շատ նման են չորացնող մեքենայի մեջ հավաքվող կապտավուն բրդոտ գնդիկների, որոնք ամենաանշան առիթի դեպքում էլ հարձակվում են, կծոտում ու փորձում աչքերդ ճանկռոտել: Տատիկն ասում էր, որ վախերը ծխախոտի պես են: Թողնելը դժվար չէ, դժվար է դիմանալն ու նորից չսկսել:

Վախերին Երկիր-Կիս-Արթուն՝ տատիկի հեքիաթներից մեկի մեջ է բերել Հիմիկը այնքան հավերժություններ առաջ, որ իսկապես հնարավոր չէ

թվայնացրել է 1915.info կայքը

հաշվել: Այդ հին ժամանակներում դեռ ընդամենը հինգ թագավորություն կար, ոչ թե վեց:

Հիմիկը մի նախնադարյան հրեշ է, որն ուզում է, որ ամեն ինչ իսկույն ևեթ կատարվի: Ամեն անգամ, երբ մի երեխա ասում է «լավ էլի՛», «հիմա չէ՛» կամ «քիչ հետո՛», Հիմիկը ոռնում է ամբողջ ուժով. «ՉԷԷԷԷ՛: ՊԻՏԻ ԻՍԿՈՒՅՆ ԱՐՎԻ»: Նա ատում է երեխաներին, քանի որ երեխաները հրաժարվում են ընդունել Հիմիկի այն սուտը, թե ժամանակը գծային միավոր է: Երեխաները գիտեն, որ ժամանակն ընդամենը զգացողություն է, այնպես որ «հիման» անիմաստ բառ է նրանց համար, ինչպես և միշտ եղել է տատիկի համար: Յեորգը սովորաբար ասում էր, որ տատիկը ժամանակի հանդեպ լավատես չէ, նա ժամանակի աթեիստ է, և միակ կրոնը, որին նա հավատում է, հետոիզմն է: Էլսան ահավոր բարկացել էր այդ խոսքի վրա, որովհետև ահավոր սրամիտ էր ստացվել, իսկ զվարճալի բաներ ասողին չսիրելը շատ դժվար է: Հումորը Յեորգի ամենից նյարդայնացնող թերությունն է:

Հիմիկը վախերին բերել էր Երկիր-Կիս-Արթուն, որ երեխաներին դրանցով իր ճանկը գցի, որովհետև Հիմիկը, երեխային վախի միջոցով բռնելով, խժռում էր նրա ապագան ու թողնում էր իր զոհին անօգնական: Զոհն ամբողջ կյանքում պիտի հե՛նց այդ պահին ուտեր, հե՛նց այդ պահին քներ ու հե՛նց այդ պահին հավաքեր թափածը: Երեխան այլևս երբեք չէր կարողանում հետաձգել ձանձրալի գործը, որ ավելի երկար զբաղվեր զվարճալի գործով, որովհետև մնացել էր միայն ՀԻՄԱՆ: Նման դաժան ճակատագիրը մահից վատ է, միշտ ասում էր տատիկը: Հիմիկի մասին հեքիաթն էլ սկսվում էր նրանից, որ Հիմիկն ատում էր հեքիաթները, քանի որ հեքիաթներից բացի՝ ոչինչ այնքան չի նպաստում, որ երեխաները հետաձգեն իրենց անելիքները: Այնպես որ, մի օր Հիմիկը բարձրանում է Հեքիաթասար՝ ամբողջ Երկիր-Կիս-Արթունի ամենաբարձր լեռը, ու այնտեղ սարսափելի քարաթափ է կազմակերպում, որն ավերում է լեռան գագաթը: Հետո դարան է մտնում մի մութ քարանձավում:

Էնֆանտները Հեքիաթասարի գագաթից են բաց թողնում հեքիաթները, որ դրանք ճախրելով հասնեն իրական աշխարհ: Եթե հեքիաթները չկարողանան թռչել Հեքիաթասարի գագաթից, Միամասի թագավորությունը խեղդամահ կլինի, իսկ հետո՝ նաև ամբողջ Երկիր-Կիս-Արթունը, որովհետև հեքիաթները չեն կարող ապրել առանց դրանք լսող երեխաների:

թվայնացրել է 1915.info կայքը

Լուսաբացին Միբատալոսի ամենախիզախ ռազմիկները փորձեցին բարձրանալ լեռն ու ջախջախել Հիմիկին, բայց ոչ մեկին չհաջողվեց, որովհետև Հիմիկը քարանձավների խորքերում կարծես փոքրիկ ձվերից վախեր էր աճեցրել: Իսկ վախեր աճեցնելը բավականին մեծ հմտություն է պահանջում, որովհետև նրանք սկսում են լավ աճել սպառնալիքից: Այսինքն՝ ամեն անգամ, երբ ինչ-որ ծնող ինչ-որ վայրում սպառնում է երեխային, նրանց համար ասես պարարտանյութ լինի: «Լա՛վ էլի»,– ասում են երեխաները, ու ծնողները բղավում են. «Ո՛չ, իսկո՛ւյն, ՀԵ՛ՆՑ ՀԻՄԱ: Թե չէ ես քեզ...»: Ու հո՛պ...Քարանձավի խորքերում, ինչպես ճուտը ձվից, դուրս է գալիս մի վախ:

Երբ Միբատալոսի ռազմիկները բարձրանում էին լեռն ի վեր, Հիմիկը բաց թողեց վախերին, ու նրանք հերթով վերածվեցին հենց այնպիսի երևույթների, որոնցից ռազմիկներից յուրաքանչյուրն ամենից շատ էր վախենում: Բոլոր արարածներն էլ մահացու սարսափում են ինչ-որ բանից, նույնիսկ Միբատալոսի ռազմիկները: Երկիր-Կիս-Արթունի օդը շուտով սկսեց նոսրանալ, ու հեքիաթասացների համար ավելի ու ավելի դժվար էր շնչելը:

Հենց որ տատիկը սկսեց այդ մասին պատմել, Էլսան, բնականաբար, ահավոր զայրացավ ու ընդհատեց նրան՝ նշելով, որ փոխակերպվող վախերի գաղափարը տատիկը փաստացի թխել է «Հարրի Փոթերից», որովհետև բոգարտները հենց այդպես են գործում: Իսկ տատիկը փնչացնելով պատասխանում է. «Մտքովդ չի՞ անցել, որ գուցե այդ Հարրի Փոթեր կոչված է թռցրել ինձնից»: Դրան ի պատասխան՝ Էլսան ֆշշացնելով ասել էր. «Հարրի Փոթերը ոչինչ չի գողանում»: Հետո նրանք բավականին երկար վիճել էին այդ հարցի վերաբերյալ, մինչև որ, ի վերջո, տատիկը հանձնվել էր ու մռթմռթացել. «Դե լա՛վ, լա՛վ: Թքա՛ծ: Ուրեմն վախերը չեն փոխակերպվում: Ուղղակի կծոտում են ու փորձում աչքերը ճանկռտել: Դե, հիմա ԳՈ՞Հ ես»:

Էլսան համաձայնում է, ու նրանք կարողանում են առաջ գնալ:

Եվ ասենք, որ այդ սոսկալի երկար պատմությունը դրանից իսկի չի կարճանում: Այդ ժամանակ հայտնվում են երկու ոսկե ասպետները: Բոլորը փորձում են զգուշացնել, որ լեռը չբարձրանան, բայց նրանք, իհարկե, չեն լսում, քանի որ ահավոր համառ են: Բայց երբ հասնում են գագաթին, ու

թվայնացրել է 1915.info կայքը

վախերը դուրս են հորդում բոլոր ծակուծուկերից, ոսկե ասպետները չեն ճակատամարտում: Նրանք չեն աղաղակում ու չեն հայհոյում մյուս բոլոր ռազմիկների պես: Փոխարենը նրանք անում են այն միակ գործողությունը, որ կարելի է անել վախի դեմ: Նրանք ծիծաղում են բարձրաձայն, համառ ու արհամարհական, ու բոլոր վախերը մեկիկ-մեկիկ քար են դառնում:

Տատիկի մոտ, իհարկե, չափազանց լավ էր ստացվում հեքիաթների ավարտին ինչ ասես՝ քարի վերածել, որովհետև հեքիաթների վերջը նրա համար ամենադժվարն էր, բայց Էլսան դրա վրա աչք էր փակում:

Հիմիկին, բնականաբար, անորոշ ժամանակով բանտարկում են, ինչից նա ուղղակի գազազում է: Իսկ Երկիր-Կիս-Արթունի գերագույն խորհուրդը որոշում է յուրաքանչյուր թագավորությունից ընտրել բնակիչների մի փոքր խումբ՝ Միբատալոսի ռազմիկներից, Միրևասի երազ փախցնողներից, Միփլորիսի վշտերի պահապաններից, Միմովասի երաժիշտներից ու Միամասի հեքիաթասացներից, որպեսզի հսկեն Հեքիաթասարը: Քարերի վերածված վախերից նորից կառուցեցին գագաթը՝ է՛լ ավելի բարձր, քան առաջ, ու լեռան ստորոտին հիմնադրեցին վեցերորդ թագավորությունը՝ Միաուդակասը: Իսկ Միաուդակասի շրջակա դաշտերում սկսեցին քաջություն աճեցնել, որ ոչ ոք այլևս երբեք վախեր չունենա:

Դե լա՛վ: Համենայնդեպս, մինչև այն օրը, երբ մի օր տատիկը պատմեց Էլսային, որ բերքահավաքից հետո այդ բույսից հատուկ ըմպելիք էին պատրաստում, որից խմողներն անասելի քաջ էին դառնում: Էլսան Google-ում մի փոքր փորփրելուց հետո հայտարարեց, որ սոսկալի անպատասխանատվություն է երեխային նման պատմություն հրամցնելը: Իսկ տատիկը տնքաց ու ասաց. «Լա՛վ, լա՛վ, ուղղակի շատ քաջություն ունեին: Ո՛չ աճեցնում էին, ո՛չ էլ խմում, ուղղակի ԿԱՐ, լա՞վ»:

Այսքանը: Այս էր ամբողջ հեքիաթը երկու ոսկե ասպետների մասին, որ հաղթեցին վախերին: Տատիկը պատմում էր այն ամեն անգամ, երբ Էլսան ինչ-որ երևույթից վախենում էր: Նույնիսկ եթե Էլսան որոշ դեպքերում բուռն առարկում էր տատիկի պատմելու ձևի առնչությամբ, այն փաստացի լավ էլ ազդում էր: Ամեն դեպքում, դրանից հետո նա նույնքան հաճախ չէր վախենում:

Միակ երևույթը, որի դեպքում այս հեքիաթն ընդհանրապես չէր ազդում, տատիկի վախն էր մահից: Իսկ հիմա չի ազդում նաև Էլսայի վրա: Որովհետև նույնիսկ հեքիաթները չեն կարող հաղթել ստվերներին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Վախենո՞ւմ ես,– հարցնում է մայրիկը:

— Ըհը՛,– գլխով է անում Էլսան:

Մայրիկն էլ է գլխով անում: Նա չի ասում Էլսային, որ չպիտի վախենա, ու չի փորձում խաբել, թե վախենալու բան չկա: Էլսան դրա համար շատ է սիրում նրան:

Նրանք կայանատեղիում են՝ Renault-ի մեջ՝ մեջքն իջեցրած նստարաններին նստած: Վորսը գրավում է նրանց միջև եղած ամբողջ տարածությունը, ու մայրիկը հանգիստ քորում է նրա մեջքը: Նա ամենևին չէր զայրացել, երբ Էլսան խոստովանել էր, որ թաքցրել է վորսին նկուղի պահեստում: Եվ բոլորովին չէր վախեցել, երբ Էլսան ցույց էր տվել: Ոչ մի կաթիլ: Պարզապես սկսել էր քորել վորսի ականջի հետևը. ասես նա մի փոքրիկ փիսիկ լիներ:

Էլսան ձգում է ձեռքը, շոշափում մայրիկի փորն ու զգում է Կեսիկի հանդարտ սրտխփոցը: Կեսիկը բոլորովին չի վախենում, որովհետև նա ամբողջությամբ մայրիկն է, իսկ Էլսան կիսով չափ հայրիկն է. հայրիկն էլ ամեն ինչից վախենում է: Այնպես որ, Էլսան վախենում է մոտավորապես ամեն ինչի կեսից:

Ու ամենաշատը՝ ստվերներից:

— Գիտե՞ս ով էր: Էն որ իմ հետևից էր ընկել,– ասում է նա:

Վորսը գլուխը դնում է նրա գլխին: Մայրիկը զգուշորեն շոյում է նրա այտը:

— Հա՛: Մենք գիտենք՝ ով է:

— Այսինքն՝ մենք:

Մայրիկը աղմուկով շունչ է քաշում:

— Լենարտը, Մոդն ու Ալֆը: Նաև ես:

Թվում է՝ մի քանի անուն էլ պիտի ասեր, սակայն իրեն զսպում է:

— Լենարտն ու Մո՞դը,– բացականչում է Էլսան:

Մայրիկը գլխով է անում:

— Հա՛, անո՛ւշս: Վախենամ՝ ամենալավը նրանք են ճանաչում:

— Բա ինչո՞ւ երբեք չես պատմել ինձ նրա մասին,– համառում է Էլսան:

— Չէի ուզում քեզ վախեցնել,– պատասխանում է մայրիկը:

— Չարչարանքդ անիմաստ էր,– փնչացնում է Էլսան՝ ամենևին ոչ առանց վախի:

Մայրիկը հոգոց է հանում: Շոյում է վորսի մորթին: Վորսն էլ լիզում է Էլսայի դեմքը: Նրանից դեռ թխվածքաբլիթների խմորի հոտն է գալիս:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուղղակի անհնար է սրտանց զայրանալ մեկի վրա, որ թխվածքաբլիթների բույրով լիզում է դեմքդ:

— Ստվեր էր,– շշնջում է Էլսան:

— Գիտեմ,– շշնջում է մայրիկը:

— Լո՞ւրջ:

Մայրիկն այնքան խորն է շնչում, որ օդը հասնում է մինչև ոտքերը:

— Տատիկդ ինձ էլ էր հեքիաթներ պատմել, անո՛ւշս, Երկիր-Կիս-Արթունի ու ստվերների մասին:

— Ու համ էլ Միամասի՞,– հարցնում է Էլսան:

Մայրիկը տարուբերում է գլուխը:

— Չէ՛: Ես գիտեմ, որ դուք ինչ-որ տեղեր ունեք, որ ինձ երբեք ցույց չի տվել: Համ էլ շատ վաղուց էր: Ես քո տարիքին էի: Երկիր-Կիս-Արթունը շատ փոքր էր այն ժամանակ: Թագավորություններն էլ դեռ անուններ չունեին:

Էլսան չի դիմանում ու ընդհատում է:

— Հա՛, իմացա: Դրանք անուններ ունեցան, երբ տատիկը հանդիպեց Գայլսիրտին, ու թագավորություններին նրա մայրենի լեզվով անուններ դրեց: Ու համ էլ նրա լեզուն գաղտնալեզու դարձրեց, որ սովորի ու կարողանա հետը խոսել: Բայց քեզ ինչո՞ւ չի տարել հետը: Ինչո՞ւ տատիկը քեզ ամբողջ Երկիր-Կիս-Արթունը ցույց չի տվել:

Մայրիկը թեթևակի կծում է շրթունքը:

— Տատիկն ուզում էր, անո՛ւշս: Շատ անգամ: Բայց ես չէի ուզում գնալ:

— Ինչո՞ւ:

— Ես մեծացել էի: Արդեն դեռահաս էի, ու բարկանում էի: Էլ չէի ուզում, որ մայրս ինձ հեռախոսով հեքիաթներ պատմեր: Ուզում էի՝ կողքիս լիներ: Ուզում էի՝ իրականում հետս լիներ:

Էլսան երբեք չէր լսել, որ նա «մայրս» բառն ասեր, որովհետև սովորաբար ասում էր «տատիկդ»:

Մայրիկը փորձում է ժպտալ: Չի ստացվում:

— Ես հեշտ պահվող երեխա չեմ եղել, անո՛ւշս: Շատ էի վիճում: Ամեն ինչին անընդհատ «չէ» էի ասում: Տատիկդ անունս դրել էր «չէ ասող աղջիկ»:

Էլսան անթարթ մորն է նայում: Մայրիկը միաժամանակ հոգոց է հանում ու ժպտում, կարծես մի զգացմունքային դրսևորումը փորձում է կլանել մյուսին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հա՛, ես բնականաբար շատ դերեր ունեի տատիկիդ հեքիաթներում: Օրինակ՝ աղջիկ, թագուհի: Ի վերջո, արդեն չէի հասկանում, թե որտեղ է վերջանում երևակայությունն ու սկսվում իրականությունը: Մեկ-մեկ թվում էր, թե տատիկդ ինքն էլ չգիտեր: Երբ մեծացա, ինձ համար շատ դժվար էր այդ ամենով ապրելը: Ու դեռ դժվար է: Զգում եմ, որ կարիք ունեմ իրականության:

Էլսան պառկած լուռ նայում է առաստաղին՝ ականջի մեջ վորսի շնչառությունը: Մտքին Գայլսիրտն է ու ծովահրեշտակը, որ այսքան տարի ապրել են իրենց մուտքում, ու ոչ ոք չի իմացել, թե ովքեր են նրանք իրականում: Ոչ ոք չի հարցրել: Եթե մարդիկ ծակեին շենքի պատերն ու հատակը, բոլոր հարևանները կկարողանային ձեռքերը մեկնել ու իրար դիպչել. այդքան մոտ էին ապրում իրենց կյանքը՝ առանց իրար մասին որևէ բան իմանալու: Ու տարիներն անցնում էին:

— Բանալին գտա՞ր,– հարցնում է Էլսան՝ գլխով ցույց տալով Renault-ի գործիքների վահանակը:

Մայրիկը տարուբերում է գլուխը:

— Կարծում եմ՝ տատիկդ թաքցրել է: Հավանաբար Բրիտ-Մարիին կատաղեցնելու համար: Հո իզուր չի՞ կանգնեցրել Բրիտ-Մարիի տեղում...

— Բայց Բրիտ-Մարին իր սեփական մեքենան ունի՞,– հարցնում է Էլսան՝ նայելով Քենթի BMW-ին, որ հեռվից աչքի է զարնում, քանի որ կյանքում իր տեսած մեքենաներից ամենամեծն է:

— Չէ՛, բայց տարիներ առաջ ունեցել է: Սպիտակ էր: Տեղն էլ դեռևս իրենն է: Կարծում եմ՝ սկզբունքի հարց է: Բրիտ-Մարիի համար ամեն ինչ սկզբունքի հարց է,– քմծիծաղով ասում է մայրիկը:

Էլսան ճշգրիտ չգիտի՝ ինչ է դա նշանակում: Եվ չգիտի, թե դա առհասարակ ինչ-որ նշանակություն ունի՞, թե՞ ոչ:

— Իսկ Renault-ը ո՞նց էստեղ հայտնվեց, եթե ոչ ոք մեքենայի բանալին չունի,– բարձրաձայն մտածում է նա՝ իմանալով հանդերձ, որ մայրիկը չի կարողանալու պատասխանել, քանի որ ինքն էլ չգիտի:

Մայրիկը չգիտի: Այսինքն՝ պատասխան չունի: Էլսան թոքերը լցնում է ու աչքերը փակում:

— Ուզում եմ ստվերի մասին պատմես,– ասում է նա ու փորձում ձայնը հնչեցնել այն ամենով լցված, որ աճեցնում են Միաուդակասում, չնայած որ այն կոկորդում թրթռում է պոկված առագաստի պես:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրիկը նորից շոյում է նրա այտն ու դժվարությամբ վեր կենում նստարանից՝ ձեռքը Կեսիկի վրա դրած:

— Կարծում եմ՝ նրա մասին Մոդն ու Լենարտը պիտի քեզ պատմեն, անո՛ւշս:

Էլսան ուզում է բողոքել, բայց մայրիկն արդեն դուրս էր եկել Renault-ից, այնպես որ Էլսային ուրիշ ոչինչ չի մնում, քան գնալ նրա հետևից: Անկախ ամեն ինչից՝ դա մայրիկի գերունակությունն է: Մայրիկը հետը վերցրել էր Գայլսիրտի բաճկոնը: Ասում է, որ պիտի լվանա, այնպես որ նա վերադառնալուն պես կարող է վերցնել: Էլսային հաճելի է մտածել, որ նա կվերադառնա:

Նրանք ծածկոցներ են փռում հետևի նստարանին պառկած վորսի վրա ու զգուշացնում են, որ բացարձակ լուռ մնա, եթե լսի, որ մեկը մոտենում է: Նա հնազանդվում է: Էլսան մի քանի անգամ խոստանում է, որ ավելի լավ թաքստոց կգտնի նրա համար, չնայած նրա հայացքից չի երևում, որ նա հասկանում է, թե այն իր ինչին է պետք: Նրան միայն չափազանց հուզում է, թե երբ Էլսան իր համար էլի թխվածքաբլիթներ կգտնի:

Ալֆը, նկուղի աստիճանին կանգնած, նրանց է սպասում:

— Սուրճ եմ եփել,– մռթմռթում է նա:

Մայրիկը շնորհակալությամբ վերցնում է բաժակներից մեկը: Մյուս բաժակն Ալֆը մեկնում է Էլսային:

— Ես ասել էի, որ սուրճ չեմ խմում,– հոգնած ասում է Էլսան:

— Էս, գրո՛ղը տանի, սուրճ չէ, գրողի տարած O'boy կակաոն է,– նեղացած ասում է Ալֆը:

Էլսան զարմացած նայում է բաժակի մեջ:

— Իսկ էս O'boy-ը որտեղի՞ց,– զարմանում է Էլսան, քանի որ մայրիկը երբեք թույլ չի տալիս տանը դրանից խմել, որովհետև շաքարը շատ է:

— Մոտս կար,– քթի տակ մռթմռթում է Ալֆը:

— Տանը O'boy ունե՞ս,– թերահավատորեն հարցնում է Էլսան:

— Խանութից, ի՞նչ է, առնել չէի՞ կարող: Դե, որովհետև դու սուրճ չես խմում, չէ՞,– մռայլ պատասխանում է Ալֆը:

Էլսան քթի տակ ժպտում է: Մտածում է, որ Ալֆի անունը դնելու է ինվեկտիվ ասպետ, որովհետև Վիքիպեդիայում կարդացել է, թե որն է ինվեկտիվը, ու կարծում է, որ ընդհանուր առմամբ նման ասպետները չափա-

թվայնացրել է 1915.info կայքը

զանց քիչ են: Հետո մի մեծ կում է անում O'boy-ից ու քիչ է մնում՝ ամբողջը թքի ուղիղ Ալֆի բաճկոնի վրա:

— Էս ի՞նչ էր: Ու քա՞նի գդալ O'boy ես լցրել մի բաժակի մեջ:

— Ի՞նչ իմանամ, գրո՛ղը տանի: Դե, մի 14-15 երևի,– արդարանալով մռթմռթում է Ալֆը:

— Բաժակին ԵՐԵ՛Ք գդալ են լցնում:

Ալֆը մաղձոտած է երևում կամ Էլսային է թվում: Նա «մաղձոտած» բառը մի անգամ գցել էր հայրիկի բառերի գանձատուփը, ու իր կարծիքով՝ Ալֆն իրոք հենց այդպիսի տեսք ունի:

— Հա՛, բայց էդքանից համն ի՞նչ պիտի լինի,– փնթփնթում է Ալֆը:

Էլսան O'boy-ի նստվածքը գդալով է ուտում:

— Դու էլ գիտե՞ս, թե ով էր ընկել հետևիցս եկեղեցու բակում,– հարցնում է Ալֆին՝ խյուսի կեսը բերանի շուրջն ու քթի ծայրին քսած:

Կաշվե բաճկոնը կամաց ճռռում է: Բռունցքները սեղմվում են:

— Նա քո հետևից չէր ընկել:

— Հը՞, այսի՞նքն: Հա՛, բայց ի՛նձ էր ուզում բռնել,– հազալով առարկում է Էլսան՝ Ալֆի վրա մի փոքր կակաո ցայտեցնելով:

Բայց Ալֆը միայն դանդաղ տարուբերում է գլուխը:

— Չէ՛: Նա քեզ չէր հետապնդում:

թվայնացրել է 1915.info կայքը

23

ՍԵՂԱՆԻ ԼԱԹԸ

Էլսան հազար հարց ուներ, բայց ոչ մեկը չի տալիս, որովհետև տուն հասնելիս մայրիկն այնքան հոգնած էր, որ ինքն ու Կեսիկը պիտի շուտ պառկեին: Մայրիկը վերջերս այնքան է հոգնում, ասես մեկը նրա լարը հոսանքից անջատելիս լինի: Պարզ է, որ Կեսիկի մեղքով է, ու Յեորգն ասում է, որ Կեսիկն իրենց մի 18 տարի չի թողնելու, որ քնեն, դրա համար էլ այնպես է անում, որ մայրիկը նախորդ ինը ամիսներին անընդհատ քնի: Էլսան նստած է մահճակալի եզրին ու շոյում է մայրիկի մազերը. մայրիկն էլ համբուրում է նրա ձեռքն ու շշնջում. «Լավ կլինի, անո՛ւշս, մի՛ մտածիր»: Տատիկի պես: Ու Էլսան ահավոր, ահավոր շատ է ուզում հավատալ նրա ասածին: Մայրիկը քնատ ժպտում է:

— Բրիտ-Մարին դեռ այնտե՞ղ է,– գլխով ցույց է տալիս նա դեպի դուռը:

Բրիտ-Մարիի ձայնը լսվում է խոհանոցից, այնպես որ պարզապես հռետորական հարց է ստացվում: Բրիտ-Մարին Յեորգից հստակ տեղեկություններ էր պահանջում Renault-ի հետ կապված, որ դեռևս կանգնած էր Բրիտ-Մարիի կայանատեղիում:

— Մենք չենք կարող ապրել առանց կանոնների, Յեո՛րգ: Նույնիսկ Ո՛ւլրիխան պիտի հասկանա դա,– բարեհաճ ժպիտով ու ամենևին ոչ բարեհաճ ձայնով ասում է Բրիտ-Մարին:

Յեորգն ուրախ պատասխանում է, որ լիովին հասկանում է նրան, որովհետև ինքն ընդհանրապես բոլորին հասկանում է: Չափազանց նյարդայնացնող հատկություն է, որ կարծես ահավոր կատաղեցնում է Բրիտ-Մարիին: Հետո Յեորգը փորձում է Բրիտ-Մարիին ձվածեղ առաջարկել,

թվայնացրել է 1915.info կայքը

ինչից հետո Բրիտ-Մարիի բարեհաճությունն իսպառ անհետանում է, և նա սկսում է պնդել, որ շենքի որոշ բնակիչներ ստիպված են լիակատար հետազոտություն անցկացնել աստիճանավանդակում թողած մանկասայլակի հետ կապված: Որովհետև սկզբում մեկը գրություն է փակցնում՝ առանց Բրիտ-Մարիին տեղեկացնելու, իսկ հիմա հանում է գրությունը՝ կրկին առանց Բրիտ-Մարիին տեղյակ պահելու: Բրիտ-Մարին ընդգծում է, որ ինքը հիմնավորապես հարցաքննել է բոլոր կասկածյալներին: Ամենայն մանրամասնությամբ:

Յեորգը խոստանում է, որ մի քիչ էլ ինքը կհարցաքննի կասկածյալներին, չնայած նրա ձայնից չի զգացվում, որ նա առհասարակ պատկերացնում է, թե ում պիտի կասկածի: Այդ ժամանակ Բրիտ-Մարին ասես նոր ուժ է ստանում, քանի որ Յեորգը համակարծիք է իր հետ, և իր զայրույթն է հայտնում, որ ինքը, համենայնդեպս, աստիճանների վրա մի հատիկ շան մազ է գտել: Ինչը հստակ ապացույց է, որ այն սարսափելի գազանը շարունակում է ֆռֆռալ իրենց աստիճանավանդակով: Հաստատ, ազատ ֆռֆռում է: Եվ նա Յեորգից պահանջում է հստակ քայլեր անել: Չի երևում, թե Յեորգը հասկանում է՝ ինչ է նրա ուզածը: Այդ ժամանակ Բրիտ-Մարին, զայրույթից ֆշշացնելով, ասում է՝ թող ոչ ոք չկասկածի, թե ինքը Քենթի հետ կխոսի այս մասին, ապա դուրս է թռչում խոհանոցից, նախքան Յեորգը կհասցներ բերանը բացել: Չնայած փաստացի նա ամենևին նման նպատակ չուներ: Հետո զգացվում է, որ Յեորգը նորից անցնում է ձվածեղ պատրաստելու գործին:

— Պառա՛վ վհուկ,– փնչացնում է Էլսան ննջասենյակում:

— Մի՛ անհանգստացիր, անո՛ւշս, մենք քո ընկերոջ համար ավելի լավ թաքստոց կգտնենք վաղը,– կիսաքուն քրթմնջում է մայրիկը, հետո ժպտալով ավելացնում է,– գուցե մանկասայլակո՞ւմ թաքցնենք:

Էլսան մի պահ ծիծաղում է: Բայց միայն մի քիչ: Ու մտքով անցնում է, որ կապված մանկասայլակի առեղծվածը նման է Ագաթա Քրիստիի անհաջող վեպերի նախաբանին: Էլսան ծանոթ է Ագաթա Քրիստիի համարյա բոլոր վեպերին, քանի որ դրանք կան iPad-ում, սակայն Ագաթա Քրիստին Բրիտ-Մարիի պես ստերեոտիպային չարագործ հերոս երբեք չի ունեցել իր պատմություններում: Թերևս միայն որպես զոհ, որովհետև Էլսան պատկերացնում է, որ եթե խորհրդավոր սպանության ժամանակ ինչ-որ մեկը գրադարանում մոմակալի հարվածով սպանի Բրիտ-Մարիին, ապա

թվայնացրել է 1915.info կայքը

բոլոր նրան ճանաչողները կասկածի տակ կհայտնվեն միևնույն՝ «պառավն ուղղակի վհուկ էր» դրդապատճառով: Իսկ հետո Էլսան մի քիչ ամաչում է նման մտքերի համար: Չնայած՝ շատ քիչ:

— Բրիտ-Մարին ոչ մի վատ բան նկատի չունի, ուղղակի ուզում է իրեն կարևոր զգալ,– փորձում է արդարացնել մայրիկը:

— Միևնույն է, սարսափելի վհուկի մեկն է,– համառում է Էլսան:

Մայրիկը ժպտում է:

— Դե լավ: Մի քիչ վհուկ է, ընդունում եմ, լա՞վ:

Հետո մայրիկը հարմար պառկում է բարձերի վրա, իսկ Էլսան օգնում է բարձերից մեկը տեղավորել մեջքի տակ, ու մայրիկը շոյում է նրա այտն ու շշնջում.

— Իսկ հիմա ուզում եմ հեքիաթներ լսել, անո՛ւշս, եթե դեմ չես: Ուզում եմ Միամասից հեքիաթ լսել:

Եվ Էլսան լրջացած շշնջում է, որ մայրիկն աչքերը թեթևակի փակի, ու մայրիկն անում է նրա ասածով, իսկ Էլսան հազար հարց ունի, բայց ոչ մի հարց չի տալիս: Փոխարենը պատմում է ամպէակների, էնֆանտների, զղջիկների, առյուծի, տրոլների, ասպետների, Հիմիկի, Գայլսիրտի, ձյունահրեշտակների, ծովահրեշտակների, երազ որսացողների մասին: Երբ սկսում է պատմել Միփլորիսի արքայադստեր ու նրա սիրո համար մենամարտող երկու արքայազն եղբայրների, ինչպես նաև վհուկի մասին, որ փախցրել էր արքայադստեր գանձը, մայրիկն ու Կեսիկը քնում են:

Իսկ Էլսան հազար հարց ունի տալու, բայց չի տալիս: Պարզապես ուղղում է նրանց վրայի ծածկոցն ու համբուրում է մայրիկին՝ ինքն իրեն ստիպելով քաջությունը չկորցնել: Որովհետև պարտավոր է անել այն, ինչ խոստացել էր տատիկին՝ պաշտպանել ամրոցը, ընտանիքն ու ընկերներին:

Մայրիկի ձեռքը շոշափելով գտնում է Էլսային հենց այն պահին, երբ Էլսան վեր է կենում, որ գնա, ու մայրիկը կիսաքուն շշնջում է.

— Մարդիկ երբեք չէին ասի, որ պապիկդ վատ հայր էր, եթե նա գնացած լիներ ուրիշների կյանքը փրկելու՝ ի տարբերություն տատիկի…

— Ես կասեի: Ես հաստատ կասեի,– կտրուկ ասում է Էլսան:

— Գիտեմ, դրա համար էլ դու ես մեր ապագան,– ժպտում է մայրիկն ու ծանրորեն շրջվում մյուս կողքի վրա:

Էլսան արդեն հասել էր դռանը, երբ ասես դուրս հորդաց մայրիկի քրթմնջոցը երազի մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բոլոր լուսանկարները տատիկի ննջասենյակի առաստաղին են, անո՛ւշս: Դրանց միջի բոլոր երեխաներն այսօր թաղմանը եկել էին: Հիմա մեծ են բոլորը: Նրանք մեծացել են, որովհետև քո տատիկը փրկել է նրանց…

Ու մայրիկը նորից քնում է: Էլսան ամենևին վստահ չէ, որ մինչև այդ արթուն էր:

— No shit, Sherlock: Ես կարծես թե էնքան էլ հիմար չեմ,– շշնջում է Էլսան՝ անջատելով լամպը:

Ըստ էության, այնքան էլ դժվար չէր գուշակել, թե ովքեր էին այդ անծանոթները: Դժվարը միայն նրանց ներելու հարցն էր:

Մայրիկը քնել էր՝ ժպիտը շուրթերին: Էլսան զգուշորեն փակում է դուռը:

Բնակարանից սեղանի լաթի հոտ էր գալիս: Յեորգը հավաքում էր սուրճի բաժակները: Բոլոր անծանոթներն այսօր՝ թաղումից հետո, եկել էին սուրճ խմելու: Նրանք կարեկցանքով ժպտում էին Էլսային, իսկ Էլսան նրանց դրա համար ատում է: Ատում է, որ նրանք ճանաչում էին տատիկին ավելի վաղ, քան ինքը: Էլսան գնում է տատիկի բնակարան ու պառկում տատիկի մահճակալին: Փողոցային լապտերների ցոլքերը խաղում են առաստաղին փակցված նկարների վրա, ինչպես վազվզող շնիկները՝ խոտերը ջրող շատրվաններում: Էլսան դեռ չգիտի՝ կարողանալո՞ւ է արդյոք ներել տատիկին, որ մենակ է թողել մայրիկին հանուն ուրիշների երեխաների փրկության: Չգիտի՝ կարողանալո՞ւ է արդյոք մայրիկը ներել նրան, նույնիսկ եթե ամեն կերպ փորձում է:

Քիչ անց դռնից դուրս է գալիս աստիճանահարթակ, որոշում է իջնել ներքև՝ կայանատեղի՝ վորսի մոտ, սակայն ուժասպառ փուլ է գալիս գետնին: Ու մնում է նստած մի ամբողջ հավերժություն: Փորձում է մտքերը հավաքել, բայց որտեղ սովորաբար մտքեր էր գտնում, միայն դատարկություն ու լռություն էր:

Հանկարծ մի քանի հարկ ներքևից քայլերի ձայն է լսում, քանի որ իրենց շենքում ամեն ինչ լավ լսվում է: Փափուկ, կամացուկ քայլերի ձայն է, որոնք ասես մոլորված լինեն: Ամենևին ո՛չ ինքնավստահ, լարված քայլվածք է: Այդպես սովորաբար քայլում էր սև կիսաշրջազգեստով կինը, երբ անանուխ էր բուրում ու խոսում սպիտակ լարն ականջին: Այժմ ջինս է հագին, ու լար չկա: Նա կանգ է առնում Էլսայից մի տասը քայլ ներքև:

թվայնացրել է 1915.info կայքը

—Ողջո՛ւյն,– ասում է կինը:

Նա փոքր է երևում: Ձայնը հոգնած է հնչում, բայց ոչ սովորականի պես, այս անգամ՝ ավելի քիչ հոգնած: Ու ո՛չ անանուխի, ո՛չ էլ գինու հոտ է գալիս: Միայն շամպունի:

— Ողջո՛ւյն,– ասում է Էլսան:

— Այսօր գերեզմանոց էի գնացել,– դանդաղորեն արտաբերում է նա:

— Թաղմանը չտեսա քեզ,– ասում է Էլսան, բայց կինն ափսոսանքով գլուխն օրորում է:

— Ես այնտեղ չէի: Կներես: Ես... Ես չկարողացա: Բայց ես...,– նա կուլ է տալիս բառերը՝ ներքև՝ ձեռքին բռնած ինչ-որ իրի նայելով:

— Գնացել էի իմ... Իմ տղաների գերեզմանին: Շատ վաղուց չէի եղել:

— Օգնե՞ց,– հարցնում է Էլսան:

Կնոջ շրթունքներն անհետանում են:

— Չգիտեմ:

Էլսան գլխով է անում: Աստիճանահարթակի լամպերն անջատվում են: Սպասում է, որ աչքերն ընտելանան մթությանը: Վերջապես կինը կարծես հավաքում է ամբողջ ուժերը, որ կարողանա ժպտալ, ու մաշկը նրա բերանի շուրջը ասես ճաքեր է տալիս, սակայն առաջվանից մի քիչ պակաս:

— Ո՞նց անցավ թաղումը,– հարցնում է նա:

Էլսան ուսերն է թոթվում:

— Սովորական թաղումի պես: Բավականին շատ մարդ կար:

Կինը գլխով է անում, ասես գլխին մարզագունդ է ամրացված:

— Երբեմն վիշտը դժվար է կիսել մարդկանց հետ, ում չես ճանաչում: Բայց ես կարծում եմ, որ... որ շատերն էին իսկապես սիրում քո... Քո տատիկին:

Էլսան թույլ է տալիս, որ մազափունջն ընկնի դեմքին: Կինը վիզն է քորում:

— Դե ես... Ես նկատի ունեմ... Ես հասկանում եմ, որ դժվար է: Իմացի՛ր, որ քո տատիկն ամեն ինչ թողել է, որ օգնի օտար, անծանոթ մարդկանց ինչ-որ օտար վայրում...Օգնի իմ նմաններին:

Էլսան կասկածամտորեն փնչացնում է, որովհետև թվում է, թե կինը կարդաց իր մտքերը, և ամենևին չի գնահատում նրա խորաթափանցությունը: Համ էլ ճիշտը «ինձ նմաններին» է, ոչ թե «իմ նմաններին»: Կինը շփոթված է երևում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես... այսինքն ես... կներես: Այդ երևույթը բարոյագիտության մեջ կոչվում է «Տրամվայի երկընտրանք»: Նկատի ունեմ՝ ուսանողները սովորում են համալսարանում: Դե... այսինքն, քննարկում են, թե որքանով է բարոյական տեսանկյունից արդարացի զոհաբերել մեկին՝ հանուն շատերի փրկության:

Էլսան ուզում է մի բան ասել, սակայն չգիտի, թե նման դեպքում ինչ կարելի է ասել: Կինն արդարանալով գլխով է անում:

— Դու հաստատ կարող ես կարդալ Վիքիպեդիայում:

Էլսան ուսերն է թոթվում: Կինը մտահոգ է երևում:

— Զայրացած ես երևում,– նկատում է նա:

Էլսան փնչացնում է ու մտածում, թե ինչի վրա է ամենաշատը զայրանում: Իրոք, երկար ցուցակ կլինի:

— Քեզ վրա չեմ բարկանում: Ահավոր ջղայնացած եմ էդ զզվելի Բրիտ-Մարիի վրա,– վերջապես որոշում է Էլսան:

Կինը շվարած գլխով է անում:

— Ես հասկանում եմ:

Էլսան չի կարծում, որ նա իսկապես հասկանում է, դրա համար էլ շարունակում է.

— Բրիտ-Մարին ուղղակի անտանելի վհուկ է: Էնքան ահավոր հիմար է, ասես տեղով ապուշության վարակ լինի: Մոտը երկար մնացողներն էլ վարակվում են, ու իրենք էլ են դառնում ահավոր տխմար:

Կինը զննում է ձեռքի եղածը: Մատներով թմբկահարում է դրան ու ասում. «Մի՛ կռվիր հրեշի հետ, քանզի կարող է ինքդ էլ հրեշի վերածվես: Երբ երկար դեպի անդունդն ես նայում, անդունդն էլ նայում է քո մեջ»:

— Այսինքն՝ ի՞նչ ես ասում,– տարակուսում է Էլսան, սակայն նրան, այնուամենայնիվ, դուր է գալիս, որ իր հետ մեծի պես են խոսում:

— Կներես, ուզում էի ասել... Նիցշեն է ասել,– քաշվելով ասում է կինը՝ քորելով վիզը: — Գերմանացի փիլիսոփա է: Դե, ես... Է՛հ, հաստատ ճշգրիտ չեմ մեջբերում: Բայց կարծում եմ՝ դա նշանակում է, որ եթե ատում ես... Այսինքն, երբ ատում ես, վտանգ կա, որ կդառնաս նրա նման, ում ատում ես:

Էլսայի ուսերը վզից ավելի վեր ցատկեցին:

— Տատիկն էլ միշտ ասում էր. «Թրիքը մի՛ տրորիր, որ վրադ չցայտի»:

Էլսան առաջին անգամ է լսում, որ սև կիսաշրջազգեստով կինը լիաթոք ծիծաղի: Չնայած այսօր ջինսով է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հա՛, հա՛, երևի շատ ավելի լավ տարբերակ է՝ նույն միտքն արտահայտելու:

Նա գեղեցիկ է ծիծաղելիս: Իրոք, շատ է սազում: Հետո նա երկու քայլ առաջ է գալիս դեպի Էլսան, ձգվում է այնքան, որ կարողանա միայն ձեռքի ծրարը նրա ձեռքին հասցնել՝ առանց ավելի մոտենալու: Ու նրա բառերը նորից անհետ կորչում են սև փոսի մեջ:

— Սա դրված էր իմ տղաների... Դրված էր նրանց գերեզմանի վրա: Չգիտեմ... Ես չգիտեմ՝ ով է դրել: Բայց քո տատիկը... Գուցե տատիկիդ մտքով անցել է, որ ես գնալու եմ...

Էլսան վերցնում է ծրարը: Ձինսով կինն անհետանում է աստիճանների ներքևում, մինչ Էլսան հասցնում է հայացքը բարձրացնել: Ծրարի վրա գրված է. «ԷԼՍԱՅԻՆ: ՓՈԽԱՆՑԻ՛Ր ԼԵՆԱՐՏԻՆ ՈՒ ՄՈԴԻՆ»:

Այսպես Էլսան գտնում է տատիկի երրորդ նամակը:

Լենարտի ձեռքին սուրճով լի բաժակ է, երբ նա բացում է դուռը: Մոդն ու Սամանթան, նրա հետևում կանգնած, ժպտում են: Նրանցից թխվածքի հոտ է գալիս:

— Ես նամակ ունեմ ձեզ տալու,– հայտարարում է Էլսան:

Լենարտը վերցնում է նամակն ու ուզում է ինչ-որ բան ասել, սակայն Էլսան շարունակում է:

— Իմ տատիկից է: Հավանաբար ողջունում է ու ասում՝ կներեք, ոնց որ բոլոր նամակներում:

Լենարտը սիրալիր գլխով է անում: Մոդն է՛լ ավելի սիրալիր է գլխով անում:

— Մենք անասելի վշտացած ենք, որ տատիկդ հեռացավ մեզնից, սիրելի՛ փոքրիկ Էլսա: Բայց, իսկապես, ֆանտաստիկ գեղեցիկ թաղում էր՝ մեր կարծիքով: Ուրախ ենք, որ կարողացանք ներկա լինել:

— Շատ համեղ սուրճ էր,– երախտագիտությամբ գլխով է անում Լենարտն ու ձեռքով Էլսային ներս է հրավիրում:

— Հա՛, նե՛րս արի, նե՛րս արի, հրուշակներ ունենք,– առաջարկում է Մոդը:

— Հա՛, կարող եմ էլի սուրճ պատրաստել,– ձայն է տալիս Լենարտը:

— Համ էլ O'boy կակաո ունենք, Ալֆն է բերել,– խանդավառությամբ ասում է Մոդը:

թվայնացրել է 1915.info կայքը

Սամանթան հաչում է: Նրա հաչոցն էլ է սիրալիր հնչում: Էլսան մի հրուշակ է վերցնում բերնեբերան լցված տուփի միջից, ապա մեղմորեն ժպտում է Մոդին:

— Ես մի ընկեր ունեմ, որ շատ է սիրում էս հրուշակներից: Ամբողջ օրը մենակ է մնացել: Ի՞նչ եք կարծում, լավ կլինի՞, որ նրան հետս վերև բերեմ:

Մոդն ու Լենարտը գլխով են անում, ինչպես այն մարդիկ, որ պարզապես ընդունակ չեն տարուբերել իրենց գլուխը: Եվ ինքնին ենթադրվում է, որ կարելի է:

— Ինքնին ենթադրվում է, որ հաստատ կարող ես, սիրելի՛ փոքրիկ,– բացականչում է Մոդը:

— Ես էլ գնամ սուրճ դնեմ,– ոգևորված ասում է Լենարտը:

Մոդը թփթփացնում է Էլսայի թևին ու եռանդագին կրկնում.

— Ինքնին ենթադրվում է, որ կարող ես ընկերոջդ հետդ բերել: ՀԱՍՏԱ՛Տ:

Մոդի տեսքը հաստատ նույնքան ինքնավստահ չի երևում, երբ վորսը քիչ անց արդեն նստած էր նրա խոհանոցի գորգին: Ենթադրվում է միայն այդքանը:

Եվ կենդանին բառացիորեն ամբողջությամբ զբաղեցնում է խոհանոցի գորգը:

թվայնացրել է 1915.info կայքը

24

ՀՐՈՒՇԱԿՆԵՐԸ

— Ասում էի, չէ՞, որ հրուշակ շատ է սիրում,– գոհունակությամբ ասում է Էլսան:

Մոդը գլխով է անում՝ առանց բառ ասելու: Լենարտը նստած է սեղանի հակառակ եզրին՝ ծնկներին դրած լեղաճաք եղած Սամանթային: Վորսը հրուշակները տասնյակով է խփշտում:

— Ի՞նչ ցեղատեսակ է,– կամացուկ հարցնում է Լենարտը՝ ասես վախենալով, որ հանկարծ վորսը կվիրավորվի:

— Վորս,– ուրախ ասում է Էլսան:

Լենարտը գլխով է անում այն մարդու պես, որը գաղափար չունի, թե դա ինչ է նշանակում: Մոդը հրուշակների նոր տուփ է բացում ու հատակին դնելով՝ ոտքով զգուշորեն հրում է կենդանու կողմը: Վորսը խժռոցով իսկույն դատարկում է տուփը: Բարձրացնում է գլուխն ու Մոդին է նայում անվադողերի մեծության իր աչքերով: Մոդը ևս երկու տուփ է իջեցնում՝ աշխատելով ցույց չտալ, թե որքան է շոյված: Բայց առանձնապես չի ստացվում:

— Իսկ այդ ցեղատեսակը գրանցվա՞ծ է ծառայողական շների ակումբում,– հետաքրքրվում է Լենարտը, երբ վորսի քիթը սուզվում է հրուշակների ծովում:

— Չեմ կարծում,– ասում է Էլսան:

— Ես էլ,– ասում է Լենարտը՝ փորձելով հետ պահել Սամանթային՝ գլուխն իր վզի ու ականջի արանքը խցկելուց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մարդամո՞տ է,– անվճռական հարցնում է Մոդը՝ կարծես ցանկանալով շոյել կենդանուն:

Էլսան մտածկոտ վորսին է նայում:

— Չգիտեմ: Վորսերը հեքիաթներում արքայադուստրերի ամրոցներն են հսկում: Էնպես որ, ենթադրում եմ, որ մարդամոտ է:

— Այսինքն՝ պահակաշուն է,– եզրակացնում է Լենարտը:

Էլսան գլխով է անում: Լենարտը, որին հաջողվում է կենդանուն դասակարգել, անմիջապես բավարարվում է ու սկսում է իրեն ավելի անկաշկանդ պահել:

— Ահա՛ թե ինչ: Ուրեմն թագավորական ցեղատեսա՞կ է,– տպավորված ասում է Մոդը:

— Դե, համարյա,– ասում է Էլսան:

— Ամեն դեպքում, հրուշակների համար իսկապես գժվում է,– ժպտում է Մոդն ու էլի երկու տուփ դնում է դիմացը:

— Սուրճն ի՞նչ եղավ,– հետաքրքրվում է Լենարտը՝ վախենալով, որ թափված լինի, ու վեր է կենում՝ կենգուրուի ձագի պես փորից կառչած բիշոն ֆրիզեն գրկած:

Ինչ ուզում եք ասեք, սակայն Սամանթայի համար ինչ-որ մեկի թագավորական լինելը դեռ բավարար չէ խաղաղվելու համար: Հատկապես այն պարագայում, որ այդ թագավորական հսկան Սամանթային իր ճանկերի տակ ընկած կեղտի հետ կշփոթեր:

— Դարչինով բուլկի կուզե՞ս, փոքրի՛կ Էլսա, միկրոյի մեջ տաքացնեմ,– առաջարկում է Մոդը:

Էլսան գլխով է անում, որովհետև Մոդի տանը դարչինով բուլկուց հրաժարվողը, իրոք, խելք չունի:

— Կներես, դարչինով բուլկի կուտե՞ս,– վորսին հարցնում է Մոդը:

Նա այնքան հստակ է արտաբերում բոլոր վանկերը, ասես վորսը ակումբի կանգնակի հակառակ կողմում է, որտեղից բարձր երաժշտություն է հնչում:

Վորսը դարչինով բուլկի է ուտում:

— Կարծում եմ՝ մենք կարող ենք ընկերանալ, դու ու ես,– մտերմաբար շշնջում է նրան Մոդը՝ ընդամենը 20 վայրկյան անց սառցարանից ևս չորս տոպրակ հանելով:

Վորսը, երևում է, առաջարկը չափազանց գայթակղիչ է համարում:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան նայում է տատիկի նամակին: Այն ծալված դրված է սեղանին: Լենարտն ու Մոդը պետք է որ հասցրած լինեին կարդալ այն, մինչ ինքը նկուղ էր իջել՝ վորսին բերելու:

Լենարտը նկատում է Էլսայի հայացքն ու ձեռքը դնում նրա ուսին:

— Ճիշտ էիր: Տատիկդ ներողություն է խնդրում:

— Ինչի՞ համար,– հարցնում է Էլսան:

Մոդը վորսին դարչինով բուլկի է տալիս ու հյուսած թխվածքի կեսը:

— Հա՛, իսկապես, մի ամբողջ ցուցակ էր: Քո տատիկը, դե գիտես, մի քիչ…

— Առանձնահատուկ էր,– մեջ է ընկնում Էլսան:

Մոդը սրտանց ծիծաղում է ու թփթփացնում վորսի գլխին: Լենարտը գլխով նամակն է ցույց տալիս:

— Սկզբում նա ներողություն է խնդրում, որ շատ հաճախ էր գոռգոռում մեզ վրա, հաճախ էր բարկանում: Նաև վիճում էր ու անհարմար վիճակի մեջ գցում: Բայց դե, դա ի՞նչ մի ներողություն խնդրելու հարց է, բոլորի հետ էլ լինում է,– ասում է նա, ասես ինքն է ուզում ներողություն խնդրել, որ տատիկը ներողություն է խնդրում:

— Բայց ո՛չ ձեզ հետ,– մտածում է Էլսան ու հենց դրա համար էլ սիրում է նրանց:

Մոդը հազիվ է զսպում ծիծաղը:

— Համ էլ ներողություն է խնդրում այն դեպքի համար, երբ իր պատշգամբից փինբոլի հրացանով կրակելիս պատահաբար Լենարտին էր կպել:

Նա հանկարծ շփոթվում է:

— Այդպե՞ս է կոչվում, փինբո՞լ:

Էլսան գլխով է անում: Չնայած այդպես չէ: Մոդն իրեն լավ է զգում:

— Մի անգամ տատիկդ դրանով պատահաբար կրակում է Բրիտ-Մարիին, ու Բրիտ-Մարիի ծաղկավոր բաճկոնի վրա հսկայական վարդագույն հետք է թողնում: Իսկ դա Բրիտ-Մարիի սիրած պիջակն էր, ու հետքը չանցավ նույնիսկ Vanish-ով տրորելուց հետո: Պատկերացնո՞ւմ ես:

Մոդը թեթևակի ծիծաղում է, բայց հետո սաստիկ ամաչում է:

— Բնականաբար, Բրիտ-Մարին սարսափելի կատաղել էր: Իհարկե, իմ կողմից տգեղ էր դրա վրա ծիծաղելը:

Էլսան չի կարծում, որ դրանից ինչ-որ բան կփոխվի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրիշ ինչի՞ համար էր տատիկը ներողություն խնդրում,– հարցնում է նա՝ հուսալով էլի պատմություններ լսել, թե ինչպես է ինչ-որ մեկը փեյնթբոլով կրակել Բրիտ-Մարիի վրա:

Կամ էլ, ամեն դեպքում, ցանկացած ուրիշ առարկայով: Էլսան այդ աստիճան բծախնդիր չէ: Սակայն Լենարտի կզակն իջնում է կրծքին: Նա նայում է Մոդին, ու երբ Մոդը գլխով է անում, Լենարտը շրջվում է դեպի Էլսան:

— Քո տատիկը ներողություն է խնդրում, որ խնդրել է՝ պատմենք քեզ ամբողջ պատմությունը, որ դու ամեն ինչ իմանաս:

— Ի՞նչ պատմություն,– Էլսան հազիվ է հասցնում հարցնել, երբ զգում է, որ մեկն իր հետևում կանգնած է:

Նա աթոռի վրա պտտվում է: Համախտանիշով տղան կանգնած է ննջասենյակի դռան մոտ՝ փափուկ խաղալիք առյուծը գրկին: Նա նայում է Էլսային, բայց երբ Էլսան նրան է նայում, թույլ է տալիս, որ մազերն ընկնեն իր ճակատին: Ճիշտ ինչպես Էլսան է անում: Տղան մոտ մեկ տարի փոքր է Էլսայից, բայց նույն հասակի է, և երկուսն էլ նույն սանրվածքն ունեն ու մազերի համարյա նույն գույնը: Նրանց միակ տարբերությունն այն է, որ Էլսան մյուսներից տարբերվում է, իսկ տղան համախտանիշ ունի: Համախտանիշն էլ է տարբերություն, ուղղակի շատ առանձնահատուկ:

Տղան ոչինչ չի ասում, որովհետև երբեք չի խոսում: Սակայն Մոդը համբուրում է նրա ճակատն ու շշնջում՝ մղձավա՞նջ: Տղան գլխով է անում, ու Մոդը մի մեծ բաժակ կաթ է վերցնում, մի ամբողջ տուփ հրուշակներ, ապա բռնում է տղայի ձեռքից ու նորից ննջասենյակ տանելով՝ սպառնալից ձայնով ասում է. «Արի՛, հիմա դրան կքշենք»:

Լենարտը դառնում է Էլսային:

— Կարծում եմ, տատիկդ ուզել է, որ ես սկզբից սկսեմ:

Այդ օրն Էլսան լսեց համախտանիշով տղայի պատմությունը, ինչպիսին առաջ երբեք չէր լսել: Այնպիսի սարսափելի պատմություն, որը լսելիս ուզում ես ինքդ քեզ ամուր գրկել: Լենարտը պատմում է տղայի հոր մասին, որի սրտում ավելի շատ ատելություն կա, քան կարելի է պատկերացնել, որ մարդ արարածն ունակ է տեղավորել իր մեջ: Հայրը թմրանյութեր էր օգտագործում, ու Լենարտն ընդհատում է ինքն իրեն՝ վախենալով, որ Էլսան նույնպես կարող է վախենալ, բայց Էլսան ուղղում է մեջքը, մատներն ավելի խորն է խրում վորսի մորթու մեջ ու ասում, որ չի վախենում: Լենարտը

թվայնացրել է 1915.info կայքը

հարցնում է, թե գիտի՞ արդյոք ինչ է թմրանյութը, իսկ Էլսան ասում է, որ այդ մասին կարդացել է Վիքիպեդիայում:

Եվ Լենարտը պատմում է, որ տղայի հայրը բոլորովին այլ արարածի է վերածվում, երբ օգտագործում է այն, ինչի մասին Էլսան կարդացել է Վիքիպեդիայում: Նրա հոգին դրանից խավարում է: Նա ծեծ ու ջարդ էր տալիս մորը հղի ժամանակ, որովհետև չէր ուզում ոչ մեկի հայրը դառնալ: Լենարտն ավելի հաճախակի է թարթում ու ասում է, որ երևի հայրը վախենում էր, թե երեխան իր նման կլինի՝ ատելությամբ ու դաժանությամբ լցված: Այնպես որ, երբ տղան ծնվեց, ու բժիշկներն ասացին, որ նրա մոտ համախտանիշ է, հայրն ուղղակի կատաղությունից գժվեց: Նա չէր կարող հանդուրժել, որ երեխան մյուսներից տարբեր է լինելու: Գուցե ատում էր այն ամենը, ինչ տարբերվում է: Գուցե տղային նայելիս տեսնում էր այն ամենը, ինչով ինքն էր տարբերվում:

Հայրը սկսեց խմել, օգտագործել այն, ինչի մասին գրված է Վիքիպեդիայում, ամբողջ գիշերներով, երբեմն նույնիսկ շաբաթներով անհետանալ՝ առանց որևէ մեկին տեղյակ պահելու: Երբեմն տուն էր վերադառնում բոլորովին հանգիստ և զգուշավոր: Երբեմն լացում էր ու բացատրում, որ ստիպված էր հեռու մնալ, մինչև որ ամբողջ կատաղությունը դուրս գար միջից: Կարծես ինչ-որ չար ուժ կար նրա ներսում, որը փորձում էր տիրել նրան ամբողջությամբ, որի հետ պետք էր անընդհատ պայքարել: Նա կարողանում էր մի քանի շաբաթ կամ մի քանի ամիս հանգիստ լինել:

Բայց մի երեկո մթությունն ամբողջությամբ տիրեց նրան: Նա ծեծեց կնոջն ու տղային, ծեծեց այնքան, մինչև նրանցից ոչ մեկն այլևս չէր շարժվում: Ու հետո փախավ:

Մոդի ձայնը ճեղքում է լռությունը, որ տիրել էր խոհանոցում Լենարտի պատմությունից հետո: Համախտանիշով տղան ննջասենյակում խռմփացնում էր: Առաջին անգամ էր Էլսան նրանից որևէ ձայն լսում: Մոդի մատները թափառում են խոհանոցի սեղանին դրված դատարկ տուփերի շուրջը:

— Մենք գտանք նրանց: Մենք երկար համոզում էինք մորը վերցնել երեխային ու հեռանալ, բայց նա շատ վախեցած էր: Մենք բոլորս էլ վախեցած էինք: Նա սարսափելի վտանգավոր մարդ է,– շշնջում է Մոդը:

Էլսան ավելի ամուր է փաթաթվում վորսին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ հետո ի՞նչ արեցիք:

Մոդը փուլ է գալիս աթոռին: Նրա ձեռքին ծրար է, նույնպիսին, ինչպիսին Էլսան հանձնել էր նրանց:

— Մենք ճանաչում էինք քո տատիկին: Հիվանդանոցից: Հա՛, սիրելի՛ փոքրիկ, հասկանո՞ւմ ես, այն ժամանակ մենք՝ Լենարտն ու ես, հիվանդանոցի մուտքի կողքին սրճարան ունեինք: Տատիկդ ամեն օր այցելում էր մեզ ու միշտ մեր հրուշակներից էր գնում:

— Անունն էլ «Միրևասի հրուշակներ» էր դրել,– հիշում է Լենարտը, ու Մոդը գլխով է անում: — Այնպես որ, ի վերջո, մենք էլ էինք «Միրևասի հրուշակ» ասում: Տասներկու միրևասյան ու վեց դարչինով բուլկի էր գնում ամեն օր: Քույրս փոքր հրուշակարան ունի մեզնից մի քիչ հարավ: Ես երբեմն թխում եմ նրա համար, ու տատիկդ շարունակում էր դարչինով բուլկի գնել նրանից նույնիսկ հետո, երբ մենք…

Նա ընդհատում է ու մի քիչ ամաչելով՝ թափ է տալիս ձեռքը, ինչպես տարիքով մարդիկ, երբ զգում են, որ շեղվել են թեմայից:

— Իրականում չգիտեմ՝ ոնց սկսվեց: Բայց տատիկդ այնպիսի մարդ էր, որին կարելի էր ամեն ինչ պատմել, հասկանո՞ւմ ես՝ ինչ նկատի ունեմ: Ես չգիտեի ինչ անել: Չգիտեի ում դիմել: Մենք բոլորս սարսափելի վախեցած էինք, ու ես զանգեցի տատիկիդ: Նա գիշերվա կեսին եկավ իր ժանգոտած մեքենայով…

— Renault-ով,– բացականչում է Էլսան՝ մի տեսակ զգալով, որ մեքենայի անունը պետք է հիշատակվի պատմության մեջ, քանի որ նրա շնորհիվ էին բոլորը փրկվել:

Լենարտը, թախծոտ ժպիտով հազալով, կոկորդն է մաքրում:

— Հա՛, նրա Renault-ը: Ճիշտ է, Renault-ով եկավ: Մենք վերցրինք տղային ու նրա մայրիկին, ու տատիկդ մեզ այստեղ բերեց: Ու մեզ բնակարանների բանալիները տվեց: Չգիտեմ՝ ոնց էր դրանք ձեռք գցել, բայց մեզ ասաց, որ տան սեփականատերերի հետ հարցերն ինքը կլուծի: Ու դրանից հետո մենք այստեղ ենք ապրում:

— Բա հայրն ի՞նչ եղավ: Ի՞նչ արեց, որ տեսավ՝ ոչ մեկը չկա,– ուզում է իմանալ Էլսան, չնայած ամենևին էլ չի ուզում:

Լենարտի ձեռքը Մոդի մատներն է փնտրում:

— Չգիտենք: Բայց տատիկդ այստեղ եկավ Ալֆի հետ, ներկայացրեց Ալֆին ու ասաց, որ կգնա տղայի իրերը բերելու: Նրանք Ալֆի հետ գնացին

թվայնացրել է 1915.info կայքը

նախկին տունը, բայց տղայի հայրը հայտնվել էր ու… Էլ ավելի կատաղած էր: Ամբողջությամբ ներսից մթնած էր: Ու սարսափելի ծեծի էր ենթարկել Ալֆին…

Լենարտը լռում է, ինչպես լինում է, երբ մարդ հանկարծ հաշիվ է տալիս իրեն, որ երեխայի հետ է խոսում: Ու մանրամասները բաց է թողնում:

— Հա՛, դե նա, բնականաբար, արդեն փախել էր, երբ ոստիկաններն եկան: Իսկ Ալֆը, Հիսո՛ւս Քրիստոս, չգիտեմ: Նրան հիվանդանոցում ոտքից գլուխ վիրակապեցին, ու նա ինքնուրույն իր մեքենայով տուն վերադարձավ ու երբեք ոչմի բառ չհիշատակեց դեպքի մասին: Իսկ երկու օրից նորից տաքսի էր քշում: Ոնց որ պողպատից լինի այդ մարդը:

— Իսկ հա՞յրը,– ձեռք չի քաշում Էլսան:

— Անհետացավ: Մի քանի տարի է՝ անհետացած էր: Մենք կարծում ենք, որ դրանից հետո անընդհատ փնտրել է մեզ, նախ և առաջ՝ տղային, բայց նա այնքան երկար ժամանակ չկար, որ մենք հույս ունեինք, որ…,– Լենարտը լռում է, կարծես բառերը չափազանց ծանր էին արտասանելու համար:

— Բայց հիմա նա մեզ գտել է,– լրացնում է Մոդը:

— Ո՞նց,– հարցնում է Էլսան:

Լենարտի աչքերը սահում են սեղանածածկի վրայով:

— Ալֆը կարծում է, որ նրա աչքով ընկել է տատիկիդ մահվան հայտարարությունը: Այդպես գտել է թաղման գրասենյակը: Ու այնտեղ տեսել է…,– սկսում է նա, բայց կարծես իսկույն հիշեցնում է իրեն, որ չարժի մանրամասնել:

— Ի՞նձ,– շշնջում է Էլսան, իսկ սիրտը, թվում է, ուր որ է դուրս կթռչի:

Լենարտը գլխով է անում, իսկ Մոդը բաց է թողնում նրա ձեռքը, նետվում է սեղանի մյուս կողմն ու գրկում Էլսային:

— Փոքրի՛կս, փոքրի՛կս, հասկանո՞ւմ ես՝ նա քանի տարի չէր տեսել տղային: Իսկ դուք նույն տարիքի եք, ու մազերի կտրվածքն էլ նույնն է: Նա կարծեց, թե դու ես մեր թոռնիկը:

Էլսան փակում է աչքերը: Ամեն անգամ շնչելիս քունքերի ներսում այնպես է ծակում, ասես երկու մագնիս փորձում են գանգոսկրը փորելով իրար կպչել: Կյանքում առաջին անգամ Էլսան օգտագործում է իր ամբողջ կամքի ուժը, որ հայտնվի Երկիր-Կիս-Արթունում՝ առանց քնելու մի փոքր ցանկություն ունենալու: Ամբողջ երևակայությունն ի մի բերելով՝ ցատկում

թվայնացրել է 1915.info կայքը

է ամպէակի վրա ու թռչում Միաուդակաս: Այնքան խիզախություն է հավաքում, որքան որ կարող է կրել: Ապա բացում է աչքերն ու Լենարտին ու Մոդին նայելով՝ ասում է.

— Փաստորեն դուք տղայի տատիկն ու պապիկն եք՝ մոր ծնողնե՞րը:

Արցունքները Լենարտի քթի վրայով կաթկթում են սեղանին, ինչպես անձրևի կաթիլները՝ պատուհանագոգին:

— Չէ՛, հոր ծնողներն ենք:

Էլսան կկոցում է աչքերը:

— Տղայի հոր ծնողնե՞րը:

Մոդի կրծքավանդակն արագ վերուվար է անում: Նա թփթփացնում է վորսի գլխին, հետո գնում ու մի շոկոլադե տորթ է բերում: Սամանթան շրջահայացորեն աչքը չի կտրում վորսից: Լենարտն իր համար սուրճ է լցնում: Ձեռքն այնպես է դողում, որ սուրճը բաժակից թափվում է:

— Հասկանում եմ, որ երեխային հորից խլելը սարսափելի է հնչում, Է՛լսա, մանավանդ սեփական որդու նկատմամբ: Բայց երբ տատիկ կամ պապիկ ես դառնում, այսինքն, երբ տատիկ կամ պապիկ ես, նախ և առաջ...,– տխուր շշնջում է Լենարտը:

— Առաջնայինը տատիկ ու պապիկ լինելն է: Մի՛շտ,– վրա է տալիս Մոդը՝ անսանձ ըմբոստությամբ ու կայծկլտացող հայացքով, ինչն Էլսան երբեք նրանից չէր սպասում:

Հետո Էլսային ծրար է տալիս, որը բերել է ննջասենյակից: Տատիկի ձեռագիրն է: Անունն Էլսային ծանոթ չէ, սակայն նա գլխի է ընկնում, որ նամակը տղայի մայրիկին է ուղղված:

— Մոր անունն է, նախքան ոստիկանությունը մեզ պաշտպանված ինքնություն տվեց կամ ինչ է դա կոչվում,– ասում է Մոդն ու որքան կարող է, մեղմ ավելացնում է,– տատիկդ նամակը մեզ մոտ է թողել մի քանի ամիս առաջ: Ասաց, որ դու պիտի այն հանձնես: Ինքը գիտեր, որ մի օր կգաս մեզ մոտ,– ասում է նա:

Էլսան գլխով է անում ու փակում աչքերը:

— Գիտեմ: Գանձարոս է: Տատիկի ուշքը գնում էր գանձ փնտրելու համար:

Լենարտը դժբախտ հոգոց է հանում: Նրա ու Մոդի հայացքները նորից են հանդիպում, հետո բացատրում է.

թվայնացրել է 1915.info կայքը

— Վախենամ՝ մենք սկզբից պիտի պատմեինք մեր տղայի մասին, Էլսա: Մենք պիտի պատմենք Սեմի մասին: Հա՛, անունը Սեմ է: Ու տատիկդ դրա համար էլ է ներողություն խնդրում նամակում: Նա գրել է՝ կներեք, որ... Որ փրկել է Սեմի կյանքը:

Մոդի ձայնը խզվում է, ու բառերը վերածվում են սուլոցների:

— Իսկ հետո ներողություն է խնդրում, որ ներողություն է խնդրել և փոշմանել է մեր տղայի կյանքը փրկելու համար: Գրել է՝ կներեք, որ այլևս վստահ չէ, թե Սեմը վաստակել է իր ապրելու իրավունքը: Բժիշկ լինելով հանդերձ...

Պատուհանից այն կողմ գիշեր է իջնում թաղամասի վրա: Խոհանոցը սուրճ ու շոկոլադե թխվածք է բուրում: Եվ Էլսան լսում է Սեմի հեքիաթը՝ աշխարհի ամենաբարի կամ համարյա ամենաբարի ծնողների որդու, որն այնքան չար էր, որ ավելի չար հնարավոր չէ պատկերացնել: Նա դարձավ հայրը մի տղայի, որն իր հերթին այնքան հեռու էր չարությունից, որ անհնար է պատկերացնել: Կարծես հայրն ամբողջը հավաքել էր իր մեջ՝ կաթիլ իսկ չփոխանցելով որդուն: Էլսան լսում է Սեմի պատմությունն այն մասին, որ մի ժամանակ փոքրիկ տղա էր, Մոդի ու Լենարտի մասին, որոնք երազում էին երեխա ունենալ, և այնքան էին սիրում նրան, որքան միայն ծնողը կարող է սիրել իր զավակին: Ինչպես բոլոր ծնողները, նույնիսկ ամենաամենավատերը գոնե մի օր սիրել են իրենց երեխաներին: Այսպես է պատմում Մոդը:

— Թե չէ, էլ ի՞նչ մարդ: Ուղղակի չեմ պատկերացնում, թե ուրիշ կերպ ոնց է հնարավոր,– շշնջում է Մոդը:

Եվ համառորեն կարծում է, որ իր սխալն է, որովհետև չի պատկերացնում, որ երեխան կարող է չար լինել ի ծնե: Մոդը համոզված է, որ մոր մեղքով է, որ փոքրիկ ու անօգնական տղան մեծանալով հրեշի է վերածվում: Չնայած Էլսան պատմում է՝ ինչպես էր տատիկն ասում, որ մարդկանց մի մասն իրականում տականք է, ու այդ տականքներից բացի՝ ոչ մեկը մեղավոր չէ նրանց պիղծ էության համար:

— Բայց Սեմը միշտ սաստիկ չարացած էր, ու ես չգիտեի, թե որտեղից է գալիս այդ չարությունը: Պիտի որ իմ մեջ այնպիսի խավար լիներ, որը ես փոխանցած լինեի նրան, որը չգիտեմ, թե որտեղից առաջացած կլիներ,– անմխիթար շշնջում է Մոդը:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ նա պատմում է տղայի մասին, որ մեծանում էր մշտական կռիվնե-րի մեջ, դպրոցում հալածում էր ուրիշ երեխաների, միշտ հետապնդում էր տարբերվողներին: Հետո նա մեծանալով դառնում է զինվոր ու գնում հեռավոր երկրներ, քանի որ կարոտ էր կռիվների, ու այնտեղ ընկեր է գտնում. իր առաջին իսկական ընկերոջը: Պատմում է, թե ինչպես են բոլոր նրան տեսնողներն ասում, որ շատ է փոխվել, լավ հատկանիշներ է ձեռք բերել: Ընկերը նույնպես զինվոր էր, բայց այլ կարգի՝ առանց խանդավա-ռության: Նրանք անբաժան ընկերներ են դառնում: Սեմի ասելով՝ ընկերն իր կյանքում տեսած ամենաքաջարի մարտիկն էր:

Նրանք միասին տուն են վերադառնում, ու ընկերը Սեմին ծանոթացնում է մի աղջկա հետ, որը մի ուրիշ հատկանիշ է տեսնում նրա մեջ: Այդ ժամա-նակ Լենարտն ու Մոդը նույնպես փոփոխություն են նկատում խավարից ազատված Սեմի մեջ:

— Մեզ թվաց, թե աղջիկը կկարողանա ազատել նրան. ներքուստ հույս ունեինք, որ նա փրկվել է, որովհետև այդ փոփոխությունը հեքիաթի էր նման, իսկ երբ մարդ շատ երկար է ապրել խավարի մեջ, հազիվ թե հրա-ժարվի հեքիաթների հավատալուց,– խոստովանում է Մոդը, իսկ Լենարտն իր ափերի մեջ նրա ձեռքերն է բռնել:

— Բայց կյանքի հանգամանքները փոխվեցին,– հառաչում է Լենարտը,– ինչպես հաճախ է լինում հեքիաթներում: Եվ այս անգամ Սեմի մեղքը չէր: Կամ էլ հենց ամբողջովին Սեմի մեղքն էր: Թող մեզնից ավելի խելոք մար-դիկ դատեն, թե ամեն մարդ ի՞նքն է արդյոք կրում ամբողջ պատասխա-նատվությունն իր բոլոր արարքների համար, թե՞ ոչ,– ասում է Լենարտը: – Բայց Սեմը նորից գնաց պատերազմ: Ու տուն վերադարձավ շատ ավելի մռայլ:

— Նա առհասարակ իդեալիստ էր: Չնայած այդ ամբողջ ատելությանն ու չարությանը՝ նա իդեալիստ էր, դրա համար էր ուզում զինվոր լինել,– տխուր ընդմիջում է նրան Մոդը:

Այդ ժամանակ Էլսան Մոդին ու Լենարտին խնդրում է, որ թույլ տան իրեն՝ համակարգչով մի բան ստուգի:

— Այսինքն՝ եթե ունեք,– մեղավոր ձայնով ավելացնում է նա՝ հիշելով Գայլ-սիրտի հետ ունեցած նման խոսակցությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բնականաբար ունենք,– զարմացած ասում է Լենարտը:

— Իհարկե, մեր օրերում ո՞նց է հնարավոր համակարգիչ չունենալ,– մեղմ ժպտալով ասում է Մոդը:

«Հա՛ էլի»,– մտածում է Էլսան ու որոշում Գայլսիրտի հաջորդ հայտնվելուց անպայման ասել նրան այդ մասին: Եթե, առհասարակ, մյուս անգամը լինի:

Լենարտն առաջնորդում է նրան ննջասենյակի կողքով, ու Էլսան նկատում է, որ Մոդը տղայի անկողնու շուրջը մեծ շրջանով հրուշակներ է շարել: Բնակարանի խորքում՝ փոքրիկ աշխատասենյակում, Լենարտը պատմում է, որ իրենց համակարգիչը, բնականաբար, բավական հին է, այնպես որ Էլսան պիտի զինվի համբերությամբ: Ու Էլսան սենյակի սեղանին տեսնում է երբևէ իր տեսած ամենաանհեթեթ համակարգիչը, որի հետևում հսկայական արկղ է, իսկ գետնին՝ մեկ ուրիշ արկղ:

— Սա ի՞նչ է,– հարցնում է Էլսան՝ մատով ներքև ցույց տալով:

— Համակարգիչը հենց դա է,– ասում է Լենարտը:

— Բա սա՞,– հարցնում է Էլսան՝ ցույց տալով համակարգիչը:

— Դա մոնիտորն է,– ասում է Լենարտը՝ գետնի արկղի վրա մի խոշոր կոճակ սեղմելով, ու ավելացնում է,– դե, մի քանի րոպե կտևի, մինչև որ միանա, այնպես որ պիտի մի քիչ սպասենք:

— Մի քանի ՐՈՊԵ՞,– բացականչում է Էլսան ու մռթմռթում ,– վաո՛ւ, իրոք, կարգի՜ն հին է:

Երբ, ի վերջո, այդ կարգին հին համակարգիչը միանում է, ու Լենարտը բազմաթիվ եթե-ներից ու բայց-երից հետո վերջապես հաջողեցնում է Էլսային համացանցին միացնել, Էլսան, գտնելով իր փնտրածը, վերադառնում է խոհանոց ու նստում Մոդի դիմաց:

— Ուրեմն՝ նա երազող է: Փաստորեն այդ է նշանակում: Այսինքն՝ իդեալիստ:

— Հա՛, կարելի այդպես ասել,– բարեկամաբար ժպտում է Մոդը:

— Ոչ թե կարելի է ասել, այլ հենց այդ էլ նշանակում է,– ուղղում է Էլսան:

Մոդն է՛լ ավելի բարեհամբույր է գլխով անում: Հետո պատմում է մի իդեալիստի մասին, որը ցինիկ էր դարձել, իսկ Էլսան գիտեր՝ ինչ է դա նշանակում, որովհետև մանկապարտեզի դաստիարակչուհին նրան մի անգամ այդպես էր անվանել:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրիկն ափերից դուրս էր եկել, երբ իմացել էր, բայց դաստիարակչուհին իրենն էր պնդել: Էլսան չի հիշում մանրամասները, չնայած պատճառն այն էր, որ ինքը պատմել էր մյուս երեխաներին, թե երշիկն ինչպես են պատրաստում:

Էլսայի կարծիքով՝ նման դեպքերի մասին մտածելն ասես պաշտպանական մեխանիզմ լինի, որովհետև այս հեքիաթի մեջ պարզապես չափազանց շատ է իրականությունը: Երբ մարդ ութին է մոտենում, իրականությունը հաճախ չափազանց շատ է:

Մոդը պատմում է, թե ինչպես Սեմը նորից գնաց պատերազմ: Նա ընկերոջ հետ էր, ու նրանք մի քանի շաբաթ անընդմեջ մի փոքրիկ գյուղ էին պաշտպանում ինչ-որ մարդկանց հարձակումից, որոնք Մոդի ուղեղում չտեղավորվող պատճառներով ուզում էին վերացնել այդ գյուղի բոլոր բնակիչներին: Ի վերջո, նրանք հրաման են ստանում հեռանալ գյուղից, քանի որ իրավիճակը բավականին վտանգավոր էր, սակայն Սեմի ընկերը հրաժարվում է լքել գյուղը: Նա համոզում է Սեմին ու մյուս զինվորներին մնալ, մինչև օգնական ուժերը կհասնեն, ու գյուղն ապահով կլինի: Հետո նրանք որքան կարող են, վնասվածքներ ստացած երեխաներին մեքենաների մեջ են տեղավորում ու տանում կիլոմետրերով հեռու գտնվող հիվանդանոց, քանի որ Սեմը ճանաչում էր այնտեղ աշխատող մի կնոջ, որը բոլորին հայտնի էր որպես աշխարհի ամենահմուտ վիրաբույժ:

Իսկ ճանապարհին անապատի միջով անցնելիս նրանք հանկարծ քշեցին ականի վրայով: Անողոք պայթյուն էր: Անձրևի պես կրակ ու արյուն էր թափվում:

— Մարդ մահացա՞վ,– հարցնում է Էլսան՝ չուզենալով լսել պատասխանը:

— Բոլորը,– ասում է Լենարտը՝ չուզենալով բարձրաձայն արտաբերել այդ բառը:

Բոլորը՝ բացի Սեմի ընկերոջից ու Սեմից: Նրան անգիտակից վիճակում ընկերն էր դուրս բերել կրակի միջից, և Սեմը միակն էր, որին նա հասցրել էր փրկել: Ընկերը բեկորային վնասվածքներ ուներ դեմքին ու սարսափելի այրվածքներ: Բայց երբ կրակահերթ է լսում ու հասկանում է, որ դարանի մեջ են ընկել, զենքը վերցրած՝ վազում է այդ կողմն ու չի դադարեցնում կրակահերթը, մինչև որ միայն ինքն ու Սեմն են մնում անապատում՝ շնչասպառ ու արյունահոսող վերքերով:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրանց վրա կրակողները դեռահասներ էին: Երեխաներ, համարյա այն երեխաների պես, որոնց զինվորները փորձում էին փրկել: Սեմի ընկերը տեսավ նրանց, երբ մոտեցավ դիակներին: Նրանց արյունն անցավ իր ձեռքերին, և նա այլևս նույնը չէր կարող լինել, ինչ առաջ:

Նա, Սեմին մեջքին դրած, անցնում է անապատի միջով, մինչև որ ուժասպառ ու անգիտակից ընկնում է հիվանդանոցի մուտքի մոտ, ու Էլսայի տատիկը դուրս է վազում նրանց ընդառաջ և փրկում է Սեմին: Նա փոքրինչ կաղում է մի ոտքից, բայց ողջ է մնում: Ու այնտեղ՝ հիվանդանոցում է Սեմը սկսում Էլսայի տատիկի ծխախոտը ծխել: Տատիկը նամակում դրա համար էլ է գրել՝ կներեք:

Մոդն Էլսայի առջև է դնում լուսանկարների ալբոմը, որն ասես զգացմունքներ ունեցող փոքրիկ արարած լինի: Ցույց է տալիս համախտանիշով տղայի մորը՝ հարսի զգեստով կանգնած Լենարտի ու Մոդի միջև, ու երեքն էլ ծիծաղում են:

— Կարծում եմ՝ Սեմի ընկերը սիրահարված էր նրան: Բայց երբ նա ծանոթացնում է աղջկան Սեմի հետ, նրանք սիրահարվում են միմյանց: Չեմ կարծում, որ Սեմի ընկերը երբևէ բան ասած լինի: Նրանք եղբայրների պես էին, պատկերացնո՞ւմ ես: Կարծում եմ՝ նրա ընկերն ուղղակի այնքան բարի էր, որ չի խոսել աղջկա հանդեպ իր զգացմունքների մասին, հասկանո՞ւմ ես:

Էլսան հասկանում է: Մոդը ժպտում է:

— Նա՝ Սեմի ընկերը, միշտ շատ մեղմ էր: Ես մտածում էի, որ նա բանաստեղծի հոգի ունի: Նրանք այնքան տարբեր էին՝ նա ու Սեմը: Պարզապես անհնար է պատկերացնել, թե ինչպես է կարողացել անել այն, ինչ ստիպված է եղել անել՝ Սեմի կյանքը փրկելու համար: Եվ այդ վայրը նրան այդքան սարսափելի ռազմիկ է դարձրել,– շշնջում է նա ու շրջում ալբոմի էջը:

Մոդը երկար լռում է: Վիշտը հորդում է սեղանի սփռոցին:

Էլսան կարիք չուներ լուսանկարը տեսնելու, որպեսզի հասկանար, թե լուսանկարում ովքեր էին:

Սեմն է: Ինչ-որ տեղ անապատում: Զինվորական հագուստով ու անթացուպերով: Կողքին Էլսայի տատիկն է՝ ստետոսկոպը վզին: Իսկ նրանց մեջտեղում Սեմի ամենալավ ընկերն է՝ Գայլսիրտը:

թվայնացրել է 1915.info կայքը

25

ՏՈՆԱԾԱՌ

Իդեպ, տատիկն այն մարդկանցից չէր, որ չարախոսում են ամպէակնե-րին: Ամենևին: Կամ, ավելի շուտ, նրանցից չէր, որ անդադար չարա-խոսում են: Կամ, ամեն դեպքում, ոչ այնպես, որ շրջապատում հանկարծ լսեն: Դե հա՛, լա՛վ, չարախոսում էր: Բայց, համենայնդեպս, ոչ այնպես, որ ամպէակները լսեն:

— Հա, բայց նրանք մեկ-մեկ ուղղակի իսկական տխմարներ են,– սովո-րաբար պնդում էր տատիկը, երբ Էլսան ընդվզում էր:

Էլսան ամպէակների մեծ երկրպագու է, որովհետև դրանք անասելի կարևոր են Երկիր-Կիս-Արթունի բոլոր բնակիչների համար, և բացի այդ՝ հրաշալի կլինի, եթե հանելուկներ գուշակելիս ձեր թիմում նրանցից մեկը լինի:

— Բայց խնդիրն էլ հենց այն է, որ նրանք ԳԻՏԵՆ այդ մասին, ու անա-սելի երևակայում են իրենց այդ փոքրիկ տխմարները,– փնչացնում էր տատիկը:

Բայց նրա ասածը հասկանալու համար մարդ թերևս պիտի իմանա, որ տատիկն ու Էլսան վիրավորանքների խրթին համակարգ ունեին:

Էշի գլուխը մի քիչ ավելի վատ է, քան ուղղակի ծալապակասը, որը պար-տադիր չէ՝ այնքան տխմար լինի, ինչքան դդում գլուխը, չնայած դրանք էլ կեղտոտ փալասին չեն հասնի: Դրանք բոլորն այնքան վիրավորական չեն, որքան շունշանորդին, որը էշի գլխի ամենատխմար տեսակն է: Բայց, իհարկե, ո՛չ այնքան ահավոր, ինչքան անհույս դատարկագլուխը կամ տաքգլուխը, որը նաև շունշանորդի է:

թվայնացրել է 1915.info կայքը

Ու եթե նույնիսկ տատիկն ու Էլսան ստիպված լինեին մեկին բացատրել այս ամենը, նա, ամենայն հավանականությամբ, միևնույն է, չէր հասկանալու, ու պարզից էլ պարզ է, որ հարցնելու էր, թե այդ դեպքում որն է տխմարը, որովհետև Էլսան ու տատիկը հիմնականում աջ ու ձախ այդ բառով էին որակում մարդկանց:

Բայց հիմար հարց է, որովհետև տխմարը տխմար է: Բոլորին էլ պարզ է: Իսկ ա՛յ վերջին տխմարը բոլորովին նույնը չէ: Այն ամենատխմար տխմարն է:

Դե, ամեն դեպքում, ինչ որ է: Ամեն դեպքում, ամպէակներն էին, որ փրկեցին Ընտրյալին, երբ ստվերները նրան փախցնելու նպատակով գաղտագողի հասել էին Միմովասի թագավորություն: Ինչպես որ Միամասը կառուցված է երևակայությունից, այդպես էլ Միմովասը կառուցված է սիրուց: Առանց սիրո չկա երաժշտություն, առանց երաժշտության չկա Միմովաս, իսկ Ընտրյալն ամենասիրվածն է ամբողջ թագավորությունում: Այնպես որ, եթե ստվերներին հաջողվեր բռնել նրան, ի վերջո կործանվելու էր նաև ամբողջ Երկիր-Կիս-Արթունը: Եթե Միմովասն ընկներ, կընկներ նաև Միրևասը, իսկ Միրևասի կործանումը բերելու էր Միամասի կործանմանը, Միամասի կործանումով ընկնելու էր Միաուդակասը, որից հետո կկործանվեր Միփլորիսը: Որովհետև առանց երաժշտության չեն լինի երազանքներ, առանց երազանքների չեն լինի հեքիաթներ, առանց հեքիաթների չի լինի քաջություն, առանց քաջության ոչ ոք չի կարողանա կրել իր վիշտը: Իսկ առանց երաժշտության, երազանքների, հեքիաթների, քաջության ու վշտի՝ Երկիր-Կիս-Արթունում կմնար միայն մի թագավորություն՝ Միբատալոսը: Բայց Միբատալոսն էլ չի կարող մենակ ապրել, որովհետև առանց մյուս թագավորությունների՝ այնտեղի բոլոր մարտիկները կկորցնեին իրենց արժեքը, եթե այլևս ոչինչ չլիներ, հանուն որի պետք լիներ պայքարել:

Սա էլ էր տատիկը «Հարրի Փոթերից» թխել, որ պիտի լինի մի բան, հանուն որի արժի պայքարել: Բայց Էլսան այս դեպքում ներել էր, որովհետև լավ էր ստացվել: Ասենք, արժեր թխել, եթե այսքան լավ է ստացվել:

Այսպիսով, ամպէակներն էին տեսել, որ ստվերները փորձում էին աննկատ անցնել Միմովասի տների արանքով, ու արել էին ճիշտ այնպես, ինչպես անում էին միշտ. նետերի պես ներքև էին սուրացել ու վեր բարձ-

թվայնացրել է 1915.info կայքը

ռացել հզոր նավերի պես, վերածվել էին ուղտերի, խնձորների, ծխող ծեր ձկնորսների ու ստվերներին ծուղակն էին գցել, որովհետև նրանք արդեն չէին կողմնորոշվում, թե ում պիտի բռնեին: Ամպէակներն անհետացել էին մի ակնթարթում՝ նրանցից մեկի վրա իրենց հետ տանելով Ընտրյալին ուղիղ մինչև Միամաս:

Ապա սկսվել էր Մարտ-Ան-Վերջը: Բայց եթե ամպէակները չլինեին, հենց նույն օրն էլ ամեն ինչ կվերջանար, ու ստվերները կհաղթեին: Դրա համար էլ Էլսան կարծում է, որ ամեն դեպքում պետք է շնորհակալ լինել ամպէակներին: Նույնիսկ եթե նրանք իսկապես էշի գլուխներ են:

Էլսան ամբողջ գիշեր անցկացնում է Երկիր-Կիս-Արթունում: Հիմա առաջվա պես կարող է այնտեղ հասնել երբ ցանկանա՝ առանց դժվարության: Ինչո՞ւ՝ չգիտի, սակայն ենթադրում է, որ այն պատճառով, որ այլևս կորցնելու ոչինչ չունի: Ստվերը հիմա իրական կյանքում է, ու Էլսան գիտի, թե ով է, գիտի՝ ով էր տատիկը, և ով է Գայլսիրտը, ու ինչպես են իրար հետ կապված: Այլևս չի վախենում: Գիտի, որ պատերազմ է լինելու, որ այն անխուսափելի է, բայց ինքը զարմանալիորեն հանգիստ է:

Եվ Երկիր-Կիս-Արթունը չի այրվելու, ինչպես մի անգամ երազում: Այն նույնքան գեղեցիկ ու խաղաղ է, ինչպես միշտ, երբ այցելել է այնտեղ: Միայն արթնանալուց հետո է հանկարծ գիտակցում, որ չի մտել Միամաս: Նա անցել էր բոլոր հինգ թագավորություններով, տեսել էր Միբատալոսի ավերակները Մարտ-Ան-Վերջից հետո, բայց ոչ Միամասը, որովհետև չէր ուզում իմանալ՝ այնտե՞ղ է տատիկը, թե՞ ոչ:

Որովհետև ավելի լավ է չիմանալ, եթե հանկարծ այնտեղ չէ:

Հայրիկը կանգնած է սենյակի դռան արանքում: Էլսան իսկույն սթափվում է, ասես քթին անանուխով ցողաջուր են փչել, որը, ի դեպ, արժի նշել՝ իրոք, հրաշալի օգնում է, եթե մեկին պետք է շտապ արթնացնել: Էլսան գիտի, որովհետև երբ տատիկի պես մարդ է լինում կողքիդ, նման բաներն իմանում ես:

— Ի՞նչ է պատահել: Մայրիկը հիվա՞նդ է: Կեսի՞կը,– դուրս է թռչում նրա բերանից, ու նա ակնթարթորեն ցատկում է անկողնուց՝ կոպերը դեռևս վախերից ու ստվերներից ծանրացած:

թվայնացրել է 1915.info կայքը

Հայրիկը երկմտում է: Ու մի փոքր շփոթված է, չնայած ավելի շատ տարակուսած տեսք ունի: Էլսան թարթելով մաքրում է աչքն ու հիշում է, որ մայրիկը հիվանդանոցում ժողովի է, որ նա մինչև գնալը փորձել էր արթնացնել իրեն, բայց Էլսան ձևացրել էր, թե խորը քնած է: Յեորգն էլ խոհանոցում ձվածեղ էր պատրաստում ու մի պահ ներս էր մտել՝ հարցնելու, թե Էլսան էլ կուզենա՞ արդյոք ուտել, բայց նա քնած էր ձևացել:

Այնպես որ, նա շվարած հորն է նայում:

— Ի՞նչ ես անում էստեղ: Այսօր իմ մասին հոգ տանելու քո օրը չէ:

Հայրիկը տարակուսած հազում է: Նա այնպիսի տեսք ունի, ինչպես հայրերը, որոնք հանկարծ հայտնաբերում են, որ այն, ինչ իրենք սովորաբար անում էին, որովհետև դա կարևոր էր իրենց դստրիկների համար, այժմ իրենց դստրիկներն են անում, քանի որ դա կարևոր է իրենց հայրիկների համար: Եվ այնքան նուրբ է այդ սահմանը, որ ո՛չ հայրերը, ո՛չ դստրիկները չեն մոռանում, թե երբ են անցնում այն:

Էլսան մտքում օրերն է հաշվում:

— Վա՛յ, կներե՛ս,– հիշելով քրթմնջում է նա:

— Ոչինչ, ես հասկանում եմ, որ դու շատ անելիքներ ունես,– շփոթված ասում է հայրիկը ու շրջվում է, որ գնա:

— Չէ՛, սպասի՛ր,– հրամայում է Էլսան շատ ավելի կտրուկ, քան կուզենար:

Էլսան ճիշտ է. այդ օրը հայրիկի օրը չէ: Բայց սխալվում է, քանի որ այդ օրը Սուրբ ծննդյան տոների նախորդ օրն է, որն իրականում չէր կարելի մոռանալ, երբ արդեն համարյա ութ տարեկան ես, որովհետև Ծննդյան տոների նախորդ օրն իր ու հայրիկի օրն է՝ տոնածառի օրը: Դե հա, պարզ է, որ սա մի քիչ ուրիշ հարց է: Տոնածառի օրը, ինչպես անունն է հուշում, Էլսան ու հայրիկը սովորաբար տոնածառ են գնում. արհեստական, բնականաբար, քանի որ Էլսան հրաժարվում է իսկական եղևնի գնելուց: Քանի որ հայրիկը շատ է ուրախանում Էլսայի համար տոնածառ գնելու հնարավորություն ունենալու համար, Էլսան պնդում է, որ ամեն տարի նոր արհեստական եղևնու կարիք ունի: Ոմանք, իհարկե, կարծում են, որ դա տարօրինակ ավանդույթ է, բայց տատիկը սովորաբար ասում էր, որ ծնողների ամուսնալուծության միջով անցած յուրաքանչյուր երեխա իրավունք ունի երբեմն մի քիչ էքսցենտրիկ լինել:

Մայրիկը, անշուշտ, շատ էր բարկացել տատիկի վրա արհեստական եղևնու համար, որովհետև սիրում է բնական եղևնու բույրը, ու միշտ ասում

թվայնացրել է 1915.info կայքը

էր, որ տատիկն է այդ միտքն Էլսայի գլուխը մտցրել: Տատիկը, բնականաբար, պնդում էր, որ դա ոտքից գլուխ սուտ է. ինչն իսկապես այդպես էր: Տատիկն Էլսային պատմել էր Միամասում եղևնիների պարի մասին, իսկ նման պատմություն լսելուց հետո մարդ ուղղակի պիտի բացարձակ տխմար լինի, որպեսզի ոտքն անդամահատված ու ստրկության վաճառված եղևնի պահանջի:

Միամասում եղևնիներն ապրող ու մտածող արարածներ են, որոնք փշատերևների համար թերևս անբացատրելի մեծ հետաքրքրություն ունեն ներքին հարդարման հանդեպ: Նրանք ոչ թե անտառում են բնակվում, այլ Միամասի կենտրոնի հարավային թաղամասերում (այդտեղ բնակվելը վերջին տարիներին որոշ առումով մոդայիկ է դարձել), աշխատում են գովազդի ոլորտում ու ամենուր փողկապով են լինում: Իսկ տարին մեկ անգամ՝ տարվա առաջին ձյունից հետո, բոլոր եղևնիները հավաքվում են քաղաքի հրապարակում՝ պալատի մոտ, ու որոշում, թե ով որ տան մոտ պիտի կանգնի Ծննդյան տոներին: Եղևնիներն են ընտրում տունը, ոչ թե հակառակը, ու ընտրելու հերթը սահմանվում է պարային մրցույթով: Հին ժամանակներում նրանք մենամարտում էին իրար դեմ, և քանի որ մեծ մասամբ լավ նշան չէին բռնում, այն չափազանց երկար էր տևում: Այնպես որ, հիմա փոխարենը պարում են, ինչը տարօրինակ եղևնապար է ստացվում, քանի որ եղևնիները ոտքեր չունեն: Եթե եղևնի չհանդիսացող մեկը փորձի նրանց պարն ընդօրինակել, ստիպված կլինի երկու ոտքով տեղում ցատկոտել, ինչպես, օրինակ, փոքր պարահրապարակ ունեցող դիսկոտեկում է լինում:

Էլսան պատկերացնում է, որովհետև երբ հայրիկը 1.5 գավաթ շամպայն է խմում Նոր տարուն, երբեմն խոհանոցում եղևնապար է պարում Լիզետի հետ, չնայած հայրիկի համար դա պարզապես պար է:

— Կներես, հայրի՛կ, ես գիտեմ՝ ինչ օր է,– բացականչում է Էլսան. հապշտապ հագնում ջինսն ու շապիկը, ապա՝ բաճկոնը, ու դուրս է թռչում նախասենյակ: — Միայն թե մի բան ստուգեմ, գամ,– բղավում է նա արդեն աստիճանավանդակից:

Հայրիկը գուցե հասցներ կանգնեցնել նրան, եթե շատ չերկմտեր, բայց նա էությամբ այդպիսին է: Այնպես որ, այլ կերպ չէր էլ լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան երեկ երեկոյան վորսին Renault-ի մեջ էր թաքցրել: Մոդից մի ամբողջ դույլ դարչինով թխվածք էր վերցրել ու վորսին զգուշացրել էր, որ ծածկոցների տակ թաքնվի, եթե որևէ մեկը կայանատեղի իջնի: «Կձևացնես, թե շորերի կույտ ես, հեռուստացույց կամ ինչ-որ մի ուրիշ իր»,– ասել էր Էլսան, բայց երևում էր, որ վորսը համոզված չէր, թե իրենից լավ հեռուստացույց դուրս կգա: Այնպես որ, Էլսան Մոդից նաև մի տոպրակ հրուշակ էր վերցրել, ինչից հետո վորսը համոզվել էր մտնել ծածկոցների տակ, սակայն հեռուստացույցի, ամեն դեպքում, բոլորովին նման չէր:

Շրջվելիս վորսը ցավից տնքում էր, չնայած մտածում էր, որ Էլսան չի նկատի: Այնպես որ, Էլսան ձևացրել էր, թե չէր նկատել, քանի որ վորսերը չափազանց հպարտ են ու չեն ցանկանա՝ ուրիշներն իրենց խղճան միայն այն պատճառով, որ հոդերը ճկուն չեն:

Էլսան բարի գիշեր էր մաղթել ու կամացուկ բարձրացել աստիճաններով, կանգնել համախտանիշով տղայի ու նրա մայրիկի դռան մոտ: Ցանկացել էր զանգը տալ, բայց չէր կարողացել ինքն իրեն ստիպել: Այլևս ոչ մի պատմություն լսել չէր ուզում: Չէր ուզում ավել բան իմանալ ստվերների ու մթության մասին: Այնպես որ, միայն նամակը գցել էր դռան վրայի փոստարկղի մեջ ու վազել տուն:

Նրանց դուռն այսօր նույնպես փակ էր: Մյուս բոլորի դռներն էլ: Սա այն վաղ առավոտներից է, որ շենքի բնակիչներից նրանք, ովքեր արթնացել են, արդեն ինչ-որ տեղ են գնացել, իսկ նրանք, ովքեր ոչ մի տեղ չեն գնացել, դեռ չեն արթնացել: Էլսան լսում է Քենթի ձայնը մի քանի հարկ ներքևից, չնայած նա շշուկով է խոսում, որովհետև աստիճանավանդակում «ակուստիկան» չափազանց լավն է: Էլսան գիտի այդ բառը, քանի որ բառերի գանձանակն է գցել մի անգամ: Նա լսում է, որ Քենթը շշնջում է. «Հա, խոստանում եմ, երեկոյան կգամ»: Բայց երբ Էլսան իջնում է վերջին աստիճաններով, անցնում է վորսի և Գայլսիրտի բնակարանի մոտով, Քենթը հանկարծ սկսում է բարձր ու հստակ արտասանել. «Yez Klaus! In Frankfurt! Yez, yez, yez!»: Ապա շրջվում է՝ ձևացնելով, թե հենց այդ պահին է բացահայտել, որ Էլսան նրա հետևում է:

— Ի՞նչ ես անում էստեղ,– տարակուսանքով հարցնում է Էլսան:

Քենթը Կլաուսին այնպիսի հնչերանգով է խնդրում գծի մեջ մնալ, ինչպես անում են, երբ գծի մեջ ամենևին էլ Կլաուսը չէ: Քենթի հագին օձիքով շապիկ է, վրան՝ թվեր, իսկ կրծքին՝ ձիավորի փոքրիկ նշան: Նա հասցրել

թվայնացրել է 1915.info կայքը

էր Էլսային ասել, որ նման շապիկի արժեքը հազար դոլարից ավել է: Տատիկը միշտ ասում էր, որ այդ շապիկների լավն էլ հենց այն է, որ ձիավորի նշանը զգուշացնում է, որ շապիկի ներսում ամենայն հավանականությամբ տխմարի մեկն է:

— Ի՞նչ ես ուզում,– լարված հետաքրքրվում է Քենթը:

Էլսան հայացքը նրան է հառում, հետո՝ մեջը միս լցրած կարմիր պլաստիկե թասիկներին, որոնք նա դնում է աստիճանների վրա:

— Էս ի՞նչ է,– շնչակտուր ասում է Էլսան:

Քենթը ձեռքերը թափ է տալիս նրա ուղղությամբ ու քիչ է մնում՝ Կլաուսին պատով խփի:

— Կռվաշունը դեռ վազվզում է տարածքում ու բնակարանների գները գցում:

Էլսան, աչքը չկտրելով մսով լի թասիկներից, զգուշորեն հետ-հետ է գնում: Քենթն իջեցնում է ձեռքերը՝ կարծես հասկանալով, որ թերևս մի փոքր կոպիտ արտահայտվեց: Հետո մի նոր փորձ է անում այնպիսի ձայնով, որով Քենթի տարիքի տղամարդկանց կարծիքով՝ պետք է խոսել Էլսայի տարիքի աղջիկների հետ, որ ասածը տեղ հասնի:

— Բրիտ-Մարին աստիճանների վրա շան մազ է գտել, հասկանո՞ւմ ես, փոքրի՛կս: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր աստիճաններին կռվաշներ ֆռֆռան, հասկանում ես, չէ՞, ու բնակարանների գները գցեն, պարզ է, չէ՞:

Նա ժպտում է մեծահասակների պես, որոնց թվում է, թե երեխայից ավելի լավ են հասկանում, քանի որ կարծում են, թե երեխաներն ուղեղ չունեն: Էլսան նկատում է, որ նա անվստահ հայացքներ է գցում հեռախոսին:

— Դե, այնպես չէ, որ մենք ուզում ենք՝ այդ անճոռնի շունը սատկի: Ուղղակի թող մի քիչ «քնի», լա՞վ: Իսկ հետո թող գնա, ինչ-որ «գյուղական բակում» վազվզի ուրիշ շների հետ: Դե հա՛, հասկանում ես՝ ինչ եմ ասում, լավ չէ՞: Դե՛, անուշի՛կս, վազի՛ր տուն՝ մայրիկիդ մո՛տ:

Էլսան իրեն ամենևին անուշիկ չի զգում: Նրան ահավոր դուր չի գալիս, որ Քենթը մատներով չակերտներ է ցույց տալիս «գյուղական բակ» ասելիս: Միայն աղքատ բառապաշարով մարդիկ են այդպես խոսում:

— Իսկ ո՞ւմ հետ էիր խոսում հեռախոսով,– հարցնում է նրան:

— Կլաուսի՝ գերմանացի գործընկերոջս հետ,– պատասխանում է Քենթն այնպես, որ ակնհայտ զգացվում է, որ այդպես չէ:

— Հա բա ո՞նց,– ասում է Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

Քենթի ունքերն իջնում են՝ ասես ջրից ծանրացած:

— Շատ չե՞ս համը հանում, ա՛յ երեխա:

Էլսան ուսերն է թոթվում:

— Կարո՞ղ եմ այդ Կլաուսի հետ խոսել,– հարցնում է նա ու ցույց տալիս հեռախոսը՝ միևնույն ժամանակ հեգնական օդային չակերտներ անելով: Չնայած տվյալ դեպքում չակերտներ անողն ավելի հարուստ բառապաշար ունի:

— Կարծում եմ, պիտի տուն վազես՝ մայրիկիդ մոտ,– կրկնում է Քենթն արդեն մի փոքր սպառնալից:

Էլսան չի շարժվում: Գլխով թասիկներն է ցույց տալիս:

— Մեջը թո՞ւյն է:

Քենթը՝ ավելի ինքնավստահ, բռունցքի մեջ սեղմում է Կլաուսին:

— Ուրեմն, ա՛յ երեխա, ուշադի՛ր լսիր. թափառող շները վտանգավոր են: Իսկ վտանգավոր կենդանիներին սպան…

Նա նյարդայնացած շունչ է քաշում ու ուղղում ինքն իրեն.

— Նրանց դեպքում մեր օգնականը թույնն է: Հո չե՞նք կարող թույլ տալ, որ աստիճաններով վտանգավոր կենդանիներ վազվզեն, կայանատեղիում էլ ինչ-որ ժանգոտած փլատակ լինի ընկած կամ նման աղբ: Դրանից գինն ընկնում է, ու շենքում մեկը պիտի աղբը մաքրի, որ դրա պատճառով անշարժ գույքի արժեքը չընկնի,– հայտարարում է Քենթը, ասես բոլորի հարմարավետության համար է տանջվում:

Սակայն երբ նա «ժանգոտած փլատակ» է ասում, Էլսան չարագուշակ նախանշան է զգում նրա հնչերագում ու նրա կողքով շտապում է ներքև՝ վատ կանխազգացումով համակված: Սլանում է ներքև տանող աստիճաններով դեպի կայանատեղի: Մի շարժումով բացում է դուռն ու կանգ առնում՝ սրտխփոցն ափերի մեջ զգալով: Նկուղից վերև բարձրանալիս ամեն քայլափոխին ծնկները խփում է աստիճաններին:

— Ո՞ՒՐ Է RENAULT-Ը: ԳՐՈ՛ՂԸ ՏԱՆԻ, Ի՞ՆՉ ԵՍ ԱՐԵԼ RENAULT-Ը,– բղավում է նա ու բռունցքներով հարձակվում Քենթի վրա, բայց միայն կարողանում է Կլաուսին ճանկել ու նետել նկուղի աստիճաններով ներքև: Այնպես որ, ապակե էկրանն ու պլաստիկե պատյանը փշրվում են, ու մանր մասերի հեղեղը հորդում է դեպի նկուղ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գժվեցի՞ր, ա՛յ այլան... գրո՛... լրիվ խելքդ թռցրե՞լ ես, ա՛յ սատանի ճուտ: Դու իսկի պատկերացնո՞ւմ ես՝ հեռախոսն ի՞նչ արժեր,– գոռում է Քենթն ու ասում, որ 8000 կրոնայով է գնել:

Էլսան հայտնում է, որ մեծ հաշվով թքած ունի, թե ինչ արժեր հեռախոսը: Եվ այդ ժամանակ Քենթն աչքերի սադիստական փայլով հայտնում է, թե ինչ է արել Renault-ը, որովհետև այն «մի կույտ մետաղի ջարդոն էր»:

Էլսան գիտի, որովհետև Վիքիպեդիայում հոդված կա սադիզմի մասին:

Նա նետվում է աստիճաններով վեր, որ հայրիկին ասի, բայց մի հարկ բարձրանալով՝ կտրուկ կանգ է առնում: Բրիտ-Մարին կանգնած է իր ու Քենթի բնակարանի դռան առաջ: Նա անվստահ ձեռքերն անընդհատ իրար է ագուցում, ու Էլսան նկատում է, որ նա քրտնած է: Խոհանոցից տոնական կերակուրների բույրն է զգացվում, Բրիտ-Մարիի հագին էլ ծաղկավոր բաճկոնն է՝ խոշոր կրծքազարդով: Փեյնթբոլի վարդագույն կեղտաբիծը համարյա չի երևում:

Էլսան աղերսանքով աչքերը նրան է հառում:

«Թույլ չտա՛ս, որ Քենթը սպանի նրան, խնդրում եմ, Բրի՛տ-Մարի, նա իմ ընկերն է...»,– շշնջում է նա:

Բրիտ-Մարին նայում է նրա աչքերին, ու մի ակնթարթ նրա հայացքում մարդկայնություն է առկայծում, որն Էլսան հասցնում է նկատել: Սակայն անմիջապես լսվում է ներքևից Բրիտ-Մարիին կանչող Քենթի ձայնը, որ նա էլի թույն բերի, ու Բրիտ-Մարին վայրկենապես դառնում է հին, սովորական վհուկ Բրիտ-Մարին:

— Վաղը Քենթի երեխաները գալու են մեզ մոտ: Նրանք վախենում են շներից,– վճռական ձայնով բացատրում է նա:

Նա ուղղում է փեշի վրայի գոյություն չունեցող ծալքն ու ծաղկավոր բաճկոնակի վրայից թափ տալիս անտեսանելի փշուրները:

— Վաղը մենք ավանդական ծննդյան ընթրիք ենք անելու այստեղ՝ ավանդական ծննդյան ճաշատեսակներով: Փոքրիկ քաղաքակիրթ ընտանիքների պես: Բարբարոսներ չենք, ըստ էության, ոմանց նման,– չոր շարունակում է նա՝ ակնհայտորեն «ոմանց նման» ասելով նկատի ունենալով «քո ընտանիքը»:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ շրխկացնում է դուռը: Էլսան կանգնած է մնում՝ հասկանալով, որ հայրիկը չի կարողանալու օգնել այս հարցում, քանի որ նման արտակարգ իրավիճակներում երկմտելը՝ որպես գերունակություն, առանձնապես կիրառելի չէ: Իրեն կարգին օգնական ուժ է պետք:

Նա մեկ րոպեից ավել է թմբկահարում դուռը, մինչև որ լսում է Ալֆի քստքստացնող քայլերը: Նա դուռը բացում է՝ ձեռքին մի բաժակ սուրճ, որն այնպես ուժեղ է բուրում, որ վստահաբար գդալը մեջը ուղղահայաց կկանգներ:

— Ես քնած եմ,– խռխռացնում է նա:

— Renault-ին հաստատ սպանելու է,– հեծկլտում է Էլսան:

— Սպանելո՞ւ: Ի՞նչ սպանել, գրո՛ղը տանի, սպանել չի լինի, ավտո չի՞ եղածը,– ասում է Ալֆը՝ մի մեծ կում խմելով ու հորանջելով:

— Ոչ մի մեքենա էլ չէ՛: Renault-ն է,– բղավում է Էլսան՝ իրեն բոլորովին կորցրած:

Ալֆը ևս մի կում է անում, բայց մի կնճիռ թեթևակի ջղաձգվում է աչքի անկյունում: Քունքի զարկերակը խփում է:

— Էդ ո՞ր անասունն է ասում, որ սպանելու է Renault-ին,– մտախոհ հարցնում է նա:

— Քենթը:

Էլսան նույնիսկ չի հասցնում ասել, թե ինչ կա Renault-ի հետևի նստարանին, երբ Ալֆը մի կողմ է դնում սուրճի բաժակը, հագնում կոշիկներն ու նետվում աստիճաններով ներքև: Էլսան լսում է, որ Ալֆն ու Քենթն այնպես են գոռում իրար վրա, որ ստիպված է չխլանալու համար ականջները բազուկներով փակել: Նա հստակ չի լսում, թե ինչեր են գոռգոռում՝ բացի թունդ հայհոյանքներից: Հետո Քենթը հիշատակում է բնակարանների սեփականությունն ու ասում, որ չի կարելի «ժանգոտած մետաղի ջարդոնը» կայանատեղիում թողնել, որովհետև մարդիկ կկարծեն, թե շենքում սոցիալիստներ են բնակվում: Էլսան հասկանում է, որ այդ բառերով Քենթն ուզում է ասել «գրողի տարած տխմարներ»: Իսկ հետո Ալֆն է բղավում՝ տխմարի՛ մեկը, ինչով նա ասում է հենց այն, ինչ բառացի ասում է, որովհետև Ալֆը չի սիրում կյանքը բարդացնել:

Հետո Ալֆը նորից բարձրանում է ու կատաղի հայացքով մռթմռթում.

— Էդ վերջին տխմարն ավտոքարշակ է վարձել՝ մեքենան տանելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գիտե՛մ: Վորսն էլ հետևի նստարանին է,– Էլսայի շունչը կտրվում է հուսահատությունից:

Ալֆի ունքերը կորչում են ճակատը ծայրեծայր հատող խոր ճեղքում:

— Հերդ էստե՞ղ է: Ոնց որ պատուհանից նրա գրողի տարած Audi-ն տեսա:

Էլսան գլխով է անում: Ալֆը, առանց բառ ասելու, քշում է աստիճաններով վերև, ու քիչ անց Էլսան հոր հետ նստած է տաքսու մեջ, չնայած որ հայրիկն ամենևին չի ուզում:

— Ես վստահ չեմ, որ ուզում եմ,– ասում է հայրիկը:

— Մեկը պիտի էդ գրողի տարած Renault-ը հետ գալուց քշի,– մռթմռթում է Ալֆը:

— Բա ո՞նց իմանանք, թե Քենթն ուր տարած կլինի,– հարցնում է Էլսան, մինչ հայրիկը ամեն կերպ փորձում է անվճռական չերևալ:

— Ես, գրո՛ղը տանի, 30 տարի է՝ տաքսի եմ քշում,– ասում է Ալֆը:

— Ու ի՞նչ,– չի հասկանում Էլսան:

— Ու է՛ն, որ ես, գրո՛ղը տանի, գիտեմ՝ ոնց գտնենք ավտոքարշակով տարած Renault-ը,– վրա է բերում Ալֆը:

Ու հետո սկսում է զանգել իրեն ծանոթ բոլոր տաքսու վարորդներին: Իսկ Ալֆը ճանաչում է բոլոր տաքսիստներին:

Քսան րոպեից նրանք արդեն կանգնած են քաղաքից դուրս գտնվող ավտոմեքենաների աղբանոցում, ու Էլսան ամբողջ մարմնով փարվում է ավտոմեքենայի կապոտին. միակ ձևը, որ կարելի է գրկել ամպէակին: Նա նկատում է, որ հետևի նստարանի «հեռուստացույցը», ի նշան բողոքի, դժգոհ շարժվում է, որ Էլսան առաջինն իրեն չի գրկում, բայց երբ ութդ նոր է լրանալու, ու դու վորսին Renault-ի մեջ ես թողել, ապա այնքան վորսի համար էլ չես վախենում, որքան խեղճ ավտոքարշակի վարորդի, որը պատահաբար կարող էր հայտնաբերել նրան:

Ալֆն ու ավտոքարշակի չափազանց գեր վարորդը մի փոքր վիճում են, թե որքան կարժենա Renault-ը հետ վերցնելը: Հետո Ալֆն ու Էլսան են բավականին երկար վիճում, թե ինչու Էլսան մի բերան չի ասել, որ Renault-ի բանալին չունի: Իսկ հետո գեր մարդը պտտվում է ու գլուխը քորելով՝ փնթփնթում. «Վա՛յ, գրո՛ղը տանի, էստեղ աչքներովդ մոպեդ չի՞ ընկել: Կարող եմ պնդել, գրո՛ղը տանի, որ առավոտյան էստեղ ցցված էր»: Իսկ հետո գեր մարդն ու Ալֆը սակարկում են, թե ի՞նչ կարժենա, որ Renault-ը նորից

թվայնացրել է 1915.info կայքը

տանեն ու կանգնեցնեն շենքի մոտ: Ու հետո հայրիկը վճարում է ամեն ինչի համար:

Եվ դա լավագույն նվերն էր, որ Էլսան երբևէ ստացել էր: Կարմիր նշամատիտից էլ լավ: Երբ այդ մասին հայտարարում է հայրիկին, նա մի փոքր պակաս տարակուսած է երևում:

Ալֆը հետևում է, որ Renault-ը կայանի տատիկի կայանատեղիում, այլ ոչ Բրիտ-Մարիի: Հայրիկն աչքերը հառում է վորսին սեղանատամի արմատի լիցքի պատրաստվող մարդու դեմքի արտահայտությամբ, երբ Էլսան փորձում է նրանց ծանոթացնել: Վորսը պատասխանում է բավականին ամբարտավան հայացքով: «Չափից դուրս ամբարտավան է»,– մտածում է Էլսան ու պահանջում, որ խոստովանի, եթե մոպեդն ինքն է խժռել:

Այդ ժամանակ վորսը դադարում է իրեն ամբարտավան պահել, խցկվում է ծածկոցների տակ ու հայացքով հասկացնում, որ եթե ոմանք չեն ուզում, որ ինքը մոպեդ ուտի, ուրեմն պիտի մի քիչ ավելի շատ դարչինով թխվածք ուղարկեն: Հայրիկի iPhon-ում գուգլելուց հետո Էլսան ասում է, որ մոպեդ ուտելը փաստացի գողություն է կամ առնվազն «տրանսպորտային միջոցի անօրինական զավթում»: Այդ լսելով՝ վորսը ձևացնում է, թե քնած է: «Վախկոտի մեկը»,– մռթմռթում է Էլսան:

Նա առաջարկում է հայրիկին, որ նա գնա ու Audi-ի մեջ սպասի, ինչն անասելի թեթևություն է պատճառում վերջինիս: Հետո Էլսան ու Ալֆը աստիճաններից հավաքում են թույնով լցված կարմիր թասիկներն ու պարունակությունը լցնում սև, մեծ աղբի տոպրակները:

— Էս կտեսակավորե՛ք,– հրահանգում է Ալֆը, երբ Քենթն ու Բրիտ-Մարին բացում են դուռը: Էլսան տոպրակն այնպիսի արագությամբ է շպրտում ներս՝ նրանց նախասենյակի գորգի վրա, որ Բրիտ-Մարիի խաչբառերի տրցակն ընկնում է աթոռակի վրայից:

Էլսան, ձեռքերը փորի վրա ագուցելով, ժպտալով նրան է նայում:

— Այս համատիրությունում փաստացի աղբի տեսակավորմանը վերաբերող հատուկ կանոններ կան, և այդ կանոնները բոլորին են վերաբերում, Բրի՛տ-Մարի,– ասում է Էլսան չափազանց սիրալիր:

Քենթը գոռում է նրանց հետևից, որ թույնը, գրո՛ղը տանի, 600 կրոնա արժեր: Բրիտ-Մարին ոչինչ չի ասում:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ հետո Էլսան ու հայրիկը գնում են արհեստական տոնածառ գնելու, քանի որ Բրիտ-Մարին սխալվում է. Էլսայի ընտանիքը բարբարոս չէ: Միամասում բարբարոսներ են անվանում նրանց, ովքեր սպանում են եղևնիներին՝ նրանց ստրկության վաճառելով: Ցանկացած ոչ դատարկագլուխ էլ գիտի:

— 300 կտամ,– ասում է Էլսան վաճառողին:

— Լսի՛ր, սիրո՛ւնս, մեր խանութում չեն սակարկում,– ասում է վաճառողը ճիշտ այնպիսի տոնով, ինչպես որ պիտի կարողանա խոսել իսկական վաճառողը:

— Sure! Բա ո՞նց,– ասում է Էլսան:

— Այս տոնածառի գինը 495 կրոնա է,– ասում է վաճառողը:

— 250 կտամ,– ասում է Էլսան:

Վաճառողը քմծիծաղում է:

— Ես քեզ արդեն ասացի, սի՛-րո՛ւ-նը՛ս, որ մեր խանութում չեն սակարկում,– սկսում է նա:

— Ես ընդամենը 200 կտամ,– տեղեկացնում է Էլսան:

Վաճառողը նայում է Էլսայի հայրիկին: Հայրիկը նայում է իր կոշիկներին: Էլսան նայում է վաճառողին ու լուրջ տեսքով տարուբերում գլուխը:

— Հայրիկս քեզ չի օգնի: 200 եմ տալիս:

Վաճառողը շրթունքները ձգում է, ինչը պիտի որ արտահայտի մեծահասակների վերաբերմունքը, երբ երեխաները չափազանց անուշիկ են, բայց դմբո:

— Չի՛ ստացվի, սիրո՛ւնս:

Էլսան ուսերն է թոթվում:

— Ես մի շաբաթ առաջ զանգել եմ ու պատվիրել էս տոնածառը:

— Գիտեմ: Բայց չենք սակարկում, սիրո՛ւ…

— Էսօր ե՞րբ եք փակում խանութը,– անհոգ հարցնում է Էլսան:

— Հինգ րոպեից,– հոգոցով պատասխանում է վաճառողը:

— Իսկ էստեղ շատ մեծ պահեստ ունե՞ք,– հետաքրքրվում է Էլսան:

— Ինչի՞դ է պետք,– զարմանում է վաճառողը:

— Հենց այնպես,– ասում է Էլսան:

— Չէ՛, ընդհանրապես պահեստ չունենք,– ասում է վաճառողը:

Նա նայում է Էլսային, Էլսան էլ՝ նրան:

— Ու Սուրբ ծնունդին բա՞ց եք լինելու:

թվայնացրել է 1915.info կայքը

– Չէ՛:

Էլսան շրթունքներով կեղծ զարմանք է արտահայտում:

— Ուրեմն եղևնի ունեք, պահեստ չունեք: Իսկ վաղն ի՞նչ օր է, սիրո՛ւնս:

Էլսան տոնածառը գնում է 200-ով, հետն էլ՝ պատշգամբի լուսաշղթա ու մի խոշոր պլաստմասսե իշայծյամ:

— Հանկարծ չգնա՛ս ու լրացուցիչ փող տաս էս մարդուն,– ասում է Էլսան ու որպես զգուշացում՝ ցուցամատը թափ է տալիս հոր վրա, երբ նա այդ ամենը տեղավորում է մեքենայի մեջ:

Հայրիկը հոգոց է հանում:

— Ես մի անգամ եմ այդպես արել, Է՛լսա: Ընդամենը մի անգամ: Ու այդ անգամը դու իսկապես առանձնահատուկ վատ էիր վերաբերվել վաճառողին:

— Մարդ պիտի կարողանա պայմանավորվել,– ասում է Էլսան:

Տատիկն է սովորեցրել Էլսային: Հայրիկը նրա հետ էլ չէր սիրում առևտրի գնալ:

Audi-ն կանգ է առնում շենքի մոտ: Հայրիկը, ինչպես միշտ, իջեցրել էր ստերեոյի ձայնը, որ Էլսային չպարտադրի իր երաժշտությունը լսել: Ալֆը դուրս է գալիս, որ օգնի հայրիկին տուփը տեղափոխել, սակայն հայրիկը համառորեն ուզում է անձամբ տանել: Նրա համար ավանդույթ է, որ ինքն է տոնածառը տուն տանում իր դստեր համար: Նախքան նրա գնալը՝ Էլսան քիչ է մնում ասի, որ Կեսիկի լույս աշխարհ գալուց հետո ուզում է ավելի շատ նրա մոտ ապրել, բայց ոչինչ չի ասում: Միայն շշնջում է. «Հայրի՛կ, շնորհակալ եմ տոնածառի համար»: Հայրիկն ուրախանում է ու գնում Լիզետի ու նրա երեխաների մոտ: Իսկ Էլսան մնում է կանգնած ու նայում է նրա հետևից:

Որովհետև, երբ ոչինչ չես ասում, ոչ ոք չի տխրում: Բոլոր համարյա ութ տարեկանները գիտեն:

թվայնացրել է 1915.info կայքը

26

ՊԻՏՅԱ

Միամասում նշում են ոչ թե Սուրբ ծննդյան երեկոն, այլ նախորդ գիշերը, քանի որ այդ ժամանակ են պատմում ծննդյան հեքիաթները: Անշուշտ, Միամասում բոլոր հեքիաթներն էլ գանձ են համարվում, բայց ծննդյան հեքիաթներն առանձնահատուկ են: Սովորական մի պատմություն կարող է զվարճալի լինել կամ տխուր, կարող է հափշտակել կամ սարսափեցնել, զգայացունց լինել կամ հուզիչ, բայց Սուրբ ծննդյան հեքիաթը պիտի միաժամանակ այդ բոլորը լինի: «Ծննդյան հեքիաթում պետք է օգտագործել բոլոր մատիտները»,– սովորաբար ասում էր տատիկը: Եվ այն երջանիկ ավարտ պիտի ունենա (դա Էլսան անձամբ էր որոշել), թե չէ բանի պետք չի լինի:

Համ էլ Էլսան հիմար չէ ու գիտի, որ եթե հեքիաթի սկզբում հրեշ է երևում, ուրեմն այն անպայման հեքիաթի վերջում նորից է հայտնվելու: Գիտի, որ խավարը սաստկանալու է, ու ամեն ինչ ավելի սարսափելի է լինելու նախքան երջանիկ ավարտը, որովհետև բոլոր ամենալավ հեքիաթներում այդպես է:

Էլսան գիտի, որ պիտի կռվի, նույնիսկ եթե կռվելուց հոգնել է: Այնպես որ, այս հեքիաթը, ուզի-չուզի, պիտի լավ վերջանա:

Անպայմա՛ն:

Ո՞նց էր կարոտել պիցցայի բույրը: Տատիկն ասում էր, որ Միամասում օրենք կար, որ Ծննդյան տոներին պիտի պիցցա ուտեն: Տատիկին, իհարկե, շատ չկար, ինչ ասես՝ կասեր, բայց Էլսան ձևացնում էր, թե հավատում

թվայնացրել է 1915.info կայքը

է, քանի որ պիցցա շատ է սիրում, ու բուսակերի համար Ծննդյան տոների սեղանն ուղղակի ճնշող է:

Պիցցայի բոնուսն այն է նաև, որ նրա՝ աստիճանավանդակով մեկ տարածված բույրն ուղղակի հունից հանում է Բրիտ-Մարիին: Տոներից առաջ Բրիտ-Մարին զարդարում է իր ու Քենթի բնակարանի դուռը, որովհետև Քենթի երեխաները միշտ այցելում են Սուրբ Ծննդյան երեկո: Բրիտ-Մարին ամեն տարի սիրալիր բացատրում է մայրիկին ու Յեորգին, որ ընդամենը մի փոքր զարդարում է աստիճանահարթակը, որ ակնահաճո լինի բոլորին: Երբ հետո ամբողջ տոնական զարդարանքը ներծծվում է պիցցայի հոտով, բողոքում է Բրիտ-Մարին ու տատիկին անքաղաքակիրթ է անվանում:

«Ու այդ պառավը դեռ խոսում է ոչ քաղաքակիրթ լինելու մասին: ԻՆՉՆԻՑ ավելի քաղաքակիրթ չլինի, գրո՛ղը տանի»,– փնչացնում էր տատիկն ամեն տարի՝ գիշերով գաղտագողի փոքրիկ կալցոնե պիցցաներ խցկելով Բրիտ-Մարիի բոլոր զարդարանքների արանքները:

Իսկ երբ Բրիտ-Մարին Սուրբ Ծննդյան առավոտը բարձրանում էր մայրիկի ու Յեորգի մոտ այն աստիճան կատաղած, որ ամեն ինչ երկու անգամ էր կրկնում, տատիկը պաշտպանվում էր՝ ասելով, որ դրանք պիցցայազարդարանքներ են, և ինքն ընդամենը մի փոքր զարդարել է աստիճանահարթակը, որ ակնահաճո լինի բոլորին: Իսկ մի անգամ տատիկը հաջողեցրել էր բոլոր կալցոնե պիցցաները լցնել Բրիտ-Մարիի ու Քենթի դռան վրայի փոստարկղը, ինչից Բրիտ-Մարին Սուրբ Ծննդյան առավոտյան այնպես էր գազազել, որ մոռացել էր կրծքազարդով զարդարել ծաղկավոր բաճկոնակը:

Չնայած, անկեղծ ասած, ոչ ոք այդպես էլ չհասկացավ, թե ինչպես է հնարավոր կալցոնեն պատահաբար թափել փոստարկղի նեղ ճեղքով:

Աստիճանների վրա Էլսան մի քանի անգամ գիտակցված խորը շունչ է քաշում, որովհետև մայրիկն էր ասել այդպես անել, երբ զայրացած լինի: Մայրիկը միշտ անում էր այն ամենը, ինչ որ տատիկը երբեք չէր անում: Ասենք, խնդրում է Էլսային, որ Բրիտ-Մարիին ու Քենթին բոլոր մյուս հարևանների հետ միասին հրավիրեն Ծննդյան տոնական ընթրիքին: Տատիկը երբեք նման բան չէր անի: «Ինձ թաղես, թե նման բան անես»,– կբղավեր տատիկը, եթե մայրիկը նման առաջարկ աներ: Էլսան հասկա-

թվայնացրել է 1915.info կայքը

նում է, որ հիմա, անշուշտ, վիճելն իմաստ չունի, քանի որ նա թաղված էր ամեն դեպքում: Ասենք, սկզբունքի հարց է: Տատիկն այդպես կասեր, եթե ողջ լիներ, չնայած որ ատում էր սկզբունքները, հատկապես այլոց սկզբունքները:

Բայց Էլսան հիմա մայրիկին մերժել չի կարող, քանի որ մայրիկը երկար աղաչանք-պաղատանքից հետո թույլ էր տվել Ծննդյան տոներին վորսին տատիկի բնակարանում թաքցնել: Իսկապես, դժվար է ոչ ասել մայրիկին, քանի որ թույլ է տվել տուն բերել վորսին, նույնիսկ եթե նա դարձյալ հառաչելով պնդում է, թե Էլսան չափազանցնում է՝ ասելով, որ Քենթը փորձում էր իրեն սպանել:

Փոխարենն Էլսան գոհ է, որ վորսն իսկույն հասկացրել էր, որ ամենևին չի հավանում Յեորգին: Ոչ այն պատճառով, որ Էլսան հիմա անպայման ուզում է, որ գոնե ինչ-որ մեկը չսիրի Յեորգին, այլ քանի որ երբեք նման բան չէր եղել. ուղղակի հաճելի է որպես բազմազանություն:

Համախտանիշով տղան ու նրա մայրիկը շուտով տատիկի բնակարան են տեղափոխվելու: Էլսան իմացել է, քանի որ ամբողջ օրը բանալին թաքցնելու խաղն էր խաղացել տղայի հետ, մինչ մայրիկը, Յեորգը, Ալֆը, Լենարտը, Մոդն ու տղայի մայրիկը, խոհանոցում նստած, ինչ-որ գաղտնիքներ էին քննարկում: Նրանք, բնականաբար, չեն խոստովանում, բայց Էլսան հո գիտի, թե գաղտնիքներ ասելիս ձայներն ինչպես են փոխվում: Երբ ութի շեմին ես, իհարկե կիմանաս: Նա ատում է, երբ մայրիկն իրենից գաղտնիքներ ունի: Երբ մարդ գիտի, որ մեկն իրենից գաղտնիքներ ունի, իրեն լրիվ հիմար վիճակում է զգում, իսկ հիմար վիճակում հայտնվել ոչ ոք չի սիրում:

Մայրիկը պիտի իմանա: Գոնե նա իսկապես պարտավո՛ր է այդքանն իմանալ:

Էլսան գիտի, որ նրանք խոսում են, որ տատիկի բնակարանն ավելի հեշտ է պաշտպանել, եթե Սեմը հանկարծ հայտնվի: Ոչ ոք նրա անունը չի տվել, բայց Էլսան հո հիմա՞ր չէ. ութն ուր որ է լրանալու է: Նա հասկանում է, որ Սեմը վաղ թե ուշ գալու է, և մայրիկը մտածում է տատիկի ամբողջ բանակը հավաքել վերևի հարկում, նույնիսկ եթե մայրիկը երբեք տատիկի բանակն այդպես չի անվանում: Էլսան վորսի հետ Լենարտի ու Մոդի բնակարանում էր, երբ մայրիկը խնդրում է Մոդին վերցնել միայն անհրաժեշտ

թվայնացրել է 1915.info կայքը

իրերը՝ փորձելով այնպես ասել, որ շատ լուրջ չինչի: Մոդն ու վորսը սկսում են մեծ պայուսակների մեջ տեղավորել ձեռքի տակ ընկած բոլոր հրուշակների տուփերը, սակայն մայրիկը, այդ տեսնելով, հոգոց է հանում ու ասում.

— Խնդրում եմ, Մո՛դ, ասացի՝ միայն ամենից անհրաժեշտը:

Իսկ Մոդն ապշած մայրիկին է նայում ու ասում.

— Բայց հրուշակներն ամենից կարևորն են:

Վորսը ի համաձայնություն՝ գռմռում է, ապա նայում է մայրիկին ավելի հուսահատ, քան զայրացած, ու ցուցադրաբար ևս մի տուփ շոկոլադե ու գետնանուշե հրուշակներ է հրում դեպի պայուսակը: Հետո նրանք միասին այդ ամենը տանում են տատիկի բնակարան, ու Յեորգը բոլորին գլյոգ է հյուրասիրում: Վորսը բոլորից շատ է գլյոգ խմում: Հետո մեծահասակներով մնում են մայրիկի ու Յեորգի խոհանոցում ու գաղտնի բաներ են խոսում:

Էլսան գիտի: Չէ՞ որ համարյա ութ է:

Բրիտ-Մարիի ու Քենթի դուռը ծածկված է Ծննդյան տոների զարդարանքներով, սակայն երբ Էլսան սեղմում է զանգի կոճակը, ոչ ոք դուռը չի բացում: Էլսան Բրիտ-Մարիին գտնում է ներքևում՝ շենքի մուտքի դռան մոտ: Նա կանգնած է՝ ձեռքերը փորի վրա ագուցած, հայացքն անմխիթար հառած մանկասայլակին, որն այդպես էլ մնացել էր աստիճանների ճաղերից կապված: Հագին ծաղկավոր բաճկոնակն է՝ կրծքազարդով: Պատին էլ նոր գրություն էր հայտնվել:

Առաջին գրությունն արգելում էր աստիճանավանդակում մանկասայլակներ թողնել: Բայց ինչ-որ մեկը հանել էր այդ գրությունը: Ու ինչ-որ մեկը նոր գրություն էր փակցրել: Իսկ մանկասայլակը մնացել էր: Բայց նորն իսկի գրություն էլ չէր, ինչպես Էլսան տեսնում է՝ մի քիչ մոտենալով: Խաչբառ է:

Բրիտ-Մարին, նրան տեսնելով, ցնցվում է:

— Հը՛մ, դե իհա՛րկե, պարզ է, որ սա ձեր ընտանիքի արածներից կլինի՝ սովորականի պես: Հաստա՛տ:

Էլսան մռայլ տարուբերում է գլուխը:

— Գուցե բոլորովին էլ չէ՞:

Բրիտ-Մարին անտեսանելի փշուրներն է թափ տալիս բաճկոնակի վրայից ու չափազանց սիրալիր է ժպտում՝ ամենևին սիրալիր չլինելով, ինչպես միայն ինքն է կարող:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ձեզ, իհարկե, զվարճալի է թվում, չէ՞: Հիմա հասկանում եմ քեզ ու ընտանիքիդ, երբ շենքի մյուս բնակիչներին ծաղրուծանակի եք ենթարկում: Բայց ես ամեն ինչ կպարզեմ ու կգտնեմ մեղավորներին, համոզվա՛ծ եղեք: Մանկասայլակները աստիճանավանդակում հրդեհավտանգ իրավիճակ են ստեղծում, պատերին կպցրած թղթերն էլ: Թուղթը հեշտությամբ կարող է բռնկվել:

Նա ուղղում է կիսաշրջազգեստի՝ գոյություն չունեցող ծալքն ու սրբում կրծքազարդի վրայի աներևույթ կեղտաբիծը:

— Ես բոլորովին հիմար չեմ, բոլորովի՛ն: Ես գիտեմ, որ դուք թիկունքիցս բամբասում եք ինձնից մեր համատիրությունում: Ես հո գիտեմ, որ խոսում եք:

Էլսան կարգին չի հասկանում, թե ինչ կատարվեց իր հետ այդ պահին, բայց պատճառը թերևս «ես հիմար չեմ» ու «թիկունքիցս» բառերի զուգակցությունն է: Հանկարծ կոկորդում տհաճ, այրող ու գարշահոտ մի բան է զգում, ու մի որոշ ժամանակ է անցնում, մինչև որ ստիպված է լինում զզվանքով ընդունել, որ դա համակրանքի զգացում էր... Բրիտ-Մարիի հանդեպ:

Ոչ ոք չի սիրում, երբ իրեն հիմարի տեղ են դնում:

Այսպիսով, Էլսան ոչինչ չի ասում Բրիտ-Մարիին այն մասին, որ եթե ուզում է՝ մարդիկ հետը շփվեն, պիտի փորձի վերջ տալ անընդհատ իրեն վերջին վհուկի պես պահել: Ոչինչ չի ասում նաև, որ փաստացի ոչ մի բնակվարչություն էլ չկա: Միայն կուլ է տալիս իր ամբողջ հպարտությունն ու քրթմնջում.

— Մայրիկն ու Յեորգը վաղը քեզ ու Քենթին մեզ մոտ են հրավիրում՝ Սուրբ ծննդյան տոնական ընթրիքին: Մնացած բոլորն էլ են գալու: Այսինքն՝ ամեն դեպքում, համարյա բոլորը:

Բրիտ-Մարին մի պահ տատանվում է, սակայն միայն մի ակնթարթ: Էլսայի մտքով թռուցիկ անցնում է, որ նույնն էր նաև առավոտյան դռան շեմին, և Բրիտ-Մարին չէր ուզում, որ Քենթը վորսին թունավորեր: Բայց Բրիտ-Մարին թարթում է ու պատասխանում.

— Հըմ, լա՛վ, նման հրավերներին չեմ կարող այսպես իսկույն պատասխանել, որովհետև Քենթը գրասենյակում է, քանի որ այս շենքում կան

թվայնացրել է 1915.info կայքը

մարդիկ, որ փաստացի աշխատանք ունեն և պիտի անեն: Հենց այդպես էլ փոխանցի՛ր մայրիկիդ: Բոլորը չէ, որ Ծննդյան տոներին ամբողջությամբ անգործության են մատնված: Բացի այդ, Քենթի երեխաները վաղը մեզ մոտ են գալու, իսկ նրանք, ըստ էության, չեն սիրում տոներին վազվզել տարբեր մարդկանց տներով: Նրանք սիրում են տանը մնալ իմ ու Քենթի հետ: Ու մենք սովորական ծննդյան կերակուր ենք ուտելու քիչ թե շատ քաղաքակիրթ ընտանիքների պես: Այդպե՛ս: Հենց այդպես էլ ասա՛ մայրիկիդ:

Հետո Բրիտ-Մարին այնքան անտեսանելի փշուրներ է թափ տալիս իր բաճկոնակի վրայից, որ կարելի կլիներ մի ամբողջ անտեսանելի հաց թխել դրանցից, ապա արագ բարձրանում է աստիճաններով՝ առանց Էլսայի պատասխանին սպասելու:

Էլսան կանգնած տարուբերում է գլուխն ու մռթմռթում՝ ջադո՛ւ պառավ, վհուկի՛ մեկը, վհո՛ւկ: Աչքն ընկնում է պատի խաչբառին՝ մանկասայլակի վերևում: Ինքը նույնիսկ գաղափար չունի, թե ով փակցրած կլինի, բայց կուզենար ինքն արած լիներ, քանի որ դրանից ակնհայտորեն Բրիտ-Մարին ուղղակի ափերից դուրս էր եկել:

Էլսան նորից բարձրանում է աստիճաններով: Սև կիսաշրջազգեստով կնոջ դռան զանգն է տալիս: Նրա հագին ջինս է: Նա լավ առումով հոգնած է երևում:

— Վաղը մեզ մոտ տոնական ճաշ ենք ուտելու: Քեզ էլ ենք սիրով հրավիրում,– ասում է Էլսան ու ավելացնում,– լավ կանցնի, քանի որ Բրիտ-Մարին ու Քենթը չեն գալու:

Ջինսով կինը ձեռքը սահեցնում է մազերի միջով, ու թվում է, թե մրսում է:

— Չէ՛... դե, չէ՛, ես... Ես մարդկանց մեջ ինձ այնքան էլ լավ չեմ զգում:

Էլսան գլխով է անում:

— Գիտեմ: Բայց ոնց որ թե մենակ էլ լավ չեք զգում:

Կինը երկար նրան է նայում: Էլսան վճռական հայացքով փոխադարձում է: Կնոջ բերանի անկյունները ցնցվում են:

— Ես... ես միգուցե գամ: Կարճ... Կարճ ժամանակով:

— Մենք կարող ենք պիցցա գնել, եթե դու, դե, ասենք, գուցե տոնական կերակուրները չես սիրում,– հույսով ասում է Էլսան:

Կինը ժպտում է: Էլսան նույնպես:

թվայնացրել է 1915.info կայքը

Ալֆը ոտքը տատիկի բնակարանի դռնից դուրս է դնում հենց նույն պահին, երբ Էլսան հասնում է իրենց հարկ: Համախտանիշով տղան երջանիկ պտտվում է Ալֆի շուրջը, որի մի ձեռքին հսկայական գործիքների արկղ է, որը նա, Էլսային տեսնելով, փորձում է թաքցնել:

— Էս ի՞նչ եք անում,– հարցնում է Էլսան:

— Ոչինչ,– խուսափողական պատասխանում է Ալֆը:

Համախտանիշով տղան ներս է ցատկում մայրիկի ու Յեորգի բնակարան ու գնում ուղիղ դեպի խոշոր թասով դրված «Զմեռ պապիկ» կոնֆետները: Ալֆը, Էլսային շրջանցելով, փորձում է գնալ դեպի աստիճանները, սակայն Էլսան ճանապարհը փակում է:

— Էս ի՞նչ է,– հարցնում է Էլսան՝ ցույց տալով գործիքների արկղը:

— Ոչինչ,– կրկնում է Ալֆը՝ մեջքի հետևում թաքցնելով այն:

Էլսան հստակ զգում է, որ նրանից տաշեղների հոտ է գալիս:

— Բա ո՞նց, ես էլ հավատացի,– դժգոհ ասում է Էլսան:

Նա փորձում է իրեն հիմար վիճակում չզգալ: Բայց առանձնապես չի ստացվում:

Նա նայում է համախտանիշով տղային: Այնքան ուրախ է երևում, ինչպես միայն յոթ տարեկանը կարող է ուրախանալ մի սկուտեղ լիքը «Զմեռ պապիկ» կոնֆետների տեսքից: Էլսային հետաքրքիր է՝ տեսնես տղան սպասո՞ւմ է իսկական Զմեռ պապիկին, որը կոնֆետ չէ, ու ենթադրում է, որ այո՛: Էլսան, բնականաբար, չի հավատում Զմեռ պապիկին, բայց հավատում է նրանց, ովքեր հավատում են: Ինքը սովորաբար, երբ փոքր էր, ամեն տարի նամակ էր գրում Զմեռ պապիկին. ոչ թե իր ուզածների ցանկը, այլ իսկական նամակ: Այնտեղ Ծննդյան տոներին վերաբերող քիչ բան կար ու շատ ավելի՝ քաղաքականությանը: Էլսային ամենից շատ հուզում էր, թե Զմեռ պապիկն ինչու բավարար չափով ներգրավված չէ արդի սոցիալական հարցերում: Էլսան կարծում էր, որ անհագ ու ընչաքաղց նամակների հեղեղի մեջ, որ նա ամեն տարի ստանում էր բազմաթիվ երեխաներից, գոնե մեկը պետք է իրական խնդիրների մասին տեղեկացներ Զմեռ պապիկին: Էլսան մտածում էր, որ ինչ-որ մեկը փաստացի պիտի մի քիչ պատասխանատու զգա իրեն: Բացի այդ՝ մի տարի «Կոկա-կոլայի» գովազդն էր տեսել, այնպես որ, այդ անգամ նամակում մանրամասն անդրադարձել էր նրան, որ Զմեռ պապիկն ուղղակի «ծախու ծերուկ» է: Մի ուրիշ տարի

թվայնացրել է 1915.info կայքը

հեռուստացույցով վավերագրական կինոնկար էր տեսել երեխաների աշխատանքի մասին, դրանից հետո Սուրբ Ծննդյան մասին ամերիկյան կոմեդիաներ էր դիտել: Քանի որ համոզված չէր, որ Զմեռ պապիկի «էլֆի» ձևակերպումը համապատասխանում է հին սկանդինավյան առասպելաբանության էլֆերին, Թոլքինի աշխարհի էլֆերին կամ, ընդհանուր առումով, «գաճաճ» անվանվող կարճահասակ մարդկանց, նա Զմեռ պապիկից պահանջում է անմիջապես պարզաբանել այդ հարցերը:

Զմեռ պապիկը չէր պատասխանել, այնպես որ Էլսան դարձյալ նամակ էր ուղարկել՝ չափազանց երկար ու չափազանց զայրացած, որը, սակայն, թերևս կարելի էր ամփոփել մեկ բառով՝ վախկոտ: Իսկ հաջորդ տարի Էլսան սովորել էր օգտվել Google-ից ու պարզել էր, որ Զմեռ պապիկի չպատասխանելու պատճառն այն է, որ նա պարզապես գոյություն չունի: Այնպես որ, դրանից հետո այլևս նամակ չէր գրել:

Մի անգամ Էլսան մայրիկի ու տատիկի մոտ հանկարծ բերանից թռցրել էր, որ Զմեռ պապիկ գոյություն չունի, ու մայրիկն այնպես էր ցնցվել, որ գլյոգ խմելիս քիչ էր մնացել՝ խեղդվեր, իսկ տատիկը, մայրիկի արձագանքը տեսնելով, ողբերգական տեսքով շրջվել էր դեպի Էլսան ու է՛լ ավելի սարսափած ձևանալով՝ բացականչել էր. «Չի՛ կարելի այդպես ասել, Է՛լսա: Դա փաստացի նշանակում է մարտահրավեր նետել իրականությանը»:

Մայրիկն իսկի չէր ծիծաղել տատիկի ասածի վրա, բայց կարևոր չէր, քանի որ տատիկն ու Էլսան այնքան ծիծաղեցին, որ նրա տեղն էլ հանեցին: Եվ այդ տարի՝ Սուրբ Ծնունդի նախորդ օրը, Էլսան Զմեռ պապիկից նամակ ստացավ, որի մեջ նա մի լավ նախատել էր Էլսային, որ նա չափից դուրս է երևակայում իրեն: Դրան հետևում էր մի երկար դատարկաբանություն, որ սկսվում էր «անշնորհակալ, անպետք լակոտ» բառերով ու պատմում էր՝ իբր միայն Էլսան այլևս չի հավատում Զմեռ պապիկին, և էլֆերն այս տարի զրկվել են իրենց տարեկան կոլեկտիվ պայմանագրից:

— Ես գիտեմ, որ էդ նամակը դու ես գրել,– տատիկի վրա ֆշշացրել էր Էլսան:

— Ինչի՞ց ես ենթադրել,– հեգնանքով հետաքրքրվել էր տատիկը:

— Որովհետև նույնիսկ Զմեռ պապիկը չէր կարող էնքան հիմար լինել, որ «տարեկան» բառը է-ով գրեր,– բարկացել էր Էլսան:

Դրանից հետո տատիկի հեգնանքն անհետացել էր, և նա ներողություն էր խնդրել: Ու անմիջապես հետո փորձել էր Էլսային խանութ ուղարկել, որ

թվայնացրել է 1915.info կայքը

իր համար կրակայրիչ գնի՝ փոխարենը խոստանալով չշտապեցնել: Սակայն Էլսան չէր խաբվել:

Այնպես որ, տատիկը դժգոհ-դժգոհ հագել էր նոր գնած Զմեռ պապիկի հանդերձանքը, ու նրանք գնացել էին մանկական հիվանդանոց, որտեղ աշխատում էր տատիկի ընկերը: Այնտեղ տատիկը պտտվել էր ամբողջ օրն ու հեքիաթներ պատմել ծանր հիվանդություններ ունեցող երեխանեորին, իսկ Էլսան հետևել էր նրան ու խաղալիքներ էր բաժանել: Դա Էլսայի լավագույնն Սուրբ ծնունդն էր: Տատիկը խոստացել էր, որ այն պիտի ավանդույթ դառնար, սակայն չկարողացան իրականացնել, որովհետև մինչև տատիկի մահանալը միայն մեկ անգամ հասցրին անել:

Էլսան նայում է համախտանիշով տղային: Հետո հայացքով ոտքից գլուխ չափում է Ալֆին: Երբ տղան անհետանում է բնակարանի խորքում, քանի որ աչքն ընկել էր սկահակով դրված շոկոլադե նապաստակներին, Էլսան նախասենյակ է սողոսկում, բացում է պատի տակ դրված սնդուկն ու հանում Զմեռ պապիկի հանդերձանքը: Հետո վերադառնում է աստիճանահարթակ ու հանդերձանքն Ալֆի գիրկն է խցկում: Ալֆն այնպիսի հայացքով է նայում դրան, ասես այն փորձում է խուտուտ տալ իրեն:

— Էս ի՞նչ է:

— Կարծում ես՝ ի՞նչ է,– հարցնում է Էլսան:

— Հույս չունենա՛ս,– ընդվզում է Ալֆն ու հագուստը հետ է խցկում Էլսայի գիրկը:

— Հույս չունենա՛ս, թե հույսս կկտրեմ,– ասում է Էլսան՝ ավելի մեծ ուժով հետ խցկելով:

— Տատիկդ ասել է, գրո՛ղը տանի, որ դու էլ չես հավատում Զմեռ պապիկին,– փնթփնթում է Ալֆը:

Էլսան աչքերը ոլորում է:

— Չէ՛, բայց ամեն ինչ էս աշխարհում հո ինձնով չի՞ վերջանում:

Նա ցույց է տալիս բնակարանի խորքը: Համախտանիշով տղան նստած է գետնին՝ հեռուստացույցի առջև: Ալֆը նայում է տղային ու փնթփնթում:

— Իսկ ինչո՞ւ Լենարտը չի կարող Զմեռ պապիկ լինել:

— Որովհետև Լենարտը չի կարողանա Մոդից գաղտնի պահել,– անհամբեր վրա է տալիս Էլսան:

— Ի՞նչ կապ ունի, գրո՛ղը տանի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այն, որ Մոդն էլ ոչ մեկից չի կարող ոչինչ գաղտնի պահել:

Ալֆը խեթ-խեթ Էլսային է նայում: Հետո մռթմռթում է, թե պարզ է: Քանի որ Մոդը, իրոք, չէր կարողանալու գաղտնիքը պահել, նույնիսկ եթե այն նրա ափերին սոսնձված լիներ: Երբ քիչ առաջ Յեորգը բանալի թաքցնելու խաղն էր խաղում Էլսայի ու տղայի հետ, Մոդը նրանց հետևից ման էր գալիս ու շշնջում. «Միգուցե գրադարակի վրայի ծաղկամանի մե՞ջ նայեք»: Ու երբ Էլսայի մայրիկն ասում է Մոդին, որ խաղի ամբողջ իմաստն այն է, որ փնտրողը չպիտի իմանա բանալու տեղը, Մոդը վշտացած ասում է. «Երեխաներն այնքան տխուր են փնտրում, իսկ ես չեմ ուզում, որ նրանք տխրեն»:

— Էնպես որ, դու ես Զմեռ պապիկ լինելու,– Ալֆի համար վերջնական ամփոփում է Էլսան:

— Իսկ Յեո՞րգը,– վերջին փորձն է անում Ալֆը:

— Շատ բարձրահասակ է: Համ էլ բոլորը նրան կճանաչեն, որովհետև հաստատ Զմեռ պապիկի շորի վրայից իր մարզվելու տրիկոն կհագնի,– բացատրում է Էլսան:

Չի երևում, թե Ալֆի համար մեծ տարբերություն կա: Նա մի քանի դժգոհ քայլ է անում դեպի նախասենյակ ու նայում է սնդուկի մեջ՝ կարծես հուսալով, որ ավելի լավ այլընտրանք կգտնի: Բայց սնդուկի մեջ միայն անկողնու սպիտակեղենն էր ու Էլսայի Սարդ-մարդու զգեստը:

— Էս ի՞նչ է,– հարցնում է նա՝ մատով ցույց տալով այնպես, ասես այն ներսից իրեն է մատով ցույց տալիս:

— Իմ Սարդ-մարդու զգեստն է,– փնթփնթում է Էլսան՝ փորձելով փակել սնդուկը:

— Ու ե՞րբ են սա հագնում,– զարմանում է Ալֆը՝ կարծես ակնկալելով Սարդ-մարդու տարեկան տոնակատարության հստակ օրն իմանալ:

— Հագնելու եմ, երբ դասերը սկսվեն: Հատուկ հանձնարարություն ունենք,– ասում է Էլսան ու շրխկոցով փակում սնդուկը:

Ալֆը, Զմեռ պապիկի հանդերձանքը ձեռքին, կանգնած է, ու երևում է, որ նրա ասածն իրեն բոլորովին չի հետաքրքրում: Էլսան տնքում է:

— Եթե ուզում ես ԻՄԱՆԱԼ, ես չեմ կարող Սարդ-մարդ լինել, որովհետև ես աղջիկ եմ:

Ալֆի տեսքը հուշում է, որ նա անկեղծորեն չի էլ ուզում իմանալ: Էլսան, միևնույն է, շարունակում է.

թվայնացրել է 1915.info կայքը

— Ամեն դեպքում, որոշեցի թքած ունենալ, որովհետև ամեն օր անընդհատ չեմ կարող բոլորի հետ կռվել:

Ալֆն արդեն պատրաստվում էր իջնել աստիճաններով: Էլսան կուլ է տալիս փղձուկը, որ նա չլսի: Բայց Ալֆը, այնուամենայնիվ, լսում է: Որովհետև կանգ է առնում բազրիքի մոտ: Խոր հոգոց է հանում: Բռի մեջ ճմռում է Զմեռ պապիկի հանդերձանքը: Հոգոց է հանում: Ինչ-որ բան է քրթմնջում, որն Էլսան չի լսում:

— Հը՞,– զայրացած ասում է Էլսան:

Ալֆն ավելի խորն է հառաչում:

— Ասացի, որ կարծում եմ՝ տատիկդ կուզենար, որ դու, գրո՛ղը տանի, ուզածիդ պես հագնվես,– առանց շրջվելու՝ կտրուկ կրկնում է նա:

Էլսան ձեռքերը խցկում է գրպաններն ու հայացքը հառում գետնին:

— Դպրոցում ասում են, որ աղջիկները չեն կարող Սարդ-մարդ լինել…

Ալֆը քստքստացնելով երկու քայլ իջնում է աստիճաններով, ապա կանգ է առնում: Նայում է Էլսային:

— Կարծում ես՝ էդ տխմարները կարո՞ղ էին նույնը տատիկիդ ասել:

Էլսան հայացքը նրան է հառում:

— Ինքը հո Սարդ-մարդու շորեր չէ՞ր հագել:

— Չէ՛:

— Բա էլ ինչի՞ ես ասում:

— Բայց ինքը բժշկի շորեր էր հագել:

Էլսան խոնարհում է հայացքը:

— Նրան ասե՞լ են, որ չի կարող բժիշկ դառնալ, որովհետև աղջիկ է:

Ալֆը մի ձեռքով ինչ-որ բան է ուղղում թևի տակի արկղի մեջ ու մյուս ձեռքով Զմեռ պապիկի շորերն է մեջը խցկում:

— Նրան, անշուշտ, ասել են, գրո՛ղը տանի, որ հազար ու մի բան չպիտի անի հազար ու մի պատճառով, բայց նա բոլորին գրողի ծոցն է ուղարկել: Գիտե՞ս, որ նրա ծնվելուց մի քանի տարի առաջ կանանց ասում էին, որ չեն կարող ընտրությունների ժամանակ քվեարկել, բայց գրո՛ղը տանի, հիմա կանայք մասնակցում են ընտրություններին: Թքա՛ծ էդ տխմարների վրա, որ քեզ պիտի ասեն՝ ինչ անես կամ ինչ չանես: Թքա՛ծ դրանց վրա, գրողի ծո՛ցը ուղարկիր:

Էլսան հայացքը չի կտրում կոշիկներից, Ալֆը՝ գործիքների արկղից: Հետո Էլսան մտնում է նախասենյակ, երկու հատ «Զմեռ պապիկ» կոնֆետ

թվայնացրել է 1915.info կայքը

է վերցնում, մեկն ուտում է, մյուսը նետում Ալֆին: Նա բռնում է ազատ ձեռքով ու թեթևակի ուսերն է թոթվում:

— Կարծում եմ՝ տատիկդ կուզենար, որ սրտիդ ուզածի պես հագնվեիր, գրո՛ղը տանի:

Էլսան գլխով է անում: Նա ինչ-որ բառ է մռթմռթում ու գնում: Երբ Էլսան լսում է՝ ինչպես է նրա բնակարանի դուռը շրխկում, և նորից հնչում է իտալական օպերան, նա գնում է նախասենյակ ու վերցնում «Ձմեռ պապիկ» կոնֆետներով լի ամանը: Հետո բռնում է համախտանիշով տղայի ձեռքն ու կանչում վորսին: Նրանք երեքով աստիճաններով բարձրանում են տատիկի բնակարան ու մտնում են կախարդական պահարանի մեջ, որը տատիկի մահից հետո այլևս չէր մեծանում: Տաշեղների հոտ էր գալիս: Բայց ինչ-որ անհասկանալի կերպով այն մեծացել էր հենց այնքան, որ երկու երեխա ու մի վորս տեղավորվեին:

Տղան փակում է աչքերը, ու Էլսան նրան տանում է հետը Երկիր-Կիս-Արթուն: Նրանք թռչում են բոլոր վեց թագավորությունների վրայով: Երբ թեքվում են Միմովասի կողմը, թվում է, թե տղան ճանաչում է տեղանքը: Նա ցատկում է ամպէակի վրայից ու առաջ վազում: Երբ հասնում է քաղաքի դարպասներին, երաժշտությունը պարուրում է նրան, և նա սկսում է պարել: Ու հիասքանչ է պարում: Եվ Էլսան պարում է նրա հետ:

Ոչի՛նչ, որ տղաները խոսել չեն կարող, եթե կարող են այսքան հիասքանչ պարել:

թվայնացրել է 1915.info կայքը

27

ԳԼՅՈԳ

Վորսը գիշերվա կեսին արթնացնում է Էլսային, որովհետև միզել է ուզում: Կամ լավ, գուցե իսկի էլ գիշերվա կեսը չէ: Պարզապես այդպես է թվում. դրսում մութ է: Էլսան քնած-քնած մռթմռթում է, որ վորսը չպիտի քնելուց առաջ չափազանց շատ գլյոգ խմեր, ու փորձում է նորից քնել: Վորսի պահվածքից երևում է, որ նա իսկական վորսի նման ուր որ է պատրաստվում է միզել գրիֆինդորցիների շարֆի վրա, այդ պատճառով Էլսան իսկույն իրեն է քաշում շարֆն ու, այնուամենայնիվ, համաձայնում է դուրս գալ:

Էլսայի մայրիկն ու համախտանիշով տղայի մայրիկն անկողիններ են հարդարում տատիկի բնակարանի հյուրերի սենյակում, երբ նրանք դուրս են սողում պահարանի միջից:

— Չիշիկ ունի,– քնատ ասում է Էլսան, երբ մայրիկը տեսնում է նրանց:

Մայրիկը դժկամորեն գլխով է անում:

— Այդ դեպքում Ալֆին էլ հետդ տար,– խնդրում է նա:

Էլսան գլխով է անում: Տղայի մայրիկը ժպտում է նրան ու ձեռքից գցում է բարձը, որին երես էր հագցնում: Երբ կռանում է՝ բարձը վերցնելու, բարձի երեսն է ձեռքից գցում ու իր ակնոցը: Հետո բոլորը գրկած՝ ուղղվում է ու նորից ժպտում Էլսային:

— Մոդից իմացա, որ երևի դու էիր տատիկիդ նամակը երեկ մեր փոստարկղը գցել:

Էլսան հայացքը հառում է գուլպաներին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մտածում էի՝ զանգը տամ, բայց չուզեցի խանգարել, դե գիտես...

Տղայի մայրիկը ժպտում է: Նորից գցում է բարձի երեսը:

— Գրել էր՝ կներեք: Քո տատիկը, այսինքն:

— Գիտեմ, բոլորին էլ նույնն է գրել,– հաստատում է Էլսան:

Տղայի մայրիկը բարձրացնում է բարձի երեսը:

— Գրել է՝ կներեք, որ այլևս չի կարող մեզ պաշտպանել: Ու գրել է, որ ես կարող եմ քեզ վստահել: Միշտ: Հետո խնդրում էր այնպես անել, որ դու էլ ինձ վստահես:

Նա գցում է բարձը: Էլսան մոտենում է ու բարձրացնում: Զննում է տղայի մայրիկին:

— Կարո՞ղ եմ մի հարց տալ, չնայած գուցե էնքան էլ քաղաքավարի չէ,– հարցնում է նա:

— Իհարկե,– ասում է տղայի մայրիկը ու հանկարծ ակնոցը գցում է բարձի երեսի մեջ:

Էլսան ցուցամատը քսում է ափին:

— Ո՞նց կարող է մարդ անընդհատ վախի մեջ ապրել: Այսինքն, երբ գիտեք, որ Սեմը դրսում է ու ձեզ է փնտրում, ո՞նց է հնարավոր էդպես ապրել:

— Լավ էլի, Է՛լսա...,– շշնջում է Էլսայի մայրիկն ու մեղավոր ժպտում է տղայի մայրիկին, բայց տղայի մայրիկը միայն ձեռքն է թափ տալիս՝ իբր ոչինչ:

Այդ պատճառով նա, ցավոք, հաջողեցնում է բարձի երեսը՝ մեջն ընկած ակնոցով հանդերձ, այնպես գցել, որ այն սենյակի հակառակ ծայրն է թռչում՝ վայրէջք կատարելով վորսի վրա, որ նստած է դռան շեմին ու փորձում է թաթերը խաչել միզապարկի վրա: Էլսան բարձրացնում է բարձի երեսը: Տղայի մայրիկը շնորհակալ ժպտում է ու ակնոցն աչքերին է դնում:

— Տատիկդ սովորաբար ասում էր, որ երբեմն պիտի վտանգավոր բաներ անես, այլապես ոչ թե մարդ ես, այլ ընդամենը մի գունդ ցեխ:

— «Առյուծասիրտ եղբայրներից» է թխել,– ասում է Էլսան:

— Գիտեմ,– ժպտում է տղայի մայրիկը:

Էլսան գլխով է անում: Տղայի մայրիկը նորից ժպտում է ու շրջվում դեպի Էլսայի մայրիկը՝ կարծես ցանկանալով փոխել զրույցի թեման, թերևս ոչ այնքան իր, որքան Էլսայի համար:

— Գիտե՞ք արդեն՝ ում եք սպասում,– հետաքրքրվում է նա՝ հասցնելով փափուկ շարժումով ձեռքն Էլսայի մայրիկի փորին ուղղել, նախքան

թվայնացրել է 1915.info կայքը

ակնոցը նորից կընկնի: Էլսայի մայրիկը մի փոքր ամոթխած ժպտում է ու տարուբերում գլուխը:

— Ուզում ենք սպասել, մինչև ծնվի:

— Միջին մի բան,– տեղեկացնում է Էլսան դռան շեմից:

Նրա մայրիկը շփոթվում է:

— Հա՛: Դե, այսինքն, մեզ սեռը չի հետաքրքրում: Յեորգը չի ուզում... Դե... գիտես: Ինչ էլ լինի, ուրախ կլինենք:

Տղայի մայրիկը եռանդով գլխով է անում:

— Ես էլ չէի ուզում իմանալ մինչև ծնվելը, ուզում էի իր մասին ամեն ինչ իմանալ նույն վայրկյանին:

Էլսայի մայրիկը թեթևացած հոգոց է հանում, ինչպես երեխա սպասող մյուս մայրերը, երբ գիտեն, որ ամեն տեսակ ոչ հղիներ իրենց պարտավորված են զգում ակնկալվող ծննդաբերության հետ կապված տարատեսակ հարցեր տալ այնպիսի ինչերանգով, ինչպես սովորաբար թմրանյութերի հարցերով զբաղվող քննիչներն են հարցաքննություն անցկացնում: Նա լայն ժպտում է:

— Ճիշտ է, ես էլ էի հենց նույնը զգում: Ոչ մի նշանակություն չունի՝ ով կծնվի, միայն թե առողջ երեխա լինի:

Նույն ակնթարթին մեղքի զգացումը պատում է Էլսայի մայրիկին, երբ վերջին բառը պոկվում է նրա շրթունքից: Նրա հայացքը սահում է Էլսայի կողքով ու կանգ առնում պահարանի վրա, որտեղ քնած է համախտանիշով տղան:

— Կներե՛ս: Ես նկատի չունեի...,– քրթմնջում է նա, բայց տղայի մայրիկն անմիջապես ընդհատում է նրան:

— Վա՜յ, ոչի՛նչ, ներողություն խնդրելու կարիք չկա: Ես գիտեմ՝ մարդիկ ինչեր են ասում: Բայց նա, իրոք, առողջ է: Ուղղակի նրա մեջ ամեն ինչ ավելցուկով է, կարելի է ասել:

— Ես ամեն ինչում սիրում եմ ավելցուկը,– ոգևորված բացականչում է Էլսան, բայց իսկույն ամաչում է ու հազալով մռթմռթում: — Բացի վեգան բուրգերից: Դրա համար էլ լոլիկը հանում եմ:

Այդ խոսքի վրա երկու մայրիկներն էլ այնպես են սկսում քրքջալ, որ տատիկի բնակարանը դղրդում է: Երևում է, որ երկուսն էլ, իրոք, ամենից շատ հենց ծիծաղի կարիք ունեին: Այնպես որ, նույնիսկ եթե նման նպատակ չուներ, Էլսան որոշում է, որ, այնուամենայնիվ, նրանց ծիծաղն իր շնորհիվ էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ալֆը շենքի մուտքի մոտ նրան ու վորսին է սպասում: Էլսան չհասկացավ, թե ինչպես էր իմացել, որ իրենք իջնում են: Շենքի շեմից դուրս այնպիսի խիտ մթություն էր, որ ձնագնդիկը չէիր հասցնի ձեռքիցդ բաց թողնել, ու այն տեսադաշտիցդ կանհետանար: Նրանք զգուշորեն մտնում են Բրիտ-Մարիի պատշգամբի տակ, որ նա հանկարծ վորսին չնկատի, սակայն շենքից չեն հեռանում նույնիսկ շենքի անկյունից թեքվելուց հետո, քանի որ մթությունն իրենց, միևնույն է, չէր մատնելու: Վորսը, հետ-հետ գնալով, մտնում է մի թփի տակ այնպիսի տեսքով, ասես դեմ չէր լինի, որ մոտը թերթի պես մի բան ունենար: Էլսան ու Ալֆը նրբանկատորեն շրջվում են: Էլսան հազում է:

— Շնորհակալ եմ, որ Renault-ի հարցում օգնեցիր:

Ալֆը փնչացնում է: Էլսան ձեռքերը խցկում է բաճկոնի գրպանները:

— Քենթը տխմարի մեկն է: Մեկը լինի՝ նրան թունավորի:

Ալֆի գլուխը դանդաղ շրջվում է:

— Էդպես մի՛ ասա:

— Հը՞,– ապշում է Էլսան:

— Գրո՛ղը տանի, էլ էդպես չասե՛ս,– դառնացած կրկնում է Ալֆը:

— Էդ ինչո՞ւ: Ինքը տեղով տխմարի մեկն է,– կրկնում է Էլսան:

— Հնարավոր է: Բայց ինձ մոտ էլ էդպես չարտահայտվե՛ս:

Էլսան փնչացնում է:

— Բայց դու ինքդ ես նրա մասին անընդհատ ասում՝ էդ գրողի տարած տխմարը:

Ալֆը գլխով է անում:

— Հա՛: Ինձ կարելի է: Իսկ քեզ՝ չէ:

Էլսան թափ է տալիս ձեռքերն ու փրփրած թքում: Ամեն դեպքում, նրան թվում է, թե զայրույթն այդպես են արտահայտում:

— Էդ ինչո՞ւ:

Ալֆի բաճկոնը ճռռում է:

— Որովհետև ես իրավունք ունեմ իմ փոքր եղբոր մասին վատ խոսել, իսկ դու չունես:

Բազմաթիվ հավերժություններ են անցնում, մինչև որ Էլսան կարողանում է մարսել նրա ասածը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես չգիտեի,– վերջապես դժվարությամբ արտաբերում է նա:

Ալֆը փնչացնում է: Էլսան կոկորդն է մաքրում:

— Բա որ եղբայրներ եք, ինչո՞ւ եք իրար հետ էդքան վատ:

— Քրոջը կամ եղբորը չես ընտրում,– փնթփնթում է Ալֆը:

Էլսան չգիտի՝ ինչ պատասխանի: Նա մտածում է Կեսիկի մասին: Ու քանի որ ուզում է ազատվել այդ մտքերից, փորձում է փոխել զրույցի թեման:

— Իսկ դու ինչո՞ւ ընկերուհի չունես,– հարցնում է Էլսան անկեղծ հետաքրքրությամբ:

— Իսկ քո ի՞նչ գործն է,– պատասխանում է Ալֆն անկեղծ անբարեհաճությամբ:

— Բայց եղե՞լ է՝ ինչ-որ մեկին սիրահարվես,– հարցնում է Էլսան:

Ալֆի բաճկոնը ճռռում է, ու նա հուսահատ նայում է Էլսային:

— Ես մեծ մարդ եմ: Գրո՛ղը տանի, պարզ է, որ եղած կլինի նման բան: Բոլորն էլ մի օր սիրահարվում են:

— Քանի՞ տարեկան էիր այդ ժամանակ,– հարցնում է Էլսան:

— Առաջին անգա՞մ,– ասում է Ալֆը:

— Հա՛:

— Տասը:

— Իսկ երկրորդ անգա՞մ:

Ալֆի բաճկոնը ճռճռում է: Նա նայում է ժամացույցին ու շրջվելով գնում դեպի տուն:

— Երկրորդ անգամ չի եղել:

Էլսան դեռ հարցեր ուներ տալու: Բայց այդ պահին մի ճիչ է լսվում: Այսինքն՝ առաջինը վորսն է լսում: Սարսափահար ճիչ: Վորսը թփերի միջից դուրս է թռչում ու սև նետի պես սուրալով՝ անհետանում մթության մեջ: Հետո Էլսան առաջին անգամ լսում է՝ ինչպես է նա հաչում: Նրան թվացել էր, թե լսել է նրան հաչելիս, սակայն սխալվել էր: Նախկինում նրա լսածն ընդամենը կլանչոց ու վնգստոց էր սրա համեմատ: Այս հաչոցից ուղեղը թնդում էր, ու դղրդում էր շենքի բետոնը: Վորսը հաչում էր այնպես, ասես դա նրա մարտակոչը լիներ:

Էլսան առաջինն է տեղ հասնում: Ինքն Ալֆից արագ է վազում:

Բրիտ-Մարին, բացարձակ գունատված, կանգնած է մուտքից մի քանի մետր հեռու: Տոպրակներն ընկած են ձյան մեջ: Սառնաշաքարներ ու կոմիքսներով թերթեր են թափվել միջից: Պարզած ձեռքի հեռավորության

թվայնացրել է 1915.info կայքը

վրա կանգնած է Սեմը: Էլսան չի տեսնում նրա դեմքը, բայց ներսից իրեն կաթվածահար անող սարսափի զգացումից հասկանում է, որ նա է:

Ապա ձեռքին դանակ է տեսնում:

Նրանց արանքում կանգնած է վորսը՝ պոչը պաշտպանական մտրակի պես ցցած Բրիտ-Մարիի առջև: Առջևի թաթերը բետոնե սյուների պես խրված են ձյան մեջ, բացված ատամները սպառնալից ուղղված են Սեմին: Սեմը չի շարժվում, բայց Էլսան զգում է, որ նա տատանվում է: Սեմը դանդաղ պտտվում է ու տեսնում աղջկան, ու նրա հայացքն ասես փշրում է Էլսայի ողնաշարը: Քիչ է մնում՝ Էլսայի ոտքերը ծալվեն, ինքը սուզվի ձյան մեջ ու անհետանա: Դանակը փայլփլում է փողոցային լապտերնե-րի՝ ցրված կոնաձև լույսերի տակ: Սեմի ձեռքն անշարժացել է օդում, նրա մարմինն ասես լցված է թշնամանքով: Նա սառն ու մարտական աչքերով կարծես ուտում է Էլսային. Էլսան տեսնում է այդ:

Բրիտ-Մարիի ծանր շնչառությունը տարածվում է մթության միջով: Լսվում է նրա հեծկլտոցը: Էլսան չգիտի՝ որտեղից է գալիս բնազդը կամ քաջությունը, բայց գուցե պարզապես խենթություն է: Տատիկը միշտ ասում էր, որ Էլսան և ինքը ներքուստ մի քիչ խենթ են ու դրա պատճառով վաղ թե ուշ գլխներին փորձանք են բերելու:

Այնպես որ, Էլսան վազում է: Վազում է ուղիղ դեպի Սեմը: Տեսնում է, որ դանակը մի քանի սանտիմետրով իջնում է, իսկ մյուս ձեռքը ճանկի պես բարձրանում է, որ բռնի իրեն ցատկի պահին: Բայց Էլսան չի հասցնում տեղ հասնել:

Նա չի հասցնում շարժում նկատել, երբ բախվում է ինչ-որ չոր ու սև իրի: Նա դեմքը հետ է քաշում: Զգում է չոր կաշվի հոտը: Լսում է Ալֆի բաճկոնի ճռճռոցը:

Եվ ահա Ալֆը կանգնած է Սեմի առջև մարմնի չարագուշակ դիրքով: Էլսան նկատում է՝ ինչպես է մուրճն Ալֆի բաճկոնի թևքի միջից աննկատ դուրս սահում նրա աջ ափի մեջ, ապա նրա ձեռքին սկսում է ճոճվել մի կողմից մյուսը: Սեմի դանակը չի շարժվում: Նրանք աչք չեն կտրում իրարից:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան չգիտի՝ ինչքան են այդպես մնում կանգնած: Բազմաթիվ հավերժություններ: Թվում էր՝ արդեն մեռնում է: Ասես սարսափը պատառոտում էր սիրտը:

— Ոստիկանությունը ճանապարհին է,– վերջապես կամացուկ ասում է Ալֆը:

Այնպես է հնչում, կարծես ինքն էլ է ափսոսում: Ափսոսում է, որ չի կարող այդ ամենին վերջ տալ այստեղ ու հիմա:

Սեմի աչքերը հանգիստ շարժվում են Ալֆից դեպի վորսը: Վորսի մորթին բիզ-բիզ է կանգնել: Գռմռոցը թոքերից դուրս է հորդում որոտի նման: Սեմի շուրթերին թույլ ժպիտ է խաղում, անտանելի երկար: Հետո նա մի քայլ հետ է գնում, ու մթությունը կուլ է տալիս նրան:

Ոստիկանության մեքենան երևում է փողոցում, բայց Սեմն արդեն հեռացել է: Էլսան ընկնում է ձյան մեջ, ասես վրայի հագուստի պարունակությունն ակնթարթորեն դատարկվել էր: Զգում է՝ ինչպես են Ալֆի խոշոր ձեռքերը գրկում իրեն ու լսում է՝ ինչպես է ֆշշացնում վորսի վրա, որ տուն գնա, քանի ոստիկանության աչքով չի ընկել: Լսում է Բրիտ-Մարիի ծանր շնչառությունն ու ձյան վրայով մոտեցող ոստիկանների կոշիկների ճռճռոցը, բայց նրա գիտակցությունը շատ հեռու է արդեն:

Էլսան ամաչում է, որ այդքան վախեցել էր. այնպես որ, միայն փակում է աչքերն ու մտքերի մեջ ընկնում: Միամասի ասպետներից ոչ մեկը վախից այսպես կաթվածահար չէր լինի: Իսկական ասպետը մեջքն ուղիղ կանգնած կմնար, ոչ թե կթաքնվեր երազներում, բայց ինքն իր հետ ոչինչ անել չէր կարող:

Իրականության այս քանակը չափից դուրս շատ է շուտով ութը բոլորող երեխայի համար: Չափից դուրս շատ է գրեթե ցանկացածի համար, ինչ տարիքի ուզում է լինի:

Էլսան արթնանում է տատիկի ննջասենյակում: Տաք է: Զգում է, որ վորսի քիթը խրվել է իր անրակի փոսիկի մեջ, ու թփթփացնում է նրա գլխին:

— Շատ քաջ ես,– շշնջում է նրան:

Վորսն այնպիսի տեսք ունի, կարծես վստահ է, որ վաստակել է իր բաժին թխվածքը: Էլսան դուրս է սահում քրտնած սավանի միջից ուղիղ հատակին: Դռան արանքից տեսնում է, որ մայրիկը մոխրագույն դեմքով կանգնած է նախասենյակում: Նա գոռգոռում է Ալֆի վրա: Ալֆը լուռ

թվայնացրել է 1915.info կայքը

կանգնած է ու չի հակաճառում: Էլսան բացում է դուռն ու նետվում մայրիկի գիրկը: Նրա ձեռքերի դողից հասկանում է, որ նա զայրույթից լալիս է:

— Նրանք մեղավոր չեն, ուղղակի ինձ էին փորձում պաշտպանել,– խզված ձայնով միջամտում է Էլսան:

Բրիտ-Մարիի ձայնն ընդհատում է նրան:

— Չէ՛, իհա՛րկե, ես եմ մեղավոր: Ի՛մ մեղքն էր: Պարզ է, որ ամեն ինչում ես եմ մեղավոր, Ո՛ւլրիխա:

Էլսան շրջվում է Բրիտ-Մարիի կողմը ու տեսնում է, որ Մոդը, Լենարտն ու համախտանիշով տղան իր մայրիկի հետ նույնպես կանգնած են նախասենյակում: Բոլորի հայացքներն ուղղված են Բրիտ-Մարիին, որը, ձեռքերը կոնքերի առջև իրար ագուցած, կանգնած է:

— Նա թաքնված էր դրսում՝ մուտքի դռան մոտ, բայց ես զգացի այն ծխախոտի հոտը, իրո՛ք: Այնպես որ, ես նրան ասացի, որ մեր շենքում արգելված է ծխելը. ոչ մեկս չենք ծխում այստեղ: Ու նա դուրս քաշեց իր այդ…

Բրիտ-Մարին չի կարողանում արտասանել «դանակ» բառն այնպես, որ ձայնը չդողա: Նա շատ վիրավորված է երևում, ինչպես իրեն հիմար վիճակում զգացող մեկը, երբ բոլորը գաղտնիքներ են ունենում նրանից:

— Պարզ է, բոլորդ էլ գիտեք՝ ով է նա: Հաստա՛տ գիտեք: Բայց ոչ մեկի մտքով, իհարկե, չի անցել, որ ինձ պետք է զգուշացնել, ո՛չ մեկի: Չնայած որ ես եմ տեղեկատվության պատասխանատուն մեր համատիրությունում:

Նա ուղղում է կիսաշրջազգեստի ծալքը: Այս անգամ՝ իսկական ծալքը: Սառնաշաքարներով ու կոմիքսներով տոպրակը հենված է նրա ոտքերին: Մոդը փորձում է ձեռքը նրբորեն դնել Բրիտ-Մարիի թևին, սակայն Բրիտ-Մարին հետ է հրում այն: Մոդը թախծոտ ժպտում է:

— Քենթն ո՞ւր է,– քնքշորեն հարցնում է նա:

— Նա գործնական հանդիպման է,– կտրուկ պատասխանում է Բրիտ-Մարին:

Ալֆը նայում է նրան, հետո՝ մթերայինի տոպրակին, հետո՝ նորից նրան:

— Ի՞նչ էիր անում դրսում էս ուշ ժամին,– հետաքրքրվում է նա:

Բրիտ-Մարին աչքերը չռում է վրան:

— Քենթի երեխաները միշտ սառնաշաքար ու կոմիքսներ են ստանում, երբ Սուրբ ծնունդին մեզ մոտ են գալիս: Մի՛շտ: Ես խանութ էի գնացել: Ու համ էլ ե՛ս չպիտի այստեղ արդարանամ, որովհետև ե՛ս չեմ դանակավոր թմրամոլներին այստեղ բերել, ամենևին ե՛ս չեմ բերել:

թվայնացրել է 1915.info կայքը

Մոդը նորից փորձ է անում ձեռքը դնել նրա թևին, բայց Բրիտ-Մարին մի կողմ է քաշվում: Մոդը համառորեն մատներով ձգվում է դեպի նա:

— Կներես, Բրի՛տ-Մարի: Մենք ուղղակի չգիտեինք՝ ինչ ասեինք քեզ: Խնդրում եմ, Բրի՛տ-Մարի: Ամեն դեպքում, գուցե այստե՞ղ մնաս այս գիշեր: Թերևս ավելի ապահով կլինի, եթե բոլորս միասին լինենք:

Բրիտ-Մարին ձեռքերն ավելի ամուր է ագուցում իրար՝ նրանց բոլորին վերևից նայելով:

— Ես տանն եմ քնում: Քենթն ավելի ուշ տուն կգա, ու ես տանը պիտի լինեմ: Ես միշտ տանն եմ, երբ Քենթը գալիս է: Այդպես եմ անում: Մի՛շտ:

Կանաչ աչքերով կին ոստիկանը բարձրանում է աստիճաններով ու կանգնում նրա հետևում: Բրիտ-Մարին պտտվում է: Կանաչ աչքերն ուշադիր զննում են նրան:

— Հը՛մ, լա՛վ, վաղուց ժամանակն էր, որ հայտնվեիք,– նկատում է Բրիտ-Մարին ու կեղծ բարեհաճությամբ ժպտում է, սակայն հանդիպելով կանաչ աչքերի հայացքին՝ բնազդաբար մի փոքր հետ-հետ է գնում:

Կանաչ աչքերը ոչինչ չեն ասում: Նրա հետևում մեկ ուրիշ ոստիկան է կանգնած, ու Էլսան տեսնում է, որ նա բոլորովին շփոթված է, որովհետև աչքն ընկնել է Էլսային ու նրա մայրիկին: Նրա տեսքից երևում է, որ հիշում է, թե ինչպես էր էսկորտով նրանց հիվանդանոց ուղեկցել ու հետո կայանատեղիում կորցրել:

— Մենք տարածքը շներով կհետախուզենք,– հատակին նայելով՝ ասում է ամառային արձակուրդի ոստիկանը:

Լենարտը փորձում է նրան ու կանաչ աչքերին սուրճի հրավիրել: Ամառային արձակուրդի ոստիկանի տեսքից ակնհայտ է, որ նա շրջակայքը շներով հետախուզելուց ավելի կնախընտրեր սուրճը, սակայն աչքի տակով կանաչ աչքերին նայելով՝ տարուբերում է գլուխը՝ հայացքը գետնին հառած: Կանաչ աչքերի ձայնը՝ առանց լարվածության, լցնում է ամբողջ սենյակը:

— Մենք կգտնենք նրան,– ասում է նա՝ հայացքով շաղափելով Բրիտ-Մարիին:

Բրիտ-Մարին ուզում է ի պատասխան մի բան ասել, գուցե բավականին բարկացած, որ իրենից բացի՝ բոլորը հրաշալի գիտեն, թե ով է այդ դանակավոր մարդը, և գուցե է՛լ ավելի է բարկացած, որ շենքում այժմ

թվայնացրել է 1915.info կայքը

առհասարակ ոչ մի առումով կարգուկանոն չկա: Շենքով մեկ մանկասայլակներ, գրություններ, խաչբառեր ու դանակավոր ծխողներ են: Լիակատար անարխիա: Բայց ոչինչ չի ասում, քանի որ կանաչ աչքերի հայացքից կորցնում է ինքնավստահությունը: Կանաչ աչքերը բարձրացնում է ունքերն ու հարցնում.

— Իսկ կռվաշո՞ւնը, որի համար Քենթը զանգել էր երեկ, Բրի՛տ-Մարի: Նա ասաց, որ շան մազ ես գտել աստիճանավանդակում: Երեկոյան տեսե՞լ ես նրան:

Էլսայի շունչը կտրվում է այն աստիճան, որ մոռանում է մտածել, թե ինչու է կանաչ աչքերը Բրիտ-Մարիին ու Քենթին անուններով դիմում, ասես ճանաչում է նրանց:

Բրիտ-Մարին խեթ-խեթ նայում է սենյակում գտնվողներին՝ Էլսային ու մայրիկին, Մոդին ու Լենարտին, տղային ու նրա մայրիկին, վերջում՝ Ալֆին: Նրա դեմքն անտարբերություն է արտահայտում: Կանաչ աչքերը սահում են նախասենյակով: Քրտինքը պատում է Էլսայի ափերը, երբ նա բացում-փակում է դրանք՝ փորձելով կանգնեցնել դողը, որովհետև գիտի, որ վորսը տատիկի ննջասենյակում է՝ ընդամենը մի քանի մետրի վրա՝ իրենց հետևում: Նա հասկանում է, որ ամեն ինչ կորած է, ու չգիտի՝ ինչ անի, որ կանխի այդ ամենը: Գիտակցում է, որ չի կարողանալու ճեղքել ոստիկանների շարքը. նրանց ձայները լսվում են ներքևից՝ մուտքի մոտից: Ոչ մի վորս չի կարողանա դա անել: Նրանք հաստատ կկրակեն ու կսպանեն նրան: Տեսնես հենց ի սկզբանե ա՞յդ էր ստվերի ծրագիրը, որովհետև ինքն անձամբ չէր համարձակվի կռվել վորսի դեմ: Իսկ առանց վորսի ու առանց Գայլսիրտի՝ ամրոցն անպաշտպան կլինի:

Բրիտ-Մարին, տեսնելով, որ Էլսան անթարթ իրեն է նայում, սեղմում է շրթունքները: Փոխում է ձեռքերի դիրքն ու փնչացնում է կանաչ աչքերի նկատմամբ անսպասելիորեն ձեռք բերած գերազանցության զգացումով:

— Դե, հնարավոր է նաև, որ երեկ սխալված լինեինք: Երևի հենց սխալվել ենք Քենթն ու ես: Գուցե իսկի էլ շան մազ չէր, իհարկե, մի ուրիշ բան եղած կլիներ: Ու դա հազիվ թե ինչ-որ լուրջ բան լիներ, առանց այդ էլ այնքան տարօրինակ մարդիկ են այս օրերին վերուվար անում մեր աստիճանավանդակով,– ասում է նա մասամբ մեղավոր, մասամբ էլ կշտամբանքով՝ ուղղելով ծաղկավոր բաճկոնակի վրայի կրծքազարդը:

թվայնացրել է 1915.info կայքը

Կանաչ աչքերը թռուցիկ հայացք է գցում Էլսայի վրա, ապա արագ գլխով անում՝ հասկացնելով, որ հարցը փակված է:

— Այս գիշեր շենքը հսկողության տակ կպահենք:

Ու մինչ որևէ մեկը կհասցներ բերանը բացել, նա արդեն իջնում է աստիճաններին գայթող ամառային արձակուրդի ոստիկանի ուղեկցությամբ: Էլսայի մայրիկը, ծանր շնչելով, ձեռքը պարզում է դեպի Բրիտ-Մարին, բայց նա հետ է քաշվում:

— Ձեզ համար կարծես թե զվարճալի է, որ գաղտնիքներ ունեք ինձնից: Զվարճալի է, չէ՞, որ ինձ հիմարի տեղ եք դնում. այդպե՞ս եք կարծում:

— Խնդրում եմ, Բրի՛տ-Մարի, մի՛...,– Մոդը փորձում է նրան հանգստացնել, բայց Բրիտ-Մարին թափ է տալիս գլուխն ու տոպրակը վերցնում հատակից:

— Ես տուն եմ գնում, Մո՛դ, որովհետև Քենթը շուտով տուն է գալու, ու ես պիտի տանը լինեմ: Իսկ վաղը նրա երեխաները գալու են մեզ մոտ տոնական ճաշի, ինչպես անում են բոլոր սովորական քաղաքակիրթ ընտանիքները բոլոր սովորական քաղաքակիրթ շենքերում:

Խոսքն ավարտելով՝ նա դուրս է գալիս դռնից՝ սիրալիր արտահայտությունը դեմքին սառած:

Սակայն Էլսան նկատում է՝ ինչպես է Ալֆը նայում նրա հետևից: Վորսը նույն արտահայտությամբ կանգնած է ննջասենյակի դռան արանքում: Ու Էլսայի համար պարզ է դառնում, թե ով է Բրիտ-Մարին:

Մայրիկն իջնում է աստիճաններով, Էլսան չգիտի, թե ինչու: Լենարտը սուրճ է պատրաստում: Յեորգը ձվածեղը վերցնում է կրակից ու գլյոգ է պատրաստում: Մոդը թխվածք է դնում սեղանին: Համախտանիշով տղայի մայրիկը սողոսկում է պահարանի մեջ՝ համախտանիշով տղայի մոտ, ու Էլսան լսում է, որ ծիծաղեցնում է տղային: Արժի նման գերունակություն ունենալ:

Ալֆը դուրս է գալիս պատշգամբ, Էլսան գնում է նրա հետևից: Երկմտելով բավականին երկար կանգնում է նրա հետևում, մինչև որ մոտենում է ճաղերին ու նայում ներքև: Կանաչ աչքերը, ձյան մեջ կանգնած, զրուցում է մայրիկի հետ: Կանաչ աչքերը թեթևակի ժպտում է, ինչպես նախորդ անգամ՝ ոստիկանությունում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նրանք ճանաչո՞ւմ են իրար,– հանկարծակիի եկած հարցնում է Էլսան:

Ալֆը գլխով է անում:

— Համենայնդեպս, առաջ ճանաչում էին: Նրանք մտերիմ ընկերներ էին, երբ քո տարիքին էին:

Էլսան նայում է մայրիկին ու տեսնում է, որ նա դեռևս ահավոր զայրացած է: Հետո աչքի տակով նայում է մուրճին, որ Ալֆը դրել էր պատշգամբի մի անկյունում:

— Ուզում էիր Սեմին սպանե՞լ,– հարցնում է նրան:

Ալֆի աչքերը տխուր էին, բայց անկեղծ:

— Չէ՛:

— Բա մայրիկն ինչո՞ւ էր վրադ կատաղել,– հարցնում է Էլսան:

Ալֆի բաճկոնը թեթևակի ճռճռում է:

— Որ ինքը չէր մուրճը ձեռքին կանգնած ներքևում:

Էլսայի ուսերն իջնում են, ու նա ցրտից կուչ է գալիս: Ալֆը նրա մեջքին է գցում իր ճռճռան բաճկոնը, ու աղջիկը փաթաթվում է դրանով:

— Մեկ-մեկ մտածում եմ, որ կուզենայի՝ մեկը Սեմի վերջը տար:

Ալֆը չի պատասխանում: Էլսան նայում է մուրճին:

— Այսինքն... Դե սպաներ էլի, ամեն դեպքում: Գիտեմ, որ չի կարելի մտածել, թե ինչ-որ մեկն արժանի է մեռնելու: Բայց մեկ-մեկ ես կասկածում եմ, որ նրա նմաններն արժանի են, որ ապրեն...

Ալֆը հենվում է պատշգամբի ճաղերին:

— Մարդուն հատուկ է:

— Մարդուն հատուկ է, որ մեկի մա՞հն ուզենա:

Ալֆը դանդաղ տարուբերում է գլուխը:

— Մարդուն հատուկ է կասկածելը:

Էլսան ավելի ամուր է փաթաթվում նրա բաճկոնով: Փորձում է իրեն անվախ զգալ:

— Ես վախենում եմ,– շշնջում է նա:

— Ես էլ,– ասում է Ալֆը:

Ու այլևս չեն խոսում այդ մասին:

Երբ բոլորը քնում են, նրանք վորսի հետ կամացուկ դուրս են գալիս, բայց Էլսան գիտի, որ մայրիկը տեսնում է իրենց գնալը: Վստահ է, որ կանաչ աչքերով կին ոստիկանն էլ է տեսնում: Նա, մթի մեջ դարանակալած,

թվայնացրել է 1915.info կայքը

հսկում է իրենց, ինչպես Գայլսիրտը կաներ, եթե մոտակայքում լիներ: Ու Էլսան փորձում է չմեղադրել Գայլսիրտին, որ իրենց հետ չէ, որ դավաճանել է իրեն, չնայած խոստացել էր, որ միշտ պաշտպանելու է: Բայց չի հաջողվում:

Էլսան չի խոսում Ալֆի հետ: Ալֆն էլ չի խոսում: Սուրբ ծննդյան նախորդ գիշերն է, բայց ամեն ինչ տարօրինակ է թվում: «Ա՛յ քեզ անիծված տարօրինակ Սուրբ ծննդյան հեքիաթ»,– մտածում է Էլսան:

Երբ նորից բարձրանում են աստիճաններով, Ալֆը հանկարծ կանգ է առնում Բրիտ-Մարիի բնակարանի դռան առջև: Էլսան տեսնում է, որ նա կարծես այլ կերպ է նայում դռանը, ինչպես առաջին ու վերջին անգամ, երբ գիտես, որ այլևս չես տեսնելու:

Էլսան նայում է տոնական զարդարանքներին, որոնք այլևս պիցցա չեն բուրում:

— Քանի՞ տարեկան են Քենթի երեխաները,– հարցնում է նա:

— Չափահաս են արդեն,– ասում է Ալֆը:

— Իսկ Բրիտ-Մարին ինչո՞ւ է ասում, որ նրանք կոմիքսներ ու սառնաշաքար են ուզում,– զարմանում է Էլսան:

— Բրիտ-Մարին ամեն տարի Սուրբ ծնունդին նրանց տոնական ճաշի է հրավիրում, բայց նրանք երբեք չեն գալիս: Վերջին անգամ էստեղ երեխա ժամանակ են եկել: Էն ժամանակ սառնաշաքար ու կոմիքսներ էին սիրում,– անտարբեր ասում է Ալֆը:

Երբ նա քստքստացնելով բարձրանում է աստիճաններով, Էլսան էլ՝ հետևից, վորսը մնում է տեղում գամված: Իր ամբողջ խորաթափանցությամբ հանդերձ՝ Էլսային չափազանց շատ ժամանակ է պետք լինում հասկանալու, թե ինչու:

Միփլորիսի արքայադստերը սիրահարված երկու արքայազներն այնքան են մարտնչում իրար դեմ հանուն նրա սիրո, մինչև սկսում են ատել իրար: Միփլորիսի արքայադուստրը, որի ունեցած գանձը փախցրել էր վիուկը, ապրում էր վշտի թագավորությունում:

Վորսը հսկում է նրա ամրոցի դարպասները: Քանի որ վորսերի գործը հեքիաթներում հենց այդ է:

թվայնացրել է 1915.info կայքը

28

ԿԱՐՏՈՖԻԼ

Էլսան ականջ չի դնում: Էլսան, իսկապես, նրանցից չէ, որ թաքուն ականջ են դնում:

Պարզապես պատահաբար աստիճանների վրա էր հաջորդ առավոտյան ու լսում է, որ Բրիտ-Մարին ու Քենթը խոսում են: Ինքը միտումնավոր չէր կանգնել, ուղղակի վորսին էր փնտրում, մեկ էլ՝ գրիֆինդորցիների շարֆը: Իսկ Բրիտ-Մարիի ու Քենթի բնակարանի դուռը բաց էր: Ներսից սառը քամի էր փչում, որովհետև Բրիտ-Մարին օդափոխում էր Քենթի կոստյումը: Ու Էլսան իրականում ամենևին նպատակ չուներ գաղտնալսելու: Սակայն երբ մի պահ կանգնել էր դռան մոտ ու լսել, մտածեց, որ եթե հիմա անցնի դռան առջևից, Քենթն ու Բրիտ-Մարին կտեսնեն իրեն: Նրանց կթվա, թե ինքը, աստիճանների վրա կանգնած, թաքուն լսում էր նրանց: Ուրեմն ստիպված էր կանգնած սպասել:

Այնպես որ, նրա արածը փաստացի գաղտնալսում չէր:

— Բրի՛տ-Մարի,– ներսից գոռում է Քենթը (արձագանքից դատելով՝ լոգարանից):

— Բրի՛տ-Մարի,– անմիջապես նորից է գոռում Քենթը, կարծես Բրիտ-Մարին շատ հեռու է գտնվում:

— Հա՞,– պատասխանում է Բրիտ-Մարին, ասես կողքին կանգնած լինի, ասենք՝ լոգարանի շեմքին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գրո՛ղը տանի, ո՞ւր է էլեկտրական սափրիչս,– բղավում է Քենթը՝ առանց գոռալու համար ներողություն խնդրելու:

Էլսային ահավոր տհաճ էր նման պահվածքը, որովհետև նա սատանային հիշեց:

— Երկրորդ դարակում,– պատասխանում է Բրիտ-Մարին:

— Ինչո՞ւ առաջինում չէ: Միշտ այնտեղ է եղել,– համառում է Քենթը:

— Այն միշտ երկրորդում է եղել,– պատասխանում է Բրիտ-Մարին:

Հետո լսվում է՝ ինչպես է դարակը բացվում, ապա միանում է էլեկտրական սափրիչը: Սակայն Քենթի կողմից շնորհակալության ոչ մի նշույլ: Բրիտ-Մարին դուրս է գալիս նախասենյակ ու թեքվում է դռնից դուրս՝ Քենթի կոստյումը ձեռքին: Ապա զգուշորեն խոզանակով անտեսանելի մազմզուկներ է մաքրում մի թևքի վրայից: Նա Էլսային չի տեսնում, կամ, ամեն դեպքում, Էլսային է այդպես թվում: Ու երբ Էլսան հասկանում է, որ իրեն տեսնելու հավանականությունը մեծ է, որոշում է կանգնել այնպես, իբր ինչ-որ նպատակով է եկել: Իբր հատուկ է դուրս եկել, որ ստուգի բազրիքի ճաղերի որակը կամ նման մի բան, այլ ոչ այնպիսի տեսքով, ասես գաղտնալսում է: Իսկապես բարդ իրավիճակ է:

Բրիտ-Մարին նորից անհետանում է բնակարանի խորքում:

— Դու խոսեցի՞ր Դավիդի ու Փերնիլայի հետ,– մտերմաբար հարցնում է նա լոգարանում:

— Հա, հա, բա ո՛նց,– անբարեհաճ պատասխանում է Քենթը:

— Դե ե՞րբ են գալու,– ուզում է իմանալ Բրիտ-Մարին:

— Սատանա՛ն գիտի,– ասում է Քենթը:

— Բայց ես պիտի սեղան գցեմ, չէ՞, Քե՛նթ,– խնդրում է Բրիտ-Մարին:

— Նշանակություն չունի, կուտենք, երբ որ գան,– անտարբեր ասում է Քենթը:

— Լավ կլինի՝ 18:00-ին ճաշենք, կարծում եմ,– ասում է Բրիտ-Մարին, ու նրա ձայնից զգացվում է, որ շարունակում է մազմզուկներից մաքրել Քենթի թևքը:

— Հա՛, հա՛, դե հաստատ 6-ի կամ անց կեսի կողմերը կգան,– ասում է Քենթը. ասես իրեն բացարձակ չի հուզում այդ հարցը:

— Այսինքն՝ ճշգրիտ քանիսի՞ն: 6-ի՞ն, թե՞ անց կես,– հարցնում է Բրիտ-Մարին, ասես իր համար չափազանց լուրջ հարց է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տե՛ր Հիսուս, Բրի՛տ-Մարի, ի՜նչ մի մեծ տարբերություն է, գրո՛ղը տանի,– ասում է Քենթը չափից դուրս բարձր:

— Դե եթե մեծ տարբերություն չէ, ուրեմն՝ գուցե 6-ին հարմա՞ր լինի,– ասում է Բրիտ-Մարին չափից դուրս ցածր:

— Հա՛, հա՛, դե մոտավորապես այդ ժամերին էլ կգան, հաստա՛տ,– տնքալով ասում է Քենթը:

— Ասե՞լ ես, որ մենք 18:00-ին են ճաշում,– հարցնում է Բրիտ-Մարին:

— Մենք միշտ էլ 18:00-ին ենք ճաշում:

— Բայց Դավիդին ու Փերնիլային ասե՞լ ես:

— Մենք աշխարհի արարման օրվանից ի վեր ամեն երեկո 18:00-ին ենք սեղան նստում, այնպես որ, կարծում եմ՝ այս տարիների ընթացքում նրանք արդեն գիտեն՝ ոնց հաշվարկեն,– հոգոց է հանում Քենթը:

— Հա՞: Հիմա ինչ-որ սխալ բան կա՞ դրա մեջ,– ուզում է իմանալ Բրիտ-Մարին:

— Չէ՛, չէ՛: Ուրեմն ասում ենք՝ 18:00-ին: Ու որ այստեղ չլինեն այդ ժամին, ուրեմն չեն գալիս,– ասում է Քենթն այնպիսի տեսքով, ասես վստահ է, որ չեն գալու:

— Ես ուղղակի ուզում եմ հաճելի երեկո կազմակերպել ամբողջ ընտանիքի համար, Քե՛նթ,– անհողդողդ ասում է Բրիտ-Մարին, ու ձայնից զգացվում է, որ նա խոզանակով ինչ-որ բանի վրայից ինչ-որ բան է թափ տալիս:

— Ես պիտի գնամ, հանդիպում ունեմ Գերմանիայի հետ,– ասում է Քենթն ու դուրս է գալիս լոգարանից:

— Իսկ ես կարտոֆիլը ե՞րբ դնեմ կրակին,– նրա հետևից բղավում է Բրիտ-Մարին:

— Երբ ուզում ես, դի՛ր,– ասում է Քենթը:

— Երեխաները հո չե՞ն կարող սառած կարտոֆիլ ուտել, Քե՛նթ: Իսկապես, այդպես ո՞նց կլինի,– պնդում է Բրիտ-Մարին:

— Չէէէ՛,– ծանր արտաշնչում է Քենթը:

— Այսինքն՝ առանց Դավիդի ու Փերնիլայի ենք տոնական ճաշ ուտելո՞ւ: Ա՞յդ է ասածդ,– բացականչում է Բրիտ-Մարին:

— Բայց նրանք, սատանան տանի, կարող են ճաշը տաքացնել, երբ գան,– ասում է Քենթը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Եթե իմանամ՝ երբ են գալու, այնպես կանեմ, որ նրանց գալու պահին ճաշը տաք լինի,– ասում է Բրիտ-Մարին:

— Չէ՛: Ուրեմն կճաշենք, երբ բոլորը հավաքվեն, եթե այդքան կարևոր է,– մռնչում է Քենթը:

— Իսկ բոլորը ե՞րբ կհավաքվեն,– հետաքրքրվում է Բրիտ-Մարին:

— Սատանա՛ն տանի, Բրի՛տ-Մարի: Դե, չգիտե՞ս ջահելներին: Կարող է 18:00-ին գան, կարող է՝ 20:30-ին:

Բրիտ-Մարին, ատամները սեղմած, մի քանի վայրկյան լռում է: Ապա խորը շունչ է քաշում ու փորձում վերահսկել ձայնը, ինչպես անում են, երբ չեն ուզում՝ կողքից լսվի, որ ներքուստ ճչում են:

— Բայց մենք ամեն պարագայում չենք կարող 20:30 Սուրբ ծննդյան ճաշն ուտել, Քե՛նթ:

— Դե, գիտե՛մ, լա՛վ, հասկացա՞նք: Երեխաները երբ գան, այդ ժամանակ էլ կուտեն,– պատասխանում է Քենթը:

— Իսկ ե՞րբ կգան,– հետարքրվում է Բրիտ-Մարին:

— Դե, չգիտեմ: Ասել են՝ 18:00-ին: Փերնիլան, հնարավոր է, 18:00-ին հասնի: Ինքը սովորաբար չի ուշանում: Կամ էլ՝ անց կես, եթե ճանապարհներին խցանում լինի:

Ճանապարհներն էլ անընդհատ նորոգում ու նորոգում են,– ասում է Քենթը մի փոքր խեղդված ձայնով, ինչպես ասում են տղամարդիկ, որոնք ամեն անգամ փողկապ կապելիս թերագնահատում են իրենց վզի հաստությունը:

— Դե, եթե մենք 18:00-ին նստենք, 18:30 դեռ ուտելիս կլինենք, ուրեմն Փերնիլան ճաշի կեսից կգա,– տեղեկացնում է Բրիտ-Մարին, ու զգացվում է, որ փողկապ կապելու գործը սիրով իր ձեռքն է առնում:

— Էդքան բան հասկանում եմ,– չափազանց անբարեկիրթ բղավում է Քենթը, ինչպես բղավում են Քենթի նման տղամարդիկ, երբ Բրիտ-Մարիի կարգի կանայք փորձում են նրանց փողկապը կապել:

— Կարիք չկա այդպես կտրուկ խոսելու,– մի փոքր կտրուկ ասում է Բրիտ-Մարին:

— Սատանա՛ն տանի, ճարմանդներս ո՞ւր են,– հարցնում է Քենթն ու բնակարանով մեկ ման է գալիս՝ հետևից կախված կիսակապված փողկապը վզին:

— Կոմոդի երկրորդ դարակում,– ասում է Բրիտ-Մարին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Միշտ առաջինում չէի՞ն,– զարմանում է Քենթը:

— Միշտ էլ երկրորդում են եղել,– ասում է Բրիտ-Մարին:

Իսկ Էլսան դեռ կանգնած է ու, բնականաբար, չի գաղտնալսում: Բայց նախասենյակի պատից մի մեծ հայելի է կախված ճիշտ մուտքի դռան դիմաց, ու աստիճաններին կանգնած՝ Էլսան հայելու մեջ տեսնում է Քենթին: Բրիտ-Մարին խնամքով փողկապի վրա է ծալում վերնաշապիկի օձիքը ու զգուշորեն թափ է տալիս բաճկոնի դարձածալը:

— Ե՞րբ կգաս տուն,– կամացուկ հարցնում է նա:

— Ի՞նչ իմանամ, գերմանացիներից ո՞վ է գլուխ հանում. ինձ, ամեն դեպքում, մի՛ սպասիր,– խուսափողական պատասխան է տալիս Քենթն ու շրջվում է, որ դուրս գա:

— Հենց տուն գաս, բարի եղիր, վերնաշապիկդ ուղիղ լվացքի մեքենայի մեջ գցիր,– խնդրում է Բրիտ-Մարին՝ հետևից քայլելով, որ տաբատի վրայից էլ ինչ-որ բան թափ տա, ինչպես անում են մինչև վերջ սպասող կանայք:

Քենթը նայում է ձեռքի ժամացույցին, ինչպես թանկարժեք ժամացույց կրող մարդիկ են իրենց ժամացույցին նայում: Էլսան գիտի, քանի որ Քենթն ինքն էր մի օր Էլսայի մայրիկին ասել, որ իր ժամացույցն ամբողջ Kia-ից թանկ է:

— Ուղիղ լվացքի մեքենայի մեջ, լա՞վ, Քե՛նթ: Հենց որ գաս,– բղավում է Բրիտ-Մարին նրա հետևից:

Քենթն առանց արձագանքելու դուրս է գալիս աստիճանավանդակ ու տեսնում է Էլսային: Նա կարծես ամենևին էլ չի կասկածում, թե աղջնակը գաղտնալսում էր, սակայն, ամեն դեպքում, ակնհայտ է, որ ուրախ չէ՝ նրան տեսնելով:

— Ըհը՛,– ասում է նա հեգնական ժպիտով՝ հավանաբար ենթադրելով, որ երեխաների հետ նրանց լեզվով է խոսում:

Էլսան չի պատասխանում, քանի որ նա այդպես չի խոսում: Քենթի հեռախոսը զանգում է: Էլսան նկատում է, որ ձեռքին նոր հեռախոս է: Քենթի հայացքը մատնում է, որ նա ուզում է հայտնել հեռախոսի գինը:

— Գերմանիայից են զանգում,– ասում է նա Էլսային՝ այդ պահին միայն հիշելով, որ Էլսան էական դեր է ունեցել նկուղի աստիճանների մոտ տեղի

թվայնացրել է 1915.info կայքը

ունեցած երեկվա միջադեպի ընթացքում, որի հետևանքով իր նախկին հեռախոսը շարքից դուրս էր եկել:

Նա կարծես հիշում է նաև թույնն ու դրա համար վճարած գումարը: Էլսան ուսերն է թոթվում, ասես մարտահրավեր է նետում նրան: Քենթը սկսում է իր նոր հեռախոսի մեջ բղավել՝ այո՛, Կլա՛ուս, ու անհետանում է աստիճանների ներքևում՝ ունքերն ասես ուղիղ գծով բետոնապատած:

Էլսան մի քանի քայլ է անում դեպի աստիճանները, սակայն կանգ է առնում բաց դռան առաջ: Նախասենյակի հայելու մեջ երևում է լոգարանը: Բրիտ-Մարին ներսում խնամքով փաթաթում է Քենթի էլեկտրական սափրիչի լարն ու դնում է այն երրորդ դարակը: Հետո դուրս է գալիս նախասենյակ ու տեսնում է Էլսային: Կոնքերի առջև ձեռքերն իրար է ագուցում:

— Ըհը՛,– ասում է նա:

— Ես չէի թաքնվում,– իսկույն արդարանում է Էլսան:

Բրիտ-Մարին ուղղում է նախասենյակի կախիչների վրայի դրսի հագուստն ու խնամքով թափ է տալիս Քենթի բոլոր վերարկուների ու բաճկոնների թևքերը: Էլսան մատների ծայրերը խցկում է ջինսի գրպաններն ու մռթմռթում է.

— Շնորհակալությո՛ւն:

Բրիտ-Մարին զարմացած նրան է նայում:

— Ի՞նչ:

Էլսան տնքում է շուտով ութ տարեկանը լրացող երեխայի պես, որ ստիպված է երկու անգամ շնորհակալություն հայտնել:

— Ասացի շնորհակալություն, որ դու ոչ մի բան չասացիր ոստիկանին...,– նա մի պահ դադար է տալիս՝ նախքան վորսի մասին հիշատակելը:

Բրիտ-Մարին կարծես ամեն դեպքում հասկանում է: Նա մատներն իրար է ագուցում:

— Մարդ պիտի կանոնների ենթարկվի. դու պարտավոր ես հասկանալ դա, Է՛լսա: Ես պատասխանատու եմ տեղեկատվության համար: Ու իրականում ինձ պիտի տեղյակ պահեիք, որ շենքում կռվաշուն կա:

— Բայց սա կռվաշուն չէ,– վիրավորված ձայնով ասում է Էլսան:

Բրիտ-Մարին թափ է տալիս իր փեշը: Ձեռքերն ագուցում է իրար:

— Չէ՛, չէ՛, ոչ մի դեպքում, իհա՛րկե, կռվաշուն չի, մինչև որ մեկն ու մեկին չկծոտի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինքը ոչ մեկին էլ չի՛ կծոտելու, համ էլ քեզ Սեմից փրկեց,– ըմբոստանում է Էլսան:

Բրիտ-Մարին այն է՝ ուզում է հակաճառել, բայց միտքը փոխում է, որովհետև գիտի, որ Էլսայի ասածը ճիշտ է: Էլսան էլ մտածում է մի բան ասել, սակայն զսպում է իրեն, որովհետև գիտի, որ Բրիտ-Մարին իրականում արդեն փրկագինը վճարել է:

Էլսան հայելու միջով տեսնում է բնակարանի ներսը:

— Ինչո՞ւ էիր էլեկտրական սափրիչը սխալ դարակում դրել,– հարցնում է Էլսան:

Բրիտ-Մարին անվերջ թափ է տալիս փեշը: Ապա ձեռքերն իրար է ագուցում:

— Չեմ հասկանում՝ ինչ ես ասում,– ասում է նա, չնայած Էլսան տեսնում է, որ լավ էլ ամեն ինչ գիտի:

— Քենթն ասում է, որ միշտ առաջին դարակում էր: Բայց դու ասացիր, որ միշտ երկրորդում է եղել: Իսկ որ Քենթը գնաց, դու երրորդի մեջ դրեցիր,– ասում է Էլսան:

Այդ ժամանակ միայն մի ակնթարթ կարծես Բրիտ-Մարին մտքերի մեջ է ընկնում: Ցրված է թվում, հետո թերևս՝ միայնակ: Հետո քրթմնջում է.

— Հա՛, միգուցե: Միգուցե այդպես եմ արել:

Էլսան գլուխը թեքում է:

— Իսկ ինչո՞ւ:

Մի քանի հեքիաթային հավերժություն լռություն է տիրում: Հետո Բրիտ-Մարին շշնջում է՝ ասես մոռացած Էլսայի ներկայության մասին.

— Որովհետև ես սիրում եմ, երբ նա իմ անունն է բղավում:

Եվ Բրիտ-Մարին փակում է դուռը:

Իսկ Էլսան կանգնած է մնում ՝ փորձելով համոզել ինքն իրեն, որ չի սիրում նրան: Բայց առանձնապես չի հաջողվում:

թվայնացրել է 1915.info կայքը

29

ՄԵՐԵՆԳԱ

Մարդ պիտի հավատա: Տատիկն էր ասում: Մարդ պիտի մի բանի հավատա, որ հեքիաթներն ընկալի: Կարևոր չէ՝ ինչին, բայց ինչ-որ բանի պիտի հավատա, թե չէ ամեն ինչ անիմաստ է:

Ու վերջում թերևս ամեն ինչ գալիս ու հանգում է սրան:

Էլսան գրիֆինդորցիների շարֆը գտնում է շենքի մոտ՝ ձյան մեջ: Հենց այնտեղ էր վրայից սահել, երբ նա նետվել էր դեպի Սեմը: Կանաչ աչքերը մի քանի մետր հեռու էր կանգնած: Արևը նոր էր դուրս գալիս: Ձյունն ասես եգիպտացորենի բոված հատիկներ լիներ ոտքերի տակ:

— Ողջո՛ւյն,– ասում է Էլսան:

Կանաչ աչքերը լուռ գլխով է անում:

— Ոնց որ չխոսկան ես, հա՞,– ասում է Էլսան:

Կանաչ աչքերը ժպտում է, բայց ոչ բերանով:

— Հա՛, շատախոս չեմ:

Էլսան շարֆը վզին է փաթաթում:

— Դու տատիկիս ճանաչո՞ւմ էիր:

Կանաչ աչքերը ուշադիր զննում է շենքի պատի երկայնքով մինչև փոքրիկ փողոցը:

— Քո տատիկին բոլորը ճանաչում էին:

Էլսան ձեռքերը ներս է քաշում բաճկոնի թևքերի մեջ:

— Իսկ մայրիկի՞ս:

Կանաչ աչքերը նորից գլխով է անում: Էլսան կկոցում է աչքերը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ալֆն ասում է՝ դուք մտերիմ ընկերուհիներ էիք:

Կանաչ աչքերը Էլսայի հետևում ուշադիր զննում է փողոցը՝ մի ծայրից մյուսը, հետո կանգ առնում նրա վրա: Գլխով է անում: Էլսայի համար զարմանալի է: Տեսնես՝ ոնց ես քեզ զգում, երբ լավագույն ընկերդ քո տարիքին է: Հետո լուռ կանգնում է կանաչ աչքերի կողքին ու նայում արևածագին: Գեղեցիկ Սուրբ ծննդյան երեկո է սպասվում՝ անկախ ամեն ինչից:

Նա հազալով կոկորդն է մաքրում ու գնում է դեպի շենքի մուտքը, բայց ձեռքը դռան բռնակին՝ կանգ է առնում:

— Ամբողջ գիշեր հսկե՞լ ես,– հարցնում է կին ոստիկանին:

Կանաչ աչքերը ուշադիր փողոցին է նայում: Գլխով է անում: Էլսան անփույթ քաշում է բռնակը:

— Որ Սեմը հետ գա, սպանելո՞ւ ես:

Կանաչ աչքերը ձյան վրայով տեղաշարժվում է ու հայտնվում ուղիղ Էլսայի առջև: Լրջանում է:

— Հուսամ, որ ոչ:

— Ինչո՞ւ,– հարցնում է Էլսան:

— Իմ գործը սպանելը չէ,– պատասխանում է կանաչ աչքերը:

— Իսկ ո՞րն է քո գործը:

— Պաշտպանելը:

— Սեմի՞ն, թե՞ մեզ,– հանդիմանելով հարցնում է Էլսան:

— Երկուսիդ էլ:

Էլսայի ունքերը մեկ են դառնում:

— Վտանգավորը նա է, ոչ թե մենք:

Կանաչ աչքերը ժպտում է, սակայն ամենևին ուրախ չէ:

— Երբ փոքր էի, տատիկդ ասում էր, որ մարդ ոստիկան դառնալիս չի ընտրում՝ ում պաշտպանի: Նա պիտի բոլորին պաշտպանի:

— Գիտե՞ր, որ դու ուզում ես ոստիկան դառնալ,– հարցնում է Էլսան:

— Ինքն ինձ մղեց, որ դառնամ:

— Ո՞նց:

Կանաչ աչքերը ժպտում են, այս անգամ՝ սրտանց:

— Ես ամեն ինչից վախենում էի փոքր ժամանակ: Իսկ ինքն ասաց, որ անեմ հենց այն, ինչից ամենաշատն եմ վախենում, որ ես ծիծաղեմ վախերիս երեսին:

Էլսան գլխով է անում՝ ասես հաստատելով այն, ինչ վաղուց գիտեր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Փաստորեն դու ու մայրիկն էիք:

Կանաչ աչքերի շեկ ունքերը գրեթե աննկատ բարձրանում են: Էլսան ցույց է տալիս տների արանքից երևացող հորիզոնը:

— Ոսկի ասպետները, որ փրկեցին Հեքիաթասարը Հիմիկից ու վախերից և կառուցեցին Միաուդակասը, դու ու մայրիկն էիք:

Կանաչ աչքերը հայացքը սահեցնում է ձյան վրայով, փողոցն ի վեր ու շենքի ճակատով:

— Ի՞նչ հերոս ասես որ չենք եղել տատիկիդ հեքիաթներում:

Էլսան բացում է դուռը, ոտքը շեմից ներս է դնում ու մնում կանգնած:

— Իսկ դու սկզբից մայրիկի՞ս ես ճանաչել, թե՞ տատիկիս:

— Տատիկիդ:

— Դու նրա ննջասենյակի առաստաղի երեխաներից ես, չէ՞:

Կանաչ աչքերն անթարթ նրան են նայում: Ու շատ անկեղծ են ժպտում:

— Դու շատ խելացի ես: Տատիկդ միշտ ասում էր, որ դու իր տեսած ամենախելացի աղջիկն ես:

Էլսան գլխով է անում: Դուռը փակվում է նրա հետևից: Գեղեցիկ Սուրբ Ծննդյան երեկո է՝ անկախ ամեն ինչից:

Նա փնտրում է վորսին նկուղի պահեստում ու Renault-ի մեջ, բայց երկուսն էլ դատարկ են: Գիտի, որ տատիկի բնակարանի պահարանը նույնպես դատարկ կլինի, և վորսը, անկասկած, մայրիկի ու Յեորգի բնակարանում էլ չի լինի, քանի որ ոչ մի կենդանի արարած չի ուզենա նրանց մոտ մնալ Սուրբ Ծննդյան երեկոյի առավոտյան: Մայրիկի արդյունավետությունը սովորականից բարձր է Սուրբ Ծննդյան երեկոյի առավոտները, իսկ Սուրբ Ծննդյան արդյունավետությունը մայրիկի ամենասիրած արդյունավետությունն է, ու այդ ժամանակ ես հասկանում, թե մայրիկն իրականում ի՞նչ աստիճան է ԳԺՎՈՒՄ ամեն տեսակ արդյունավետությունների համար:

Դրա համար է մայրիկն ամեն տարի մայիսից սկսում խոսել Սուրբ Ծննդյան նվերների մասին: Նրա ասելով՝ պատճառն իր կազմակերպվածությունն է, ինչին տատիկը սովորաբար առարկում էր, թե ավելի շուտ՝ «անալային սևեռվածությունը», որից հետո Էլսան սովորաբար պիտի չափազանց երկար ժամանակ ականջակալներով մնար: Այս տարի, սակայն, մայրիկը փաստացի տարվել էր ազատախոհությամբ ու խենթությամբ և

թվայնացրել է 1915.info կայքը

դիմացել էր նույնիսկ մինչև օգոստոսի մեկը՝ նախքան Էլսային հարցուփորձ անելը, թե ինչ նվեր կուզենար Սուրբ ծնունդին: Բայց մայրիկը մի լավ բարկացել էր, երբ Էլսան հրաժարվել էր հայտնել, թե ինչ կուզենար, չնայած որ Էլսան նրան հստակ հարց էր տվել, թե նա պատկերացնո՞ւմ է՝ մարդ կես տարում ինչքան կարող է փոխվել, երբ ութ տարեկանի շեմին է: Մայրիկը, ամեն դեպքում, արել էր այնպես, ինչպես միշտ էր անում. գնացել ու իր հայեցողությամբ նվեր էր գնել: Եվ, բնականաբար, ստացվել էր ամեն անգամվա պես՝ անկապ: Էլսայի համար պարզ է, որովհետև հայտնաբերել է մայրիկի նվերների թաքստոցը: Երբ համարյա ութ տարեկան ես, փնտրելու բավականին երկար ժամանակ ես ունենում, եթե Սուրբ ծննդյան նվերներն օգոստոսից են նախապատրաստում:

Այսպիսով, այս տարի Էլսան փոխարենը երեք գիրք է ստանալու տարբեր բաների մասին, որոնք այս կամ այն կերպ հիշատակվում են «Հարրի Փոթերի» հերոսների կողմից: Դրանք փաթեթավորված են Էլսայի հավանած թղթով: Էլսան գիտի այդ մասին, քանի որ մայրիկի գնած առաջին նվերը բոլորովին բանի պետք չէր: Երբ Էլսան հոկտեմբերին հայտնել էր մայրիկին այդ մասին, նրանք մոտ մեկ ամիս վիճել էին այդ հարցի վերաբերյալ, մինչև որ մայրիկը հանձնվել էր ու Էլսային փող էր տվել, որ գնի իր ուզածը: Էլսան էլ գնել էր ու փաթեթավորել իր հավանած թղթով: Հետո փաթեթը դրել էր մայրիկի բացահայտված թաքստոցում ու գովել էր նրան ուշադրության ու հոգատարության համար, որ նա ճշգրիտ իմացել է, թե այս տարի Էլսայի ուզածն ինչ է: Եվ մայրիկը նրան «գրինչ*» էր անվանել:

Այդ ավանդույթն Էլսային շատ էր դուր եկել:

Էլսան մոտ վեց անգամ սեղմում է Ալֆի դռան զանգը, մինչև որ նա վերջապես բացում է: Հագին առավոտյան խալաթ է, դեմքին՝ նյարդայնացած արտահայտություն, ձեռքին՝ սուրճի բաժակ՝ վրան գրված «Յուվենտուս»:

— Ի՞նչ է պատահել,– տարակուսում է նա՝ առանց բարև ասելու:

— Բարև՛,– ասում է Էլսան՝ առանց հարցին պատասխանելու:

— Ես քնած եմ,– մռթմռթում է նա:

— Սուրբ ծննդյան երեկոն է,– հիշեցնում է Էլսան:

— Պարզ է, որ գիտեմ,– ասում է նա:

---

* Դոկտոր Սյուսի՝ Թեոդոր Սուս Գեյսելի կողմից ստեղծված հայտնի գեղարվեստական կերպար՝ 1957 թվականին հրատարակված «Ինչպես Գրինչը գողացավ Սուրբ ծնունդը» մանկական գրքի գլխավոր հերոսը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա ինչո՞ւ ես քնած,– հարցնում է Էլսան:

— Գիշերն ուշ եմ քնել:

— Ու ի՞նչ էիր անում:

Ալֆը սուրճից մի կում է անում:

— Ի՞նչ ես անում էստեղ,– հարցին հակադարձում է նա:

— Ե՛ս առաջինը հարցրի,– համառում է Էլսան:

— Գիշերվա կեսին ե՞ս եմ դռանդ զանգը տալիս, հա՞,– փնթփնթում է Ալֆը:

— Իսկի էլ գիշերվա կեսը չէ: Սուրբ ծննդյան առավոտն է,– բացատրում է Էլսան:

— Ահա՛ թե ինչ,– ասում է Ալֆը:

— Հա՛, հենց այդպես,– ասում է Էլսան:

Նա մի կում էլ է անում: Էլսան ոտքով նյարդայնացած տրորում է նրա դռան գորգիկը:

— Վորսին չեմ գտնում:

— Պարզ է,– հանգիստ գլխով է անում Ալֆը:

— Ի՞նչն է պարզ,– անհանգիստ հարցնում է Էլսան:

— Որ չես գտնում:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մոտս է:

Էլսայի ունքերը բարձրանում են ասես թաց ջրաներկի վրայից գծելիս:

— Վորսն էստե՞ղ է:

— Հա՛:

— Իսկ ինչո՞ւ չես ասում:

— Բա նոր ի՞նչ արեցի, գրո՛ղը տանի:

— Իսկ ինչո՞ւ է էստեղ:

— Որովհետև Քենթն առավոտյան հինգին եկավ, իսկ կենդանուն էդ ժամանակ աստիճանների վրա թողնել չէր լինի: Ոստիկանություն կզանգեր, թե որ հանկարծ պարզեր, որ դեռ էստեղ է:

Էլսան ներս է նայում: Վորսը նստած է Ալֆի բնակարանի մեջտեղում ու ինչ-որ բան է լակում առջևի խոշոր մետաղյա թասից, որի վրա նույնպես «Յուվենտուս» է գրված:

— Ի՞նչ իմացար՝ Քենթը երբ է տուն եկել,– հարցնում է Էլսան:

— Որովհետև կայանատեղիում էի, որ նա իր գրողի տարած BMW-ով եկավ,– ափերից դուրս գալով ասում է Ալֆը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բա ինչո՞ւ էիր կայանատեղիում էդ ժամին,– համբերատար հարցնում է Էլսան:

Ալֆի հայացքից երևում է, որ անչափ հիմար հարց է:

— Որովհետև նրան էի սպասում:

Էլսան հայացքը նրան է հառում:

— Եվ ինչքա՞ն ես սպասել:

— Ամբողջ գիշեր՝ մինչև ժամը 5-ը, ասացի, չէ՞,– դժգոհում է նա:

Էլսան ուզում է նրան գրկել, բայց զսպում է իրեն: Վորսը անչափ գոհ տեսքով հայացքը կտրում է մետաղյա թասից: Սևացած քթից ինչ-որ բան է կաթում: Էլսան Ալֆին է նայում:

— Ա՞լֆ... հո վորսին... Չլինի՞ սուրճ ես տվել:

— Հա՛,– ասում է Ալֆը՝ անկեղծորեն չհասկանալով, թե ինչ սխալ բան է արել:

— Սա հո ՄԱ՞ՐԴ չի: Ինչո՞ւ ես նրան ՍՈՒՐՃ տվել,– գժվում է Էլսան:

Ալֆը քորում է մազերի առատությամբ չփայլող գանգամաշկը, հետո խալաթն է ուղղում: Էլսան հասցնում է հաստ սպի նկատել նրա կրծքին: Նա, Էլսայի հայացքը նկատելով, շփոթվում է:

— Չէի ուզում անքաղաքավարի լինել, գրո՛ղը տանի,– ասում է նա՝ գլխով անելով Վորսի ու սուրճի կողմը:

Վորսն էլ գլխով է անում՝ ի նշան համաձայնության:

Էլսան քունքերն է մերսում:

Ալֆը գնում է ննջասենյակ ու դուռը փակում: Երբ նորից դուրս է գալիս, հագին արդեն կաշվե բաճկոն է՝ տաքսու նշանով, չնայած որ Սուրբ ծննդյան առավոտն է: Ստիպված պիտի վորսին թույլ տան գործերն անել կայանատեղիում, քանի որ շենքի շուրջը ոստիկաններն արդեն շատացել են, իսկ այդքան սուրճ խմելուց հետո նույնիսկ վորսը երկար չի կարողանա զսպել իրեն:

Տատիկին հաստատ դուր կգար, որ կայանատեղիում է գործերն անելու, որովհետև Բրիտ-Մարին պարզապես կգժվեր:

Երբ բարձրանում են, մայրիկի ու Յեորգի բնակարանից մերենգայի, բեարնեզ սոուսով լազանիայի բույր են զգում, որովհետև մայրիկը որոշել էր, որ Սուրբ ծնունդն այս անգամ շենքի բոլոր բնակիչներով միասին պիտի նշեն: Ոչ ոք չէր հրաժարվել, քանի որ իսկապես լավ գաղափար էր, մասամբ էլ,

թվայնացրել է 1915.info կայքը

որովհետև ոչ ոք երբեք չի մերժում մայրիկին: Հետո Յեորգն առաջարկել էր, որ բոլորն իրենց սիրած ճաշատեսակը պատրաստեն ծննդյան սեղանի համար: Նա նման գործերից լավ է, ինչն Էլսային սարսափելի նյարդայնացնում է:

Համախտանիշով տղայի ամենասիրած ուտելիքը սերուցքով մերենգան է, այդ պատճառով նրա մայրիկն իր տղայի համար դա էր պատրաստել: Կամ էլ, ավելի ճիշտ, նրա մայրիկն անընդհատ ձեռքից գցում էր բոլոր բաղադրիչները, ու Լենարտը հավաքում էր ամեն ինչ հատակից, իսկ Մոդը դասավորում էր ափսեի մեջ, մինչ տղան ու նրա մայրիկը պարում էին:

Հետո Մոդն ու Լենարտը որոշել էին, որ կարևոր է սև կիսաշրջազգեստով կնոջը նույնպես ինչ-որ կերպ ներգրավել: Քանի որ Մոդն ու Լենարտն էլ դրանից են լավ, նրան խնդրել էին մի որևէ յուրահատուկ բան պատրաստել, իսկ կինը շփոթված նստել էր բնակարանի խորքում՝ մի աթոռի վրա, ու քրթմնջում էր, թե տարիներ ի վեր ոչինչ չի պատրաստել: «Երբ մենակ ես, առանձնապես ճաշ չես պատրաստում»,– ասել էր նա: Մոդը շատ էր ազդվել նրա խոսքերից ու սկսել էր ներողություն խնդրել աննրբանկատ լինելու համար: Եվ այդ ժամանակ սև կիսաշրջազգեստով կինը խղճացել էր Մոդին և բեարնեզ սոուսով լազանիա էր պատրաստել, քանի որ դա իր տղաների սիրած ճաշն էր:

Այնպես որ, նրանք, միասին նստած, մերենգա ու լազանիա են ուտում, քանի որ այդպիսի Սուրբ ծնունդ է՝ անկախ ամեն ինչից:

Վորսը Մոդից երկու դույլիկ դարչինով թխվածք է ստանում, իսկ Յեորգը նկուղից բերում է Էլսայի փոքր ժամանակվա լողանալու տաշտակն ու մեջը գլյոգ է լցնում: Նման հեռանկարով ոգևորված՝ վորսը համաձայնում է մի ժամով անհետանալ տատիկի բնակարանի պահարանի մեջ: Մայրիկն իջնում է ու դրսի ոստիկաններին ներս է հրավիրում: Կանաչ աչքերը նստում է մայրիկի կողքին: Նրանք անընդհատ ծիծաղում են: Ամառային աշխատանքի ընդունված ոստիկանը նույնպես միանում է նրանց ու սկսում է մերենգաները հուպ տալ, ապա բազմոցին նստած էլ քնում է:

Սամանթան, որը, ինչպես գիտեք, բիշոն Ֆրիզե է և դրա համար էլ քաղաքակիրթ արագությամբ ամեն ինչ վայրկենապես յուրացնում է, սպասում է, մինչև համոզվի, որ ոչ ոք իրեն չի նայում: Ապա աննկատ գնում է

թվայնացրել է 1915.info կայքը

տատիկի բնակարան ու մտնում պահարանի մեջ: Ոչ միայն այն պատճառով, որ վարժվել է գլյոգ խմելուն:

Սև կիսաշրջազգեստով կինը լուռ նստած է սեղանի եզրին: Ճաշից հետո, երբ Յեորգն ափսեներն է լվանում, Մոդը սրբում է սեղանները, իսկ Լենարտը, իր հոգեպահուստ սուրճը ձեռքին, նստած է էլեկտրական սրճեփի կողքին, որ այն անխափան իր անելիքն անի: Համախտանիշով տղան բնակարանից դուրս է գալիս աստիճանավանդակ ու գնում է ուղիղ տատիկի բնակարան: Հետո վերադառնում է՝ բերանի շուրջը դարչինով թխվածքի փշուրներ, իսկ շապիկին այնքան շատ վորսամազ կպած, որ կարելի էր կարծել, թե նրան դիմակահանդեսի էին հրավիրել, ու ինքն էլ որոշել էր գորգի դերում լինել: Նա Էլսայի սենյակից ծածկոց է վերցնում ու մոտենում է սև կիսաշրջազգեստով կնոջը: Երկար զննում է նրան, ապա ոտքի մատների վրա կանգնելով՝ ձգվում ու կսմթում է կնոջ քիթը: Կինը սարսափահար վեր է թռչում, իսկ տղայի մայրիկն այնպես է ճչում, ինչպես կճչա ցանկացած մայր, եթե իր երեխան կսմթի անծանոթների քթերը: Մոդը զգուշորեն բռնում է նրա ձեռքն ու կանգնեցնում է նրան, իսկ երբ տղան իր բութ մատը մտցնում է ցուցամատի ու միջնամատի արանքը և նայում սև կիսաշրջազգեստով կնոջը, Մոդը մտերմաբար բացատրում է.

— Դա խաղ է: Նա խաղում է՝ իբր քիթդ պոկեց:

Սև կիսաշրջազգեստով կինն անթարթ նայում է Մոդին, հետո՝ տղային, հետո՝ քթին: Հետո բռնում է տղայի քթից, ու տղան սկսում է այնպես քրքջալ, որ պատուհանների ապակիները զնգզնգում են զանգակների պես:

Տղան քնում է կնոջ ծնկներին՝ ծածկոցով փաթաթված: Նրա մայրիկը մեղավոր ժպիտով փորձում է բարձրացնել նրան ու ասում է կնոջը, որ իրականում տղան այդքան կպչուն ու աներես չէ. այսօր բոլորովին իրեն նման չէր: Սև կիսաշրջազգեստով կինն անվստահ բռնում է նրա ձեռքն ու շշնջում է.

— Եթե... Եթե կարելի է... Ես կուզենայի... Ես մեծ հաճույքով կուզենայի, որ թողնեք՝ նրան գրկումս պահեմ... Մի քիչ էլ...

Տղայի մայրիկն իր ձեռքերի մեջ է առնում նրա ափն ու գլխով անում: Սև կիսաշրջազգեստով կինը ճակատով դիպչում է տղայի մազերին ու շշնջում է.

— Շնորհակալ եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո Յեորգն էլի գլյոգ է պատրաստում, ու ամեն ինչ համարյա թե սովորականի պես է թվում, ու գրեթե էլ վախենալու չէ: Երբ ոստիկանները շնորհակալություն են հայտնում ճաշի հրավիրելու համար ու աստիճաններով իջնում են, Մոդը տխուր Էլսային է նայում ու ասում, որ պատկերացնում է, թե շենքում այսքան ոստիկանների ներկայությամբ Սուրբ ծնունդն ինչքան վատ կլինի երեխայի համար: Բայց Էլսան բռնում է նրա ձեռքն ու ասում.

— Մի՛ անհանգստացիր, Մո՛դ: Սա ուղղակի Սուրբ ծննդյան հեքիաթ է: Դրանք միշտ էլ երջանիկ ավարտ են ունենում:

Եվ թվում է, թե Մոդը հավատում է դրան:

Որովհետև մարդ պիտի հավատա:

թվայնացրել է 1915.info կայքը

30

ՕԾԱՆԵԼԻՔ

Սուրբ ծննդյան ճաշից հետո՝ երեկոյան, մեկը սրտի կաթված է՛ստանում: Բայց երկու սիրտ է կոտրվում, որից հետո տունն այլևս նախկինը չի լինում:

Սկսվում է նրանից, որ համախտանիշով տղան ցերեկն արթնանում է շատ քաղցած: Վորսն ու Սամանթան պահարանից դուրս են սողում, քանի որ գլյոգը վերջացել էր: Էլսան սկսում է Ալֆի շուրջը պտտվել ու տղայի կողմը բազմանշանակ գլխով անելով՝ հայտարարում է.

— Ոնց որ թե ԹԵՐԹ գնելու ժամանակն է, չէ՞, Ա՛լֆ:

Ալֆը փնթփնթալով գնում է Զմեռ պապիկի հանդերձանքի հետևից: Էլսան ու վորսը նրա հետևից գնում են կայանատեղի: Նա նստում է իր տաքսին: Երբ Էլսան բացում է մեքենայի դուռն ու գլուխը ներս մտցնելով՝ հարցնում է, թե ինչ գործի է, նա միացնում է շարժիչն ու մռթմռթում.

— Թե որ պիտի ամեն դեպքում Զմեռ պապիկ դառնամ, ուրեմն գոնե սկզբում թերթ գնեմ:

— Չեմ կարծում, թե մայրիկս թույլ կտա, որ ինչ-որ տեղ գնամ հիմա,– առարկում է Էլսան:

— Իսկ քեզ ոչ ոք չի հրավիրել, փակի՛ր էդ գրողի տարած դուռը,– կտրուկ ասում է Ալֆն ու հետ-հետ է քշում:

Այդ ժամանակ Էլսան ներս է ցատկում, վորսն էլ՝ հետևից: Էլսան տեսնում է, որ նա դժվար է շարժվում, ասես մկանները բռնվել են մարզումներից, սակայն իբր չի նկատում, ինչպես չնկատելու ես տալիս, երբ ծերերը

թվայնացրել է 1915.info կայքը

լավ չեն լսում ասածդ: Ոմանք չեն ուզում դիմացինին ակնարկել նրա ծեր լինելու մասին, ոմանք էլ չեն ուզում ընդունել, որ նա ծեր է:

Երբ Ալֆը սկսում է փնթփնթալ, որ չի կարելի ընկնել մեկի մեքենայի մեջ ու ակնկալել, որ քեզ հետը կտանի, Էլսան պատասխանում է, որ տաքսին հենց դրա համար է նախատեսված: Իսկ երբ Ալֆը, հաշվիչին ջղային թփթփացնելով, տեղեկացնում է, որ տաքսիով ուղևորությունը փող արժի, Էլսան ասում է, որ ուզում է այս ուղևորությունը՝ որպես Սուրբ Ծննդյան նվեր, ստանալ նրանից: Այդ ժամանակ Ալֆը բավականին երկար ժամանակ թթված դեմքով նստում է, իսկ հետո նրանք գնում են Սուրբ Ծննդյան ուղևորության:

Ալֆը մի կրպակի տեղ գիտի, որը բաց է նույնիսկ Սուրբ Ծնունդին: Էլսան երկու պաղպաղակ է գնում: Վորսն իր պաղպաղակի վերջը տալիս է ու Էլսայինի կեսն էլ է ուտում: Իմանալով, թե վորսերն ինչքան են պաղպաղակ սիրում, կարելի է հասկանալ, որ նրա արածը, իրոք, մեծագույն նրբանկատության նշան է: Վորսը մի քիչ պաղպաղակ է հետևի նստարանին լղոզում, բայց Ալֆն ընդամենը տասը րոպե է վրան գոռգոռում: Իմանալով, թե Ալֆն ինչ աստիճանի չի սիրում մեքենա կեղտոտող վորսերին, հասկանալի է, որ նրա արածը, իրոք, մեծագույն նրբազգացության նշան է:

— Կարո՞ղ եմ մի հարց տալ,– հարցնում է Էլսան, չնայած հրաշալի հասկանում է, որ արդեն հարց է տալիս:

Ալֆն ուղղվում է վարորդի նստարանին համարյա կետաձկան պես, որ փորձում է հարմար տեղավորվել կինոթատրոնի բազկաթոռին: Ոչինչ չի ասում:

— Ինչո՞ւ Բրիտ-Մարին չմատնեց մեզ,– հարցնում է Էլսան՝ առանձնապես չմտահոգվելով, որ Ալֆը լուռ է:

Ալֆն ինչ-որ բան է քրթմնջում, որ Էլսան չի լսում, ու անցնում է խաչմերուկը:

— Հը՞,– ասում է Էլսան:

— Ասում էի՝ Բրիտ-Մարին մեկ-մեկ իրոք զզվեցնում է, բայց ինքն իսկի չար չէ,– պարզաբանում է Ալֆը:

— Բայց շներին ատում է,– պնդում է Էլսան:

— Է՛, չէ՛, ուղղակի փախենում է: Տատիկդ, երբ վերադարձավ, անընդհատ անտեր շներ էր բերում տուն: Մենք էլ դեռ երեխաներ էինք՝ Բրիտ-Մարին,

թվայնացրել է 1915.info կայքը

Քենթն ու ես: Էդ թափառական շներից մեկը կծել էր Բրիտ-Մարիին, ու նրա մայրն ուղղակի կատաղել էր,– մի շնչով իր համար ուղղակի ցնցող երկարությամբ ճառ է ասում Ալֆը:

Տաքսին թեքվում է փողոցի կողմը: Էլսան մտածում է Միփլորիսի արքայադստեր վերաբերյալ տատիկի պատմած հեքիաթների մասին:

— Ուրեմն դու տասը տարեկանից սիրահարված էիր Բրիտ-Մարիի՞ն,– հարցնում է Էլսան:

— Հա՛,– ասես ինքնին հասկանալի մի բան է ասում Ալֆը, ու Էլսան, հայացքը նրան հառած, սպասում է, քանի որ հասկանում է, որ միայն լռելը կստիպի նրան մինչև վերջ պատմել ամբողջ պատմությունը:

Նման բաներ սկսում ես հասկանալ, երբ համարյա ութ տարեկան ես:

Ու պատրաստ է սպասել, որքան որ կպահանջվի:

Երկու կարմիր լույս անցնելուց հետո Ալֆը հուսահատ հառաչում է, ինչպես մի մարդ, որ պատրաստվում է երկար պատմություն պատմել, թեպետ չի սիրում պատմություններ պատմել: Եվ հետո վերջապես պատմում է Բրիտ-Մարիի մասին, ինչպես նաև իր սեփական հեքիաթը, չնայած որ իր մասին պատմելու միտք չուներ:

Նրա պատմածի մեջ հայհոյանքների պակաս չկար, համ էլ Էլսան անընդհատ զսպում էր իրեն, որ քերականական ուղղումներ չաներ: Բայց բազմաթիվ եթե-ներից, բայց-երից ու գրո՛ղը տանի-ներից հետո Ալֆը, ի վերջո, պատմում է, որ ինքն ու Քենթն իրենց մայրիկի հետ ապրում էին հենց նույն բնակարանում, որտեղ որ ապրում է հիմա: Ու երբ Ալֆը տասը տարեկան է դառնում, իրենց վերևի բնակարան է տեղափոխվում մեկ ուրիշ ընտանիք՝ Ալֆի ու Քենթի տարիքի աղջիկներ ունեցող: Մայրը հայտնի երգչուհի էր, իսկ հայրը կոստյում էր հագնում ու միշտ աշխատանքի էր գնում: Մեծ քույրը՝ Ինգրիդը, ակնհայտորեն բացառիկ ձայն ուներ. Ալֆն ու Քենթը հասկացել էին: Նա հաստատ աստղ էր դառնալու. նրանց մայրն էր ասել Ալֆի ու Քենթի մորը: Նա երբեք չէր խոսում մյուս դստեր՝ Բրիտ-Մարիի մասին: Ալֆն ու Քենթը, այնուամենայնիվ, տեսան նրան: Այլ կերպ լինել չէր կարող:

Ոչ ոք ճշգրիտ չէր հիշում, թե բժշկականում սովորող երիտասարդ ուսանողուհին երբ հայտնվեց նրանց շենքում: Մի օր նա պարզապես հայտնվեց վերևի ամբողջ հարկը զբաղեցնող հսկայական բնակարանում: Երբ Ալֆի ու Քենթի մայրիկը հարցաքննել էր, թե ինչպես է ստացվել, որ նա մենակ

թվայնացրել է 1915.info կայքը

է ապրում այդքան մեծ բնակարանում, երիտասարդ կինը պատասխանել էր, որ պոկերի խաղում է շահել: Նա, բնականաբար, հաճախ տանը չէր լինում, իսկ երբ լինում էր, հետը միշտ տարօրինակ ընկերներ էին ու երբեմն՝ փողոցային շներ: Ալֆի պատմելով՝ մի օր հսկայական անտեր սև շուն էր բերել, որին թերևս նույնպես պոկերի խաղում էր շահել: Ալֆը, Քենթն ու աղջիկներն ընդամենը ուզում էին հետը խաղալ ու չէին մտածում, որ նա քնած է: Ալֆը վստահ է, որ շունը Բրիտ-Մարիին կծելու միտք չուներ, ուղղակի հայնկարծակիի էր եկել: Բրիտ-Մարին էլ:

Շունը դրանից հետո անհետացել էր: Բայց Բրիտ-Մարիի մայրն այնպես ատեց բժշկականի երիտասարդ ուսանողուհուն, որ ոչինչ չէր կարող նրան ստիպել՝ փոխի իր կարծիքը: Իսկ մի օր փորձանք պատահեց փողոցում՝ հենց շենքի մոտ: Բրիտ-Մարիի մայրը չէր նկատել բեռնատարը: Դղրդոցից ամբողջ շենքը ցնցվեց: Մայրը ճռճվելով, խուճապահար դուրս էր եկել առջևի դռնից՝ ընդամենը քերծվածքներ ստացած, բայց հետևի դռնից ոչ ոք դուրս չէր գալիս: Հետևի նստարանն արյան մեջ կորած տեսնելով՝ մայրը ճչում էր անմարդկային ձայնով: Բժշկականի ուսանողուհին, որի դեմքին դարչինով թխվածքի փշուրներ էին, գիշերանոցով դուրս է թռչում ու հետևի նստարանին տեսնում աղջիկներին: Նա մեքենա չուներ ու կարող էր միայն աղջիկներից մեկին գրկել: Երբ որ բացել էր դուռն ու տեսել, որ մեկն է շնչում, գրկել էր նրան ու վազել: Վազել էր ամբողջ ճանապարհը՝ մինչև հիվանդանոց:

Ալֆը լռում է: Էլսան հարցնում է, թե ինչ եղավ մյուս քրոջը: Ալֆը երեք կարմիր լույս լռում է: Հետո դառնությունից ծանրացած ձայնով ասում է.

— Սարսափելի է ծնողի համար երեխա կորցնելը: Ընտանիքն էլ երբեք ամբողջական չի լինում: Մոր մեղքը չէր: Դժբախտ պատահար էր. այնպես է լինում, երբ ոչ ոք մեղավոր չէ: Բայց նա էլ չի կարողանում ուշքի գալ ու երբեք չի ներում քո տատիկին:

— Ինչի՞ համար,– հարցնում է Էլսան:

— Որովհետև կարծում է, որ տատիկդ սխալ աղջկա էր փրկել:

Էլսայի լռությունը կարծես 100 կարմիր լույսի չափ է տևում:

— Քե՞նթն էլ էր սիրահարվել Բրիտ-Մարիին,– վերջապես հարցնում է նա:

— Մենք եղբայրներ ենք, իսկ եղբայրները միշտ մրցում են,– ասում է Ալֆը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ու Քենթը հաղթե՞ց:

Ալֆի կոկորդից այնպիսի ձայն է դուրս գալիս, որ Էլսան չի հասկանում՝ հազո՞ւմ է, թե՞ ծիծաղում:

— Շատ կլիներ իրեն: Ե՛ս հաղթեցի:

— Բա հետո՞:

— Քենթը տեղափոխվեց: Ամուսնացավ շատ ջահել կնոջ հետ: Երեխաներ ունեցավ, բայց կինն անհաջող դուրս եկավ: Զույգերին՝ Դավիդին ու Փերնիլային սիրում էր, բայց կինը կյանքն ուտում էր, գրո՛ղը տանի:

— Իսկ Բրիտ-Մարի՞ն:

Մի կարմիր լույս անցնում են, հետո՝ էլի մեկը:

— Է՛հ, ջահելություն: Գրո՛ղը տանի, մարդ ի՞նչ տխմար է ջահել ժամանակ: Ես թողեցի գնացի: Ինքը մնաց:

— Ո՞ւր գնացիր:

— Պատերազմ:

Էլսան աչքերը չռում է վրան:

— Դո՞ւ էլ էիր զինվոր:

Ալֆը ձեռքը սահեցրեց բացակայող մազերի վրայով:

— Ես տարիքս առել եմ, Է՛լսա, ու ինչ ասես, որ չեմ եղել:

— Իսկ Բրիտ-Մարիին ի՞նչ եղավ:

Կարմիր լույս:

— Ես վերադառնում էի: Ինքը եկավ, որ ինձ հանկարծակիի բերի ու ինձ ուրիշ կնոջ հետ տեսավ:

— Սիրային հարցե՞ր էին:

— Հա:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մարդ ջահել ժամանակ իրոք խելք չունի:

Էլի կարմիր լույս:

— Իսկ դու հետո ի՞նչ արեցիր,– հարցնում է Էլսան:

— Էլի գնացի,– պատասխանում է նա:

— Որքա՞ն ժամանակով:

— Շատ երկար:

— Իսկ Քե՞նթը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բաժանվեց, հետ եկավ մոր տուն: Բրիտ-Մարին դեռ մեր շենքում էր: Դե, հա՛, գրո՛ղը տանի, Քենթը միշտ էլ սիրել էր նրան: Ու հենց որ Բրիտ-Մարիի ծնողները մահացան, նրանք տեղափոխվեցին նրանց բնակարան: Քենթի ականջին հասել էր, որ շենքի սեփականատերերը բնակիչներին են վաճառելու բնակարանները: Այնպես որ, նրանք մնացին, որ հարցը լուծվի: Երբ ամուսնացան, Բրիտ-Մարին երեխա էր ուզում, իսկ Քենթի համար իր ունեցածը հերիք էր: Ու այդպես էլ ապրում են:

Էլսան բացում-փակում է մեքենայի պահոցիկը:

— Ինչո՞ւ տուն եկար պատերազմից:

— Պատերազմը վերջացել էր, համ էլ մայրս էր հիվանդացել: Մեկը պիտի նրան խնամեր, չէ՞:

— Քենթը չէ՞ր կարող:

Ալֆի եղունգները շարժվում են նրա ճակատով, ասես թափառում են հիշողության ծալքերում ու բացում են ժամանակին ինչ-որ պատճառով փակված դռներ:

— Քենթը լավ է նայել մորս կյանքի ընթացքում: Տխմարի մեկն է, ճիշտ է, բայց միշտ էլ լավ որդի է եղել, չեմ կարող ուրանալ: Մայրս ոչնչի կարիք չի ունեցել կյանքի ընթացքում: Էնպես որ, ես էլ նրան վերջում խնամեցի՝ մինչև մահը:

— Իսկ հետո՞,– հարցնում է Էլսան:

Ալֆը գլուխն է քորում: Կանգնում է կարմիր լույսի տակ: Թվում է, թե ինքն էլ չգիտի պատասխանը:

— Հետո ես ուղղակի… Հետո էդպես էլ մնացի:

Էլսան լուրջ դեմքով նրան է նայում: Հետո եզրափակիչ խորը շունչ է քաշում, որը միայն իրեն է հայտնի, թե ինչ իմաստ է պարունակում, ու ասում է.

— Ես քեզ շատ եմ սիրում, Ա՛լֆ, բայց դու կարգին շունչանորդի ես եղել:

Ալֆը նորից հազում կամ ծիծաղում է:

Իսկ հաջորդ կարմիր լույսից հետո քթի տակ ասում է.

— Բրիտ-Մարին էր մայրիկիդ խնամում, երբ պապիկդ մահացավ: Դե, երբ տատիկդ դեռ անընդհատ ճամփորդում էր, գիտես: Ինքը միշտ չէ, որ փնթփնթում ու զզվեցնում էր, ոնց որ հիմա:

— Գիտեմ,– ասում է Էլսան:

— Տատի՞կդ է պատմել:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան քմծիծաղում է: Քմծիծաղում է այնպես, ինչպես անում են, երբ չգիտեն՝ ինչպես չանել:

— Ինչ-որ չափով: Հեքիաթ է պատմել վշտի թագավորության արքայադստեր մասին ու երկու արքայազների, որ այնքան էին սիրում նրան, որ սկսեցին իրար ատել: Պատմել է նաև վորսերի մասին, որոնց արքայադուստրը հետ բերեց, երբ պատերազմ սկսվեց, ու մի վհուկի մասին, որ գողացել էր նրա գանձը:

Հետո լռում է: Ձեռքերը խաչում է ու շրջվում Ալֆի կողմը:

— Ու այդ գանձը ե՞ս եմ:

Ալֆը հոգոց է հանում:

— Ես հեքիաթներից շատ էլ գլուխ չեմ հանում:

— Կարող ես գոնե մի քիչ ջանք թափել,– պահանջում է Էլսան:

Ալֆն ավելի խորը հոգոց է հանում:

— Բրիտ-Մարին ամբողջ կյանքը նվիրել է մի մարդու, որ երբեք տանը չէ, երեխաների, որ իրենը չեն: Ամեն ինչ արել է, որ իրեն սիրեն: Երբ պապիկդ մահացավ, ու նա հոգ էր տանում մայրիկիդ մասին, առաջին անգամն էր երևի, որ նա իրեն…

Նա անհրաժեշտ բառը չի գտնում: Էլսան հուշում է:

— Պահանջված զգաց:

— Հա՛:

— Ու հետո մայրիկը մեծացավ:

— Ու գնաց: Համալսարան ընդունվեց: Շենքը լռեց ահագին երկար ժամանակ: Հետո նա հետ եկավ հորդ հետ ու հղի:

— Ու ես Բրիտ-Մարիի վերջին հույսն էի,– գլխով է անում Էլսան:

— Իսկ հետո տատիկդ վերադարձավ,– ասում է Ալֆն ու կանգ է առնում կանգառի նշանի տակ:

Նրանք այլևս այդ մասին չեն խոսում, որովհետև առանձնապես ասելու շատ բան չի մնում: Ալֆը ձեռքը հանկարծ տանում է կրծքին, կարծես բաճկոնի տակ քոր է գալիս: Էլսան նայում է բաճկոնի շղթային:

— Սպին պատերազմո՞ւմ ես ստացել:

Ալֆի հայացքը կտրուկ փոխվում է: Էլսան ուսերն է թոթվում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կրծքիդ վրա հսկայական սպի կա: Ես տեսա, երբ դու քո տնային խալաթով էիր: Քեզ նոր խալաթ է պետք:

Ալֆը հազում կամ ծիծաղում է:

— Ես երբեք էդ տեսակ պատերազմում չեմ եղել: Երբեք ոչ ոք վրաս չի կրակել:

— Դրա համար կոտրված չե՞ս:

— Ո՞ւմ պես կոտրված:

— Սեմի ու Գայլսիրտի:

Ալֆը քթով հոգոց է հանում: Քորում է մազարմատները:

— Սեմը մինչև զինվոր դառնալն էր կոտրված: Համ էլ, գրո՛ղը տանի, հո բոլոր զինվորներն էդպիսի՞ն չեն: Բայց երբ տղերքը տեսնում են պատերազմի ամբողջ կեղտը, վերադառնալուց հետո նրանց օգնություն է պետք: Իսկ էս անտեր երկիրը պատրաստ է միլիարդներ ծախսել զենքի ու ռազմական օդանավերի վրա, բայց տղերքին, որ ինչ ասես տեսել են, ոչ ոք իսկի հինգ րոպե լսել չի ուզում:

Նա տխուր Էլսային է նայում:

— Մարդիկ պիտի կարողանան պատմել իրենց պատմությունները, Է՛լսա, թե չէ շնչահեղձ կլինեն:

Խաչմերուկ:

— Կրծքիդ սպին որտեղի՞ց է,– հարցնում է Էլսան:

— Կարդիոստիմուլյատոր է (սրտի արհեստական ռիթմավար սարք):

— Վա՛յ,– խանդավառությամբ բացականչում է Էլսան:

— Գիտե՞ս՝ ինչ է նշանակում,– թերահավատորեն հարցնում է Ալֆը:

Էլսան նեղացած է երևում:

— Ես ահագին ազատ ժամանակ ունեմ:

Ալֆը գլխով է անում:

— Դու իսկապես ուրիշ ես:

— Լավ է տարբեր լինելը:

— Գիտեմ:

Նրանք դուրս են գալիս խճուղի, ու Էլսան այդ ընթացքում Ալֆին պատմում է Երկաթե մարդու մասին, որ նույնպես կարդիոստիմուլյատորի պես մի սարք ուներ: Չնայած նրանը, ավելի ճիշտ, էլեկտրական մագնիս էր,

թվայնացրել է 1915.info կայքը

որովհետև Երկաթե մարդու սրտի մեջ բեկոր էր խրվել, իսկ առանց մագնիսի՝ այն կծակեր սիրտն, ու կմեռներ: Ալֆը կարծես առանձնապես չէր հասկանում այդ պատմության նրբությունները, բայց լսում էր՝ առանց ընդհատելու:

— Չնայած երրորդ ֆիլմի վերջում մագնիսը վիրահատությամբ հանում են,– ոգևորությամբ պատմում է Էլսան, բայց հետո հազում է ու մի փոքր քաշվելով՝ ավելացնում.

— Սփոյլ եմ անում: Sorry:

Ալֆին կարծես դա շատ էլ չի հուզում: Ավելի ճիշտ, նա կարծես առանձնապես չգիտի էլ «սփոյլը» որն է, քանի որ այն մեքենայի պահեստամաս չէ:

Նորից ձյուն է գալիս, ու Էլսան որոշում է, նույնիսկ եթե իր սիրած մարդիկ նախկինում շունշանորդի են եղել, ինքը, միևնույն է, պիտի շարունակի սիրել նրանց: Թե չէ մարդ շուտով բոլորին կկորցնի, եթե որակազրկի բոլոր նրանց, ովքեր նախկինում ինչ-որ բան այն չեն արել: Էլսան որոշում է, որ այս հեքիաթի բարոյախոսությունն էլ հենց սա է, որովհետև Սուրբ ծննդյան հեքիաթը պիտի իր բարոյախոսությունն ունենա:

Ալֆի հեռախոսը զանգում է՝ նստարանների արանքն ընկած: Ալֆը նայում է էկրանին ու տեսնում է, որ Քենթի հեռախոսահամարն է: Չի պատասխանում: Այն նորից է զանգում:

— Չե՞ս պատասխանելու,– զարմանում է Էլսան:

— Քենթն է: Հաստատ բնակարանների վաճառքի ռևիզորի ու բնակվարչության մասին է գլուխս տանելու. մտքին միայն դա է: Գրո՛ղը տանի, թող մինչև վաղը դիմանա,– մռթմռթում է Ալֆը:

Հեռախոսը նորից է զանգում: Ալֆը չի վերցնում: Նորից է զանգում: Էլսան նյարդայնացած վերցնում է ու պատասխանում, չնայած Ալֆը բարկանում է: Խոսողը կին է: Հեկեկում է: Էլսան փոխանցում է հեռախոսը: Այն ցնցվում է Ալֆի ականջի մոտ: Ալֆը գույնը գցում է:

Սուրբ ծննդյան օրվա երեկոն է: Տաքսին հետ է պտտվում: Նրանք գնում են հիվանդանոց: Ալֆը կարմիր լույսի տակ անցնում է:

Էլսան նստած է միջանցքում ու մայրիկի հետ է խոսում հեռախոսով, մինչ Ալֆը մի սենյակում բժշկի հետ է խոսում: Բուժքույրերը, ենթադրելով, որ Էլսան թոռնիկն է, պատմում են, որ Քենթի մոտ սրտի կաթված է, և որ ամեն ինչ լավ կլինի, ու նա անպայման կապրի:

թվայնացրել է 1915.info կայքը

Սենյակի դռան առաջ մի երիտասարդ կին կանգնած լաց է լինում: Գեղեցիկ է: Օծանելիքի բույրն է զգացվում: Նա թեթևակի ժպտում է Էլսային, Էլսան էլ ի պատասխան նրան է ժպտում: Ալֆը դուրս է գալիս սենյակից ու գլխով է անում՝ առանց կնոջը ժպտալու, կինն էլ անհետանում է սենյակում՝ խուսափելով նրա հայացքից:

Ալֆն ամբողջ ճանապարհին՝ միջանցքներում ու վերելակում, բառ չի արտաբերում: Նա լռելյայն դուրս է գալիս շքամուտքից ու գնում է կայանատեղի, Էլսան էլ՝ հետևից: Ու այդ պահին հանկարծ Էլսան նկատում է Բրիտ-Մարիին: Նա անշարժ նստած է նստարանին, հագին միայն ծաղկավոր բաճկոնակն է՝ չնայած ցրտին: Կրծքազարդը մոռացել է: Փեյնթբոլի կեղտաբիծը երևում է: Բրիտ-Մարիի այտերը կապտած են, և նա անընդհատ մատի վրա պտտում է ամուսնական մատանին: Ծնկներին Քենթի սպիտակ վերնաշապիկներից մեկն է՝ նոր լվացված ու կատարյալ արդուկած:

— Բրիտ-Մարի՞,– ճռնչում է Ալֆի ձայնը երեկոյան մթության մեջ ու կանգ է առնում նրանից մի մետրի վրա:

Նա չի պատասխանում: Միայն ձեռքը դանդաղ սահեցնում է ծնկներին դրված վերնաշապիկի օձիքի վրայով: Զգուշորեն ինչ-որ անտեսանելի փշուրներ է թափ տալիս վրայից: Թեթևակի ուղղում է մի թևքածալը: Հարթեցնում է աներևույթ ծալքերը:

Հետո բարձրացնում է հայացքը: Ծերացած է երևում: Բառերն ասես իրենց ոտնահետքերն են թողնում նրա դեմքին:

— Ես իրականում միշտ անգերազանցելի եմ եղել ձևացնելուց, չէ՞, Ա՛լֆ,– վճռական ձայնով շշնջում է նա:

Ալֆը չի պատասխանում: Բրիտ-Մարին հայացքը հառում է ձյանն ու պտտում է ամուսնական մատանին:

— Երբ Դավիդն ու Փերնիլան փոքր էին, ասում էին, որ ես հեքիաթներ հնարելուց լավ չեմ: Ես միշտ ուզում էի կարդալ գրքերում եղածները: Իսկ նրանք թե՝ հնարի՛ր: Իսկապես, չեմ հասկանում՝ ինչու նստես ու հորինես, եթե գրքերում ամեն ինչ գրված է: Ես չեմ կարող: Քաղաքակիրթ մարդու՛ անելիք չէ:

Նրա ձայնն այժմ ավելի բարձր էր: Կարծես մեկին համոզելիս լիներ: Ալֆն ավելի ծանր է շնչում:

— Բրի՛տ-Մարի…,– ցածրաձայն ասում է նա, բայց Բրիտ-Մարին սառնորեն ընդհատում է նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քենթը երեխաներին ասել էր, որ հեքիաթներ չեմ հորինում, որովհետև երևակայություն չունեմ: Բայց այդպես չէ: Ամենևի՛ն: Ես ուղղակի աներևակայելի լավ երևակայություն ունեմ: Ես հրաշալի կարողանում եմ ձևանալ:

Ալֆը մատներով շոյում է մազարմատներն ու արագ թարթում է: Բրիտ-Մարին փաղաքշում է ծնկներին դրված վերնաշապիկը, ասես մանկիկ լինի, և ուր որ է կքնի:

— Ես մաքուր վերնաշապիկ վերցրի հետս: Ես միշտ եմ մաքուր վերնաշապիկ վերցնում, երբ պիտի նրան հանդիպեմ, որովհետև երբեք օծանելիք չեմ օգտագործում: Օծանելիքից դուրս է տալիս վրաս:

Նրա ձայնն աստիճանաբար խլանում է: Խեղդվում է:

— Դավիդն ու Փերնիլան չեկան Սուրբ ծննդյան ճաշին: Ասացին, որ զբաղված են: Ես լավ հասկանում եմ, որ նրանք զբաղված են. քանի տարի է՝ նույնն է, ես հասկանում եմ: Այնպես որ, Քենթն էլ ասաց, որ դեռ մի քանի ժամ գրասենյակում կմնա: Ասաց՝ մի քանի ժամ ընդամենը, որովհետև Գերմանիայի հետ հեռախոսային համաժողովի կլինի, չնայած որ փաստացի Գերմանիայում էլ են Սուրբ ծնունդ նշում: Բայց տուն այդպես էլ չեկավ: Ես զանգեցի, որովհետև պիտի իմանայի, չէ՞, թե քանիսին կարտոֆիլը դնեմ կրակին: Բայց չպատասխանեց: Ու ես էլի զանգեցի, հետո էլի փորձեցի, որովհետև, իրոք, բա չիմանա՞մ՝ կարտոֆիլը երբ եփեմ:

Նա կշտամբանքով նայում է Ալֆին: Ալֆը չի պատասխանում: Բրիտ-Մարին ափի հակառակ կողմով քնքշորեն շոյում է ծնկներին դրված վերնաշապիկի օձիքը:

— Մարդ, իրոք, չի կարող սառը կարտոֆիլ ուտել: Հո վայրենիներ չե՞նք:

Նրա ձեռքի ափերն ընկնում են վերնաշապիկի վրա:

— Ու հետո վերջապես հեռախոսը զանգում է, բայց Քենթը չէ:

Նրա ներքևի շրթունքը դողում է:

— Ես օծանելիք չեմ օգտագործում, բայց այն կինն օգտագործում է: Ես միշտ հետևում եմ, որ Քենթը նոր լվացված վերնաշապիկ հագնի: Միայն խնդրում եմ, որ հենց գալիս է, վերնաշապիկը լվացքի մեքենան գցի: Շատ բա՞ն եմ խնդրում:

— Խնդրում եմ, Բրի՛տ-Մարի...,– խնդրում է Ալֆը:

Բրիտ-Մարին արցունքները կուլ է տալիս ու պտտում ամուսնական մատանին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սրտի կաթված է: Գիտեմ, որովհետև այդ կինը զանգեց ու ասաց, Ա՛լֆ: Ինքը զանգեց ինձ, որովհետև չդիմացավ, չկարողացավ: Ասաց, որ չի կարող նստել հիվանդանոցում ու մտածել, որ Քենթը մահանալու է, իսկ ես տեղյակ չեմ: Նա պարզապես չդիմացավ այդ մտքին: Դրա համար էլ զանգեց, որ ես իմանամ, փաստորեն:

Բրիտ-Մարին մի ձեռքը դնում է մյուսի ափին, փակում է աչքերն ու դողացող ձայնով ասում.

— Փաստորեն, ես հրաշալի երևակայություն ունեմ: Պարզապես աներևակայելի՛ երևակայություն: Քենթն անընդհատ ասում էր, որ Գերմանիայի հետ է ճաշելու, որ օդանավն ուշացավ ձյան պատճառով կամ մի պահ պիտի գրասենյակ մտնի: Ու ես ձևացնում էի, թե հավատում եմ: Ու այնքան լավ էի ձևացնում, որ իսկապես ինքս էլ էի հավատում:

Նա վեր է կենում նստարանից: Կանգնում է ձյան մեջ՝ մեջքն ուղիղ, Քենթի վերնաշապիկը ձեռքին: Այն դեռևս կատարյալ արդուկած է. ո՛չ մի ծալք, ո՛չ մի կնճիռ: Ապա շրջվում է ու խնամքով կախում վերնաշապիկը նստարանի մեջքին: Կարծես նույնիսկ հիմա չի կարողանում իրեն թույլ տալ՝ զգացմունքները դուրս հորդեն արդուկած վերնաշապիկի վրա:

— Ես աներևակայելի լավ եմ ձևանում,– շշնջում է նա:

— Գիտեմ,– շշնջում է Ալֆը:

Եվ նրանք տուն են գնում՝ վերնաշապիկը նստարանին թողնելով:

Ձյունը դադարել է: Տաքսին կանգնում է կարմիր լույսի տակ: Մեքենայի մեջ լռություն է: Մայրիկը դռան մոտ դիմավորում է նրանց: Գրկում է Էլսային: Փորձում է գրկել Բրիտ-Մարիին, բայց Բրիտ-Մարին նրան մոտ չի թողնում: Ոչ կոպիտ, բայց վճռական:

— Ես չէի ատում նրան, Ո՛ւլրիխա,– ասում է նա:

— Գիտեմ,– դանդաղ գլխով է անում մայրիկը:

— Ես չէի ատում նրան, շանն էլ չեմ ատում ու նրա մեքենան էլ չեմ ատում,– ասում է Բրիտ-Մարին:

Մայրիկը գլխով է անում ու բռնում է նրա ձեռքը: Բրիտ-Մարին աչքերը փակում է:

— Չեմ ատում, Ո՛ւլրիխա: Իսկապես չեմ ատում: Ես ուղղակի ուզում էի, որ դուք ինձ լսեք: Շատ բա՞ն եմ խնդրում: Ուղղակի չէի ուզում, որ դուք

թվայնացրել է 1915.info կայքը

մեքենան իմ տեղում կանգնեցնեք: Ես ընդամենը չէի ուզում, որ դուք այս ամենից հետո թույլ տաք, որ մեկը գա ու իմ տեղը գրավի:

Նա պտտում է մատանին: Ու շշնջում է.

— Այսպես ճիշտ չէ, Ո՛ւլրիխա: Դա ի՛մ տեղն է: Չի լինի, որ մարդ հենց այնպես գա ու իմ տեղը գրավի…

Մայրիկը նրան ուղեկցում է աստիճաններով վեր՝ ծաղկավոր բաճկոնակով մեջքն ամուր, բայց սիրով գրկած: Ալֆը բնակարանում չի հայտնվում, բայց փոխարենը Ձմեռ պապիկն է գալիս: Համախտանիշով տղայի աչքերը փայլատակում են, ինչպես յուրաքանչյուր երեխայինը, որին պատմել են պաղպաղակի, հրավառության, մագլցած ծառերի ու ջրափոսերի մասին, երբ բարձր ու երկարաճիտ անձրևային կոշիկներ են հագին:

Մոդը հավելյալ սպասք է դնում սեղանին ու ևս մի կտոր գրաթեն է բերում: Լենարտը դարձյալ սուրճ է պատրաստում: Յեորգն ամաններն է լվանում: Համախտանիշով տղան ու սև կիսաշրջազգեստով կինը, Սուրբ ծննդյան նվերները բացելուց հետո գետնին նստած, «Մոխրոտիկն» են դիտում:

Բրիտ-Մարին մի փոքր անհարմար դիրքով նստում է Էլսայի կողքին՝ բազմոցին: Նրանք աչքի տակով իրար են նայում: Ոչինչ չեն խոսում, բայց գործը կարծես դեպի հաշտեցում է գնում: Երբ մայրիկն Էլսային ասում է, որ վերջ տա ժելեով «Ձմեռ պապիկ» կոնֆետներ ուտելուն, որովհետև փորացավ կունենա, իսկ Էլսան, այնուամենայնիվ, շարունակում է. Բրիտ-Մարին ոչինչ չի ասում:

Երբ «Մոխրոտիկում» հայտնվում է չար խորթ մայրը, ու Բրիտ-Մարին զգուշորեն վեր է կենում, ուղղում փեշի ծալքն ու հեկեկալով դուրս է գալիս նախասենյակ, Էլսան գնում է նրա հետևից:

Նրանք միասին նստում են արկղի վրա ու ժելեով «Ձմեռ պապիկ» կոնֆետներ ուտում:

Որովհետև մարդ կարող է, իհարկե, տխրել կոնֆետ ուտելիս, սակայն տխրելն այդպես շատ, շատ ու շատ ավելի դժվար է:

թվայնացրել է 1915.info կայքը

31

ԳԵՏՆԱԼՈՒՑՈՎ ԹԽՎԱԾՔ

Հինգերորդ նամակն ընկավ ուղիղ Էլսայի ծնկներին: Բառացիորեն: Էլսան արթնանում է տատիկի պահարանի մեջ: Տղան քնած է՝ շրջապատված հրուշակներով ու կաթնացիրը գրկած: Վորսը մի փոքր թքոտել էր Էլսայի շորը, ու այն պնդացել էր ցեմենտի պես:

Էլսան բավականին երկար ժամանակ պառկած է մթության մեջ: Շնչում է փայտի տաշեղների հոտը: Մտածում է «Հարրի Փոթերից» մեջբերված խոսքի մասին, որը տատիկը թխել էր Երկիր-Կիս-Արթունի իր հեքիաթներից մեկում: Հարրի Փոթերի «Փյունիկի միաբանությունից» էր: Սրա մեջ, անշուշտ, հեգնանք կար, բայց այն հասկանալու համար մարդ պիտի տեղյակ լինի Հարրի Փոթերի գրքերի ու ֆիլմերի միջև եղած տարբերություններից, նաև ուղղակի իմանա՝ ինչ է նշանակում հեգնանք: «Փյունիկի միաբանությունը» ֆիլմն Էլսան ամենաքիչն է սիրում, չնայած հենց նրա մեջ է Հարրի Փոթերն ասում, որն ինքն ամենից շատ դա է սիրում: Հարրի Փոթերն ասում է իր ընկերներին, որ իրենք Վոլդեմորտի հետ պատերազմում մի առավելություն ունեն, մի բան, որ Վոլդեմորտը չունի. դա այն է, հանուն ինչի արժի պայքարել:

Հեգնանքն այն է, որ այդ մեջբերումը գրքում չկա, իսկ գիրքն Էլսան սիրում է շատ ավելի, քան ֆիլմը, չնայած այդ գիրքը Հարրի Փոթերի մասին գրքերի մեջ իր սիրածներից չէ: Բայց հիմա, երբ մտածում է այդ մասին, կարծես ոչ մի հեգնանք էլ չկա: Ավելի ճիշտ, բավականին բարդ է: Նա նստում է տեղում ու մտածում, որ պետք է կարգին պրպտել Վիքիպեդիայում: Ու այդ ժամանակ էլ նամակն ընկնում է ուղիղ նրա ծնկներին:

թվայնացրել է 1915.info կայքը

Բառացիորեն: Այն կպչուն ժապավենով ամրացված էր պահարանի առաստաղին: Եվ հայտնի չէ՝ ինչքան ժամանակ էր այնտեղ:

Բայց նման բաներ հեքիաթներում լինում են:

Մեկ րոպե անց Ալֆը բացում է իր բնակարանի դուռը՝ անշուշտ, սուրճ խմելով: Ոնց որ ամբողջ գիշեր բոլորովին քնած չլինի: Նայում է ծրարին: Վրան ընդամենը «Ալֆ» է գրված՝ անիմաստ խոշոր տառերով:

— Պահարանում եմ գտել: Իմ տատիկից է: Կարծում եմ՝ պիտի որ ներողություն խնդրի ինչ-որ մեկից: Լիքը նամակներ է ուղարկել տարբեր մարդկանց, որտեղ ներողություն է խնդրում,– տեղյակ է պահում նրան Էլսան:

Ալֆը նրան ասում է՝ սը՛ս՝ ցույց տալով իր հետևի ռադիոընդունիչը: Էլսան ցույց է տալիս, որ չի սիրում, երբ իրեն լռեցնում են, ու Ալֆը նորից է ասում՝ սը՛ս, ինչը նրան ահավոր դուր չի գալիս: Ռադիոյով ճանապարհային լուրերի ամփոփագիրն էին հաղորդում: Ալֆը լուրերը լսում է մինչև վերջ, նոր միայն դադարում լռեցնելը:

— Գրո՛ղը տանի, խոշոր պատահար է մայրուղու վրա: Քաղաք տանող ամբողջ երթևեկությունը քանի ժամ է՝ կանգնած է,– ասում է նա, ասես անհնար է, որ այդ լուրը չհետաքրքրի Էլսային, սակայն ամենևին էլ չի հետաքրքրում:

Ալֆը, ամեն դեպքում, որոշ չափով փնթփնթալուց հետո կարդում է նամակը, կամ էլ, լա՛վ, ըստ էության, կարգին նվնվալուց ու փնթփնթալուց հետո:

— Ի՞նչ էր գրված,– անմիջապես հարցնում է Էլսան, երբ նա ամենայն հավանականությամբ վերջացնում է:

— Գրած է՝ կներես,– ասում է Ալֆը:

— Հա, բայց ԻՆՉԻ՞ համար,– ուզում է իմանալ Էլսան:

Ալֆը խոր հոգոց է հանում, ինչպես վերջերս հոգոց է հանում Էլսայի հարցերից:

— Չհասկացա՝ ի՞մ նամակն է, թե՞ ուրիշի:

— Գրե՞լ է՝ կներես, որ միշտ նկատողություն է արել քստքստացնելով քայլելու ու կոշիկներդ մաշելու համար,– հետաքրքրվում է Էլսան:

Ալֆի տեսքից չես ասի, թե նամակում նման բան է գրված: Էլսան հազալով կոկորդն է մաքրում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Է՜հ, լա՛վ… Ամեն դեպքում: Մոռանա՛նք:

Ալֆի տեսքից չես ասի, թե պատրաստվում է մոռանալ:

— Կոշիկներիս ի՞նչը էն չի:

— Չէ՛, բան չկա՛, ոչինչ, կոշիկներդ նորմալ են,– քրթմնջում է Էլսան:

Ալֆը նայում է իր կոշիկներին:

— Գրո՛ղը տանի, իմ կոշիկները շատ էլ լավն են: Արդեն հինգ տարուց ավել հագնում եմ:

— Հա՛, շատ ընտիր կոշիկներ են,– խաբում է Էլսան:

Ալֆը, երևում է՝ չի վստահում Էլսայի խոսքերին: Թերահավատորեն նորից նայում է նամակին: Հոգոց է հանում սովորականի պես:

— Ես ու տատիկդ կարգին վիճեցինք նրա մահից առաջ՝ հենց մինչև հիվանդանոց գնալը: Մոտիցս էլեկտրական պտուտակահան էր վերցրել, գրո՛ղը տանի, ու ասել, որ հաստատ վերադարձրել է: Գրողի ծո՛ցը պտուտակահանը, բայց ես հո գիտեմ, որ ոչ մի բան էլ չի վերադարձրել:

Էլսան հոգոց է հանում այնպես, ինչպես վերջերս սկսել է հոգոց հանել Ալֆի ասածներից:

— Գրո՛ղը, հա գրո՛ղը… Բա որ մի օր գրողախեղդ լինե՞ս:

— Չեմ լինի,– կտրուկ ասում է Ալֆը, կարծես հարցը շատ լուրջ էր:

Էլսան աչքերն է ոլորում:

— Դե լա՛վ էլի, տե՛ր իմ Աստված: Դե, ի՞նչ է գրել տատիկս այդ պտուտակահանի մասին:

— Գրել է ընդամենը՝ կներես, որ տարել, կորցրել է իմ պտուտակահանը:

Նա ծալում է նամակն ու նորից դնում ծրարի մեջ: Էլսան համառորեն կանգնած է մնում:

— Է՞լ ինչ: Ես տեսա, որ լավ էլ երկար նամակ է: Ես հո ապո՞ւշ չեմ:

Ալֆը նամակը դնում է գլխարկների դարակի վրա:

— Ուրիշ շատ բաների համար էլ էր ասում՝ կներես:

— Էդքան բա՞րդ է,– հարցնում է Էլսան:

— Տատիկիդ կյանքում ամեն ինչ բարդ էր,– ասում է Ալֆը:

Էլսան ձեռքերը խցկում է գրպանների խորքը: Հայացքը սահում է ներքև ու կանգ է առնում շարֆի ծայրին՝ գրիֆինդորցիների խորհրդանշանի վրա՝ դպրոցի աղջիկների պատռած հատվածին, որ մայրիկը կարել էր: Մայրիկը դեռ կարծում է, թե այն պատռվել է, երբ տատիկը գազանանոցում ցանկապատն էր բարձրացել:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հավատո՞ւմ ես հետմահու կյանքին,– հարցնում է Էլսան՝ առանց Ալֆին նայելու:

— Սատանան գիտի,– ասում է Ալֆը ո՛չ առանձնապես ոգևորված, ո՛չ էլ տհաճությամբ, այլ հենց իրեն բնորոշ ալֆային ձևով:

— Այսինքն, դե հասկանում ես… Հավատո՞ւմ ես, որ դրախտ կա, ասենք,– մրմնջում է Էլսան:

Ալֆը սուրճ խմելով՝ մտածում է:

— Ահավոր բարդ է: Տրամաբանորեն, դրախտը, գրո՛ղը տանի, պիտի որ էն տեղը լինի, որտեղ էսքան մարդ չկա,– վերջապես ասում է նա:

Էլսան մտքերի մեջ է ընկնում: Գնահատում է պատասխանի ողջամտությունը: Դրախտն իր համար այնտեղ է, որտեղ տատիկն է, բայց Բրիտ-Մարիի համար, ամենայն հավանականությամբ, դրախտը մեծապես պայմանավորված է տատիկի բացակայությամբ:

— Մեկ-մեկ շատ խորիմաստ բաներ ես ասում,– ասում է նա Ալֆին:

Նա դեռ իր սուրճն է խմում ու ակնհայտորեն մտածում է, որ նման մտածելակերպը դեռ ութը չլրացած երեխայի համար, իրոք, լուրջ բան է, գրո՛ղը տանի:

Էլսան ուզում է մահվան մասին էլի մեկ-երկու հարց տալ նրան, բայց չի հասցնում:

Հետադարձ հայացք գցելով՝ նա կմտածի, որ եթե դրանից հետո այլ կերպ վարվեր, այդ օրը թերևս այդքան սարսափելի չէր լինի: Բայց այդ ժամանակ արդեն շատ ուշ էր:

Հայրիկը կանգնած էր աստիճաններին՝ նրա թիկունքում: Նա հևում էր, ինչն ամենևին բնորոշ չէր նրան:

Էլսան աչքերը հառում է հորը, հետո նայում է Ալֆի բնակարանից ներս՝ ռադիոընդունիչին, ինչպես շուտով ութ տարեկանը լրացող երեխայի աչքերն են սևեռվում մի բանի: Նա գիտակցում է, որ ռադիոյի նման առարկան փաստացի հենց այնպես չի հայտնվում հեքիաթում, որովհետև հեքիաթներում պատահականություններ չեն լինում: Մի ռուս դրամատուրգ կա, որն ասել է՝ եթե առաջին արարում պատից ատրճանակ է կախված, ապա մինչև վերջին գործողության ավարտն այն անպայման կկրակի: Էլսան գիտի: Իսկ նրանք, ովքեր մինչև հիմա չգիտեն, թե Էլսան որտեղից կարող է նման բաներ իմանալ, իրոք խելք չունեն: Այնպես որ, Էլսան

թվայնացրել է 1915.info կայքը

հասկանում է, որ ռադիոընդունիչն ու մայրուղու վրա տեղի ունեցած վթարն ինչ-որ կերպ պիտի առնչություն ունենան այն հեքիաթի հետ, որում իրենք հայտնվել են:

— Մայրիկին... ինչ-որ բա՞ն է եղել,– դժվարությամբ արտաբերում է նա:

Հայրիկը գլխով է անում ու անհանգիստ հայացք գցում Ալֆի վրա: Էլսայի դեմքը դողում է:

— Հիվանդանոցո՞ւմ է:

— Հա, առավոտյան կանչել էին, որ ինչ-որ ժողովի ներկա լինի: Քննարկում էին ճգնաժա...,– սկսում է հայրիկը, սակայն Էլսան ընդհատում է:

— Վթա՞ր է եղել, հա՞, մայրուղու վրա՞:

Հայրիկն ապշած ու տարակուսած նրան է նայում:

— Ի՞նչ վթար:

— Մեծ ավտովթար,– կրկնում է Էլսան՝ ծայրահեղ լարված:

Հայրիկը եռանդով թափ է տալիս գլուխը ու շատ շփոթված է երևում:

— Չէ՛... չէ՛:

Ու հետո ժպտում է:

— Դու մի փոքրիկի մեծ քույրիկն ես դարձել: Քո մայրիկը ժողովի էր, որ ջրերը գնացին:

Էլսան կարծես չի հասկանում նրա ասածը: Նրա խոսքերն ակնհայտորեն տեղ չեն հասնում, չնայած որ Էլսան շատ լավ տեղյակ է, թե ինչ է լինում, երբ ջրերը գնում են:

— Իսկ ավտովթա՞րը: Ի՞նչ կապ ունի վթարի հետ,– քրթմնջում է նա:

Հայրիկը սարսափելի ապշած է երևում:

— Կարծում եմ՝ ոչ մի, ավելի ճիշտ, ուզում եմ իմանալ՝ ինչ նկատի ունես:

Էլսան նայում է Ալֆին, հետո՝ հայրիկին: Մտքերի խառնաշփոթից ընդհուպ մինչև քթի խոռոչները ցավ է զգում:

— Իսկ Յեորգն ո՞ւր է,– հարցնում է նա:

— Հիվանդանոցում,– ասում է հայրիկը:

— Բա ո՞նց է հասել: Ռադիոյով ասացին, որ մայրուղին մինչև հիմա փակ է,– բացականչում է Էլսան:

— Վազելով,– ասում է հայրիկը թեթևակի հեգնանքով, ինչպես սովորաբար կարող են խայթել հայրիկները, երբ պիտի դրական բան ասեն մայրիկների նոր ամուսինների մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հիմա էլ Էլսան է ժպտում:

— Յեորգն էդ գործից լավ է,– շշնջում է նա:

— Հաստատ,– համաձայնում է հայրիկը:

Էլսան որոշում է, որ ռադիոընդունիչը երևի, այնուամենայնիվ, վաստակել է հեքիաթի մեջ իր ներկայության իրավունքը: Մեկ էլ հանկարծ անհանգստանում է:

— Բայց ո՞նց հիվանդանոց կհասնենք, եթե մայրուղին խցանված է:

Հայրիկը շփոթված է երևում: Ալֆը հանգիստ կում է անում կողքին դրված սուրճի բաժակից:

— Կարող ենք հին շրջանցիկ ճանապարհով հասնել,– ի վերջո անհամբեր ասում է նա՝ տեսնելով, որ հայրիկի մտքով չի անցնում նման բան ասել:

Հայրիկն ու Էլսան նրան են նայում. ասես նրանց է դիմել բացարձակապես հնարովի բառերով: Ալֆը հոգոց է հանում:

— Դե էն հին գյուղական ճանապարհը, գրո՛ղը տանի, հին սպանդանոցի կողքով: Այդտեղ էն գործարանն էր, որ ջերմափոխանակիչներ էին արտադրում, նախքան էն սատանի ծնունդներն ամբողջը տեղափոխեցին ասիական երկրներ: Էդ ճամփով շուտ կհասնեք հիվանդանոց:

Հայրիկը հազում է: Էլսան եղունգի տակն է քչփորում: Ալֆը մտածկոտ գլխին է քաշում սուրճի վերջին կումը:

— Է՛հ, էս ջահելներն էդ քոսոտ մայրուղուց դենն աշխարհում էլ ուրիշ ճանապարհ չեն պատկերացնում,– փնթփնթում է նա ու գնում տաքսու բանալիները բերելու:

Մի ակնթարթ միայն Էլսան մտածում է վորսի հետ տաքսիով գնալ, բայց իսկույն միտքը փոխում է ու որոշում, որ կնստեն Audi-ն, քանի որ չի ուզում հայրիկին տխրեցնել: Ու եթե միտքը չփոխեր, շատ հնարավոր է, որ այդ օրն այդքան գարշելի ու սարսափելի չլիներ, ինչպիսին որ դառնալու էր շատ շուտով: Երբ շատ սարսափելի բաներ են տեղի ունենում, մարդ միշտ մտածում է. «Միայն թե ես այդ օրը չ...»: Ու հետադարձ հայացք գցելով կատարվածին՝ այդպիսի ակնթարթներ գտնում ես:

Մոդն ու Լենարտը նույնպես հիվանդանոց են գնում: Մոդը հետը հրուշակներ է վերցնում, իսկ Լենարտը դռան մոտ որոշում է, որ արժի սրճեփը տանել, քանի որ անհանգստանում է, որ հիվանդանոցում չեն ունենա: Եվ նույնիսկ եթե ունենան, Լենարտը մտածում է, որ վերջին մոդելներից կլինի՝

թվայնացրել է 1915.info կայքը

բազմաթիվ կոճակներով: Լենարտի սրճեփի վրա ընդամենը մի կոճակ է, ու Լենարտն այդ կոճակով շատ երջանիկ է:

Եթե միայն հայրիկը չառաջարկեր վազել՝ Լենարտի համար սրճեփը բերելու, գուցեև հետո նման բան տեղի չունենար: Հետադարձ հայացքով այս պահն էլ կհիշվի «եթե չաներ» ակնթարթների շարքում:

Համախտանիշով տղան ու նրա մայրիկը նույնպես միանում են նրանց, ջինսով կինը՝ նույնպես: Նրանք՝ բոլորը միասին, ասես միասնական մի թիմ լինեն, և Էլսային չափազանց դուր է գալիս այդ պահը: Մայրիկն ասել էր երեկ, որ հիմա, երբ այդքան մարդ է ապրում տատիկի բնակարանում, իրենց շենքը մի քիչ նմանվել է այն շենքին, որտեղ ապրում էին Էլսայի ասած այն բոլոր Իքս մարդիկ:

Բորբոքված ու Ջին Գրեյի պես աչքերը ոլորելով՝ Էլսան ուղղել էր մայրիկին: Մասամբ, քանի որ մայրիկի կարծիքով՝ ինքն այնքան պարզամիտ է, որ պիտի իսկույն ուրախանար, ինչ է թե շատ զիլ էր, որ մայրիկը համեմատել էր իրենց Իքս մարդկանց հետ, մասամբ էլ, որ համեմատությունը, իրոք, տեղին էր:

Էլսան Բրիտ-Մարիի դռան զանգն է տալիս, սակայն բացող չի լինում: Հետադարձ հայացքով Էլսան հիշում է, որ ինքը մի պահ կանգ էր առել աստիճանավանդակում կապված մանկասայլակի մոտ: Խաչբառով գրությունը դեռևս փակցված էր պատին, ու ինչ-որ մեկն այն լուծել էր: Բոլոր վանդակները լրացված էին հասարակ մատիտով:

Եթե Էլսան կանգներ ու մի քիչ երկար խորհրդածեր այդ հարցի վերաբերյալ, ընթացքը գուցե այլ լիներ: Բայց ինքը չմնաց, ու ոչինչ չփոխեց:

Հնարավոր է, որ վորսը մի պահ տատանվել էր Բրիտ-Մարիի դռան առջև: Էլսան հասկացել էր, որ հենց այդպես էլ եղել էր: Վորսերը երբեմն կասկածում են, երբ չեն կողմնորոշվում, թե հեքիաթի մեջ ում են կոչված պաշտպանելու: Սովորական հեքիաթներում վորսերը փաստացի պաշտպանում են արքայադուստրերին, իսկ Երկիր-Կիս-Արթունում Էլսան ընդամենը սովորական մի ասպետ էր: Բայց եթե վորսը նույնիսկ մի պահ կասկածել էր, միևնույն է, ցույց չէր տվել: Ու գնացել էր Էլսայի հետևից, որովհետև իսկական ընկեր է:

Եթե նա Էլսային չհետևեր, ամեն ինչ գուցե այլ լիներ, բայց նա գնաց: Ու ոչինչ կանխել հնարավոր չէր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ալֆը համոզում է ոստիկաններին, որ մեքենայով շրջեն թաղամասով, որպեսզի համոզվեն, որ ամեն ինչ ապահով է: Էլսան երբեք ճշգրիտ չի իմանա, թե Ալֆն ինչ էր ասել նրանց, բայց Ալֆը, իրոք, կարողանում է համոզել: Հնարավոր է ասած լինի, որ ձյան վրա ոտնահետքեր է տեսել կամ փողոցի հակառակ կողմի շենքերից մեկի բնակիչներից ինչ-որ բան է լսել: Էլսան չգիտի, բայց տեսնում է, որ ամառային արձակուրդի ոստիկանը նստում է ոստիկանական մեքենան, կանաչ աչքերով կինը բավական տատանվելուց հետո նույնպես նստում է: Էլսան մի պահ հանդիպում է նրա հայացքին, ու եթե կանաչ աչքերին ճշմարտությունն ասած լիներ վորսի մասին, գուցե այդ դեպքում ընթացքն այլ լիներ: Բայց ինքը ոչինչ չի ասում, քանի որ ուզում է վորսին պաշտպանել, որովհետև իսկական ընկեր է:

Ալֆը նորից ներս է մտնում ու իջնում կայանատեղի՝ տաքսին վերցնելու: Երբ ոստիկանական մեքենան շենքի անկյունից թեքվում է դեպի փողոց, Էլսան, վորսն ու տղան սլանում են փողոցի կողմն ու իրենց գցում այնտեղ կայանած Audi-ի մեջ: Երեխաներն առաջինն են ներս ցատկում:

Վորսը կանգ է առնում ընթացքի պահին: Մեջքի մազերը բիզ-բիզ են կանգնում:

Ընդամենը վայրկյաններ են անցնում, սակայն Էլսային հավերժություն է թվում: Հետո նա հիշում է, որ այդ ակնթարթում և՛ միլիարդավոր մտքեր անցան գլխով, և՛ իսկի մտածելու ժամանակ չունեցավ:

Audi-ից ինչ-որ հոտ է գալիս, որից Էլսան իրեն հանգիստ ու խաղաղված է զգում: Չի հասկանում՝ ինչ հոտ է: Բաց դռնից նայում է վորսին ու մինչև կհասցներ գիտակցել՝ ինչ է կատարվում, մտքով անցնում է, որ կենդանին թերևս չի ուզում ներս ցատկել, որովհետև ցավող տեղ ունի: Վստահ է, որ ցավ ունի, ինչպես վերջում ցավում էր տատիկի ամբողջ մարմինը:

Էլսան ձեռքը գրպանն է տանում, որ հրուշակ հանի: Դե, վորսի իսկական ընկերը տնից դուրս գալիս անկանխատեսելի իրավիճակների համար գոնե մի հրուշակ պիտի ունենա գրպանում: Սակայն չի հասցնում հանել, քանի որ հանկարծ հասկանում է, թե ինչ հոտ է գալիս Audi-ից: Ծխի հոտ է:

Դրանից հետո ոչ մի հավերժություն չի անցնում, նույնիսկ՝ ոչ մի ակնթարթ: Սեմը դուրս է ցատկում հետևի նստարանի ստվերից: Էլսան զգում է սառնությունը, երբ նրա ձեռքն ամուր սեղմում է իր բերանը: Զգում է՝ ինչպես են նրա մկանները պրկվում նստարանի մեջքի ու իր կոկորդի շուրջը,

թվայնացրել է 1915.info կայքը

զգում է՝ ինչպես են նրա մաշկի մազերը ծակծկում գրիֆինդորցիների շարֆի միջով բոբիկ ոտքերը քերծող սուր քարերի պես: Բերանին հպված սառնությունից Էլսայի մտքով անցնում է, որ Սեմի երակներով արյուն չի հոսում, ու միևնույն ժամանակ չի հասցնում որևէ բան մտածել:

Էլսան հասցնում է ակնթարթային շփոթմունք տեսնել Սեմի աչքերում, երբ նա նկատում է համախտանիշով տղային, երբ նա գիտակցում է, որ սխալ երեխայի է հետապնդել: Էլսան հասցնում է հասկանալ, որ հեքիաթների ստվերները չէին ուզում սպանել Ընտրյալին: Ցանկանում էին միայն փախցնել, որր իրենց սեփականը լինի: Ու սպանել յուրաքանչյուրին, ով կկանգնի իրենց ճանապարհին:

Վորսի ծնոտները սեղմում են Սեմի ձեռքը նույն պահին, երբ նա բռնում է տղային: Սեմը ոռնում է: Նա բաց է թողնում աղջկան: Էլսայի ուղեղում միտք է առկայծում, որ դեռ մի քանի վայրկյան ունի: Հետընթաց հայելու մեջ դանակ է փայլում:

Ու դրանից հետո ամեն ինչ սևանում է:

Էլսան զգում է, որ վազում է՝ տղայի ձեռքը բռնած, ու զգում է, որ միակ միտքը շենքի մուտքին հասնելն է: Պիտի հասցնեն գոռալ, որ հայրիկն ու Ալֆը լսեն:

Էլսան տեսնում է՝ ինչպես են ոտքերը շարժվում, բայց ասես ինքը չի կառավարում: Մարմինը բնազդաբար է փախչում: Էլսային թվում է, որ ինքն ու տղան հասցրել են հազիվ մի քանի քայլ անել, երբ լսում է, որ վորսը ոռնում է սարսափելի ցավից, ու չի հասկանում՝ տղա՞ն է բաց թողնում իր ձեռքը, թե՞ ինքը՝ տղայի: Սիրտն այնպես ուժգին է բաբախում ականջներում, որ զգացվում է նաև աչքերի մեջ: Տղան սայթաքում է ու ընկնում: Էլսան տեսնում է, որ Audi-ի հետևի դուռը բացվում է, ու Սեմն է երևում՝ արյունոտ դանակը ձեռքին:

Գուցե մի ամբողջ հեքիաթային հավերժություն է անցնում կամ մի անսահման կարճ ակնթարթ: Չգիտի: Միայն գիտի, որ չեն հասցնելու փախչել, որ ամեն ինչ կորած է: Բայց ինքն անում է այն, ինչ կարող է: Միակ բանը, որ կարող է, տղային գրկելն ու հնարավորին չափ արագ վազելն է:

Ինքը վազելուց լավ է: Բայց գիտի, որ չեն հասցնելու: Հևոց է լսում, երբ Սեմն ամբողջ մարմնով նետվում է տղայի վրա: Զգում է, որ թևն ասես

թվայնացրել է 1915.info կայքը

ուսից պոկվում է, ու սրտի մոտ հարված է զգում, երբ տղային պոկում են իր գրկից: Փակում է աչքերն ու վերջին բանը, որ հիշում է, հարվածն է ճակատին, ու Մոդի ճիչը, հետո՝ հայրիկի ձեռքերն ու աստիճանավանդակի կարծր հատակը: Շուրջն ամեն ինչ արագ պտտվում է, հետո սկսում է վերուվար ճոճվել, ու նա մտածում է, որ թերևս մեռնելն այսպես է լինում: Ասես անվերջ գահավիժում ես՝ չիմանալով, թե ուր:

Թնդյուն է լսվում, սակայն Էլսան չի հասկանում, թե որ կողմից, հետո՝ արձագանքը: Նա մտածում է, որ արձագանքեց, ու հասկանում է, որ երևի շենքի ներսում են: Աչքերը ծակծկում են, ասես կոպերի տակ խիճ լինի լցված: Լսում է աստիճաններով վազող թեթև ոտնաձայներ, ինչպես կարող են միայն տղայի ոտնաձայները հնչել, որը քանի տարի առաջ արդեն գիտեր, որ այս օրը գալու է: Լսում է տղայի մայրիկի սարսափահար ձայնը, որ հաջողեցնում է իրեն հանգիստ ու զուսպ պահել նրա հետևից վազելիս, ինչպես կարող է միայն անել վախն իր կյանքի բնական վիճակը դարձրած ու դրան սովոր մայրիկը:

Շենքի մուտքի դուռը փակվում ու կողպվում է նրանց հետևից: Էլսան զգում է, որ հայրիկի ձեռքերը ոչ թե նրան գրկում, այլ հետ են պահում, բայց չի հասկանում՝ ինչ պատճառով, մինչև որ մուտքի դռան հետևում ստվերներ է տեսնում: Դռան ապակու հետևում երևում է Սեմը: Անշարժ կանգնած՝ սպասում է: Ու այնպիսի հայացքով է նայում, որ ամենևին բնորոշ չէ նրան: Սկզբում Էլսան նույնիսկ մի պահ կարծում է, թե դա ընդամենն իր երևակայության արդյունքն է:

Սեմի հայացքում վախ կա:

Մի ակնթարթ, ու մեկ ուրիշ ստվեր է հայտնվում նրա հետևում՝ այնքան հսկա, որ Սեմի ստվերը կորչում է նրա մեջ: Գայլսիրտի ծանր բռունցքները կրակի մոլեգնող հեղեղի պես փուլ են գալիս նրա գլխին: Այդ աներևակայելի կատաղությունն ու մթությունը ոչ մի հեքիաթում հնարավոր չէ նկարագրել: Գայլսիրտը ոչ թե հարվածում է Սեմին, այլ ձյան մեջ է մխրճում նրան, ոչ թե վնասազերծելու կամ մյուսներին պաշտպանելու, այլ ոչնչացնելու համար:

Հայրիկը գրկում է Էլսային ու վազում վերև՝ դեմքը կրծքին ամուր սեղմած, որ չտեսնի: Էլսան միայն լսում է, որ Մոդն ու Լենարտն աղաչում են

թվայնացրել է 1915.info կայքը

Գայլսիրտին, որ դադարեցնի խփելը: Բայց Էլսան լսում է չդադարող խուլ հարվածները, ինչպես գետնին ընկնող կաթի տոպրակների ձայնը: Գայլսիրտը չի լսում նրանց աղաղակները, որովհետև հեքիաթում նա Մարտ-Ան-Վերջից դեռ շատ առաջ հեռացել էր մութ անտառների խորքերը, քանի որ գիտեր, թե ինչի է ընդունակ:

Էլսան ազատվում է հայրիկի գրկից ու նետվում աստիճաններով ներքև: Մոդն ու Լենարտը դադարում են ճչալ՝ նախքան Էլսայի հայտնվելը: Գայլսիրտի՝ վերամբարձ կռունկի պես հսկայական բռունցքը խոյանում է Սեմի գլխավերևում այնքան բարձր, որ հասնում է ամպէակի թաթին՝ նախքան կանգ առնելն ու ներքև սուրալը:

Հնարավոր է՝ մի ամբողջ հավերժություն անցած լինի: Էլսան չգիտի: Իհարկե, ժամանակը չափելու ավելի լավ ձև պետք է գտնել, հաստա՛տ: Թե չէ ակնհայտ է, որ այս տարբերակով անասելի խառնաշփոթ է ստացվում:

Գայլսիրտը, բռունցքը բարձրացրած, անշարժանում է: Նրա ու արյունոտված դանակով մարդու միջև ձյուների մեջ մի կին է կանգնում՝ տեսքից այնքան փոքր ու փխրուն, որ թվում է՝ քամին միջով կանցնի: Ձեռքին չորացնող մեքենայի միջից հանած բրդոտ մի փոքրիկ գնդիկ է, իսկ միջնամատին, որտեղ սովորաբար ամուսնական մատանին է լինում, նեղ սպիտակ շերտ: Նա այնպես է նայում Գայլսիրտին, կարծես ներքուստ իր ամբողջ էությունն աղերսում է փախչել: Բայց նա մնում է անսասան կանգնած այնպիսի անխախտ հայացքով, ինչպիսին կարող է ունենալ մարդը, որն այլևս ոչինչ չունի կորցնելու:

Նա գլորում է բրդոտ գնդիկը մի ափի մեջ, հետո այդ ձեռքը դնում է մյուս ձեռքի մեջ ու կոնքերի առջև ագուցում ձեռքերը, ապա հաստատակամ հայացքով նայում է Գայլսիրտի աչքերին և հրամայական տոնով ասում.

— Այս բնակվարչությունում մարդ չենք սպանում:

Գայլսիրտի բռունցքը դեռևս դողում է նրա գլխավերևում: Նրա կրծքավանդակը բարձրանում ու իջնում է: Բայց քիչ անց նրա ձեռքը դանդաղ իջնում է կնոջ գլխավերևից ու կախվում մարմնի երկայնքով:

Բրիտ-Մարին հազում է: Ձեռքերն իրարից անջատում է ու մի քանի մոլորված փաթիլներ թափ տալիս կիսաշրջազգեստից: Ուղղում է փեշի ծալքը, նորից ձեռքերն իրար է ագուցում ու նորից կոկորդը մաքրում է հազալով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սա վարձակալներիս համատիրությունն է: Մենք՝ վարձակալ բնակիչներով, թույլ չենք տա այստեղ մարդ սպանել: Մենք թույլ չե՛նք տա: Մենք քաղաքակիրթ մարդիկ ենք:

Նա կանգնած էր Գայլսիրտի ու Սեմի՝ հրեշի ու ստվերի միջև, երբ ոստիկանական մեքենան փողոցից բակ է մտնում: Կանաչ աչքերով կին ոստիկանը, նախքան մեքենան կկանգներ, ատրճանակն արդեն պատրաստ պահած, դուրս է գցում իրեն: Գայլսիրտը ծնկի է գալիս ձյան վրա: Ձեռքերը վեր է բարձրացնում ու աչքերը փակում:

Էլսան հրում է դուռն ու դուրս նետվում: Ոստիկանները բղավում են Գայլսիրտի վրա: Նրանք փորձում են թույլ չտալ Էլսային, որ փախչի, ինչը, սակայն, ափերով ջուր բռնելու պես բան է. այն դուրս է հոսում մատներիդ արանքից: Այդ պահին, չնայած տարիներ ի վեր ինքն էլ չի հասկանում, թե ինչու, Էլսան ակամա հիշեց, որ մայրիկն էլ նույնն էր ասել Յեորգին՝ կարծելով, թե Էլսան քնած է: Մայրիկն ասել էր, որ մեծացող աղջկա մայր լինելով՝ այնպիսի զգացողությունն ունի, ասես փորձում է ջուրն ափերի մեջ պահել:

Վորսն անշարժ ընկած է գետնին՝ մուտքի դռան ու Audi-ի միջև: Ձյունը կարմիր է: Կենդանին փորձել էր սողալ դեպի Էլսան: Audi-ից դուրս էր գլորվել ու սողացել, մինչև որ ուժասպառվել էր:

Էլսան հանում է բաճկոնն ու գրիֆինդորցիների շարֆը խցկում է կենդանու տակ, հետո պառկում ձյան մեջ՝ նրա կողքին, ու ամուր-ամուր փաթաթվում է: Նրա շնչառությունից գետնանուշի թխվածքի հոտ է առնում և շշնջում է նրա ականջին նորից ու նորից. «Չվախենա՛ս, չվախենա՛ս: Մի՛ վախեցիր, Գայլսիրտը հաղթեց վիշապին, իսկ հեքիաթները չեն վերջանում, քանի վիշապը չի պարտվել»:

Երբ Էլսան զգում է, որ հայրիկի փափուկ ձեռքերը բարձրացնում են իրեն գետնից, ամբողջ ուժով բղավում է, որ վորսը լսի, նույնիսկ եթե արդեն Երկիր-Կիս-Արթունի կեսգանապարհին լինի.

— ԴՈՒ ՉԵ՛Ս ՄԵՌՆԻ: ԼՍՈ՞ՒՄ ԵՍ: ԴՈՒ ՉԵ՛Ս ՄԵՌՆԻ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ԵՐՋԱՆԻԿ ԱՎԱՐՏ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ:

թվայնացրել է 1915.info կայքը

32



ՊԱՂՊԱՂԱԿ

Դժվար է դատողություններ անել մահվան մասին: Դժվար է բաց թողնել նրան, ում սիրում ես:

Տատիկն ու Էլսան սովորաբար միասին էին նայում երեկոյան լուրերը: Մեկ-մեկ դրանցից ազդված՝ Էլսան հարցնում էր տատիկին, թե ինչու են մեծերն անընդհատ ու մշտապես հիմար բաներ անում: Տատիկը սովորաբար պատասխանում էր, որ մեծերն էլ մարդ են, իսկ մարդը հիմնականում տխմար շունչանորդի է: Էլսան առարկում էր, թե մեղադրանքն անհիմն է, քանի որ մեծահասակները տխմարությունների արանքում փաստացի պատասխանատու են նաև մի շարք հրաշալի բաների համար, օրինակ՝ տիեզերական թռիչքների, ՄԱԿ-ի, պատվաստանյութերի ու պանրի դանակի համար: Իսկ տատիկը պատասխանում էր, որ կյանքի ամբողջ բարդությունն էլ հենց այն է, որ գրեթե մարդ չես գտնի, որ ոտքից գլուխ շունչանորդի լինի կամ որ իսկի այդպիսին չլինի: Ու կյանքի դժվարությունն էլ հենց այն է, որ փորձես, որքան կարող ես, քեզ պահել այդպիսին չլինելու սահմանին մոտ:

Մի անգամ՝ երեկոյան լուրերը դիտելուց հետո, Էլսան հարցրել էր, թե ինչու են հաճախ ամենուրեք բազմաթիվ ոչ տխմար մարդիկ մեռնում, իսկ շատ տխմարներ՝ ոչ: Եվ ինչո՞ւ առհասարակ անընդհատ մեկը պիտի մեռնի՝ տխմար լինի, թե չլինի: Տատիկը փորձում էր Էլսային պաղպաղակով շեղել ու թեման փոխել, քանի որ պաղպաղակ ավելի էր սիրում, քան մահը: Եվ քանի որ Էլսան կարող էր չափից ավելի համառ լինել, տատիկը,

թվայնացրել է 1915.info կայքը

ի վերջո, ստիպված էր լինում տեղի տալ ու ասել, որ, իր կարծիքով, միշտ էլ մեկը ստիպված է իր տեղը զիջել, որպեսզի մեկ ուրիշը տեղ ունենա:

«Ինչպես ավտոբուսո՞ւմ ենք վարվում, երբ ծեր մարդ է բարձրանում»,– հետաքրքրվել էր Էլսան: Ու տատիկը հարցրել էր, թե Էլսան կհամաձայնի՞ պաղպաղակ ուտել ու փոխել թեման, եթե տատիկն «այո՛» պատասխանի: Ու Էլսան ասել էր, որ հնարավոր է: Այդ ժամանակ տատիկն ասել էր՝ Հա՛, հա՛, հենց այդպես: Հետո նրանք գնացել էին պաղպաղակ ուտելու:

Դժվար է դատել մահվան մասին: Դժվար է բաց թողնել նրան, ում սիրում ես: Բայց Միամասի ամենահին հեքիաթներից մեկում ասվում է, որ վորսը կարող է մահանալ միայն կոտրված սրտի պատճառով: Որ նրանք անմահ են, և ուրիշ ոչինչ չի կարող սպանել նրանց՝ վշտից բացի: Ասվում էր, որ նրանց հնարավոր եղավ սպանել այն ժամանակ, երբ արքայադստերը կծելու համար նրանց արտաքսեցին Երկիր-Կիս-Արթունից: Նրանք կոտրվել էին, քանի որ մարդիկ, որոնց վորսերը պաշտպանում ու սիրում էին, դուրս էին արել նրանց: «Դրա համար էլ նրանք զոհվեցին Մարտ-Ան-Վերջի եզրափակիչ ճակատամարտում»,–պատմել էր տատիկը, երբ հարյուրավոր վորսեր էին սպանվել: «Որովհետև ցանկացած կենդանի արարածի սիրտը կտոր-կտոր է լինում պատերազմի ժամանակ»:

Էլսան, մտքերով տարված, նստած է անասնաբուժարանի սպասասրահում: Մարդ շատ բաների մասին է հասցնում մտածել, երբ ստիպված է նստել սպասասրահում: Ամբողջ սենյակից թռչնակերի հոտ է գալիս: Բրիտ-Մարին նստած է նրա կողքին՝ ձեռքերը ծնկների մոտ իրար ագուցած, ու նայում է սպասասրահի հակառակ եզրին՝ վանդակում նստած կակադուին: Բրիտ-Մարին, երևում է, առանձնապես կակադուներով հիացած չէր: Էլսային էլ ծանոթ չէին կակադուների զգացմունքային դրսևորումները, սակայն հանկարծ համերաշխության նման զգացում է համակում նրան:

— Պարտադիր չէ, որ ինձ հետ այստեղ սպասես,– վշտից խզված ու Բրիտ-Մարիի վրա չարացած ձայնով ասում է նա:

Բրիտ-Մարին անտեսանելի փշուրներ է թափ տալիս բաճկոնակի վրայից ու պատասխանում է՝ կակադուից աչք չկտրելով.

— Ինձ համար դժվար չէ, փոքրի՛կ Էլսա: Մի՛ անհանգստացիր: Ամենևին դժվար չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան հասկանում է, որ նա վատություն անելու միտք չունի: Ոստիկանները կատարվածի կապակցությամբ հարցաքննում են հայրիկին ու Ալֆին, իսկ Բրիտ-Մարիին առաջինն էին հարցաքննել, այնպես որ նա ինքնակամ որոշել էր Էլսայի հետ նստել ու սպասել, մինչև որ անասնաբույժը դուրս կգա ու վորսի վիճակի մասին որևէ լուր կհայտնի: Այնպես որ, Էլսան հասկանում է, որ դրա մեջ ոչ մի վատ բան չկա: Պարզապես Բրիտ-Մարիի համար դժվար է որևէ բան ասել, որ այլ կերպ հնչի:

— Գիտե՞ս, մարդիկ գուցե քեզ հետ ավելի հազվադեպ վիճեն, եթե փորձես մի քիչ ավելի բարեհամբույր խոսել: Բարեհամբույր լինելն իրականում քո ընտրելով է, Բրի՛տ-Մարի,– ասում է Էլսան՝ աշխատելով, որ անբարեհաճ չհնչի, բայց առանձնապես չի հաջողվում:

Էլսան սրբում է աչքերը դաստակի ներսի կողմով: Փորձում է չմտածել վորսի ու մահվան մասին: Չի ստացվում: Բրիտ-Մարին սեղմում է շրթունքներն ու իրար ագուցած ձեռքերը դնում ծնկներին:

— Դե հա՛, պարզ է, հասկանում եմ, որ դու էլ ես իմ մասին նույն կարծիքին, ինչ որ ձեր ընտանիքի բոլոր կանայք: Ես հո գիտեմ:

Էլսան հառաչում է:

— Դա նկատի չունեի:

— Դե չէ՛, իհարկե, պարզ է: Դուք երբեք էլ դա՛ նկատի չունեք,– ասում է Բրիտ-Մարին:

Էլսան ձեռքերին է փաթաթում գրիֆինդորցիների շարֆը: Խորը շունչ է քաշում:

— Շատ մեծ քաջություն էր, որ գնացիր և Գայլսիրտի ու Սեմի արանքում կանգնեցիր,– ցածրաձայն ասում է նա:

Բրիտ-Մարին իր առջևի սեղանից ձեռքով հավաքում է անտեսանելի սերմերը կամ հնարավոր փշուրներն ու լցնում ափի մեջ: Ու աչքերով անտեսանելի աղբաման է փնտրում, որ բուռը մեջը դատարկի:

— Մեր՝ վարձակալներիս համատիրությունում մարդ չեն սպանում, մենք հո վայրենինե՞ր չենք,– կամացուկ ու արագ ասում է նա, որ Էլսան չլսի՝ ինչպես է ձայնը դողում:

Երկուսն էլ լուռ են, ինչպես մարդիկ, որ երկու օրվա ընթացքում երկրորդ անգամ հաշտության շեմին են գտնվում, բայց չեն ուզում բարձրաձայն խոստովանել դա:

Բրիտ-Մարին խփելով ուղղում է բազմոցի մյուս ծայրի բարձը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես քո տատիկին չէի ատում,– ասում է նա՝ առանց Էլսային նայելու:

— Ինքն էլ քեզ չէր ատում,– ասում է Էլսան՝ առանց նրան նայելու:

Բրիտ-Մարին մատներն իրար է ագուցում ու փակում աչքերը:

— Համ էլ ես իրականում երբեք չեմ ուզել, որ մեր բնակարանները վաճառքի դրվեն: Քենթն էր ուզում, ես էլ ուզում էի, որ Քենթը երջանիկ լինի, բայց նա ուզում էր բնակարանները վաճառվեին, որ փող շահեր ու տեղափոխվեր: Իսկ ես տեղափոխվել չեմ ուզում:

— Ինչո՞ւ,– հարցնում է Էլսան:

— Որովհետև իմ տունը սա է,– ասում է Բրիտ-Մարին:

Երբ համարյա ութ տարեկան ես, դժվար է չսիրել մեկին այսպիսի պատասխանից հետո:

— Իսկ ինչո՞ւ էիք դու ու տատիկը միշտ վիճում,– հարցնում է Էլսան, չնայած գիտի պատասխանը:

— Տատիկդ ինձ փնթփնթան պառավ էր համարում,– պատասխանում է Բրիտ-Մարին՝ չասելով իրական պատճառը:

— Իսկ ինչո՞ւ ես դու այդքան փնթփնթան,– հարցնում է Էլսան՝ մտածելով արքայադստեր, վհուկի ու գանձի մասին:

— Որովհետև ես իրականում թքած չունեմ, թե իմ շուրջն ինչ է կատարվում, Է՛լսա: Մարդ պիտի սրտացավ լինի: Իսկ երբ մեկն ինչ-որ բանով մտահոգ էր, տատիկդ դա նվնվոց էր համարում, բայց ինչպե՞ս կարելի է անտարբեր ապրել: Թե չէ մարդ ուղղակի գոյատևում է...,– պատասխանում է Բրիտ-Մարին՝ մի փոքր փնթփնթալով, բայց ամենևին ոչ պառավի պես:

— Դու իրոք շատ խորաթափանց մարդ ես, քեզ ավելի լավ ճանաչելով եմ հասկանում,– ասում է Էլսան:

— Շնորհակալ եմ,– ասում է Բրիտ-Մարին՝ հազիվ զսպելով Էլսայի թևքից անտեսանելի ինչ-որ բան թափ տալու մղումը:

Բավարարվում է նորից բազմոցի վրայի բարձը թափ տալով, չնայած վաղուց այդ հին բարձի մեջ թափ տալու ոչինչ չէր մնացել: Էլսան շարֆը հերթով փաթաթում է բոլոր մատների շուրջը:

— Ասենք, բանաստեղծություն կա մի ծերուկի մասին, որ ասում է՝ եթե իրեն չեն սիրում, ուրեմն, թող փոխարենը գոնե ատեն: Էնքան որ, ուզում է ուշադրություն գրավել,– ասում է Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դոկտոր Գլաս (20-րդ դարասկզբի շվեդ արձակագիր Յալմար Սյոդերի վեպի հերոսը),– գլխով է անում Բրիտ-Մարին:

— Վիքիպեդիա,– ասում է Էլսան:

— Մեջբերումը դոկտոր Գլասից է,– կրկնում է Բրիտ-Մարին:

— Կա՞յք է,– հարցնում է Էլսան:

— Պիես է,– պատասխանում է Բրիտ-Մարին:

— Հա՛,– ասում է Էլսան:

— Վիքիպեդիան ո՞րն է,– հարցնում է Բրիտ-Մարին:

— Կայք է,– ասում է Էլսան:

Բրիտ-Մարին մատներն իրար է ագուցում:

— «Դոկտոր Գլասը» վեպ է, ինչքան գիտեմ: Չեմ կարդացել, բայց թատրոնում բեմադրել էին,– անվստահ ասում է նա:

— Հա՛,– ասում է Էլսան:

— Շատ եմ սիրում թատրոն,– ասում է Բրիտ-Մարին:

— Ես էլ,– ասում է Էլսան:

Բրիտ-Մարին գլխով է անում: Էլսան էլ:

— Դոկտոր Գլասը գերհերոսի համար լավ անուն է:

Չնայած մտածում է, որ իրականում գերհերոսների վրիժառուների համար ավելի հարմար կլիներ, բայց Բրիտ-Մարին ամենայն հավանականությամբ պարբերաբար որակով գրականություն չի կարդում, այնպես որ Էլսան չի ուզում նրան շատ խճճել: Բրիտ-Մարին գլխով է անում: Ապա բարձրաձայն մեջբերում է.

— Մարդ սեր է փափագում, եթե ոչ՝ արժանանալ գեթ հիացմունքի, եթե ոչ, ապա գոնե վախ ներշնչել կամ թե՝ գարշանք ու ատելություն: Միայն թե որևէ զգացմունք արթնացնի: Հոգին սոսկում է դատարկությունից ու ամեն գնով շփում է տենչում:

Էլսան շատ էլ համոզված չէ, որ ճիշտ է հասկանում: Բայց գլխով է անում՝ ի նշան համաձայնության:

— Իսկ դու ի՞նչ կուզենայիր,– հարցնում է նա:

Բրիտ-Մարիի ձեռքերը մի փոքր տեղաշարժվում են ծնկների վրա, սակայն փշուրներ թափ չեն տալիս:

— Երբեմն շատ դժվար է մեծահասակ լինելը, Է՛լսա,– խուսափողական պատասխան է տալիս նա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Երեխա լինելն էլ եսիմինչքան հեշտ չէ,– կտրուկ պատասխանում է Էլսան:

Բրիտ-Մարիի մատների ծայրերը զգուշորեն շոշափում են մատնեմատի վրայի մաշկի սպիտակ շերտը:

— Ես սովորություն ունեի առավոտ վաղ կանգնել պատշգամբում՝ նախքան Քենթը կարթնանար: Տատիկդ գիտեր, դրա համար էր ձնեմարդեր սարքում: Ես էլ այդ պատճառով էի կատաղում, որովհետև նա իմ գաղտնիքը գիտեր ու կարծես թե դրանով ուզում էր ինձ ծաղրել:

— Ի՞նչ գաղտնիք,– հարցնում է Էլսան:

Բրիտ-Մարին ձեռքերն ամուր իրար է ագուցում:

— Ես ոչնչով նման չէի տատիկիդ: Երբեք չէի ճամփորդում: Միշտ այստեղ էի, բայց երբեմն սիրում էի առավոտ շուտ պատշգամբում կանգնել, երբ քամի էր: Հիմարություն է գուցե, գիտեմ, բոլորը կարծում են, որ հիմարություն է: Պարզ է, որ պիտի այդպես մտածեն:

Նա սեղմում է բերանը:

— Բայց ես սիրում եմ, որ զգում եմ քամին մազերիս մեջ: Այնքա՜ն եմ սիրում:

Էլսան մտածում է, որ, համենայնդեպս, Բրիտ-Մարին ոտքից գլուխ շունշանորդի չէ: Այսինքն՝ նույնիսկ երբեմն մոտ է շունշանորդի չլինելու սահմանին:

— Իսկ ի՞նչ կուզենայիր անել՝ չասացիր,– ասում է Էլսան՝ շարունակելով պտտել շարֆը:

Բրիտ-Մարին մատների ծայրով շոշափում է փեշը, ինչպես կաներ նա, ով տրամադրվում է անցնել պարահրապարակով ու իր հավանած տղամարդուն պարի հրավիրել: Ապա զգուշորեն ասում է.

— Ուզում եմ, որ մեկնումեկն ինձ հիշի, հիշի՛, որ ես եղել եմ: Իմանա՛, որ ես այստեղ էի:

Ցավոք, Էլսան վերջին բառերը չի լսում, որովհետև մի դռնից անասնաբույժն այնպիսի հայացքով է դուրս գալիս, որ Էլսայի գլուխը սկսում է գվվալ: Նա տեղից վեր է թռչում ու սուրում անասնաբույժի կողքով, նախքան նա կհասցներ բերանը բացել: Էլսան լսում է, որ հետևից գոռում են, երբ սլանում է միջանցքով, ու իրար հետևից հերթով դռներն է բացում: Մի բուժքույր փորձում է ընթացքում բռնել նրան, բայց Էլսան պոկվում ու վազում է: Դարձյալ մի քանի դուռ է բացում, մինչև որ լսում է վորսի ոռնո-

թվայնացրել է 1915.info կայքը

ցը, որն ասես հասկանում է, որ Էլսան իրեն է փնտրում: Նա փորի շուրջը վիրակապով պառկած է սառը սեղանին, երբ Էլսան փոթորկի պես ներս է ընկնում: Շուրջն ամենուր արյուն է: Էլսան դեմքը թաքցնում է նրա մորթու խորքում ու անվերջ շշնջում է. «Դու չպիտի՛ մեռնես»:

Բրիտ-Մարին մենակ է մնում սպասասրահում. նույնիսկ կակադուին են տարել: Եթե Բրիտ-Մարին հիմա վեր կենա ու հեռանա, ոչ ոք չի էլ հիշի, որ նա այնտեղ նստած էր: Նա կարծես մի պահ հենց այդ մասին է մտածում: Հետո անտեսանելի փշուրներ է թափ տալիս սեղանի ծայրից, ուղղում է կիսաշրջազգեստն ու տեղից ելնելով՝ գնում:

Վորսը փակում է աչքերը: Կարծես ժպտալիս լինի: Էլսան վստահ չի, որ լսում է իրեն: Չգիտի՝ զգո՞ւմ է մորթու վրա թափվող ծանր արցունքների կաթիլները: Դժվար է բաց թողնել նրան, ում սիրում ես: Դժվար է, երբ ութի շեմին, ուզես թե չուզես, պիտի սովորես ընդունել, որ բոլորը, ում սիրում ես, վաղ թե ուշ հեռանալու են:

— Դու չե՛ս կարող մեռնել: Դու չե՛ս կարող մեռնել, որովհետև ես հիմա մոտդ եմ, ու դու իմ ընկերն ես: Իսկական ընկերը չի կարող ուզած ժամանակ ուղղակի մեռնել, ու վերջ, հասկանո՞ւմ ես, թե՞ չէ: Ընկերները չեն մեռնում,– շշնջում է Էլսան՝ փորձելով ավելի շուտ ինքն իրեն համոզել, քան վորսին:

Իսկ նա կարծես ամեն ինչ հասկանում է: Փորձում է իր տաք շնչով չորացնել նրա թաց այտերը: Էլսան կուչ է գալիս նրա կողքին, ինչպես այն գիշեր պառկել էր տատիկի մոտ՝ հիվանդանոցի մահճակալին, երբ տատիկն այլևս չվերադարձավ Միամասից:

Ինքը միշտ կմնա վորսի կողքին, գրիֆինդորցիների շարֆը՝ մորթու մեջ թաղված:

Երբ վորսի շնչառության ընթացքում դադարներն ավելանում են, և հաստ ու խիտ բրդի տակից սրտի բաբախյունը դանդաղում է, Էլսային հետևից հասնում է կին ոստիկանի ձայնը: Կանաչ աչքերը դռան արանքից աղջիկան ու կենդանուն են նայում: Էլսան հայացքը հառում է նրան: Կանաչ աչքերը կարեկցանքով լի նայում է վորսին այն մարդու հայացքով, որ չի սիրում խոսել մահվան մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մենք պիտի քո ընկերոջը ոստիկանություն տանենք, Էլսա,– փոխարենն ասում է նա:

Էլսան հասկանում է, որ խոսքը Գայլսիրտի մասին է:

— Դուք չե՛ք կարող նրան բանտարկել: Նրա արածն ինքնապաշտպանություն էր,– մռնչում է Էլսան, ու նրա շրթունքների վրա կուտակված վշտի ծանր կաթիլները թայֆունի պես պայթում են սենյակով մեկ:

Կանաչ աչքերը տարուբերում է գլուխը:

— Չէ, Էլսա: Նա իրեն չէր պաշտպանում:

Հետո նա դռնից մի կողմ է քաշվում: Ու մտամոլոր ձևանալով՝ որոշ ժամանակ աչք չի կտրում ժամացույցից՝ ասես հանկարծ մտահոգվելով, որ հենց նույն պահին պիտի մեկ ուրիշ չափազանց կարևոր գործով զբաղվեր: Ինչ-որ անհավատալի պատահականությամբ նա, ում հրամայված էր ոստիկանական բաժանմունք հասցնել, հենց նույն պահին պատահաբար հսկողությունից դուրս է մնում ու հնարավորություն ստանում խոսել երեխայի հետ, որն իր աչքի առաջ կորցնում է ընկերոջը: Իրոք որ, անհավատալի է:

Հետո կին ոստիկանն անհետանում է, ու դռան արանքում հայտնվում է Գայլսիրտը: Էլսան պոկվում է վիրահատական սեղանից, նետվում նրա գիրկն ու փաթաթվում՝ բացարձակապես թքած ունենալով, որ նա, տուն վերադառնալով, ստիպված ալկոգելով լոգանք է ընդունելու:

— Վորսը չպիտի մեռնի: Ասա՛ նրան, որ նա մեռնելու իրավունք չունի,– շշնջում է Էլսան:

Գայլսիրտը դանդաղ արտաշնչում է՝ ձեռքերն օդում անորոշ տարածած, ասես ինչ-որ մեկը շապիկին թունավոր հեղուկ էր շփել: Էլսան հիշում է, որ նրա բաճկոնն իրենց տանն էր մնացել:

— Մենք քո բաճկոնը կվերադարձնենք, մայրիկը շատ լավ լվացել է ու պահարանում կախել առանձին ցելոֆանե տոպրակով,– շշնջում է նա՝ ասես ներողություն խնդրելով և առանց ձեռքերը բաց թողնելու:

Երևում էր, որ նա իսկապես շատ շնորհակալ կլիներ, եթե Էլսան պոկ գար նրանից: Բայց կարծես թե Էլսան պոկվելու միտք էլ չունի:

— Բայց էլ երբեք չկռվես,– պահանջում է Էլսան՝ մինչև պոկվելն ու աչքերը դաստակով սրբելը՝ դեմքը նրա շապիկին ամուր կպցրած:

— Չեմ ասում, որ կռվել իսկի չի կարելի, որովհետև ինձ համար դեռ վերջնական չեմ որոշել, թե էդ հարցին ինչպես վերաբերվեմ: Դե, այսինքն,

թվայնացրել է 1915.info կայքը

բարոյական առումով: Բայց մարդ, ամեն դեպքում, չպիտի կռվի, եթե քեզ պես լավ է կռվում,– հեծկլտալով ասում է նա:

Եվ այդ ժամանակ Գայլսիրտը չափազանց տարօրինակ քայլ է անում. գրկում է Էլսային:

— Վորսը: Շատ ծեր: Շատ ծեր վորս, Է՛լսա,– գռմռում է նա գաղտնալեզվով:

— Ես չեմ դիմանում, գրո՛ղը տանի, որ բոլորն անընդհատ մեռնում են,– հեկեկում է Էլսան:

Գայլսիրտը երկու ձեռքով գրկում է նրան: Քնքշորեն բռնում է նրա ցուցամատերը: Ցնցվում է, ասես շիկացած երկաթ է բռնել, բայց բաց չի թողնում, կարծես հասկանում է, որ կյանքում շատ ավելի կարևոր բաներ կան, քան մանկական մանրէներից վախենալը:

— Շատ ծեր վորս: Շատ հոգնած հիմա, Է՛լսա:

Ու երբ Էլսան հիստերիկ թափ է տալիս գլուխն ու ճչում, որ իր մոտիկներից ոչ մեկին թույլ չի տալու մեռնել, նա, բաց թողնելով նրա մի ձեռքը, իր ձեռքը տաբատի գրպանն է տանում ու մի ճմռթած թղթի կտոր հանելով՝ Էլսայի ձեռքն է տալիս: Նկար է, ու երևում է, որ տատիկի նկարածն է, քանի որ նա ինչպես գրում էր, ճիշտ նույն կերպ էլ նկարում էր:

— Քարտեզ է,– շունչը պահած ասում է Էլսան՝ բացելով ծալած թուղթն ու շնչակտուր հևալով, ինչպես նա, որի արցունքները դադարել են, բայց լացը՝ ո՛չ:

Գայլսիրտը ձեռքերն իրար է շփում: Էլսան մատները սահեցնում է թանաքի վրայով:

— Գրված է, որ յոթերորդ թագավորության քարտեզն է,– բարձրաձայն ասում է նա ավելի շուտ իր, քան Գայլսիրտի համար:

Ապա նորից գնում, պառկում է վորսի կողքին այնքան մոտիկ, որ շապիկի տակից զգում է նրա մորթին: Զգում է տաք շնչառությունն ու սառը քիթը: Նա քնած է: Ավելի ճիշտ, Էլսան հույս ունի, որ քնած է: Նա համբուրում է վորսի քիթն ու արցունքներ թողնում նրա բեղիկներին:

Գայլսիրտը կամացուկ հազում է:

— Նամակի մեջ էր: Տատիկի նամակի,– ասում է նա գաղտնալեզվով՝ քարտեզը ցույց տալով:

Նա նայում է Էլսային: Էլսան մշուշոտ հայացքով նույնպես նրան է նայում: Նա նորից մատով քարտեզն է ցույց տալիս:

թվայնացրել է 1915.info կայքը

— Միպարդոնուս՝ յոթերորդ թագավորությունը: Քո տատիկը ու ես... Մենք պիտի կառուցեինք:

Էլսան ուշադիր զննում է քարտեզը՝ թույլ տալով, որ այն ծածանվի քնած վորսի հետզհետե թուլացող շնչառությունից: Քարտեզում, իրականում, ամբողջ Երկիր-Կիս-Արթունն է, չնայած բոլորովին սխալ հարաբերությամբ, որովհետև տատիկը երբեք ոչ մի հարաբերություն չէր պահում:

— Այս յոթերորդ թագավորությունը գտնվում է ճիշտ այնտեղ, որտեղ Միբատալոսի ավերակներն են,– շշնջում է նա:

Գայլսիրտը ձեռքերն է տրորում:

— Միբատալոսի տեղում միայն Միպարդոնուսը կարող ենք կառուցել: Տատիկիդ գաղափարն էր:

— Ի՞նչ է նշանակում Միպարդոնուս,– հարցնում է Էլսան՝ այտը վորսի մորթուց չհեռացնելով:

— Մայրիկիս լեզուն: Նշանակում է՝ «ներում եմ»,– ասում է Գայլսիրտը:

Նրա այտերի արցունքներն ասես ծիծեռնակներ լինեն: Նրա խոշոր ձեռքն իջնում է վորսի գլխին: Վորսը բացում է աչքերը, որ տեսնի նրան:

— Շատ ծեր, Է՛լսա: Շա՛տ, շա՛տ հոգնած,– շշնջում է Գայլսիրտը:

Հետո նա մատները քնքշորեն դնում է խիտ մորթու տակից երևացող Սեմի դանակի հասցրած վերքին:

— Շատ է ցավում, Է՛լսա: Շատ, շատ ցավ:

Դժվար է բաց թողնել նրան, ում սիրում ես, հատկապես երբ համարյա ութ տարեկան ես:

Էլսան կռանում է վորսի կողքին ու ամուր, շատ ամուր գրկում է նրան: Կենդանին վերջին անգամ նրան է նայում գրեթե փակ աչքերով: Էլսան թույլ ժպտում է ու շշնջում. «Դու իմ առաջին ու ամենալավ ընկերն ես»: Նա դանդաղ լիզում է աղջկա դեմքը: Նա հրուշակ է բուրում: Եվ Էլսան բարձրաձայն ծիծաղում է՝ վորսի շուրջը անձրևի պես արցունք թափելով:

Երբ ամպէակն իջնում է Երկիր-Կիս-Արթուն, Էլսան ամբողջ ուժով գրկում է վորսին ու շշնջում. «Դու կատարեցիր առաջադրանքը, էլ կարիք չկա, որ ամրոցը պաշտպանես: Հիմա գնա՛, տատիկի՛ն պաշտպանիր: Պաշտպանի՛ր բոլոր հեքիաթները»: Կենդանին վերջին անգամ լիզում է աղջկա դեմքը:

Ու վազում է:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբ Էլսան շրջվում է դեպի Գայլսիրտը, տեսնում է, որ նա արևից կկոցում է աչքերը, կարծես մի քանի հեքիաթային հավերժություն չի եղել Երկիր-Կիս-Արթունում: Էլսան ցույց է տալիս Միբատալոսի ավերակների կողմը:

— Կարող ենք Ալֆին բերել էստեղ: Նրա ձեռքից ամեն ինչ գալիս է: Այսինքն՝ գոնե պահարաններ սարքելուց լավ է: Իսկ յոթերորդ թագավորությունում պահարաններ հաստատ պետք կգան, չէ՞: Իսկ տատիկը Միամասում մի նստարանի կնստի ու կսպասի, մինչև որ մենք մեր անելիքները վերջացնենք, ինչպես պապիկը «Առյուծասիրտ եղբայրներում»: Էդպիսի մի հեքիաթ կա, ես տատիկի համար կարդացել էի, այնպես որ գիտեմ՝ տատիկը, նստարանին նստած, կսպասի, որովհետև նրան բնորոշ է ուրիշ հեքիաթներից որոշ բաներ թխելը: Ինքը նաև գիտի, որ «Առյուծասիրտ եղբայրներն» իմ սիրած հեքիաթներից է:

Նա դեռ շարունակում է լաց լինել, Գայլսիրտը՝ նույնպես: Բայց նրանք անում են այն, ինչ անում են բոլորը, այն, ինչ կարող են: Նրանք ներման բառեր են շարում կռվի ու պատերազմի բառերի ավերակների վրա:

Վորսը մահանում է Էլսայի փոքրիկ եղբոր ծնվելու օրը: Էլսան որոշում է, որ կպատմի նրա մասին եղբորը, երբ նա մի քիչ մեծանա: Կպատմի իր առաջին ու ամենալավ ընկերոջ մասին: Կպատմի, որ երբեմն մեկը պետք է հեռանա, որ մեկ ուրիշին տեղ լինի: Եվ որ, ըստ էության, կարծես թե վորսն ավտոբուսում իր տեղը զիջեց Կեսիկին:

Էլսան մտածում է, որ անպայման պիտի բացատրի Կեսիկին, որ նա չտխրի կամ իրեն մեղավոր չզգա այդ պատճառով:

Որովհետև վորսն իրականում ատում էր ավտոբուսով երթևեկելը:

թվայնացրել է 1915.info կայքը

33

ՆՈՐԱԾԻՆԸ

Ամենադժվարը հեքիաթների վերջն է: Ոչ այն պատճառով, որ դրանք, միևնույն է, վերջանում են, որովհետև բոլոր հեքիաթներն էլ, ի վերջո, պիտի վերջանան: Չնայած մի մասը, անկեղծ ասած, իրականում այնքան էլ շուտ չի վերջանում: Այս մեկը, ըստ բազմաթիվ փորձառու հանդիսատեսների, հաստատ վաղուց պիտի ավարտված ու մի կողմ դրված լիներ: Բայց ամբողջ դժվարությունն էլ հենց այն է, որ հեքիաթի վերջում հերոսները պիտի իրենց կյանքն ապրեն ուրախ ու երջանիկ: Ինչն իսկապես դժվար է հենց թեկուզ տեխնիկապես, որովհետև հեքիաթներում նրանք, որոնց ժամանակը լրացել է, հեռանում են՝ թողնելով մյուսներին, որ առանց իրենց ապրեն:
Իսկ մնացողների համար դժվար է ապրել առանց նրանց: Անասելի, անտանելի դժվար է մնալ ու ապրել՝ առանց իրենց սիրելիների:

Արդեն մթնել էր, երբ նրանք դուրս եկան անասնաբույժի մոտից: Սուրբ ծննդյան հաջորդ օրվա գիշերն է:

Երբ Էլսան ավելի փոքր էր ու ինչ-որ բան էր ուզում անել, իսկ մայրիկը կա՛մ մետաղադրամ չուներ, կա՛մ վստահ չէր, որ ապահովագրությունը կփակեր ծախսերը, կա՛մ էլ պարզապես չէր ուզում, նա միշտ խոստանում էր, որ անպայման Էլսայի ուզածը կանեն հաջորդ օրը:

Հետո մայրիկը սարսափելի, սարսափելի զայրացել էր տատիկի վրա այն անգամ, երբ Սուրբ ծնունդի հաջորդ օրը լրացավ Էլսայի հինգ տարին,

թվայնացրել է 1915.info կայքը

ու տատիկն ասաց, որ հաջորդ օրն այսօր է: Տատիկը բոլորին իրար խառնելուց լավ էր:

Նրանք սովորաբար Էլսայի ծննդյան նախորդ գիշերը շենքի մոտ ձյունե հրեշտակներ էին սարքում: Եվ դա տարվա մեջ միակ գիշերն էր, որ տատիկը հրեշտակների մասին ոչ մի վատ բան չէր ասում: Դա Էլսայի սիրած ավանդույթներից էր:

Էլսան Ալֆի տաքսիով է գնում: Ոչ այն պատճառով, որ չէր ուզի հայրիկի հետ գնալ, այլ քանի որ հայրիկն ասաց, որ Ալֆն ահավոր զայրացած էր ինքն իր վրա, որ տաքսին բերելու համար կայանատեղի էր իջել այն պահին, երբ Սեմի այդ դեպքը տեղի ունեցավ: Որ մոտիկ չէր ու չէր կարողացել անձամբ պաշտպանել Էլսային: Նման պահերին, երբ իսկապես անհրաժեշտ է, հայրիկը երկմտելը թողնում է:

Ալֆն ու Էլսան առանձնապես շատ չեն խոսում մեքենայի մեջ, ինչը բնական է, քանի որ երբեմն մարդ չի խոսում, երբ ասելու շատ բան չի ունենում: Իսկ երբ Էլսան վերջապես ասում է, որ մինչև հիվանդանոց գնալը տանը մի բան ունի անելու, Ալֆը չի հարցնում, թե ինչ: Միայն շարունակում է քշել: Նա այդ գործից գլուխ է հանում:

— Կարո՞ղ ես ձյունե հրեշտակ պատկերել,– հարցնում է Էլսան, երբ տաքսին կանգ է առնում շենքի մոտ:

— Ես 64 տարեկան եմ, գրո՛ղը տանի,– մռթմռթում է Ալֆը:

— Դա պատասխան չէ,– ասում է Էլսան:

Այդ ժամանակ Ալֆն անջատում է շարժիչն ու դուրս գալով՝ փռթկացնում է.

— Ես, գրո՛ղը տանի, 64 տարեկան եմ: Ու 64 տարեկանում հիմա նոր չծնվեցի: Գրո՛ղը տանի, ձյունե հրեշտակ, պարզ է, որ պիտի կարողանամ պատկերել:

Ու նրանք 99 հատ ձյունե հրեշտակներ են պատկերում ձյան վրա: Իսկ հետո առանձնապես չեն խոսում այդ մասին, որովհետև կան ընկերներ, որ ընկեր են մնում, նույնիսկ եթե իրար հետ առանձնապես չես խոսում:

Ջինսով կինն իր պատշգամբից տեսնում է նրանց: Ու ծիծաղում է. կարծես լավ է ստացվում:

Երբ տեղ են հասնում, հայրիկն արդեն հիվանդանոցի մուտքի մոտ նրանց էր սպասում: Կողքով մի բժիշկ է անցնում, որ Էլսային մի պահ ծանոթ է

թվայնացրել է 1915.info կայքը

թվում: Հետո Յեորգին է տեսնում ու վազելով սպասասրահի մյուս ծայրը՝ նետվում է նրա գիրկը: Նա տրիկոյի վրայից կարճ սպորտային տաբատ էր հագել ու ձեռքին մի բաժակ սառցասառը ջուր էր մայրիկի համար:

— Ապրե՛ս, որ վազելով հասար,– բացականչում է Էլսան՝ նրան փաթաթվելով:

Յեորգը, հանկարծակիի եկած, աչքերը հառում է նրան:

— Ես վազելուց լավ եմ,– զգուշորեն հիշեցնում է նա:

Էլսան գլխով է անում:

— Գիտեմ, որովհետև դու առանձնահատուկ ես:

Հետո նա հայրիկի հետ գնում է մայրիկի մոտ, իսկ Յեորգը, ջրի բաժակը ձեռքին, մնում է կանգնած, մինչև որ ջուրը սենյակի ջերմաստիճանի է դառնում: Հայրիկը նայում է Էլսային, ու երևում է, որ խանդում է, սակայն ամեն կերպ փորձում է ցույց չտալ: Ու լավ էլ հաջողեցնում է՝ նույնիսկ այդ հարցում:

Մայրիկի սենյակի դիմաց բուժքույր է կանգնած, որը սկզբում չէր ուզում Էլսային ներս թողնել, քանի որ մայրիկը բարդ ծննդաբերություն էր ունեցել: Բուժքույրը հենց այդպես է արտահայտվում: Նրա ձայնը վճռական է, ու նա հստակ է արտասանում յուրաքանչյուր վանկը: Էլսան գլխով է անում: Հայրիկն էլ:

— Դուք հավանաբար նո՞ր բուժքույր եք,– մի փոքր քաշվելով՝ հարցնում է հայրիկը:

— Ի՞նչ կապ ունի տվյալ դեպքում,– բառերն ասես փռշտալով է արտաբերում բուժքույրը, ինչպես գրիպի ամենաթունդ շրջանում:

— Բոլորովին կապ չունի,– շփոթված ասում է հայրիկը, չնայած տվյալ դեպքում կապ ուներ:

— Այսօր ոչ մի այցելություն չի թույլատրվում,– վճռականորեն հայտարարում է բուժքույրն ու կրնկի վրա շրջվելով՝ մտնում է մայրիկի սենյակ:

Հայրիկն ու Էլսան չափազանց համբերատար կանգնած գլխով են անում, քանի որ այնպիսի զգացողություն ունեն, որ հարցն ինքն իրեն լուծվելու է, որովհետև մայրիկը, մայրիկ լինելուց բացի, նաև տատիկի աղջիկն է: Հայրիկն ու Էլսան հիշում են արծաթափայլ մեքենայի վարորդի դեպքն անմիջապես Էլսայի ծնվելուց առաջ: Մայրիկի հետ պետք է զգույշ լինել, երբ նա երեխա է ունենում:

թվայնացրել է 1915.info կայքը

Թերևս 30-40 վայրկյան չանցած՝ միջանցքով մեկ այնպիսի մի մռնչյուն է լսվում, որ պատերին կախված նկարները սկսում են ճոճվել, ասես ուր որ է կընկնեն:

— ՀԵՆՑ ՀԻՄԱ ՆԵ՛ՐՍ ԹՈՂ ԱՂՋԿԱՍ, ԹԵ ՉԷ ՍՏԵՏՈՍԿՈՊՈՎ ԿԽԵՂԴԵՄ ՔԵԶ ՈՒ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆ ԷԼ ԻՐԱ՛Ր ԿԽԱՌՆԵՄ, ՀԱՍԿԱՑԱ՞Ր:

Հայրիկի ու Էլսայի կարծիքով՝ 30-40 վայրկյանն ամեն դեպքում շատ ավելի երկար էր, քան հարցը լուծվելու համար պահանջվում էր: Բայց ևս երեք-չորս վայրկյան է անցնում, նախքան նորից է լսվում մայրիկի մռնչյունը:

— ԵՍ ԹՔԱ՛Ծ ՈՒՆԵՄ ԴՐԱ ՎՐԱ: ՀԱՍՏԱ՛Տ ԷՍ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ՄԻ ՏԵՂԻՑ ՍՏԵՏՈՍԿՈՊ ԿՃԱՐԵՄ՝ ՔԵԶ ԽԵՂԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Բուժքույրը նորից է հայտնվում միջանցքում: Նա այլևս առաջվա պես ինքնավստահ չի երևում: Նրա հետևից դուրս է գալիս ծանոթ թվացող բժիշկն ու սիրալիր ասում է, որ իրենք կարող են այս անգամ բացառություն անել: Նա ժպտում է Էլսային: Էլսան տրամադրվում է, խորը շունչ քաշում ու ներս է մտնում:

Մայրիկի վրա ամենուրեք փողրակներ էին ամրացված: Մայրիկն ու Էլսան գրկախառնվում են այնքան ամուր, որքան Էլսան համարձակվում է, որ հանկարծ դրանցից մեկը չվնասի: Նրան թվում է, թե դրանցից մեկը գուցե հոսանքի լար լինի, որից մայրիկը կարող է հանկարծ լամպի պես անջատվել: Մայրիկը շոյում է նրա մազերը:

— Ես ահավո՜ր, ահավո՜ր, ահավո՜ր ցավում եմ քո ընկեր վորսի համար,– ասում է նա:

Էլսան լուռ նստում է մահճակալի եզրին, մինչև որ այտերը չորանում են, ու նա մտածում է ժամանակը չափելու նոր եղանակի մասին: Այս բոլոր հավերժություններով չափումները, անկեղծ ասած, մի տեսակ շփոթեցնում են: Մտածում է, որ թերևս կարելի էր ավելի հեշտ չափման միավոր ընտրել: Ասենք՝ թարթելը կամ կոլիբրիի թևաբախումը: Պիտի որ մեկի մտքով անցած լինի: Որ տուն վերադառնա, Վիքիպեդիայում կստուգի:

Էլսան նայում է մայրիկին: Նա երջանիկ է երևում: Էլսան թփթփացնում է նրա ձեռքին: Մայրիկը բռնում է այն:

— Ես գիտեմ, որ ամենևին կատարյալ մայրիկ չեմ, անո՛ւշս:

Էլսան ճակատը հենում է մայրիկի ճակատին:

— Ամեն ինչ չպիտի կատարյալ լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրանք այնքան մոտ են իրար, որ մայրիկի արցունքները հոսում են Էլսայի քթի ծայրով:

— Ես շատ եմ աշխատում, անո՛ւշս: Քո տատիկի վրա հաճախ սաստիկ զայրանում էի, որ երբեք տանը չէր լինում, իսկ հիմա ինքս էլ նրա նման եմ…

Էլսան իրենց երկուսի քիթն էլ սրբում է գրիֆինդորցիների շարֆով:

— Ոչ մի գերհերոս էլ կատարյալ չէ, մայրի՛կ: Հանգի՛ստ եղիր:

Մայրիկը ժպտում է: Էլսան էլ:

— Կարո՞ղ եմ մի հարց տալ,– քիչ անց հարցնում է նա:

— Իհա՛րկե,– ասում է մայրիկը:

— Ես ինչո՞վ եմ պապիկին նման:

Մայրիկը շփոթվում է, ինչպես մայրիկները, որոնց թվում է, թե միշտ կարողանալու են կանխատեսել իրենց դստրիկների հարցերը, սակայն հանկարծ պարզվում է, որ սխալվում են: Էլսան ուսերն է թոթվում:

— Այն, որ տարբերվող եմ, տատիկից է: Որ գիտունիկ եմ, հայրիկից է, ու որ գիտեմ այդ մասին, որովհետև Վիքիպեդիայում ստուգել եմ, էլի հայրիկից է: Ինքն էլ է միշտ ստուգում ինչ-որ բաներ: Բոլորի հետ վիճելն էլ տատիկից է: Իսկ պապիկին ինչո՞վ եմ նման:

Մայրիկը դեռ ուշքի չի եկել, որ պատասխանի: Էլսան փնչացնում է:

— Տատիկը երբեք հեքիաթներում չի պատմել պապիկի մասին:

Մայրիկն ափերի մեջ է առնում Էլսայի այտերն, ու Էլսան գրիֆինդորցիների շարֆով չորացնում է մայրիկի աչքերը:

— Կարծում եմ՝ պատմած կլինի, ուղղակի չես նկատել,– շշնջում է մայրիկը:

— Իսկ ինչո՞վ եմ նրան նման:

— Դու նրա նման ես ծիծաղում:

Էլսան ձեռքերը քաշում է շապիկի թևքերի մեջ: Ու սկսում է դատարկ թևքերն իր առջևում դանդաղ ճոճել:

— Ինքը շա՞տ էր ծիծաղում:

— Անընդհատ: Անընդհատ, անդադար: Դրա համար էր սիրում տատիկիդ, որովհետև տատիկը նրան անընդհատ ծիծաղեցնում էր: Ամբողջ մարմնով: Սրտանց:

Էլսան պառկում է մայրիկի անկողնում ու հաստատ ամենաքիչը կոլիբրիի մի միլիարդ թևաբախում մնում է պառկած: Իրոք, ճշգրիտ չի կարողանա ասել, թե իրականում ինչքան ժամանակ է անցնում՝ երևի նայած կոլիբրի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Տատիկը ոտքից գլուխ շունշանորդի չէր, ուղղակի ոտքից գլուխ դրա հակառակն էլ չէր,– ասում է նա:

Մայրիկը նրա խոսքի վրա բարձրաձայն ծիծաղում է, Էլսան՝ նույնպես: Պապիկի ծիծաղով: Հետո նրանք պառկած երկար խոսում են գերհերոսների մասին: Մայրիկն ասում է Էլսային, որ հիմա, երբ կա մեկը, ում համար նա ավագ քույր է դարձել, պարտավոր է հիշել, որ ավագ քույրը միշտ փոքր քրոջ կամ եղբոր կուռքն է, ինչը մեծ իշխանություն է ենթադրում ու մեծ զորություն:

— Իսկ մեծ զորությանը նաև մեծ պատասխանատվություն է հետևում,– շշնջում է մայրիկը:

Էլսան իսկույն նստում է անկողնում:

— Դու «Սարդ-մարդը» կարդացե՞լ ես:

— Գուգլել եմ,– հպարտ ժպտում է մայրիկը:

Իսկ հետո մեղքի զգացումի ալիք է անցնում նրա դեմքով, ինչպես մայրիկների մոտ, երբ հասկանում են, որ մեծ գաղտնիքը բացելու ժամանակը եկել է:

— Է՛լսա, անո՛ւշս, տատիկի առաջին նամակը քո ստացածը չէր: Քո ստացած նամակից առաջ մի նամակ էլ կար: Տատիկն ինձ էր տվել: Մահանալու նախորդ օրը…

Մայրիկն այնպիսի տեսք ունի, ասես պատրաստվում է ցատկել սառցապատ լճի մեջ, չնայած չի ուզում: Սակայն արդեն կանգնած է կամրջակի վրա, ու բոլորը սպասում են նրա ցատկին, այնպես որ անհնար է ցատկելուց խուսափել: Նրա դեմքին հենց այդպիսի արտահայտություն է: Հնարավոր է, որ մարդ պիտի թերևս մի քանի անգամ հայտնված լինի նման իրավիճակում՝ նրան հասկանալու համար:

Բայց Էլսան ընդամենը հանգիստ գլխով է անում ու բացարձակ անհոգությամբ թոթվում ուսերը: Միայն ներողամտորեն թփթփացնում է մայրիկի այտին, ինչպես վարվում են փոքրիկ երեխայի հետ, որ սխալվել է, քանի որ ավելին չի հասկանում:

— Գիտեմ, մայրի՛կ: Գիտեմ:

Մայրիկը տարակուսած նրան է նայում:

— Հը՞: Այսի՞նքն: Լո՞ւրջ:

Էլսան համբերատար հոգոց է հանում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դե այսինքն, հա՛, մի քիչ ժամանակ էր պետք, որ գլխի ընկնեի, բայց դե, ամեն դեպքում, հո քվանտային ֆիզիկա՞ չէր: Նախ՝ տատիկն այնքան անպատասխանատու չէր, որ ինձ գանձարոսի ուղարկեր՝ առանց քեզ նախօրոք ասելու: Հետո՝ միայն ես ու դու կարող ենք Renault-ը վարել, որովհետև մի քիչ տարբեր է: Դե, ես մեկ-մեկ վարում էի, երբ տատիկը քյաբաբ էր ուտում, դու էլ էիր վարում, երբ տատիկը հարբած էր լինում: Ուրեմն, Բրիտ-Մարիի կայանատեղիում կանգնեցնել կարող էինք միայն ես կամ դու: Ու անողը ես չէի: Հո հիմա՞ր չեմ: Ասենք, կարող եմ էլի հաշվարկել:

Մայրիկն այնքան բարձր է ծիծաղում Էլսայի ասածի վրա, որ նա սկսում է կոլիբրիի համար լրջորեն անհանգստանալ:

— Դու իսկապես խելքի պուտուկ ես, որի նմանը չկա, գիտե՞ս,– ասում է մայրիկը:

— Հա՛, մայրի՛կ: Գիտեմ,– տնքում է Էլսան:

Եվ նա մտածում է, որ ինչքան էլ հաճելի է նման բաներ լսելը, բայց մայրիկին, իրականում, պետք է ավելի հաճախ դուրս գալ ու ավելի շատ մարդկանց հանդիպել:

— Իսկ տատիկը նամակում ի՞նչ էր գրել,– հարցնում է Էլսան:

Մայրիկի շրթունքները ձգվում են:

— Գրում է՝ կներես:

— Որ վա՞տ մայր էր:

— Հա՛:

— Իսկ դու ներե՞լ ես:

Մայրիկը ժպտում է, ու Էլսան նորից նրա այտերն է սրբում գրիֆինդորցիների շարֆով:

— Ոնց որ թե փորձում եմ երկուսիս էլ ներել, բայց ես Renault-ի պես եմ. արգելակային ճանապարհս երկար է,– շշնջում է մայրիկը:

Էլսան փաթաթվում է նրան ու բաց չի թողնում այնքան, մինչև որ կոլիբրին հույսը կտրում է ու գնում ուրիշ գործով զբաղվելու:

— Տատիկդ երեխաների էր փրկում, որովհետև իրեն էլ էին փրկել մանուկ ժամանակ: Ես այդ մասին չէի իմացել: Նամակում էր գրել: Ու ինքն էլ էր առանց ծնողների մեծացել,– շշնջում է մայրիկը:

— Ոնց որ Իքս մարդիկ,– գլխով է անում Էլսան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու արդեն, ենթադրում եմ, գիտես՝ մյուս նամակը ուր է թաքցված,– ժպտում է մայրիկը:

— Ճիշտը «որտեղն» է,– ասում է Էլսան, քանի որ չի կարողանում չուղղել:

Իսկ տեղը, բնականաբար, գիտի: Ամբողջ ընթացքում էլ գիտեր, դե, քանի որ սա այնպիսի հեքիաթ չէ, որի առավելությունը սարսափելի անկանխատեսելի լինելն է: Էլսան էլ, իսկապես, ապուշ հո չէ՞:

Մայրիկը նորից է ծիծաղում: Ծիծաղում է այնպես, որ բուժքույրը ներս է մտնում ու ասում, որ դադարեցնի, թե չէ փողրակները դուրս կթռչեն: Դե, պարզ է, նոր բուժքույր է:

Էլսան տեղից վեր է կենում: Մայրիկը բռնում ու համբուրում է նրա ձեռքը:

— Մենք որոշել ենք, թե ինչ ենք դնելու Կեսիկի անունը: Էլվիր չենք դնի: Ուրիշ անուն ենք մտածել: Յեորգն ու ես միանգամից որոշեցինք, հենց որ նրան տեսանք: Կարծում եմ՝ քեզ դուր կգա:

Մայրիկը ճիշտ էր: Էլսային իրոք դուր եկավ: Շա՜տ, շա՜տ դուր եկավ:

Մի քանի րոպե անց Էլսան կանգնած է փոքրիկ սենյակում ու ապակու միջով նայում է նրան: Նա փոքրիկ պլաստիկե տուփիկի կամ շատ մեծ լանչի տուփի մեջ է: Հեշտ չէ որոշելը: Վրան ամենուրեք փողրակներ են, շրթունքները կապույտ են, իսկ դեմքն այնպիսին է, ասես ամբողջ ընթացքում վազել է կատաղի հակընթաց քամու դեմ, բայց բոլոր բուժքույրերը միաբերան պնդում են, թե ոչ մի վտանգ չկա: Էլսային դա դուր չի գալիս: Նման խոսքերն ապացուցում են, որ հենց այդպես էլ կա:

Նա, ձեռքերը բերանին փողաձև դրած, կպցնում է ապակուն ու շշնջում է այնպես, որ մյուս կողմից լսվի:

— Չվախենա՛ս, Կեսի՛կ: Դու քույրիկ ունես: Ու ամեն ինչ լա՛վ կլինի: Հաստա՛տ:

Հետո շարունակում է գաղտնալեզվով:

— Ես կփորձեմ քեզ չխանդել: Ես շատ երկար եմ խանդել քեզ, բայց հիմա ընկեր ունեմ, անունը՝ Ալֆ, ու Ալֆը կրտսեր եղբայր ունի, որի հետ մի 100 տարի է՝ անհաշտ է: Ես չեմ ուզում, որ մենք մի 100 տարի անհաշտ լինենք: Դրա համար էլ կարծում եմ՝ մենք պիտի հենց սկզբից իրար սիրենք, հասկանո՞ւմ ես:

Կեսիկը կարծես հասկանում է: Էլսան ճակատը հենում է ապակուն:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու համ էլ տատիկ ունես, որ գերհերոս է: Ես քեզ ամեն ինչ կպատմեմ, երբ տուն գնանք: Ափսոս, որ կաթնացիրը համախտանիշով տղային տվեցի, բայց քեզ համար նորը կսարքեմ: Համ էլ քեզ հետս կտանեմ Երկիր-Կիս-Արթուն, ու մենք հրուշակներ կուտենք ու կպարենք ու կծիծաղենք ու կլացենք, ու քաջ կլինենք ու կներենք, նաև ամպէակով կթռչենք, իսկ տատիկը Միամասում, նստարանին նստած, ծխելով մեզ կսպասի: Մի օր էլ պապիկը զբոսնելով կանցնի: Նրա գալը հեռվից է լսվում, որովհետև նա ամբողջ մարմնով է ծիծաղում: Պապիկն այնքան շատ է ծիծաղում, որ երևի նրա համար պիտի ութերորդ թագավորությունը կառուցենք: Գայլսիրտին կհարցնեմ, թե ոնց կլինի նրա մայրիկի լեզվով «Ես ծիծաղում եմ»: Վորսն էլ է այնտեղ՝ Երկիր-Կիս-Արթունում: Դու հաստատ վորսին կսիրես: Նրանից լավ ընկեր ուղղակի չի լինում:

Կեսիկը նրան է նայում պլաստիկե տուփից: Էլսան գրիֆինդորցիների շարֆով սրբում է ապակին:

— Ու դու ընտիր անուն ունես: Ամենալա՛վ անունը: Ես քեզ կպատմեմ մի տղայի մասին, որի անունն են քեզ դրել: Հաստա՛տ կսիրես նրան:

Նա կանգնած է մնում ապակու մոտ, մինչև որ հասկանում է, որ կոլիբրիի գաղափարն իսկապես անհաջող էր՝ անկախ ամեն ինչից: Որոշում է դեռ մի որոշ ժամանակ էլ օգտագործել տարատեսակ հավերժություններն ու ավելի չբարդացնել: Նաև այն պատճառով, որ դրանք տատիկին են հիշեցնում. տատիկին ողջ են պահում:

Մինչև գնալը՝ նա նորից ձեռքերը փողաձև հենում է ապակուն ու գաղտնալեզվով շշնջում Կեսիկին.

— Դու իմ ամենամեծ արկածն ես, Հա՛րրի, ամենա-ամենամեծ արկածը:

Ճիշտ և ճիշտ տատիկի ասածի պես: Ամեն ինչ լավ է լինելու: Հաստա՛տ:

Բժիշկը, որ Էլսային ծանոթ էր թվացել, կանգնած է մայրիկի անկողնու մոտ, երբ Էլսան նորից սենյակ է մտնում: Նա, անշարժ կանգնած, սպասում է, ասես գիտի, որ Էլսային որոշ ժամանակ է պետք մտաբերելու համար, թե որտեղից է նրան հիշում: Եվ երբ ժետոնն ընկնելով՝ վերջապես դիպչում է հիշողության ճիշտ կետին, բժիշկը ժպտում է, ասես այլընտրանք հնարավոր չէր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու ռևիզորն ես,– տարակուսանքով բացականչում է Էլսան ու ավելացնում,– համ էլ քահանան: Եկեղեցում: Ես քեզ տատիկի թաղմանն էի տեսել. դու քահանայի շորերով էիր:

— Ես ինչ ասես, որ չեմ,– հանգիստ պատասխանում է բժիշկը դեմքի այնպիսի արտահայտությամբ, ինչպիսին երբեք չէր ունենում, երբ տատիկը մոտակայքում էր:

— Նաև բժի՞շկ,– հարցնում է Էլսան:

— Նախ և առաջ՝ բժիշկ,– ասում է բժիշկը ու ձեռքը մեկնելով՝ ներկայանում է:

— Մարսե՛լ: Ես տատիկիդ մտերիմ ընկերն էի:

— Է՛լսա,– ասում է Էլսան:

— Ես հասկացա,– ժպտում է Մարսելը:

— Դու տատիկի փաստաբանն ես,– ասում է Էլսան, ինչպես հեռախոսազրույցներից ինչ-որ պատառիկներ մտաբերող մարդը, ասենք, երկրորդ գլխի վերջում:

— Ես ինչ ասես, որ չեմ,– կրկնում է Մարսելն ու Էլսային մի թուղթ մեկնում:

Համակարգչով տպած թուղթ է՝ առանց ուղղագրական սխալների, այսինքն՝ պարզ է, որ գրողը Մարսելն է եղել, ոչ թե տատիկը, բայց ներքևում երևում է տատիկի ձեռագիրը: Մարսելը ձեռքերն ագուցում է կոնքերի առջև, ճիշտ և ճիշտ Բրիտ-Մարիի պես:

— Քո տատիկն էր ձեր շենքի սեփականատերը: Դու երևի թե արդեն գլխի էիր ընկել:

Էլսան գլխով է անում, որովհետև ինքը, իրոք, ապուշ չէ, որ այս ընթացքում չհասկանար: Մարսելը թուղթն է ցույց տալիս:

— Ասել էր, թե պոկերի խաղադրույքում է շահել, բայց ես հաստատ չեմ կարող ասել:

Էլսան կարդում է թուղթը: Շրթունքները փքեցնում է:

— Այսի՞նքն: Հիմա շենքն ի՞մն է: Ամբողջ շե՞նքը:

— Մայրիկդ կտնօրինի այն, մինչև որ քո 18-ը լրանա: Բայց տատիկդ հոգ է տարել, որ դու կարողանաս ուզածդ անել: Թե ուզենաս վաճառել, կարող ես վաճառել: Կարող ես թողնել, ինչպես կա:

Էլսայի ճակատը վերածվում է մի խոր կնճիռի այնպես, ինչպես կարող է ունքերը սրտանց կիտել շուտով ութը լրացող երեխան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրեմն ինչո՞ւ դու բոլորին ասացիր, որ բնակարանները կարող են վաճառվել, եթե բնակիչները համաձայնության գան:

Մարսելն ափերը կամաց իրար է զարկում:

— Եթե դու չհամաձայնես, ուրեմն կստացվի, որ թեկուզ տեխնիկապես բոլորը չեն համաձայնել: Տատիկդ համոզված էր, որ դու կհետևես հարևանների կամքին, եթե բոլորը միևնույն որոշումը կայացնեն, նաև վստահ էր, որ այնպիսի որոշում չես ընդունի, որ բնակիչներից որևէ մեկին վնասի: Դրա համար նա հոգ էր տարել, որ դու լավ ճանաչես բոլոր հարևաններին՝ նախքան կտակը ստանալը:

Նա ձեռքը դնում է Էլսայի ուսին:

— Սա շատ մեծ պատասխանատվություն է, բայց տատիկդ ինձ արգելեց քեզնից բացի որևէ մեկին հանձնել այն: Նա ասաց, որ դու ավելի խելացի ես, քան այդ բոլոր հիմարները՝ միասին վերցրած: Ու միշտ ասում էր, որ թագավորությունը բաղկացած է այնտեղ ապրող մարդկանցից: Ասաց, որ դու կհասկանաս:

Էլսան մատների ծայրերով շոյում է տատիկի ստորագրությունը թղթի ներքևում:

— Ես հասկանում եմ:

— Ես կարող եմ քեզ մանրամասներին ծանոթացնել. պայմանագիրը բավականին բարդ է,– պատրաստակամ առաջարկում է Մարսելը:

Էլսան մի կողմ է տանում դեմքին կախված մազերը:

— Տատիկն էլ առանձնապես պարզ անձնավորություն չէր:

Մարսելը չի դիմանում ու սկսում է անզուսպ հռհռալ: Ուրիշ ի՞նչ կարող ես ասել: Ահավոր բուռն ու բարձր էր ծիծաղի համար: Էլսային շատ է դուր գալիս: Նա չի կարողանում իրեն զսպել ու հարցնում է.

— Դու ու տատիկն իրար հե՞տ էիք,– ուղղակիորեն հարցնում է նա:

— Է՛ԼՍԱ,– կտրուկ ընդմիջում է մայրիկը, ու քիչ է մնում՝ փողրակները դուրս թռչեն իրենց տեղից:

Էլսան նեղացած ձեռքերն է թափ տալիս:

— Յա՛: Չի՞ կարելի ՀԱՐՑ տալ, ի՞նչ է:

Նա հրամայաբար շրջվում է Մարսելի կողմը:

— Հիմա դուք իրար հե՞տ էիք, թե՞ ոչ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մարսելը ձեռքերն իրար է ագուցում: Թախծոտ, բայց երջանիկ գլխով է անում, ինչպես հսկայական պաղպաղակ կերած մարդը, որ գիտակցում է, որ այն վերջացել է:

— Նա իմ կյանքի մեծ սերն էր, Էլսա, ու շատ ուրիշ տղամարդկանց: Ի դեպ, նաև շատ կանանց:

— Իսկ դու տատիկի մեծ սերը չէի՞ր,– հարցնում է Էլսան:

Մարսելը բարկացած չի թվում: Ոչ էլ դառնացած: Միայն խանդ է առկայծում նրա հայացքում, հետո ասում է.

— Չէ՛: Դո՛ւ էիր: Ու միշտ էլ դո՛ւ ես եղել, Էլսա:

Նա քնքշորեն թփթփացնում է Էլսայի այտին, ինչպես մարդը, որ իր կյանքի սիրած կնոջը տեսնում է նրա թոռնուհու աչքերում: Հետո հեռանում է:

Էլսան, մայրիկն ու նամակը լռությունը տրոհում են վայրկյանների, հավերժությունների ու կոլիբրիի թևաբախումների: Մայրիկը դիպչում է Էլսայի ձեռքին ու փորձում է հարցն այնպես հնչեցնել, իբր այն առանձնապես կարևոր չէ, այլ պարզապես հանկարծ մտքով է անցել:

— Իսկ ինձնից ի՞նչ ունես:

Էլսան լուռ է: Մայրիկը դժբախտ է երևում:

— Ես ուղղակի… Հա՛, դե գիտես: Դու ասացիր, թե տատիկից ու հայրիկից ինչ ես ժառանգել, ու ես մտածեցի ուղղակի, դե, ասենք…

Մայրիկը լռում է: Շփոթված է, ինչպես մայրիկները, որոնք հանկարծ պարզում են, որ անցել են կյանքի այն սահմանագիծը, երբ իրենք իրենց դստրիկներից ավելի շատ բան են ուզում, քան դստրիկները՝ իրենցից: Էլսան ափերի մեջ է առնում նրա այտերն ու մեղմորեն ասում է.

— Ընդամենը մնացած ամեն ինչը, մայրի՛կ: Մնացած ամեն ինչը քեզնից է:

Հայրիկն Էլսային մեքենայով տուն է տանում: Audi-ի ստերեո համակարգն անջատում է, որ Էլսային իր երաժշտությունը չպարտադրի, հետո մնում է գիշերելու տատիկի բնակարանում: Պահարանի մեջ են քնում: Ներսից տաշեղների հոտ է գալիս: Այն բավարար մեծ է, որ հայրիկը կարողանա ձգվել և ոտքերի ու ձեռքերի մատներով դիպչել երկու պատերին: Այդ գործում պահարանը, իրոք, վարպետ է:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբ հայրիկը քնում է, Էլսան զգուշորեն դուրս է սողում ու աստիճաններով իջնում է ներքև: Կանգնում է մանկասայլակի առջև, որ դեռևս կապված է մուտքի դռան առաջ: Նայում է պատին փակցված, սև մատիտով լրացված խաչբառին: Ամեն բառում մի տառ կար, որ օգտագործվում էր հաջորդ չորս բառերում: Ու այդ չորս բառերից յուրաքանչյուրում մեկական տառ մուգ վանդակի մեջ էր գրված:

Է.Լ.Ս.Ա.

Էլսան նայում է աստիճանների բազրիքին կապված մանկասայլակի կապի փականին: Այն կոդով է, սակայն չորս պտտվող օղակներում թվերի համակցության փոխարեն տառերի համակցություն պիտի նշվի:

Էլսան գրում է իր անունը, ու փականը բացվում է: Մի կողմ է քաշում մանկասայլակը ու գտնում է տատիկի նամակը Բրիտ-Մարիին:

Պարզ է, որ ինքը սկզբից էլ գիտեր այդ մասին: Ապուշ հո չէ՞ր, որ չհասկանար:

թվայնացրել է 1915.info կայքը

34

ՏԱՏԻԿԸ

Մարդիկ երբեք հրաժեշտ չեն տալիս իրար Երկիր-Կիս-Արթունում: Միայն ասում են՝ մինչև հանդիպում: Այդ երկրի բնակիչների համար դա չափազանց կարևոր է, քանի որ, ըստ նրանց, աշխարհում, իրականում, ոչինչ երբեք վերջնական չի մահանում: Ընդամենը դառնում է պատմություն, ընդամենը մի փոքր քերականական ցատկ է կատարում, փոխում է ժամանակը ներկայից անցյալ: Երկիր-Կիս-Արթունում մարդիկ սիրում են բոլոր ժամանակաձևերը: Հեքիաթներում դրանք նույնքան կարևոր են, որքան կախարդանքն ու թրերը:

Դրա համար էլ Միամասում թաղման արարողությունը կարող է շաբաթներ տևել, քանի որ քիչ արարողություններ կան կյանքում, որոնք թաղումների պես հարմար լինեն պատմություններ պատմելու համար: Առաջին օրը, բնականաբար, վշտի ու կարոտի պատմություններ են, սակայն աստիճանաբար օրերի ընթացքում անցնում են այնպիսի պատմությունների, որոնք առանց ծիծաղի պատմել հնարավոր չէ:

Պատմություններ, թե ինչպես մի անգամ ժամանակ փոխակերպողը, կարդալով մաշկի քսուքի կիրառման հրահանգները, որտեղ խորհուրդ էր տրվում տարածել դեմքին՝ խուսափելով աչքերի շուրջը քսելուց, սարսափելի զայրացած զանգել էր արտադրողին և հայտնել, որ դեմքը, գրո՛ղը տանի, հենց աչքերի շուրջն է գտնվում: Կամ ինչպես էր ժամանակ փոխակերպողը իր ամրոցի խրախճանքի համար ամբողջ կրեմ-բրյուլեն կարամելապատելու համար մի վիշապ վարձել՝ առանց նախապես ստուգելու, որ այն մի լավ մրսած լինի: Կամ ինչպես մի օր ժամանակ փոխակերպողը,

թվայնացրել է 1915.info կայքը

բաց խալաթով իր պատշգամբում կանգնած, մարդկանց վրա էր կրակում փեյնթբոլի հրացանից:

Այսպիսի պատմություններ:

Ու միամասցիներն այնքան բարձր են ծիծաղում այդ պատմությունների ժամանակ, որ պատմությունները, լուսարձակող լապտերներ դարձած, բարձրանում ու ճախրում են գերեզմանի վրա: Հետո բոլոր պատմություն-ները միավորվում են, ու միավորվում են բոլոր ժամանակները: Ծիծաղում են այնքան, մինչև որ ոչ ոք այլևս չկարողանա մոռանալ, որ հենց այդ է մնում մեզնից, երբ մենք հեռանում ենք:

Ծիծաղը:

— Կեսիկը տղա կեսիկ եղավ: Անունն էլ՝ Հարրի,– հպարտորեն պատմում է Էլսան՝ քարի վրայից ձյունը քերելով: — Ալֆն ասում է՝ բախտներս բե-րեց, որ տղա է, թե չէ, ոնց էլ լինի, մեր ցեղի «կնիկների» մոտ «մի ցիլինդրը պարտադիր խփած է լինում»,– քմծիծաղում է նա՝ օդում չակերտներ նկա-րելով ու ձյան վրա խոփի պես հետք թողնելով՝ Ալֆի քայլվածքը նմանա-կելուց հետո:

Սառնամանիքը կսմթում է նրա այտերը: Ինքն էլ նույն կերպ պատասխա-նում է: Հայրիկը բահով մաքրում էր ձյունը՝ հողի վերին շերտը քերելով: Էլ-սան ավելի ձիգ է փաթաթում գրիֆինդորցիների շարֆը: Վորսի աճյունա-փոշին շաղ է տալիս տատիկի գերեզմանի վրա, մոխիրի վրայից էլ հաստ շերտով դարչինով բուլկիների փշուր է լցնում:

Հետո ամուր-ամուր գրկում է շիրմաքարն ու շշնջում է.

— Մինչև հանդիպում:

Հիմա նրանց բոլոր պատմություններն ինքն է պատմելու: Հայրիկի հետ քայլում են դեպի Audi-ն. հայրիկը բռնել է դստեր ձեռքը, իսկ նա արդեն ճամփին առաջին պատմությունն է պատմում: Հայրիկը լսում է: Նա իջեց-նում է ստերեոյի ձայնը՝ նախքան Էլսան ներս կցատկի: Էլսան ուշադիր հորն է նայում:

— Դու տխրեցի՞ր երեկ, երբ ես հիվանդանոցում Յեորգին փաթաթվեցի:

— Չէ՛,– պատասխանում է հայրիկը:

— Ես չէի ուզենա, որ դու տխրեիր,– ասում է Էլսան:

— Ես չեմ տխրել,– ասում է հայրիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկի՞, թեկուզ մի քի՞չ,– սրտնեղած զարմանում է Էլսան:

— Իսկ անպայման պիտի տխրեի՞,– տարակուսած հարցնում է հայրիկը:

— Դե կարող էիր մի քիչ տխրել,– քրթմնջում է Էլսան:

— Դե, մի քիչ տխրեցի,– ասում է հայրիկը, իրոք, մի քիչ տխուր տեսքով:

— Էդքան շատ պետք չէ,– ասում է Էլսան:

— Կներե՛ս,– ասում է հայրիկը՝ մի քիչ շփոթված:

— Դու չպիտի Էնքան տխրես, որ խիղճս սկսի տանջել: Միայն Էնքան, որ չթվա, թե քեզ համար միևնույն է,– բացատրում է Էլսան:

— Ես հենց այդքան եմ տխրել,– ասում է հայրիկը:

— Բայց հիմա իսկի տխուր չես երևում:

— Իսկ գուցե ես ներքո՞ւստ եմ տխուր:

Էլսան որոշ ժամանակ ուշադիր զննում է նրան ու վերջապես համաձայնում է.

— Օքեյ:

Հայրիկը տարակուսած գլխով է անում՝ հաջողեցնելով իրեն զսպել, որպեսզի չհիշեցնի, որ կարիք չկա անգլերեն բառեր գործածել, երբ հրաշալի այլընտրանք կա սեփական լեզվում: Audi-ն մայրուղի է դուրս գալիս: Էլսան բացում ու փակում է պահոցիկը:

— Ինքն օքեյ է: Այսինքն՝ Յեորգը:

— Հա՛,– ասում է հայրիկը:

— Գիտեմ, որ դու էդպես չես կարծում,– առարկում է Էլսան:

— Յեորգը լրիվ օքեյ է,– գլխով է անում հայրիկը՝ ասածը հաստատելով:

— Ուրեմն ինչո՞ւ երբեք միասին Սուրբ ծնունդ չենք նշում,– սրտնեղած մռթմռթում է Էլսան:

— Այսի՞նքն:

— Կարծում եմ՝ դու ու Լիզետը Սուրբ ծնունդին մեզ մոտ չեք գալիս, որովհետև դու Յեորգին չես սիրում:

— Ես Յեորգի դեմ ոչինչ չունեմ:

— Բա՞յց:

— Բա՞յց:

— Բայց ոնց որ ուզում էիր «բայց» ասել: Թվաց, որ հետո «բայց» էիր ասելու,– քթի տակ մռթմռթում է Էլսան:

Հայրիկը հոգոց է հանում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց… Դե Յեորգն ու ես, իհարկե, շատ տարբեր ենք… որպես անհատականություն գուցե: Դե, Յեորգը շատ…

— Ուրա՞խ է:

Հայրիկը նորից տեղը չի գտնում:

— Ուզում էի ասել, որ նա ծայրահեղ բաց մարդ է:

—Իսկ դու՝ ծայրահեղ փա՞կ:

Հայրիկը երկմտելով մատներով թմբկահարում է ղեկին:

— Իսկ հնարավոր չէ՞, որ մայրիկիդ պատճառով լինի,– փորձում է նա:

— Հը՞,– զարմանում է Էլսան:

— Իսկ նույն հաջողությամբ հնարավոր չէ՞, որ մայրիկի՝ Լիզետին չսիրելու պատճառով չգանք Սուրբ ծնունդին:

— Իսկ էդպե՞ս է:

Հայրիկը հոգոց է հանում:

— Չէ՛:

— Լիզետին բոլորը սիրում են,– տեղեկացնում է Էլսան:

— Տեղյակ եմ,– դատապարտված հոգոց է հանում հայրիկը, ինչպես մարդը, որ հիշում է զուգընկերոջ բնավորության ծայրահեղ նյարդայնացնող հատկանիշը:

Էլսան երկար զննում է նրան՝ նախքան հարց տալը:

— Լիզետը դրա՞ համար է քեզ սիրում, որ դու ինքնամփոփ ես:

Հայրիկը ժպտում է:

— Չգիտեմ՝ ինչու է ինձ սիրում, անկեղծ ասած:

— Իսկ դու ն ման սիրո՞ւմ ես:

— Անչա՛փ,– ասում է նա՝ առանց երկմտելու:

Սակայն հետո հայացքում, այնուամենայնիվ, երկմտանք է հայտնվում:

— Ուզում ես հարցնել, թե ինչո՞ւ ես ու մայրիկդ դադարեցինք իրար սիրել:

— Ես հարցնելու էի, թե ո՞նց եղավ, որ սիրեցիք իրար:

— Կարծում ես՝ մեր ամուսնությունը շա՞տ անհաջող էր:

Էլսան ուսերն է թոթվում:

— Ամեն դեպքում, դուք ահավոր տարբեր եք: Ասենք, մայրիկը Apple չի սիրում, իսկ դու «Աստղային պատերազմները» չես սիրում:

— Բայց բազմաթիվ մարդիկ կան, որ չեն սիրում «Աստղային պատերազմները»:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հայրի՛կ, չկա ՈՒՐԻՇ մեկը, որ «Աստղային պատերազմները» չսիրի՝ քեզնից բացի:

Հայրիկը պարտված գլխով է անում:

— Ես ու Լիզետն էլ ենք շատ տարբեր:

— Լիզետը սիրո՞ւմ է «Աստղային պատերազմները»:

— Պիտի խոստովանեմ, որ երբեք չեմ հարցրել:

— Ո՞նց ես հաջողեցրել ՉՀԱՐՑՆԵԼ:

Հայրիկը մտահոգ բութ մատներով ղեկն է շոյում:

— Իսկ ո՞նց է ստացվել, որ միասին եք:

— Որովհետև իրար ընդունում ենք այնպիսին, ինչպիսին կանք, երևի:

— Իսկ դու ու մայրիկը փորձում էիք իրար փոխե՞լ:

Հայրիկը համբուրում է նրա ճակատը:

— Ես ուղղակի անհանգստանում եմ, թե դու երբեմն ինչքան խելացի ես, անո՛ւշս:

Էլսան աչքերն ամուր սեղմում է: Խորը շունչ է քաշում: Ու տրամադրվելով շշնջում է.

— Էն հաղորդագրությունները, հիշո՞ւմ ես, որ մայրիկից ստացար դասերի վերջին օրը՝ արձակուրդից առաջ, որ ինձ պետք չէր վերցնել: Դու կարծում էիր՝ մայրիկն է գրել, բայց ես էի գրել: Խաբեցի, որովհետև պիտի տատիկի նամակներից մեկը փոխանցեի…

— Ես հասկացել էի,– գլխով է անում հայրիկը՝ մատները քնքշորեն տանելով նրա մազերի միջով:

Էլսան, աչքերը կկոցած, կասկածամտորեն նրան է նայում: Նա ժպտում է:

— Դրանք անսխալ էին գրված: Այնպես որ, ես հասկացա:

Ձյունը դեռ գալիս է: Այնպիսի հեքիաթային ձմեռ է, որ կարծես երբեք չի վերջանալու: Երբ Audi-ն կանգ է առնում մայրիկի տան մոտ, Էլսան լուրջ հայացքով հայրիկին է նայում:

— Ես կուզենայի քո ու Լիզետի մոտ ավելի հաճախ մնալ, քան ամեն երկրորդ շաբաթը: Նույնիսկ եթե դուք չեք ուզում:

— Դու, անո՛ւշս… Դու, իհարկե, կարող ես մեզ մոտ մնալ, երբ ուզես,– հանկարծակիի եկած կմկմում է հայրիկը:

— Չէ՛, միայն ամեն հաջորդ շաբաթ և կիրակի օրերին: Ես հասկանում եմ պատճառը, որ ես տարբեր եմ ու խաթարում եմ ձեր ընտանեկան

թվայնացրել է 1915.info կայքը

ներդաշնակությունը, բայց մայրիկն ու Յեորգը հիմա Կեսիկ ունեն: Ու մայրիկը, իրականում, անընդհատ չի կարողանա ամեն ինչ անել, որովհետև ոչ ոք մշտապես կատարյալ լինել չի կարող: Նույնիսկ մայրիկը:

— Ինչ… ընտանեկան ներդաշնակություն խաթարել… որտեղի՞ց վերցրիր,– զարմանում է հայրիկը:

— Դե, ես ինչ-որ բաներ կարդում եմ,– ասում է Էլսան:

Հայրիկի շնչառությունն այնպիսին է, ինչպես մարդ շնչում է ամեն անգամ իր երեխայի հետ ամուսնալուծությունից խոսելիս, անկախ նրանից, թե որքան ժամանակ է անցել: Այնպես է շնչում, ասես իր միջի օդն ուր որ է կվերջանա:

— Ես չէի ուզում քեզ տնից կտրել,– շշնջում է նա:

— Որովհետև չէ՞իր ուզում ինձ մայրիկից կտրել,– հետաքրքրվում է նա:

— Որովհետև մեզնից ոչ մեկը չէր ուզում քեզ տատիկից կտրել,– ասում է հայրիկը:

Վերջին բառերը տարածվում են օդում ու ոչինչ չեն թողնում իրենցից հետո: Փաթիլներն այնքան առատորեն են թափվում Audi-ի ճակատային ապակու վրա, ասես ալեծուփ վարագույր լինեն:

Էլսան բռնում է հայրիկի ձեռքը: Հայրիկն ամուր սեղմում է նրա ձեռքը:

— Ծնողի համար դժվար է ընդունել, որ չի կարող իր երեխային պաշտպանել ամեն ինչից:

— Երեխայի համար էլ է դժվար դա ընդունել,– ասում է Էլսան ու թփթփացնում նրա այտին:

Հայրիկը բաց չի թողնում նրա ձեռքը:

— Ես ամբիվալենտ մարդ եմ և գիտակցում եմ, որ դրա պատճառով վատ հայր եմ: Վախեցել եմ, կարծել եմ, թե կյանքս ու ինքս ինձ ավելի ճիշտ պիտի կազմակերպեմ, նախքան դու սկսես ավելի երկար ժամանակով մեզ մոտ մնալ: Կարծում էի՝ հանուն քեզ է: Երբ ծնող ես, կարծում եմ, ինքդ քեզ համոզում ես, որ ամեն ինչ հանուն երեխայի ես անում: Ու մեզ համար ցավոտ է ընդունելը, որ երեխան չի կանգնելու ու սպասի, ինչ է թե ծնողները ուրիշ գործով են զբաղված…

Նրա կոպերն արագ փակվում են: Ապա բացվում են դանդաղորեն: Էլսայի ճակատը նրա ափին է, երբ շշնջում է.

թվայնացրել է 1915.info կայքը

— Պարտադիր չի կատարյալ հայրիկ լինել, հայրի՛կ: Դու ուղղակի պիտի իմ հայրիկը լինես, ու դու չպիտի թույլ տաս մայրիկին ավելի լավ ծնող լինել միայն նրա համար, որ նա գերհերոս է:

Հայրիկը քիթը թաքցնում է նրա մազերի մեջ:

— Մենք ուղղակի չէինք ուզում, որ դու այն երեխաներից լինեիր, որ երկու տուն ունեն, բայց երկու տեղում էլ իրենց հյուր են զգում,– ասում է հայրիկը:

— Ձեզ ո՞վ է նման բան ասել,– փոթկացնում է Էլսան:

— Դե, կարդում ենք ինչ-որ բաներ,– շշնջում է հայրիկը:

— Այդ աստիճան խելացի լինելով, ինչպես դու ու մայրիկն եք, հաջողեցնում եք երբեմն ահավոր անխելք լինել,– հայտարարում է Էլսան, ապա քմծիծաղով ավելացնում,– բայց մի՛ անհանգստացիր, թե ոնց ես հետս ապրելու, հայրի՛կ: Խոստանում եմ, որ մենք անպայման ինչ-որ ծանձրալի բանով կզբաղվենք:

Հայրիկը գլխով է անում՝ փորձելով շփոթված չերևալ, երբ Էլսան հայտնում է, որ այսօր իր ծննդյան օրը պիտի նրա ու Լիզետի տանը նշեն, քանի որ մայրիկը, Յեորգն ու Կեսիկը դեռ հիվանդանոցնում են: Եվ հայրիկը փորձում է ճնշված չերևալ, երբ Էլսան ասում է, որ արդեն զանգել է Լիզետին ու ամեն ինչ կազմակերպել: Բայց մի փոքր խաղաղվում է, երբ Էլսան նրան խնդրում է, որ ծննդյան հրավիրատոմսերը պատրաստի, քանի որ այդ ժամանակ հայրիկն անմիջապես սկսում է մտածել, թե որ տառատեսակն է հարմար, իսկ տառատեսակները հայրիկի վրա խաղաղեցնող ազդեցություն են գործում:

— Դրանք կեսօրից հետո պիտի պատրաստ լինեն,– ասում է Էլսան, ու հայրիկը խոստանում է, որ կհասցնի:

Դրանք պատրաստ կլինեն մարտի կեսին, բայց դա արդեն ուրիշ պատմություն է: Էլսան ուզում է դուրս ցատկել մեքենայից, բայց մի պահ մտքով անցնում է, որ հիմա, երբ հայրիկը սովորականից ավելի շվարած ու ճնշված է, գուցե ավելի լավ զգա իրեն, եթե մի փոքր իր սիրած սոսկալի երաժշտությունը լսի: Այնպես որ, բարձրացնում է Audi-ի ստերեոյի ձայնը, բայց երաժշտություն չի լսվում, ու հաստատ մի երկու-երեք էջ պիտի տևի, մինչև Էլսան հասկանա, թե ինչ է լսածը:

— Սա «Հարրի Փոթերն ու փիլիսոփայական քարի» վերջին գլուխն է,– վերջապես արտաբերում է նա:

— Աուդիոգիրք է,– քաշվելով բացատրում է հայրիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան հայացքը չի կտրում ստերեոհամակարգից: Հայրիկի ձեռքերն ամուր բռնել են ղեկը, չնայած մեքենան չի շարժվում:

— Երբ դու փոքրիկ էիր, մենք միշտ միասին էինք կարդում: Ես միշտ գիտեի, թե երբ ո՛ր գլխի վրա ենք կանգ առել: Բայց հիմա դու շատ արագ ես կարդում: Ես էլ կարդացածիդ հետևից չեմ հասցնում: «Հարրի Փոթերը», երևում է, քեզ համար շատ մեծ նշանակություն ունի, ու ես ուզեցի հասկանալ այն, ինչ կարևոր է քեզ համար,– ասում է նա՝ հայացքը ղեկին հառած ու շիկնելով:

Էլսան լուռ է: Հայրիկը հազալով կոկորդն է մաքրում:

— Իրականում, մի քիչ ափսոսում եմ, որ դու հիմա լավ ես Բրիտ-Մարիի հետ, թե չէ գիրքը լսելու ընթացքում հանկարծ մտքովս անցավ, որ կարող ենք նրան առիթի դեպքում անվանել «նա, ում անունը չեն տալիս»: Մտածեցի՝ հաստատ կծիծաղես…

Եվ, իրոք որ, ափսոս է, մտածում է Էլսան, քանի որ հայրիկը կյանքում այդքան սրամիտ բան չէր ասել: Համ էլ հայրիկը, կարծես զրույցից մի փոքր ոգևորված, ուրախ, իրեն ոչ բնորոշ շարժումով ցույց է տալիս ստերեոյի կողմն ու ասում.

— Գիտեի՞ր, որ Հարրի Փոթերի մասին ֆիլմ կա:

Էլսան ներողամտորեն թփթփացնում է նրա այտին:

— Հայրի՛կ: Ես քեզ սիրում եմ: Իհարկե, գիտեմ: Հո լուսնից չե՞ս ընկել:

— Գիտեի՞ր,– զարմացած հարցնում է հայրիկը:

— Բոլորը գիտեն, հայրի՛կ:

Հայրիկը գլխով է անում, բայց այլևս շփոթված չի երևում: Կարելի է ասել՝ գրեթե հանգիստ է:

— Ես ֆիլմեր շատ չեմ դիտում, բայց գուցե կարո՞ղ ենք մի օր ես ու դու Հարրի Փոթերի ֆիլմը դիտել: Շա՞տ երկար է:

— Յոթ գիրք է, հայրի՛կ, և ութ ֆիլմ,– զգուշորեն ասում է Էլսան:

Եվ հայրիկը նորից չափազանց, չափազանց լարված է երևում:

Էլսան փաթաթվում է նրան ու դուրս է ցատկում Audi-ից: Ձյունն արևից պսպղում է: Ալֆը, բահը ձեռքին, դռան շուրջը պտտվում է՝ քստքստացնելով իր կոշիկների մաշված ներբաններով: Էլսայի մտքին Երկիր-Կիս-Արթունի ավանդույթն է, երբ մարդիկ նվերներ են տալիս իրենց ծննդյան օրը, ու որոշում է, որ Ալֆին մյուս տարի մի զույգ կոշիկ կնվիրի: Ոչ այս անգամ, քանի որ նա այս տարի էլեկտրական պտտուտակահան է ստանալու:

թվայնացրել է 1915.info կայքը

Բրիտ-Մարիի դուռը կրնկի վրա բաց է: Նրա հագին ծաղկավոր բաճկոնակն է՝ կրծքազարդը վրան: Էլսան հայելու մեջ տեսնում է՝ ինչպես է նա ննջասենյակում հարդարում անկողինը: Շեմքի առջև երկու ճամպրուկ է: Բրիտ-Մարին ծածկոցի վերջին ծալքն էլ է ուղղում, խոր հոգոց հանում ու շրջվելով գնում է նախասենյակ:

Նա նայում է Էլսային: Էլսան էլ նրան է նայում, ու երկուսն էլ չգիտեն, թե ինչ ասեն, երբ հանկարծ միաժամանակ բացականչում են.

— Ես նամակ ունեմ քեզ տալու:

Հետո նորից միաժամանակ բացականչում են. Էլսան՝ հը՞, իսկ Բրիտ-Մարին՝ ի՞նչ: Իսկ հետո մի փոքր խառնաշփոթ է առաջանում:

— Ես քեզ նամակ եմ բերել տատիկից: Այն ամուր փակցված էր գետնին՝ հենց մանկասայլակի տակ՝ աստիճանների վրա,– ասում է Էլսան:

— Հա՞, լա՛վ: Ես էլ քեզ նամակ ունեմ տալու, այո՛: Լվացքատանը գտա՝ չորացնող մեքենայի ֆիլտրի արանքում,– ասում է Բրիտ-Մարին:

Էլսան, գլուխը թեքած, նրան է նայում, ապա ճամպրուկներին:

— Ինչ-որ տե՞ղ ես գնում:

Բրիտ-Մարին ձեռքերը նյարդայնացած իրար է ագուցում կոնքերի առջև: Թվում է, թե անտեսանելի բան է ուզում թափ տալ Էլսայի բաճկոնից:

— Այո՛:

— Ո՞ւր,– հարցնում է Էլսան:

— Չգիտեմ,– խոստովանում է Բրիտ-Մարին:

— Իսկ լվացքատանն ի՞նչ էիր անում,– զարմանում է Էլսան:

Բրիտ-Մարիի բերանը սեղմվում է:

— Մինչև ճամփորդության մեկնելդ անկողինդ չհարդարե՞ս կամ չորացնող մեքենայի ֆիլտրը չմաքրե՞ս, Է՛լսա: Իսկապես, չի՛ կարելի: Բա որ ինձ մի բա՞ն պատահի ճամփորդելիս: Ես հո չե՞մ կարող թույլ տալ, որ մարդիկ կարծեն, թե ես ինչ-որ վայրենիի մեկն եմ, որ անկողինները չի հարդարում: Չէ՛, ո՞նց կլինի:

Էլսան քմծիծաղում է: Բրիտ-Մարին չի արձագանքում, բայց Էլսան մտածում է, որ գուցե, ամեն դեպքում, քմծիծաղում է ներքուստ:

— Դո՞ւ էիր երգում հարբեցողի համար ամեն անգամ, երբ նա գիշերները գոռգոռում էր աստիճանահարթակում:

— Կներե՞ս,– չհասկանալու է տալիս Բրիտ-Մարին:

Էլսան ուսերն է թոթվում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ամեն անգամ, երբ հարբեցողն աստիճանների վրա էր լինում, ես մի երգ էի լսում, որից նա հանդարտվում ու գնում էր: Քո մայրիկը երգչուհի էր: Ես էլ չեմ հավատում, որ երգողը հարբեցողն էր: Մի քիչ մտածես՝ ամեն ինչ պարզ կլինի: Ես հո ապո՞ւշ չեմ:

Բրիտ-Մարին ավելի ամուր է սեղմում ձեռքերը: Նյարդայնացած տրորում է սպիտակ գիծը, որի տեղում առաջ ամուսնական մատանին էր:

— Չի կարելի թույլ տալ, որ բնակվարչության անդամները գիշերով հարբած աստիճանավանդակով թրև գան, Է՛լսա: Իսկապես, քաղաքակիրթ մարդու պահվածք չէ: Համ էլ Դավիդն ու Փերնիլան փոքր ժամանակ սիրում էին, երբ ես նրանց քնեցնելիս երգում էի այդ երգը: Հիմա պարզ է, որ չեն հիշում, բայց առաջ շատ էին սիրում, երբ ես երգում էի, այո՛, իսկապես:

— Դու իսկի էլ ոտքից գլուխ շունչանորդի չես, Բրի՛տ-Մարի,– ժպտում է Էլսան:

— Շնորհակալ եմ,– ասում է Բրիտ-Մարին անվճռական, ասես շատ բարդ հարց է:

Ապա նրանք փոխանակում են նամակները: Էլսայի նամակի վրա գրված է «Էլսա», իսկ Բրիտ-Մարիի նամակի վրա՝ «ՓՆԹՓՆԹԱՆԻՆ»: Բրիտ-Մարին սկսում է բարձրաձայն կարդալ իր նամակն Էլսայի համար, նույնիսկ խնդրելու կարիք չի լինում: Բրիտ-Մարին այդ գործում լավ է:

Նամակը, բնականաբար, բավականին երկար է: Տատիկը, առհասարակ, մարդկանցից ներողություն խնդրելու պատճառներ շատ ուներ, բայց ոչ մեկը այդ առումով չէր կարող նույնիսկ մոտ կանգնել Բրիտ-Մարիին, որից ներողություն խնդրելու պատճառների հսկայական քանակ էր կուտակվել տարիների ընթացքում: Մի «կներես»՝ ձնեմարդի պատմության համար: Մի «կներես»՝ չորացնող մեքենայի ֆիլտրում բրդի գնդիկների համար: Մեկն էլ՝ պատշգամբից փեյնթբոլի հրացանով Բրիտ-Մարիին պարզապես «փորձնական» կրակելու համար: Մի անգամ հաջողեցրել էր Բրիտ-Մարիի հետույքին կրակել, երբ նա իր ամենագեղեցիկ կիսաշրջազգեստով էր: Իսկ թանաքաբիծը, բնականաբար, կրծքազարդով թաքցնել չի լինի, երբ այն հետույքի վրա է, քանի որ քաղաքակիրթ մարդիկ հետույքի վրա կրծքազարդ չեն կրում: Տատիկը գրում է, որ միայն հիմա է հասկացել:

Բայց ամենամեծ ներողությունը նամակի վերջում է հնչում: Երբ Բրիտ-Մարին պիտի բարձրաձայն կարդա այդ հատվածը, բառերն ասես մնում

թվայնացրել է 1915.info կայքը

են նրա կոկորդում, այնպես որ Էլսան ստիպված է լինում առաջ ձգվել, որ ինքը կարդա:

«Կներես, վոր ես յերբեք չեմ ասել քեզ, վոր դու շատ ավելիին էս արժանի, քան Քենթը: Իսկականից: Նույնիսկ եթէ անհույս վիուկի մեկն ես»:

Բրիտ-Մարին խնամքով ծալում է նամակը ճշգրտորեն նույն ծալքերով, ապա նայում է Էլսային՝ փորձելով ժպտալ սովորական մարդու պես:

— Դե, տատիկդ շատ էլ ճշգրիտ չէր հետևում ուղղագրական կանոններին, իսկապես, ամենևին չէր հետևում:

— Դե հա՛, քիչ է՝ ագռավի չանչեր են, հետն էլ՝ ագռավի ուղղագրություն,– պատասխանում է Էլսան:

Եվ այդ խոսքի վրա Բրիտ-Մարին ժպտում է համարյա ամենասովորական մարդու պես: Էլսան թփթփացնում է նրա թևին:

— Տատիկը գիտեր, որ դու կլուծես պատի խաչբառը:

Բրիտ-Մարին բացակա հայացքով մատները քսում է տատիկի նամակին:

— Ի՞նչ իմացար, որ ես եմ:

— Որովհետև հասարակ մատիտով էր գրված: Տատիկը միշտ ասում էր, որ դու երբեք չես կարող անկողինները չհարդարած ճամփորդության գնալ, ինչպես նաև չես կարող գրիչով խաչբառ լուծել, եթե միայն դրանից առաջ մի երկու գավաթ գինի չես խմել: Իսկ ես քեզ գինի խմելիս երբեք չեմ տեսել:

Բրիտ-Մարին անտեսանելի փշուրներ է թափ տալիս տատիկի նամակից ու անկոտրում իրենն է պնդում.

— Գուցե ջնջելու կարիք լինի: Մենք հո բարբարոսնե՞ր չենք:

— Չէ՛, չէ՛, ի՞նչ բարբարոս, իհարկե չենք,– հեգնում է Էլսան:

Հետո մատով ցույց է տալիս Բրիտ-Մարիի ձեռքի ծրարը: Մեջն ուրիշ բան էլ կա: Մի բան, որ զրնգում է: Բրիտ-Մարին թեթևակի բացում է ծրարի ծայրն ու գլուխն իջեցնելով՝ զգուշորեն նայում է մեջը՝ ասես վախենալով, որ տատիկն անձամբ ուր որ է դուրս կցատկի ու կգոռա՝ ԲՈՈՈՈՈՈՈՀ:

Իսկ հետո ձեռքը մտցնում է մեջն ու հանում տատիկի ավտոմեքենայի բանալիները:

թվայնացրել է 1915.info կայքը

Էլսան ու Ալֆն օգնում են նրան ճամպրուկների հարցում: Renault-ի շարժիչն առաջին իսկ փորձից միանում է: Բրիտ-Մարին շատ խորը շունչ է քաշում, ինչպիսին Էլսան երբեք չէր պատկերացնում, որ մարդն ունակ է: Էլսան ուղևորի դռնից մտցնում է գլուխն ու բղավում է՝ շարժիչի աղմուկը խլացնելով.

— Ես սիրում եմ սառնաշաքար ու կոմիքսներ:

Բրիտ-Մարին կարծես փորձում է պատասխանել, սակայն կոկորդում ինչ-որ բան խանգարում է: Էլսան ժպտալով ուսերն է թոթվում ու ավելացնում.

— Ուղղակի ասացի: Եթե մի օր ունենաս, նկատի ունեցիր:

Բրիտ-Մարին իրական կաթիլներ է թափ տալիս ծաղկավոր բաճկոնակի վրայից: Էլսան դուռը փակում է: Իսկ հետո Բրիտ-Մարին քշում է: Թե ուր, չգիտի: Բայց նա կտեսնի աշխարհը ու կզգա քամու խաղը մազերի մեջ: Ու բոլոր խաչբառերն այսուհետև գրիչով կլուծի:

Բայց դա էլ, ինչպես լինում է հեքիաթներում, բոլորովին այլ պատմություն է:

Ալֆը մնում է կայանատեղիում կանգնած ու երկար նայում է նրա հետևից, մինչև որ մեքենան անհետանում է տեսադաշտից: Ապա ձյուն է մաքրում ամբողջ երեկո ու հաջորդ առավոտվա մեծ մասը:

Էլսան նստած է տատիկի պահարանում: Պահարանից տատիկի հոտն է գալիս: Ամբողջ տնից տատիկի հոտն է գալիս: Տատիկի տունը մի տեսակ առանձնահատուկ է, որ մարդ նույնիսկ տասը, քսան կամ երեսուն տարի անց հիշում է այդ հոտը: Ու տատիկի վերջին բոլոր նամակներով ծրարը նույնպես տան հոտն ունի՝ ծխախոտի ու կապիկի, սուրճի, գարեջրի ու շուշանների, մաքրող միջոցների, կաշվի ու ռետինի, օճառի, ալկոհոլի, սպիտակուցային սալիկների, անանուխի, գինու ու փայտի տաշեղների, փոշու, դարչինով թխվածքի, ծխի ու կեքսի խմորի, հագուստի խանութի, մոմի ու տաք շոկոլադի, խոնավ լաթի, հրուշակների, եղևնու, պիցցայի ու գլյոգի, կարտոֆիլի, մերենգայի, օծանելիքի, գետնանուշով տորթի, պաղպաղակի ու փոքրիկ բալիկի: Դրանք տատիկի բույրն ունեն: Ամենալավ բույրը, ինչպիսին կարող էր ունենալ մեկը, որ խենթ էր ամենադրական իմաստով:

թվայնացրել է 1915.info կայքը

Ծրարի վրա գրեթե կանոնավոր տառերով է գրված Էլսայի անունը, ու երևում է, որ տատիկն իսկապես բավական ջանք է գործադրել՝ նամակում ամեն ինչ ճիշտ գրելու համար: Չնայած առանձնապես չի ստացվել:

Իսկ նամակի առաջին բառերն էին. «Կներես, որ ես պիտի մեռնեմ»:

Եվ այդ օրն Էլսան ներում է տատիկին դրա համար:

թվայնացրել է 1915.info կայքը

ԷՊԻԼՈԳ

(Ով չգիտի, թե «էպիլոգը» ինչ է,
թող կարդա Վիքիպեդիայում:) ©

Էլսա ասպետին

Կներես, վոր պիտի մեռնեմ: Կներես, վոր մեռնում էմ: Կներես, վոր ծերացել էմ: Կներես, վոր լքում էմ քեզ ու կներես էդ գրողի տարած քաղցկեղի համար: Կներես, վոր ավելի հաճախ շունչանորդի էմ եղել, քան չէմ եղել: Ես սիրում էմ քեզ 10,000 հեքիաթի հավերժության չափ: Կպատմե՛ս բոլոր հեքիաթները Կեսիկին ու կպաշտպանե՛ս ամրոցը: Պաշտպանի՛ր ընկերներիդ, որովհետև նրանք էլ քեզ էն պաշտպանելու: Ամրոցը հիմա քոնն է: Քեզնից ավելի քաջը, խելոքը և ուժեղը չկա: Դու մեզնից բոլորից ավելի լավն էս: Մեծացի՛ր, տարբերվո՛ղ եղիր ու թող վոչ վոք չասի, թե բոլորի պե՛ս վարվիր, որովհետև բոլոր սուպերհերոսները բոլորին նման չէն: Իսկ թե կռիվ անեն հետդ, խփի՛ր դրանց անջատիչին: Ապրի՛ր ու ծիծաղի՛ր ու երազի՛ր ու նոր հեքիաթներ բե՛ր հետդ Միամաս: Ես էնտեղ էմ սպասելու: Գուցե պապիկտ էլ: Ի՞նչ իմանամ: Սա իմ ամենամեծ արկածն է լինելու: Կներես, վոր խենթ էի: Սիրում էմ քեզ: Գրո՛ղը տանի, ինչքա՜ն էմ քեզ սիրում:

Տատիկի ուղղագրությունն ուղղակի սպանում է:

Իրոք որ, հեքիաթների ամենադժվար մասն էպիլոգներն են: Հաստա՛տ: Որովհետև վերջաբանում պիտի լինեն բոլոր հարցերի պատասխանները, իսկ եթե հեքիաթասացը շատ հմուտ չէ կամ, ասենք, մի քիչ հոգնած կամ

թվայնացրել է 1915.info կայքը

սոված է, այդ դեպքում վերջաբանն ավելի շուտ բազմաթիվ նոր հարցեր է առաջացնում: Մի կողմից՝ կարելի է ասել, հեքիաթի ավարտից հետո հերոսների կյանքն ահավոր բարդանում է, բայց մյուս կողմից՝ թերևս ընդհակառակը: Քանի որ կյանքն իրականում միաժամանակ ահավոր բարդ է ու ահավոր պարզ: Դրա համար էլ գոյություն ունեն անթիվ-անհամար Facebook-յան ստատուսները:

Էլսան իր ութերորդ տարեդարձը նշում է հայրիկի ու Լիզետի մոտ: Հայրիկը երեք բաժակ գլյոգ է խմում ու տոնածառի պարն է պարում: Կամ, լա՛վ, պարելու պես մի բան: Լիզետն ու Էլսան «Աստղային պատերազմներն» են դիտում: Լիզետը բոլոր երկխոսություններն անգիր գիտի: Համախտանիշով տղան ու նրա մայրիկը նույնպես այնտեղ են ու անընդհատ ծիծաղում են, քանի որ վախերը ծիծաղով են հաղթահարում: Մոդը թխվածք է թխում, Ալֆի տրամադրությունն ընկած է, իսկ Լենարտը Լիզետին ու հայրիկին նոր սրճեփ է նվիրում: Որովհետև նկատել էր, որ Լիզետի ու հայրիկի սրճեփն ահավոր շատ կոճակներ ունի, իսկ Լենարտինն ավելի լավն է, քանի որ ընդամենը մի կոճակ պիտի սեղմես: Երևում է, որ հայրիկը շատ բարձր է գնահատում նրա նվերը:

Ամեն ինչ լավ կլինի: Հաստա՛տ:

Հարրիին մկրտում են փոքրիկ մատուռում, որի բակի գերեզմանատանը թաղված են տատիկն ու վորսը: Մայրիկը պնդել էր, որ դռները բաց մնան՝ չնայած դրսի սառնամանիքին, որ բոլորը կարողանան տեսնել:

— Իսկ տղային ի՞նչ ենք անվանակոչելու,– հարցնում է քահանան, որը նաև ռևիզոր է, փաստաբան, բժիշկ ու նաև, պարզվում է, մեկ-մեկ աշխատում է որպես գրադարանավար:

— Հարրի,– ասում է մայրիկը:

Քահանան գլխով է անում ու աչքով անում Էլսային:

— Իսկ երեխան կնքահայր և կնքամայր ունի՞:

Էլսան բարձրաձայն փնչացնում է:

— Կնքահոր ու կնքամոր կարիք չկա: Նա մեծ քույր ունի:

Ասում է՝ իմանալով, որ իրական աշխարհի մարդիկ նման բաներ չեն հասկանում: Իսկ Միամասում մկրտվելիս կնքահայր ու կնքամայր չեն ունենում, փոխարենը ծիծաղեցնողներ են ունենում: Ծնողներից, տատիկից ու որոշ անձանցից բացի, որոնց Էլսայի տատիկն այնքան էլ

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

կարևոր չէր համարում այս մասին Էլսային առաջին անգամ պատմելիս, Միամասում ծիծաղեցնողները երեխայի կյանքում ամենակարևոր անձինք են: Ծիծաղեցնողներին, բնականաբար, ծնողները չեն ընտրում, քանի որ չափազանց կարևոր առաքելություն է, որը ոչ թե ծնողների պես անգետների ընտրությանն են թողնում, այլ հենց անձամբ երեխայի: Այսպիսով, երբ Միամասում երեխա է ծնվում, ընտանիքի բոլոր ընկերները հավաքվում են օրորոցի շուրջը ու սկսում են պատմություններ պատմել, ծամածռություններ անել, երգել, պարել, կատակել, և նա, ով առաջինն է կարողանում երեխային ծիծաղեցնել, դառնում է նրա ծիծաղեցնողը: Միամասում երեխայի ծիծաղն անսխալական է համարվում, իսկ ծիծաղեցնողն անձամբ պատասխանատու է, որ հնարավորին չափ հաճախ ու լիաթոք ծիծաղ առաջացնի, այն էլ երեխայի ծնողների համար անհարմար իրավիճակներում: Այս պարտականությանը միշտ ամենայն լրջությամբ են վերաբերվում:

Էլսան, իհարկե, գիտի, որ բոլորն իրեն ասելու են, թե Հարրին շատ փոքր է՝ հասկանալու համար, որ ավագ քույր ունի: Բայց երբ նայում է իր գրկի մանկիկին, հասկանում է, որ իրենք երկուսով շատ էլ լավ գիտեն, թե նա երբ ծիծաղեց առաջին անգամ:

Նրանք միասին վերադառնում են տուն, ու շենքի բնակիչները շարունակում են ապրել իրենց կյանքով: Երկու շաբաթը մեկ Ալֆն իր տաքսիով Մոդին ու Լենարտին տանում է մի մեծ շինության մոտ, որտեղ նրանք, մի փոքրիկ սենյակում նստած, բավականին երկար սպասում են: Եվ երբ փոքրիկ դռնից երկու խոշորամարմին հսկիչների հետ ներս է մտնում Սեմը, Լենարտը սուրճն է հանում, իսկ Մոդը՝ իր հրուշակները, քանի որ ամենակարևորը հրուշակներն են:

Ու հաստատ բազմաթիվ մարդիկ կգտնվեն, որ կասեն, թե Մոդն ու Լենարտը չպիտի այդպես անեին: Չպիտի գնային այդտեղ: Մարդիկ, որ կարծում են, թե Սեմի նմաններն իսկի ապրելու իրավունք չունեն, էլ ուր մնաց՝ հրուշակ ուտելու: Եվ այդ մարդիկ թերևս ճիշտ են ու թերևս միաժամանակ սխալ են, որովհետև ամենևին հեշտ չէ որոշելը: Բայց Մոդն ասում է, որ ինքը նախ և առաջ տատիկ է, հետո՝ սկեսուր ու երրորդ տեղում՝ մայր, ու ինքը վարվում է տատիկի, սկեսուրի ու մոր պես: Նրանք պայքարում են հանուն բարու: Լենարտը սուրճ է խմում ու հավանություն տալիս նրա

թվայնացրել է 1915.info կայքը

ասածին, իսկ Սամանթայի ներկայությամբ շարունակում է սուրճը «մեծական ըմպելիք» անվանել: Իսկ Մոդը թխում է իր հրուշակները, որովհետև երբ խավարը խտանում է այնքան, որ անհնար է դիմանալ, և շրջապատում փլվում ու կոտրվում են առարկաներ, որ անհնար է նորոգել, այդ ժամանակ Մոդին հրուշակներից բացի ուրիշ զենք չի մնում պայքարելու:

Ու նա զբաղվում է դրանով: Օրեցօր: Հրուշակ-հրուշակ: Ու կարելի է մտածել, որ այդպես ճիշտ է, ու կարելի է մտածել, թե այդպես սխալ է: Ու անկախ ամեն ինչից՝ երկու տեսակետն էլ ճիշտ են, որովհետև կյանքը միաժամանակ շատ բարդ է ու շատ պարզ:

Թխվածքներն էլ հենց դրա համար են:

Գայլսիրտը տուն է վերադառնում Սուրբ ծնունդի երեկոյան: Ոստիկանությունը որոշում է, որ նրա արածն ինքնապաշտպանություն էր, չնայած բոլորն էլ գիտեին, որ իսկի էլ իրեն չէր պաշտպանում: Հավանաբար, այս դեպքում էլ և՛ ճիշտ է, և՛ սխալ:

Նա շարունակում է ապրել իր բնակարանում: Ջինսով կինն էլ ապրում է իր բնակարանում: Նրանք անում են այն, ինչ կարող են՝ իրենց կարողացածի չափով: Սովորում են ապրել իրենք իրենց հետ: Փորձում են ապրել սոսկ գոյատևելու փոխարեն: Գնում են հանդիպումների, պատմում են իրենց պատմությունները, այլապես պարզապես շնչահեղձ կլինեն: Ու հայտնի չէ՝ արդյոք այդ ճանապարհը կվերականգնի՞ այն, ինչ կոտրվել է իրենց մեջ, սակայն, ամեն դեպքում, գոնե ինչ-որ ճանապարհ է: Նրանք ամեն կիրակի ճաշում են Էլսայի ու Հարրիի, մայրիկի ու Յեորգի մոտ: Շենքի մյուս բոլոր բնակիչներն էլ: Երբեմն կանաչ աչքերով կին-ոստիկանն է միանում նրանց: Նա արտակարգ լավ է պատմություններ պատմելուց: Համախտանիշով տղան դեռ չի խոսում, բայց բոլորին սովորեցնում է՝ ինչպես հիասքանչ պարեն:

Ալֆը մի առավոտ ծարավի զգացողությունից արթնանում է: Վեր է կենում, սուրճ լցնում, ու նորից մահճակալի մոտ գնալիս դուռը թակում են: Բացում է: Մի մեծ կում է անում: Հայացքը հառում է եղբորը: Քենթը, անթացուպի վրա հենված, կանգնած նրան է նայում:

— Ես ահավոր տխմարի մեկն եմ,– քրթմնջում է նա:

— Հա՛,– ասում է Ալֆը:

թվայնացրել է 1915.info կայքը

Քենթի մատներն ավելի լարված են սեղմում անթացուպը:

— Իմ ձեռնարկությունը վեց ամիս առաջ սնանկացել է:

Այնպիսի բացարձակ լռություն է տիրում, որ լրացնում է ամբողջ կյանքում նրանց միջև եղած վեճերն ու տարաձայնությունները: Ինչպես եղբայրների միջև:

— Սուրճ կուզե՞ս,– վերջապես գռմռում է Ալֆը:

— Եթե պատրաստ ունես,– գռմռում է Քենթը:

Հետո նրանք սուրճ են խմում, ինչպես եղբայրներն են անում: Նստում են Ալֆի խոհանոցում ու համեմատում են Բրիտ-Մարիի բացիկները, որովհետև նա ամեն շաբաթ երկուսին էլ գրում է, ինչպես Բրիտ-Մարիի պես կինը կարող է անել:

Շենքի բոլոր բնակիչներով շարունակում են ամեն ամիս հավաքվել առաջին հարկի հանդիպումների սենյակում կայացող բնակվարչության ժողովներին: Ու շարունակում են ամեն անգամ բուռն վիճել, որովհետև, ի վերջո, սովորական մի շենք է: Իրո՛ք: Ու ո՛չ տատիկը, ո՛չ Էլսան չէին ուզի, որ այլ կերպ լիներ:

Ծննդյան արձակուրդն ավարտվում է, ու Էլսան գնում է դպրոց: Նա ամուր կապում է կոշիկների քուղերն ու ձգում ուսապարկի գոտիները, ինչպես անում են Էլսայի նման երեխաներն արձակուրդից հետո դպրոց գնալիս: Բայց նույն օրը նրանց դասարան նորեկ է գալիս՝ Ալեքսը, որ նույնպես ուրիշ է: Նրանք անմիջապես ընկերանում են, ինչպես կարող են միայն նորաթուխ ութ տարեկանները, որ այլևս ոչ մեկից չեն փախչում: Երբ այդ կիսամյակում առաջին անգամ նրանց կանչում են տնօրենի մոտ, Էլսան ներկայանում է կապտուկով, իսկ Ալեքսը՝ դեմքին քերծվածքներով: Երբ տնօրենը հառաչում է ու ասում Ալեքսի մայրիկին, որ Ալեքսը պետք է փորձի հարմարվել, Ալեքսի մայրիկը քիչ է մնում՝ գլոբուսը վրան շպրտի: Բայց Էլսայի մայրիկը նրանից առաջ է ընկնում:

Էլսան հավերժ կսիրի նրան այդ արարքի համար:

Անցնում է մի քանի օր, գուցե մի քանի շաբաթ: Սակայն կամաց-կամաց դպրոցի բակում ու միջանցքներում ուրիշ տարբերվող երեխաներ են

թվայնացրել է 1915.info կայքը

սկսում միանալ Ալեքսին ու Էլսային: Նրանք այնքան են շատանում, որ ոչ ոք այլևս չի համարձակվում նրանց հալածել, մինչև որ նրանք իրենց բանակն են կազմում: Որովհետև երբ տարբերվողները բավականին մեծաքանակ են, այլևս ոչ ոք նորմալ չի կարող համարվել:

Աշնանը համախտանիշով տղան է գնում դպրոց: Երբ դպրոցում դիմակահանդես է լինում, նա ներկայանում է արքայադստեր շորերով: Ավագ տղաների մի խումբ այնքան է ծաղրում նրան, որ նա սկսում է լաց լինել: Էլսան ու Ալեքսը, այդ տեսնելով, տանում են նրան կայանատեղի, ու Էլսան զանգում է հայրիկին: Նա գալիս է մի պայուսակ լիքը նոր զգեստներով:

Երբ երեխաները նորից միանում են պարահանդեսին, Էլսան ու Ալեքսը նույնպես արքայադստեր հանդերձանքով են լինում՝ Սարդ-մարդ-արքայադստեր հանդերձանքով:

Եվ, անշուշտ, դառնում են տղայի գերհերոսները:

Որովհետև բոլոր յոթ տարեկանները վաստակել են իրենց գերհերոսներին:

Իսկ ով համաձայն չէ, ուղղակի անհույս անխելքի մեկն է:

թվայնացրել է 1915.info կայքը

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Նեդային: Ես դեռևս փորձում եմ միշտ ծիծաղեցնել քեզ: Չմոռանա՛ս: Տխրում եմ լոգարանի հատակի թաց սրբիչների համար: عاشقتم («աշեղեթամ» պարսկերեն նշանակում է՝ սիրահարված եմ քեզ):

Մայրական տատիկին, որ մի կաթիլ իսկ խենթ չէ, բայց ամեն յոթ տարեկանի երազած աշխարհի ամենահամեղ հրուշակներն է թխում:

Հայրական տատիկին, որ միշտ ամենաշատն էր հոգնում իրենից:

Քրոջը, որ առյուծից ուժեղ է:

Մայրիկին, որ իրեն կարդալ է սովորեցրել:

Աստրիդ Լինդգրենին, որ սովորեցրեց սիրել ընթերցանությունը:

Իր մանկության բոլոր գրադարանավարներին, որ տեսան բարձրությունից վախեցող տղային ու թևեր տվեցին նրան:

Շնորհակալություն նաև՝

իմ Օբի-Վան Նիքլաս Նաթ օք Դագին: Իմ խմբագիր Յոն Հեգբլումին: Գործակալիս՝ Յոնաս Աքսելսոնին: Լեզվական օժանդակության համար՝ Վանյա Վինտերին: Ֆրեդրիկ Սյոդերլունդին՝ Հիմիկին փոխառելու համար: Յոհան Զիլենին, որ առաջինն ամեն ինչ հասկացավ: Քերսթի Ֆորսբերգին՝ մի անգամ մի տղայի հնարավորություն տալու համար: Նիլս Ուլսոնին՝ երկու զարմանահրաշ կազմի համար: Բոլորին, որոնք մասնակցել են ինչպես այս, այնպես էլ «Ուվե անունով մարդը» գրքի հրատարակմանը Ֆորում, Մոնփոքեթ, Բոնիեր, Բոնիեր Audin, Բոնիեր գործակալության, Թրե Վեներ ու Փարթներզ հրատարակչությունների ու ընկերությունների

թվայնացրել է 1915.info կայքը

շնորհիվ: Նախապես առանձին շնորհակալություն լեզվաբանության ամենագետներին, որ քերականական սխալներ են հայտնաբերելու յոթ թագավորությունների անվանումներում (ողջույններս ժամանակաձևերի սիրահարներին):

Ամենամեծ շնորհակալությունը՝

ՔԵ՛Զ, որ կարդում ես: Առանց քո չափազանց ոչ միանշանակ դատողությունների՝ ես ամենայն հավանականությամբ ստիպված էի լինելու իսկական աշխատանք փնտրել:

թվայնացրել է 1915.info կայքը

newmag 149

Ֆրեդրիկ Բաքման

Տատիկս բարևում է և ասում՝ կներեք:

Թարգմանությունը շվեդերենից՝
Աշխեն Բախչինյանի

Շապիկի ադապտացիան՝
Էդիկ Պողոսյան

Շան լուսանկարը շապիկին՝
© **Nick Dolding/ Shutterstock**

Ճանապարհի լուսանկարը շապիկին՝
© **Education Images / Contributor/ Getty Images**

Աղջկա լուսանկարը շապիկին՝
© **Shutterstock**

Հեղինակի լուսանկարը՝
© **Linnéa Jonasson Bernholm / Appendix fotografi**

Տառատեսակը՝
GHEA Narek, հեղինակ՝ **Էդիկ Ղաբուզյան**
Շապիկի հեղինակ՝ ©**Alan Dingman**
Տպագրված է «Անտենոր» տպագրատանը

Գործադիր տնօրեն՝
Արտակ Ալեքսանյան

Խմբագիրներ՝
Արմեն Ամիրխանյան
Տաթևիկ Նալբանդյան
Մարգարիտ Սարգսյան
Աննա Բախշյան

Վերստուգող խմբագիրներ՝
Մայիս Նիկողոսյան
Տաթևիկ Բաղդասարյան

Սրբագրիչներ՝
Նարինե Հովակիմյան
Մարինա Մկրտչյան
Աննա Կոբալյան

Գլխավոր խմբագիր՝
Գնել Նալբանդյան

Ստրատեգիական
և հատուկ նախագծերի ղեկավար՝
Գոհար Մանուկյան

Գրական ծրագրերի ղեկավար՝
Անի Հակոբյան

Մարկետինգի և վաճառքի ղեկավար՝
Գոհար Ալեքսանյան

Մուլտիմեդիա
բովանդակության ղեկավար՝
Մանու Իրիցյան

«Նյու Մեգ» ՍՊԸ
info@newmag.am | newmag.am
Ադոնցի 4/3, Երազ բիզնես կենտրոն #329,
3-րդ հարկ, Երևան 0014, ՀՀ